Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝* **http://www.armin.am**

*էլ. փոստ՝* **info@armin.am**

ՓՈՔՐ ԱՍԻԱ
ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ, ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ ԱՑԼ ԵՐԿՐԱՄԱՍԵՐ
ՔԱՐՏԷՍ ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՊ
Գծուեց Մ. ՏՐՈՒԱՐԹԵԱՆ 1922
Սեւ Ծովը
Միջերկրական Ծովը
Կիպրոս
Տիգրիս
Եփրատ
Մեծ Գետ
Հալէպ
Մոսուլ
Ուրֆա
Մարաշ
Սեբաստիա
Տրապիզոն
Սամսուն
Կարս
Էրզրում
Մամուրէթ-ուլ-Ազիզ
Դիարբեքիր
Սիւրմէնէ
Սարդարապատ
Ալեքսանդրապոլ
Գանձակ
Թիֆլիս
Բաթում
Սուխում
Սամսոն
Ինեբոլու
Սինոպ
Տրեբիզոնդ
Սարիղամիշ
Ղարսի
Ալաշկերտ
Մանազկերտ
Բիթլիս
Մուշ
Սասուն
Սղերդ
Ուրմիա
Սալմաստ
Խոյ
Մարանդ
Սարուխան
Գանձակ
Ղարաբաղ
Նախիջեւան
Զանգեզուր
Գոգթն
Սեւան
Ալաշկերտ
Մանազկերտ
Բիթլիս
Մուշ
Սասուն
Սղերդ
Ուրմիա
Սալմաստ
Խոյ
Մարանդ
Սարուխան
Գանձակ
Ղարաբաղ
Նախիջեւան
Զանգեզուր
Գոգթն
Սեւան

ԳՐԻԳՈՐԻՍ Ճ. ՎԱՐԴ. ՊԱԼԱՔՅԱՆ

# ՀԱՅ ԳՐՈՂԱՐԹՆ

Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն

ԲԵՌԼԻՆԵՆ ԴԵՊԻ ԶՈՐ
(1914—1920)

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1991

ԳՄԴ 63.8 (2Հ) 52
Պ. 180

Պալաքյան Գ.
*Հայ Գողգոթան։ Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն...*
*Եր.— Հայաստան, 1991. 391 էջ, 4 թերթ, նկ.*

*Հեղինակը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914—1920) հայ ժողովրդի կրած անլուր զրկանքների, տարտարոսային տանջանքների, բռնի գաղթեցումների ու կոտորածների ականատեսն է։*

*Հայոց Ձայրագույն վարդապետը իր հոտի հետ արյան գետերի միջով քայլել է դեպի Տեր Զոր։ Հետագայում հրաշքով փրկված վարդապետը իր տեսածն ու ապրածը հանձնել է թղթին։*

*Գատգամ այս գիրքը հասցեագրվում է ընթերցող լայն շրջաններին։*

050802918
Պ — Հայտարարված
701 (01)-91

ԳՄԴ 63.8 (2Հ) 52

ISBN 5—540—01381—6

© «Հայաստան» հրատարակչություն, կազմման, ձևավորման համար, 1991

## Քե՛զի հայ ժողովուրդ

Ա.— Քե՛զի կը նվիրեմ սիրելի ժողովուրդդ Հայոց, այս փունջը մարտիրոսագրությանդ դրվագներում ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՑԻԴ։

Թեպետ այս փունջը կազմված չէ Հայաստանի ծաղկալից դաշտերու երփներանգ և անուշահոտ ծաղիկներեն, բայց սուրբ է և նվիրական։

Որովհետև կազմված է այս փունջը անլուր տանջանքներով մեռնող քու անհամար զավակներուդ արյունի, արցունքի ծով ցավերեն ու չարչարալից նահատակություններեն։

Քու սուրբ գիրքդ է այս արյունոտ մատյանը. կարդա՛ անձանձրույթ, ամենևին մի՛ կասկածիր այս եղեռնապատումիս, և մի կարծեր թե դիտումնավոր չափազանցություններ են գրվածքները։

Ընդհակառակը՝ նվազագույն չափով գրի առած եմ. զի մարդկորեն անհնար է նկարագրել ահավոր և անպատմելի մարտիրոսագրությունը մեկ միլիոնե ավելի մեռնող զավակներուդ։ Եթե երկրագնդիս բոլոր ծովերը թանաք, դաշտերը թուղթ և եղեգները գրիչ դառնային, դարձյալ մարդկորեն անհնար էր նկարագրել քու փշալից և արյունալից վերելքդ դեպի կատարը հայ գողգոթային։

Իզո՞ւր սպասեցի զինադադարեն ի վեր, որպեսզի այս դժնդակ պարտականությունը ավելի կարողները կատարեն։ Սակայն բացի օտար ականատես միսիոնարներե և մեկ քանի հայ աքսորականներու ուղևորի համառոտ նոթագրու-

թյուններե, ցարդ լույս չի տեսավ եղեռնապատումը քու անպատմելի նահատակությանդ: ՈՐ ԱՊՐՈՂԻ ՄԸ ՀՈՒԶՈՒՄՈՎ, անշուշտ որքան որ մարդկային գրիչը կը գրեր, գոնե ընդհանուր գծերով համառոտ գաղափար մը տար ապագա հայ եկող սերունդներուն այն սարսափելի և անլուր դրվագներուն մասին, որուն զոհ գնացին ստուգապես կեսեդ ավելին:

Այո՛ չուզեցի գրել անոր համար, որովհետև ես ինձ տկար կզգայի և սրտով և գրչով մարդկային պատմության ամենաարյունոտ էջերն իսկ սևցնող քու եղեռնապատումդ գրի առնելու:

Եթե 451-ին Վարդանանց պատերազմը անմահացնող և Ավարայրի պատվո դաշտին մեջ ընկած 1536 վկաներու փառքը հավերժացնելու համար Եղիշեի մը հայրենաշունչ և ոսկեդրվագ գրիչը պետք էր, քու անթիվ անհամար և անլուր տանջանքներով նահատակված զավակներուդ խուժդուժ մահերը արձանագրելու համար, գերմարդկային գրիչ մը անհրաժեշտ էր:

Էր երբեմն, երբ հին զանազան դարերում՝ հայ ազգը հավաքաբար մեկ պատմություն ուներ: Իսկ այսօր ո՞հ ամեն նահատակված և վերապրող հայ՝ իր մասնավոր սև օրերու պատմությունը ունի, և այս մեկն է այդ հարյուրհազարավոր պատմություններեն:

Այո՛, չուզեցի գրի առնել, զի կը նշանակեր երկրորդ անգամ՝ տարագրության մը երթալ, մինչդեռ վերհիշումն իսկ գիս կը սարսափեցներ: Քանի որ հայ գողգոթայի մեկ քանի դրվագները գրելու համար, հարկ էր մտքի և աչքի առջև կրկին բերել սարսափի հազարե ավելի այդ սև օրերը կամ երեք արյունի տարիները, իրենց մահասարսուռ բոլոր գլխավոր դրվագներով:

Իսկ այժմ՝ եթե գրի առի, ոչ թե որովհետև հերոսանալ կ'ուզեի, զի հին բարի օրերուն էր միայն, երբ հերոս զավակներդ մատի վրա կը համրվեին: Բայց այսօր օրորոցի հայ ծծկեր փոքրիկ մանուկեն մինչև ութսունամյա հայ մամերն ու պապերն ալ ճշմարտապես հերոս դարձան: Զի այնպիսի անլուր տառապանքներ ու չարչարանքներ կրեցին, և այնպիսի հերոսական մահեր ունեցան հանուն ազգի ու կրոնի, որ իմ կրած տառապանքներս, ասոնց ամեն քաշածին բաղդատմամբ, կ'ամչնամ նույնիսկ տառապանք անունը տալու:



Բայց գրի առի, որովհետև սրբազան կտակ մը ունեի, նահատակությամբ սրբացած քու մեռնող զավակներեդ:

Զի ամեն անոնք, որոնք հայ փշալից գողգոթայի ճամբուն վրա հետ էին, խնդրեցին ինձմեն, որ գրեմ տառապանքի և տարագրության՝ իրենց անպատմելի եղեռնապատումը: Առհավետ մեզմե անդարձ բաժնվողները, ՄԵՌՆՈՂԻ ԻԲՐ ՎԵՐՋԻՆ ԿԱՄՔ, ԱՅՍ ՍՐԲԱԶԱՆ ԿՏԱԿԸ ԸՐԻՆ ԻՆՁ, ես ալ ահա կը կատարեմ այն խոստումը, որ տվի անոնց գերեզմանին առջև, ու քեզ կը նվիրեմ այս մեկ քանի դրվագները հայ գողգոթային:

Որպեսզի եկող ու անցնող հայ ամեն սերունդներ գիտնան թե այն նվիրական եռագույն դրոշը հայկական, որ կը ծածանի Երևանի մեջ, և այն ազատությունը ու անկախությունը որ կը վայելեն, որքան ա՜վաղ թանկ գնված է, և արժեքն է մեկ միլիոնե ավելի անմեղ զոհերու:

Բ.— Բոլոր մեծ ու փոքր հաղթական ազգերը, անծանոթ զինվորի մը ոսկորները իրենց մայրաքաղաքներու հոյակապ պանթեոններու մեջ թաղելով, իբր ազգային փառքի տոն, իրենց արյունոտ հաղթանակները մեծահանդես տոնեցին, հարյուրավոր թնդանոթներու աճեղագոռ որոտներով:

Իսկ վերջերս ալ անգլիական օրաթերթեր գրեցին, որ չորս միլիոն ոսկի Անգ. մեծ ազգը հատկացուցած է պատերազմի փառաշուք հիշատակարաններ կանգնելու համար, ի պատիվ քաջարի և հաղթական իր այն զավակներուն, որոնք վտանգված հայրենիքի իբր արժանավոր զինվորներ. Մեծին Բրիտանիո անշիջանելի փառքին համար, ընկան հաղթական Դարդանելի մարդակուլ մարզին մեջ:

Եվ որպեսզի անգլիացի սգավոր հայրեր ու մայրեր, պատերազմի դաշտին վրա փառքով ընկած իրենց հավետ անմոռանալի մեռնող զավակներուն Գերեզմանները երբ ուխտի գան, ասպնջականության դյուրություններ վայելել կարենան, Սարոսի հրվանդանին ծայրը, Անգ. պետությունը հոյակապ հսկա պանդոկներ և նույնիսկ երկաթուղու մասնավոր գծեր շինել կուտա փոքր ազգ մը տարի մը կշտացնող այդ հսկա գումարներով:

Իսկ դուք՝ աղքատ և թշվառ ցեղիս անթիվ, անհամար նահատակներ, երբ վերապրող հայությունը սովահար և անոթի

է, երբ ձեր թողած հարյուր հազարավոր որբերուն հետ վերապրող սովահար հայությունը քրիստոնյա և մարդասեր ազնիվ ամերիկացիներու և անգլիացիներու նվիրած հացով կը կշտանան, երբ ձեր ետև մնացող ավերակներ միայն թողուցիք, ձեր հավերժական հիշատակին ու փառքին համար, մենք ի՞նչպես հիմա կոթողներ ձեզ կանգնենք:

Ոչ ա՛լ ոսկի և արծաթ ունինք, որ բյուրավոր նահատակներուդ համար հոյակապ պանթեոններ կառուցանենք, և կամ անծանոթ հայ կամավոր զինվորի մը հիշատակին համար, ազգային փառաշուք հանդեսներ կազմակերպենք:

Հոն ուր սուգ ու շիվան է, հոն մենք ի՞նչպես հաղթության հանդեսներ կազմակերպենք[1]:

Ա՜խ ի՞նչպես և ո՞ւր մենք ուխտի գանք ձեզի, երբ հանուն ազգի ու կրոնի, կամավոր թե բռնի բոլոր փառքով մեռնողներդ ձեր ետև գերեզման մը իսկ չի թողուցիք իբր մեզի հիշատակ...

Բայց հայրենիքի ամեն սար ու ձոր ձեր գերեզմանն է, ուր ինկաք կողք կողքի կացինի կամ սուրի հարվածներու ներքև, առանց խտրության հարանվանության, գաղափարի, դասակարգի, կուսակցական շերտավորումների. և մեզ ասով կտակ թողուցիք համազգային անքակտելի միություն մը:

Ահա ասոր համար, հայ գողգոթաս կը նվիրեմ բյուրավոր անթիվ նահատակներուդ սրբությամբ օծուն հավիտենական հիշատակին:

ՈՒ ԳՐՔԻՍ ՃԱԿԱՏԸ ԿԸ ԿԱՆԳՆԵՄ ԻԲՐ ԱՆՇՈՒՔ ԿՈԹՈՂ, ՁԱՐԴԱՔԱՆԴԱԿ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱԽԱՁ ՄԸ, Ի ՊԱՏԻՎ ԱՆԾԱՆՈԹ ՄԵԿ ՄԻԼԻՈՆԵ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՀԱՁԱՐ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒԴ, ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՈԼՈՐ ՄԱՐԶԵՐՈՒՆ ՄԵՋ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՀՈՎ ԸՆԿԱԾ ՏԱՍՆՅԱԿ ՀԱՁԱՐԱՎՈՐ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐՈՒԴ, ԵՎ ՍՈՒՐԲ ՈՒԽՏՈՎ ԻՆՁ ԼԾԱԿԻՑ ՈՒ ՁԵՐ ՀՈՏԵՆ ԱԼ ԱՎԵԼԻ ՁԱՐՁԱՐԱԼԻՑ ՄԱՀԵՐՈՎ ՄԱՐՏԻՐՈՍԱՑԱԾ ՀԱՁԱՐԱՎՈՐ Ս. ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐՈՒԴ, ԻՆՁ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅԱՆՑ ԱԼ ԴՈՒՔ ՊԱՏԿԱՆԻՔ:

Խորապես հավատացած եմ, որ ապագա հայ սերունդներ, Սանահնի վանքի Սպասալարներու պատմական այս հազարամյա քանդակազարդ խաչքարի իրական մեծությամբ

1 *Եռ. այս պոլսահայությամբ միայն բացառություն է։*



պիտի կանգնեն ազատ ու անկախ հայրենիքի ամեն կողմը: Ու երբ հայ անցորդներ անցնին առջևեն, ծունկի պիտի գան հայ ազատագրության խորհրդանշան ծառայող այս սև գերեզմանաքարերուն առջև, և երկու կաթիլ արցունք թափեն ու ՀԱՅՐ ՄԵՐ մը ըսեն, ի հանգիստ հոգվոց անթիվ նահատակաց ազգիս հայոց, իբր երախտագիտական նվիրական պարտականություն, հանդեպ հայ ազգի ազատության բյուրավոր սրբացած զոհերուդ:

Գ.— Վերջին խոսք մը, ևս, ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵ ՍԻՐԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ, արյան ծովերը անցնելե վերջ բարոյալքվելու ժամանակը չէ հիմա, երբ այնքան սուղ գնված հաղթությանդ պտուղը վայելելու օրերդ հասան:

Այժմ անձնասպանություն և ազգասպանություն է բարոյալքվիլ, երբ անհամար մեռնող զավակներուդ ոսկորներն դեռ ցան ու ցրիվ սփռված են հայրենիքի դաշտերուն ու ձորերուն մեջ, երբ հայրենի գետերը տարի մը (915—916) արյուն փսխեցին ծովերու մեջ, երբ քու տասնյակ հազարավոր անձնազոհ կամավորներդ ամենամեծ հաղթական ազգերու սպարապետներն իսկ զարմացնող հերոսական մահերով՝ փառքով ինկան Արարատեն մինչև Արարա, Վանի և Կարնո հայկական բարձրավանդակներեն մինչև Կիլիկիո արգասաբեր հարավի դաշտերը, և Դարդանելի ու Բալկանյան ռազմաճակատեն մինչև Գերմանո-ֆրանսական մահասփյուռ սահմանագլուխները:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵ, եթե իբր ազգ ապրելու ԱՆՁՆԱՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԴ մեկ օր, մեկ ժամ լքես. արդեն կորսված ես. և դուն ձեռքովդ խաչ մը քաշած պիտի ըլլաս երեք հազար տարվան քաղաքակրթության փառավոր պատմությանդ վրա, և քու հին անունդ պիտի սրբվի ազգերու պատմությունեն, ՈՒ ԱՅՆ ԱՏԵՆ ԱՎԱ՜Ղ, ԻՋՈՒՐ ՄԵՌԱԾ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ ՔՈՒ ԵՐԿՈՒՏԱՍՆՅԱԿ ՄԸ ՀԱՐՅՈՒՐ ՀԱՁԱՐԱՎՈՐ ՁԱՎԱԿՆԵՐԴ...

Արյունաքամ և սպառած, սովահար և կես առ կես կոտորակված, ինկած ես կորստական ճամփու մը վրա, իզուր կը սպասես ողորմած Սամարացիի մը, որ գա, քեզ վերցնե, արյունալից վերքերդ լվա ու կապե:

ԻՋՈՒՐ ՄԻ ՍՊԱՍԵՐ, քու դարավոր ՀԱՐԵՎԱՆԴ դեռ հա-

գեցած չէ քու արդար ու անմեղ արյունեդ, և եթե կրնա, հետամուտ է կոտորելու մինչև վերջին քու որբ զավակներդ:

ՕՏԱՐԸ Ա՛Խ ՄԻԾՏ ՕՏԱՐ Է, ԱՀ ԱՆՈՐ ՎՐԱ ՀՈՒՅՍ ՄԻ ԴՆԵ՛Ր. զի երբ փոքր Ասիո ընդարձակ սահմաններուն մեջ նոր մենաշնորհներ գաղտնապես կորզելու հետին միտք ունի, այն ատեն միայն քու ազգային փրկության արյունոտ հարցիդ խաղի թղթերը առաջ կը քշե, ու այս եպերելի նպատակով է արդեն միայն, որ իր ձեռքին մեջ պահած է դարե մը ի վեր քու թուղթերդ...:

ՔՈՒ ՀՈՒՅՍԴ ՆԱԽ ԱՍՏՈՒԾՈ ԵՎ ԱՊԱ ՔՈՒ ՎՐԱԴ ԴԻՐ, խորապես համոզված, որ բարոյական ու մտավորական այնքան բարձր արժանիքներով պատմական հին ժողովուրդ մը, ԿԸ ԿՈՏՈՐԱԿՎԻ ԲԱՅՑ ՉԻ ՄԵՌՆԻՐ, ԴԻԱԿ ԿԸ ԿԱՐԾՎԻ ՈՒ ԳԵՐԵԶՄԱՆ ԿԸ ԴՆԵՆ, ԲԱՅՑ ԿՐԿԻՆ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Կ'ԱՌՆԵ...

Մի վախնար օտար թշնամիներեդ, այլ ավելի վախցիր քու այն զավակներեդ, որոնք հայրենասերի անունով ծպտված, առաջ բռնակալությունդ կը շահագործեին, երեկ վաղանցիկ ազատությունդ շահագործեցին, իսկ այսօր քու նահատակությունդ ու ոսկորներդ կը շահագործեն...

Եթե անկեղծապես քեզ սիրող միայն տասը հատ անձնազոհ արժանավոր զավակներ ունենայիր, ՔՈՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒԴ ՄԵՋ, (որմե ժողովրդյան խոնարհ զավակներուդ մեջ, արդեն հազարներով ունիս), և որոնք ազնվությունը ու քաջությունը ունենային, իրենց չար նախանձը, կիրքը, փառամոլությունը և շահասիրությունը ստորադասելու կամ զոհելու հայրենիքի ու ազգի ընդհարական ու նվիրական փառքին ու շահին, ԱՅՍՕՐ ԱՆՊԱՅՄԱՆ ՔԵԶԻ ԱՎԵԼԻ ԲԱԽՏԱՎՈՐ ՎԻՃԱԿ ՄԸ ԿԸ ՍՊԱՍԵՐ...

Այո՛, հույժ վշտաոիթ է, բայց ակամա պետք է խոստովանիմ, որ քու ղեկավարներուդ մեջ, ՀԱՆՐԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՍ ԱՅՍ ԱՆՑՆՈՂ ՔԱՌՈՐԴ ԴԱՐՈՒՆ ՄԵՋ, չի կրցա ա՛փսոս հանդիպիլ միայն տասը հատ անշահախնդիր, անփառասեր ու անձնախանձ մարդու:

Որովհետև գրագետ, բանաստեղծ, վիպագիր, թատերագիր և մանավանդ լրագրող ու խմբագիր շատ ունեցար, բայց պատմագիր երբեք չունեցար: Որ անաչառ, անկաշառ և անվերապահ գրչով քննադատական վերլուծումը ըներ ՎԱՐԱԳՈՒՅՐԻՆ



ԵՏԵՎ ԹԱՌՆՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԻՐԱԿԱՆ ՔՈՒ ԿՅԱՆՔԻԴ, և ցույց տար իսկական շարժառիթները քու շարունակական դրժբախտություններուդ...

Քա՛նի դերակատարներն միշտ նույներն են, և քանի ազգային քաղաքականության հիմը և ուղղությունը ՄԻԾՏ ԱՆԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆՆ Է, ինչպես և իրար ջլատող, իրար հակասող և իրար խաչաձևող ԳԱՂՏՆԻ ՆԱԽԱՆՁՈՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ Է. դուն փրկվելիք չունիս...

Եթե այս տվյալներով բախտավոր վիճակի մը հասնեիր, ես այն ատեն պիտի զարմանայի...

Ինչպես ըսի, պատմագիր մը ունեցար, զի ապերախտ պաշտոն էր ժամանակակից հայ պատմությունը ճշմարտությամբ գրել քողածածկ իր գաղտնի փուլերով... ու ամենքին հետ գեշ մարդ ըլլալ...

Իսկ քու ղեկավարներդ, առանց դասակարգի, աստիճանի և կուսակցական խտրության, աներկյուղ կերպով գործեցին, առանց վախնալու պատմության պատասխանատվությունեն, քանի որ պատմություն չունեիր... ուստի և ապագա հայ սերունդներու անեծքեն սարսափելու երկյուղ երբեք չունեցան...

Բայց եթե քու այսօրվան ղեկավարներդ կը հեգնեն ու կը ծաղրեն պատմությունը. ՄԵԶՄԵ ՎԵՐՋ ՋՐՀԵՂԵՂ ԸՍԵԼՈՎ. այն ատեն հայ ժամանակակից պատմագիրն ալ զիրենք պիտի հեգնե ու ծաղրե, և գամե պատմության անարգության սյունին, առանց խնայելու ոչ ոքին...

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵ ԵՎ ՋԳԱՍՏԱՑԻՐ ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԱՀ ԿԸ ԲԱ՛ՎԵ ՈՐՔԱՆ ԽԱԲՎԵԾԱՐ, գոնե այսքան կյանքի, ինչպի մարդկային պատմության մեջ չարձանագրված անլուր զոհաբերությունների վերջ, ամեն ով որ ա՛խ հայրենիք, կե՞ցցե Հայաստան կ'ըսե՞ ու քու անունովդ կ'երդնու՝ քեզի փրկիչ մի հանչնար, և իրր հայրենիքի հերոս մի ծափահարեր ու մի ոսանձացներ...

Որովհետև սուլթան Աբդուլ Համիդի ահավոր և արյունոտ բռնակալության շրջանին (1895—1908) քու անունդ կրող մեծ ու փոքր շատ դավաճաններ ճանչցա, որոնք հետո 1908-ին, թուրք պիտակ սահմանադրության անմիջական վաղորդայնին, Իթարմիր դրոշակը գրկած, սանձարձակ ազատությունեն գինովցած ժողովրդական խանդավառ թափորներու ստջեն քալեցին, իբր սահմանադրական ռահվիրաներ...

ԻՆՉՊԵՍ ԸՍԻ՝ Ա՛Լ ԿԸ ԲԱՎԵ ՈՐՔԱՆ ԽԱԲՎԵՑԱՐ, ԹՈՂ ԿՐՔԻ ԵՎ ՁԳԱՑՈՒՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԵՂԻՐ ՎԵՐԱՊԱՀ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՊԱՀ: ԱՆՀԱՏԱԿԱՆ. ԹԵ ԱԶԳԱՑԻՆ ԱՄԵՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՎ ՈՒ ՄՑԱԾՈՒՄՆԵՐՈՎ ԴԵՄԻՆԻՑ ՄԻ ՀԱՅՏՆԵՐ: ՁԱՏԵ ԱՐԺԱՆԱՎՈՐԸ ԱՆԱՐԺԱՆԵՆ: ԿԱՎԵ ԱՐՁԱՆՆԵՐՈՒ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ ՄԻ ԸՆԵՐ: ԱՄՈՒՐ ՓԱՐԵ ՔՈՒ ԲԱՁՄԱԴԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ, ԿՐՈՆԻՑ ԵՎ ՀՈՅԱԿԱՊ ԼԵԶՎԻՑ, ԲԱՁՄԱԾՆՈՒԹՅԱՄԲ ՇՈՒՏՈՎ ԼԵՑՈՒՐ ՀԱՐՅՈՒՐ ՀԱՁԱՐԱՎՈՐ ՄԵՌՆՈՂ ՁԱՎԱԿՆԵՐՈՒՑ ՏԵՂԸ: ԵՎ ՄԻ ԿԱՍԿԱԾԻՐ ՈՐ ՔՍԱՆԵՎՀԻՆԳ ՏԱՐԻ ՎԵՐՋ, ՓՈՔՐ ԱՍԻՈ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ՄԻՋԵՎ, ԿԵՆՍՈՒՆԱԿ ՆՈՐ ԲՈՒԼՂԱՐԻԱ ՄԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՍ ԱՋԱՏ ՈՒ ԱՆԿԱԽ, ՎԵՐՔԵՐՈՎ ՍՊԻԱՑԱԾ, ՀԱՐԳՎԱԾ ԴՐԱՑԻՆԵՐԵՑ ԵՎ ՄԵԾ ՈՒ ՓՈՔՐ ԲՈԼՈՐ ՕՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԵՆ:

Բա՛վ է որ աշխարհ հիացնող ցեղային անհատապաշտ անձնական արժանիքներդ ի հայտ բերել փութաս հետ այսու ևս ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ, իբր պետություն ունեցող ազգ:

Այո՛, ապագան քունդ է, բա՛վ է որ փոխանակ բարոյալքվելով քու կորուստդ պատրաստելու և թշնամիիդ չ'կրնալ ըրածը դուն ինքնին ընելու ԱՆՁՆԱՎՍՏԱՀՈՒԹՅԱՄԲ ՄԻՇՏ ԱՌԱՋ ՔԱԼԵՍ: Ես հիացող մըն եմ քու ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՈՒ ԾԻՆԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՈՒ ՑԵՂԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՑ, անցյալ պատմությունդ ասոր վկա է, օ՜ն, վաղվան պատմությունդ ալ թող վկա ըլլա ասոր:

Հա՛պոն ապագան քունդ է, անվախ, առաջ քալե:

ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴ. ՊԱԼԱՔՅԱՆ

20 օգոստոս, 1922
ՄԱՆՉԵՍՏՐ

# Ա. ՄԱՍ

## 1914 հուլիսեն մինչև 1914 հոկտեմբեր

### ԲԵՌԼԻՆ
### ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

*Սարաևոյի մեջ սերբ պատանիի մը կողմե Ավստրո-Հունգարական գահաժառանգ Ֆերդինանտին սպանման օրեն սկսյալ, արդեն Եվրոպայի քաղաքական մթնոլորտը չափազանց մթագնած էր։ Երբ Ավստրո-Հունգարիոն կողմե աննախընթաց խստությամբ և անընդունելի պայմաններով խմբագրված 48 ժամվա վերջնագրին, Սերբիա անգոհացուցիչ պատասխան տվավ, 1914 հուլիս 25-ին և Ավստրիա պատերազմ հայտարարեց ընդդեմ Սերբիոյ։*

*Վերջապես պայթեցավ համեվրոպական այն ահավոր պատերազմը, որ կը սպասվեր երկար տարիներեն ի վեր, և որ մարդկային պատմության մեջ հավիտենական արատ պիտի մնա եվրոպական համբավյալ քաղաքակրթության։*

*Բեռլինի գլխավոր պողոտաներուն և ի մասնավորի Ունթըրտեն-Լինտընի մեջ (Կայսերական Պալատեն ուղեգիծ մինչև Բրանդրն բուրգիշը Թող երկարող Բեռլինի ամենամեծ պողոտան) ժողովուրդը մեծ խանդավառություն ցույց կու տար։ Ընդհանուր տպավորությունը սա էր, թե Ռուսիա պիտի չկարենար պարզ հանդիսատես ըլլալ Ավստրո-Հունգարական-Սերբիական պատերազմին։ Մեծ վաճառատուններու ապակեփեղկերու մեջ, կողք կողքի ցուցադրված էին Վիլհելմին և Ֆրանց-Յոզեֆին մեծադիր յուղաներկ նկարներ։ Ամենուրեք կը ծածաներ ավստրո-հունգարական դրոշը գերմանականին հետ։ Իսկ գիշերը մեծ եռուզեռ կար Բեռլինի բոլոր մեծ փողոցներուն մեջ։*

*Պատերազմի հայտարարության երկրորդ օրը 26 հուլիս կի-*

բակի ըլլալով, անցուդարձը խափանելու աստիճան բազմությունը մեծ էր Ունթեր-դեն-Լինտը, Ֆրիդրիհշթրասե մինչև Լայբցիգեր ըշթրասե ու Պոցտամըրպլաց։ Մեծ օրաթերթերու հավելվածական հարյուր հազարավոր թռուցիկ օրինակներ ձրի կը բաժնվեին ժողովուրդին, նպատակ ունենալով գերման ժողովրդին միտքը պատրաստել առաջիկա պատմական մեծ դեպքերուն։

Մայրաքաղաքին բոլոր օրաթերթերը, առանց կուսակցական խտրության, կը պաշտպանեին իրենց զինակցին բոլոր տեսակետները, ի հարկին զինակցի պարտականությունները սիրաշոժար կատարելու հաստատ և բացահայտ հայտարարությամբ։ Միայն գերման ընկերվարական (սոցիալ-դեմոկրատ) կուսակցության օրգան «Ֆորվերց»-ն էր, որ չէր պաշտպաներ Ավստրո-Հունգարիո դատը, և բացարձակապես հակառակ կ'արտահայտվեր պատերազմին։ Մայրաքաղաքին բոլոր օրաթերթերը՝ եթե ոչ դեռ սպառնական, գոնե ծանր և կծու լեզու մը կը գործածեին Ռուսիո դեմ հայտարարելով որ Սարաևոյի ոճրին գաղտնի թելերը Բելգրադի մեջ փնտրելե ավելի, պետք էր Պետերբուրգի մեջ որոնել։

Կիրակի գիշերը՝ Բեռլինի գլխավոր շենքերը ճոխ լուսավառություն ըրին, և ժողովուրդը ռազմաշունչ տրամադրությամբ մը ոգևորված, ամբողջ գիշերը խինդ ու խնծիղի մեջ էր առանց որևէ մտահոգության։

Բեռլինի մեծ ու փոքր բոլոր թերթերը 27 հուլիսին արդեն սպառնական լեզու սկսած էին գործածել Ռուսիո դեմ։ Բացահայտորեն հայտարարելով, որ Ավստրո-Հունգարական-Ռուսական պատերազմի մը պարագային, Գերմանիա պիտի փութար հավատարմորեն կատարել զինակցի իր սրբազան պարտականությունը։ Մայրաքաղաքին ժողովուրդը՝ արդեն սկսած էր անխուսափելի նկատել պատերազմը ընդդեմ Ռուսիոյ։ Իսկ կառավարական օրգաններն, ի գլուխ ունենալով «Նորտ-Դոյչե-Ալկեմայնե-Ցայթունգ պաշտոնական մեծագույն օրաթերթը, արդեն սկսած էին հող պատրաստել, պատերազմի մը պարագային պատասխանատվությունը Ռուսիո վրա ձգել կարենալու համար։

Բեռլինի ընկերավարական կուսակցությունը, հուլիս 28-ին երեկոյան ժամը 8 1/2-ին կազմակերպած էր պատերազմի դեմ հսկա միտինգ մը մայրաքաղաքին 27 տարբեր ժողովատեղի-



ներու մեջ միանգամայն։ Գերման ժողովուրդին կազմակերպված աշխատավոր դասակարգին հոգեբանությունը և մտայնությունը մոտեն ուսումնասիրելու պատեհագույն այս պատմական առիթը չուզելով ձեռքե հանել, նույն օրը որոշյալեն կես ժամ առաջ, կ'երթամ բնակարանիս շատ մոտիկ Շարլոթրնբուրգի ժողովրդային տունը «Ֆոլքսհաուզ» կոչված մեծ ժողովատեղին։ Արդարև տեսարանը տպավորիչ էր, զի այդ մեծ ժողովատեղին, իր բոլոր հարակից սրահներովն ու պարտեզովը արդեն գրավված էր տասնյակ հազարավոր բանվոր դասակարգի երկսեռ ժողովրդեն։ Ամենքն ալ տոնական զգեստով եկած էին, ոչ մեկ գինով և ոչ մեկ աղմուկ կը լսվեր, խորհրդավոր լռություն մը կը տիրեր ամենուրեք։ Օրվան պատմական պատասխանատվության գիտակ ամեն բանվորի դեմքին վրա, կը կարծեմ կարդալ վերահաս ահավոր վտանգի մը մղձավանջը։

Ինչպես 26 մյուս ժողովատեղիներուն մեջ, նույնպես և հոս կարգախոսը նույն էր, ՀԱԿԱՌԱԿ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ։ Ռայխսթագի (գերման պառլամենտը) ընկերավարական ճառախոս անդամին արտահայտած մտքերու ամփոփումը հետևյալն էր։

«Մենք պատերազմ չենք ուզեր, որովհետև ներկա դարուն մեջ եվրոպական քաղաքակրթության այսպիսի պատերազմ մը նախատինք է։ Որուն ամբողջ ծանրությունը պիտի կրենք մենք աշխատավորներս, հալալ քրտինքի արյունաքամ բանվորներս։ Մենք աշխատավոր ժողովրդյան հոծ զանգվածն ըլլալով, չենք ներեր որ դրամատերները և զինագործարաններու մեծ գործարանատերերը մեզ շահագործեն և մեր դիակներուն վրա կոխոտելով իրենց նոր միլիոններ ապահովեն։ Ո՛չ, մենք պետք չունինք պատերազմի և ինչո՞ւ պատերազմինք, որպեսզի Ավստրո-Հունգարիա անկախ փոքրիկ Սերբիա մը անպատճառ հաջողի ընկճե՞լ։ Մենք չենք ուզեր գործիք ըլլալ Ավստրո-Հունգարիո տարիներե ի վեր Բալկաններու մեջ հետապնդած արկածախնդիր քաղաքականության։ Որչափ ալ Սերբիոն փոքր ու տկար ըլլա, իբր անկախ և արժանապատվություն ունեցող ազգ, մի՞թե կրնա ընդունիլ պայմաններ, որոնք Ավստրո-Հունգարիա ինքն իսկ՝ կը տկարանա իր երկրին մեջ գործադրելու։ Մենք պատերազմ չենք ուզեր և չենք կրնար գործիք ըլլալ Ավստրո-Հունգարիո, որ դատապարտել և պատժել ուզելով Սա-

բանոյի ոճիրը, ինքն ալ մեծագույն եղեռնը կ'ուզե գործել, մեկ անձի մը մահվան փոխան, ամբողջ Եվրոպան ենթարկելով համատարած պատերազմի մը աննախընթաց արհավիրքներուն ու նախճիրներուն։

Ամեն կողմե աղաղակներ կը բարձրանային, «անկցի պատերազմը, կե՛ցցե համաշխարհային խաղաղությունը և աշխատավոր ժողովուրդներու եղբայրությունը։ Այո՛, մենք հակառակ ենք պատերազմի և համակիր ենք այն հարյուրհազարավոր բանվորներու, որոնք Պետերբուրգի մեջ բողոքի ցույցեր կ'ընեն պատերազմին դեմ մեզի պես։ Մենք ատելություն չունինք ֆրանսացի ժողովրդին դեմ, որ բաժնեկից է մեր զգացումներուն և մեր մտածումներուն»։— Պառլամենտի ճառախոս ընկերվարական անդամը ապա սկսավ ծանր ամբաստանություններ ընել զենքի մեծ գործարանատերերու, դրամատերերու և զորապաշտ կուսակցությանց և զինվորականության հասցեին։ Ապա իսկույն խմբագրվեցավ պատերազմի դեմ բողոքի բանաձև մը, հղելու համար գերման վարչապետ Պետման-Հոլվեկի և Պրուքսելի միջազգային ընկերվարական բյուրոյին։ Մինչ նույն պահուն գիտակցաբար համեցող ոստիկանական սպաները, սրահ մտնելնուն սուլվեցան ժողովուրդին կողմեն։ Ժողովրդային այս հավաքույթը լրացած ըլլալով, կատարյալ կարգապահությամբ վար իջանք փողոց, ուր տեսարանը ավելի տպավորիչ էր։ Չի ավելի քան 15.000-ի հասնող աշխատավոր ժողովրդյան բազմություն մը, որ լրջությամբ ունկնդիր եղած էր «Ժողովրդային տան» տարբեր մեծ սրահներուն և ընդարձակ պարտեզին մեջ չորս ճառախոսներու, միացած և թափոր կազմած զինվորական հանդիսավոր գնացքով և կարգապահությամբ կը առաջանային Բեռլինի ամենամեծ պողոտաներեն Բիսմարկ փողոցեն դեպի Թիր-Գարդեն։ Նպատակ ունենալով օրվան գաղտնի կարգախոսին համաձայն, ուղղվիլ դեպի կայս. դղյակ, ուր ժամադիր եղած էին հավաքվելու 27 տարբեր ժողովատեղիներու մեջ հավաքույթին մասնակցող ավելի քան 150.000—200.000-ի հասնող Բեռլինի ընկերվարական կազմակերպված աշխատավորությունը։

Բայց բռնապետ և զորապաշտ Գերմանիո հավատարիմ գործակալները, ինչպես հեծյալ, հետևակ և հեծելանվորդ ոստիկանները և ոստիկան զինվորները, եկած էին Բիսմարկ շտրասե, Քուրֆյուրսթենտամ և Քանթ շտրասե մեծ պողոտաներու միացյալ վայրը, և երկաթե շղթա կապած իրենց անձերովն ու ձիերովը կ'ուզեին ցրվել ժողովուրդը, որովհետև խաղաղություն կ'ուզեր և ոչ պատերազմ...

Սակայն հակառակ ոստիկանական ամենաաչալուրջ զսպիչ միջոցներու, դարձյալ 60.000—70.000-ի մոտ աշխատավոր ժողովուրդ, կողմնակի ճամփաներե հասան կայսերական պալատ և պատերազմի դեմ ցույցեր ըրին, երգելով «Ինտերնացիոնալը»։ Իսկ Կայսրը, կանխավ իրազեկ այս ամենին, խոհեմությունը ունեցած էր նույն օրը արշալույսին հետ մեկնելու երկաթուղիով մեկ ժամ հեռու հին արքայանիստ քաղաքը Պոտսդամ։

Տպավորությունս արդարև խոր եղավ, զի օսմ. սահմանադրության վաղորդայնին, թեպետ իսլամ ժողովրդի ցույցերուն և թափորներուն ականատես եղած էի, սակայն ոչ մի բաղդատության եզր կար երկուքին մեջ։ Պոլսո մեջ եղածը խաժամուժ ամբոխի հիմար ցույց մըն էր, իսկ Բեռլինինը գիտակից լրջությամբ մը կատարված պատկառելի ցույց մը։ Առաջինը իբր զավեշտ՝ ծիծաղը կը շարժեր ականատեսին, իսկ վերջինը գերմանատյաց օտար ականատեսներու իսկ հարգանքին ու համակրանքին արժանացավ։

Բեռլինի աշխատավոր ժողովուրդը՝ ի մի հավաքված էր հանդարտությամբ և պաղ արյամբ տոնելու ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՏՈՆԸ։ Եթե շնորհիվ ռազմասեր և դրացի երկիրներու ավերակներու վրա իշխելու միայն հետամուտ արկածախնդիր կայսեր մը շնորհիվ ապարդյուն մնացին աշխատավոր ժողովրդին խաղաղասեր ջանքերն, հանցանքը իրենց չէր։ Ինչպես ապագա եղերական և եղեռնական դեպքեր եկան իրավունք տալ արդար քրտինքով ապրող ժողովրդին և ոչ թե զորապաշտ քամարելլային։

Կյանքի պայքարի ծանրագույն բեռը կրող և նվազագույնս վայելող աշխատավոր այս ժողովրդին մեջ, ավելի ողջմտություն և հեռատեսություն գտա, քան Գերմանիո և Ավստրո-Հունգարիո նախարարներուն և պետական վարիչներուն մոտ։ Այս տողերը ըլլալով արտատպություն մը 1914-ի Շանթին մեջ—տես թիվ 60 մինչև 82—12/25 սեպտ.— 4/17 հոկտ.— անստորագիր իմ գրած հաջորդական հոդվածներուն «Հայու մը Բեռլինյան Օրագիրը, Եվրոպական Պատերազմի առթիվ, ի միջի այլոց այն ատեն գրած էի հետևյալ տողերը բառացի.

«Հեռու չէ այն օրը, երբ պատերազմի վաղորդայնին այս

աշխատավոր դասակարգը կը թվի մեծագույն դերակատարն ըլլալ ՋԱԽՋԱԽՎԱԾ Գերմանիո ներքին մեծ հեղաշրջման և վերածննդյան, բոլորովին նոր կազմով և նոր հիմերու վրա... Չի փոխանակ աղետեն վերջ միայն սթափելու, կանխապես ըսին ու ըրին՝ ամեն ինչ, Գերմանիո երկնքեն հեռացնելու համար գերման ցեղին դեմ համաշխարհային ատելության մը սև և վտանգավոր ամպերը, և իրենք պատասխանատու չեն, եթե լսող չունեցան...։ Գերմանիո մեծանուն երկաթյա վարչապետը Բիսմարկ սխալած չէր, երբ գերման «Իմպերիալիզմին» դեմ մեծագույն վտանգը գերման ընկերավարականները համարած էր, որոնք այսօր արդեն Ռայխսթագին մեջ 111 ներկայացուցիչ ունին, ԵՎ ՈՐ ՎԱՂՎԱՆ ԳԵՐՄԱՆԻՈ ԻՐԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐՆ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ ԱՆՇՈՒՇՏ (տես. Շանթ Թիվ 62, սեպտ. 14/27)։

Այսօր երբ կը գրեմ այս տողերը, 6 տարի վերջ, արդեն իրականություն են վերևի կանխատեսություններս։

Բեռլինի բոլոր թերթերը, հաջորդ օրը 29 հուլիս արձագանգ կ'ըլլային այդ խաղաղության հսկա ցույցերուն, հակազգային նկատելով զայն!!! Միայն ընկերավարականներու մեծագույն կենտրոնական օրգան «Ֆորվերց» էր, որ տալով այդ խաղաղության ցույցերու բոլոր մանրամասնությունները, նախատալից լեզու մը կը գործածեր ոստիկաններու շահատակությանց դեմ։

Թեպետ հակաընկերվարական և ազգայնամոլ, ինչպես նաև զորապաշտ ու կայսերապաշտ խմբակցություններ, հակացույցեր կ'ուզեին պատրաստել, հակակշռել ուզելով այդ ցույցերը, սակայն բարեբախտաբար դպրոցական պատանիներե զատ իրենց հետևորդ չունեցան։

Այս ժամանակ՝ արդեն երեք կայսրներու միջև հեռագրական տենդոտ բանակցություն կը կատարվեր միջնորդությամբ Անգլիո թագավորին։ Անգլիո արտաքին գործոց նախարարին համաձայնության մը ազնիվ առաջարկը, հեգնությամբ ընդունվեցավ Բեռլինի մեջ։ Երբ գերման զինվորական կուսակցությունը և համագերման դաշնակցությունը գլուխ ունենալով կայսրը, սկսան գաղտնի ամեն միջոց ի գործ դնել, մեկ կողմեն վիժեցնելու համար խաղաղասիրական ամեն ձեռնարկ, իսկ մյուս կողմեն գրգռելու համար գերման ժողովրդին պատերազմասեր վայրագ զգացումները։

Գերման մայրաքաղաքին բոլոր օրաթերթերը սկսան էին արձագանք ըլլալ Ռուսիո զորահանության։ Նույնիսկ կ'ըսվեր, թե Գերմանիո և Ավստրո-Հունգարիո սահմանները վրա։ Ռուսիա արդեն սպառնական դիրք բռնած էր, և ընդհանուր կարծիքը հուլիս 31-ին սա էր, թե այլևս պատերազմը անխուսափելի էր։

Գերման ժողովուրդին ամբողջ ցասումը Ռուսիո դեմ էր, մինչ ընդհակառակը Ֆրանսայի դեմ թշնամական հայտնի զգացում մը չէր երևեր։ Գերման կառավարությունը իր գաղտնի գործակալներուն միջոցով սուտ լուրեր կը տարածային, թե ռուս գաղտնի լրտեսներ Գերմանիա եկած են կայսրը սպանելու, կամուրջները օդը հանելու, թե Ավստրո-Հունգարիա և Գերմանիա գաղտնի ռուս գործակալներով ողողված է, թե Սարաևոյի ոճիրը Ռուսիո թելադրությամբ եղած է, պատրվակ գտնելու համար Ավստրո-Հունգարիո վրա հարձակելու և դեռ այս կարգի հերյուրածո և ստապատիր լուրերով ամբոխը կը գրգռեին, հող պատրաստելու համար հաջորդ օրն իսկ ըլլալիք պատերազմի պաշտոնական հայտարարության։

Քաղաքակիրթ ամբողջ մարդկության ճակատագիրը՝ միայն գերման կայսեր շրթներեն կախված էր։ Իսկ ան, տիեզերակալներու հատուկ հաղթության վայրագ երազներով տարված, չէր ուզեր կանխատեսել համատարած թշվառությունը միլիոնավոր ժողովուրդներու, որոնք միայն իր ամեհի թնդանոթներուն մսի կեր կը նկատեր...

Եվրոպական ժողովուրդները՝ խաղաղության վերջին գիշերը կը լուսցնեին, 1914 հուլիս 31-ին անգիտակ այն ահավոր սուգին. որ վաղը՝ կայսերական պալատներեն մինչև գյուղական հետին հյուղակներն բռնադատյալ պիտի կրեին. ի գին երեսուն միլիոն դեպի սպանդ առաջնորդված անմեղ ժողովուրդներու եղերական մահվան։



## 2.

## ԲԵՌԼԻՆ
## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱՂՈՐԴԱՅՆԻՆ

Համալսարանական վեցամսյայի 1914-ի վերջին օրն էր, երբ իբր աստվածաբանության ուսանող, ըստ սովորության 1 օգոստոս շաբաթ առավոտ գնացած էի Բեռլինի համալսա-

բանը ունկնդրելու հռչակավոր պրոֆ. Հառնագին, որ առաջին ժամուն դասախոսն էր, և ապա պիտի սկսեր ուսանողներու այնքան սիրական տարեկան արձակուրդը։

Սակայն պրոֆ. Հառնագ փոխանակ սկսելու իր դասախոսությունը, ռազմաշունչ խանդավառությամբ մը սկսավ բանախոսության, հայտարարելով որ մեկ երկու օրվան մեջ անխուսափելի պատերազմը պիտի հայտարարվի։

Հետևապես ինք կը սպասե որ գերման ուսանողությունը իր պատվո տեղը գրավե պատմական այս պատերազմի մեջ, որը դրացի նախանձորդ ազգեր կը բռնադատեն գերմաններուն մղել, ոչնչացնելու համար գերման քաղաքակրթության հետ նաև Գերման ժողովուրդը։ Աշխարհահռչակ գերման նշանավոր այս գիտնականը, մոռնալով իր գիտնականի խաղաղ հանգամանքը, սահմանապահ զորավար մը հանկարծ դարձած էր, որ իր զորքերն իբր թե դեպի ռազմաճակատ պիտի մղեր։ Մեկ րոպեի մեջ դասասրահը, ուր ավելի քան 800 երկսեռ ունկնդիրներ փութացած էին լսելու պրոֆ. Հառնագը, հանկարծ ռազմաճակատի փոխված էր. և գերման երիտասարդներու արյունը եռ կու գար արդեն դրացի ժողովուրդներու բոցավառ վրեժովը։ Պահ մը իրենց խանդավառության մոլեգնությանը մեջ, մոռցած էին, թե ամեն ազգե բազմաթիվ օտարականներ կային ունկնդիրներուն մեջ...

Ապա պրոֆ. Հառնագ կը փորձեր շարունակել իր դասախոսությունը, սակայն արդեն ամեն ոք պատերազմաշունչ խանդավառությամբ մը մտիկ ընել չէր ուզեր, և կը մեկնեին տակավ։ Զի Բեռլինի համալսարանը գտնվելով կայս. մեծ պողոտային—Ունթըր-տեն-Լինտընի—վրա, հոն այգածագեն սկսյալ հետզհետե ստվարացող ամբոխը իր խժալուր աղմուկով արգելք կ'ըլլար որևէ լուրջ բնականոն աշխատանքի։ Գերմանիո նոր ավետարանիչը և աշխարհահռչակ փիլիսոփան Նիցշե քարոզած էր թե ԳՈՒԹՆ ՈՒ ԿԱՐԵԿՑՈՒԹՅՈՒՆԸ հոգեկան հիվանդություններ են... և բռնի ուժի վարդապետությունը հռչակած էր իբր տիրական ազդակ գերման ներկա ու ապագա փառքին ու մեծության։

Այս ոգով դաստիարակված էին Նիցշեեն ի վեր եկող բոլոր սերունդները։ Պրոֆ. Հառնագ ևս հավատարիմ հետևորդ մը Նիցշեական այս կործանարար վարդապետության. գերման համալսարանական ուսանողությունը կ'ուզեր մղել դեպի ռազ-



մաճակատ, քանի որ ժամանակը եկած էր «Deutschland, Deutschland über alles!» ոչ թե միայն երգելու, այլ նաև գործադրելու...

Հազիվ համալսարանեն դուրս եկած, արդեն հարյուր մետրե ավելի լայնք ունեցող պողոտան, կը տեսնեի խուռնամբոխ ժողովրդային հոծ զանգվածներե այնպես պաշարված, որ հնար չէր որևէ անցուդարձ ընել, բացի զինվորական ամեն աստիճանի սպաներե, որոնց հարգանքով և կեցցե (հոխ) աղաղակներով ողջունելով ճամփա կու տային։

Բոլոր մեծ վաճառատուններու ցուցափեղկերուն մեջ ցուցադրված էին 1870—1871-ի գերման հաղթական երկու մեծ զորավարներուն Բիսմարկի ու Մոլթքեի յուղաներկ մեծ նկարները։ Ժողովրդային ծովածավալ բազմություն մը ամբողջապես գրված էր կայս. դղյակի, Բեռլինի Մայր Եկեղեցվո (Տոմ) և թանգարաններու հսկա հրապարակը։

Պատմական այս աննախընթաց օրերու իսկական արժեքին գիտակ, հանձն առնելով ամեն տաժանք ջանացի մոտենալ կայս. պալատան Մայր Եկեղեցվո հանդիպակաց մեծ պատշգամին, ուրկե կ'ըսվեր թե կայսրը պիտի ըներ նույն օրը պատերազմի պաշտոնական հայտարարությունը։

Ժողովուրդը հաճախ կ'աղաղակեր «մեր սիրելի կայսրը տեսնել կ'ուզենք»։ Վերջապես չորսուկես ժամ՝ սպասելե վերջ մեծ պատշգամին վարագույրները հուսկ ուրեմն բացվելով, երևցան կայսրն ու կայսրուհին, պալատական թիկնապահներե շրջապատյալ իբր նոր իմն Նապոլեոն։ Իսկույն այդ հարյուր հազարե ավելի մարդկային միազանգված ամբոխին մեջ գերեզմանական լռություն տիրեց. զի ամենքն ալ երկար ժամերե ի վեր անձկանոք կը սպասեին լսելու համար իրենց կայսրը, որը գերման ժողովուրդին հայրենասիրության միջնաբերդն էր, և ամեն գերմանացի կը հավատար, թե եվրոպական ժողովուրդներու ճակատագիրը միայն իրենց ամենազոր կայսրեն կախյալ է...։ Կը կարծեմ թե եթե մի արասցե հաղթական ելած ըլլար, հին հռովմեացիներու պես եթե ոչ աստվածոց, գոնե սրբոց կարգը պիտի դասվեր իր ժողովուրդեն։

Կայսրը հստակ և բամբ ձայնով ըսավ հետևյալը. «Ես ըրի կարելին պահպանելու համար խաղաղությունը, բայց մեր նախանձորդ դրացիները, անցնելով մեր սահմանները, ոտնակոխ ըրին հայրենի մեր սուրբ հողը։

Կը ներեմ ցարդ եղած կրքոտ բոլոր պայքարները (ակնարկություն ընկերվարականներու). առանց կուսակցական և դավանական խտրության, գերման ազգը իբր մեկ մարդ պետք է կանգնի մղելու համար այն ճակատագրական անխուսափելի պայքարը, որ մեր թշնամիները մեզ դեմ կը մղեն, մեզ փչացնելու միակ նպատակով։

Սուրս, որ ավելի քան 25 տարիներ հանուն և ի սեր խաղաղության վար դրած էի, այսօր կը քաշեմ պատյանեն, և մինչև որ չհաղթեմ չպիտի դնեմ պատյանը։

Դե՜հ գնացեք վաղը եկեղեցի, և ծնկաչոք աղաչեցեք մեր Աստուծմեն, արագ հաղթանակներ մեր զինուց հաջողության համար»։

Հարյուր հազարավոր շրթներե որոտագոչ հուռաներու և հոխերու խժալուր աղմուկով կը թնդար հսկա մայրաքաղաքը, և ծովածավալ ժողովուրդը ալետատան, տակավ կը ցրվեր երգելով իրենց երկու ազգային սիրական երգերը «Դոյչլանդ, Դոյչլանդ ուբեր ալես» այսինքն Գերմանիա գերիվեր քան զամենքն, և «տի վախթ ամ Ռայն» Հրոենոսի պահակը։

Քաղաքակիրթ մարդկության մահավճիռն էր, որ հայտարարած էր նոր ժամանակի աս Կալիկուլան, առանց մտաբերելու՝ թե այդ անմեղ արյան նախճիրին մեջ պիտի խեղդվեր և ինք և իր ոազմատենչ ժողովուրդը։ Եվ իբր փորձ ամբոխավար, կը խաբեր ճշմարտության անգիտակ ժողովուրդը, հավատացնելով, որ թշնամիները իրենց հողը մտած են, մինչդեռ ինք էր որ արդեն հանկարծակի մտած էր անմեղ Պելճիքայի հողը։

Ժողովուրդը կիրակի օրը, տարվելիք ապագա հաղթանակներե արդեն գինովցած խինդ ու խենթիղի մեջ անցընելե վերջ, հաջորդ օրը ավելի պաղ արյամբ վերլուծելով իրերու ծանրակշիռ հավանական հետևանքները, խուժած էր խնայողական դրամատուններու վրա, իր պահեստի գումարները պահանջելու համար։

Պատերազմի հայտարարության երկրորդ օրն իսկ արդեն ամեն սենդեղեն սղած էր և մեջտեղեն անհայտացած։

Արդեն երկրորդ օրն ազդասյուներու վրա զորաժողովի կարմիր ազդերը փակցված էին և ընդհանուր կարծիքը սա էր, թե 7 օրվան մեջ 5 միլիոն զինվոր կազմ և պատրաստ արդեն պիտի կրնային խուժել դրացի թշնամի երկիրներեն ներս, ավելով առաթուր ամեն արգելք։



Կիրակի 2 օգոստոս «Նորտ-Դոյչէ-Ալկեմայնե-Ցայթունգ» գերման պաշտոնական բեռլինյան օրգանը, հրատարակած էր Ռուսիո դեմ պատերազմի սկսելու հայտարարությունը, միանգամայն ծանուցանելով, թե կայսրը ընդհանուր զորահանության հրաման հանած է։ Իսկ բեռլինյան մեծ ու փոքր բոլոր թերթերը արյան հնոցին մեջ փայտ կը նետեն սուտ լուրեր հրատարակելու մեջ իրար գերազանցել ճգնելով։ Գերման ժողովուրդին հայրենասիրական խանդավառությունը հրահրելու մտոք կը գրեին, թե օսմ. կառավարությունը զորաժողով հրամայած է..., իբր թե Կովկասի մեջ մեծ ապստամբություն մը պայթեր է..., իբր թե Հնդկաստանի իսլամներն խլրտիլ սկսած են։ Մինչդեռ այս լուրերը ստանալ հնարավոր չէր 24 ժամվան մեջ։

Իսկապես պատմական օր մը էր ամեն գերմանի համար 2 օգոստոս կիրակի օրը, երբ համաձայն կայսեր հանձնարարության, առավոտյան գերման բոլոր եկեղեցիներու մեջ հանդիսավոր պաշտամունք կատարվեցավ իրենց զենքի հաջողության համար։

Արդեն $9^1/_2$-ին Բեռլինի հարյուրավոր եկեղեցիներու մեծ ու փոքր բոլոր զանգակները ահավոր զանգուններով ժողովուրդը կը հրավիրեն «գոթեստինսթի»։ Կ'երթամ որոշյալ ժամանակեն կես ժամ առաջ, բնակարանիս մոտակա «Քայզեր-Վիլհելմ-Գեդեխթնիս-Քիրխեն», որը Բեռլինի մայր եկեղեցին վերջ երկրորդ մեծ և հոյակապ եկեղեցին է, 150 մետր երկնաբերձ իր զանգակատունով, գոթիկ իր արտաքինով, ոսկե մոզայիկ ներքինով, հրաշալի տաճար մըն է իրավամբ, որ բոլոր օտար այցելուներու սքանչացման առարկա եղած է, կառուցված Վիլհելմ Բ-ի կողմե ի հիշատակ մեծանուն իր մեծ հոր Վիլհելմ առաջինի։

Արտաքին տպավորությունը նույն օրվան արդարև պատկառազդու է, զի եկեղեցվո հսկա հրապարակը առաջնորդող երկարաձիգ և լայն պողոտաները, Թաունցիհրն շթրասե, Քանթ շթրասե և Քուրֆյուսթրն Տամ, որոնք Շարլոթրն բուրգի մեծագույն անցուդարձի երակներն են, և կ'երկարաձգին մինչև եկեղեցվո հրապարակը, ծովածավալ բազմությամբ մը լեցված խափանած են ամեն անցուդարձ։

Իսկ եկեղեցվո մեջ, ուր կը հասնիմ մեծ ճիգով, սրբավայրի մը վեհաշուք հանդիսավորությունը կը տիրե։

Տաճարին ներսը արևելակողմը, դրված է սյունազարդ մարմարյա կաթողիկեի մը ներքև Հիսուսի նույնպես մարմարյա

իրական մեծությամբ ծյունաթույր արձանը, որը հեթանոսական կուռքի մը սոսկալորությունը կը թողու անվարժ մտքերու և աչքերու վրա, և որ գլխովին հակառակ է հին ու նոր կտակարաններու իսկական ոգվույն։ Առջեր դրված են աջ ու ձախ երեքական մեծ աշտանակներ վառող մեծ մեղրամոմերով։ Սեղանին երկու կողմը կան հավասարակողմ քառաթև արծաթյա խաչեր, իսկ ամբողջ տաճարը ողողված է էլեկտրական հարյուրավոր լապտերներու լույսով։ Որոնց շանթարձակ ցոլքերուն ներքև կը փալփլին եկեղեցվո լուսամուտերուն հախճապակյա Ս. Գրոց թանկարժեք պատկերներն և ոսկեճամուկ մոզայիքները։

Զորահանության երկրորդ օրն ըլլալով, եկեղեցիին մեջ երիտասարդներ չեն երևիր, 21—35 տարեկանները արդեն աճապարած են պատասխանելու հայրենիքի զորակոչին։ Եկեղեցվո բազմությունը՝ քառասունն անցուկ այրեր ու կիներ և օրիորդներ են, շատեր կուլան լռիկ, արդեն բաժանման դատապարտված ըլլալով իրենց հեռացող սիրելիներեն, ո՞վ գիտե թերևս անդարձ...

Օրվան պերճախոս քարոզիչը, վերեն տրված կարգախոսին համաձայն, պատերազմաշունչ խոսքերով կը հրավիրե ժողովուրդը կատարելու իր պարտքը հանդեպ ոտնակոխ եղած հայրենիքին!!!։ Ապա կայսեր հրամանին համաձայն և քարոզչին հրավերին վրա. ամբողջ ժողովուրդը ծունկի կու գա խաղաղության Աստուծմեն աղաչելու պատերազմի հաղթանակներ... գերման բանակներու համար։

Մինչդեռ նույնպիսի հանդիսավոր կրոնական պաշտամունքներ կը կատարվեին Պետերբուրգի մեջ ցարին ներկայության, և մասնակցությամբ բազմահազար ժողովրդյան, ռուս զինուց հաջողության համար...

Եկեղեցին հրապարակին վրա ևս, նույն հանդիսավոր աղոթքները նույն պահուն կը կատարվեին և տասնյակ հազարավոր ժողովուրդ մեծ պողոտաներու «ասֆալտին» վրա, տրամվայներու գծերուն մեջ ծունկի եկած կ'աղաչեր հաղթանակներ գերման զինուց համար...

Ապա ժողովուրդը հայրենասիրական ծանոթ նախասիրած երգերով, կը ցրվեր կատարյալ անձնավստահությամբ իր վերջնական և արագ հաղթանակներուն հույսով։

Հաջորդ օրը 3 օգոստոս արդեն երկաթուղիները հատկացած



ըլլալով միայն զորքերու փոխադրության, հաղորդակցությունը իսպառ դադրած էր։

Ժողովուրդը կը սկսի հետապնդել մասնավորաբար ռուսերը, զանոնք իբր լրտես ձերբակալել տալով ոստիկանության, հաճախ չխնայելով նաև գավազանի հարվածներ խեղճերուն գլխուն, որոնք, սակայն, անմեղ առևտրականներ էին միայն։

Առ ի հետաքրքրություն կը փութամ Շարլոթենբուրգի երկաթուղու կայարանը, գաղափար մը կազմելու համար, զորակոչին պատասխանելով Բեռլինեն իրենց վաշտերը մեկնող զինվորներու իրենց սիրելիներեն բաժանման մասին։ Հարյուրավոր զինվորներ իրենց փոքրիկ կապոցներով եկած են կայարան վերջին հրաժեշտը առնելու իրենց ընտանեկան պարագաներեն։

Ապաքեն հուզիչ է տեսարանը, խանդակաթ գիրկընդխառնումներ, անհատնում համբույրներ այրը իր կնոջմեն կը զատվի, հայր մը իր շափահաս զավակներեն, փեսան իր նոր հարսեն, երկու դեռատի նշանածներ իրարմե, միայն ամենքին բերնեն մեկ բառ կը լսվի իբր բաժանման վերջին խոսք «աուֆվիտերզեհեն» ցտեսություն...

Ոչ մեկ արցունք, ոչ մեկ թախիծ, ոչ մեկ հառաչանք, այլ հրաժեշտ կ'առնեն իրարմե ժպիտով և կ'երթան սահմանագլուխ ուրախությամբ, իբր թե խնջույքի կ'երթան, այնքան անձնավստահություն ունեին իրենց հաղթանակին վրա։

Կը հիանամ գերմաններու հայրենասիրության վրա, բայց կը ցավիմ այս երիտասարդ ուժերու վրա, որոնք կ'երթան անդարձ, չվերադառնալու համար հավիտյան...։ Որովհետև ազգին պետերը սպանդ կը տանին զանոնք՝ իրենց փառքին ու շահուն համար...։ Շատ երիտասարդ զինվորներ կ'երթան պատերազմի, խնդրելով իրենց սիրելիներեն, որ նվերի ծրարները չը մոռնան ղրկել սա հասցեով «Սենթրալ-փոստալակրոնդ Փարիզ» այսինքն Փարիզ կենտրոնական նամակատան ի պահ։ Չի դեպի սպանդ առաջնորդողները զանոնք համոզած էին, թե զբոսական պտույտի մը պես սեպտեմբեր 2-ին Սետանի պատմական տարեդարձի օրն անպատճառ Փարիզ պիտի գտնվեին...

Սակայն գերման կայս. մայրաքաղաքին ժողովուրդին հիասթափությունը մեծ եղավ, և խանդավառության շուտով հաջորդեց ընդհանուր մտահոգություն մը, երբ պատերազմի հայտարարության հինգերորդ օրը Անգլիա հանկարծ պատերազմ հայտարարեց Գերմանիո դեմ։

Մյուս պատերազմներու հայտարարության առթիվ խանդավառվող ժողովուրդը շվարեցավ իր գլխուն անակնկալորեն պայթած ահավոր այս ռումբին ազդեցության տակ։

Որովհետև ո՞չ ոք կը սպասեր որ Անգլիա կրնա միջամտել, որով կը կարծեին մեկ քանի ամսուն մեջ առ առավելն մաքրել հաշիվը Ֆրանսայի և Ռուսիո... Այս պատճառով գերման թերթերը սկսան հարձակիլ բուռն կերպով Անգլիո վրա, համեվրոպական պատերազմին իսկական սկզբնապատճառ ցույց տալով Անգլիո ֆրանսասեր՝ էդուարդ թագավորը։ Որը կ'ամբաստանեին, թե Ֆրանսիայի հետ բարեկամանալով և այս վերջնույն միջնորդությամբ Ռուսիո հետ համաձայնելով, Գերմանիո դեմ նախապատրաստեց այս ահավոր պատերազմը։ Նպատակ ունենալով ոչնչացնել գերման նավատորմին հետ՝ նաև գերման վաճառականությունը, և այսպիսով ապահովել ծովերու անպատասխանատու տիրապետությունը։

Անգլիան կը նկատվեր ամեն չարյաց աղբյուր, այս պատճառով գերման ժողովուրդը այնքան մոլեգնած էր Անգլիո դեմ, որ մինչդեռ Ռուսիո և Ֆրանսայի ներկայացուցիչներուն դեմ ոչ մեկ անարգական ցույց չըրավ, սակայն մեծ ամբոխ մը հարձակեցավ Անգլիական դեսպանատան վրա ի Վիլհելմ շքրասե, և ջարդուփշուր ըրավ բոլոր ապակիները, այն պահուն, երբ դեսպանն ու դեսպանուհին ներսը կը գտնվեին։ Իսկ դեսպանատան պաշտոնյաները, ձաղկելու համար գերման շահասիրությունը, մեծ քակներով «ֆենիկներ» նետեցին ամբոխին վրա, ինչ որ բնականաբար ալ ավելի ընդհանուր զայրույթ առաջ բերավ ժողովուրդին մեջ։

Գերման թերթերն ուզելով Անգլիո պատերազմի հայտարարության ժողովրդին վրա թողած ծանր տպավորությունը մասամբ թեթևցընել, վերեն տրված ընդհանուր կարգախոսի մը համաձայն, սկսան արձագանք ըլլալ սուտ զրույցներու։ Երբ թե Պետերբուրգի մեջ 300.000 ռուս բանվորներ ապստամբած են ցարին դեմ, իբր թե ցարը իր մայրաքաղաքեն ստիպվեր է փախչիլ Մոսկվա։ Մինչդեռ ճշմարտությունը սա էր, որ Ռուսիո կայսրը գնաց Մոսկվա կայսերական թագադրության Կրեմլի պատմական Մայր եկեղեցիին մեջ ռուս զինուց հաջողության համար, պաշտոնական աղոթք կատարելով հրահրելու մուժիկին պատերազմասեր խանդավառությունը։ Նույնպես գերման թերթերը գրեցին, իբր թե Լեհաստանի և Ֆինլանդիո մեջ



ապստամբություն ծագած է և դեռ այս կարգի շինծու լուրեր, որոնք հետզհետե պատերազմի ամբողջ տևողության ընթացքին կատարելագործեցին, մինչև որ ամբողջ այս սուտերու շենքը ահավոր փլուզումով կործանեցավ իբր ավազի վրա կառուցված շենք մը...

Պատերազմի հինգերորդ օրն էր, որ Պոցդամերփլաց քաֆե Յոսթի մեկ քանի հայրենակիցներու հետ նստած կը դիտեինք պատերազմի ճակատ գնացող նորագիր զինվորներու տողանցքը, երբ գերման ոստիկան մը եկավ հրավիրել զիս ոստիկանական պահականոց, որովհետև մեկ քանի հրեաներ մորուքիս համար զիս իբր ռուս լրտես ամբաստանելով ուզած էին ձերբակալել տալ։ Այն պահուն, երբ ամբոխին մեջ մտնելով կը հետևեի գերման ոստիկանին դեպի պահականոց, արդեն գավազանի մեկ քանի հարվածներ իջան ուսիս, զիս հետապնդող ամբոխին կողմե, որ հետզհետե ստվարանալով սպառնալից դիրք առած էր։ Սակայն երբ աճապարեցի օսմ. անցագրերս ցույց տալ ամենքին, և իրենց բարեկամ երկրե մը ըլլալս հռչակեցի, ամեն կողմե բարեկամական ցույցերու առարկա եղա և ոստիկանին հետ նաև շատեր փութացին ներողություն խնդրել եղած թյուրիմացության համար. որը սակայն դժբախտաբար վերջինը չէր։

Գերման թերթերը այս օրերուն հրճվանոք հաղորդեցին, թե «Կեոպենն» և «Բրեսլաու» գերման երկու մեծ հածանավերը ռմբակոծած են ալճերիական եզերքը։ Այս զրահավորներն էին, որ ապա այնքան ահավոր ճակատագրական դեր մը կատարեցին Սև ծովու մեջ ռուսական զրահավորներու դեմ կրակելով և Թուրքիան այսպես պարտադրելով գահավիժել պատերազմին հրակեզ անդունդը։

Հուլիս 6 հինգշ. օրն էր, երբ Շարլոթենբուրգի ծանոթ քաֆեներեն մեկը նստած էի Բեռլինի համալսարանեն երկու բարեկամ պրոֆեսորներու հետ, և կը խոսակցեինք օրվան հրատապ նյութերու վրա։ Երբ ընտրյալ դասակարգեն անծանոթ գերմաններ, ներս մտնելով եկան ճիշտ մեր մոտիկը նստան։ Անծանոթներեն ավելի երիտասարդը, որ հետո իմացանք թե փաստաբան մըն է եղեր, իմիջիայլոց հետևյալ միտքը արտահայտեց «ի՞նչ լավ պիտի ըլլար եթե հիմա հայերը Կովկասի մեջ ապստամբեին... հայերը ձեռներեց, հանդուգն և գործունյա ժողովուրդ մըն են. եթե ասոնք անգամ մը ապստամ-

բին, Կովկասի 12 միլիոն իսլամները շուտով հայերու օրինակին կը հետևին, և Ռուսիոն գլխուն մեծ փորձանք կը բանան...»

Եթե այս գերմանը՝ ներկաներուն մեջ հայու մը գոյության իրազեկ ըլլար, անշուշտ աս հայտարարությունը քաղաքավարական պարզ ձևակերպություն մը պիտի ուզեր նկատել. սակայն աս հանգամանքին անտեղյակ ըլլալուն, տարվեցա ինքնին հիշել առյուծին և մուկին առակը...

Զորաշարժի յոթներորդ օրը, արդեն հինգ միլիոն զինվոր իրենց ամբողջ կազմածով պատերազմական երկու ճակատներու վրա դիրք բռնած և պատերազմի մտած էին Ֆրանսական և ռուսական թշնամի բանակներու հետ։ Ամեն օտարական որ թշնամի ազգերու չէր պատկաներ, պետք է կրեր իր պատկանյալ պետության փոքրիկ մեկ դրոշը իր լամբակին վրա։

Մեծ հարգանք կ'ընծայվեր ամերիկացիներու, և ամեն ջանք կ'ընեին գերմանները, որպեսզի աս մեծ ազգին համակրությունն և շեզոքությունն շահին։ Չի միայն Բեռլինի մեջ 50.000 ամերիկացիներ կապրեին այն ատեն։ Աս օրերուն հանդիպեցա հանկարծ դերձակիս, որ պահեստի սպա է եղեր, և հարցուցի իրեն, որ ճակատ կերթար 2 օրեն, թե ի՞նչ է իր կարծիքն, ո՞րքան կրնա տևել աս պատերազմը, պատասխանեց անվարան. «եթե միայն Ֆրանսա և Ռուսիա ըլլային, երկու ամսեն ամեն ինչ կը վերջանար. սակայն քանի որ Անգլիա ալ մասնակցեցավ պատերազմին, թերևս մեկ քանի ամիս ավելի տևե...»։ Իսկ երբ հարցուցի թե ե՞րբ կը հուսա որ գերմանները Փարիզ կրնան ըլլալ, անմիջապես փութաց պատասխանել «Այս տարվան Սեպտեմբեր 2-ին Փարիզի մեջ պիտի տոնենք...»

Արդարև աս էր ամեն գերմանի հաստատ համոզումը, թե հոն պիտի ըլլային սեպտեմբերի 2-ին...

Գերման կառավարությունը զինվորական տարիքի մեջ գտնվող ավելի քան 40.000 ռուսեր, որոնք վար դրված էին պատերազմի հայտարարության հաջորդ օրն իսկ, իբր պատերազմական գերի, ղրկեց խիստ հսկողության ներքև դաշտերը, հունձքը քաղել տալու համար։

Կարմիր խաչի կազմակերպություններու մեջ ծառայելու համար, ավելի քան 60.000 գերման կիներ և օրիորդներ դիմում ըրին պատկանյալ մարմիններու, հայրենիքին ծառայելու նպատակով։ Մասնավոր Կարմիր խաչի դասընթացքներ կազմակերպվեցան ասոնց մասնագիտական պատրաստության համար։

Քաղաքակիրթ ազգի մը անվայել մոլեռանդություն մը սկսավ ցույց տալ ժողովուրդը, պահանջելով որ վաճառատուններու և սրճարաններու վրա դրված ֆրանսերեն և անգլերեն վերտառության տախտակները վերնան և ասոնց տեղը միայն գերմաներենը դրվի։ Առաջին-շաբաթվան ընթացքին հետզհետե չնչվեցան օտար լեզուներով տախտակները և ամեն տեղ միայն գերմաներեն գրվեցան նշանատախտակները։

Այսպես Բեռլինի ամենանշանավոր և հոյակապ սրճարաններեն մեկը, որ մայրաքաղաքին փառահեղ շենքերեն մեկն էր և կը կոչվեր «Փիքատիլլի», չնչվեցավ աս անունը և կոչվեցավ «Ֆաթերլանտ-քաֆե» հայրենյաց քաֆե։

Ամեն ոք օրեօր հաղթության լուրերու կը սպասեր և միշտ ամեն գերման հպարտորեն իր օտարական բարեկամներուն կը խոստովաներ անկեղծորեն ըսելով. «մենք աս պատերազմին կը պատրաստվեինք 40 տարիներե ի վեր...»։ Ահա ամբարտավան ինքնախոստովանություն մը որ գերման ազգին դատապարտությունն իսկ է։

Ոստիկանությունը՝ պաշտոնական զեկույցով մը հրավիրած ըլլալով գերման ժողովուրդը, որպեսզի հետապնդե և դյուրացնե ռուս լրտեսներու ձերբակալությունը, աս պատճառ դարձավ անմեղ ռուսերու դեմ ծանր հալածանքի։ Հաճախակի դարձավ այլևս տեսնել փողոցներու մեջ ռուսեր, որոնք ամբոխեն վայրաբար կը հալածվեին և նույնիսկ կը խոշտանգվեին ի հեճուկս քսաներորդ դարու քաղաքակրթության։

Կիրակի, 9 օգոստոս, Բեռլինեն անցան բազմաթիվ կառախումբեր դեպի ֆրանսական սահմանագլուխ, որոնք լեցուն էին սլավ զինվորներով։ Ասոնք՝ Ավստրո-Հունգարական կառավարությունը կը փոխադրեր ռուսական ճակատեն գերման-ֆրանսական ճակատը, վախնալով որ իր սլավ զինվորները կրնան դավաճանել, անցնելով իրենց ցեղակից և դավանակից թշնամիներուն կողմը։

Գերման պատկերազարդ թերթերը կը հրատարակեին, անշուշտ դիտումնավոր կերպով, Փարիզի 1871-ի պաշարումը գերմաններեն, ուր նկարած էին մսավաճառներու կրպակներուն մեջ ի վաճառ հանված և ոտքերեն կախված շուներ, կատուներ,

մուկեր, ձիեր...։ Ասով կը կարծեին հրահրել գերման զինվորին հայրենասիրական խանդավառությունը, ժամ առաջ հասցնել կարենալու համար Փարիզի պարիսպներուն առջև...

Պատերազմի հայտարարության իններորդ օրն էր, երբ գերման բարեկամի մը հետ վիճաբանություն ունեցանք և որ հետևյալ՝ անգաղտնապահ հայտարարությունն ըրավ, որ ոչ միայն իր, այլև ամեն գերմանի ևս խորին համոզումն էր միանգամայն։ Թե «երբ այս անգամ Փարիզ մտնենք, այլևս հինգ միլիառով դուրս չպիտի ուզենք գալ, այլ երեսուն միլիառ պիտի պահանջենք։ Որպեսզի Ֆրանսա աղքատանալով, այլևս դրամ չգտնա փոխատվություններով մեր դեմ զինակիցներ վարձելու և վրիժառու նորանոր պատերազմներու պատրաստվելու...»։

Աս մտածումը ազգային կարգախոս մը դարձած էր այլևս առանց խորհելու, որ կրնար և հակառակը պատահիլ... ինչպես որ եղավ և բազմապատիկ տուգանքն ստիպվեցան վճարել։

Հազիվ տասը օր էր, որ պատերազմը սկսած էր, և արդեն աղքատ դասակարգը ապրուստի ամենասովորական նյութերու համար նեղություն կը կրեր, զի սննդեղենի հատուկ ամեն նյութ տակավ սղել սկսած էր։

Իսկ խնայողական սնդուկներն և դրամատունները, հազիվ հարյուրին հինգ միայն հանձն կ'առնեին վճարել։ Հակառակ կառավարական արգելիչ օրենքներուն, հացագործներու արհեստապետությունն իսկ հացին գինը ուզեց բարձրացնել, առարկելով, որ այլուրի ներկա արտասովոր գիներով, հնար չէր հին արժեքով հաց պատրաստել ժողովուրդին համար։

Պատերազմին պատճառով ինքնաբերաբար հետզհետե փակվեցան թատրոնները, ձիարձակարանները, այլևայլ զբոսատեղիները։ Մայրաքաղաքին ժողովուրդը, այլևս առաջվա պես կիրակի օրերը չէր խուժեր երկաթուղու կայարանները, շրջակա բնության բացօթյա վայրերը երթալու համար զբոսնելու։ Ամեն կողմ կը տեսնվեր ծայրաստիճան լրջություն և խնայողություն։ Նույնիսկ կեսօրները ճաշարան եկողները սկսան նվազիլ, ամեն ոք սկսած էր՝ առ ի խնայողություն, ինք պատրաստել իր ճաշը և ջանալ որ քիչով գոհանա ու նվազ ծախքով դուրս կարենա գալ։

Շատ հազվադեպ կը տեսնվեին վաճառատուններու մեջ գնորդներ, ասոնք ալ կամ հույժ ստիպողական պետքեր գնողներ էին և կամ միայն ճամփորդներ։



Բնակարանս գտնվելով Շարլոթենբուրգ Լիցընզեի ճիշտ եզերքը, և հանդիպակացը ըլլալով բեռլինցոց ամենասիրակն ճեմելավայրը «Կըրյունեվալտը» Մայրիներու հրաշալի անտառը, ուր այժմ հսկա թնդանոթներու փորձերը սկսելուն, ամբողջ օրը կը լսվեին ահեղագոռ թնդանոթի որոտներ, սարսեցնելով շրջակա հոյակապ արվարձանին բազմահարկ տունները և սարսափեցնելով պատերազմի դաշտը սիրելիներ ունեցող մայրերու և կիներու արդեն արյունոտ սրտերը։

Այս օրերուն առիթը ունեցա տեսնվելու մեր տան բնակիչներեն բարձրաստիճան սպայի մը հետ, որ կը պատրաստվեր մեկնելու ռազմաճակատ։ Բնական հետաքրքրությամբ մը հարցուցի թե պատերազմը ո՞րչափ կրնա տևել, պատասխանեց «Հոխվյուրտիկըր (եկեղեցականաց մասնավոր տիտղոս) չենք կրնար մեր կիներուն և ժողովուրդին ըսել զգացած մեր մտահոգությունը, սակայն դուք խոստովանահայր եք և վստահելի անձ, չեմ ուզեր կեղծել, հաղթենք ալ, հաղթվինք ալ, այլևս Գերմանիա աղքատ երկիր մը պիտի ըլլա, այլևս մեր դիակներով պիտի լեցվի մեր դրախտանման երկիրը։ Զի թեպետ 40 տարիե ի վեր այս պատերազմին պատրաստված էինք արդարև, սակայն մեկ անգամեն այսչափ հզոր թշնամիներու մեր վրա հարձակումը երբեք չէինք ենթադրած։ Անգլիո և Ճապոնի պատերազմի մասնակցելովը այլևս ամեն հավասարակշռություն խախտեցավ... Մանավանդ Անգլիո հարձակման չէինք սպասեր երբեք, և գերման ժողովուրդի լուրջ դասակարգը հույժ մտահոգ է, զի համառ ազգ մըն է անգլիացին։ Բայց ոչ ոք կրնա հակառակ արտահայտվիլ այժմ, զի մասնավոր գաղտնի ոստիկաններ հատկացված են պատերազմի դեմ խոսողները ձերբակալելու և պատերազմական ատյաններու հանձնելու իբր դավաճան... Ափսոս մեր 40 տարվան խաղաղ աշխատանքի արդյունք եղող հոյակապ քաղաքակրթությունը պիտի փչանա...»։

Ահա առաջին անգամ կը հանդիպեի գերմանացիի մը, ան ալ տարեց սպա, որ առանց տարվելու տիրող ընդհանուր պատերազմաշունչ խանդավառությունեն, իրերը պաղ արյամբ կը դիտեր, կը դատեր և կը վերլուծեր և ահավոր աղետը կը գուշակեր...

Գերման բոլոր օրաթերթերը, իբր պատասխան անգլիական և ֆրանսական օրաթերթերու, ի մասին գերմաններու կողմն

Պելճիքայի չեզոքության վայրաբար բռնաբարման ծանր քննադատություններուն, կը գրեին թե "Not kennt kein Gebot und kein Verbot", այսինքն ստիպողականությունը ոչ օրենք և ոչ արգելք կը ճանչնա... Բայց կը թվի թե գերման պետության միայն սեփական եկող այս ընդհանուր տեսության սկզբունքը, զինքը այնքան հեռուները պիտի տաներ, որ ամեն համաձայնություն և դաշնագիր պիտի կրնար ուզած ատեն պատռել և գրլխովին հակառակ շարժիլ իր հանձնառություններուն, ըսելով թե ստիպողականությունը օրենք ու արգելք չի ճանչնար...

Ակներև է թե ասով ինքզինք պիտի ենթարկեր համաշխարհային ատելության...

Տունի աղքատ վարձակալներու խնդիրը օրվան հրատապ հարցը դարձած էր պատերազմի հայտարարությունեն ի վեր։

Քաղաքապետությունը և լրագիրները կը հանձնարարեին տան տերերու, որ կարեկցությամբ վարվին իրենց աղքատ վարձակալներուն հետ։ Քանի որ ընտանիքներու աշխատավոր անդամները պատերազմի գնացած ըլլալով, զինվորներու խեղճ կիներն չէին կրնար ապրիլ, յուրաքանչյուր զավկի համար կառավարությունեն ամսական վճարյալ 10 մարկի փոքրիկ գումարով մը...

Ջքավոր ժողովուրդի վիճակը բարելավելու համար արգեն կազմվիլ սկսան կանանց օժանդակ մարմիններ։ Ասոնք մասնավոր հանգանակություններով բացառիկ գումարներ կը հայթայթեին զինվորներու ընտանիքներու օգնելու համար, մայրերու վրայեն առնելով իրենց զավակները կերակրելու ծանր հոգը։

Այցելեցի օժանդակ կանանց մարմիններե մատակարարվող երկու ճաշարաններ, և տպավորությունս շատ լավ եղավ, երբ տեսա ազնվական կիներ, որոնք աս ձրի ճաշարաններուն մեջ կը սպասարկեին, աղքատիկ մեծ ու փոքր անմեղ երկսեռ տղոց ձրիորեն մատակարարելով տաք և բավական սննդարար կերակուրներ ճաշի և ընթրիքի միջոցին։ Նույնպես տեսա հատուկ ճաշարաններ, ուր անգործ մնացած դժբախտ բանվորներ 10 ֆենիկով, այսինքն այն ատենի 20 փարայով, երկու տեսակ կերակուր կը ստանային առատ հացով։

Կառավարությունը ևս կարելին կ'ըներ, օգնելու համար աղքատ դասակարգին, ուղելով պակսեցնել պատերազմե դժգոհներու թիվը։ Չի քաջ գիտեր թե այսպիսիներն են, որ ի հարկին



ընկերվարականներու արդեն հոծ շարքերը ստվարացնողները պիտի ըլլան։

Գերման ժողովուրդը սաստիկ մոլեգնած էր ռուսերու դեմ, կարդալով լրագիրներու մեջ, թե Պետերբուրգի գերման հոյակապ դեսպանատունը ռուս խուժանին կողմե մեծ մասամբ քանդված, այրված և ավարի տրված է, սպանելով միանգամայն դեսպանատան հին և ծեր պաշտոնյաներեն մեկը։ Այժմ ալ ավելի կատաղությամբ սկսան ռուսերը հալածել փողոցներու մեջ և խոշտանգել զանոնք անգթորեն։

Հանքածուխը խնայելու համար, քաղաքապետությունը նվազեցուց պատերազմին տասներեքերորդ օրը մայրաքաղաքին լուսավառությունը և քաղաքացիներու կոչ եղավ որ ջուրի, օդային գազի և էլեկտրականության խնայողություն ընեն, նվազեցնելու համար աս ամենը արտադրող հսկա գործարաններու տարապայման քարածուխի գործածությունը։

Ջքավոր դասակարդը արդեն սկսած էր նեղվիլ անգործությենե, զի բազմաթիվ վաճառատուններ և գրասենյակներ արձակել սկսան իրենց երկսեռ պաշտոնյաները մեծ մասամբ։ Ասոնց մեծ մասը երիտասարդ աղջիկներ էին, որոնք մղված ծայրահեղ կարոտությենե, կը շրջեին մայրաքաղաքին բազմամբոխ փողոցները, գայթելով և գայթակղեցնելով ժողովուրդը...

Հանրային բարոյականի դեմ ամեն արգելիչ միջոցներ ձեռք առնելու նպատակով, ոստիկանությունը ամենախիստ միջոցներ ձեռք առնել սկսավ։ Մյուս կողմեն երիտասարդ աղջիկներու բարոյականին նախանձախնդիր պաշտպան տիկնանց ընկերություններ կազմվեցան, նպատակ ունենալով հավաքելու և պաշտպանելու աս կարգի դժբախտ աղջիկները։

Պետք է խոստովանիլ, որ գերման ընտանեկան բարոյականը բավական զորավոր էր, և հանրային բարոյականը խաթարող ամեն ընթացք ենթակա է Գերմանիո մեջ ամենասաստիկ պատժի, առանց ակնառության դիրքի, աստիճանի և հարստության։

Գերման կայսր. մայրաքաղաքը միակն է եվրոպական ցամաքի վրա, որ Փարիզի նման անպարկեշտ հանրային տուներ չունի, և ոստիկանությունը ամենախիստ կերպով կը հետապնդե կասկածելի նկատված տուները...

Աս բարոյական և կրոնական հոյակապ կենցաղին հետևա-

նոք էր, որ 1871-ին 36 միլիոն հազիվ եղող գերման ժողովուրդը այժմ 68 միլիոնի անհավատալի՞ թվին հասած էր արագ աճումի աննախընթաց օրինակ մը ըլլալով բոլոր ազգերու մեջ։ Մինչ 1871-ին 46 միլիոն եղող Ֆրանսան, վերի օրինակին ճիշտ հակառակը ըլլալով այժմ հազիվ կը հասնի 37—38 միլիոնի։

Պատերազմի հայտարարության տասնեհինգերորդ օրը, արդեն պելճիքական և ֆրանսական սահմանագլուխներեն գերման անդրանիկ հաղթության լուրեր սկսան հասնիլ, գինովցնելով մայրաքաղաքին երեք միլիոնե ավելի ժողովուրդը, որ այժմ մեկ միլիոնով ավելցած էր կենտր. բանակատեղի ըլլալուն պատճառով։ Մայրաքաղաքը տոնական օրերու հանդիսական երևույթը ստացած էր և հազարավոր դրոշներ կը ծփան ալեծածան, ի պատիվ նորանոր գերման հաղթանակներու։

Ամեն կողմ կը տեսնվին ժողովրդային թափորներ, որոնք հայրենասիրական երգերու գոռ շեշտերով կ'ոգևորեն մայրաքաղաքին խաղաղ և տխուր և տակավ ամայացած փողոցները։

Գերման ժողովուրդը օրեօր կը սպասեր իր բանակներուն Փարիզ մուտքին... այնքան հանձնապաստան էր իր հաղթության... Կայսրը արդեն մեկնեցավ ֆրանսական սահմանագլուխ, իր հետ տանելով գերման ժողովրդին մարմնավորյալ անձնավստահությունը և անձնվիրությունը։

Արդեն պատերազմի մեջ մեռած զինվորներու անվանց սև տախտակները սկսան կախվիլ պաշտոնատուններու դուռներուն կամ պատերուն վրա։ Որոնց առջև ահագին բազմություն մը խռնված, մտահոգ հետաքրքրությամբ կը փնտրեր իր սիրելիներուն անունները։ Պատերազմի մեջ ինկած բազմաթիվ սպաներու կիներ արդեն սևեր սկսան հագնիլ։ Ամեն կողմ կը կարդացվեին «մեռոպիլիրթե ցիմըր» վարձու սենյակ վերտառությունը, զի յուրաքանչյուր ընտանիք մեկ քանի սենյակ տրամադրած էր, որպեսզի վարձու տալով կարենա հասույթի նոր աղբյուր մը ստեղծել։

Ամենալավ շահեր կ'ընեին միայն լուսանկարիչներն, զի պատերազմի գնացող ամեն ոք նախ կը փութար լուսանկարվելո՞ իրը վերջին հիշատակ մը նվիրելու համար իրեններուն...

Արդեն, երկաթուղային և էլեկտրական տրամվայներու հաղորդակցություններն վերսկսան սովորական օրերու հատու կանոնավորությամբ։



Համաձայն կրթական նախարարության կարգադրության, բացվեցան միջնակարգ ու ժողովրդային դպրոցները, միայն դեռ առ այժմ ցնոր տնօրենություն փակ պիտի մնային մասնագիտական, կրթական բարձր հաստատությունները։ Արդեն միջնակարգ—գիմնազիում և ռեալշուլե— և ժողովրդային—ֆոլքսշուլե—դպրոցները կը բացվին օգոստոս 1-ին։ Իսկ կրթական բարձրագույն մասնագիտական հաստատություններն և համալսարանները ոչ առաջ քան սեպտեմբեր 15-ը։

Զինվորական իշխանությունները, կարմիր ազդերով 35—46 տարեկանները ևս սկսան հրավիրել զենքի տակ։ ԵՒս պատճառով ժողովրդին մեջ, եթե ոչ խուճապ, գոնե ընդհանուր տագնապ և մտահոգություն սկսավ տիրել։ Իսկ լրագիրները կը քաջալերեն ժողովուրդը, տանելու համար ամեն ծանր զոհաբերություն, փրկել կարենալու համար հայրենիքը համասլավական հեղեղեն։ Հետզհետե գերման դաշնակցային պետություններուն, ի միջի այլոց Վյուրթեմբերգի և Բավարիո թագավորները և բազմաթիվ իշխաններ մեկնեցան ռազմաճակատ, գլուխ անցնելու համար իրենց սեփական զորքերուն։

Արտակարգ էր հայրենասիրական խանդավառությունը ժողովրդին բոլոր խավերուն մեջ, ի մասնավորի հիանալի էր գերման մայրերու դյուցազնական անձնվիրությունը, մայրեր եղան, որ ռազմաճակատ ղրկեցին իրենց 4, նույնիսկ 6 երիտասարդ զավակները։

Գերման լրագիրները լեցուն էին բազմածին գերման մայրերու անձնվիրական դյուցազն օրինակներով։ Կը գրեին թե գերման զորության և գերման մեծության իսկական հիմերն ՄԻԱՅՆ ԳԵՐՄԱՆ ԲԱԶՄԱԾԻՆ ՄԱՅՐԵՐՆ ԵՆ, առանց որոնց արժեք պիտի չունենային ոչ Էսքնի Կրուզյան տասնյակ հազարավոր հսկա թնդանոթներն և ոչ ալ արագահարված մավզերներն։ Բացատրելով թե երբ գործածողն կը պակսեր, ամենակատարյալ զենքն իսկ արժեք չէր կրնար ունենալ։ Ինչպես նաև՝ երբ գերման մայրերն չըլլային, թշնամիին դեմ մսե պատվար կազմող հինգ միլիոն զինվորներով ուստի՞ հնար պիտի ըլլար ճակատ կազմել տալ։

«Հայ-գերմանական կոմիտե»-ի մեկ անդամեն լսեցի որ այս օրերուն սույն ընկերության նախագահ և ծանոթ հայասեր դոկտոր Լեփսիուս դիմում ըրած էր գերման արտաքին գործոց նախարար պարոն Ֆոն Յակոֆի, որպեսզի հայերը, որ

*—Հայ Գողգոթան

ազգի հպատակ ալ ըլլան, չենթարկվին ոստիկանական հետապնդումի, իսկ նախարարը իբր թե նպաստավոր ընդունելություն ըրեր էր աս առաջարկին։ Աս կարգադրության շնորհիվ ռուսահպատակ հայ մը, ստուգիվ կրցավ Շվեդի ճամբով Պետերբուրգ մեկնիլ։ Բայց չէր կարելի վստահիլ աս կարգադրության հարատև նպաստավոր արդյունքին, ինչպես որ Թուրքիո հետ զինակցելե վերջ ան հայ երիտասարդները, որոնք զինվորական տարիքի մեջ էին, հանձնվեցան Թուրք զինվորական վարչության։

Գերմանացիները ինչպես կ'երևեր, սկիզբեն իսկ մեծ հույսեր չէին դրած Ավստրո-Հունգարիո պատերազմական կարողության վրա։ Իսկ Իտալիո մասին գերման ժողովուրդը մեծ կասկածանք կը վերաբերվեր, զայն նկատելով անհավատարիմ զինակից մը, որ առաջին առթիվ հզորագույնին կողմը պիտի անցներ։ Սակայն զինվորական գրաքննությունը անպայման արգիլած էր Իտալիո դեմ վիրավորական որևէ ակնարկություն, որպեսզի եթե Իտալիա իրենց հետ չէ, գոնե իրենց դեմ չդառնա։ Իսկ Թուրքիո մասին գերմաններն այնքան համակրական զգացումներ ունեին և իրենց դատին շահակից կը նկատեին, որ իրենց բնական դաշնակիցը կը համարեին աս պատերազմին, առաջին ամսուն մեջ իսկ։

Զինվորական վարչությունը 21—46 զինվորական օրինական տարիքի մեջ գտնվողները, դրոշի տակ առնելե վերջ, այժմ ալ 17, 18, 19, 20 տարեկանները զենքի ներքև կը հրավիրեր իբր կամավոր..., մարզելով զանոնք հանգստյան կոչված փորձ սպաներու հսկողության ներքև։

Գերման ժողովուրդը, որ կը կարծեր թե միայն հաղթության լուրեր պիտի լսեր, սարսափով կը տեղեկանար դժբախտ մանրամասնություններուն ռուսական առաջխաղացման, Արևելյան Պրուսիո մեջ։

Ռուս բանակը, դեպի Փարիզ արագ կերպով առաջացող գերման բանակներու հզոր թափը կոտրելով, իրենց թիկունքը պաշտպանել հարկադրելու համար, ուժգին թափով մը հարձակեցան և մտան Արևելյան Պրուսիա և ամեն արգելք խորտակելով սկսան առաջանալ, ավլել սրբելով իրենց առջև գտնված ամեն խոչընդոտ։

Իսկ նույն ծայրագավառներուն մեջ բնակող գերման ժողովուրդը, ռս կազակներու անգթություններու պատմությունները հարբեկած, լեղապատառ փախուստի ճամփան բռնեց, իրենց ետև թողնելով անշարժ ամեն ինչը ու ստացվածքը և միայն իրենց հոգիները փրկելու հետամուտ ըլլալով։

Ասոնք մեծ մասամբ ապաստանեցան Բեռլին, իսկ մայրաքաղաքի ժողովուրդը, ասոնցմե լսելով ռուս կազակներու զահնդիլ պատմություններ, իրավամբ սարսափի մատնվեցավ։ Մանավանդ խուճապով Բեռլին ապաստանած գաղթական ժողովրդին վիճակը ստուգիվ խղճալի էր։

Արդեն ամիս մը անցած էր պատերազմի հրատարակութենեն ի վեր, և մինչ ամբողջ գերման ժողովուրդը հնքոտ անձկությամբ գերման ռահվիրա գունդերու սեպտեմբեր 2-ին Փարիզ մուտքին կը սպասեր ակնդետ, երբ ֆրանսական ռազմաճակատեն ալ սկսան պարտության լուրեր հասնիլ Բեռլին, սրտաբեկելով միայն հաղթության լուրերով մինչև ան առեն գինովցած ժողովուրդը։ Բայց զինվորական գրաքննությունը ամեն ջանք կը թափեր խոշորցնելով հաղթության լուրերը և նույն համեմատությամբ հույժ փոքրցնելով պարտության գուժկանները։

Կովկասեն արդեն հայ կամավորական շարժումներու անդրանիկ լուրերը կը կարդային գերման թերթերու մեջ։ Իսկ Թուրքիա եռանդով կը շարունակեր զորահավաքը, իբր թե դիմակալել կարենալու համար հավանական հարձակման մը դեմ...

Գերման թերթերու մեջ, հեգնական քննադատություններով անշուշտ, կը կարդային արտատպումներ անգլիական և ֆրանսական օրաթերթերե առնված, ուր աս վերջինները բացահայտորեն կը գրեին, թե համեվրոպական պատերազմի կոտրած ապակիներուն արժեքը պիտի վճարեր Թուրքիա, եթե խլրտեր... Թե աս անգամ կարգը եկած էր արմատապես լուծելու Արևելյան փտախտ դարձած հարցը, զի համաշխարհային պատերազմի մը մղձավանջը, որ ամեն առթի իբր սպառնալիք կը հեղեղվեր, Թուրքիո մեջ հակընդդեմ շահեր ունեցող եվրոպական մեծ պետություններու կողմե, Թուրքիո կամ արևելյան հարցին լուծման մասին, այլևս պայթած էր արդեն, տարբեր կետե մը, համասլավական հրաբուխին ժայթքման պատճառով։ Հետևապես այլևս պատեհությունը ինքնին ներկայացած էր վիրահատի նշտարակը մխելու շարավալից Թուրք վերքին մեջ, մինչև ներքին խոր ծալքերը անոր...

Իսկ հայ ժողովուրդը, ըլլա ի Կովկաս, ի Թուրքիա թե արտասահման երկունքի ահավոր ցավերով և բազմադարյան պոռթկացող հույսերու փոթորիկով մը կը գալարեր... Ճակատագրականորեն մտնելով կյանքի և մահու տիտանյան պայքարի մը մեջ...

Ժամանակը պատմական էր, պատեհությունը անօրինակ բացառիկ, բայց ան ազգը պիտի շահեր ավելի, որ հեռատեսություն պիտի ունենար դատողությամբ և ոչ զգացմամբ վերլուծված դեպքերու համաձայն նավելու արյան համատարած այս տիեզերական հեղեղին մեջ, դեպի խաղաղության փրկաբար նավահանգիստը, ըստ կարելվույն քիչ վնասով դուրս գալ կարենալու համար հորդահոս արյան այս ահավոր նախճիրեն։

## 3.

## ԲԵՌԼԻՆԵՆ ՊՈԼԻՍ ՎԵՐԱԴԱՐՁ

Համաշխարհային պատերազմի վողորդայնին, արդեն որոտացող հազարավոր թնդանոթներու ահավոր գոռումին հետ, խուճապը հետզհետե կը սաստկանար և կ'ընդհանրանար։ Առանց սեռի և հասակի խտրության, չկար անհատ մը, որ չազդվեր համատարած այս արյան փոթորկեն։ Բեռլինի մեջ գտնվող ամեն ազգի օտարականներ 20—46 տարեկանները իրենց պատկանյալ հյուպատոսարաններեն ստիպողական հրավերներ կը ստանային դառնալու հայրենիք և պատրաստ ըլլալու կատարելու իրենց պարտականությունը հանդեպ հայրենիքին։ Իսկ օտար երկիրներու մեջ գտնվող գերմաններ գունդագունդ կ'աճապարեին դառնալ Գերմանիա, և հագնելով իրենց զինվորական զգեստները, կը փութային խանդավառությամբ իրենց պատկանյալ գունդերուն հետ դեպի ռազմաճակատ։ Բաղդատի երկաթուղու գծի շինության մեջ աշխատող գերման հազարավոր գործավորներ արդեն սկսած էին ժամանել Բեռլին, սահմանագլուխ երթալու համար։

Ամեն ոք կ'աճապարեր իր պարտականությունը կատարել հանդեպ հայրենիքին և ազգին։

Անկարելի էր չազդվիլ տիրող ընդհանուր աս հայրենաիրական խանդավառությենեն։ Ոչ ոք կը խորհեր դասալքության վրա։

Հերթը եկած էր նաև հայերուս։ Մենք ալ մեր հայրենակցական հավաքույթներուն մեջ սկսած էինք խորհիլ մեր պարտականությանց մասին։ Կը մտադրեի արդեն դառնալ Թուրքիա, և հազիվ թե աս մտադրությունը հայտնեցի մտերիմ մեկ քանի բարեկամներու, արդեն ամեն ոք վտանգավոր կը գտներ Պոլիս դարձս... Շատեր խորհուրդ կուտային երթալ Կովկաս և միանալ հայ կամավորական խմբերուն և անցնիլ Տաճկահայաստան։

Իսկ ես արկածախնդրական կը գտնեի այսպիսի հանդուգն քայլ մը։ Որովհետև կամավորական այսպիսի հապճեպ շարժում մը պատերազմի առաջին ամիսներուն իսկ, հույժ վտանգավոր կը գտնեի, որ միանգամայն գրգռիչ ազդեցություն մը պիտի ըներ Թուրք-իթթիհատական ոճրագործ կառավարության վրա, և անպայման աղետաբեր հետևանքներ առաջ պիտի բերեր Թուրք կայսրության մեջ ապրող երկու միլիոնե ավելի հայ ժողովրդյան համար։

Ամեն անոնք, որոնք չափազանց հուսադրված էին ռուս պետության հայասեր քաղաքականությամբ, և կը կարծեին թե շնորհիվ ամեն ողորմած ցարին հնար պիտի ըլլար Թրքահայաստանը փրկել, կը հիշեցնեի 1878-ի ռուս-Թրքական վերջին պատերազմը, երբ Կարինը գրավելե վերջ հայազգի զորավարներով հանկարծ քաղաքական փոխանակությամբ մը, կը քաշվեր ռուս բանակը Կարնեն, տեղվույն 80.000-ի մոտ հայ ժողովուրդը թողնելով Թուրք կառավարության և խուժանին մոլեգնյալ վրիժառության։

Ամեն հայ, դարավոր հույսերու պայթող հրաբուխեն բոցավառած, չէր ուզեր լսել ԴԱՏՈՂՈՒԹԵՆԵ բխած որևէ թելադրանք, այլ ինքնասպանության հասնող և ներքին ազգային վրեժխնդրական բազմադարյան պոռթկացող զգացումներե միայն տարվելով բուռն փափագ կը զգար ինքնին ներկայացող հույժ բացառիկ առիթը չփախցնել, փութացնել ուզելով հաշվեհարդարությունը ցեղային մեր թշնամիին Թուրքին հետ...

Սակայն մյուս կողմեն՝ գերման պետության և ժողովուրդին բուռն Թրքասիրությունը չէր կրնար վրիպել անշուշտ Գերմանիո մեջ ապրող որևէ հայու հեռատես ակնարկեն, և հնար չէր չմտավախիլ ապագա դժվարություններե և դժբախտություն-

ներե... Չի հակառակ գերման-հայկական կոմիտեի նախագահ դոկտ. Լեփսիուսի ապահովիչ հավաստումներուն, գերմաններու համար շատ համակրելի ժողովուրդ մը չէինք, քանի որ Թուրքերուն ուխտյալ թշնամիներն էինք։ Իսկ եթե գերման-հայկական կոմիտե մը կազմված էր Բեռլինի մեջ նույնիսկ թելադրությամբ և հաճությամբ գերման Արտաքին գործոց նախարար Ֆոն Յակոֆի և իրեն օգնական Յիմմերմանի, իրապես հայ ժողովրդի շահերը այնքան պաշտպանելու նպատակով չէր, այլ միայն արգելք ըլլալու, որ Թուրքիո մեջ ապրող 2 միլիոն հայությունը գործիք չըլլար ցարին կառավարության ձեռքը... Աս վերջնոյն առիթ չթողնելու համար, որ հայերը պատերազմ բռնելով միջամտություն ի գործ դնե Թուրքիո ներքին գործերուն մեջ։

Աս վերջին մտավախությունը այնքան արմատացած էր գերման քաղաքական մարդոց մտքին մեջ, որ Բալկանյան պատերազմի ընթացքին, իբր հայկական բարեկարգության պատրիարքարանի կենտրոնական կոմիտեի անդամ, երբ երբեմն ի պաշտոնե կ'երթայի գերման դեսպան Վանկընհայմը տեսնելու, նա անվերապահ կերպով չէր ծածկեր իր աս կարգի երկյուղները հիշելու ինձի, փափագ հայտնելով, որ հեռանալով ռուսերեն նետվինք իրենց գիրկը...

Մինչ մեկ կողմեն գերման արտաքին գործոց նախարարությունը գերման-հայկական կոմիտեի մը, կազմակերպության գաղտնի թելադրիչը կ'ըլլար հայերը սիրաշահելու և ռուս կառավարութենեն տակավ հեռացնելու թաքուն նպատակով, մյուս կողմեն դարձյալ նույն պաշտոնատան հայտնի նախաձեռնությամբ, կը կազմվեր գերման և Թուրք կոմիտե մը, նախագահությամբ Թուրք բանակին քսանամյա վերակազմիչ Ֆոն տեր Կոլց փաշայի։ Աս ցեղով գերման, բայց սրտով ու մտքով իրապես Թրքացած Կոլց փաշան, 1914 փետրվարի մեջ, այսինքն պատերազմի հայտարարութենեն հինգ ամիս առաջ, գերման-Թուրք կոմիտեի առաջին պաշտոնական նիստին, ուր ներկա էին Թուրք դեսպանն իր ամբողջ պաշտոնեությամբ և գերման քաղաքական, առևտրական նշանավոր դեմքեր, իբր նախագահ, իր բացման ճառին մեջ, աս վարկածը պաշտպանած էր, թե «Նկատելով որ ռուս կառավարությունը աս վերջին դարուն մեջ Թուրք կայսրության մեջ ապրող քրիստոնյա հպատակ ժողովուրդները պատրվակ բռնելով,



միշտ հզոր միջամտություն ի գործ դրած է Թուրքիո ներքին գործերուն մեջ, և այսպեսով պատճառ եղած Թուրքիո անդամահատության։ Նկատելով որ Թուրքիո բոլոր քրիստոնյա հպատակ ազգերը, ազատագրված ըլլալով արդեն, այժմ ալ ռուս կառավարությունը հայերը ձեռք առած է և Բալկանյան պատերազմեն օգտվելով, բարեկարգության ծրագիր մը մեջտեղ նետած է, Թուրքիան նոր անդամահատության մը ենթարկելու թաքուն նպատակով։ Հարկ է որ Թուրքիան նոր աղետեն մը փրկելու համար, միանգամ ընդմիշտ ռուս-Թրքական սահմաններու կից Վանի, Բաղեշի և Կարնո կուսակալությանց մեջ ապրող կես միլիոն հայությունը հեռացվի ռուս-Թրքական սահմանեն և փոխադրվի հարավ, Հալեպի և Միջագետքի կողմերը։ Իսկ աս կողմերեն ալ արաբները փոխադրվին ռուս-Թրքական սահմանները»։ Որով մեկ հարվածով երկու քաղաքական նպատակ հետապնդված կ'ըլլար, արաբները և հայերը հեռացնելով իրենց ցեղային բազմագարյան հայրենիքներեն, սպանել անոնց մեջ ներկա ու ապագա ազգային անկախության ամեն հույս և ակնկալություն...

Աս ժողովին ներկա պրոֆեսորե մը խորհրդաբար լսելով աս հրեշային ծրագիրը, փութացի իր ատենին գրել պատրիարքարան։

Սակայն այն ժամանակ, ո՜չ ոք հավատ կ'ընծայեր այսպիսի քաղաքական ՄԵԾ ԾՐԱԳՐԻ մը կարելիության, նկատելով որ մարդկային նախապատմական շրջաններեն ասդին, չի հիշվիր երբեք ազգերու պատմության մեջ նմանօրինակ պարագա մը, ԱԶԳԵՐՈՒ ԲՌՆԱԶԲՈՍԻԿ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ...

Բայց ինչպես դժբախտաբար պիտի տեսնենք առաջիկային, ինչ որ այն ատեն անհնարին թվեցավ ամենուն և հեգնանքի իսկ առարկա եղավ, համաշխարհային պատերազմի միջոցին հնարավոր դարձավ, մարդկային տարեգրությանց մեջ աննախընթաց եղերական և եղեռնական դեպքերու և համատարած ահավոր սպանդի նախաձիրներով։

Ուստի իբր Թուրքիո հայության մեջ 15 տարիներե ի վեր գործող եկեղեցական, նախամեծար համարեցի դառնալ Պոլիս և խնդրանս օգտակար ըլլալ այն ժողովրդին, որը իրապես անմիջական վտանգի մեջ կը տեսնեի և ահավոր անդունդի մը առջև կը գտնեի։

Մեր շուրջը տիրող ընդհանուր հայրենասիրական խանդա-

վառուելը նպաստած էր, որ պարտականության ներքին ձայնը հաղթե երկյուղի ցլատող ձայնին...

Այսպիսի առաջադրությամբ համաշխարհային պատերազմի երկրորդ ամսուն, 1914 սեպտեմբերի կիսուն կը մեկնեի Բեռլինեն դեպի Պոլիս։

Հազիվ Բեռլինեն մեկ ժամ հեռացած, երկաթուղու նույն բաժանմունքին մեջ, ինձ դրացի նստող երկու գերմանուհիներ, մայր և աղջիկ (միջանկյալ հիշենք որ երկաթուղու գնացքներու մեջ դուն ուր եք հնար էր հանդիպիլ գերման այր մարդոց, զի ամեն ոք զորակոչին պատասխանած ըլլալով, մեջ տեղ այր մարդ տեսնելը հազվադեպ էր, բացի պատանիներե և ծերերե), հարցուցին թե ո՞ր ազգության կը պատկանիմ, որպեսզի ըստ այնմ՝ համաձայն ոստիկանական գաղտնի հրահանգին, հսկողություն ի գործ դնեին վրաս։

Լսելով որ Թուրքիայեն եմ, և կարծելով որ ամեն Թուրքիայեն եղող անպատճառ Թուրք ըլլալու է, ուստի գերմաններու բարեկամ ազգի մը ներկայացուցիչ ընդունելով զիս, սկսան խոսիլ հետս անվերապահ կերպով օրվան ընդհանուր դեպքերուն վրա։

Դեռ թարմ է հիշողությանս մեջ գերման օրիորդի այն սրտացավ հայտարարությունը, որ քննադատելով աս ահավոր պատերազմին պատճառ եղողները, կ'ըսեր իմիջիայլոց, «Ափսոս որ մենք գերմաններս բազմաթիվ նշանավոր զորավարներ և զինվորականներ ունինք, սակայն դժբախտաբար ոչ մեկ քաղաքագետ ունեցած ենք։ Ցունինք անոր համար, որովհետև քաղաքական պաշտոններու մեջ գտնվողները ամենքն ալ զինվորականներն են, ըլլան նախարարապետ, նախարար, դեսպան, հյուպատոս։ Որով Անգլիո նման պաշտոնին լուրջ գիտակցությունն ունեցող փորձ քաղաքագետներ չունինք և այս պայմաններու ներքև չենք ալ կրնար հասցնել։ Եթե գոնե մեկ հատ քաղաքագետ ունենայինք և ան մեզ ըսեր, թե գերմաններս կ'ատվինք ամբողջ աշխարհեն, անշուշտ մեր ազգին պատասխանատու անձերը այսքան անխորհուրդ կերպով և թեթևորեն չպիտի նետվեին աս պատերազմին մեջ...։ Մեզմե ոչ ոք կը հավատար թե Անգլիա կրնա հանկարծ անցնիլ մեր թշնամիներուն կողմը... որով հավասարակշռությունը այնքան խախտեցավ, որ աս պատերազմը շահինք ալ, հաղթվինք ալ, Գերմանիա ։ յլևս կորսված է...»։



Այս հուսահատական և անգաղտնապահ խոսքերուն վրա, մայրը վիրավորված իր ազգային արժանապատվության մեջ, և զայրացած իր աղջկան ինքնությունը անհայտ օտարականին մը ըսած այս անվերապահ խոսքերեն, կը ջանար որ խոսակցության նյութը քաղաքականեն ա՛յլ նյութի դարձներ։ Թեպետ մեր խոսակցության նյութը կը փոխվեր, բայց ես արդեն կրցած էի թափանցել գերման ժողովրդի պատերազմե գժգոհ եղողներու հոգեբանության ու մտայնության։

Մեկ քանի ժամ վերջ կը հասնեինք Բրեսլաու, ուր մայր ու աղջիկ կ'իջնային կայարան, զի իրենց բնակավայրը հոս էր և Բեռլին գործով հաստատված ըլլալով, այժմ պատերազմի պատճառով կը դառնային իրենց ծննդավայրը, քաղաքը կարելիին խաղաղ մթնոլորտի մը մեջ անցնել հուսալով պատերազմի արյան փոթորիկը։

Ռուսներու հաղթականորեն Արևելյան Պրուսիա մտնելը, գերման մտքերու մեջ այնպիսի ահավոր շփոթություն մը առաջ բերած էր, որ արդեն գերման մեծ սպայակույտը հրաման ըրած էր, Բրեսլաուն իբր ռուս-գերման սահմանագլխին մոտավորագույն մեծ քաղաքը խրամներով պաշտպանել։ Հազարավոր գործավորներ Բրեսլաուն շրջապատող անտառները կը կտրեին և խրամներ կը փորեին դիմադրել կարենալու համար մոսկովյան արշավանքի մը դեմ։

Մեր Բեռլին—Պոլիս գերման ճեպընթաց երկաթուղին կը սուրար անընդհատ անցնելով սահմանագլուխները վազող զինվորական գնացքներու առընթեր, որոնք բեռցած հսկա թնդանոթներ, ռազմակառքեր, զինվորական երկաթյա փուռեր, խոհանոցներ, հազարավոր զինվորներ, կենդանիներ, կ'աճապարեին մեծ մասամբ Արևելյան Պրուսիա, որ այն միջոցին գերմաններու ամենատկար և խոցելի կողմը կը թվեր ըլլալ։

Հասանք Գերման-Ավստրիական սահմանագլուխը կեսգիշերին, զինվորական արգելք կար, պետք էր ըստ նոր կարգադրության, ձգելով գերման գնացքը սպասել ավստրիական գնացքին, որ սակայն կ'ուշանար։ Հինգ ժամվան հապաղումե վերջ այս անգամ ավստրիական աղտոտ և դանդաղ գնացքով մը կը մեկնեինք դեպի Բուդապեշտ՝ Հունգարական մայրաքաղաքը։

Գնացքին բոլոր վագոնները զոցված էին և բաց արձակ արգելք կար դուրս դիտելու... Աս կարգադրությունը եղած

էր, որպեսզի ճամփորդ օտարականներ չկրնան թափանցել պատերազմական գաղտնի տեղափոխությանց։

Գարշահոտ միջավայրի մը առթող տաժանելի ճամփորդութենե մը վերջ 60 ժամեն միայն հազիվ կը հասնեինք Բուդապեշտ. մինչ պատերազմեն առաջ նույն ժամանակամիջոցին մեջ կարելի էր Պոլիս հասնիլ։

Բոլոր ճամփորդները կը հրավիրվեին, որպեսզի ներկայանալով Բուդապեշտի կենտրոնական զինվորական հրամանատարին, հաստատեն օրինական թղթերով իրենց ինքնությունը։

Բավական երկար ձևակերպություններե վերջ՝ դյուրին կ'ըլլար ինձ ևս իբր բարեկամ ազգի մեկ անդամ, իմա թուրք, զինվորական արտոնության վավերաթուղթ ստանալ և երկաթուղու տոմսակ առնելով գնացք մտնել։

Ամբողջ ճամփորդության միջոցին տեսարանը նույնն էր, միշտ շարան երկարաձիգ երկաթուղու բեռնաբարձ գնացքներ, թնդանոթ, զենք, ռազմանյութ, պաշար, զինվոր, ձի և այլն։ Ասոնց փոխադրության տեսքը իսկ սարսափ կ'ազդեր դիտողներուն։ Ալ դյուրին է երևակայել, թե ինչքան ահավոր պիտի ըլլար, երբ աս հարյուրավոր հրանոթներու շանթող երախքներեն, հուր ու բոց ժայթքեր և համատարած մահ սփռեր...

Հուսկ ուրեմն կը մտնենք Հունգարիո լայնատարած և Գուրթի ու ծովի մակերեսի նման հարթ ու հավասար դաշտերը։ Հունձքը տեղ-տեղ լրացած էր և հացահատիկի որաները բարդ-բարդ, դեզ առ դեզ, լեռնակուտակ շեղջակույտեր եղած։ Իսկ տեղ-տեղ ալ դեռ նոր կրցած էին գերի ինկած ռուս զինվորներու միջոցով դաշտերու հունձքը հավաքել։

Ավստրիո-Հունգարիո մեջ մեր հանդիպած բոլոր կայարաններու մեջ կը գտնենք հարյուրավոր զինվորներ, որոնք հրաժեշտի վերջին ողջագուրանքներով կը բաժնվին իրենց սիրելիներեն։ Մինչդեռ Գերմանիո մեջ բաժանումի հառաչ ու արցունք չտեսանք, Ավստրիո և Հունգարիո մեջ կը տեսնենք արդեն լալագին գիրկընդխառնումներ, ողբ ու կոծ և արցունք...

Գերմանիո մեջ զինվորները իրենց սիրելիներեն ցնծությամբ, ցոհություն ըսելով կը բաժնվեին. հաղթության անխորտակելի հույսով, իսկ Ավստրիո և Հունգարիո մեջ զինվորները կը բաժնվեին իրենց սիրելիներեն և կ'երթային դեպի ռազմաճակատ լալով ու սգալով, իբր թե անխուսափելի մահվան կ'երթան...

Ճամփորդության հինգերորդ օրը կը հասնինք Ռումանիո մայրաքաղաքը Պուքրեշ։ Մինչդեռ կը կարծվեր թե Ռումանիա չեզոք դիրք մը բռնելով պատերազմի ոչ մեկ պատրաստության մեջ է, բայց արդեն Ռումանիո մայրաքաղաքին մեջ իսկ, կը լսենք թնդանոթի ահեղ որոտներ. հետևանք՝ հրետաձիգ զինվորներու ռազմափորձերուն։

Հունգարիո և Ռումանիո սահմանեն սկսյալ արդեն մեր գնացքը փոխված ըլլալով, ռումանական երկաթուղիով, մեկ քանի ժամվան դադարե վերջ կը մեկնինք Պուքրեշեն դեպի Քեոսթենճե։

Ամեն կողմ կը տեսնվին արտակարգ եռուզեռ պատերազմի պատրաստությանց, իբր թե Ռումանիա արդեն պատերազմի մեջ ըլլար։

Դանուբի հանդիպակաց ափին, Բուլղարիո սահմանին վրա կը դիտվին նույնպես պատերազմական նախապատրաստություններ և խորհրդավոր փոխադրություններ ծածկված երկաթուղու վագոններով...

Վերջապես Դանուբի հսկա և հոյակապ երկաթյա մեծ կամուրջը անցնելով, գիշեր ատեն կը ժամանենք Քեոսթենճե։

Ուրիշ ճամփորդներու նման կը հարկադրվինք 5—6 օր սպասել շոգենավի, Պոլիս մեկնել կարենալու համար։

Քեոսթենճեի մեջ ալ կը լսվին թնդանոթի գոռ որոտներ. հոս ալ ռազմափորձեր կը կատարվին, բայց որո՞ւ հետ և որո՞ւ դեմ... ոչ ոք գիտե...

Սարսափը ընդհանուր է, ամեն ազգ և անհատ նախապատրաստություն կը տեսնեն, ըստ կարելվույն հեռու մնալու, և հարկադրված պարագային, քիչ վնասով դուրս գալու միջոցներ ստեղծելու հետամուտ ըլլալով։

Կ'երթամ ռումանական շոգենավային ընկերության գործակալության կենտրոնական գրասենյակը, քարափին վրա։ Ճամփորդները այնքան շատ են, և խճողումը այնքան մեծ է, որ գործակալությունը դժվարահաճությամբ տոմսակ կ'ուզե տրամադրել ամեն անոնց միայն, որոնք պաշտոնական տեղերե և անձերե հանձնարարյալ են։

Ստիպված կը դիմեմ անձնապես գործակալության տնօրենին, նախապատվություն ձեռք բերել կարենալու համար։ Տնօրենը՝ Բեռլինեն գալս իմանալուն, չափազանց կը հետաքրքրվի և տեղեկություններ կը խնդրե։

Կարծելով թե ռումանները գերմանասեր են, շնորհիվ իրենց Հոհենցոլերնյան գերման կայս. գերդաստանեն սերած թա-

գովորին, կը սկսիմ պանծացնել գերման ազգն ու իրենց չաստվածացված կայսրն, և գերման հաղթանակներն պատմել, հուսալով գերմանախոս տնօրենին բարյացակամությունը շահելով Պոլսո համար տոմսակ ձեռք բերել։ Ի մեծ հիասթափումն ինձի, հանկարծ խոսքս ընդհատելով կը պատասխանե խոստովանաբար «Մոնսենյոր, դուք կը կարծեք թե ռումանները գերմաններու կողքին պիտի պատերազմին ոչ, ոչ ամենևին, մենք ֆրանսացիները կը սիրենք, և եթե դրամ շահինք, չենք երթար Բեռլին ուտելու, այլ միայն Փարիզ կ'երթանք մենք։

Կը ջանամ գերմանասիրական բոնապրոսիկ չատագովականս ընդհատելով միջին ուղղություն մը բռնել, և այս անգամ ֆրանսացիներուն բարեմասնություններուն վրա խոսիլ և Մառնի ճակատամարտը հիշել և զորավար Ժոֆրը գովել, որ գերմանները Մառնի մեջ պարտության մատնելով Ֆրանսայի հոչակավոր մայրաքաղաքը փրկեց և սեպտեմբեր 2-ին Սեդանի տարեդարձը Փարիզի մեջ կատարելու իրենց ռազմաշունչ ցանկությունը հօդս ցնդեցնել տվավ։ Ալ տարակույս չունեցա, որ ռումանները համաձայնականներու կողքին պիտի պատերազմեին, զի ամեն ռումեն ալ շոգենավի գործակալության այս պետին պես կը խորհեր ու կը զգար անշուշտ։

Բարեկամական փոխադարձ հարգանքով և շոգենավի Ա. կարգի տոմսակ մը արդեն իսկ ձեռք բերած, կը մեկնիմ դեպի պանդոկ։

Վերջապես 15 օրվան տաժանելի ճամփորդութենե մը վերջ, սեպտեմբերի վերջը, խաղաղ ծովով և ալեկոծյալ հոգիով կը ժամանեմ Պոլիս։

Հազիվ Ղալաթիո քարափի մաքսատունը դուրս եկած, մաքսատան ծանոթ պաշտոնյաներ, որոնք հաճախակի ճամփորդություններուս բերմամբ առիթ ունեցած էին հետս ծանոթություն կամ արևելյան բառով բարեկամություն հաստատելու, երբ իմացան որ ես անգամ Բեռլինեն կը դառնամ, չափազանց հետաքրքրված ձգելով խուռնամբոխ ճամփորդներու գույքերու խուզարկությունը, շուրջս բոլորված սկսան տեղեկություններ խնդրել գերման հաղթանակներու մասին։

Զի Թուրքիա դեռ պատերազմի մտած չըլլալով, ֆրանսական և անգլիական Պոլիս հասած թերթեր, ինչպես և հույն ու հայ պոլսական թերթեր, գերման հաղթանակները սուտ հանելով թուրքերը բնական բերմամբ հուսահատության մատնած էին անգթորեն։

Բնականաբար ստիպված ըլլալով անխորհուրդ կերպով արտահայտվելով չենթարկվիլ կասկածանքի, Պոլիս մտած որս իսկ, փութացի թուրք պաշտոնյաները ոգևորել գերման իրական և ենթադրական հաղթանակներով...

Այնքան հաճելի թվեցավ գերմանասեր խոսելակերպս և այնքան իրենց սրտի թելերուն մոտիկ, որ մաքսատան խուզարկու պաշտոնեից պետը, գովելով ողջմտությունս ըսավ «Տեսփոթ էֆենտի՝ քիչ մը խրատ տուր Պոլսո ազգակիցներուդ, որոնք գլխովին հակառակ կը խորհին Զեզի, որպեսզի ետ կենան իրենց ՌՈՒՍԱՍԻՐՈՒԹԵՆԵՆ...։ Այնքան առաջ գացած են դեպի ռուսը, ֆրանսացին և անգլիացին տածած իրենց համակրության և սիրույն մեջ. որ ան օրը երբ ռուսը հաղթող է հայոց երեսները կը խնդան... իսկ երբ ռուսը պարտված է հայերը տխուր են...։ Այսքան անկեղծությունը իրենց գլխուն հետո փորձանք կը բերե»...։

Արդեն քարափին վրա իսկ կրցա իրազեկ ըլլալ այն ահավոր խրամատին, որ բացված էր թուրք և հայ դրացի ժողովուրդներու միջև։ Միտքս տանջող երկյուղով մը տեսա, որ Մայրաքաղաքի հայությունը տարվելով դարավոր թշնամական իր ցեղային զգացումներեն. ՍՏՈՒԳԻՎ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ԱՆԿԵՂԾՈՒԹՅԱՄԲ ՄԸ, պատերազմի երկրորդ ամսուն իսկ, թուրք ժողովուրդի մոլեռանդությունն ու հայատյաց զգացումներն մոլեգնության հասցրնող թափով մը իր դեմ գրգռած էր։ Գիտենալով հանդերձ, թե թուրքին կատաղությունը մինչև ի՞նչ ահավոր աստիճաններու կրնա հասնիլ, և ի՞նչ եղեռնական հետևանքներ կրնա ունենալ...։

Գոնե վերջին 30 տարվան արյունոտ փորձառությունը, դեռ չէր զգաստացվցած զինքն, և չէր կրցած նվազ անկեղծ և ավելի վերապահ ընել հայը...։

# Բ ՄԱՍ

## ԱՌԱՋԻՆ ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 1915 ապրիլեն մինչև 1916 փետրվար

### 4.

### ՀԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 1915-ի ՍԿԻԶԲԸ

Աշխարհավեր պատերազմին համատարած սարսափը, հրդեհի մը լափլիզող բոցերուն նման, հետզհետե կը ծավալեր կայսերական պալատներեն մինչև գյուղական թշվառ խրճիթները։

Բացի պատերազմիկ հինգ մեծ պետություններեն (Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա, Գերմանիա և Ավստրիո-Հունգարիա) մնացյալ մեծ ու փոքր բոլոր ազգերն, խորապես ըմբռնելով ահավոր այս նոր կացության արտակարգորեն ծանրակշիռ հանգամանքը, ամենքն ալ աճապարած էին չեզոքություն հայտարարել։

Նույնիսկ երեսնամյա դաշնագրով, ի նպաստ իր զինակցին Գերմանիո և Ավստրո-Հունգարիո պատերազմին մասնակցելու բռնադատված Իտալիա, վճռական քայլ մը առնելե բոլորովին կը զգուշանար, չուզելով ինք զինք ենթարկել արկածախնդիր քաղաքականության մը անորոշ ելքին։

Այո՛, ամենքն ալ վերապահ ընթացքի մը կը հետևեին, և չէին ուզեր մեկ կամ մյուս կողմին համակրանքի կամ հակակրանքի որևէ արտահայտություն ընել, սպասելով ակնդետ օրըստօրէ զահավեժ ընթացող պատերազմական դեպքերու անակնկալ դարձվածքներուն։

Յուրաքանչյուր ազգ, իր ամենանշանավոր պետական հին ու փորձ մարդիկը աճապարած էր բերել պետության ղեկին գլուխը, և խոհեմությամբ ու անձկանոք ամեն ազգ սկսած էր լուրջ միջոցներ ձեռք առնել, կարենալ դիմակալելու հետզհետե իրենց երկրին սահմաններուն մոտեցող արյունի համաշխարհային փոթորկին։

Ամեն ազգ հետամուտ էր ըստ կարելվույն թաքցնելու խորհուրդները իր մտքին ու սրտին, և անկարելին կ'ընեին բոլոր պետություններն, դրացի ազգերու կոահել չտալու համար, իրենց գաղտնապես ձեռք առած քաղաքական, վարչական և զինվորական միջոցները։

Ահա՛ պատմական այս ահավոր օրերուն, ՄԵՆՔ ՀԱՅԵՐՍ ԷԻՆՔ ՄԻԱՅՆ, որ փոխանակ ազդվելու տիրող այս ընդհանուր մտահոգութենեն, և փոխանակ հետևելու դատողությամբ և հեռատեսությամբ շարժելու հրամայողական պահանջին, ընդհակառակն ըստ սովորության տարվելով մեր զգացումներեն, բայց ավելի ճիշտ կ'ըլլա ըսել, մղված մեր ցեղային վրեժխնդրական կրքերեն, առաջին օրեն իսկ արդեն կոյրզկուրայն ազդովին նետված էինք գահավեժ բախտախնդրության մը մեջ։ Մինչդեռ ամենահզոր պետություններ, մնալով սպասողական դիրքի մեջ և առանց վշտացնել ուզելու մեկ կամ մյուս կողմը, գոց կամ գաղտնի կը խաղային իրենց դիվանագիտական կամ ռազմագիտական ԽԱՂԻ ԹՂԹԵՐԸ, մենք հայերս էինք միայն, որ առաջին օրեն, կործանարար անկեղծությամբ և հանդգնությամբ սկսած էինք մեր խաղի թղթերը բացը խաղալ...

Այսպես կը գրգռեինք մեր դարավոր շարանենդ Բուրք թշնամին, որ վաղուց արդեն պատրվակ կը փնտրեր սրբագրելու, իր նախնիքներու քրիստոնյաները չջարդելով գործած քաղաքական մեծ սխալը, և մեկ հարվածով բնաջնջելու Թուրքիո ամբողջ հայությունը՝ զայն խեղդելով համատարած արյան ծովերու մեջ։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ գրչով, խոսքով և դեպի Կովկաս աճապարող կամավորներու անկազմակերպ խումբերով, Կովկասի հայության հետ առաջին օրեն իսկ, արդեն փութացած էր հայտնել իր գործոն համակրությունն համաձայնական մեծ պետություններուն և ի մասնավորի ցարական Ռուսիոյ։

Մինչդեռ մեր այս բարեկամ կարծած մեծ պետությունները, զբաղած էին վատ սակարկությամբ 1916-ի գաղտնի դաշնագրին հիմերն ու ծրագիրներն մշակել ու պատրաստել, իրենց մեջ բաժնելու համար մեր հայրենի ժառանգական երկիրները, մեր ազգային ճակատագիրը մեր 4000 տարվան հայրենիքը աճուրդի հանելով և միաժամանակ չի մոռնալով

մեզ անվանելու իրենց փոքրիկ և քաջարի դաշնակիցը։ Մենք հայերս, ԱՌԱՆՑ ԿԱՆԽՈՐՈՇ ՍԱԿԱՐԿՈՒԹՅԱՆՑ և անխորհուրդ կերպով, մեր արդեն քամված արյունը հոգդահոս կերպով ի սպաս դրած էինք նույն այս համաձայնական պետություններուն...

Փարիզի և Սոֆիայի մեջ Ամերիկայէ գունդագունդ եկած հայ կամավորներու զենքերն, հրապարակային հանդիսավորությամբ պոլսահայ եկեղեցականներու կողմէ կ'օրհնվեին նույն տեղերու թուրք դեսպաններու գաղտնի լրտեսներուն աչքին առջև։ Իսկ այս ամենը թուրք դեսպաններուն կողմէ օրը օրին կը տեղեկագրվեին Պոլիս Պապը Ալի՝ պատկանյալ պաշտոնարաններուն։

ԹՈՒՐՔ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ՀԱԶԱՐԻ ՀԱՅՈՂ ՀՈԾ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՍ, առանց ի նկատի առնելու իր հույժ փափուկ կացությունը, և փոխանակ հետևելու իրեն դրացի հույներու և հրեաներու վերապահ և շրջահայաց ընթացքին, առաջին օրեն իսկ սկսած էր արդեն ինքզինք փրկված համարել...

Մայրաքաղաքի հայությունը, այնքան ակնհայտնի կերպով սկսած էր արտահայտել իր ներքին զգացումներն, որ թուրք թերթերը ինչպես «Կարակեոզ» հեգնորեն կը գրեին, թե— օրվան պատերազմական հաջողությունները կամ ձախորդությունները իմանալու համար, Զեզի հանդիպող առաջին հայուն երեսը նայեցեք, եթե ուրախ է, Ռուսիան է հաղթողը, եթե տրտում է, ուրեմն Գերմանիան է հաղթողը։— Ինչպես որ Պոլիս ժամանած օրս մաքսատան մեջ ինձի ըսին թուրք պաշտոնյաներն և որ կանխավ հիշեցի մանրամասնությամբ Բեռլինեն Պոլիս վերադարձիս պատմության մեջ։

Պոլսո հայ օրաթերթերը, մղված այս խանդավառության ընդհանուր հոսանքին, մեծադղորդ վերտառություններով կը պանծացնեին համաձայնական պետություններու սուտ ու շիտակ հաղթություններն հույժ չափազանցյալ ձևերով, իսկ գերմաններու սկզբնական իրական հաղթություններու մասին կամ բոլորովին լուռ կ'անցնեին և կամ աննշան ու աննշմար աստիճանի մը կը հասցնեին, չմոռնալով ի դեպս և հանդեպս հակառակ արտահայտվելու ընդդեմ գերմաններու։

Առ այս համոզվելու համար, բավ է աչքն անցնել պատերազմի անմիջապես վաղորդայնին—1914 հուլիս, օգոստոս, սեպտեմբեր—հրատարակվող հայ օրաթերթերն ու ասոնց մեծատառ վերնագրերը։

Ինչպես միշտ, նույնպես պատմական այս ճակատագրական օրերուն ևս, ԱԶԳԱՅԻՆ ՈՐՈՇ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՁՈՒՆԵՐ։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԱԽՈՍԻ ՄԸ ՁԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ, ամեն հայ և ամեն կուսակցություն իր ըմբռնած ու նախասիրած եղանակով կը գրեր, կը խոսեր ու կը գործեր ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԵՐՊՈՎ։

Առանց վերհիշել ուզելու, թե իր կոտրած ապակիներու արժեքը, ինչպես միշտ, այս անգամ ալ ՊԻՏԻ ՎՃԱՐԵՐ Թուրքիո սահմաններուն մեջ ապրող ԱՆՄԵՂ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ԻՐ ԱՐՅԱՆԸ ԹԵՐԵՎՍ ԱՄՈՂՋ ԳՆՈՎ։

Պոլսո հոծ հայությունը իր փրկության ժամը վերջնապես արդեն հասած համարելով, մեծ խանդավառության մեջ էր։ Անհեռատես կերպով տարված ախտաժետ այս հոգեբանության և մտայնության խաբկանքով, անօրինակ մեծ թափ ստացած էր մայրաքաղաքի հայ ժողովուրդին արդեն սովորական դարձած ՀԱՆԴԻՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ։

Ազգային պատմական կյանքերե առնված թատերական զգայացունց ներկայացումներ, տարաբախտ Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ կազմակերպված մեծ համերգներ, Բերայի Եսայան սանուց լսարանական ցերեկույթներ, գրական հավաքույթներ, թաղային երեկույթներ կամ կիրակնօրյա ցերեկույթներ, գիշերային պարահանդեսներ, աշնանային «ֆուտբոլի» մրցումներ, երկսեռ սքաուտական հրապարակային տողանցներ, և կարմիր խաչի անունով սարքված հաճախակի դասախոսություններ, և այլ այս կարգի հավաքույթներ, հանդեսներ, մրցումներ, իրար կը հաջորդեին երազատես խանդավառության մը առթած հիվանդագին ոգևորությամբ։

Իսկ իթթիհատական նենգամիտ կառավարությունը կամ նույնն է ըսել համանուն կոմիտեն բոլոր բռնավորներու նման, ոչ միայն որևէ արգելք չէր հաներ, այլ ընդհակառակն, օրենքին կանխատեսած սահմանեն ալ ավելի դյուրություններ կ'ընծայեր, որ հայ ժողովուրդը, իր բոլոր խավերով, շերտավորումներով զբոսնու ու ցնծա, և ժամանակ չի գտնե զբաղելու ու թափանցելու, մութին մեջ իր սարքած արյունոտ և գաղտնի ծրագիրներուն...

Այսպես ընդհանուր էր ոգևորությունը և ամբոխավարությունը, ոչ ոք վազվան մտահոգությունը ուներ։ Ինձ հետ հազիվ մեկ քանի ազգ. երեսփոխաններ կը փորձեին իզուր մատնանիշ ընել Թուրքիո հայության սպառնացող վերահաս ահավոր վտանգը։ Սակայն աքսորի սպառնալիքներով լռության դատապարտած էին բողոքողները, շնորհիվ մայրաքաղաքին ոստիկանական ընդհանուր տնօրեն Պետրիի ամենազոր միջամտության...

Ի՞նչ հարկ կար չարագուշակ մտավախություններով, խանդավառված ժողովուրդը սարսափեցնել և հուսահատեցնել... Չէ՞ որ անգլիական և ֆրանսական միացյալ հզոր նավատորմը արդեն Դարդանելի առջև կանգնած, իր հարյուրավոր մեծ ու փոքր թնդանոթներու դժոխային կրակովը, ամեն օր քարուքանդ կ'ըներ Չանագ Գալեի նեղուցի Քիլիդ էլ Պահրի ամրակուռ մարտկոցները... և չէ՞ որ մեկ քանի օր վերջ Պոլիսը արդեն ինկած պիտի ըլլար...

Արդարև այս միջոցին Պոլսո նույնիսկ Թուրք բոլոր օրաթերթերը բացահայտորեն կը գրեին, թե Թուրք կառավարությունը ի գլուխ ունենալով Սուլթան Ռեշատը և նախարարությունը, պատրաստություն կը տեսնեին մեկնելու դեպի Էսկիշեհիր և ապա ի պահանջել հարկին նաև Թուրք հին մայրաքաղաքն Գոնիա։ Այս նպատակով պետական դիվանատանց թղթերն ևս հավաքված և սնտուկներու կամ երկաթյա արկղներու մեջ զետեղված էին և օրեօր վերջնական մեկնումի հրամանին կը սպասեին։ Հետևապես մտավախության ի՞նչ շարժառիթ կար այլևս...

Վերջապես այս օրերուն ժողովրդային խանդավառությունը ան աստիճանի հասած էր, որ կարելի է ըսել, թե կը գերազանցեր 1894-ի հայկական անդրանիկ խանդավառության օրերը։ Երբ հայերը դարձյալ ամեն օր գունդագունդ Մարմարայի ծովի ափերը կը վազեին, դիտելու համար անգլիական փառահեղ նավատորմին մեծաշուք անցքը Մարմարայեն դեպի Բոսֆոր, անշուշտ հայերը փրկելու համար... Շուտով մոռացության տված էինք անգլ. պետական հռչակավոր մարդոց, պատմական և խորհրդավոր սա խոսքը, թե Անգլիական նավատորմը չէր կրնար բարձրանալ դժբախտաբար մինչև Արարատ (5560 մետր)։ Բայց շատ դյուրավ անգլիացիք իրենց զրահավորները բարձրացուցած էին Հնդկաստանի Հիմալայան լեռնաշղթայի, աշխարհի ամենաբարձր լեռը էվերեստ (8700 մետր) ՄԻԱՅՆ ԵԹԵ ՈՒԶԵԻՆ... Մինչդեռ Պոլսո հայությունը կը խայտար ու կը ցնծար այսպես ամենօրյա հանդեսներու մեջ, անդին ԳԱՎԱՌՆԵՐՈՒ ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆԵ ԱՎԵԼԻ ԽԵՂՃ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ լքված ու ձգված էր իր սև բախտին...

Արդեն Թուրք կառավարությունը նամակներու գրաքննությունը, պաշարման զինվորական օրենքի անունով ծայրաստիճան խստության հասուցած էր, իսկ ճամփորդության երթևեկը պատերազմական օրենքներով հետզհետե այնքան կաշկանդած էր, որ ամեն հաղորդակցություն Պոլսո և գավառներուն միջև արդեն դադրած էր. Թուրքերու (1914-ի սեպտեմբերին) պատերազմի մտած օրեն սկսյալ։

Այս պատճառով ալ Պոլսո Պատրիարքարանին ու գավառական մեծ ու փոքր երեսունե ավելի Առաջնորդարաններու միջև, ամեն հարաբերություն իրապես բոլորովին դադրած էր այլևս։

Մայրաքաղաքի հայությունը գավառի հայութենեն լուր չուներ և փոխադարձաբար։

Այս իսկ պատճառով գավառներու ամբողջ հայությունը չէր գիտեր, թե ի՞նչ է ազգային ընդհանուր կարգախոսը, և թե ի՞նչպես պետք է շարժիլ։ Գավառներու հայությունը ևս, Պոլսո հայության նման, իր ազգային դարավոր երազներու և հույսերու իրականացման պատմական ժամը հասած կը համարեր, և այս պատճառով ինքն ևս աննախընթաց խանդավառության մեջ էր։ Բայց վստահությամբ կը սպասեր, և խորապես համոզված էր, որ ազգին ղեկավարները պետք եղածը արդեն կ'ընեին այս մասին...

Ի դեպ է ևս հիշել, թե ամենամեծ և հայաշատ առաջնորդական վիճակներ ու թեմեր, ինչպես Սեբաստիա, Տիգրանակերտ, Վան, Երզնկա, Արաբկիր, Ակն, Մուշ, Գաղատիան և այլ երկրորդական թեմեր, ինչպես նաև Կիլիկյան ինն առաջնորդական թեմեր, տարիներե ի վեր անհովիվ կը մնային. եպիսկոպոս և վարդապետ առաջնորդներու կամ տեղապահներու, այլուր տեղափոխությամբն և կամ մահվամբը։

Ռուսիո և Թուրքիո միջև, 1914-ի աշնան Բայրամի առաջին օրը պատերազմը սկսելե վերջ էր միայն, որ հիշվեցավ, թե անհովիվ քանե ավելի գավառական վիճակներ ու թեմեր հովիվ ղրկել ստիպողական էր։

Իթթիհատական կառավարությունը, կամ իր ետև թաքնված

իթթիհատական կոմիտեի իրական կառավարությունը, թրքական բոլոր բանտերու դռները, ընդհանուր ներման անունին ներքև բանալով և հազարավոր արհեստով ոճրագործներ ազատ արձակելով, չեթայական խմբեր կազմել տված էր, ու սկսած էին արդեն Փոքր Ասիո բոլոր ճամփաներն ասպատակել, անանցանելի դարձնելով և ընդհատելով ամեն երթևեկ, մանավանդ քրիստոնյա ժողովուրդներու համար։

Այս միջոցին հրավեր կ'ըլլար Պատրիարքարանի կողմե նաև ինձի, ստանձնելու Երզնկայի Առաջնորդական տեղապահությունը և անմիջապես մեկնելու Սեբաստիո ճամփով դեպի Նորստաց Պաշտոնատեղիս։

Իզուր կը ջանայի համոզել մետասաներորդ ժամու այս հապճեպ ու անհեռատես կարգադրություններ ընողները, թե ԱՆԿԱՐԵԼԻ է տիրող այդ հանգամանքներու ներքև պաշտոն ստանձնել ու գավառ երթալ։

Հայտնելով, որ ոչ թե չեմ ուզեր երթալ, այլ ՉԵՄ ԿՐՆԱՐ ԵՐԹԱԼ։

Եվ ահա իմ դեմ կը հաներին փոթորիկ մը. առիթը գտած համարելով հագուրդ տալու իրենց անձնական կրքոտ հաշիվներուն և ճարտարորեն զիս կ'ամբաստանեին իբր Պատրիարքը գահընկեց ընելու հետամուտ։ Մինչ Ոստիկանական տնօրեն Պեհրի, դամոկլյան սուրի նման կանգնած էր մեր ամենքին գլխին, և շարժելու ոչ ժամանակն էր և ոչ ալ միջոցներ կար...[1]։

---

1 Մեր նյութեն դուրս կը համարինք ասկե ավելի մանրամասնությանց մտնել, ուստի այսքանով կը բավականանք. միայն հոս դնելով պատճենը մեր փոխանակած երկու պաշտոնագրերուն։

Պատրիարքարան հայոց
Կոստանդնուպոլիս — Կ. Պոլիս, 22 հոկտեմբեր 1914։

—

Խառն ժողով
Ազգ. Կենտրոնական Վարչության

Համար 528

Գերաշնորհ
Տ. Գրիգորիս Ս. Վարդ. Գալֆյան
Առաջնորդական Տեղապահ Երզնկայի

ի Կ. Պոլիս։

Ազգային կենտր. Վարչության խառն ժողովը նկատի ունենալով ներկա փափուկ պարագաներու մեջ Երզնկայի նման կարևոր գավառի մը Առաջնորդական Աթոռին թափուր վիճակը, և հոն կարող հոգևոր հովվի մը ներկայության անմիջական պետքը նույն գավառի Առաջնորդական Տեղապահության պաշտոնին կոչեց Ձեր գերապատվությունը, վստահ լինելով Ձեր ազգասիրական զգացմանց վրա և գիտնալով Ձեր ձեռնհասությունն ու վարչական հմտությունը՝ վիճակային գործոց մեջ։

Հաղորդելով Ձեզ հանձին Ձեր գերապատվության կատարված այս արժանավոր ընտրությունը, վստահ ենք, որ նկատի առնելով արդի կացության պահանջը, պիտի բարեհաճիք հոժարությամբ ընդունել սույն կարևոր պաշտոնը և հաղորդել մեզ անմիջապես Ձեր հավանությունը, ըստ այնմ պարտ ու պատշաճն ի գործ դրվելու համար։

Մնամք աղոթարար
Պատրիարք հայոց Թուրքիո
Զավեն Արքեպիսկոպոս
Տեր Եղիայան

Պա՛տճեն

---

Սկյուտար, 28 Հոկտեմբեր 1914։

Ամենապատիվ

Տ. Տ. Զավեն Սրբազան Արքեպիսկոպոս
Պատրիարք հայոց Թուրքիո

ի Կ. Պոլիս։

Պատիվ ունեցա ստանալու Ձեր բարձր Սրբազնության 22 Հոկտեմբեր թվակիր Պաշտոնագիրը, որով կը ծանուցվեր ինձ, թե Առաջնորդական Տեղապահ ընտրված եմ Երզնկայի վիճակին։

Պատրիարքարանդ Վանի, Տիգրանակերտի, Սեբաստիո և Երզնկայի նման ամենահայաշատ և պատմականորեն ևս մեծ կարևորություն ունեցող թեմեր, ավելի քան երկու և վերջինը երեք երկար տարիներ, օսմ. հայրենիքին հեղաշրջման այս պատմական շրջանին մեջ ցարդ անհովիվ թողուց։ Հակառակ անոր, որ մայրաքաղաքիս մեջ գավառական հովվության հարմար կես երկուտասնյակ մը նորապսակ եպիսկոպոսներ ու փորձառու վարդապետներ անպաշտոն կը գտնվեին։

Ու վերջին պահուն, երբ օսմ. դժբախտ հայրենիքն, պատերազմի մեջ մտած է այժմ մեկ քանի շաբաթե ի վեր. և մանավանդ առաջին ու վերջին թեմերն,



Ձեմ գիտեր ի՞նչպես, ինձ անմեկնելի մտասևեռում մը կը տանջեր միտքս ու հոգիս և անծանոթ ձայն մը կ'ըսեր ինձ ՄԻ ԵՐԹԱՐ, ԿԸ ՍՊԱՆՎԻՍ...

Ճիշտ այս երկյուղեն մտրակված էր, որ այս օրերուն Տրապիզոն գտնվող քեռայրս (ընդհանուր երկրագործական պետական քննիչ երեք կուսակալությանց Տրապիզոնի, Կարնո և Բիթլիսի) Պոլիս կը հրավիրեի ստիպողաբար, գրելով, որ ԳԱՎԱՌԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ պիտի բնաջնջվի, շուտ Պոլիս եկուր զավակդ հետդ առած։ Իսկ երբ տեսնելով, թե մեկ կողմեն թուրք և ռուս պետությանց պատերազմի սկսելու հարցը այլևս օրերու

խնդիր է և քեռայրս ալ իր պաշտոնին բերմամբ կը դժկամակի կամ չի կրնար գալ Պոլիս, կը հեռագրեի, թե ՔՈՒՅՐՍ ՄԱՀԱՄԵՐՁ ՀԻՎԱՆԴ է, ՇՈՒՏՈՎ ՊՈԼԻՍ ԵԿՈՒՐ...

Այս հեռագրին վրա կ'աճապարեր քեռորդիս հետ գալ Պոլիս մտահոգությամբ լեցված, և քարափին վրա իր ծայրահեղ հուզումը կը հանդարտեցնեի, ըսելով, որ «հիվանդ չունինք, այլ քեզ այս ձևով ստիպվեցա Պոլիս բերել տալ, զի կացությունը կարծվածեն շատ ավելի ծանր է»։

Տասը օր վերջ Սև ծովի մեջ տեղի կ'ունենար գերման Կեռպեն և Բրեսլաու զրահավորներու հարձակումը ռուս նավատորմին վրա և Բոսֆորի Սև ծովի մուտքը իսպառ կը փակվեր անմիջապես ականներով, այլևս դադրելով ամեն շոգենավային երթևեկ։

Տեսնելով, թե անկարելի կ'ըլլա զիս բռնադատել ղրկելու Երզնկա, քանի մ'օր վերջ նույն Պաշտոնին կը կոչեին Պրուսայի Առաջնորդ և ինձ օծակից ողբացյալ Տ. Սահակ Ծ. Վարդ. Օտապաշյան։

Սա մղված տիրող ընդհանուր խանդավառության հոսանքեն, և հակառակ զգուշական եղբայրական թելադրություններուս հայ օրաթերթերու շռայլած ծափին ու գովքին մեջ կը մեկներ Սեբաստիա։ Քաջությունը կը պակսեր իրեն, հոսանքին դեմ դուրս

---

Վանն ու Երզնկան, իբր անմիջական սահմանակից գավառներ Ռուսիո, վերահաս վտանգի իսկ ենթարկված են այժմեն, ապաժման կարգադրությամբ մը հովիվներ կարգելով. անհեռատես իր ընթացքին ծանր պատասխանատվությունը կը կարծե ձգել. ներկայիս ճամփորդելու իսկ անկարողության դատապարտված հովիվներու վրա։

Այս և այս կարգի շարք մը խնդրոց մասին, պատասխանատուները արդարությամբ և անաչառությամբ ճշտելու «դժբախտ պարագան» թողլով հանդարտ առաջին առիթին, տասնեհինգ տարվան եկեղեցական պաշտոնավարության ընթացքին, առաջին անգամ ըլլալով, ստիպված եմ բացարձակապես հրաժարիլ սույն «անվանական» Պաշտոնեն։

Որովհետև չեմ ուզեր կրավորական հնազանդությամբ մը, քաջալերել հոգևոր արդի իշխանությունդ իր սխալ ու անհեռատես քայլերուն մեջ։

Գիտնալով հանդերձ, որ հոգևոր իշխանությունեն (1913) ի Գերմանիա ուսանելու արտոնյալ եմ, ու եվրոպական պատերազմին պատճառով միայն, առժամապես Պոլիս դարձած հյուրաբար, մեծասանորդ ժամու եղած դիտումնավոր այս կարգադրության համար, մի զարմանաք, Սրբազան, խնդրեմ, եթե հայտնեմ խորին ցավս։

Մնամ խոնարհ ծառա Ազգիս
Գ. Ծ. Վարդ. Պալաֆյան։

(Պատճեն)



գալու խիզախաբար, և միայն մեկնած պահուն լուր կը ղրկեր ինձ, թե «թեպետ չուզելով, բայց ճարահատ պիտի երթամ, վի քու դեմ պատրիարքարանի հանած հալածանքը կը վախնամ, որ իմ դեմս ալ հանվի...»։

Սեբաստիա իր ծննդավայրը մեկ քանի օր հանգիստ ընելե վերջ, երբ ճամփա կ'իյնար դեպի իր պաշտոնավայրը՝ Երզնկա, Ճազիվ Սեբաստիայեն տասը ժամ հեռու՝ Սուշեհիրի մոտ, Իթթիհատի կազմակերպած, և ներքին գործոց նախարար Թալեաթի կողմե հրահանգված ձիավոր «չեթաներու» մահաբույր ինն գնդակներուն ներքև հոշոտված իմ տեղը չարաչար կը սպանվեր եղերաբախտ Սահակ վարդապետ, անմեղ զոհը ըլլալով իր անհեռատես պետերուն անխորհուրդ կարգադրությանը։

Ապա փառավոր սգահանդես կը սարքվեր Մայր Եկեղեցվո մեջ, և ողբացյալին, իբր պարտականության ճամփուն վրա ինկած զոհ, դրվատիքը կ'ըլլար մարդոց կողմանե, որոնք անձնապես զգուշական ամեն միջոց ի գործ կը դնեին, պարտականության այդ իրենց ներբողած ճամփուն վրա շատ ԱԺԱՆ ԿԵՐՊՈՎ չինարու համար...

Իսկ ես անձամբ ներկա կ'ըլլայի օծակիցիս այն սրտաճմլիկ սգահանդեսին, որ եթե կույր հնազանդության համակերպող ոգի ունենայի, անշուշտ ինձ համար էր, որ պիտի կատարվեր մահվան այս համազգային մեծ հանդեսը։ Սակայն հետո զոհաբերված միլիոնավոր հայ ժողովրդյան ահավոր նահատակությամբը պիտի մոռցվեր անհիշատակ։

Բայց եղերաբախտ Սահակ վարդապետը այս ծրագրյալ սպանությունը սկիզբն էր երկանց...

Թալեաթ այս անգրանիկ ոճիրը գործել տվավ համաշխարհային պատերազմի վաղորդայնին, և ռուս-Թուրք պատերազմի սկզբնավորությունեն անմիջապես վերջ, տարված սա մտավախությունեն, թե հայոց Պատրիարքարանը իր կողմե մասնավոր եկեղեցական պատվիրակ մը կը ղրկե ռուսական սահմանագլուխ, անշուշտ Երզնկա առաջնորդ ղրկելու պատրվակին ներքև, գաղտնապես հրահանգելու համար ռուս բանակի հայ զորավարներն և հայ կամավորական բանակի պետը՝ Անդրանիկը...

Ինչպես 1877—78 ռուս-Թրքական պատերազմին, հոգելույս ներսես Պատրիարքի կողմե Վահան վարդապետ պարտիզակցի ղրկված էր իբր պատգամավոր Լորիս-Մելիքովին։

Այս ոճրին քաղաքական բնույթին կապված չէր մնար, վասն զի չերքեզի զգեստով ծպտված ութը թուրք սպաներն, պետական «Մավզերի» գնդակներով հեք վարդապետը սպանելէ վերջ, պաշտոնաթղթերը առնելով մեկնած էին, կառքին մեջ սպանվալին մոտը թողնելով ոսկի ժամացույցը և մեծաքանակ դրամը։ Այս վերջին հանգամանքը կը հաստատեր ինքնին, թե սպանության նպատակը գողություն չէր։

Այս պատմական ահավոր օրերուն, հայ քաղաքական կուսակցությանց ղեկավարներու կրավորական դիրքին պատճառով, ազգին ճակատագիրը իրապես վարող Պոլսո ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆն ևս շվարած վիճակի մը մեջ կը գտնվեր, և բոլորովին անընդունակ էր կշռելու կացության գահավեժ ծանրությունը։

Տիգրանակերտեն Պոլիս բերված և հազիվ տարիե մը ի վեր պաշտոնի վրա գտնվող Պատրիարքը ևս կարողությունը չուներ ահավոր այս կացության բախտորոշ վիճակը ըմբռնելու։ Զի բոլորովին անծանոթ մըն էր մայրաքաղաքին պետական և ազգային անձերուն և անցքերուն, և նա մանավանդ շրջապատված էր խորհրդականներե, որոնք հեռու էին խմաստուն «Մենտորներ» ըլլալե։

Իսկ վեց ամսե ի վեր պատահական մարդոցմե ընտրված քաղաքական ժողովն ևս Պատրիարքին չափ անծանոթ էր իր շուրջի իրադարձությանց։ Որով Ազգին պաշտոնական ղեկավարներն ենթարկված էին անգիտակցաբար Պատրիարքարանին դուրսն ու մանավանդ ներսն սողսկող հայ դավաճաններուն մաքիավելական խարդավանանքներուն։

Այս հայ դավաճաններեն ամենավտանգավորներն էին Պեշիքթաշի տխրահռչակ Մխիթար Արթին Մկրտիչյան, որ ձերբակալյալ հայ մտավորականներուն սև ցանկին գլխավոր հեղինակն էր և Պատրիարքարանի գործակատար Գամեր Շիրինյան, որը Թալեաթ ճարտարորեն կը գործածեր՝ իրազեկ մնալու համար Ազգ. Պատրիարքարանի ներքին ամեն իրադարձությանց։

Գառնազգեստ գայլերու ոհմակ մը, որուն մեջ հեղափոխականի պատվանունը կրող բախտախնդիրներ ևս չէին պակսեր. ինչպես Հմայակ Արամյանց, խլուրդային ժիր գործունեության մեջ էին. և ամեն ջանք կ'ընեին հայոց Պատրիարքը համոզելու Թալեաթի կողմե ապահովիչ «սելամներ» բերելով, թե հայոց որևէ վտանգ չսպառնար...



Ներքին գործոց ամենազոր նախարար Թալեաթ, հայ և թուրք բոլոր փորձ դավաճաններու և լրտեսներու գաղտնի բանակը շարժման մեջ դրած էր օրը օրին իրազեկ մնալու համար մայրաքաղաքի հայ կյանքի գաղտնի կամ հայտնի բոլոր փուլերուն. ըստ այնմ խավարին մեջ իր ղեկը գործածելու համար դեպի հայ ցեղի ջնջման ԱՐԴԵՆ ՈՐՈՇՎԱԾ արյունածարավ նպատակը։

Իսկ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒ ՊԵՏԵՐՆ ևս, նույնպես շվարած վիճակ մը ունեին. ճշմարտություն է, որ շատ ավելի լավատես էին, քան հոռետես։

1914 հուլիսին, պատերազմի սկսած միջոցին Կարնո մեջ Դաշնակցական կուսակցությունը իր տարեկան համագումարին մեջ որոշած էր չեզոք մնալ, ի դեպ Թուրքիո պատերազմին մասնակցության։ Սակայն միանգամայն ամեն ջանք ի գործ դրած էին իրենց իթթիհատական թուրք բարեկամներուն և ի մասնավորի Թալեաթի մոտ, որպեսզի Թուրքիա զգուշանա մասնակցելե այս մեծ պատերազմին։

Մյուս կողմե թուրքերու պատերազմին մասնակցելեն վերջ դաշնակցականները մերժած էին իթթիհատի հրավերը, օգնելու թուրք կառավարության, հակառակ իթթիհատի շռայլած խոստումներուն։

Բայց հայ քաղաքական կուսակցությանց ընթացքը հանդեպ թուրք կառավարության միշտ բարյացակամ եղավ ԵՎ ԵՐԲԵՔ ԴԱՎԱԴՐԱԿԱՆ։ ԻՆՉՊԵՍ կը ճգնին ցույց տալ հայ արյան պատասխանատու մեծ եղեռնագործ իթթիհատական փախստականները, անշուշտ իրենց մեծ ոճրին չքմեղանքն ապահովելու նույսով։

Պոլիս ժամանմանս առաջին օրերուն իսկ, փութացի այցելել օրվան Պատրիարքին. նախկին Պատրիարքներու, Ազգ. երեսփոխաններու, քաղաքական ժողովի անդամներուն, հայ քաղաքական կուսակցությանց ինձ վաղածանոթ և բարեկամ պետերու, և ստացած ընդհանուր տպավորությունս սա եղավ, որ ոչ ոք կրցած էր թափանցել կացության իրապես ծանրակշիռ հանգամանքներուն և ՈՉ ՈՔ ՎԱՂՎԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՆԵՐ։

Վերոհիշյալ անձերեն շատերը կը պնդեին, թե Թուրքիա պատերազմի չի պիտի մտնե, և թե թուրքերու պատերազմին սկիզբեն հռչակած զորահանությունը պարզապես զգուշական

կանխահոգ միջոց մրն էր։ Կային պարզամիտներ, որ համոզված էին, թե ցորչափ իթթիհատի կուսակցության ձեռքն է պետական դեկը, և Հայոց սիրելի Թալեաթն ևս ներքին գործոց նախարար է, հայոց որևէ վտանգ չսպառնար։

Հանդիպեցա հայ քաղաքական կուսակցությանց պետերու, որոնք ուրախ և գոհունակ ժպիտով մը ականջիս կը փսփսային, թե իթթիհատի կոմիտեն հայոցս խոստացած է, Բալկանյան 1913-ի պատերազմին ծնունդ առած հայաբնակ վեց նահանգներու բարեկարգության ծրագիրը՝ ավելի ընդարձակ սահմանի մը մեջ գործադրելու և հայերը գոհացնելու. եթե մենք օգնենք Թուրք կառավարության, պատերազմի մասնակցության պարագային։

Ինչպես կը տեսնվի մեկը մյուսեն խախուտ և նույնիսկ հակասական վարկածներ. որով նեղելի էր ենթադրել, թե ազգին ճակատագիրը վարող այս մարդոց, բացարձակապես կը պակսեր պահանջված հեռատեսությունը և հստակատեսությունը, որքան ալ ճշմարիտ ըլլար պնդել, թե կառավարել հեռատեսել ըսել էր։

Թեպետ Եվրոպայի ամենամեծ ազգերու քաղաքագետ և գիվանագետ մարդիկն ալ շարաշար խաբվեցան, չի կրնալով կանխատեսել ապագա գահավեժ դեպքերն, բայց ինչ որ նեբելի չէր ազգին ճակատագիրը վարող ղեկավարներուն, սա էր, որ պետք չէր այսքան կույր վստահություն ցույց տային Ջինգիզխանի և Լենկթեմուրի ժառանգորդ և վայրագ բնազդներու ենթակա այս մոնղոլյան Թուրք ցեղին. երբ հեռավոր ու մոտավոր 500 տարվան արյունոտ պատմություն մը կար մեր առջև ահավոր...

Իսկ իթթիհատի կոմիտեի 1909 ապրիլ 1-ին Ադանայի մեջ սարքած ահավոր կոտորածը շատ թարմ էր ամենքին մտքերուն մեջ, և այս մասին հրատարակված Թուրք և հայ քննիչ մարմնոյն պաշտոնական տեղեկագիրը, իրավունք չէր տար կասկածելու իթթիհատի եղեռնապարտ մասնակցության և բացարձակ պատասխանատվության մասին։

Իսկ երբ Թուրքիա պատերազմ հրատարակեց Համաձայնական պետություններու դեմ. քաղաքական մեր կուսակցությանց ղեկավարներն ԿԱՏԱՐՅԱԼ ՈՒՂՂԱՄՏՈՒԹՅԱՄԲ իրենց խոստացած չեզոքությունը պահեցին, զգուշանալով որևէ դժվարություն հանելե իթթիհատական կառավարության դեմ։



Եվ այս անոր համար, որ քաղաքական հայ կուսակցությանց մտավորական ղեկավարները, գաղափարի ազնիվ ընկերներ փորձվեցան նկատել Թուրք իթթիհատական մարդիկը, որոնք պարզապես փողոցի ոճրագործներ էին, բայց բախտի անակնկալ մեկ հարվածով և իրենց հանդգնությամբ մեկ անգամեն բարձրացած վարչապետական և նախարարական ամենապատասխանատու բարձր աթոռներու։

Ստուգիվ Սելանիկեն 1908-ին կարծեցյալ ազատությունը բերող երտասարդ այս Թուրքերը, գաղափարապաշտ ազատականության դիմակին տակ Թաքնված ամենավայրագ կատաղի վագրեր էին։

Բայց ափսո՜ս, այս դառն ճշմարտության այն ատեն միայն համոզվեցան, երբ արդեն մահվան ճամփան բռնած կ'երթային, և փրկության որևէ հույս այլևս չէր մնացած...

Այնքան խաբված էին Թալեաթի և ընկերներուն շողոմարար և փաղաքուշ շռայլած բարեկամական արտահայտություններեն և մեղրածորան խոստումներեն, որ երբ Կալաթա Սերայեն ոստիկանապետ մը ոստիկաններով Բերա կը ներկայանա դաշնակցության ղեկավարներեն և ռուսահայ փայլուն գրագետներեն Ակնունիի (Խաչատուր Մալումյան) և կը հրավիրե, որ իբր ձերբակալյալ հետևի իրեն դեպի ոստիկանատուն, սա ապշած կը հարցնե, թե Թալեաթ լուր ունի՞...— Ու երբ քաղաքային հագուստով ներկայացող ոստիկանապետը ցույց կուտա Թալեաթի ստորագրությունը կրող ձերբակալման հրամանագիրը, ողբացյալ Ակնունի ալ ավելի զարմացած կը պատասխանե, թե ինք Թալեաթի մոտ ճաշի էր քիչ առաջ, հապա ինչո՞ւ ոչինչ չէր ըսած իրեն...

Տարաբախտ Ակնունի՝ իբր գաղափարապաշտ պատվավոր մարդ դեռ չէր կրնար ըմբռնել, թե մի՞թե այսքան սինիք կերպով Թալեաթ կրնար իր դեմ դավադրել։ Այն Թալեաթը, որ 1909 մարտ 31-ի ռեաքսիոնի օրերուն իր տան մեջ պահած էր, փրկելով իրապես Թալեաթի կյանքը իր իսկ կյանքին վտանգովը։

Իսկ երբ Ակնունի Այաշեն իր հինգ ընկերներուն հետ կը տարվեր Տիգրանակերտի պատերազմական ատյանը դատվելու պատրվակին տակ, սպանվելու համար, երբ, հասնելով Օսմանիե և ապա մեր իր տեղին տալիք մանրամասն հանգամանքներու ներքև, երբ իրազեկ կ'ըլլա, թե դեպի սպանդ կը տարվին, կարի հուզված և դառնությամբ կ'ըսե իր շուրջիններ-

բուն. Ջեմ ցավում մահվանս վրա, զի մի օր անպայման պիտի գար մահը մեզ գտնել, այլ միայն ցավում եմ, որ մենք էս Թուրք սրիկաներից խաբվեցանք...

Թուրքին խաբեբայության ու նենգամտության իրապես կը համոզվին միայն այն ատեն ավա՜ղ, երբ իրենց մահվան ճամփուն 4/5 մասը արդեն առած էին, և որևէ ապաժաման զղջում, իրենց փրկություն չէր բերեր դժբախտաբար...

Իսկ Կիլիկիո շրջանի դաշնակցության ղեկավար հանրածանոթ Վահագ, երբ Ադանայի մեջ իրեն մտերիմ բարեկամները կը զգուշացնեն զինքն ըսելով, որ Վահագ, բոլոր ընկերներդ ձերբակալեցին և սպանեցին, շատ մի երևար մեջտեղ ու հետքդ անհայտացուր, կը պատասխանե Վահագ պաղարյամբ և խորին համոզմամբ. ցորչափ Ջեմալ Փաշա (Սուրիո և Պաղեստինի Թուրք բանակին վերին հրամանատար) ողջ է, մազիս դպչող չի կրնար ըլլալ։— Ապա իր սենյակին մեջ ոսկեզօծ շրջանակի մեջ պատվո տեղը կախված Ջեմալ Փաշայի մեծադիր լուսանկարը ցույց տալով կ'ըսե—կե՜ցցե իմ մտերիմ և հայասեր անկեղծ բարեկամս Ջեմալ Փաշա...

Իր տեղին անհրաժեշտ մանրամասնությամբ պիտի հիշեմ նաև Վահագնի Ջեմալ Փաշայի կողմե իսկ, կախաղան հանման պարագաները։ Սա ալ զոհ գնաց Թուրքերու վրա ունեցած անարդարանալի կույր վստահության։ Որ սակայն իրենց կյանքին հետ, ավա՜ղ արժեց նաև միլիոնավոր անմեղ ցեղակիցներու անգին և անփոխարինելի կյանքերը...

Եվրոպայեն արևելք եկող և ասիական ժողովուրդներու բարքերուն իսպառ անծանոթ, մեր այս հայ քաղաքագետները կամ մտավորականները դեռ չէին համոզված Թուրքին ինք իր համար պարծանոք տրված սա վկայության, թե ՆԱՊԱՍՏԱԿԸ ԹՈՒՐՔԸ ԿԱՌՔՈՎ ԿԸ ԲՌՆԵ։ Որ ըսել կ'ուզվի, թե Թուրքը նենգամտությամբ կը բռնե նապաստակը կառքին մեջ նստած...

Այո՜. երբեք չէր կարելի վստահիլ Թուրքին, զի ըլլա շինական թե քաղքենի, համալսարանական թե հույժ տգետ իթթիհատական թե իթիլաֆական կամ ահրար, կրոնասեր թե անկրոն, բռնապետական ըլլա թե սահմանադրական... ամեքն ալ կեղծավոր են, խաբեբա և նենգամիտ։

Եվ թե Թուրք ազգը՝ իր այս ունեցած անսպառ դրամագլխին կը պարտի իր ցարդ պահած գոյությունը։

Հայոց այս ընդհանուր լավատեսության և կրավորական շվարուն համակերպության մեջ, իթթիհատական քամահրելի արտասահմանի և ի մասնավոր Կովկասի ռուսո-Թրքական սահմաններուն վրա տեղի ունեցող հայ կամավորական շարժումները, օրը օրին և գաղտնապես կ'արձանագրեր ի հաշիվ հայոց պարտքին...

Քաղաքական և զինվորական շարժումներ, որոնք տեղի կ'ունենային հակառակ Թուրքիո հայ քաղաքական կուսակցությանց պատասխանատու պետերու կամքին, ստեղծելով այսպես հայ ժողովուրդին շուրջը կատարյալ քաոս մը։

Իսկ Թուրք իթթիհատական կառավարությունը և Թուրք օրաթերթերը սաստիկ կը զայրանային, տեսնելով իրենց սահմաններուն մոտեցող հայ կամավորական գունդի մի գլուխ օսմ. պառլամենտի անդամ, Կարնո պատգամավոր Գարեգին Փաստերմաճյանը, որ առանց զինվորական որևէ արժանիք ու փորձառություն ունենալու, և ոչ մեկ իրական պատերազմական գործ կատարելու, մեկ քանի զինավառ ընկերներով Թիֆլիսի մեջ լուսանկարել կու տար ինքզինք մոսիններ ի ձեռին. և իբր «ռեկլամ»՝ «Լոնդոն Դեյլի Գրաֆիք» թերթին ղրկելով վայրաբար կը գրգռեր Թուրք պետական մարդոց և ամբոխի արդեն ատելավառ վրեժխնդրական կիրքերն, ընդդեմ անզեն և արդեն շվարած հայ դժբախտ ժողովրդյան։

Անգլիական նավատորմին Դարդանելի դեմ կատարած ուժգին հարձակման օրերուն կը զուգադիպեր 1915 ապրիլ 7-ի Վանի ժողովրդային շարժումը։

Սակայն Վանա այս շարժումը, ինչպես իթթիհատական պետական մարդիկ, գլուխ ունենալով հայոց մեծ դահճապետը Թալեաթ կը փորձեն ցույց տալ, երբեք ապստամբական շարժում մը չէր կանխապես։

Վանի խռովություններն, իթթիհատական կառավարության դատապարտությունն իսկ են։

Երիտասարդ Թուրքերու ոճրածարավ այս ոհմակը՝ տարված համաթուրանական և համիսլամական ցնորամիտ գաղափարներե, կ'երազեր, արևը մայր մտնող օսմ. կայսրության հետզհետե խորասուզվող սահմաններուն վրա, կանգնել հսկա կայսրություն մը, կազմված օսմ. երկիրներեն զատ Եգիպտոսե, կովկասյան իսլամներե, Պարսիկներե, Աֆղանիստանե, Պելուճիստանե, տարածելով մտացածին այս իսլամական մեծ կայսրությունը մինչև Հնդկաստան։

Առանց հիշելու, որ օսմանյան կայսրության սահմաններուն մեջ դարեր երկար ապրող իրենց կրոնակիցներն ևս, ըլլան խալամ ալպանացիներ, խալամ արաբներ, խալամ չերքեզներ և խալամ քուրդեր, ամենքն ալ չկրնալով հանդուրժել թրքական աղաղակող անարդար և վատթար վարչության, պարբերաբար իրենց ապստամբություններով ուզած են միշտ խորտակել թրքական բռնակալության արյունոտ լուծը, և ապա ձեռք բերած են իրենց ցեղի անկախությունը ու ազատությունը։

Ալ կարելի է երևակայել, թե եթե խալամ զանազան ցեղեր չէին կրնար հանդուրժել, հապա քրիստոնյա բոլորովին ճնշված ժողովուրդները՝ հայը, հույնը, ասորին, քիլտանին ի՞նչեր կը քաշեին թուրք ոճրապարտ ռեժիմին ներքև։ Բայց որովհետև այս բոլոր ցեղերու մեջ հայերն էին միայն, որ Եվրոպայի մեջ իրենց ողբ ու կոծովը թուրքերու դեմ գրգռություն առաջ կը բերեին, և Եվրոպայի հանրային ձայնը կը լարեին ընդդեմ ջարդարար թուրքին. ուստի թուրք իթթիհատական կառավարությունը ու կոմիտեն կ'ուզեին համաշխարհային պատերազմին ընծայած բացառիկ այս պատեհությունը օգտագործել և հայ ցեղը մեջտեղեն վերցնել։

Չի ռուս պետությունը 1826-ին հույնը, 1854-ին Ռումանը և Սերբը, 1878-ին Բուլղարը ապստամբեցնելով Թուրքիան զենքի ուժով անդամահատած էր։ Այժմ տեսնելով, որ ռուս պետությունը 1913-ի Բալկանյան պատերազմի միջոցին միակ ստրուկ մնացած հայերուն վեց նահանգներու (Կարին, Վան, Բաղեշ, Սեբաստիա, Խարբերդ և Տիգրանակերտ) բարեկարգության ծրագիրը հետապնդելով, օսմ. երկիրը կրկին անդամահատել կը փորձեր։ Թուրք պետությունը ևս, այս անգամ ի նպաստ հայերու, իր սրտին վրա կատարվելիք հավանական անգամահատության առջևն առնելու համար իսպառ բնաջինջ ընել որոշեց հայ ցեղը։ Առ այս հետևյալ գաղտնի միջոցներն գործադրեց, դատելով անշուշտ իրողությանց բնական և տրամաբանական ընթացքեն։

Ա. Ամեն բանե առաջ համաշխարհային պատերազմի հայտարարությենեն անմիջապես վերջ Թուրքիո մեջ հրատարակված ընդհանուր զորահանության օրինական պատրվակին ներքև, հավաքել հայ ժողովրդի ամբողջ երիտասարդությունը և այր մարդիկը 20—46 տարիքի մեջ գտնվողները։ Ասով հայ ժողովուրդը արդեն զրկված պիտի ըլլար անձնապաշտպանության իր



հզոր և հուսալից բազուկներեն։ Մյուս կողմեն տնտեսապես ևս պիտի զրկվեր անշուշտ իր աշխատող ձեռքերեն ու ենթարկվեր նյութական թշվառության, պատերազմին երկարելուն համեմատությամբ։ Իսկ հայերե իբր զորք առնված շուրջ 50.000 այր մարդիկ թեպետ նախապես զենք ստացան, սակայն պատերազմին երրորդ կամ չորրորդ ամիսը ռուս-թրքական սահմանագլուխի մոտ, Քեոփրիվ-Քեոյի առջև տեղի ունեցած սաստիկ կռիվներու ատեն՝ մեկ քանի տասնյակ հայ զինվորներու դասալքության պատճառով, հայ զինվորությունը ամբողջապես զինաթափ ընելով, ղրկվեցան Փոքր Ասիո խորերը, իբր թե ճամփա շինելու համար։ Բայց դիտումնավոր կերպով զրկելով բավարար սնունդե, զգեստե, դեղե ու դարմանե. հետզհետե հայ «ամլե թապուրի» զինվորները անոթությենե և ցրտահարությենե կոտորակվեցան։ Մինչև որ 1915 հուլիս-օգոստոս ամիսներուն հայկական համատարած ջարդերու ատեն դեռ ողջ մնացած բեկորներն ևս անխնա կոտորվեցան իրենց ընկերակից թուրք զինվորներու կողմե՝ հրամանավ պատերազմական նախարար Էնվերի։

Բ. Իր սկզբնական սաղմին մեջ ձախորդության մատնելու համար դիմադրության ամեն հավանական փորձ, որոշեցին ի մի հարված ձերբակալել մայրաքաղաքին հանրածանոթ մտավորական և ազգային բոլոր գլխավոր գործիչները, առանց խտիր դնելու կուսակցականի կամ անկուսակցականի, ազատականի թե պահպանողականի, ի՞նչ ասպարեզի մեջ ալ կ'ուզե թող ըլլան, բավ է, որ ազգային շարժման մը պարագային կրնան գործոն ազդակ մը ըլլալ...

Գ. Ապա զինաթափ ընել մայրաքաղաքին և ներքին բոլոր գավառներու մեջ մնացած ամբողջ հայությունը, որոնք պատերազմական տուրք վճարած էին արդեն։

Դ. Բայց նախքան ընդհանուր զինաթափության ձեռնարկելը, անմիջապես զինաթափ ընել անպարտելի Զեյթունը և քանդել առյուծներու այս դարևոր լեռնային բույնը, որ կրնար Կիլիկիո հայերու ընդհանուր տեղահանության միջոցին մեծ դժվարություններ հանել և քաղաքական ու զինվորական ծանր կնճռոտության դրդապատճառ դառնալ։

Ե. Նույնպես հյուսիսային Հայաստանի, կամ ռուս-թրքական սահմանագլխի հոծ հայության նախքան տեղահանությունը և սպանդը՝ Զեյթունի նման ամենքեն առաջ զինա-

թափ ընել Վանի հայությունը և իսկույն տեղահան ընել։ Զի Վանը գտնվելով ռուս-թուրք և պարսիկ սահմանագլխի հյուսիս-արևելյան անկյունը, և ըլլալով ամենահայաշատ կուսակալությունը, ըստ 1914-ի պատրիարքարանի պատրաստած վերջին մարդահամարին ավելի քան 200.000 հայ կ'ապրեր Վանի կուսակալության մեջ—կրնար արդարև քաղաքական և ռազմական ծանր կնճռոտություններ պատճառել ուժ ստանալով դեպի Վան առաջացող ռուս և կամավորական հայ բանակեն։

Այսպես իթթիհատի ղեկավարներն ամբողջ Փոքր Ասիան վերածելով մեծ եռանկյունիի մը, արևմուտքը Պոլիս, հյուսիս-արևելքը Վան, և հարավը Զեյթուն, նախքան հայաջինջ ահավոր համատարած սպանդը սկսիլը, որոշված էր ամեն բանե առաջ զինաթափ ընել և շարժելու բոլորովին անընդունակ վիճակի մը մեջ դնել հայկական սպառնացող վիշապին այս երեք գլուխները...

Այս մտոք, 1915 մարտի վերջը Պոլսո կենտրոնական կառավարությունը՝ պաշտոնական հայտարարությամբ մը, հրավեր ըրավ Պոլսո ամբողջ ժողովուրդին, առանց ցեղի ու կրոնի խտրության զենքերը հանձնելու։ Բայց այս ընդհանուր զինաթափության քողարկյալ իսկական նպատակն էր, Պոլսո 120.000 հոծ և կենտրոնացյալ հայությունը նախ և առաջ զինաթափ ընել։

Ճիշտ նույն օրերուն միաժամանակ ձեռնարկվեցավ Վանի և Զեյթունի հայ ժողովրդյան զինաթափության, անսաստողները անմիջապես գնդակահարելու խիստ սպառնալիքով։

Սակայն եթե Վանի մեջ դեպքերը գահավեժ գնացին, պատճառը Էնվերի քեռայր և Վանի կուսակալ Ճևտեթի ու իր իթթիհատական արբանյակներուն, զինաթափության այս գործին մեջ չափեն ավելի եռանդ ցույց տալն էր։ Որ զսպողական արտակարգ խիստ միջոցներու դիմած ըլլալով, զորավոր ընդվզումի տեղի տվավ։

Թե Վանի հայությունը ստուգիվ ապստամբական որեվ կանխորոշ նպատակ և մասնավոր պատրաստություն չ'ուներ, անով կարելի է դյուրավ ապացուցանել, որ Վանի կուսակալության ամբողջ հայությունը, գլուխ ունենալով օսմ. պառլամենտի անդամ և դաշնակցական պետերեն ողբացյալ Վռամյան, ոչ միայն ապստամբական շարժում մը ստեղծելու հետամուտ չէին, այլ, ընդհակառակը, խոհեմ ու հեռատես ընթացքով մը հաջորդաբար գաղտնի պատվիրակներ կ'ուղարկեին ս. Էջմիածին վեհափառ ս. Կաթողիկոսին և Թիֆլիս ազգային բյուրոյին, որպեսզի կովկասահայ կամավորական շարժումին վերջ մը տալով, վերապահ և սպասողական ընթացք մը բռնեն, զի գրգռելու համար իթթիհատական ոճրածարավ թուրք կառավարությունը, և ռուս-թրքական սահմանագլխի վրա ապրող հարյուր հազարավոր հայությունը չենթարկելու համար անել կացության մը...

Տարաբախտ Վռամյան, մեկ կողմե Վանի կուսակալին գահավեժ ընթացքին վրդովեցուցիչ թափը կոտրելու, և կուսակալ Ճևտեթի ու տեղվույն զինվորական իշխանություններուն հետ հույժ բարեկամական հարաբերություններ շարունակել ջանալով հանդերձ, մյուս կողմե Պապը Ալի (Պոլսո կենտրոնական կառավարության) հիշատագիր մը կը հղեր հետզհետե կնճռոտող տագնապալի կացության, բարեկամական դարման մը խնդրելով թախանձագին։

Իսկ Վանի կուսակալ Ճևտեթ հայերու մեջ տակավ խմորվող անձնապաշտպանության ոգին խեղդելու և կենտրոնեն հրամայված հայաջինջ ծրագիրը դյուրավ գործադրել կարենալու համար, ըստ թրքական ավանդական սովորության, դավադրությամբ հանկարծ ձերբակալել կու տար Վանի մեջ Վռամյանը։ Իսկ դիտումնավոր կերպով Վանեն իբր թե քննության և հանդարտեցնելու համար շրջակա հայ գյուղերը ղրկված դաշնակցական հայտնի գործիչ Իշխանը, նույնպես նենգամտությամբ գիշերով սպանել տալով ուղեկից ոստիկանապետին ու ոստիկան զինվորներուն ձեռամբ, կամա-ակամա Վանի հայ ժողովուրդը ինքնին կը մղեր փոխադարձ անձնապաշտպանության արագ միջոցներու, կանխելու համար իթթիհատական կառավարության նենգամիտ հայաջինջ դավադրությունը։

Իթթիհատական կենտրոնի և Վանի կառավարական ղեկավարները և հավատարիմ գործակալներն գժտության քամի ցանած էին և զարմանալի չէ, եթե արյան փոթորկին կարմիր հունձքը արդեն սկսած էր 1915 ապրիլի սկիզբը։

Այս օրերուն կը սկսեր նաև զինվորական խիստ հալածանք մը ընդդեմ քաջարի Զեյթունի զինվորական փախստականներուն, որոնք լեռը բարձրացած էին։ Թուրք կենտրոնական և Հալեպի կառավարական ղեկավարներն տարաձայնելով, որ իբր թե Զեյթուն ապստամբած է՝ ոստիկան զորքերու հազարա-

պետ Սուլեյմանի ղեկավարությամբ զինվորական արշավախումբ մը ղրկվեր Զեյթուն՝ զսպելու կարծեցյալ ապստամբությունը։ Իսկ զեյթունցի քաջերեն 7—800 հոգի բարձրանալով տեղույն ամենաբարձր կետը եղող Թեքե կոչվող անմատչելի վայրը՝ դիմած էին անձնապաշտպանության։

Այս կռիվներուն մեջ սպանվելով հազարապետ Սուլեյման, հավար կ'երթար Մարաշի և Հալեպի կառավարությանց, թե Զեյթունի հայերը արդեն բարձրացուցած են ապստամբության դրոշը...

Մինչդեռ եթե Զեյթուն ապստամբած ըլլար, մի՞թե Թուրք քանի մը հազար զինվոր կրնար զինաթափ ընել քաջարի և անընկճելի այս 20.000 լեռնականները, որոնք ամիսներ երկար կրցած էին դիմադրել, հույները 1898-ին Թեսալիո մեջ պարտության մատնող Էտհեմ փաշայի հիսունհազարանոց բանակին։

Ընդհակառակը, զեյթունցիները քանի անգամ որ լրաբեր ղրկեցին Աղանա Կիլիկիո ս. Կաթողիկոսին և Մարաշ՝ տեղվույն հայ երևելիներուն. միշտ պատասխան ստացան, թե չըլլա, որ ծայրահեղ արարքներու դիմեն ու ասով վտանգեն Կիլիկիո ամբողջ հայության գոյությունը։

Աքսորե 1919 վերադարձող զեյթունցի հայերը այս պատճառով ալ սաստիկ զայրացած էին, որ Կիլիկիո կաթողիկոսը արգելք եղավ իրենց անձնապաշտպանության և դիմադրության նպատակին։

Եթե Զեյթունի հայերը ապստամբած ըլլային. մի՞թե ոչխարի հոտի նման առջևը կ'իյնային մեկ քանի հարյուր ոստիկաններու և կը տարագրվեին Գոնիայի մերձակա ճահճախուտ Սուլթանիյե զուտ իսլամական գավառակը։

Բայց Թուրք իթթահատական կառավարությունը մեկ կողմեն, մինչ հայերը բնաջնջելու իր գաղտնի ծրագիրը գործադրության կը դներ, մյուս կողմե իր չքմեղացումի միջոցներու հնարման մասին ևս անտարբեր չէր, ըստ Թրքական առածին, թե մինարեն գողցողը պատյանը ևս հարկավ կը պատրաստե...

Ինչպես ներքին գավառներու, նույնպես և Պոլսո հայությունը, իր պաշտոնական ամեն մարմիններով բոլորովին անտեղյակ 1915-ի ս. Զատկին զուգադիպող հույժ տագնապեցուցիչ և դահավեժ այս բոլոր իրադարձությանց, խինդ ու խնծիղի մեջ



նվագահանդեսներու, պարահանդեսներու և զվարճության մեջ թաղված, անսովոր խանդավառությամբ մը Պոլսո գրավվելուն կը սպասեր օրեօր...

Սակայն հոն վերը, պարսիկ դեսպանատան հանդիպակաց իթթիհատի կենտրոնական ակումբ-որջին մեջ, ներքին գործոց ամենազոր նախարար Թալեաթ, իթթիհատի երկու սյուներուն՝ դոկ. Նազիմի և Բեհաէդդին Շաքիրի, ինչպես նաև կուսակցության ընդհանուր քարտուղար Միտհաթ Շուքրիի հետ, գլուխ գլուխի նստած, ժամանակը հասած կը համարեին մութին մեջ իրենց դարբնած ճյուղային հայաջինջ ծրագիրը գործադրության դնելու համար։ Սարսափելի ծրագիր մը, որը իրենց նախահայրերը ոչ թե գործադրած, այլև ոչ իսկ մտքով անցուցած էին, ենթարկվելով վայրապար եկող ու անցնող Թուրք բոլոր սերունդներու հավիտենական անեծքին...

Անցյալ անքաղաքակիրթ դարերու մեջ իսկ Թուրք նախնիքներու գլուխ հանել չկրցածը, որդիները մեկ քանի ամսվան մեջ ի գլուխ կը հանեին քաղաքակրթության այս հույժ լուսավորյալ դարու մեջ և քրիստոնյա Եվրոպայի աչքին առջև...

Թուրք պետության պատասխանատու և անպատասխանատու ղեկավարներն կը խորհրդածեին, թե համաշխարհային պատերազմը մինակ և բացառիկ առիթն էր, որ երբեք երկար դարերու ընթացքին ներկայացած ըլլար, բնաջինջ ընելու համար Թուրք կործանող կայսրության քաղցկեղը եղող հայ ժողովուրդը։ Քանի որ քաղաքակիրթ և քրիստոնյա Եվրոպան իրար բզկտելով զբաղած էր. իսկ զինակից Գերմանիան կրավորական իր լռությամբ, եթե ոչ ըստ երևույթին համամիտ, գոնե հակառակ ալ չէր... Պատերազմին սկիզբը տիրող ընդհանուր մտայնությենեն տարվելով, Թուրք պետական մարդիկ կը խորհեին, թե հարյուրին իննսուն տոկոս Գերմանիա հաղթող պիտի ըլլար, որով իրենք ևս իբր Գերմանիա զինակիցներն, հաղթականի հպարտ դիրքին մեջ գտնվելով, ոչ ոք պիտի համարձակեր իրենցմե հաշիվ պահանջելու միլիոնավոր անտերունչ ժողովուրդի հորդահոս թափած անմեղ արյան համար։

Իսկ եթե հակառակ ամեն ակնկալության պարտվեին, կը խորհեին Թուրքերը, թե արդեն վրա պիտի տային ամեն բան։ Գանե Թուրքիո ավերակներուն վրա ի նորո կազմվելիք սակավաթիվ հայերով Հայաստան մը հույժ տկար պետություն մը ըլլալով, կարելի էր ի մի հարված, պատեհ ժամանակի մը

մեջտեղեն վերցնել և հայ նորածին առյուծը իր խանձարուրին մեջ սպանել։

Այս օրերուն էր դարձյալ, որ թուրք բանակին իբր մարզիչ ֆոն տեր Գոլցի տեղ Պոլիս եկած և պատերազմին առթիվ Դարդանելի թուրք պաշտպանության գերման ղեկավար, զորվ. ֆոն տեր Զանդերս, պատերազմական նախարար և օսմանյան բանակին Սուլթանեն ետք իրական հրամանատար ու սպարապետ էնվերի հետ համախորհուրդ, կ'որոշեր ռուս-թրքական սահմանագլուխի քրիստոնյա ժողովուրդները, որ ըսել էր հայերը. զի ուրիշ քրիստոնյա ժողովուրդներ չկային, տեղահան ընել և փոխադրել պատերազմական գոտին հեռու եղող հարավի մարզերը, իբր թե պաշտպանելու համար օսմանյան բանակին թիկունքը։

Հայտնի էր, թե պատերազմական գոտիի անվան ներքև ապա ամբողջ հայությունը տեղահան եղավ, փույթ չէ, թե Գասթեմունիի նման սակավահայ և չեզոքացած կուսակալություն մը եղած ըլլար, որ բոլորովին հեռու էր պատերազմական հյուսիսի և հարավի գոտիներեն։

Ինչպես կանխավ հիշեցինք 1914 փետրվարին Բեռլինի գերմանո-թրքական կոմիտեի անդրանիկ բացման ժողովին, նախագահ ֆոն տեր Գոլցի ծրագիր առաջարկն էր, որ այսպես գործադրության կը դրվեր, պատերազմին անակնկալ օրեն առթած պատեհ դեպքերու զուգորդությամբ մը։

Բայց այս իբր թե զինվորական շարժառիթներով, պահանջ տեսնված տեղահանության պետական արմատական կարգադրության ետև, իրապես թաքնված էր ներքին գործոց նախարար Թալեաթ իր երեք օժանդակներովը։

Թալեաթ ջանք չէր խնայեր հաճախ դարանամուտ ըլլալու էնվերին անվան ետև. այնպես ցույց տալով, իբր թե էնվեր է հայոց այս ամեն չարիքը ընողը զինվորական պատճառներե դրդյալ։ Մինչդեռ էնվեր՝ բազմաթիվ ռազմաճակատներու վրա պատերազմական հետզհետե կնճռոտող խնդիրներով այնքան ծանրաբեռնյալ էր, որ շատ ժամանակ չուներ հայաջինջ քաղաքականության մը մանրամասնությամբ զբաղելու։ Այս հոգը թողած էր ամբողջապես Թալեաթին, այս մասին իր ձայնը տալով անոր։ Իսկ Թալեաթ՝ իբր ներքին գործոց ամենազոր նախարար, միայն զբաղած էր հայ ժողովուրդը բնաջնջելու ծրագրին գաղտնի գործադրությամբն, չմոռանալով միանգամայն



գետամուտ ըլլալու անհայտացնելու իր անլուր ոճիրներուն արյունոտ հետքերը...

Իսկ գերման հոենցոլերյան բռնապետական կառավարությունը ևս, իր կարգին լավագույն պատեհությունը գտած կը համարեր, թուրք պետությունը «վասալ պետության մը վերածելով, ամբողջ Փոքր Ասիան դարձնել գերման գաղթավայր մը։

Ի՞նչ հարկ կար արդարև, երթալ մինչև գերման աֆրիկյան հեռավոր գաղթավայրերն Կամերուն, մինչև ծայրագույն արևելք Տոգո և Քիաուշու, երբ Եվրոպայի այնքան մոտիկ Փոքր Ասիան, իր բնական հարստությամբ օժտյալ հարուստ և ջրառատ երկիրներով, կարելի էր արտադրող հրաշալի գերման գաղթավայրի մը վերածել։

Ինչպես 1913-ին բալկանյան պատերազմեն վերջ՝ ազգային պաշտոնով Կիլիկիա ճամփորդելուս միջոցին, անձամբ ըսավ Մերսինի առջև հայոց ապահովության համար խարսխող գերման «Straßburg» Շթրասբուրգ հածանավին հրամանատարը դեր-ծովակալ Փաշիշ, որուն մարտանավը փոխ այցելության գնացած էի ի դիմաց Կիլիկիո ս. Կաթողիկոսին։ Հիանալով Կիլիկիո արգասաբեր և ընդարձակածավալ դաշտերուն վրա և իբր զինվորական, առանց ունենալու դիվանագետներու հանրածանոթ վերապահությունը կ'ըսեր ինձ խանդավառված. Կիլիկիա շատ ավելի հիանալի և հարուստ երկիր կրնա ըլլալ լավ վարչության մը ներքև, քան Եգիպտոսը, քանի որ Եգիպտոս մեկ Նեղոս ունի, իսկ Կիլիկիա երկու և ավելի մեծ գետեր ունի և Տավրոսի լեռնաշղթան հավիտենական ջրի անսպառ աղբյուր մըն է, պտղաբերելու համար տարին մեկ քանի անգամ՝ զանազան հունձքեր արտադրող լայնատարած և ծովի մակերեսի նման հարթ հավասար եղող Կիլիկիո հուռթի դաշտերը։

Արդեն այս նպատակով շինած էին գերմաններն Բաղդատի երկաթուղին։

Եթե Բեռլին-Պոլիս Բալկանյան ճեպընթաց երկաթուղին երեք հազար կիլոմետր ճամփան կ'առներ ճիշտ երեք օրեն միայն, Պոլիս-Բաղդատ նույնպես երեք հազար կիլոմետր ճամփան ևս 3—5 օրեն կարելի էր կտրել անցնել. երբ ժամանակի ընթացքին հետ ճեպընթաց երկաթուղիի սպասարկություն մը հնար ըլլար հաստատել։

Այս թաքուն նպատակով ևս, գերմաններն արդեն Բաղդատի երկաթուղիի սկզբնավորությունը եղող Պոլսո Հայտար

Փաշայի կենտրոնական կայարանեն մինչև Տավրոսյան լեռներու փակուղիները՝ ամենուրեք երկաթուղու գլխավոր կայարաններու մոտ գերման, փոքրիկ գաղթականություններ հաստատած էին աննշմար կերպով, երկաթուղու պաշտոնեության անվան ներքև, կենտրոն ունենալով Էսկիշեհիր, ուր էր Բաղդատի երկթ. գծին կենտրոնական գործարանները։

Ծովուն հեռավոր հորիզոններուն վրա հետզհետե մայր մտնող արևու նման, օսմանյան կայսրությունը օրեօր կը խորասուզվեր ազգերու պատմության հավիտենական անդունդներուն մեջ, ու ժառանգորդ մը պետք էր։

Այս ինքնակոչ ժառանգորդը գերման պետությունն էր, որ թեպետ ժառանգական թղթեր չ'ուներ ի ձեռին, բայց իր ամենազոր բանակի անմրցելի ուժովը կը հուսար իրեն վերապահել առյուծի բաժինը կործանող Թուրք կայսրության...

Բայց որովհետև Փոքր Ասիո մեջ գերմաններու մրցակից և պատմական այս հողերուն իրապես ժառանգորդ երկու հին ազգեր կային՝ հայն ու հույնը. առաջինը ներքին բոլոր գավառներուն մեջ, իսկ երկրորդը ծովեզերյա քաղաքներուն մեջ միայն։ Ուստի հարկ էր, եթե ոչ ներգործական, գոնե կրավորական լուռ համակերպությամբ մը, թույլ տալ, որ Թուրքը հաշիվը մաքրե այս քաղաքակրթյալ և ցեղային ընդոծին գնահատելի հատկություններով օժտյալ երկու ցեղերուն և մանավանդ հայերուն, քանի որ հույնը իր թագավորով փեսայացած էր գերման կայսեր...

Ասով արևելյան վտանգավոր հարցի գորդյան հանգույցը ևս ինքնին լուծված կ'ըլլար, առիթ չմնալով եվրոպական մեծ պետություններու հարատև և սպառնագին մրցակցության։ Փույթ չէ, թե միլիոնավոր անմեղ զոհերու լեռնակուտակ մարմիններով ձեռք բերված ըլլար, աշխարհակալ քաղաքականության մը այս եղեռնական ծրագիրը։ Չէ՞ որ ռուս արտաքին գործոց նախկին նախարար Լոբանով ևս Հայաստանը առանց հայերու ձգելու քաղաքականությունը հնարավոր գտած և ցատագոված էր շատ տարիներ առաջ (1895)։

Ստուգիվ ժամանակը աննախընթացորեն պատեհ էր. ուստի Թուրք պետական մարդիկ, լրին համաձայնությամբ և անուղղակի քաջալերությամբն գերման զորապաշտ և կայսերապաշտ հոենցոլերյան կլիկին, համաշխարհային պատերազմի հաշվեհարդարության վաղորդայնին, քաղաքակիրթ ամբողջ մարդկությունը ԿԱՏԱՐՎԱԾ ԻՐՈՂՈՒԹՅԱՆ մը առջև դնելու համար, աճապարեցին գործադրել ահավոր այն ՄԵԾ ՏՐԱՄԸ, որ երբեք մարդկային պատմությունը արձանագրած ըլլար, իր ամենաարյունոտ էջերուն մեջ։



## 5.

## ԱՌԱՋԻՆ ԳՈՒԺԿԱՆԸ ԿԻԼԻԿԻԱՅԵՆ ԳԱՂՏՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

Հետագա դեպքերը պիտի կրնան յուրավ ապացուցանել, թե որքա՞ն անիրավեն Թուրք պետական մարդիկ, Թուրքիո հայերը ապստամբ ցույց տալու իրենց զուր ջանքերուն մեջ։ Ընդհակառակը, հայ ժողովուրդի բոլոր ղեկավարները կարելին ըրին շահելու համար Թուրք կառավարական վարիչներու վստահությունն ու բարյացակամությունը։

Այսպես Զավեն Պատրիարք, լռեցնելու համար պատերազմական նախարար Էնվերի քննադատությունները հայ զինվորներու դասալքությանց մասին, շրջաբերական կոնդակով մը կը հանձնարարեր հայ ժողովուրդին, նյութական և բարոյական ամեն օժանդակություն ընծայել Թուրք բանակի և նավատորմի հանգանակիչ պետական հանձնախումբերուն, և այլ ծառայություններով դյուրացնել օսմանյան հայրենիքի պաշտպանության գործը։

Պոլսո և Զմյուռնիո ազգ. հիվանդանոցներուն մասնավոր հարկաբաժիններուն մեջ հարյուրավոր անկողիններ կը տրամադրվեին, Դարդանելեն ամեն օր հազարավոր Պոլիս բերված Թուրք վիրավոր զինվորներու դարմանումին համար։

Հայ ժողովուրդը, փույթ չէ թե առ ահի թե բռնադատությունների ներքև, առատաձեռն նվերով կ'օժանդակեր Թուրք կարմիր մահիկին։

Պոլսո և գավառներու մեջ, կառավարական ամենաբարձր պաշտոնյաներու նախաձեռնությամբ բարեգործական բազմաբներ սարքվեցան, և ասոնց ամենալավ հաճախորդները հայերը եղան։

Հայ զինվորը, հայ բժիշկը, հայ դեղագործն ու հիվանդապահուհին, հայ արհեստավորը զինվորական օրենքներու մաս-

նավորաբար հայոց համար խստագույն գործադրությանց բերմամբ, ամենագործոն օժանդակությունը բերին Թուրք բանակին։

Վերջապես Պատրիարքարանի և հայ քաղաքական կուսակցություններու թելադրությանց վրա, հայ ժողովուրդը օսմ. բանակին և նավատորմին, կամա թե ակամա իր բերած օժանդակությամբ, միշտ կը գերազանցեր Թուրք մայրաքաղաքին իր դրացի այլացեղ և իրմե շա՛տ ավելի հարուստ բոլոր ժողովուրդները։

Թե ստուգիվ Թուրքիո մեջ ապրող հայերը ապստամբության մասին չէին խորհեր հայտնի կամ գաղտնի, կրնամ իբր ապացույց հիշել, թե աքսորի առաջին ամիսներուն մեջ, նախքան իրենց նահատակությունը, իբր տառապանքի ընկեր ապրելով հայ քաղաքական կուսակցությանց շատ մը պետերուն հետ, մեր ամենամտերիմ և անվերապահ խոսակցությանց ու խորհրդակցությանց մեջ իսկ, միշտ կը պնդեին ասոնք, թե ապստամբության մասին խորհած չէր երբեք, և կ'ափսոսային, որ այսպես անակնկալի եկած էին... Որովհետև հավատացած էին իթթիհատի խոստումներուն և անդորրացուցիչ հավաստիքներուն...

Ընդհակառակը, Պոլսո և գավառի քաղաքական կուսակցությանց բոլոր ղեկավարները, սպասողական դիրքի մեջ, խաղաղ իրենց տեղերը նստած էին, և ոչ ոք երկրեն հեռանալու մասին կը խորհեր, զի անմիջական ոչ ոք վտանգ մը կը գուշակեր գժբախտաբար։

Ի դեպ է հոս հիշել, թե քառամյա աքսորի ճամփաներուս վրա հանդիպեցա հայ կուսակցական երիտասարդներու, որոնք գառնությամբ ու հեգնանքով կը հիշեին իրենց պետերուն իրենց դեմ ըրած այս ամբաստանությունը, թե ինչո՞ւ զինվորագրութենե խույս կու տան և հանդեպ օսմ. հասարակաց հայրենիքին չեն փութար կատարել իրենց հայրենասիրական պարտականությունը...

Ահա թե մեր «սոցիալիզմի» տհաս վարդապետները մինչև ո՞ւր հասուցած էին իրենց անգործնական և տեսլապաշտ երազատեսությունները...

Արտասահմանի և ի մասնավոր Կովկասի հայության մեջ, փոխարքա կոմս Վորոնցով Դաշկովի բերանը տրված «ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ ԳՐԱՎԱԾ ԹՈՒՐՔԻՈ ՀՈՂԵՐԸ ԻՐԵՆՑԸ ՊԻՏԻ ԸՆԷԱ» կեղծ հայտարարությամբ, առաջ եկած անօրինակ



ոգևորության և կամավորական շարժումներուն հակառակ, Թուրքիո սահմաններուն մեջ ապրող երկու միլիոնե ավելի հայ ժողովուրդը, զինք բնաջնջող վերահաս վտանգի մը մասին բոլորովին անգիտակ էր։

Ընդհակառակը, ներքին գործոց նախարար Թալեաթի և գերման դեսպան Վանկընհայմի տված հաճախակի ապահովիչ հավաստիքներուն շնորհիվ, թե վախնալու պատճառ մը չի կա, թող հայ ժողովուրդը իր գործերով զբաղի և հանգիստ մնա, ու վստահ ըլլա կառավարության բարյացակամության վրա։

Ահա այս պաշտոնական հավաստիքներուն վրա էր, որ մայրաքաղաքի հայությունը կը խայտար ու կը ցնծար հանդեսներու մեջ, և ոչ ոք վաղվան մտահոգությունը ուներ, ինչպես որ ընդհանուր գծերով նկարագրեցի նախորդ գլխուն մեջ։

Սական հակառակ կեղակարծ ներքին այս հանդարտության, հայ ժողովուրդի մահվան վճիռը արդեն տրված էր ամիսներ առաջ։ Երբ ինչպես հիշեցի նախապես, ոչ Վանի կարծեցյալ ապստամբությունը պայթած էր, ոչ օսմանյան բանակին թիկունքը վտանգի ներքև էր, և ո՛չ ալ Թուրք կառավարությունը մտահոգող՝ ներքին որևէ հայկական շարժում գոյություն ուներ։ Բացի մեկ քանի խուճբ զինվորական փախստականներու մասին եղած հետապնդումներեն ի Զեյթուն և ի Տարոն։

Թե ստուգիվ հայ ազգի ուխտյալ Թուրք դահճապետներուն վարկպարազի ամբաստանություններն, հայերու կեղակարծ ապստամբությանց մասին, ցարդ հիշված փաստերն ու եղած հայտարարությունները, փոխադարձաբար ստեղծված ձրի ենթադրություններ և զրույցներ չեն, ատոր կու տամ վավերական նոր ապացույց մը ևս, որ ցարդ գաղտնի կը մնար դրժբախտաբար, և որով հնար կ'ըլլա ամենահամառ կասկածողներն իսկ տարհամոզելու, ԹԵ ՎԱՆԻ 1915 ԱՊՐԻԼ 7-Ի ԿԱՐԾԵՑՅԱԼ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵՆԵՆ ՋՈՐՍ ԱՄԻՍ ԱՌԱՋ, ԱՐԴԵՆ ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՃՌԱԾ ԷՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ, ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՋ ԱՆՄԵՂ ՋԵՎԻՆ ԵՎ ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԻՏԱԿ ԱՆՈՒՆԻՆ ՏԱԿ։

Ահա թե ինչպես։

Ադանայի մեջ Թուրք բարձր պաշտոնատար մը, վաղնջական մտերիմ բարեկամություն ունենալով Ադանա քաղաքին մեջ, պաշտոնական դիրք ունեցող և տեղվույն եվրոպական շրջանակներուն մոտ հարգանք և ազդեցություն վայելող մեծա-

Գարուստ հայու մը հետ, 1915 փետրվարի սկիզբը օր մը իր մոտ հրավիրելով կ'ըսե խոստովանաբար. «Հայոցդ գլխուն կրկին նոր փոթորիկ պիտի պայթի, որը պիտի գերազանցե ցարդ բոլոր պատահածները. գիտես, որ ես քեզ կը սիրեմ, նայե, որ գյուխդ ազատես...»։ Հայ վաճառականը երբ կը հարցնե սարսափած, թե «ի՞նչ կրնամ ընել ազատելու համար, թուրք պաշտոնատարը կը պատասխանե լակոնական ձևով մը. «Մերսին գնա՛ և շոգենավ նստելով Եվրոպա փախիր... հարստությունս ազատեմ ըսելով ժամանակ մի կորսնցրեր, նայե, հետո կը զղջաս...»։

Անակնկալ կերպով հույժ երկյուղալի լուրի մը առթած բնական հետաքրքրությամբ մը, երբ հայը սարսափած առ այս մանրամասնություններ կը խնդրե, սրտմաշուք պնդումներե վերջ թուրք պաշտոնատարը երդվընցնելե հետո հայը իր զավակացը վրա այսչափ միայն կ'ըսե. «Զեյթունի, Հաճընի, Տեորթեոլի, ինչպես նաև Ադանայի ամբողջ հայերը տեղահան պիտի ըլլան և հարստություններին պիտի գրավվի, նույնիսկ ձեր կիններն ու աղջիկները ձեզի չի պիտի մնան..., ես քիչ կ'ըսեմ, դուն շատ հասկցիր. դուն գլխուդ ճարը նայե և սա տեղեն ժամ առաջ հեռացիր, որպեսզի գալիք փոթորկին մեջ դուն ալ չի խեղդվիս...»։

Հայ վաճառականը չափազանց վրդոված, կ'ուզեր մեկնումի պատրաստություններ տեսնել, բայց նախքան մեկնումը կ'երթա պատմել ահավոր այս իրողությունը Կիլիկիո սրբազան կաթողիկոսին։

Ասկե քանի մը վերջ, անկարելին ի գործ դնելով և օգտվելով Ադանայի կուսակալին հետ իր ունեցած մտերիմ բարեկամութենեն, բացառաբար արտոնություն կը ստանա Կիլիկիայեն արտասահման մեկնելու և հանդերձ ընտանյոք Մերսին իջնելով 1915 թ. փետրվարի կիսուն Իտալական[1] շոգենավով մը կը մեկնի Եվրոպա։

Կիլիկիո ծերունազարդ կաթողիկոսը Սահակ Բ. կարի հուզված գաղտնաբար իր այս ստացած հույժ ծանրակշիռ լուրերեն, անքուն գիշերներ կ'անցընե՝ ջանալով գտնել եղանակ մը, իր ստացած այս բոթաբեր տեղեկությունները քննել և ստուգել կարողանալու համար։

1 Իտալիա այս ժամանակ դեռ պատերազմը սկսած չէր։



Այս օրերուն Պոլսեն Ադանա կը վերադառնար, Սուրիո և Պաղեստինի ռազմաճակատին զինվորական վերին հրամանատար միանգամայն ծովային նախարար Ճեմալ, որուն հետ 1909-ի Կիլիկիո հայկական կոտորածեն վերջ, Ադանայի կուսակալ եղած օրերեն բարեկամական լավ հարաբերություն ունեցած էր իր բարձր դիրքին բերմամբ։

Ուզելով օգտվիլ այս բացառիկ պատեհութենեն, Կիլիկիո դժբախտ կաթողիկոսը կ'աճապարե Ճեմալի մոտ և առանձնակի տեսակցության մը մեջ, լրացուցիչ տեղեկություններ կը խնդրե իր վերև լսածներու մասին։

Սուրիո և Պաղեստինի օսմ. բանակի վերին հրամանատար Ճեմալ կը պատասխանե այսչափ միայն, թե «նախարարական ժողովի այս հարցի մասին ունեցած խորհրդացությանց մեջ շատ աշխատեցա, որ փոխանակ հայ ժողովուրդը ամբողջապես տեղահան և աքսոր ընելու, ամեն քաղաքե միայն գրչի տեր, մտավորական ու հայ քաղաքական կոմիտեներու պետերեն 15—20-ական հոգի աքսորել տրվի, ու հասարակ խեղճ ժողովուրդը խնայվի, սակայն կը ցավիմ՝ ըսել թե ձայնս լսելի ընել տալ չի կրցա»։

Ուրիշ կողմնակի, բայց վավերական աղբյուրե լսած եմ, որ թե իթթիհատի անպատասխանատու կառավարության և թե՛ նախարարական ժողովներու, և ամեն այս հարցի մասին տեղի ունեցած գաղտնի խորհրդակցությանց մեջ, ավելի չափավոր քաղաքականության մը հետևելու ի նպաստ խոսողներու դեմ ծառացած են միշտ Հայոց մեծ դահճապետներեն Թալեաթ, Բեհաէդդին Շաքիր և դոկտ. Նազըմ։

Կիլիկիո խոհազարդ կաթողիկոսը տեսնելով, որ հայ ժողովուրդն ամբողջապես անմիջական սարսափելի վտանգի մը առջև կը գտնվի, և չուզելով թերանալ իր բարձր դիրքին պահանջած հույժ պատասխանատու պարտականությանը մեջ, ստիպողական կը գտնե մասնավոր գաղտնի պատգամավոր մը փութացնելով Պոլիս, հանուր հայության սպառնացող վերահաս ահավոր այս վտանգին գուժկանը տալ և թելադրել միջոցներ խորհիլ կանխելու համար մեծ վտանգը։

Ս. կաթողիկոսը մարտ ամսի սկիզբը գիշեր մը իր մոտ հրավիրելով իրեն հույժ վստահելի ծանոթ հայրենասեր վաճառական մը, և այս վերջինը իրազեկ ընելով հայության սպառնացող մեծ վտանգին, կը հրահանգե անմիջապես մեկնիլ Պո-

լիս և այս գուժկանը հաղորդել Պոլսո Պատրիարքին խոստովանաբար։

Բայց այս օրերուս, ոչ թե ճամփորդ, այլ նամակ ու հեռագիր իսկ Պոլսո հետ փոխանակել, կարգ մը գրաքննչական ձևակերպությանց, զինվորական ու ոստիկանական կաշկանդումներու ենթակա էր, ուր մնաց Հայու մը համար ճամփորդությունը։

Այնուամենայնիվ այս հայ վաճառականը, շնորհիվ իր թուրք պաշտոնյա բարեկամներուն, հիվանդ ձևանալով կը հաջողի պատկանյալ պաշտոնատունեն բացառաբար ճամփորդության «Վեսիքա» մը ստանալ և 1915 մարտ 2-ին մեկնիլ երկաթուղիով դեպի Պոլիս։

Գոնիայի մեջ սակայն, թուրք ոստիկանապետը ձեռքեն առնելով «վեսիքան»՝ կ'արգիլե զինքը մեկնելու Պոլիս։

Սակայն շնորհիվ նույն պահուն քննչական պաշտոնով Գոնիա գտնվող հայ բարձր պաշտոնեի մը ազդեցիկ միջամտության, ճամփորդության վեսիքան վերստանալով կը հաջողի շարունակել իր ճամփան և անվտանգ հասնիլ Պոլիս։

Մարտ 8-ին հասած երեկոյին հաջորդ օրը իսկ, իր պատասխանատու առաքելության պահանջած զգուշավորությամբ, կը ներկայանա Զավեն Պատրիարքին և հանձնելով կաթողիկոսական այցեքարտը, ուր հիշված էր միայն, թե հանուն իրեն պետք եղածը պիտի խոսի բերանացի գրաբերը, խոստովանաբար կը պատմե այն ամենը, ինչ որ հանձնարարված էր իրեն ըսել։

Պատրիարքը նախ չ'ուզեր հավատալ այսքան ծանրակշիռ լուրերու հավանականության և կ'ըսե, թե «Կիլիկիո կաթողիկոսը այս որքան հոռետես անձ է եղեր...»։ Ապա Պատրիարքը կը հանձնարարե իր մեկնումը մեկ-երկու օր հետաձգել, մինչև որ այս մասին քննություն մը կատարելով կարողանար փոխադարձաբար տեղեկություն հաղորդել կաթողիկոսին։

Երբ երկու օր վերջ պատգամավորը առանձին կը ներկայանա, Պատրիարքը հանձնելով փոխադարձաբար իր այցաքարտը, կ'ըսե իմիջիայլոց «գերման դեսպանը (Վանկընհայմ) հանուն իր կառավարության կը վստահացնե մեզ, թե կոտորած չի պիտի ըլլա, և ո՛չ ալ հայերը տեղահան պիտի ըլլան։ Իսկ ներքին գործոց նախարար Թալեաթ փաշա ևս հավաստիքներ կու տա մեզ, թե հայ ժողովուրդն իր եղած տեղերը հանգիստ ձգելու համար կարելին ի գործ պիտի դրվի։ Բայց միայն



հաչս կառավարության կասկածելի նկատվածները և հանցավորները պիտի հավաքվին»։

Այս պատեհությամբ Պատրիարքը կը հանձնարարե, որ ի մասնավորի Կիլիկիո հայ ժողովուրդը, տեղական կառավարական պաշտոնեից հետ լավ վարվի և զգուշանա գրգռիչ ընթացքներե, միայն զբաղի առօրյա իր գործերով և հնազանդի պետական հրամաններուն ու հրահանգներուն։ Ապա Պատրիարքը կ'ավելցնե, թե կը ցավի, որ ասկե ավելի բան մը չի գար իր ձեռքեն։

Սակայն պատգամավորին անձնական տպավորությունը սա կ'ըլլա, որ Պատրիարքը պահանջված լրջությամբ չառներ մատնանշված վտանգը, քանի որ Կիլիկիո կաթողիկոսին հոռետեսության կը վերագրե այս ամենը։

Պատգամավորը այս երկրորդ տեսակցությենեն վերջ կ'աճապարե վերադառնալ Ադանա, և իր գաղտնի առաքելության համարատվությունը կը փութա ընել սրբազան կաթողիկոսին։

Այսպես Կիլիկիո կաթողիկոսը գոհ կ'ըլլա, որ իր վրա ծանրացող պարտականությունը կատարեց, իսկ Պատրիարքն ևս կը բավականանա իր ստացած հավաստիքները, հաղորդելով կաթողիկոսին։

Բայց դժբախտաբար այս հույժ ծանրակշիռ գուժկանը գաղտնի կը պահվի մինչև վերջը, ոչ մեկը, նույնիսկ ազգին ղեկավար մարդոցմե ոչ ոք, իրազեկ կ'ըլլա հայ ժողովուրդի կյանքի և մահու բախտորոշ այս ամենածանրակշիռ իրադարձություններուն, մինչև որ կը հասնի 1915 ապրիլ 11-ի սարսափի շաբաթ գիշերը։

Երբ Կոստանդնուպոլսո ամբողջ մեր մտավորականությունը, և հայ քաղաքական կուսակցությանց բոլոր ղեկավար պետերը, բոլորովին անգիտակ իրենց գլխուն պայթելիք ահավոր արյան փոթորկին, մեկ գիշերվան մեջ անակնկալորեն թակարդը ինկան և ապա աքսորվեցան ու անլուր տանջանքներով նահատակվեցան։

Ամիսներ առաջ նախքան մեր ամենքի ձերբակալությունը, տեղի ունեցած այս բոլոր ծանրակշիռ դեպքերուն միայն իրազեկ եղա 1922-ին Անգլիո մեջ հանդիպելով նույնինքն այս պատգամավոր Վարդան Փրենյանին, երբ պատահաբար կրցա իրազեկ ըլլալ Կիլիկիայեն ղրկված և ամենքեն ցարդ

գաղտնի պահված այս առաջին գուժկանին բոլոր մանրամասնությանց։

Ամենքին ըսինք անոր համար, որովհետև ձերբակալված և աքսորված ըլլալով մայրաքաղաքի ազգային ղեկավար և կուսակցական շատ մը պետերու հետ, որոնց մեջ ազգ. կենտր. վարչության անդամներ ալ չէին պակսեր, ոչ ոք այս ահավոր իրադարձության մասին որևէ տեղեկություն ուներ։ Զի Կիլիկիայեն Պոլիս գաղտնապես ղրկված այս գուժկանի մասին, եթե մեզմե մեկն իսկ տեղեկություն ունեցած ըլլար, նախ բանտին մեջ, ապա աքսորի ճամփաներուն վրա, ամենքն իրար չէին հարցներ, թե ի՞նչու կ'ըլլան այս ամեն ձերբակալությունները և զգուշական ծայրահեղ միջոցները, ինչպես ավելի մանրամասնությամբ և փաստացի կերպով պիտի տեսնենք հետագա արհավիրալից գլուխներուն մեջ ևս։

## 6.

## ԳԵԹՍԵՄԱՆԻ ԳԻՇԵՐԸ

Մինչդեռ 1915 ապրիլ 11-ի շաբաթ գիշերը, մայրաքաղաքի հայությունը մեկ քանի օր առաջ վերջացող զատկական հանգեսներեն պարտասած, կը խորդար հանդարտ քունի մեջ, հոն Ստամբուլի բարձունքը Այասոֆիայի մոտը, ոստիկանական կենտր. տնօրենության ապարանքին մեջ, արտակարգորեն անշշուկ գաղտնի գործունեություն մը կը տիրեր...

Զինվորական արենագույն ինքնաշարժ հանրակառքեր (օթոբուս), մայրաքաղաքին մոտավոր և հեռավոր արվարձաններեն ու թաղերեն խումբ-խումբ ձերբակալյալ հայեր կը փոխադրեին կենտրոնական բանտ։

Պոլսո ոստիկանական տնօրենը, Պետրի, մայրաքաղաքին բոլոր պահականոցներուն շաբաթներ առաջ, կնքյալ պահաքաններով պաշտոնագրեր ղրկած էր, միայն որոշյալ օրին բանալու հրահանգով և ծայր աստիճան գաղտնապահությամբ ու ճշտությամբ գործադրելու ստիպողական հանձնարարությամբ։

Այս խորհրդավոր հրամանագրերը իրենց մեջ ուներին սև ցանկը այն ձերբակալվելիք հայերուն, պատրաստված հայ գաղաթաններու և ի մասնավոր Արթին Մկրտչյանի ցուցմունքով, և թաղային խթիհատական ակումբներու նախաձեռնությամբ։



Ասոնք մահապարտ այն հայերն էին, որոնք հեղափոխական թե անկուսակցական ազգային կյանքի մեջ գործող դեր մը ունենալով աչքի զարկած էին, և իբր թե ի հարկին կրնային ժողովուրդը մղել հեղափոխության կամ գոնե դիմադրության։

Նույն աս շարաշուք շաբաթ գիշերը, ուրիշ ութ սկյուտարցի դժբախտ ընկերներու հետ, Սելիմիյեի հսկա զորանոցին քարափեն, մասնավոր շոգեմակույկով մեզ փոխադրեցին Սիրքեճի։

Մահաբույր գիշեր մըն էր, ծովը թեպետ փոթորկոտ, իսկ մեր հոգիները խռով շարագուշակ մտածումներով, կը տարվեինք դեպի անծանոթ ճակատագիր։ Արգիլված էր խոսիլ իրար հետ, կալանավորներ էինք, որ ոստիկանական ամենախիստ հսկողության ներքև փոխադրվեցանք կենտրոնական բանտ։

Հոս հսկա և ամրակառույց պարիսպներու ու ամրափակ վիթխարի երկաթյա դռներու և նիգերու ետև, մեզ մտցուցին կենտր. բանտին շրջափակին մեջ փայտաշեն տաղավար մը, որ երբեմն կ'ըսվեր, թե իբր դպրոց ծառայած էր։ Պլպլացող առկայծյալ կանթեղի մը տմույն լույսին ներքև և մերկ տախտակամածին վրա, նստանք լուռ ու մունջ, ու ոչ ոք մեզմե համարձակությունը կ'ունենար լուծելու աս սարսռեցուցիչ հանկարծակն նոր առեղծվածը։

Հաղիվ թաղված թախծոտ և հոգեմաշ սև խորհրդածություններու մեջ, ահա բանտին հսկա երկաթյա դռներն շարագուշակ ճռինչով մը կրկին բացվեցան։ Խուռներամ ներս հրվեցան բազմաթիվ դեմքեր, ամենքն ալ ծանոթ հեղափոխական պետեր, հանրային գործիչներ և անկուսակցական և նույնիսկ հակակուսակցական մտավորականներ։

Մեկ քանի ժամ անգամ մը, մինչև առավոտ բանտ բերված նորանոր ձերբակալյալներով, գիշերային խոր լռությանը մեջ, բանտի ամրակուռ և բարձր պարիսպներուն ետև, տակավ եռուզեռն կ'աճեր, քանի բանտարկյալներու բազմությունը կը ստվարանար։ Իբր թե նույն գիշերը բանտին այդ խավարշտին նկուղներուն մեջ ժամադիր եղած ըլլային, մայրաքաղաքի հայության հանրային աչքառու բոլոր գործիչներն, ժողովական, երեսփոխան, հեղափոխական, խմբագիր, ուսուցիչ, բժիշկ, դեղագործ, ատամնաբույժ, վաճառական, սեղանավոր և այլ ամեն դասակարգի ազգայիններ։ Մեկեն ավելի անձեր բերված էին նույնիսկ սենյակի զգեստներով և հողաթափներով։

Քանի ծանոթ դեմքեր ներս կը բերվեին այնքան շաղակրատությունը կը նվազեր և մտահոգությունը ծայր կ'առներ։

Տակավ դեմքերը կը լրջանային, մեր սրտերը կը խռովեին, բնազդաբար մոտակա փոթորկի մը մոահոգիչ նշաններ գուշակելով։ Բայց իրապես մեզմե ոչ ոք գիտեր աս ընդհանուր խմբական ձերբակալություններուն իսկական շարժառիթը, և ոչ ոք ի վիճակի էր կշռելու այս ծանրակշիռ դեպքերու աղետաբեր հետևանքները։

Քանի գիշերվան խորհրդավոր ժամերը կը սահեին, մեր մտատանջություններն ալ այնքան կը կրկնապատկվեին։ Հազվադեպ անտարբերներե զատ մեծամասնությունը հոգեպես կը տառապեր ԱՆԾԱՆՈԹԻՆ երկյուղով, կրավորական համակերպության մը մեջ փնտրելով բռնազբոսիկ մխիթարություն մը։

Մինչև առավոտ հետզհետե բերվեցան նոր ձերբակալյալ ազգայիններ, իսկ մենք բանտ կանխողներս, ամեն անգամ որ զինվորական ինքնաշարժ հանրակառքերու ժխորը կը լսեինք, կը փութայինք պատուհանները, տեսնելու համար, թե որո՞նք են նորեկները։

Ներս բանտ բերվողները կու գային նախ ուրախ և արհամարհոտ ժպիտով, և երբ կը տեսնեին հարյուրավոր, հանրածանոթ ազգային հին ու նոր գործիչներ իրենց շուրջը թախծոտ և մտախոհ, իրենք ալ կը խորասուզվեին ծանր մտահոգություններու մեջ։ Ամենքս ալ հետամուտ էինք լուծելու այս առեղծվածը և պատասխան կը փնտրեինք սա հարցերուն, բայց ինչո՞ւ հավաքական աս հարյուրավոր ձերբակալությունները, և արդյոք ի՞նչ պիտի ըլլա ասոր վախճանը...

## 7.

## ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻՆ

Պոլսո հայ մտավորականության և հանրային գործիչներու մեծամասնությունը, 1915-ի Զատկին հաջորդող ապրիլ 12-ի ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻՆ կ'անցնեինք կենտրոնական բանտին մեջ, տխուր և մտահոգ, ակնդետ սպասելով որևիցե տեղե մեզի հասնելիք անակնկալ օգնության մը։

Մեզմե շատեր ճարահատ համակերպելով բանտի իրենց նոր կյանքին և գլուխ ունենալով անոնք, որոնք թրքական բանտերը բազմիցս մտած ելած էին, կը սկսեին առավոտյան դեմ արդեն բան մը ուտելու մասին խորհիլ։ Մինչ ուրիշ ընկերներ, դրամական մեծ վարձատրություններով, իրենց ընտանեկան պարագաներուն և ազդեցիկ բարեկամներուն կը փութային մարդիկ ղրկել, թղթի գաղտնապես գրված կտորներով խնդրելով, որ գան և զիրենք ազատեն...

Այսպես մեր Կարմիր կիրակին անցավ, առանց արտակարգ որևիցե նոր միջադեպի։ Միայն երբեմնակի կը լսեինք ընդհատ-ընդհատ խուլ որոտները անգլիական և ռուսական հսկա ծովային թնդանոթներուն։ Մեր մեջ դեռ կային միամիտներ, որ այդ թնդանոթներու մահասփյուռ որոտները կը կարծեին, թե մեզ օգնության փութացող մարտանավերու փրկարար որոտն էր...

Արդարև ճիշտ այդ օրերուն, անգլիական մարտանավերն Դարդանելեն, իսկ ռուսականները Սև ծովեն կը բախեին Պոլսո ամրակառույց բերդ-դռները։ Մեզմե ոմանք կը կարծեին նույնիսկ, թե քանի մը օրեն Պոլիսը անգլ. գրավման անմիջական վտանգին ներքև ըլլալուն, նախքան թուրք կառավարության Պոլսեն Գոնիա փոխադրվիլը, փութացած էին ձերբակալել մեզ իբր պատանդ, առ ի ապահովություն մայրաքաղաքին... Կարմիր կիրակին այսպես անցուցինք «Մեհտերհանե» կոչված Պոլսո կենտրոնական բանտին «մեքթեպին» մեջ, վաղվան գահավեժ դեպքերու սարսափովը առլցուն, հուսահատ և շվարած։

Արդեն երեկո էր, բանտին «վուեգիններ» մոտակա մինարեեն իր «ա՛լլահ էքպեր»-ը լրացուցած և հազիվ մթնշաղը սկսած էր, երբ բանտին ներքին պահակները—գարտիան—ստենտորյան ձայնով բոլոր հայ քաղաքական բանդարկյալներս հրավիրեցին, որ հավաքվինք բանտին երկաթյա ավագ դռան առջև։

Վերջապես հնչած էր ժամը, երբ 24 ժամվան հոգեմաշ անորոշությենե մը վերջ, մեր ճակատագիրը պիտի որոշվեր այլևս։ Ամենքս բնական հետաքրքրությենե դրդյալ, աճապարեցինք դեպի երկաթյա վանդակները։ Իսկ դաժան բանտապետը ի ներկայության ոստիկանական բարձր ու ստորին ամեն աստիճանե պաշտոնյաներու սկսավ հանդիսական ձայնով մը կարդալ ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐՈՒՍ ՍԵՎ ՑԱՆԿԸ...

Երբ ստուգվեցավ, թե ամենքս ալ ներկա էինք, հարյուրավոր սվինավոր ոստիկան զինվորներու և ոստիկանական բազ-

մաթ՝վ պաշտոնյաներու ամենախիստ հսկողության ներքև, հետիոտն առաջնորդվեցանք կենտր. բանտեն միայն քիչ հեռու գտնվող ոստիկանական տնօրինությունը։ Հոս մի առ մի խուզարկելով գրավեցին մեզմե ամեն ինչ, որ կրնար արժեք մը ունենալ. դրամ, աննշան թղթի կտորներ, զմելիներ, մատիտներ, հուշատետրեր, մինչև մեր հովանոցներն ու դավազանները, իբր թե վերջը մեզ հանձնելու համար։

Հազիվ խուզարկությունները լրացած, ձերբակալյալներս քսանակն կամ ավելի հոգինոց փոքր խմբերով, առաջնորդվեցանք կենտր. ոստիկանական տնօրենության առջև, արդեն պատրաստ սպասող զինվորական կարմրագույն ինքնաշարժ հանրակառքերը։

Այլևս 24 ժամե ի վեր տիրող գաղտնիքը արդեն մասամբ լուծված էր, զի ողբերգության երկրորդ վարագույրը բացված էր և դժվար չէր հասկանալ, թե մեզ Պոլսեն կը հեռացնեին... Ո՞ւր, ոչ ոք գիտեր...

Մեր ինքնաշարժին մեջ, ուր ավելի քան 20 հոգի էինք, զեն ի ձեռին մեզ օղակավորող սվինավոր տասե ավելի զինվորներ շրջապատած էին մեզ, փախուստի ամեն փորձ կրակով պատասխանելու հրամանով։

Ձերբակալյալներս փոխադրող ինքնաշարժերու քարավանը, որոնց անձամբ կ՝առաջնորդեր ոստիկանական ընդհանուր տնօրեն Պետրի իր մասնավոր ինքնաշարժով, արդեն ի թավալ կու գար փոշիի ամպերով Այասոֆիայի պողոտայեն դեպի ծովեզերք Սիրքեճիի ուղղությամբ։ Բոլոր մեր ինքնաշարժերեն հեծկլտուքի ձայներ կը լսվեին..., ինչ որ բնականաբար ուշադրությունը կը հրավիրեր անցորդներու, որոնք կը դժվարանային մեկնություն մը տալու ինքնաշարժերու խորհրդավոր և սրընթաց աս թավալումին...

Երբ մեզ փոխադրող 10-ե ավելի ինքնաշարժերը վերջապես մտան Սարայ-Պուռնուի կամ Կուլհանեի դարաստանը, ձերբակալյալներուս հուզումը ինքնին հասավ իր գագաթնակետին։ Այլևս մահվան սարսափը ընդհանուր էր, որովհետև հայության մեծ դահճապետ կարմիր Սուլթանի բռնապետության սև օրերու հիշատակներն դեռ շատ թարմ էին մեր մտքերու մեջ... Մեզմե ամեն ոք գիտեր, թե հարյուրավոր անմեղ երիտասարդ հայ և թուրք մտավորականներ, քարեր կապված



ոտքերնուն կամ վզերնուն, ծովամույն եղած էին հոս, այս պատմական մահարոցը հրվանդանին խոր ջուրերուն հոսանքներուն ու հորձանքներուն մեջ...

Մեր մահվան մղձավանջը ա՛լ ավելի կը խարազաներ գիշերվան թանձր խավարը և գարնան գիշերահավասարին զուգադիպող ծովի փոթորիկը։ Արդեն Սարայ-Պուռնու ըլլալով հյուսիսային հովին ճիշտ ճակատը, միշտ ալեկոծյալ կ՝ըլլար, իսկ նույն երեկոյին փրփրագեզ լեռնակուտակ ալիքները քարափին բախելով, տասնյակ մետր հեռուները կը նետեին աղի ջուրի կաթիլները, որոնք հետո բա՜ռ արյան կայլակներու փոխվեցան։

Այդ պահուն արդարև ամենազորավոր հոգիներն իսկ սկսած էին սարսռալ, որովհետև բնազդաբար մեզմե շատեր կը զգային, թե դեպի գերեզման կ՝երթան, մինչ մյուս կողմե փրկությունն ոչ մեկ հույս կար։ Զի իթթիհատական թուրք կառավարությունը, օրինակելի գաղտնապահությամբ և թուրք ցեղին հատուկ եղեռնական ընդունակությամբ, հաջողած էր մեկ գիշերվան մեջ ամենքս հանկարծ մեկ ուռկանի մեջ թակարդը ձգել...

Սարայ-Պուռնուի անդաստանին մեջ, ամենքս ի մի հավաքվելե և բոլոր ընկերներու ժամանումեն վերջ երկուական թափոր եղած, առաջնորդվեցանք Շիրքեթի 67 թիվ շոգենավը, որ արդեն ժամեր առաջ, շոգիի վրա կը սպասեր քարափին առջև։

Շոգենավը լեցվեցավ ոչ միայն 220-ե ավելի ձերբակալյալներովս, այլև մեր թվեն ավելի մեր հսկողության հատկացած սվինավոր ոստիկան զինվորներով, էնվերի կողմե ղրկված երիտասարդ զինվորներով, քոմիսերներով, բանակի սպաներով և ոստիկանական ամեն աստիճանե պաշտոնյաներով։

Արդարև այս ամենը մեր վրա այնքան խոր ազդած էր, որ պահ մը ամենքս ալ համոզվեցանք, թե Մարմարայի բացերը կը տանին ծովամույն ընելու համար։ Շատեր կու լային, շատեր իրենց սիրելիները կը հիշեին, ու այս ընդհանուր հուզումին մեջ, հուսկ ուրեմն մահապարտներուս շոգենավը ճամփա ելավ դեպի բաց ծով։

Աղե՜, մեկ քանի ամիսներ վերջ՝ եկան ա՛լ ավելի սև օրեր, երբ ծովի մահը փնտրելով փնտրեցինք, երբ մեզմե շատերը չարաչար զզջացին, որ ծովը չէին նետված։ Զի անշուշտ ծովի

մահը ավելի փրկարար էր և նվազ խուժդուժ, քան կացինի և սակրի ներքև ապա տեղի ունեցած չարչարալից նահատակությունները։

Մինչդեռ սուլթանական մայրաքաղաքը, աղջամուղջին գաղտնապահ սև պատանքին մեջ, նորանոր ոճրապարտ ծրագիրներ կը դարբներ, իր այս անդրանիկ հաջողութենե քաջալերված, մենք Մարմարայի ալիքներուն անձնատուր եղած, ակամա կը տարուբերեինք հոգեխռով վերհիշումներու և մահվան տագնապներու մեջ, երբ վերջապես մեր շոգենավը մոտեցավ Հայտար Փաշայի նավամատույցին։

Մահապարտներուս քարավանը զույգ առ զույգ դուրս գալով շոգենավեն, հարյուրավոր սվինավոր զինվորներու շղթայի մէջև տարվեցանք Հայտար Փաշայի հոյակապ կայարանի հսկա շենքին ճամփորդներու հատկացած Ա. և Բ. սպասման սրահները, ակնդետ սպասելով հոն շարադեպ նոր անակնկալներու։

Այլևս մենե ոչ ոքի մոտ ախորժակ մնացած էր, մտածելու մեր անոթության և ծարավին վրա։ Միայն զինվորական երիտասարդ դեղագործ մը, երբ պատտ մը երշիկ ապսպրելով կը ճաշակեր, հանկարծ վրա գալով ոստիկանապետ մը, երշիկը հանդերձ պնակով կը նետեր սրահին մեջ, և զինվորական վերարկուին ոսկեզօծ կոճակները փետրտելով կը պոռար ըսելով, որ «այլևս դուք ազգի և պետության թշնամիներ արժանի չեք այս պատվոյն...»։

Ավելի քան շուրջ երկու ժամ խոր լռության և ցավատանջ հոգելկումի մեջ սպասելե վերջ, դարձյալ զինվորական ամենախիստ հսկողությամբ, փոխադրվեցանք երկաթուղու մասնավոր գնացք մը, որ ժամերե ի վեր արդեն կը սպասեր շոգիի վրա մեզ տանելու համար Փոքր Ասիո խորերը, ուր տարաբախտ մեր բոլոր ընկերները, հազվագյուտ բացառությամբ միայն, մեկ քանի ամիսներ վերջ ամենաքստմնելի և եղերական մահվամբ պիտի գտնեին իրենց նահատակությունը։

Վերջապես շարժեցավ երկաթուղու մեր գնացքը, բոլոր լույսերը մարած, վագոններու բոլոր դռները փակված, և ոստիկաններով ու ոստիկան զինվորներով պահպանված։ Տակավ սկսանք հեռանալ հիշատակելի այն վայրերեն, ուր մեզմե յուրաքանչյուրը իր ետև կը թողուր սգավոր և անպաշտպան մայրեր, քույրեր, կիներ և երախաներ, ինչք, հարստություն և ամեն ինչ, երթալով դեպի անդարձ, անանուն և անծանոթ գերեզմաններ՝ թաղվելու առ հավետ։



## 8.

## ԴԵՊԻ ԱՔՍՈՐԱՎԱՅՐ

Երկաթուղու մեր խորհրդավոր գնացքը խավարին մեջ առանց դադարի կ'անցներ կայարաններու առջևեն։ Հետզհետե մեր տեսողությենեն կը խուսափեին Իշխանաց լուսաշող կղզիներն և կը քերեինք Մարմարայի եզերքն դեպի Նիկոմիդիա, մինչ Սուլթաններու շվայտության, զեղխության և քաղաքական ոճիրներու համբավավոր Ոստանը մեր ետև կը թողվինք ընդմիշտ։

Խավար էր կառախումբին դուրսը և ներսը, նույնքան խավար էին նաև մեր սրտերն, զի մահվան ուրվականը արդեն ցցված էր մեր առջև ու կը հալածեր մեզ։ Ոչ ոք կառախումբին մեջ խոսելու փափագ կը զգար, մունջ էինք ամենքս ալ և ինքնամփոփ, զի վաղվան մտահոգություններով տագնապած կը տարվեինք դեպի անծանոթ ճակատագիր։

Կեսգիշերը արդեն անց էր, երբ կառախումբին պետը, ազնիվ և անձնվեր հայ պաշտոնյա մը, մոտենալով մեղմիկ ըսավ ինծի. «Հայր սուրբ, խնդրեմ ձերբակալյալ ընկերներուդ անունները աս թղթին վրա գրելով ինծի տուր»։ Ձեռքի գաղտնի շարժումով մը թղթի կտորի մը հետ մատիտ մը կը սահեցներ ձեռքս, և լապտերը մոտս ձգելով ինք կ'երթար զբաղեցնելու մեզ հսկող ոստիկանական պաշտոնյաները։ Դյուրահասկանալի սրտադողով և հապճեպով, տմույն լույսի մը պլպլացող ճառագայթներուն ներքև, կը գրեի մեր ընկերներեն գոնե ամեն անոնց անունները, զորս պատահաբար կրնայի վերհիշել։ Ապա անկատար այս ցանկը գաղտագողի կը հանձնեի նույն ազնիվ պաշտոնյային, առանց բառ մը ըսել համարձակելու։

Արդեն լուսնաշաղ էր, երբ երկաթուղու մեր կառախումբը անձայն, անշշուկ և առանց կանգ առնելու կ'անցներ Նիկոմիդիո քաղաքին մեջեն։ Միայն սակավաթիվ անցորդներ, և մեծ մասամբ մանարաններու հայ գործավորուհիներ, կասկածոտ

զարմացումով ակնապիշ կը դիտեին մեր կառախումբը, առանց կարենալ թափանցելու ահավոր գաղտնիքին։

Մեր գնացքը անդադար կը սուրար, հետզհետե մեր ետև կը թողեինք Մարմարայի ծովին հետ, նաև գեղեցիկ ծովածոցը ալետատան իր ծփանքներով, Նիկոմիդիան, հանդիպակաց եզերքին լեռներու դահավանդին թառած հայ կյանքի կայտառուն Գարտիզակը, քաջարի Ասլանբեկը, Բութանիո դալարազարդ և հուռթի դաշտերն ու հայ բազմաթիվ գյուղերը, Սապանճայի պսպղուն լիճը, գարնան հետ ծաղկազարդված մրգաստաններն, և երեկոյին մթնշաղին հետ կը հասնեինք վերջապես Էսկիշեհիր։

Մեր բանտեն մեկնումեն 24 ժամ վերջ միայն, փրփրաքարերու այս հին քաղաքին առջև ոմանք դեռ նոր սկսան զգալ անոթություն և ծարավ. և ստամոքս խաբող նախընթրիք մը ընելու չափ համարձակություն կ'առնեին։ Մեր կառախումբին հայ ազնիվ պաշտոնյաներն էին դարձյալ, որ վտանգը արհամարհելով և առանց փոխարժեքն գանձելու, սնունդի մեր սակավապետ պահանջներուն կ'աճապարեին գոհացում տալ, գնահատելի և անմոռանալի հաճոյակատարությամբ մը։

Էսկիշեհիր ըլլալով Էնկուրիի և Գոնիայի երկաթուղու անջատման կենտրոնավայրը, հոս պիտի որոշվեր մեր ճակատագիրը, թե ի՞նչ ուղղությամբ մեզ դեպի մահ պիտի առաջնորդեին։ Մինչդեռ ամենքս լարված և սպառիչ հետաքրքրությամբ կը սպասեինք գնացքին առնելիք ուղղության, և ահա մեր կառախումբը փոխանակ Գոնիայի, շարժեցավ Էնկուրի ուղղությամբ։

Գոլսեն մեկնած ըլլալով 1915 ապրիլ 12-ի կիրակի գիշերը, երեքշաբթի կեսօրին մոտ հասանք Էնկուրիի մոտակա և Այաշ տանող Սենճան Քեոյի երկաթուղու կայարանը։ Հոս հանկարծ հանդիսատես կ'ըլլայինք այնպիսի ահավոր տեսարանի մը, որուն վերհիշումն իսկ հրաշքով վերապրողներուս դեռ նույնքան սարսուռ ու սարսափ կ'ազդե։

Երբ երկաթուղու գնացքը հասավ Սենճան Քեոյի ըսված այս կայարանը, հոս դուրս եկավ Գոլսեն մեզ ընկերակցող կենտրոն. բանտի պետ գարշելին Իպրահիմ, և շրջապատված մեզ ընկերացող ոստիկանապետներեն և ոստիկան զինվորներեն, ձեռքը առած մեր անուններու՝ սև ցանկը, սկսավ կարդալ «Սիլվիոյրիչի, Ակնունի, Զարդարյան, Խաժակ Շահրիկյան, Ճիհանկուլյան, դոկտ. Տաղավարյան, Սարգիս Մի-



նասյան» և այլն։ Խառնիխուռն անուններ հայտնի հեղափոխականներու, ոչ կուսակցականներու, պահպանողականներու, ջուրջ 75 անձերու։

Որոնց անունները որ կը կարդացվեր, վար կ'իջնեին գնացքեն և կ'երթային իրարու մոտ հաջորդաբար դինվորական շղթաներու մեջ շարվելու... Մինչև մեր ոսկորներն սարսուռ կը զգայինք, թեպետ որոշ չէինք գիտեր, թե ինչո՞ւ աս բաժանումը կ'ընեին, բայց շատ ուշագրավ էին հաջորդաբար կանչված անունները։ Մեզմե բաժնվողներեն ոմանց հետ համբուրվեցանք ու համբուրեցինք, ակնթարթի մը մեջ լացինք ու լացուցինք զիրար, զի բնազդաբար միայն կը զգայինք, թե կը բաժնվեինք իրարմե անդարձ...

Ահա սուրբ նահատակությամբ օծուն անունները մեր տառապանքի ազնիվ այն ընկերներուն, որոնք Սենճան Քեոյի կայարանին առջև մեզմե բաժնվելով հեռացան գնացին դեպի Այաշ, և մեկ քանի ամիս վերջ Էնկուրիի մոտակա ձորերուն մեջ շարշարալից մահվամբ ողջակիզեցան հայրենիքի սրբանվեր սեղանին վրա, հայ ազգի ազատագրության անմահներու հավիտենական մատյանին մեջ արձանագրելով իրենց անունը ոսկի տառերով։

---

## Այաշի
## Աքսորեն անվանց ցանկը

1. Խաչատուր Մալումյան (Ակնունի), հայտնի գրագետ և դաշնակցական պետ, նահատակված Ուրֆայի ճամփուն վրա։
2. Գարեգին Խաժակ, ուսուցիչ-գրագետ և դաշնակցական գործիչ, նահատակված Ուրֆայի ճամփուն վրա։
3. Ռուբեն Զարդարյան, ուսուցիչ գրագետ, Ազգ. երեսփոխան դաշնակցական գործիչ և խմբագրապետ դաշնակց. օրգան «Ազատամարտի», նահտկ. Ուրֆայի ճամփուն վրա։
4. Սարգիս Մինասյան, Դրոշակի խմբագիր և ուսուցիչ ու դաշնկ. գործիչ։
5. Հարություն Ճանկուլյան, հնչակյան պետ, Ազգ. երեսփոխան, նահատակված Ուրֆայի ճամփուն վրա։
6. Դոկտ. Նազարեթ Տաղավարյան, հանրային եռանդուն գործիչ, Ազգ. երեսփոխան, և բժշկական երկասիրությանց հրատարակիչ, նահատակված Ուրֆայի ճամփուն վրա։

7. Համբարձում Պոյաճյան (Մուրատ), հնչակյան հայտնի պետ, Ազգ. երեսփոխան, նահատակված Կեսարիո մեջ։
8. Հարութիւն Շահրիկյան, Փաստաբան, հանրային գործիչ, Ազգ. երեսփոխան և հայտնի դաշնակց. նահատակված էնկուրի։
9. Ատոմ Յարճանյան (Սիամանթո), բանաստեղծ, դաշնակցական, Ազգ. երեսփոխան, նահատակված էնկուրի։
10. Հայկ Թիրյաքյան (Հրաչ), դաշնակց. գործիչ, Ազգ. երեսփոխան, նահատակված էնկուրի։
11. Ներսես Զաքարյան, ուսուցիչ և հնչակյան գործիչ, Ազգ. երեսփոխան, և կենտր. ազգ. վարչության անդամ, նահատակված էնկուրի։
12. Բարսեղ Շահբազ, փաստաբան, դաշնակ. գործիչ, նահատակված Խարբերդի և Մալաթիո ճամփուն վրա։
13. Շավարշ Քրիսյան, ուսուցիչ և դաշնակ. գործիչ, նահատակված էնկուրի։
14. Ենովք Շահեն, դերասան, նահատակված էնկուրի։
15. Քրիս Ֆեներճյան (Սիլվիոյրիչի), բուլղարահպատակ ըլլալով ազատված և դարձած Բուլղարիա։
16. Ժակ Սայապալյան (Փայլակ), հանրային եռանդուն գործիչ, Ազգ. երեսփոխան, նահատակված էնկուրի։
17. Դոկտ. Ավետիս Նագաշյան, հանր. գործիչ, վերադարձած Պոլիս։
18. Դոկտ. Խաչիկ Պարտիզպանյան, հանրային գործիչ, նահատակված էնկուրի։
19. Դոկտ. Գ. Պողոսյան, ծանոթ հրապարակագիր. Ազգ. երեսփոխան, ազատված և ինքնադադարեն վերջ Պոլիս դարձած։
20. Դոկտ. Մելքոն Կյուլիսեանյան, վերադարձած Պոլիս։
21. Դոկտ. Կարապետ Փաշայան, օսմ. պառլամենտի նախկին անդամ, Ազգ. երեսփոխան, դաշնակցական գործիչ, նահատակված էնկուրի։
22. Դոկտ. Տիգրան Ալլահվերտի, անդամ Պատրիարքարանի ժողովներու, վերադարձած Պոլիս։
23. Արիստակես Գասպարյան, փաստաբան, հանրային եռանդուն գործիչ և Ազգ. երեսփոխան, նահատակված էնկուրի։
24. Ներսես Փափազյան (նախկին Մաշտոց վարդ.), դաշնակ. օրգան Ազատամարտի խմբագիր և դաշնակ. գործիչ, նահատակված էնկուրի։



25. Համբարձում Համբարձումյան, խմբագիր, նահատակված էնկուրի։
26. Գրիգոր Թորոսյան (Կիկո), համանուն երգիծաթերթի հրատարակիչ և հանր. գործիչ, նահատակված էնկուրի։
27. Ռոստոմ Ռոստոմյան, վաճառական և ազգային գործիչ, նահատակված էնկուրի։
28. Սմբատ Բյուրատ, ազգ. վիպագիր և հանրային գործիչ, Ազգ. երեսփոխան, նահատակված էնկուրի։
29. Մելքոն Կուրճյան (Հրանտ գրական անունով ծանոթ), Ազգ. երեսփոխան, հայագետ, դաշնակցական գործիչ, նահատակված էնկուրի։
30. Թեոդոր Մեծիկյան, վաճառական, նահատակված էնկուրի։
31. Գևորգ Թերճիմանյան, դաշնակ. գործիչ Հայկ, Թիրաքյանի վաճառ. նահատակված էնկուրի։
32. Հայկ Թիրյաքյան, դաշնակ. գործիչ, Հայկ Թիրյաքյանի տեղ աքսորված և ապա Պոլիս դարձած։
33. Խաչիկ Իտարեճյան, ուսուցիչ, նահատակված էնկուրի։
34. Մկրտիչ Հովհաննեսյան, ուսուցիչ, դաշն. գործիչ, նահատակված էնկուրի։
35. Մկրտիչ Հովհաննեսյան, վերոհիշյալին տեղ աքսորված և ապա Պոլիս դարձած։
36. Սարգիս Աբո, կովկասահայ, ուսուցիչ, դաշնակ. գործիչ, նահատակված էնկուրի։
37. Աբրահամ Հայրիկյան՝ տաճկագետ և տնօրեն «Արդի» վարժարանին, ազգ. երեսփոխան, նահատակված էնկուրի։
38. Լևոն Շամտանճյան, Միքայել Շամտանճյանի տեղ աքսորված և Պոլիս վերադարձած.
39. Բյուզանդ Պոզաճյան, ազգ. երեսփոխան և վերադարձած Պոլիս։
40. Գեղամ Բարսեղյան, խմբագիր, ուսուցիչ և դաշնակ. գործիչ, նահատակված էնկուրի։
41. Հովհաննես Գրլրճյան, գրավաճառ, նահատակված էնկուրի։
42. Օննիկ-Ժիրայր, ուսուցիչ, նահատակված էնկուրի։
43. Լևոն Լարենց, վերակազմյալ հնչակյան պետ, գրագետ, ուսուցիչ, նահատակված էնկուրի։
44. Տիգրան Չեոկուրյան. գրագետ, ուսուցիչ, խմբագրապետ Պոլսո «Ոստան» պարբերաթերթի, հանրային գործիչ, նահատակված էնկուրի։

45. Ղազար Ղազարյան (Մարզպետ), դաշնակ. հին գործիչ, ուսուցիչ, իբր թուրք ծպտյալ Ամանոսի փապուղիներու Ի՛Ղիլի կողմը պաշտոն վարած գերմաններուն մոտ. հետո Նիսիպին անցած և ապա ձիեն իյնալով մեռած Նիսիպինի մեջ զինադադարեն քիչ առաջ։

46. Հարությունն Գոնյալյան, դերձակ, նահատակված էնկուրի։

47. Միհրդատ Հայկազն, հովանոցավաճառ, բազմաժամանակյա տարագիր, դաշնակ. գործիչ, ազգ. երեսփոխան, նահատակված էնկուրի։

48. Պետրոս Գալֆայան՝ նախագահ Մագրբգյուղի թաղապետության, դաշնակ. գործիչ, նահատակված էնկուրի։

49. Պետրոս Գալֆայան, վերոհիշյալին տեղ աքսորված, վաճառական, նահատակված էնկուրի։

50. Կարապետ Թաշճյան, նահատակված էնկուրի։

51. Հարություն Ասատուրյան, նահատակված էնկուրի։

52. Կարապետ Սարաֆյան Ռեժիի պաշտոն., նահատակված էնկուրի։

53. Վռամշապուհ Սամուելով, ռուսահայ սեղանավոր, հանրային Լուանդուն գործիչ, նահատակված էնկուրի։

54. Սարգիս Արմտանցի, նահատակված էնկուրի։

55. Խաչիկ Պերպերյան, ուսուցիչ, վերադարձած Պոլիս։

56. Վրթանես Մարտիկյան, վերադարձած Պոլիս։

57. Միհրան Աղաջանյան, սեղանավոր, Պոլիս վերադարձված և կախված։

58. Նշան կիտվածանկարիչ, Գումգաբուեն, նահատակված էնկուրի։

59. Տիգրան Աճեմյան, վերադարձած Պոլիս։

60. Մարկոս Սեֆեր, փաստաբան, Մարկոս Նաթանյանի տեղ աքսորված և վերադարձած։

61. Սերոբե Նորատունկյան, Սանաս. վարժարանի ուսուցիչ, դաշնակցական գործիչ, և ազգ. երեսփոխան, նահատակված էնկուրի։

62. Բարթող Զորյան (Ժիրայր), հրատարակիչ, դաշնակ. գործիչ, նահատակված էնկուրի[1]։

Այսպիսի կայարանին առջև 20-ե ավելի կառքեր պատրաստ կը սպասեին արդեն բազմաթիվ հեծյալ ոստիկաններու հետ։

1 Ծանոթ. Ցավալի է, որ մնացյալ 13 աքսորական մեծ տարբախտ ընկերներու անունները հնար չեղավ հոս արձանագրել, հակառակ ամեն պրպտումներու։



Զինվորական խստությանց ներքև կառքերու թափորը շրջապատված հեծյալ զինվորներով, մեկ քանի րոպե վերջ արդեն ճամփա կ'իյնար դեպի Այաշ, որ հազիվ մեկ քանի ժամ միայն հեռու էր Սենճան Քեոյի այս կայարանեն։

Ավելորդ է հիշել, թե երկուստեք ևս հուզումը մեծ էր, և մեր տպավորությունը ճնշիչ, զի բնազդաբար գիտեինք, թե այս անգամի մեր բաժանումը վերջնական էր...

Արցունքոտ աչքերով կը դիտեինք հեռանալը մեր վշտի ընկերներուն, որոնց կառքերը տակավ կ'անհայտանային փոշիի ամպերու մեջ, շարաշուք վերահաս դեպքերու նախազգացումը տալով մեզի։

Այսօր, հինգ տարի վերջ, երբ անկախ և ազատագրված Հայաստանի վերակենդանացուցիչ արևը արդեն կը բարձրանա Արարատի ձյունապատ ալեփառ կատարեն, կյանք ու արև տալով մեր ապագա փառքի հույսով առլեցուն ցավատանջ սրտերուն, այսօր սրբազան պարտականություն կը զգամ արցունքոտ աչքերով ձեզ ըսելու հրաժեշտի մեկ քանի հակիրճ խոսքեր, զորս այն ատեն մեր հապճեպ բաժանումին և մահաբույր խստությանց մեջ չկրցա ըսել։

Երթա՛ք բարյ՛ավ պաշտելի ընկերներ, բազմատանջ հայրենիքի և ազատագրության գաղափարի անձնանվեր առաքյալներ, որ բյուրեղացած հայրենասիրությամբ պայքարեցաք և՛ գրչով, և՛ խոսքով, և՛ գործով։ Որ ո՛չ իսկ մեկ օր, մեկ ժամ դեղևեցաք ձեր պաշտած ու պաշտպանված գաղափարներու փշոտ ճամփուն մեջ՝ գիտնալով հանդերձ, թե վաղ թե ուշ դեպի Գողգոթա կը բարձրանաք։ Ապագա հայ նորահաս սերունդներ պիտի գան ի գուշ ձեր խնկանվեր հիշատակին ու հուշարձանին առջև, որ վաղվան ազատ հայությունը պիտի կանգնե ի պատիվ ձեր հավերժական հիշատակին, հայտնելու համար իր անմոռաց երախտագիտությունը հանդեպ ձեզ, որ հանուն թշվառ հայրենիքի ազատության և փրկության, չխնայեցիք ո՛չ ինչք, ո՛չ կյանք, ո՛չ արյուն...

Պատի՛վ և փա՛ռք ձեզ հայրենիքի ազատության վետերաններ. դուք ձեր կարմիր արյունով հայրենիքի գետերը ներկեցիք, և ձեր սրբազան նշխարներով սարերը ու ձորերը լեցուցիք, և ձեր լեռնակուտակ ոսկորներով թշնամիներուն առջև անխորտակելի պարիսպներ կանգնեցիք։

Իսկ ձեր շարշարալից նահատակությամբ նոր դարագլուխ

բացիք, հայ ժողովրդին պարգևելով նոր կյանք, նոր արև և փառապանծ նոր ապարեզներ։

Այսօր, երբ ազատագրված Հայաստանի նորակազմ քաջարի բանակը հաղթութեան հաղթություն կը սլանա, հայրենիքի սահմանները օրեօր ընդարձակելով և տասնապատկելով, թող ձեր հոգիները խայտան ու ցնծան հավիտենականության մեջ, ի տես ձեր արյունով գնված հայրենիքի շեն ու ջող և ծաղկավետ անդաստաններուն և պտղալից դարաստաններուն։

Օրհնյա՜լ թող ըլլա ձեր սուրբ հիշատակը, դարեր շարունակ և ձեր անունները ոսկեքանդակ ամս համա՜յր պիտի օրհնվի հայ սերունդներեն բազմերախտ։ Երթաք բարյա՜վ...

Հուսկ ուրեմն շարժեցավ և մեր երկաթուղու գնացքը դեպի Էնկուրի։ Ոչ ոք մեզմե սիրտ ուներ խոսելու, ոչ ոք կը համարձակեր խանգարել մեր մեջ տիրող մեռելական լռությունը։ Մեր մտքերը չէին ուզեր գործել ու խոկալ և չէին համարձակեր վերլուծել օրվան շարագուշակ մեծ դեպքերը։ Իսկ մեր սրտերը արդեն գերեզմաններ էին, առանց դիակներու և առանց շիրիմներու...

Մեկ քանի ժամ վերջ, կեսօրի մոտ արդեն Էնկուրիի առջև մեր գնացքը կանգ կ'առներ միանգամ ընդմիշտ։

Կուսակալանիստ այս քաղաքին ոստիկանական տնօրենը, հանդերձ բազմաթիվ ոստիկաններով և ոստիկան զինվորներով և կառքերով առավոտե ի վեր կը սպասեր եղեր մեր ժամանման։

Հազիվ կառախումբը թողնելով Էնկուրիի երկթ. կայարանը կ'իջնայինք, մեզ առանց մի քիչ հանգիստ տալու ոստիկանական տնօրենը մեկ-մեկ հաց տալով՝ մեզ հրաման կ'ըներ հինգական տեղ գրավել մեզ սպասող առանց ծածկույթի երկձի բեռան կառքերուն մեջ։

Բնականաբար տատամսելու ժամանակ չկար և ամենքս ալ մեր տեղերը բռնած էինք. միայն բացառություն ըլլալով, իբր շնորհ հինգ եկեղեցականներուս հատկացվցած էին զսպանակավոր կառք մը։

Յուրաքանչյուր կառքի մեջ մեկ-մեկ ոստիկան զինվոր տեղավորվելե վերջ, 44 կառքերու մեր երկարաձիգ շարքը կամ մահապարտներուս թափորը շարժեցավ դեպի Գասթեմունիի ուղղությամբ։



Ճամփորդության անհանդուրժելի տաժանքը դեռ նոր կը սկսեր, զի փոխանակ երկաթուղու Ա. և Բ. թավշապատ կառքերուն, այժմ չոր տախտակներու վրա նստած, խոլ վազքով ի գիլ կու գային փոշիի ամպեր բարձրացնելով մեր ետև քուլա՜, քուլա՜։ Էնկուրի քաղաքը շուտով ձգելով մեր աջակողմը, մտանք սարերու և ձորերու գալարապտույտ անհարթ ճամփաներու մեջ։

Քանի մեր ճամփան կը շարունակեինք և մարդաբնակություններե կը հեռանայինք, այնքան մեր հոգիները կը խռովեին և մեր մտքերը շարագուշակ մտածումներով ինքնալլկումի կ'ենթարկեինք։ Զի ամեն ապառաժի և ամեն ծառի ետև պահվրտած ավազակներ տեսնել կը կարծեինք. և ամեն ծառե վար ձգված կախաղաններ կախաղանի չվան կը կարծեինք... Հայ ժողովրդի շինական երգերու վարպետն ու անզուգական վարդապետը՝ Հայր Կոմիտաս, որ մեր կառքին մեջ կը գտնվեր, արդեն մտքի տարօրինակ տրամադրություններ կը ցուցներ, և հաստարմատ ծառերը շարժուն և հարձակող ավազակներ կարծելով, միշտ իր գլուխը վերարկուի փեշերուս ներքև կը ջանար թաքցնել, որսորդի երկյուղեն ավազի տակ գլուխը թաղող կաքավներու նման։ Կը թախանձեր, որ պահպանիչ ըսեմ իր գլխուն վրա, հուսալով վերագտնել իր խռովահույզ հոգիին հանդարտությունը։

Անդին, ուրիշ ծանոթ ծերուկ փաստաբան մը իր կառապանին կը հանձներ ոսկի ժամացույցը և դրամը, խնդրելով իր վերահաս մահեն վերջ, Պոլիս երթալով կնոջը հանձնել՝ իբր վերջին հիշատակ։

Մեր կառքերը անդադրում և անգութ վազքով մը ի թավալ կու գային, կառապաններու մտրակներու անհատնում շառաչյուններուն և ոստիկան զինվորներու հայհոյություններուն մեջ։ Քանի՜ քանի՜ անգամներ տարաբախտ մեր ընկերներեն շատեր, չկրնալով տոկալ կառքի չոր տախտակներու խոլական վազքե առաջ եկած ցնցումներուն, կառքեն դուրս կ'իյնային, ենթարկվելով իրենցմե վերջ եկող կառքերեն կոխոտվելու անմիջական վտանգին։

Արգիլված էր կառքերը կեցնել ամենաստիպողական պետքերու պարագային իսկ, առանց հացի, առանց ջուրի ոսկորներ կոտտացնող վազքով մը կը առաջանայինք իբր թե մեզ հե-

տապնդող թշնամիներ ունենայինք, մինչդեռ անոնք մեր մեջ էին արդեն...

Մթնշաղին հետ կը հասնեինք վերջապես Գալայճրք կոչված գայմագամանիստ գյուղաքաղաքը։ Մեզ ընկերակցող ոստիկանապետներն, ոստիկաններն ու ոստիկան զինվորներն մեզ կ'առաջնորդեին թրքական սրճարան-իջևան մը (խան)։

Հազիվ մտած ներս, մեր ընկերներեն ոմանք, ուժաթափ և զգայազուրկ հանկարծ գետին կ'իյնային, այլևս չկրնալով տոկալ գարշահոտ սրճարանի հեղձուցիչ օդին։ Եվ հազիվ մեզ ընկերացող հույլ մը ճարտար բժիշկներու խնամքով կը սթափեին, զարմացկոտ ակնարկներ պտտցնելով իրենց շուրջ. գոգցես իրենց ընտանեկան սիրելիները կը փնտրեին կամ իբր թե երազ մը կ'արթնային...

Ո՛չ ոք կը խորհեր հացի և ջուրի վրա, ամեն ոք կ'աճապարեր իր կոտրտած ոսկորտիքին հանգիստ տալ, իյնալով պատահաբար ուր որ բաց տեղ մը գտներ, փույթ չէ, թե չոր տախտակ ըլլար ան։

Աղտի ու մլուկներու, փոշիի և ոջիլի ու անհանդուրժելի գարշահոտությանց մեջ, որ ավելի սաստկացված էին մեր 150-ե ավելի բազմությամբը, քունե ավելի թմրած ու սահմռկած, սարսափի գիշեր մը անցնելե վերջ, հաջորդ օրը արշալույսին հետ կը մեկնեինք Գալայճրքեն դեպի Զանկերը։

Նախորդ օրվան կրկին խոլ վազքով, փոշիի ամպերով և ցավատանջ ոսկորներով ավելի քան 10 ժամվան անդադրում ճամփորդութենե մը վերջ, հուսկ ուրեմն կը տեսնեինք Զանկերի աղոտ լույսերը խիստ հեռվեն։ Վերջապես մոտալուտ հավանական հանգստի մը հույսով զորացած, և զսպված անհամբերությամբ կը սպասեինք վայրկյանե վայրկյան մեր ժամանման։

Մինչդեռ կարծես լույսերը եթե չէին հեռանար, գոնե չէին ալ մոտենար, շարաչար տանջելով մեզ մեր խոնջանքի հուսադրությանը մեջ։

Սակայն փոխանակ քաղաք մեզ առաջնորդելու, հանկարծ ճամփան փոխելով դեպի աջ կ'երթայինք կանգնելու գիշերային խավարին մեջ թաղված հսկա շենքի մը մեծ դռներուն առջև։

Առաջինը՝ եկեղեցականներուս հատկացած կառքը ըլլալով, նախահաս կ'իջնայի վար, երկյուղալի կասկածոտ ակնարկ մը ձգելով շուրջ բոլորս։

Սվինավոր պահակ զինվորներու առջևեն անցնելով հանկարծ



կը մոտենար կանոնավոր բանակի զինվորական պահեստի հարյուրապետ մը, և նվազ դաժան ձայնով կ'ըսեր մեզի. «էֆենտիներ բա՛րի եկաք...»։

Երբ ամենքը իրենց կառքերեն արդեն վար իջած էին, հարյուրապետը մեզ առաջնորդեց կամարակապ մեծ դռնեն ներս դեպի հսկա շենքին ներքին մասը, որ 4—5000 զինվոր առնելու չափ ահագին քարաշեն զորանոց մըն էր, շուրջանակի քառանկյուն շենքերով իրարու կապված, մեջտեղը ընդարձակ մարզարանով մը։

Ցարաբաստիկ սև վարագույր մը ևս ինկած էր հոս, և կը սկսեր նոր ողբերգություն մը...

## 9.

## ՁԱՆԿԵՐԻՒ ԶՈՐԱՆՈՑԻ ԿՅԱՆՔԸ

Մեր ձերբակալության չորրորդ օրը 1915 ապրիլ 14-ի գիշերը ուշ ատեն կը տեղավորվեինք Զանկերրի աս վիթխարի զորանոցին ստորնահարկի մեծ սրահներեն մեկին մեջ։

Աս սրահը (ըստ թրքական բացատրության ԳՈՎՈՒՇԸ), աղտոտ, փոշոտ, բայց ոչ ոք մեզմե մաքրության հարցով զբաղելու սիրտ ուներ, ուստի ամենքս ալ ինկանք տախտակներու վրա իբր թե քնանալու։

Բայց քնանալ մի՞թե հնար էր չոր տախտակներու վրա, երբ ջարդուփշուր եղած պատուհաններե կը փչեր հյուսիսային սառնաշունչ քամին։ Մարդոց շարշարանքին պակասը նույն գիշեր եկավ լրացնել և բնությունը, գարնան այս ամիսին ձյուն տեղաց գիշերը սարսրափացնելով մեզ մինչև մեր ոսկորները, որոնք կառքի ցնցումներեն արդեն կը կոտտային։ Մոտալուտ վտանգի ու մահվան մղձավանջը սակայն, կմախքի մը ուրվականով կը համառեր արձանանալ մեր շփոթ երևակայության առջև։

Մարդկային բեկորներ էինք, խլված մեր ընտանեկան ծոցեն, մեր ընկերական դիրքերեն, և նետված էինք հանկարծ Փոքր Ասիո խորը, անշուք անկյուն մը։ Զրկված էինք կյանքի ամենաանհրաժեշտ տարրական պիտույքներե, պառկած չոր տախտակներու վրա, գլուխ գլխի, ոտք ոտքի, սիրելիներու կա-

ղոտը մեր տանջվող սրտերու մեջ, վաղվան անորոշության սարսափը մեր հոգիներուն մեջ։ Մինչ զորանոցին մեծ դռան ու մեր արգելափակված սրահին փոքր դռան առջև պահակ կը սպասեին հերթով սվինավոր զինվորներ չթույլատրելով, որ ամենասիպողական պարագաներու մեջ իսկ գոնե դուրս գալ մեր սրահեն։

Հաջորդ օրը, սակայն, մեր մասնավոր դիմումներու վրա թույլ կը տրվեր շրջիլ զորանոցին բակին մեջ և շնչել գոնե մաքուր օդ։

---

## Զանկըրիի
## Աքսորելոց անվան ցանկը

1. Տ. Կոմիտաս, վարդ. Սողոմոնյան, ի Փարիզ հիմարանոցի մը մեջ արգելափակված.
2. Տ. Գրիգորիս, ծ. վարդ. Պալաքյան, վերապրող։
3. Տ. Հովհան վարդ. Կարապետյան, վերապրող, այժմ կարգաթող։
4. Տ. Հուսիկ, քահ. Քաջունի, հիվանդությամբ վախճանած Մեսքենեի մոտակա գյուղի մը մեջ։
5. Տ. Վարդան, քահ. Ֆերիքեոյի, վերապրող։
6. Պատվելի Գրիգորյան, խմբագիր Պոլսո Ավետաբերի, վերապրող։
7. Դոկտ. Ռուբեն Չիլինկիրյան (Սևակ), գրագետ և հանրային գործիչ, նահատակ. Զանկըրիի և Գալայճըքի ճամփուն վրա։
8. Դանիել Վարուժան, բանաստեղծ և դաշնակց. գործիչ, նահատակ. Սևակի հետ նույն ճամփուն վրա ի Թյունա։
9. Գասպար Չերազ, փաստաբան, մեծանուն եղբորը տեղ աքսորված, վերապրող։
10. Տիգրան Քելեկյան, Սապահ լրագրի խմբագրապետ և ռամկավար կուսակցության պետ, նահատակված Սեբաստիո Ալիս գետի կամուրջին մոտ։
11. Դոկտ. Վ. Թորգոմյան, գրագետ և հանր. գործիչ, վերապրող։
12. Բյուզանդ Քեչյան, այժմ դադրած Բյուզանդիոն լրագրի տեր և խմբագրապետ, վերապրող։
13. Դոկտ. Արմենակ Բարսեղյան, ուսուցիչ և դաշն. գործիչ, վերապրող։



14. Դոկտ. Գրիգոր Ճելալ՝ հին հնչակյան գործիչ, վերապրող։
15. Դոկտ. Միսաք Ճեվահիրճյան՝ անդամ դատաստանական խորհրդի, վերապրող։
16. Դոկտ. Բարսեղ Տինանյան՝ հանրային գործիչ, վերապրող։
17. Դոկտ. Լևոն Պարտիզպանյան՝ հանր. գործիչ, վերապրող։
18. Դոկտ. Արշակ Գազազյան՝ հանրային գործիչ, վերապրող։
19. Դոկտ. Միրզա Քեթենճյան՝ դաշնակ. գործիչ, վերապրող։
20. Դոկտ. Ստեփան Միսքճյան՝ նահատակված Էնկուրիի մոտ։
21. Նշան Գալֆայան՝ ճարտարագետ-երկրագործ, ուսուցիչ-պաշտոնյա և հանրային գործիչ, վերապրող։
22. Երվանդ Չավուշյան՝ վերակազմյալ հնչակյան գործիչ, ուսուցիչ, հիվանդությամբ վախճանած Քաջունի քահանայի հետ և նույն վրանին ներքև։
23. Միքայել Շամտանճյան՝ ուսուցիչ, գրագետ, խմբագիր Ոստանի և հանրային գործիչ, վերապրող։
24. Հայկ Խոճասարյան՝ բազմամյա ուսուցիչ և հանր. գործիչ, ու լիտր ազգ. երեսփ. ժողովո մեջ ի Պոլիս, վերապրող։
25. Սարգիս Գրլճյան (Սրենց)՝ գրագետ-ուսուցիչ, խմբագիր, դաշնակցական գործիչ, վերապրող։
26. Երվանդ Թոլայան՝ խմբագիր «Գավրոշ» երգիծաթերթի, վերապրող։
27. Արամ Անտոնյան՝ խմբագիր, գրագետ, վերապրող։
28. Հ. Թոփճյան՝ ռամկավար, հանրային գործիչ և խմբագիր, վերապրող։
29. Մովսես Պետրոսյան՝ ուսուցիչ և դաշնակցական գործիչ, բուլղարահայ ըլլալով ազատած և մեկնած Սոֆիա։
30. Արիս Իսրայելյան՝ ուսուցիչ և դաշնակցական գործիչ, վախճանն անծանոթ։
31. Սամվել Թոմաճանյան՝ հնչակյան գործիչ. վախճանն անծանոթ։
32. Հյուսյան (Տոդյան մանկանվանյալ)՝ ուսուցիչ, խմբագիր, նահատակված Էնկուրիի մոտ։
33. Պողոս Դանիելյան՝ փաստաբան, դաշնակցական գործիչ, նահատակված Տեր Զորի կողմերը։
34. Վահրամ Աստուրյան՝ դեղագործ և հանրային գործիչ, վերապրող։
35. Ավետիս Զարիֆյան՝ դեղագործ և հանրային գործիչ, վերապրող։

36. Պետրոս Մանուկյան՝ դեղագործ և հանր. գործիչ, վերապրող։
37. Աղարիկ դեղագործ, նահատակված Տեր Զորի կողմերը։
38. Ասատուր Արսենյան՝ դեղագործ, նահատակված Տեր Զորի կողմերը։
39. Հակոբ Նարկիլեճյան՝ դեղագործ և հանրային գործիչ, վերապրող։
40. Գրիգոր Միսքճյան՝ դեղագործ, նահատակված իր բժիշկ եղբոր հետ էնկուրիի մոտ։
41. Հակոբ Թերզյան՝ դեղագործ և հաճընցի հնչակյան գործիչ, նահատակված էնկուրիի մոտ։
42. Կյուլուսթանյան՝ ատամնաբույժ, վերապրող։
43. Վահան Ալթունյան, ատամնաբույժ, վերապրող։
44. Սիմոն Մելքոնյան՝ Օրթագեղեն, ճարտարապետ, վերապրող։
45. Մանուկ Պասմաճյան՝ ճարտարապետ, մտավորական և հանրային գործիչ, վերապրող։
46. Հակոբ Գորյան՝ յոթանասունամյա ակնցի հայրենասեր վաճառական, երբեմն ուսուցիչ, Պոլիս դարձած և բնական մահվամբ վախճանած։
47. Գառնիկ Ինճիճյան՝ վաճառական և հանրային գործիչ, վերապրող։
48. Թերլեմեզյան, սեղանավոր, վանեցի, վերապրող։
49. Աստվածատուր Մանասյան՝ վաճառական, վերապրող։
50. Արտաշես Փարիսյան՝ վաճառական, վերապրող։
51. Մկրտիչ Պարսամյան՝ զինավաճառ, հանր. գործիչ, վերապրող։
52. Հակոբ Պեյլերյան՝ վաճառական, հանր գործիչ, վերապրող։
53. Նոյիկ Տ. Ստեփանյան՝ երզնկացի վաճառական, վերապրող։
54. Դանիելյան՝ պանտրմացի դերձակ ի Պոլիս և ծանոթ հնչակյան գործիչ, վերապրող։
55. Գրիգոր Օհնիկյան՝ հայր երեք որդվոց, յոթանասունհինգամյա վախճանած հիվանդությամբ ի Զանկերը։
56. Արամ Օհնիկյան՝ տարրագետ, վերապրող։
57. Հովհաննես Օհնիկյան՝ հիվանդությամբ վախճանած Հաճընցի, մերձ ի Պելեմետիկ։
58. Մկրտիչ Օհնիկյան՝ նահատակված ի Տեր Զոր։
59. Գևորգ Քեռլեյան՝ նահատակված էնկուրիի մոտ։



60. Խոնճեկուլյան, ակնցի վաճառական, մեռած Մեսքենեի կողմերը։
61. Օննիկ Մաղազաճյան՝ նահատակված Վարուժանի և Սեակի հետ ի Թյունա, վեց ժամ հեռու Զանկերրիեն։
62. Կարապետ Տեռվլեթյան՝ փողերանոցի պաշտոնյա և հանրային գործիչ, վերապրող։
63. Արամ Գալենտերյան, օսմ. դրամատան պաշտոնյա և եռանդուն հանրային գործիչ, վերապրող։
64. Վաղինակ Պարտիզպանյան՝ Շիրքեթի Խայրիյեի պաշտոնյա և հանր. գործիչ, վերապրող։
65. Բարունակ Սարուխան՝ քաղաքապետության պաշտոնյա, վախճանն անծանոթ։
66. Մոմճյան՝ ռուս հյուպատոսարանի թարգման, նահատակված էնկուրիի մոտ։
67. Միհրան Գայրքճյան՝ վաճառական, նահտկ. էնկուրի } երեք
68. Լևոն » » » » } եղբարք
69. Գևորգ » » » »

—

Դժբախտաբար Զանկերրիի մեր աքսորական տարաբախտ ընկերներուն հազիվ կեսին անունը կարելի եղավ ձեռք բերել մեծ դժվարությամբ, մինչդեռ ասոնցմե դուրս կային նաև հայրենասեր ծաղկահասակ ազնիվ երիտասարդներ, և ժողովրդի խոնարհ դասակարգեն անձնանվեր անձեռ, որոնք այնքան պիտի փափագեինք, որ հիշեինք այստեղ։

Չի ասոնք ամենքն ալ մի առ մի արձանագրվելու արժանի էին այս մատյանիս մեջ, մասնավորաբար անոր համար, որ թեպետ շատ խոնարհ դասակարգի զավակներ էին, բայց շատ ավելի հայրենասեր էին և միշտ կը կրկնեին, թե եթե ազատիլ չկա մեզի և պիտի մեռնինք մեր ազգին փրկության համար, թող մեր արյունը արժանի ըլլա մեր հայրենիքին... միայն ափսոս որ վերջին անգամ մը ևս ծառայություն մը չըրած պիտի մեռնինք...»։ Բայց կը մխիթարվեին ըսելով՝ «գոնե այս անգամ մեր թափած արյունը վերջինն է...»։

Ասոնք ալ կ'երթան ավելնալու այն անանուն բյուրավոր նահատակներու ցանկին վրա, որոնց արյան անգին արժեքովն գնվեցավ հայրենիքի ազատությունը և որոնց հավիտենական հիշատակին առջև ծունկի պետք է գան ապագա հայ բոլոր ազատ սերունդները՝ սքանչությամբ օծուն պատկառանքով մը։

Հնար չէ երբեք մոռնալ ան ահավոր գիշերները, երբ հարյուրավոր մտավորականներ, կրոնականներ, բժիշկներ, խմբագիրներ, ուսուցիչներ, մեծահարուստ վաճառականներ, սեղանավորներ զորանոցի շոր տախտակներուն վրա՝ գիշերները իրարու մոտ կողք կողքի ինկած՝ կը մրափեին, զի քնանալ անկարելի էր այդ պայմաններու ներքև։

Բայց սև օրեր եկան հետո, երբ այս անցած օրերն իսկ երջանկության օրեր համարեցինք։

Ապաքեն, աս հանգամանքներու մեջ մեր կյանքը իրապես անհանդուրժելի էր, ուստի ամեն ոք ջանք և ճիգ կ'ըներ տանելի կյանք մը ստեղծելու, շնորհիվ դրամի ուժին գոնե քիչ մը ուտելիք ձեռք բերելու համար։

Իսկ մեծամասնությունը, որ զուրկ էր նյութական առձեռն միջոցներե, ինձ կը դիմեին իբր հոգևոր հոր։ Սակայն ավա՜ղ բախտակից ըլլալով իրենց, դժբախտաբար անկարող էի ծառայություն մ'ընելու։ Բայց իբր Գասթեմունիի և Զանկրրիի նախկին առաջնորդ, օգտվելով հին ծանոթություններես, կարելի եղավ անկողիններ, վերմակներ և կարպետներ բերել տալով տեղվույն ազգակիցներեն, գոնե ազատիլ շոր տախտակներեն։

Սակայն հետզհետե մեր պաղարյունությունը գտնելով կըրցանք ներքին հանգանակությամբ մեր կարոտյալ ընկերներուն ևս օգնել և ձեռքի տակե միջոցներ գտնել, Պոլիս մեր պարագաներուն հետ հաղորդակցելով նյութական օգնություն ձեռք բերելու։ Քանի մեր նյութական միջոցներն առատացան, նույն համեմատությամբ մեզ վերահսկող զինվորական և ոստիկանական պաշտոնեից խստություններն ալ տակավ մեղմացան, շնորհիվ մեր առատ պարգևներուն։

Ընդհանուր հայտնված փափագին վրա, տեղվույն Հայոց մատուռեն ատյանի ժամագիրք մը բերել տալով, արտոնությամբ զորանոցի հսկիչ հարյուրապետին, սկսանք մեր զորանոց մտնելուն չորրորդ օրը երեկոյին «Եկեսցեի» ժամերգության։ Իբր եկեղեցական՝ քսանամյա կյանքիս կամ պաշտոնավարությանս միջոցին, երեք անգամ միայն կրած եմ տառապանքի այն ահավոր սարսուռը, որոնք ազդած են հոգույս մինչև խոր ալքերն, և որ երբեք հնար չէ մոռացության տալ իր այնքան պակուցիչ և սփոփարար ազդեցությանը համար։

Ա. Երբ Իզմիրլյան հոգելույս կաթողիկոսի հետ, հանուն Թրքա-հայ եկեղեցականության, իբր շքախմբի անդամ ուղեկցելով դեպի Պետերբուրգ, Մոսկվա, Թիֆլիս և ս. Էջմիածին կատարած պատմական ուղևորության, ի միջի այլոց հանդիպեցանք և Անի։

Հարյուրավոր տարիներու ընթացքին առաջին անգամ էր, որ Ամենայն Հայոց Հայրապետ մը Բագրատունի թագավորներու այս հոյակապ մայրաքաղաքը Անի ուխտի կու գար, երկրպագություն այս սրբությամբ և հիշատակավ օծուն ավերակներուն։ Աս պարագան պատճառ եղած էր, որ Ալեքսանդրապոլի և շրջակայի հայերը մեծ քարավաններով ուխտի գան Անի ի տեսություն իրենց նորընտիր Հայրապետին հոծ բազմությամբ։

Երբ վեհափառ հոգելույս հովվապետը, շրջապատված 20 ավելի արքեպիսկոպոսներե, եպիսկոպոսներե, վարդապետներե, քահանաներե խուռներամ ուխտավոր ժողովուրդեն «Հրաշափառ Աստված, հոգեզմայլ շարականով առաջնորդվեցավ Անիի մայր եկեղեցին, որուն բազմադարյան սյունազարդ կամարներն կը թնդային երգողներու գոռ շեշտերեն, արդարև տպավորությունը սարսռազդեցիկ էր։ Զի հազարամյա ավերակ կիսափուլ, բայց հոյակապ Կաթողիկե եկեղեցվո դարավոր մեռելական լռությունը կը վրդովեինք մեր հոգեշունչ ալելուներովը, քաղցրանվագ մեղեդիներովը, ապաշխարության շարականներովը և խունկի ու ծուխի բուրումներովը։

Մեր սրտաբուխ աղոթքներովը ոգեկոչումը կ'ընեինք մեր երանաշնորհ հայրապետաց և թագավորաց, որոնք այս սուրբ տաճարին մեջ կատարած էին 850—1000 թվին մեծահանդես արքայական և հայրապետական օծումներ, մասնակցությամբ հայ նախարարաց, իշխանաց, զորավարաց, զորաց և ազատ ու անկախ մերազնյա ժողովրդյան։

Աս ամենն տեսնել ու չհուզվիլ անհնար էր արդարև, անկրոններն, անհավատներն իսկ պիտի հուզվեին այսքան սրբությամբ օծուն կրոնաշունչ հանդիսադրութենե մը։

Բ. Երբ դարձյալ 1909 հուլիսի վերջը հոգելույս Իզմիրյան Հայրապետի հետ այցելեցինք Թիֆլիս, Կուր գետի ափին Մետեխի պատմական բանտը, ուր կը հանգչի հավիտենական քունով Սահակ Պարթև մեծագործ Հայրապետի թոռնուհին և անմահ Վարդան Մամիկոնյան ժողովրդական զորավարի դուստրը Շուշանիկ, չքնաղ հարսը Վրաց արքային։

Կուր գետի ափին, ապառաժներու գահավանդին ցցված պատմական աս բերդը երբ մտավ ս. Հայրապետը արքեպիսկոպոս,

եպիսկոպոսներու և վարդապետներու շքախմբով՝ բացառիկ արտոնությամբ՝ մինչև բերդի երկաթյա ավագ դուռը ընդառաջ եկան կովկասահայոց հռչակավոր ժամանակակից բոլոր մտավորականներն[1], գրագետ, բանաստեղծ, մանկավարժ, ուսուցիչ, խմբագիր, որոնք երկար ամիսներե ի վեր ցարական կառավարության հրամանով հոս բերդարգելյալ էին։ Ասոնք ամենքն ալ, հավատացյալին քով՝ Թերահավատն, կրոնասերին մոտ ազատ խորհողն, վառյալ մոմերով և զույգ առ զույգ թափորով եկան դիմավորել Ամենայն Հայոց ս. Հայրապետն, երգելով «Ուրախ լեր ս. Եկեղեցի» հոգեշունչ շարականն։

Եվ ահա ծայր տվավ հեկեկանքն, վա՜յն ու ո՜ղբն. կու լայինք ամենքս ալ, և՛ հայրապետ, և՛ հետևորդ, և՛ բանտարկյալներ։ Հայ ժողովրդի ազատագրության աս վետերաններն, ամենքն ալ ամիսներե ի վեր հոս դարավոր բանտին մութ նկուղներուն մեջ խցարգելյալ էին։ Որովհետև հայ ժողովուրդին ազատություն քարոզած էին և՛ գրչով, և՛ խոսքով, և՛ գործքով։ Մինչև մեր ոսկորներն սարսուռ կը զգայինք՝ տեսնելով Հայուն սև ճակատագիրը, որ կը հալածեր և՛ Հայրապետն, և՛ մտավորականն և ժողովուրդն...

Թեպետ հոգելույս ս. կաթողիկոսն կը մխիթարեր ամենքն, բայց առանց դատի ու դատաստանի երկար ամիսներե ի վեր խավարշտին աս նկուղներուն մեջ, անորոշ վախճանով մը բանտարկված այս մեր տարաբախտ մտավորականները դժվար էր մխիթարել։ Որոնք սգավոր սիրելիներուն կարոտը իրենց սրտին մեջ, վաղվան սպառնացող Սիպերիո սառնամանյաց ճամփաներն իրենց երևակայության մեջ, պահ մը նկուն ու շվարած օրեօր կը սպասեին անձկությամբ ամենազոր ցարին շրթներեն ելելիք հրամանին, որ կրնար կյանք ըլլալ, բայց և կրնար մահ ըլլալ...

Գ. Իսկ հոս Ջանկըրիի մեծազանգված զորանոցին ամրակուռ պարիսպներուն ետև, ջարդուփշուր եղած պատուհաններեն փչող հյուսիսի սառնաշունչ գարնանային փոթորկին դեմ, մենք 150-ե ավելի Պոլսեն աքսորական մտավորականներ և ընկերներ ի մի եկած, առանց խտրության կուսակցություններու և դասակարգի, հավատացյալի՝ թե կրոնքի անտարբերի և կամ

[1] Ասոնցմե ոմանք մեր աքսորական քարավանին մեջ ըլլալով նահատակվեցան Էնկուրիի մոտերը։



թերահավատի, մթնշաղին մոմի տմուզն լույսի մը մեջ, ժամերգություն կը կատարեինք։ Երբ Կոմիտաս վարդապետ սկսավ իր մելամաղձոտ և սրտառուչ «ՏԵՐ ՈՂՈՐՄՅԱՆ», ծայր առավ հեկեկանք մը ամեն կողմե, որը հնար չէր զսպել։ Կու լայինք ամենքս ալ տղու պես. կու լայինք մեր ձգած սիրելիներուն վրա, կու լայինք մեր սև ճակատագրին վրա, կու լայինք մեր ազգի անբախտության վրա, կու լայինք անցուցած մեր արյունի օրերուն վրա, առանց ենթադրելու, թե արյան աշխարհավեր անախընթաց նոր փոթորիկներու արդեն նախօրյակին կը գտվեինք։ Երբ ազգ ու հայրենիք ի մի հարված պիտի փորձեին բնաջնջել մեր ցեղային դարավոր թուրք թշնամիները։ Մեր մեջեն ամենաքարացյալ սառնասիրտներն իսկ կը մասնակցեին աս ողբ ու կոծին, որ երբեք բռնազբոսիկ չէր, ընդհակառակը՝ հակառակ զսպումի ամեն ճիգերու, կու գար մեր տանջված հոգիներու խորքերեն և հուզումե պոռթկացող ներքին հորձանքներեն։

Թերևս տարաբախտ Կոմիտաս վարդապետ իր ամբողջ կյանքին մեջ այսքան հուզիչ երգած չէր երբեք «Տեր ողորմյան»։

Որովհետև, մինչդեռ ամեն անգամ «ի պաշտոնե» երգած էր «Տեր ողորմյան», ուրիշներու ցավերուն, վշտերուն, սուգին առ ի մխիթարություն, այս անգամ սակայն, «Տեր ողորմյան» կ'երգեր իր իսկ վշտին, հույզերուն ու հուզումներուն համար, հայցելով սփոփանք մխիթարություն հավիտենական Աստուծմեն, որ սակայն լուռ կը մնար...

Այսպիսի ընկճված հանգամանքներու ներքև կ'անցնեինք զորանոցին մեջ մեր օրերը, միօրինակ և վաղվան մտահոգությամբ լեցուն, միշտ մեր աչքերը հառած դեպի զորանոցի ավագ դուռը, ուրկե կը հուսայինք մեր փրկության ավետավոր լուրը։

Մասնավոր և բացառիկ թույլտվությամբ մեր ընկերները հերթով կ'երթային քաղաք ոստիկաններու հսկողությամբ գնումներ ընելու, և վերադարձին մեզ կը բերեին զանազան լուրեր և տեղեկություններ, որոնք հակառակ իրենց հնության, իբր նոր լուրեր հաճույքով կը լսեինք արտաքին աշխարհեն մեկուսացված աքսորականներս։

Վերջապես երկու շաբաթ վերջ ապրիլի վերջընթեր օրերուն կը ստանայինք ազատություն դուրս գալու զորանոցեն։ Ամեն ոք կ'աճապարեր բնակարան մը ճարելու ընկերովին կամ հայրենակիցներու մտերմական շրջանակով մը, անցնելու համար

սպասողական այս սիրտմաշուք օրերը, մինչև որ մեր ճակատագիրը որոշվեր ի բարին կամ ի չարն։ Թեպետ մեր մեջ կային ոչ նվազ լավատեսներ, որոնք կը կարծեին շնորհիվ իթթիհատի օդափոխություն մ՚ըրած ըլլալ գաշնան առթիվ...

## 10.

## ԱՔՍՈՐՅԱԼՆԵՐՈՒ ԿՅԱՆՔԸ ՔԱՂԱՔԻՆ ՄԵՋ

Հազիվ քաղաքին մեջ բնակություն հաստատած, շուտով մեզմե շատեր մոռցան իրենց աքսորականի հանգամանքը, և Պոլսո աղտոտ բարքերն սկսան երևան բերել գավառական այս խաղաղ և մաքուր փոքր քաղաքին մեջ ևս։ Ոմանք փոքր խումբերով այգիներու և պարտեզներու մեջ կ՚երթային կերուխումի, ուրիշներ իբր թե մտավորականներ, օրն ի բուն նստած խաղի սեղաններու շուրջ «Փոքեր» և «Ֆրափ» կը խաղային և կը հավատային, թե օդափոխության եկած են, այնքան անտեղյակ էին ահավոր կացության։ Առօրյա զվարճություններն այն աստիճան ուշագրավ հանգամանք ստացան տակավ, որ թուրքերն սկսան մեր տարեց ընկերներուն զգուշությամբ դիտել տալ, թե «Ձեք գիտեր, որ ժամանակը փափուկ է, ինչո՞ւ ձերինները իրենք զիրենք կերուխումի տված են. հիմա ասոնց ժամանակը չէ...»։ Իսկ գավառական այս փոքրիկ քաղաքի հայությունը գայթակղած էր, մոտեն ուսումնասիրելու առիթ ունեցած ըլլալով իր Պոլսո ազգային գլուխներուն կամ պետերուն «տկար» կողմերը...

Պատրիարքարանեն սկսավ այս միջոցին երբեմն փոքրիկ գումարներ գալ, որոնց համագումար արժեքն չանցավ 150 ոսկին։ Աս դրամին պատճառով ալ ներքին փոքր վեճեր ծագում առին, մանավանդ այն միջոցին, երբ մեկուկես ամսվան չափ անկողին ինկա և շնորհիվ աքսորական ճարտար բժիշկ ընկերներու հազիվ կրցա ոտքի ելլել։

Ասկե վերջ հեռացա քաղաքեն մոտակա այգի մը, և սկսա զբաղիլ գրական աշխատությամբ, իբր միակ միջոց մոռնալու աքսորականի մտահոգիչ վիճակը։

Ամեն ոք ջանք ու ճիգ կը թափեր և հեռագրով կը դիմեր ներքին գործոց ամենազոր նախարար և հայասեր Թալեաթին, և արդարություն կը խնդրեր... Կային և աքսորականներ, որ



իրենց ամեն ազդեցիկ բարեկամներուն կը դիմեին և միջնորդություն կը խնդրեին։ Իսկ շատեր ալ իրենց մոտավոր թե հեռավոր ազգականներուն կը դիմեին գաղտնի միջոցներով և կը հանձնարարեին, որ փոքր թե մեծ դրամական կաշառքով գնեն իրենց ազատությունն՝ իմա կյանքը։

Զորանոցեն մեկնելեն շուրջ շաբաթ մը վերջ, շնորհիվ ամերիկյան դեսպան Մորգընթաուի և ուրիշներու զորավոր միջնորդությանց հինգ աքսորական բախտավոր ընկերներ[1] հաջողեցան դառնալ Ջանկըրիեն Պոլիս։

Երջանիկներու այս առաջին խումբն երթալեն վերջ՝ բնականաբար աճեցավ մեր մեջ հույսը մոտալուտ փրկության, և կրկնապատկվեցան ջանքերն գաղտնի սակարկությանց...

Սակայն անցան ամիսներ, և կրկին ազատագրվող ընկերներու վերադարձն ողջունելու բախտը չունեցանք։

Բայց հավետ ողբալի ան սև օրն չենք կրնար մոռնալ բոլոր վերապրողներս, երբ 1915-ի Վարդավառին ճիշտ կիրակի օրը ընդհանուր փափագի մը գոհացում տալով պատրաստված էի պատարագ մատուցանել Ջանկըրիի հայոց փոքրիկ եկեղեցիին մեջ։ Հազիվ արշալույսը ծագած, մեկ քանի երիտասարդներ գուժկան բերին այգիս, թե ամբողջ գիշերը ոստիկանական հսկողության ներքև եղած էին, իրենց բնակած տուներուն շուրջ ոստիկանական պահակներ շրջած էին։

Բայց արդեն զորանոցեն դուրս գալե վերջ աքսորականներս յուրաքանչյուրը պարտական էր 24 ժամը անգամ մը երթալ պահականոց և անձնապես ոստիկաններուն աչքին երևնալով՝ աքսորականներուս հատուկ տոմարը ստորագրել։ Ուստի այս վերջին գիշերվան հսկողությունը հույժ արտակարգ հանգամանքներու ներքև եղած էր անշուշտ։

Այս միջոցին երրորդ բոթաբեր հրիտասարդ մը կը հասներ մեր մոտ հևիհև ըսելով. «Հայր սուրբ, ոստիկանապետը հրաման ըրավ, որ բոլոր Պոլսեն եկած աքսորականներս հավաքվինք կառավարական շենքին առջև, պաշտոնական ըսելիք ունին եղեր...»

Բնականաբար այլևս ավելորդ էր մտածել պատարագի վրա, ուստի աճապարեցինք այգիի բնակակից հինգ ընկերներով դեպի կառավարական շենքը։

1 Դոկտ. Վ. Թորգոմյան. Պատվելի Գրիգորյան, Բյուզանդ Քեչյան, Երվանդ Թալյան, դեղագործ Հակոբ Նարկիլեճյան։

Երբ 135—140 աքսորականներս հավաքվեցանք և մահապարտներու պես ընկճված և խռովահույզ կը սպասեինք ըլլալիք պաշտոնական հայտարարության, ահա ոստիկանապետը ընկերակցությամբ ոստիկան զինվորներու հրամանատարին և հետևորդ ոստիկաններու առաջացավ մինչև արտաքին դռան սանդուղներու վերի աստիճանը և դաժան ձայնով սկսավ կարդալ նոր սև ցանկ մը, հրամայելով, թե որոնց անունները որ կարդացված է, անցնին հանդիպակաց կողմը, այծերը ոչխարներեն կը զատեին...

Եվ ահա տառապանքի մեր դժբախտ ընկերներեն 56 անձեր անցան դեմի կողմը... Ամենուս տպավորությունը ահավոր էր. թեպետ ստույգ ոչինչ գիտեինք և չէինք հասկնար այս բաժանումին շարժառիթը, սակայն մինչև մեր ոսկորները կը զգայինք մահվան սարսուռ մը բնազդաբար։

Ոստիկանապետը կը հրամայեր անմիջապես պատրաստ եղող կառքերը նստիլ մեկնելու համար... Ալ մտածելու ժամանակ չկար. ամեն մեկ կողմեն կ'աղաչեին ինծի, որ միջնորդեմ և մեկ քանի ժամ ժամանակ խնդրեմ, որպեսզի կարենան իրենց խուցերը երթալով պատրաստություն տեսնել և իրենց ճերմակեղենները գոնե առնել...

Երկար մտածելու ժամանակ չկար, պետք էր դիմել ոստիկանապետին անմիջապես, անշուշտ ոչ իբր առաջնորդ երբեմն ունեցած պաշտոնական համարձակությամբ։ Ուստի ուզեցի փորձել, և խնդրեցի մեկ քանի ժամվան միջոց պատրաստվելու համար։

Հակառակ մեր կանխակալ հոռետեսության, ստացանք մեկ ժամվան միայն միջոց պատրաստության համար։

Աննկարագրելի էր մեր մեջ տիրող խուճապը, շվարած էինք ամենքս ալ. չէինք գիտեր, թե ո՞ր մեկ բանի նախապատվություն տանք։ Կարելի եղավ շնորհիվ անձնվեր կուսակցական մեկ քանի ուսուցիչներու՝ 60 ոսկի հանգանակել անմիջապես, իբր մեր թշվառ ընկերներուն ճանապարհածախս. ինչ որ մեր 50 մեկնող ընկերներուն մեկ-մեկ ոսկի ըսել էր. բարեբախտաբար կային անձեր մեկնողներուն մեջ, որ օգնության կարոտ չէին։

Կառքերը՝ թվով տասնմեկ, պատրաստ էին. համբուրվեցանք վերջին անգամ ըլլալով մեր տարաբախտ ընկերներուն հետ, և ահա կառքերու քարավանը ճամփա ինկավ, ուղեկցությամբ



տասեն ավելի հեծյալ ոստիկան զինվորներու, իրենց ետև ձգելով փոշիի թանձր ամպեր և հետզհետե կորսվելով մեր անձկայրյաց աչքերեն։

Մեր մեկնող ընկերներուն մեջ եղան կտրիճ երիտասարդներ, որոնք զգալով իրենց վերահաս չարաբախտ վախճանը, կը խնդրեին ողջ մնացողներես, որ իրենց արյան վրեժը չմոռնանք հաղորդել իրենց սիրելիներուն և ապագա սերունդներուն...

Ալ ոչ ոքիս վրա կարողություն մնացեր էր ոտքի վրա մնալու. այնքան պարտասած կը զգայինք, իբր թե օրեր երկար տևող ճամփորդութենե մը դարձած ըլլայինք ու անմիջական հանգստի պետք ունենայինք։

Ամենքս ալ հուզված էինք, մասնավորաբար անոր համար, որ ոստիկաններեն ոմանք մեր ականջներուն փսփսած էին թե Տեր Զոր կ'երթան...

Մինչդեռ մեկնողներուն ըսված էր, թե Էնկուրի կը ղրկվին պատերազմին մինչև վախճանը հոն մնալու համար...

Արդեն հունիսի սկիզբը՝ մեր աքսորական ընկերներեն ոմանք, որ հաղորդակցության մեջ էին գավառի իրենց ազգականներուն հետ, կը ստանային հեռագիրներ, թե իրենք մեկնած են հանդերձ ընտանյոք Երզնկայեն դեպի Ակն. իրենց բոլոր շարժուն ու անշարժ հարստությունը թողնելով իրենց թուրք բարեկամներուն։ Մեկ քանի օր վերջ Ակնեն հեռագիր կը ստանային, թե Ակնեն դեպի Խարբերդ կը մեկնին մեծ քարավանով և ետ այնու ոչ մեկ լուր կու գար այլևս...

Այնուամենայնիվ մեզմե ոչ ոք դեռ համատարած հայ սպանդի մը մասին կը մտածեր։ Շատեր առանց հուսահատելու՝ հեռագրով շարունակ դիմում կ'ընեին հայոց սիրելի և բարեկամ՝ ներքին գործոց նախարար Թալեաթին և ոստիկանական տնօրեն Զան-փոլադին և դատ ու դատաստան ու արդարություն կը խնդրեին կամ կը պահանջեին հանուն օսմ. Սահմանադրության...

Հաճախ աքսորականներու իբր հոգևոր պետ... արդարություն պահանջող հեռագրեր ստորագրել տալով ինծի կը հղեին Պոլիս կենտրոնական կառավարության։ Բայց երբեք անձնապես դիմում չկատարեցի ոչ ոքի, վասնզի միակ փրկությունս ուշադրութենե վրիպելու մեջ կը գտնեի։

Բայց երբ Վարդավառի օրը մեր 56 ընկերները դեպի Զոր ճամփա դրինք, հազիվ մեզմե ոմանք սթափեցան և զգացին վե-

բահաս աղետ մը և կարելին ուզեցին ընել՝ ազատելու համար իրենց ինկած թակարդեն։

Բայց դարձյալ մեզմե ոչ ոք ի վիճակի էր կշռելու վտանգին մեծությունը և գահավեժ խորությունը։ Ապաքեն, արժանի է պատմության կտակել նաև մեր տարաբախտ աքսորական ընկերներեն նահատակ դաշնակցական Հայկ Թիրեաքյանի (Հրաչի) ազնիվ և դյուցազնական առած քայլը։ Հրաչ տեսնելով, որ իրեն անվանակից վաթսունամյա ծերունի հայ նպարավաճառ մը Այաշ աքսորած են թյուրիմացությամբ, դիմեց Պոլիս ոստիկանական տնօրենության, և բացատրելով եղած թյուրիմացությունը, պահանջեց, որ թշվառ անմեղ ծերունին ազատ արձակելով զինք Այաշ փոխադրեն Զանկըրիեն, ուր բերած էին ուղեկից ընելով մեզի սխալմամբ։

Երբ աս դիմումը կ'ըներ Հրաչ, արդեն արյան փոթորիկը ծագած էր, և Հրաչ և մենք ամենքս շատ լավ գիտեինք, թե ինք իբր դաշնակցական գործիչ իր մահը կը փնտրե։ Բայց նա աներկյուղ արավ աս դյուցազնական քայլը, չուզելով, որ անմեղ մը զոհվի իր տեղ։

Աղետաբեր հրամանը եկավ և Հրաչ փոխադրվեցավ Այաշ, և նահատակվեցավ կարճ ժամանակ վերջ իր տարաբախտ ընկերներուն հետ էնկուրիի ահավոր սպանդին միջոցին։

Հայ մայրեր եթե այսպիսի անձնազոհ զավակներ կը ծնին, արդարև անհնար է բնաջնջել այսքան ազնիվ ու ազնվական ցեղ մը. թող օրհնյալ ըլլա և Հրաչի հիշատակը հավիտյան։

Մինչդեռ մեր աքսորական ընկերները սկզբի օրերուն չկարենալով թափանցել այն մեծ եղեռնական դավադրության, որուն մեջ կը գտնվեին, իրենք զիրենք տված էին մեծ մասամբ անտարբերության։ Անդին Պոլսեն մեզ ընկերացող սելանիկցի ոստիկանապետը և ոստիկանները օրն ի բուն մտնելով մեր աքսորական ընկերներու շարքերուն մեջ, գետափի՝ աքսորականներու հատուկ ճաշարանը կը ճաշեին և «նարտ» կը խաղային, միանգամայն գաղտնի ուսումնասիրություններ ընելով յուրաքանչյուր աքսորականի մասին և տեղեկագրելով «ԿԱՐԵՎՈՐԸ» ի Պոլիս...

Աս գաղտնի տեղեկագիրներուն վրա էր, որ Պոլսոյ մեջ ոև ցանկերն կը պատրաստվեին և կը հղեին Զանկըրի, և մեր շարքերն սակավ կ'անոսրանային Տեր Զորի ճամփան բռնող մեր հեք ընկերներուն հեռացմամբը։



Հետզհետե գտնվեցան մեր աքսորական ընկերներեն նաև բախտավորներ, որոնք շնորհիվ մեծագումար կաշառքի և կամ հույժ զորավոր ազդեցություններու, հաջողեցան դառնալ Պոլիս և ազատիլ արյան ահավոր բաղնիքեն։

## 11.

## ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱՋՆՋՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Համաձայն Իթթիհատ-Թերազգը, այսինքն Միության և Առաջադիմության, թուրք ազգայնական կոմիտեի 1915-ի ընդհանուր համաժողովի որոշման, հայ ժողովուրդը մահվան դատապարտված էր գաղտնի հետևյալ եղեռնական ծրագրով։

Ա. Նախ՝ զինվորական հարկեցուցիչ նորելուկ օրենքներու պատրվակով, բացարձակապես արգիլյալ էր Փոքր Ասիո հայերու ճամփորդության ամեն իրավունք։ Նույնիսկ ամենամոտակա քաղաքներե և գյուղերե դրացի ո՛րևէ քաղաք և գյուղ երթալ անպայման արգիլյալ էր։ Թուրք իթթիհատական կառավարության հայոց պարտադրած ընդհանուր կարգախոսը սա էր՝ թե ՈՎ ՈՐ ՀԱՅ է, ԿԵՑԱԾ ՏԵՂԸ ՄՆԱ...

Բ. Յուրաքանչյուր հայաբնակ քաղաքներու ազգային գործոն ազդակներն, եկեղեցական թե աշխարհական, կուսակցական թե անկուսակցական, ազատական թե պահպանողական, կը բավե, որ ժողովրդյան վրա ազդեցություն ունենան, ձերբակալել ու բանտարկելով չեզոքացնել արտաքին աշխարհեն, որպեսզի չկարենան ժողովուրդը կառավարության դեմ ըմբոստացնել։ Ինչպես և ըրին Պոլսո մեջ։

Գ. Ընդհանուր կերպով զինաթափ ընել հայ ժողովուրդը՝ մինչև խոհանոցի մեծ դանակները, և այսպեսով անհնար դարձնել ապստամբական ո՛րևէ հավանական շարժում։

Դ. Ամբողջ Փոքր Ասիո հայությունը տեղահան կամ աքսորի անվան տակ դեպի Տեր Զորի ճամփա հանել հանդերձ ընտանյոք, և անխնա կոտորել օրորոցի անմեղ մանուկեն մինչև իննսունամյա ծերունին, և կամ անոթի ու ծարավ բնաջնջել Տեր Զորի անապատներուն մեջ, եթե հայկական խնդրո առարկա վեց նահանգներեն (Կարին, Վան, Բաղեշ, Խարբերդ, Սեբաստիա և Տիգրանակերտ) դուրս ուրիշ գավառներե են։

Ե. Թույլատրել գեղեցիկ հայ հարսներու և կույսերու Թուրք Հարեմները տանիլը։

Զ. Մերժել իսլամության ո՛րևէ առաջարկ, նկատելով, որ 1895—1896-ի դեպքերը ցույց տվին, թե չի կրնար անկեղծ ըլլալ Հայերու հավատափոխությունը...

Է. Ազգային և անհատական շարժուն և անշարժ հայ ժողովրդի ամբողջ հարստությունը և տեղական դրամատուններու մեջ ավանդ գտնված դրամներն ու ոսկի և արծաթ զարդեղենները արքունիս գրավել, իբր Թողյալ անտեր գույք, մասնավորապես կազմված «էնվալը մաթրուքե» կոչված հատուկ հանձնաժողովներու միջոցավ։

Ը. Առանց սեռի և հասակի խտրության՝ ի սպանդ տարվող Հայ ժողովրդի մասնավոր սև ցանկերը պիտի պատրաստեին գավառական ոստիկանական իշխանությունները և մեկ պատճենը ևս պիտի ղրկեին Պոլիս ներքին գործոց նախարարության, որպեսզի ներքին գործոց նախարարությունը, այսինքն Թալեաթ և Իթթիհատի կոմիտեն օրն օրին գիտնար, թե ո՛րքան հայ սպանվեցավ և որչափը դեռ մնաց...։ Այս սև ցանկերուն մեկ օրինակը պիտի հաղորդվեր նաև պատերազմական նախարարության, որպեսզի սա ևս իր կարգին հակակշիռ ի գործ դներ և օրն օրին գիտնար՝ թե պատերազմի ամեն ճակատներուն վրա սպանվող իսլամ զինվորներուն բաղդատմամբ ո՛րքան համեմատական է իսլամ և հայ ժողովրդի մահերու ընդհանուր թիվը։

Ժողովուրդ մը ամբողջ բնաջնջող ասս հրեշային ծրագիրը գործադրել կարենալու համար՝ հետևյալ եղեռնապարտ միջոցներն ընտրվեցան։

1. Փոքր Ասիո բոլոր քաղաքներու բանտերու մեջ գտնվող մահապարտներն, թիապարտները և բոլոր ոճրագործներն ներման արժանացնելով անոնցմե կազմված հրոսակային (չեթայական խումբերով անխնա կողոպտել ու ջարդել հայերը, և ասով օսմ. բանակի թիկունքը իբր թե պաշտպանել...

2. Կենտրոնի հայաջինջ հրամանները չգործադրող բոլոր կուսակալները[1], կառավարիչները և տեղակալները անմիջապես պաշտոնանկ ընելով՝ ասոնց տեղ կամակատար հլու անձեր պաշտոնի կոչել...

1 Վալի, մութասարրֆ, գայմագամ։



3. Իթթիհատի ընդհ. ժողովի այս որոշումներու գործադրության անթերի հսկողությունը հանձնել Փոքր Ասիո բոլոր Իթթիհատի կոմիտեի գավառական մասնաճյուղերուն։ Միանգամայն լիազորություն տալ ի հարկին ավելի խստությամբ գործելու, եթե հանգամանքներն ստիպողական են և թույլատու։

Աքսորի մեր ընկերներեն մեկը (որ այժմ ողջ է) օր մը այցելելով Զանկրրիի Իթթիհատի կոմիտեի պատասխանատու քարտուղարին Յոնուզի պաշտոնասենյակը, տեսակցած միջոցին, այս վերջինը վայրկյան մը դուրս կ'ելլե։ Մինչև դարձը՝ մեր աքսորական ընկերը բնազդաբար կը մղվի կարդալ պաշտոնաթուղթ մը, որ սեղանին վրա ձգված էր, և որ հետևյալ իմաստը ուներ բառացի կերպով։

«ՊԻԼԱ ԹԷՐԷՏՏԻՒՏ ՎԷ ՄԷՐՀԱՄԷԹ, ՊԻՐ ԱՅԼԸԳՏԱՆ ՏՕԳՍԷՆ ԵԱՇԸՆԱ ԳԱՏԱՐ ԻԹԼԱՃԸ, ՇԷՀԻՐ ՏԷՐՈՒՆԻՆՏԷ, ԷՀԱԼԻ ՀՈՒԶՈՒՐԸՆՏԱ ՕԼՄԱՄԱՍԸՆԱ ՏԸԳԴԱԹ»։

Թարգմանությունը. «ԱՌԱՆՑ ԽՆԱՅԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՑ ՈՂՈՐՄԵԼՈՒ, ՄԵԿ ԱՄՍԱԿԱՆԻՆ ՄԻՆՉԵՎ ԻՆՆՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆԸ ՍՊԱՆԵԼ, ԲԱՅՑ ՈՒՇԱԴՈՒՐ ԸԼԼԱԼՈՎ, ՈՐ ԱՍ ՍՊԱՆԴԸ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԵՋ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՉԸԼԼԱ»։

Որպեսզի մարդկային պատմության մեջ աննախընթաց, Իթթիհատ կոմիտեի ասս եղեռնական ահավոր ծրագիրը «օրինական» եղանակ մը ստանա, Իթթիհատական նախարարությունը օսմ. խորհրդարանին ներկայացուց Հայերը տեղահան ընելու և անոնց շարժուն ու անշարժ հարստությունը արքունիս գրավելու օրինագիծ մը, որ ավելորդ է ըսել, մեկ ընթերցմամբ վավերացվելով օրենքի ուժ ստացավ և Սուլթան Բեշատեն հրամայվեցավ ի գործադրություն։

Այս երկար և մանրամասնյալ հոդվածներե կազմված հայաջինջ ծրագիրը լրագրաց մեջ պաշտոնապես հրատարակվելով, երբ Զանկրրը մեր ձեռքը հասավ հունիսի սկիզբը, ըսինք ամենքս ալ, թե ԱՅՍ ՀԱՅ ԱԶԳԻ ՏԱՊԱՆԱԳԻՐՆ Է...

Բեհաէդդին Շաքիրի, Թալեաթ և Դոկտ. Նազիմի հայաջինջ գաղտնի ծրագիրը հանկարծ երևան կ'ելլեր օսմանյան պառլամենտի մեջ օրինական ձև մը ստանալու ատեն։ Համաձայնական Պետություններու դեմ հրատարակված սուրբ պատերազմը կամ «ճիհատը» գործադրվեցավ միայն անզեն ու անպաշտպան հայ ժողովուրդի դեմ՝ ամենավայրագ եղանակներով։

Իսկ իթթիհատի երևակայած չորս հարյուր միլիոն իսլամներեն ոչ ոք ապստամբեցավ, ընդհակառակը Արաբիո թագավորը Հուսեին հակառակ «ֆեթվա» հանեց Անգլիո թելադրությամբը։

Թալեաթ՝ Բեհաէդդին Շաքիրի պատրաստած հայաջինջ ծրագիրը օսմ. պառլամենտեն վավերացնել տալե վերջ. Շեյխուլ-իսլամեն ալ «ֆեթվա» հանել տվավ հայերը իբր իսլամ կրոնին և հայրենիքին թշնամի հռչակել տալով։ Ապա Սուլթանն ևս հրամայեց գործադրություն հայերու բնաջնջման ծրագիրը։

Այս դժոխային ծրագրին գործադրությունը սկսած էր 1915 ապրիլի 11-ին տեղի ունեցած մեր մտավորականներու հավաքական ձերբակալությամբ և աքսորմամբ։ Որ հետզհետե ծավալեցավ Փոքր Ասիո բոլոր հայաբնակ քաղաքներն ու աննշան գյուղերն, բավ էր, որ մեկ քանի տուն հայ դտնվեր, ո՛րևէ տեղ։

Այս ամեն երևակայութենե հեռու վայրագ ծրագիրը դյուրավ գործադրել կարենալու համար, ներքին գործոց նախարար Թալեաթի կողմեն հետզհետե պաշտոնակ եղավ Գասթեմունիի, Էնկուրիի, Յոզկատի, Երզնկայի և այլ տեղահանության կամ ջարդերու ընդդիմացող բոլոր կուսակալներն, կառավարիչներն և տեղակալները։ Իսկ ասոնց տեղ անմիջապես պաշտոնի կոչվեցան երիտասարդ և կատաղի հայատյաց իթթիհատական պաշտոնյաներ բոլոր գավառներու մեջ։

Բարձրեն հրահանգված անօրինակ գաղտնապահության մը շնորհիվ, բոլորովին անտեղյակ էինք մեր շուրջի այս հայաջինջ ամեն եղեռնագործությանց։

Այն ատեն միայն փոքր-ինչ կրցանք թափանցել ազգ մը բնաջնջող այս ահավոր ծրագրին, երբ Ջանկըրիի մութասարրֆ նշանակվեցավ Ասաֆ, որ 1909-ի Ադանայի հայկական մեծ ջարդերու ատեն Օսմանիյեի կառավարիչ ըլլալով, հայոց դեմ ծանր խժդժություններ ընելուն համար ամբաստանված և հազիվ կախաղանեն կրցած էր ազատիլ։

Ասաֆ աշակերտած ըլլալով օսմ. համալսարանին մեջ դասախոսող և Սապահ լրագրի խմբագրապետ Տիրան Քելեկյանի, մեծ հարգանք ցույց կու տար իր ուսուցչին հանդեպ, և Քելեկյան ասկե քաջալերյալ մերթ ընդ մերթ կ'երթար Ասաֆը տեսնելու։

Հայ Ռամկավար կուսակցության պետը Քելեկյան, օր մը հրավիրեց զիս ևս, որ միասին այցելենք Մութասարրֆ Ասաֆին, — տեսնենք այս մեր ինկած թակարդեն ազատելու հնամար ի՞նչ խելք կը սորվեցնե՝ ըսելով։



Առարկեցի, թե որքան պաշտոնական մարդոց աչքին վերվանք, այնքան խոհեմություն է, ուստի չուզեցի այցելել Ասաֆին։ Բայց Քելեկյան պնդեց, հավաստելով, թե Ասաֆ իրեն աշակերտած ըլլալով, հույժ բարյացակամ է իրեն հանդեպ, և երկու շաբաթեն ավելի է, որ մոտը գնացած չըլլալով լավ է, որ անգամ մը իրեն հետ խորհրդակցելու երթանք։ Զիս քաջալերելու համար հիշեց, թե Ասաֆ իր ձեռքը կը համբուրե, իբր իր երախտավոր աշակերտը։ Գրեթե ակամա՝ ողբացյալ Քելեկյանի հետ այցելության գնացինք Ասաֆին՝ իր պաշտոնատունը։ Ստուգիվ մեծ հարգանոք ընդունեց մեզ, իբր թե աքսորականներ չըլլայինք, և իր դեմը պատվո երկու թիկնաթոռներու վրա նստեցնելով թրքական սուրճ ապսպրեց մեզի համար, որ այն ատեն ամենաբարձր հյուրերու միայն կը հրամցվեր. վասնզի պատերազմի պատճառով առ ի խնայողություն այլևս վերջ տրված էր թուրք պետական պաշտոնատանց մեջ ավանդական սուրճի մեծարանքին։

Քելեկյան հարցուց Ասաֆին, թե Պոլիս դառնալու համար ի՞նչ նոր միջոցներ կ'առաջարկե, քանի որ ցարդ ձեռք առնված միջոցներն փրկություն մը չէին ապահոված իրեն։ Ասաֆ պատասխանեց. Քելեկյան էֆենտի, ինչ կ'ընեք ըրեք, շուտով դուք ձեզ Պոլիս նետեցեք, հետո ուշ կը մնաք...։— Բնականաբար հարցուցինք մտահոգ, թե ինչո՞ւ հետո ուշ մնացած պիտի ըլլայինք, ի՞նչ կար որ... Զի ոչ մեկ բանե լուր ունեինք, հազիվ բնազդաբար կասկածներ ունեինք, թե գաղտնի բաներ մը կը դառնային մեր շուրջը...

Ասաֆ պատասխանեց. Հայերու հանդեպ կառավարական քաղաքականությունը ազեկ չեմ տեսներ, դարձյալ բաներ մը պիտի պատահին, նայեցեք, որ ժամ առաջ դուք ձեզ Պոլիս նետեք, նոր փոթորիկներու նշաններ կը տեսնեմ...

Բնական հետաքրքրությենե շարժյալ Քելեկյան կարի հուզված սկսավ պատճառը հարցնել Ասաֆի հայտնած ծանր մտահոգությանց։ Թեպետ նախ չուզեց մանրամասնությանց մտնել՝ խուսափողական պատասխաններ տալով և ըսելով, թե իմ քիչես շատ հասկցեք, դուք մտավորական մարդիկ եք, անշուշտ կը հասկնաք ի՛նչ ըսել կ'ուզեմ։— Բայց մենք իրոք չէինք կրցած բան մը հասկնալ. միայն կռահած էինք, թե մեզ

անպաստ բաներ մը պիտի պատահեին։ Հետո թախանձագին պնդումներու ըսավ Ասաֆ. դուք հոգևորական եք և արդեն ձեր պարտականությունն է խոստովանանք պահել (այս բառը հայերեն արտասանեց), իսկ Քելեկյան էֆենտի, դուք ալ իմ ուսուցիչս եք. կը սիրեմ Ձեզ, աս հեռագիրը առեք ու կարդացեք շուտ մը։— Այս ըսելով իր պաշտոնական գրասեղանին մեկ գզրոցեն պաշտոնական թուղթի վրա «շիֆռե» հեռագիր մը հանեց, որուն թարգմանությունը անջատ թղթի մը վրա գրված էր և հետևյալ իմաստը ուներ.— ուղղակի հեռագրեցեք մեզ իսկույն, ո՛րչափ հայ արդեն մեռած է և ո՛րչափ դեռ ողջ մնացած կա. Թալեաթ։

Անկարելի եղավ իսկույն թափանցել այս հեռագրի գաղտնի իմաստին. և Քելեկյան հարցուց, թե, ի՞նչ ըսել է աս. չեմ հասկնար—Ասաֆ օձի քմծիծաղով մ'ըսավ.— Ա՛յնքան խելացի մարդ եք և չե՞ք հասկնար։ Պատասխանեցի,— զմեզ այնպես վիճակի մը մեջ դրին, որ ոչ խելք մնաց վրանիս և ոչ ալ բարոյական կորով։— Ասաֆ ըսավ.— Աս պարզապես ըսել է, թե ո՞րքանը ցարդ ջարդեցիք և ո՞րքանը դեռ ողջ մնացած է, զի հոս ո՛չ երկրաշարժ եղավ, ո՛չ հեղեղ եկավ և ոչ ալ բնության ո՛րևէ արհավիրք պատահեցավ, որ ժողովուրդը խմբովին մեռնի։

Ասոր վրա ողբացյալ Քելեկյան սկսավ լալ և ըսել, թե Ափսո՜ս որ դեռ զավակներուս ապագան չապահոված պիտի մեռնիմ։

Ասաֆ մեկ քանի մխիթարական և քաջալերական խոսքերե վերջ ավելցուց։

— Ես ալ տասնևհինգ օրեն պաշտոնես հրաժարելով պիտի մեկնիմ։ Պոլիս նստող և հրամայողները մեզի ամեն ինչ ընել տալե վերջ, երբ օր մը նեղը մնան և պատժի օրը գա, կը ձրեն կը փախչին և զմեզ՝ ստորադաս պաշտոնյաներս ոտքի ներքև կը թողուն։ Ես 1909-ին Օսմանիյեի կառավարիչ էի երբ Ադանայի հայերու կոտորածը պատահեցավ, քիչ մնաց ինձ կախաղանի պիտի դատապարտեին, հազիվ օձիքս ազատեցի։

Ես ադեկ չեմ տեսներ կացությունը և չեմ ուզեր աս անգամ ուրիշներուն ձեռքը գործիք ըլլալ, պիտի երթամ մեկ-երկու շաբաթեն Պոլիս, և պետական պաշտոնեությունը միանգամ ընդմիշտ թողլով իմ հին փաստաբանական արհեստս ի գործ պիտի դնեմ։

Ստուգիվ 15 օր վերջ Ասաֆ հրաժարական տալով ինքնաբերաբար մեկնեցավ Ջանկըրիեն Պոլիս, և 1918-ի վինադարեն վերջ ճիշտ, ինչպես մարգարեացած էր Ասաֆ, իթթիհատի եղեռնագործ գամարիլլան ձգեց փախավ արտասահման, իրենց ճակատագրին թողլով իրենց անլուր ոճրին գործակից մեծ ու փոքր բոլոր պաշտոնյաներն ու անձերը։

Կրնամ պնդել, որ դարձյալ չկրցանք իրապես թափանցել պետական այս եղեռնական գաղտնիքին. զի անկարելի էր երևակայել, որ 4000 տարվան պատմական ազգ մը կարելի էր բնաջնջել կոտորածներով։

Ազգերու պատմության ամենաարյունոտ շրջաններուն իսկ նախընթաց օրինակ մը չի հիշվիր։ Նույնիսկ թուրք աշխարհակալ սուլթաններ ո՛չ թե ազգ մը մեկ անգամեն բնաջնջելու ծրագիր չէին պատրաստած կամ գործադրած, այլ ո՛չ իսկ մտքերնեն անցուցած էին իրենց վեց հարյուր տարվան արյունոտ ո՛րևէ մեկ շրջանին մեջ իսկ։

Զի թալեաթական գամարիլլան խորապես համոզված էր, թե հակառակ ամեն հավանականության, համաշխարհային պատերազմի հաշվեհարդարության վաղորդայնին, եթե պատիժ միսկ տնօրինվեր, սպանված մեկ հայուն կամ մեկ միլիոն հայերուն պարտադրվելիք պատիժը մահվանե տարբեր բան մը չէր կրնար ըլլալ։

Իսկ եթե հակառակ գերմաններու պես իրենց ևս անպայման հաղթական ըլլալու հավակնոտ հույսերուն, կորսնցընեին պատերազմը, Թալեաթ և ընկերություն, արդեն նախօրոք ամեն պատրաստություն տեսած էին Գերմանիա փախչելու։

Փույթ չէր, թե մեկ քանի հայտնի թուրք ջարդարարներ կախաղան բարձրանային, մի՞թե չէր արժեր թշնամի ազգ մը բնաջնջել մեկ քանի թուրքի գլխուն արժեքովը։

## 12.

## ԷՆԿՈՒՐԻԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ ՍՊԱՆԴԸ

Ինչպես ամեն կողմ, նույնպես և Իթթիհատի Պոլսո կենտրոնեն և ներքին գործոց նախարար Թալեաթեն, հրաման եկավ Էնկուրի հայերը քաղաքեն քարավան-քարավան դուրս հանելով անխնա կոտորելու։

եղողներուն ողբն ու կոծն լսելի չըլլա, քաղաքին նշանավոր Թաշ խանի շրջակայքը նվագածու զինվորներ փողահարություն և թմբկահարություն կ'ընեն։

Փոշեթաթախ այս մահվան քարավանը, քաղաքեն 7 ժամ հեռու, երբ Պըքնամ գյուղին շրջակայքը՝ Քուլրուքճը օղլու ըսված անտառը կը հասնի, հոս կը դիմավորվին թուրք չեթաներու կողմե, ամենքն ալ զինված մահու հին ու նոր ամեն տեսակ գործիքներով։

Դեռ սպանդը չսկսած, ծանոթ փաստաբան Արմենակ Հրոսախմբի պետեն կը խնդրե, որ իբր մահապարտի վերջին սրբազան իրավունք թույլ տան երկու խոսք ըսելու։ Թույլտվություն ստանալե վերջ, անօրինակ սառնասրտությամբ և ոճրագործներուն իսկ զարմանք առթող, հանդեպ մահվան ցույց տրված ասպետական արհամարհանքով մը կ'ըսե—Ալ գաղտնիք չմնաց, թե մեզ հոս բերած եք սպանելու համար։ Կը հարցնեմ ձեզի, թե գիտե՞ք թե ինչո՛ւ համար մեզ պիտի սպանեք։— Հրոսապետը կը պատասխանե, թե չեն գիտեր ինչո՞ւ համար ըլլալը—Գիտցած եղեք թե, մեզ սպանելու հրամանը ձեզի տվող բարձրաստիճան պաշտոնատարներն և իթթիհատի կոմիտեն՝ իրենց միայն անձնական շահը ապահովելու համար կ'արատավորեն ձեր պատմությունը և կորուստի կը մատնեն հայրենիքը։ Գուրանը կը հրամայե, որ ոչ-իսլամներուն հետ սիրով վարվիք եղբոր պես, բայց մեզ սպանելու ձեզի հրաման տվողները Գուրանը իսկ չեն կարդացած և չեն ալ ուզեր կարդալ։ Մեզ սպանելու հրաման տվողները և մեզ սպանողներն պիտի կրեն մեր անմեղ արյան արժանավոր պատիժը, և նույն տեսակ մահով և ճիշտ աստեղ պիտի քավեն իրենց ոճիրը։ Մենք ձեզի դիմադրելու ամեն միջոցե զուրկ ըլլալով ըրեք ինչ որ կ'ուզեք...

Հազիվ մարգարեական այս խոսքերը լրացած, հարյուրավոր չեթաներ ամեն կողմե հարձակելով կը սկսին կացիններով, սակրերով ոմանց թևերը, ոմանց ոտքերը, ոմանց վզերը կտրել կես կամ ամբողջ, և նահատակներուն գլուխները քարերով կը ճմլեն։ Ապա կես ողջ, մեռյալ կամ հոգեվարք, նախապես պատրաստված հորերու մեջ կը նետեն և կրով կը ծածկեն։ Իսկ անոնք, որ կիրեն կամ հողեն մասամբ դուրս մնալով իրենց աղիկտուր հոգեվարքի հանդյուններովն երկնից կամարներն կը թնդացնեին, անոնց վրա ալ հող լեցնելով ողջ-ողջ կը թաղեն։

Երբ առաջին քարավանին այս սպանդը կը լրանա, կարգը



կու գա երկրորդ քարավանին, որ ավելի քան 320 հոգիե բաղկացած էր։ Ասոնք ալ դարձյալ նույն սրտաճմլիկ հանգամանքներու ներքև՝ քաղաքեն վեց ժամ հեռու գտնվող Քայաշի պարտեզը փոխադրվելով, նույն անգութ ձևով կը ջարդվին։ Իսկ նահատակներու աս հոշոտված մարմինները 15 օր անթաղ մնալե վերջ, թուրք սպաներու կողմե գործավոր հայ զինվորներու կը հրամայվի թաղել զանոնք՝ իրենց իսկ անմիջական հսկողությամբ։ Հայ նահատակներու զգեստներն, կոշիկներն և զանազան առարկաներն այս ահավոր սպանդը գործադրող չեթաները հագնելով քաղաք կու գան. և ամենուրեք յուրաքանչյուրը կը պարծի, թե քանի հայ սպանած է և որպեսզի անլուր չարչարանքներով ողջ ողջ անդամահատած ու անշունչ մարմիններն իսկ խոշտանգած են անագորույն կերպերով։

Ի դեպ է հոս հիշել, թե Փոքր Ասիո մեջ հայ կաթոլիկության պաշտոն. սկզբնավորութենեն ի վեր աս վերջին 100 տարվան միջոցին էնկուրի կենտրոն մը եղած էր հռոմեական հայերու, որոնք հեռու մնացած ըլլալով ազգայնական ամեն ոգիե և շարժումե միշտ ազատ մնացած էին, նույնիսկ հայահալած ամենաարյունոտ շրջաններուն իսկ։ Ավելի քան երկու հազար տուն հռոմեական հայություն մը կ'ապրեր, և շնորհիվ իրենց բռնած ոչազգայնական կամ անտարբեր դիրքին, կրցած էին մեծ հարստության տեր դառնալ և առաջադիմել։

Էնկուրիի քաղաքին և մոտիկ շրջակայքից ավելի քան 1000 տուն հայոց հաշիվը մաքրված ըլլալով, առաջին պատեհությամբ՝ նախքան կուսակալության ավելի հեռու շրջանակներու 50.000-ե ավելի հայերու հաշվեհարդարությունը սկսիլը, էնկուրիի փոխկուսակալ Աթրֆ և ոստիկանական տնօրեն Բեհաէդդին կ'ուզեն բնաջնջել նաև էնկուրիի հռոմեական հայերը, տիրանալ կարենալու համար ասոնց անբավ հարստության և մանավանդ գեղեցիկ հարսներուն ու կույս աղջիկներուն։

Ուստի ոստիկանական տնօրենը Պոլիս երթալով խնդիրը կը պարզե, ասոնց բնաջնջումը ևս օրակարգի առաջին հարց ընելով։ Թեպետ ներքին գործոց նախարար Թալեաթ տեղի տալով Ավստրո-Հունգարական դեսպանին ազդու և հաճախակի դիմումներուն, խոստացած էր կոտորել չտալ էնկուրիի հռոմեական հայերը, սակայն խոստումը չկատարելու թրքական ավանդական սովորությամբ՝ իթթիհատի կենտրոնական կոմի-

տեի հետ համախորհուրդ վերջապես էնկուրիի հռովմեական հայերու բնաջնջումին ևս թերանացի հրամանը կու տա։

Ռատիկ. տնօրեն Բեհէդդին, 1915 օգոստոս 13-ին Պոլսեն էնկուրի կը դառնա ջարդի հրամանը առած։ Հաջորդ օրը անմիջապես կը ձերբակալվին էնկուրիի հռովմեական հայոց բոլոր երեւելիները «Կուսակալը ձեզ կ'ուզե ըսելով»։ Քանի մը օր բանտին մեջ մնալե վերջ՝ իրենց ցեղակիցներու եղածին նման ամենքին թեները իրարու կապված, գերապայծառն ալ հետերնին առած բազմաթիվ ոստիկաններու հսկողությամբ այս եղկելիներու քարավանը ևս քաղաքեն գիշերով դուրս կը հանեն և կը բերեն Գարա-կեմիկ գյուղը։

Այս թշվառներուն տանջանք մը ավելի տալու դիվային ծրագրով կը պարտադրեն, որ զիրենք սպանելու հատկացած՝ մահահոտ գործիքներու կառքերը իրենք քաշեն... Երբ Գարա-կեմիկ գյուղը կը հասնին, ասոնք ալ իրենք զիրենք կը գտնեն բաշարված թուրք հարյուրավոր ավազակներե, որոնք աճապարած էին կառավարական հրավիրանոք գալ արյան խնջույքի...

Բայց հրաշուք իմն, հանկարծ էնկուրիեն սրընթաց հեծյալ սուրհանդակ կու գա Աթրֆեն, որով կը հրամայվեր վերեն եկած բարձր հրամանի մը վրա չսպանել ասոնք։

Հայ մահապարտներու այս քարավանին պաշտոնական պետը՝ Սեվգիաթի հրամանատարը հետևյալ ճառը կը խոսի ամենքը ի մի հավաքելե վերջ «Օսմ. պետությունը Ռուսիո, Անգլիո Ֆրանսայի և ուրիշ մեծ տերություններու դեմ պատերազմ հրատարակելով հաղթական ելավ, հետևապես չկարծեք թե օր մը մեզմե հաշիվ պիտի պահանջվի։ Ոչ ոք կրնա մեզմե պահանջել զձեզ, զի համրանքով չտվին, որ համրանքով ուզեն... Սակայն դուք հայերուն պես չպիտի սպանվիք։ Աներկյուղ եղեք ձեր կյանքին համար և ազգին ու պետության աղոթք ըրեք...»։ Հետևյալ օրը ավելի քան 120 հոգինոց աս քարավանը ճամփա կ'ելլե դեպի Կեսարիո ճամփով Տեր Զոր։

Ասոնցմե շաբաթ մը վերջ 200 հոգինոց հռովմեական հայոց երկրորդ քարավան մը ճամփա կը հանվի նույն ուղեգծով դեպի Կեսարիա և Տեր Զոր։ Ասոնցմե ոմանց հանդիպեցա Ամանոսի կողմերը, որ իր կարգին պիտի պատմեմ։

Հազիվ հռովմեական հայերու արուներու մեծ մասը քարավան-քարավան քաղաքեն լեռնային վտանգավոր ճամփաներե դեպի Տեր Զոր ճամփա հանված՝ կարգը կուգա կանանց։



Օգոստոս 14-ին կառավարության հրամանով թուրք մունետիկ մը կը հայտարարե, թե «Կաթոլիկները թող երկաթուղվո կայարան երթան, այսօր ցորեկին պիտի մեկնին»։ Հռովմեական ազգայինք ահով դողով կ'աճապարեն կայարան և անոնք, որ ինքնակամ չեն երթար, բռնի կը տարվին։

Էնկուրիի իթթիհատի կլուբի անդամներն կ'աճապարեն երկաթուղվո կայարան և մայրերե կը պահանջեն իրենց գեղեցիկ կույս աղջիկները։ Բայց կաթոլիկ հայ մայրերն և իրենց աղջիկներն կը հայտարարեն բացարձակապես, թե մահը նախամեծար կը համարին, քան անպատիվ այս դժոխային պայմաններու ներքև ապրիլը։ Կպա առաջարկ կ'ըլլա, որ իսլամ ըլլալով գոնե կյանքերնին ազատեն... Հազարավոր ժողովրդյան մեջեն հազիվ 10—14 կիներ և աղջիկներ այս ճամփով փրկվիլ ուզելով՝ մահվան քարավանեն անջատվելով կայարանեն քաղաք կը դառնան։ Մնացյալք հանձն կ'առնեն երթալ հոն, ուր կառավարությունը կը հրամայե։ Գիտնալով հանդերձ, թե անխուսափելի մահը կը սպասե իրենց, կ'ըսեն. «Ումում միլլեթ նե՛ օլույեօրսա, պիզտե պէրապէր օլուրուզ...»։

Այս խեղճ հազարավոր ժողովուրդը, 9/10-ը կիներե և աղջիկներե բաղկացած, երկու շաբաթե ավելի մնալ կը ստիպվին երկաթուղվո կայարանի արմտիքի մթերանոցներուն մեջ, մինչև որ մեկ մասը Գոնիա, մեկ մասը Էսկիշեհիր, մեկ մասը Էրեկլի կը ճամփվին թշվառ վիճակի մեջ, մեծ մասամբ կողոպտված իրենց ոսկի և արծաթ զարդերեն և իրենց տունները ամբողջ իրենց պարունակությամբ ավար ձգելով իթթիհատի տեղական կոմիտեին։

Իսկ սպանյալ հայերու ձգած հարյուրավոր անչափահաս որբերն Իսլամացնելով, երկար օրեր թլփատության մեծ հանդեսներ կը կատարվին և կառքերով քաղաքին մեջ կը շրջագայեցնեն իրենց վիճակին անգիտակից այս նորագիր իսլամներն, որոնք 5—12 տարեկան անչափահաս տղայք էին։

Էնկուրիի մոտակա Սթանոս գյուղին 350 հայերը առանց սեռի և հասակի խտրության սպանած ըլլալը պարծեցած է Գայալ գյուղի հոճա գարա Մեհմետ։

Այս ահավոր նախճիրեն վերջ կը սկսի «ալանն ու թալանը», և մի առ մի ամեն տեսակ ապրանքներով լեցուն խանութներն ու ամեն հարստությամբ ճոխ բոլոր հայերու տունները բանա-

լով, օրեր շարունակ կառավարական բարձր պաշտոնեից և իթթիհատի կլուբի անդամներուն տուները կը կրվին։

Այս ընդհանուր ավարառութենեն վերջ էր միայն, որ կազմվեցան Թողյալ գույքերու հանձնաժողովը, որ մնացորդ ավարն իր անդամներուն մեջ բաժնելու հետամուտ եղավ միայն։

Ամբողջ քաղաքին մեջ հազիվ մեկ քանի ծեր հին Թուրքեր գտնվեցան, որ չմասնակցեցան այս ավարառության, ըսելով խղճահարությամբ, թե «Լացողին ապրանքը գնողին երջանկություն չի բերեր...»[1]։

Էնկուրի ըլլալով Պոլսո մոտիկ և երկաթուղով Եվրոպայի միացած հույժ վաճառաշահ քաղաք մը Փոքր Ասիո մեջ, հայերու միլիոնավոր ոսկի արժեքով շարժուն ու անշարժ հարստությունը, այսպեսով անցավ կողոպտիչներու ձեռքը, և ասոնք եղան սպանդանոց առաջնորդված բոլոր հայերու «օրինական» ժառանգորդները։

Էնկուրցի Թուրքեր իրենց այս արյունոտ շահատակություններն պատմեցին համարձակ և ամեն մանրամասնությամբ իրենց ցեղակիցներուն ու կրոնակիցներուն. և արյան ճապաղիքին գուժկաններն, հակառակ կառավարական զգուշական և արգելիչ միջոցներուն, սկսան հասնիլ տակավ մինչև Ջանկիրը մեր ականջները Էս՝ մեզ մատնելով ահավոր սուգի։

Էնկուրիի արյան լափիզող կարմիր բոցերն տակավ ծավալեցան կուսակալության մինչև հեռավոր հայաբնակ քաղաքներն, ավաններն ու գյուղերն, և սպանդները առավել կամ նվազ անգթությամբ հետզհետե տեղի ունեցան Տենեք-Մատեն, Իսկիլիպ, Սունկուրլու և ավելի անագորույն խստությամբ Յոզկատ։

Այս քաղաքներու հայոց բոլոր այրերը նախ և առաջ, և ապա կիներն ու աղջիկներն հետիոտն և իրարու կապված, կացիններով զինված Թուրք խուժանին ուղեկցությամբ տարվեցան քաղաքներե մեկ քանի ժամ հեռու ձորեր, և հոն ոչխարներու պես մորթոտվեցան մինչև հղի կիներն ու ծծկեր անմեղ մանուկները։

Սունկուրլուցի հայ հազիվ տասներեքամյա աղջնակ մը անձամբ պատմեց ինծի 1915 օգոստոսի վերջերը հետևյալ սրտաճմլիկ ողբերգությունը, որուն ականատես եղած էր ինքը, և հրաշքով միայն ողջ մնացած։

Նույն թվականին օգոստոսի կեսին Էնկուրիի նման և ասկեկած հրամանին վրա, կը ձերբակալվին հայոց բոլոր այր մարդիկներն 12—80 տարեկանները և քաղաքեն դուրս հանվելով շարաշար կը սպանվին անլուր տանջանքներով։

Կարգը կու գա իգական սեռին. օգոստոս 20-ին 70-ե ավելի կառքերով քաղաքեն դուրս կը հանեն մնացյալ բոլոր հայ կիներն, աղջիկներն ու փոքր տղայքը և կը բերեն 1 ½ ժամ հեռու կամուրջի առջև գտնված ձոր մը։ Այս կառքերուն կը հետևի քաղաքեն Թուրք խաժամուժ ամբոխ մը զինված, և ճամփան անձնյուր ոք կը զատե իր սպանդի ոչխարը կամ գառը...

Երբ կամուրջին ներքև կու գան, ոստիկաններն ու ոստիկան զինվորներն, վայրագ խուժանին հետ միացած, կը հարձակին աս անտեր անպաշտպան խեղճ կիներուն, մայրերուն, հարսերուն կույսերուն և մանուկներուն վրա, և կը սկսին արյունոտուշտ նախճիրը։

Գարնան ծառերը ինչպես կը հոտեն հատոցով, արյունածարավ ամբոխը կացիններով, սակրերով, բահով ու բրիչով հարձակելով թշվառ կիներու և երախաներու 400-ե ավելի աս խումբին վրա՝ կը սկսին շարշարանոք կոտրտել և կտրտել ասոնց մարմիններուն դուրս մնացած բոլոր մասերը՝ քիթ, ականջ, ոտք, ձեռք, մատներ, ուսեր... Մանուկներու մայրերու աչքին առջև քարերու կը զարնեն «ալահ, ալահ» պոռալով...

Շրջակա ապառաժուտ բլուրներն ու խոր անձավներն արձագանք կու տան աս անբախտ հայ մայրերու, կույսերու և մանավանդ մանուկներու աղիողորմ ճիչերեն..., լեղապատառ երախաներու «մայրիկ մայրիկ, հասիր» աղաղակներեն։ Բայց անտարբեր անգութ խուժանը անողորմ կերպով կը շարունակե արյան աս խնջույքը, անկարեկիր իր շուրջը տեղի ունեցող և քարերն իսկ լեզվի հանող մարդկային մարմիններու հոշոտումներուն...

Վերջապես, 4—5 ժամվան աս նախճիրեն և կողոպուտեն վերջ, վրա կը հասնի գիշերը, որ իր սև պատանքով կու գա ծածկել վայրի գազաններու նախանձն իսկ շարժող աս արյան բաղնիքի արհավրալից տեսարանը։

Գիշերվան հետ հետզհետե քաղաք կը դառնան իրենց կապ ու կողոպուտով Թուրք խուժանը և ոստիկաններն ու ոստիկան զինվորները և ասոնց պակաս Թողածը կու գան լրացնել դիակներու սիրահար բորենիներն, գայլերն, շնագայլերն և այլ գիշատիչները։

1 Ազգայանքն մալը, ալանա խայիր կէթիրմէզ։

Գեռնատարած նահատակներու մարմիններն բոլորովին մերկ կամ կիսամերկ փոված ձորի գահավանդներուն վրա կը պատկերացնեն ահավոր տեսարան մը, որ մարդկային ոչ մեկ միտք պիտի զորեր իր երևակայությանը մեջ մարմնավորել։

Գիշերվան խավարին մեջ դեռ ընդհատ-ընդհատ կը լսվին մերթ ծանր վիրավորներու հառաչանքներն և հոգեվարքներու խուլ կամ խժալուր հոնդյուններն...

Կեսգիշերեն վերջ խտացող աղջամուղջին հետ կը սկսին իջնալ զովարար ցող մը և ահա նվազ վիրավոր ընդարմացած աս տարաբախտ փոքրիկ աղջիկը, կազդուրված գիշերվան զովարար եղյամով կը սթափի։ Կիսակենդան իր մոլար ակնարկներով կը սկսի փնտրել իր մայրն ու երկու քույրերն, որոնք իրարու քով ինկած էին ջարդուփշուր եղած ոսկորներով... Իզուր կը կանչե մեղմիվ յուրաքանչյուրը իր անունով, բայց բա՜ռ անոնք ամենքն ալ կը ննջեին հավիտենական քնով։

Թշվառ աղջիկը կը զարհուրի, մինչև ոսկորներն կը սկսի գողալ, ակամա կափկափելով իր ակռաները... Մինչև առավոտ չի համարձակիր շարժիլ կամ հեռանալ իր գտնված տեղեն, իբր թե անկենդան իր մոր և խոշտանգված երկու չափահաս իր քույրերուն արյունաթաթավ անշունչ մարմիններն չթողվին, ոչ հեղ փոքրիկը լքե և հեռանա իրենցմե։

Վերաբացվող արշալույսին հետ աս ահավոր նախճիրին մերձակա կամուրջեն մեկ քանի քուրդ հոտաղներ կ'անցնին. և հեռուն շարժուն դիակ մը տեսնելով բնական հետաքրքրութենե շարժյալ կը մոտենան հեգ աղջնակին ու գթալով կը տանին տուն և կը հանձնեն իրենց ծերունի հոր։ Սա ըլլալով «գըզլպաշ» (ասոնք ամենքն ալ թրքատյանց աղանդավորներ են և միշտ եղած են քրիստոնյաներու բարեկամ) փրկելու մտոք՝ աղջիկը կը բերե գաղտագողի կը հանձնե Ջանկըրի իր վաղեմի մեկ բարեկամին։

Այս կենդանի մարտիրոսուհին մեր գտնված քաղաքը ժամանելով էր, որ առաջին անգամ ըլլալով իրագեկ եղանք մեր շուրջը անձայն ու անշշուկ կատարվող սարսափելի սպանդին աներևակայելի չափին ու կշռին։ Այլևս անհնար եղավ մոտալուտ մահվան մղձավանջով տանջվող մեր հոգիները հանդարտեցնել, զի չէ՞ որ ամենքս ալ սպանդի առաջնորդվելու համար իր կարգին սպասող զենման ոչխարներ էինք...



Այս դեռ մեկն է հազարավոր դրվագներեն հայ ահավոր այն մարտիրոսագրության, որով աղարտվեցավ մարդկային պատմությունը, նսեմացավ քրիստոնեությունը և սնանկացավ քսաներորդ դարու եվրոպական համբավյալ քաղաքակրթությունը։

Մինչդեռ այս միջոցին 1915 հուլիս—օգոստոսին՝ ներքին գավառներու մեջ տիրող հայկական համատարած արյան նախճիրը գիշեր ու ցորեկ կը շարունակվեր, առանց անմեղ արյունին խանձի հոտն Պոլիս հասնելու, անդին Էնկուրիի հայոց կոտորածի գուժկանն, կենտրոնին մոտիկ ըլլալուն և շնորհիվ երկաթ. հայ անձնվեր պաշտոնյաներուն՝ շուտով Պոլիս հասավ և հուզեց մայրաքաղաքին եվրոպացի թե տեղացի քրիստոնյա բոլոր ժողովուրդները։ Մանավանդ պապական նվիրակը և անոր ազդեցությամբ Ավստրո-Հունգարական դեսպանատունը իրար անցան ու բողոք բարձին մետասաներորդ ժամուն...

Չկրցավ անտարբեր մնալ և գերման դեսպանատունն ևս, և գոնե երևույթներն փրկելու և ի հարկին ապագա պատասխանատվութենեն զերծ մնալու կանխահոգ հեռատեսությամբ՝ աճապարեց քննիչներ ղրկել Էնկուրի՝ ձևական քննության մը համար...

Սակայն կանխավ ներքին գործոց նախարար և հայոց մեծ դահճապետ Թալեաթ կանխեց գերման դեսպանատունն և ինք անձամբ եկավ մինչև Էնկուրի։

Ամբողջ կուսակալության ձորերուն մեջ անթաղ մնացած և երկոտանի ու չորքոտանի գազաններե հոշոտված նահատակ 42.000 հայերու մարմիններն հավաքել տալով ամփոփել հրամայեց հավաքական մեծ գերեզմաններու մեջ, կարծելով այսպես անհետացնել իր և ընկերներուն աննախընթաց եղեռնագործության անգաղտնապահ հետքերը...

Բայց արդարության արևն ի լույս բերավ զայն...

Գերման դեսպանատան քննիչն եկավ Էնկուրի, և թուրք բարձր պաշտոնյաներու հետ տեսակցելե, զանոնք հարցափորձելե և ձևական քննություն մը կատարելեն վերջ դարձավ Պոլիս և գերման չարասիրտ դեսպան Վանկընհայմին հայտնեց, թե «հայոց վրա տեղի ունեցած ջարդերու հետքն կրող որևիցե ապացույցներու չէր պատահած և թե եղած տարաձայնություններն չարակամ զրույցներու միայն հետևանք էին...»։

Իսկ ամեն կողմե գերման դեսպանատուն եղած կծու բո-

ղոքներուն և քննադատություններուն կը պատասխաներ գերման դեսպան Վանկընհայմ պաղարյամբ, թե ինք իրավունք չունի միջամտելու Թուրքիո ներքին գործերուն և բռնաբարելու այսու Թուրքիո վեհապետական իրավունքներն, թե եվրոպական պետություններեն ո՞րն էր ան, որ պիտի անտարբեր մնար նմանօրինակ ներքին ապստամբական շարժումներու հանդեպ, և ձեռք չպիտի առներ զսպողական միջոցներ...

Ըստ գերման դեսպանին, հայության բնաջնջումին համար ուրքված համատարած ահավոր այս կոտորածներն զսպողական միջոցներ էին... և ոչ թե մարդկային պատմության ամենաարյունոտ էջերն իսկ սեցնող անլուր եղեռնագործություններ...

## 13.

## ԱՅԱՇԻ ԱՔՍՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԵՂԵՐԱԿԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Մինչդեռ էնկուրիի ամբողջ կուսակալության գետերը ու վտակները հայ անմեղ արյամբ կը ներկվեին, իսկ ձորերը հայ նահատակներու անթաղ մարմիններով կը լեցվեին, ութը ժամ հեռու Այաշի մեջ—փոքր գայմագամանիստ գյուղաքաղաք մը—մեր աքսորական անբախտ ընկերներու վիճակը նվազ ողբերգական չէր։

Մեր 75-ի չափ ընկերները Այաշ փոխադրելե վերջ, արգելափակած էին քաղաքին հեռավոր մեկ ծայրը կառուցված «Սարը-Գըշլա» կոչված հին զորանոցի մը մեջ, որուն պատուհաններուն ապակիները ջարդուփշուր եղած ըլլալով հին տախտակներով լուսամուտներն փակված էին։

Մեկ ամսվան ընթացքի մեջ, ինչպես Ջանկըրիեն՝ նույնպես և ասկե 13 բախտավորներ կրցած էին հաջողիլ դառնալու Պոլիս՝ շնորհիվ հզոր միջամտություններու և առատաբաշխ կաշառքի։

Սարը-Գըշլայի մեր աքսորական ընկերներն ևս ջանք ու ճիգ չէին խնայեր փրկվելու համար իրենց ինկած թակարդեն։ Ամեն ոք կը սկսի հեռագրով և խնդրագրերով դիմել ներքին գործոց նախարարին և ազդեցիկ Թուրք բարեկամներու և հանուն օրմ. Սահմանադրության արդարություն պահանջել... Այս հեռագրերն ու խնդրագրերն խմբագրելու կարող օրենսգետ և լեզվագետ անձերե մասնավոր հանձնաժողով մը կը կազմեն և կ'ուղեն բանակցիլ կենտրոնի կառավարության հետ։

Ողբացյալ Հարություն Շահրիկյան մեծ մասամբ ինք կը խմբագրե այս հեռագրերն ու խնդրագրերն, և ապագա սերունդներու գնահատման արժանի դյուցազնական համարձակությամբ մը, բախտակից ու բանտակից կուսակցական իր ընկերներու հետ համախորհուրդ կը հեռագրե Թալեաթի, թե «Իրենց փնտրածներն կուսակցականներն էին, արդ ի՞նչ իրավունքով ոչ-կուսակցականներ բանտը կը պահվին անարդարորեն...»։

Բայց բոլոր աս դիմումներն կը մնան անշուշտ անպատասխան։

Հակառակ որ ասոնք ամենքն ալ հայազգի ականավոր և բեղմնավոր մտավորականներ էին, և հեղափոխական կյանքի մեջ երկարամյա փորձառությամբ հանրածանոթ վետերաններ, սակայն դժբախտաբար ո՛չ ոք ասոնցմե սպառնացող վերահաս վտանգին մեծությունը և վերլուծությունն ընելու ի վիճակի էր։

Տարին ծայրը դեռ նոր բացված՝ ահավոր այս ողբերգության անգիտակիցներեն մեկն ալ ողբացյալ (Խաչատուր Մալումյան) Ակնունին էր։ Որ չկարենալով ո՛րևէ մեկնություն տալ այս ընդհանուր ձերբակալություններուն և տիրող սարսափին, պարզապես ապշած էր։ Ակնունի անձնական հեռագիրներ կը հղեր ներքին գործոց նախարար Թալեաթին և դատ ու դատաստան և արդարություն կը պահանջեր...

Հաճախ Ակնունի իր շուրջը գտնվող ընկերներուն կ'ըսե եղեր, որ հետո վերապրողներ պատմեցին, թե «ինչո՞ւ արդյոք Թալեաթ պեյ չի հաճիր պատասխանել իմ անձնական հեռագրերուս։ Իթթիհատ-Իթիլաֆ Թուրք երկու կուսակցությանց, Բալկանյան պատերազմին՝ 1912—1913 Պոլսո մեջ ես էի, որ Թալեաթը տունս պահեցի և փրկեցի ամենաստույգ մահվանե, ինչո՞ւ կը մոռնա իմ իրեն ըրած բարիքս և գոնե ինծի չի պատասխաներ»։

Այս համոզմամբ օրեօր կը սպասեր Ակնունի իր փրկությանը և Պոլիս վերադարձին։

Արդարև Իթթիհատի կոմիտեի արյունկզակ ղեկավարները շատ լավ խաղացած էին իրենց դերը, և այնքան լավ հաջողած էին հայ հեղափոխական պետերու կույր վստահությունը շահիլ, որ ասոնք պարզապես մեծ առեղծվածի մը առջև գտան

զիրենք, չկարենալով ո՛րևէ մեկնություն տալ իրենց բանտարկության և աքսորին...

Իսկ այս աստիճան անվերապահ կույր վստահությունն ավա՜ղ մեկ միլիոն անմեղ ժողովրդի անվերագտանելի թանկագին կյանքերն արժեց...

Գաղափարի ազնիվ ընկերներ նկատած էին հասարակ ոճրագործներե ավելի արժեք չունեցող իթթիհատի թուրք պետերը։ Մինչ ասոնք իրենց հանդգնությամբ միայն երկրին ղեկը հաջողած էին ձեռք ձգել՝ ոչ թե հայրենիքի փրկությանը համար, այլ իրենց անձնական փառասիրության և ընչաքաղցության հագուրդ տալու համար։

Այլաշի աքսորականներ մեծ մասամբ նյութական կարոտությամբ կ'անցնեին իրենց կյանքի վերջին օրերը։

Ասոնցմե տարաբախտ Շահրիկյան տղու մը պես լացած է այն օրը, երբ Պոլսեն 5 ոսկի կը ստանա փոստով։ Հուզման շարժառիթը հարցնող իր ընկերներուն կ'ըսե. «Ես դրամը ինձի ղրկողը Պոլիս բնակած տանս լվացարար հույն թշվառ կինն է, ես ի՞նչ անձնվիրություն, ո՞ւրկե գտեր է այս գումարը, երբ ինք կարոտ էր օգնության։ Խեղճ կինը վիշտս մեղմացնել ուզած է»։

Որևիցե մեկ ազգի պարծանք եղող մեր այս բոլոր մտավորականները՝ իրենց կյանքին վերջին օրերը ո՛չ միայն կրեցին հոգեկան անպատմելի հուզումներ ու տառապանքներ, այլև ապրեցան ֆիզիկական ծայր աստիճան թշվառության մեջ։ Ասոնցմե շատեր իրենց ճերմակեղենները իրենք սկսան լվալ առ ի խնայողություն։ Այս անձնազոհ վետերանները շուտով լքվեցան իրենց բախտին, որ երկար տարիներ իրենց կյանքին գնով բարձր բռնած էին հեղափոխության կարմիր դրոշը հանուն փրկության բազմաչարչար հայրենիքի և արյունաքամ հայ ժողովրդի։

Ազգային պաշտոնական կենտրոնի եկեղեցական և աշխարհական մարդիկը հազիվ երևույթները փրկելու շափ կը հետաքրքրվեին հայ մտավորականներու այս անդրանիկ ճերբակալությամբ և զգուշավոր ընթացք բռնած էին առ ի խոհեմություն...

Ջանկըրի՝ աքսորականներուս հազիվ ղրկվեցավ պատրիարքարանե անբավարար հացագին մը մեկ քանի հարյուր ոսկիի շափ։ Երբ 150 հոգիի կեսեն ավելին նյութական օժանդակության կարոտ էին, որով մենք աքսորականներս ներքին փո-





Վանի հայոց հերոսական ինքնապաշտպանությունը 1915 թ. ապրիլին

Հերոս Շապին-Գարահիսարը՝ ծննդավայր զորվ. Անդրանիկի

ա) Գրիգոր Զոհրապ, բ) Վարդգես Սերենկուլյան, գ) Վռամյան, դ) Ե. Սրմաքեշխալյան, ե) Իշխան, զ) Գեղամ Վրդ




ա) Ակնունի, բ) Խաժակ, գ) Ռուբեն Զարդարյան, դ) Սարգիս Մինասյան, ե) Հարություն Ճանկիրյան, զ) դոկտ. Նազարեթ Տաղավարյան

ա) Համբարձում Բոյանչյան՝ Մուրատ, բ) Հարությունն Շահրիկյան, գ) Ատոմ Յարճանյան՝ Սիամանթո, դ) Հայկ Թիլարյան՝ Հրաչ, ե) Մ. Կուրճյան՝ Հրանտ, զ) Բարսեղ Շահբազ

ա) դոկտ. Կ. Փաշայան, բ) Տիգրան Չեոկուրյան, գ) Ժակ Սայապալյան, դ) Գ. Բարսեղյան, ե) Բարթող Զորյան, զ) Ներսես Փափազյան

ա) Հ. Գազանճյան, բ) Ս. Սվին, գ) Գարմեն, դ) Ա. Աշրգրաշյան, ե) Ա. Հարությունյան, զ) Հ. Գալֆայան




Ս. Բարսեղյան՝ Շամիլ, բ) Հ. Մ. Համբարձումյան, գ) Վ. Հյուսուսյան. դ) Վահագն Տաթևյան, ե) Մարզպետ, զ) Շավարշ Քրիսյան

ա) Տ. Հուսիկ, Քահ. Քաջունի, բ) Ռ. Չիլինկիրյան՝ Սևակ, գ) Դանիել Վարուժան, դ) Տիրան Քելեկյան, ե) Արիս Խորայելյան, զ) Թլկատինցի

Հայ ընտանեկան օջախ Սեբաստիո մեջ 1913-ին

Ալիս գետի (Գըզլըրմագ) կամուրջը Սեբաստիո և Եվդոկիո ճամփուն վրա, գերեզման բազմաթիվ աքսորական հայերու, ինչպես նաև սպանման վայրը Տիրան Քելեկյանի

Եվդոկացի որբուկ մը աքսորի ճամփուն վրա, հայրը և մայրը սպանված և ինքը միայնակ կքալե քարավանին հետ, ենթակա ամենքի քնամքին

Ամբողջապես հայաբնակ հերոս Հաճրնը 1914-ին, այժմ բոլորովին այրված և քանդված

Կիլիկիո համակ մարմարյա հայրապետական գահը Սիսի Մայրավանուց Նաթողիկեին մեջ, երկու հարյուր տարվան հնություն

Հալեպի մեջ կախաղան հանված հինգ անմեղ հայեր 1916-ին

Զարդարար ավազակ քուրդեր Մալաթիո շրջանակին մեջ՝ գերման զինվորականներէ լուսանկարված 1915-ին

Անապատի մեջ աքսորական հայ ընտանիքի մը ողբերգական վերջին օրերը 1915-ին գերման զինվորականներէ ձեռքբերված

Տ. Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաբյան

խառությամբ և հանգանակությամբ կը հոգայինք մեզմե դեպի մահ առաջնորդվող ողբացյալ ընկերներու ճամփու ծախքն ու հացագինն։

Վերջին անգամ մեզմե բաժնվող երիտասարդ 26 մտավորականներու և ոչ իսկ հացագին մը կրցանք տալ, թող կառքի փոխադրության ծախքերը։

Չէ՞ որ հավիտենական չքմեղացումի բրածո բանաձևը միշտ պատրաստ էր մեր պաշտոնական անձերու բերանը «Եղբայր ի՞նչ կրնանք ընել, բանակ չունինք, նավատորմ չունինք, խեղճ ազգ մըն ենք, մեր ձեռքեն ի՞նչ կուգա...։ Կարելին կ'ընենք միշտ, պետք եղած դիմումները միշտ կ'ըլլան, բայց մտիկ ընող չկա...»[1]։

Մեր թշվառ ընկերներուն Այաշի զորանոցը արգելափակումեն ամիս մը վերջ, հնչակյան կուսակցության ականավոր և անձնվեր պետը ողբացյալ Համբարձում Պոյաճյան (Մուրատ) շղթայակապ ոստիկանական խիստ հսկողությամբ կը փոխադրըվեր Կեսարիա, ուր զինվորական ատյանի վճռով մահվան կը դատապարտվեր։

Ո՛րչափ անձնվեր և քաջարի հին հեղափոխական գործիչ՝ նույնքան բարի և ազնիվ ընկեր մըն էր Մուրատ։ Կարելի չէր ճանչնալ զինքն և չսիրել ու չհամակրիլ իր անձին, նույնիսկ եթե իր ամեն գաղափարներուն համամիտ ալ չ'ուզեր ըլլալ մեկը։

Հակառակ օսմ. Սահմանադրությունեն վերջ կառավարության դեմ դավադրական ոչ մեկ արարքի մեջ գտնվելուն և պատերազմի միջոցին ևս վերապահ և սպասողական ընթացք մը բռնելուն, Կեսարիո պատերազմական ատյանը ամբաստանեց զինքն իբր ժողովուրդը ապստամբեցնող։ Բանաձև մը, որ հայությունը ընաջնջելու համար ստեղծված ընդհանուր կարգախոսն եղած էր այլևս։

Հայ ժողովրդի փրկության անձնազոհ այս առաքյալն ալ բարձրացավ մինչև բարձր կատարը հայ փշալից Գողգոթային, կախաղանի վրա քավելով գաղափարապաշտ իր բազմատանջ կյանքի փրկավետ հանցանքը։

Այաշի աքսորական ընկերներն ևս մեզ նման, հաճախ կրո-

1 Մեր նյութեն չշեղելու համար հոս զանց կ'ընենք տալ պատասխան ասվարկապարագի չքմեղացումին, վերապահելով զայն ի մոտս հրատարակելի մեր «Հիշատակներս» անուն գրքին, որ իրապես ժամանակակից հայ կյանքն է։

նական շարականներ և հայրենասիրական երգեր կ'երգեին ղեկավարությամբ ողբացյալ Մելքոն Կյուրճյանի (Հրանտ)։ Պահիկ մը ինքնախաբեությամբ փոխադրվելու համար հին բարի այն օրերուն, երբ դեռ ազատ էին և խանդավառած հայրենիքի վերկության ազատաշունչ գաղափարներով։

Սակայն Մուրատի հեռացմամբ ամենաանտարբերներն իսկ տակավ սկսած էին հոռետես դառնալ, երբ իրենցմե 6 ընկերներ ևս հեռացուցին դեպի անծանոթ ճակատագիր և ասով ա՛լ ավելի մտահոգ սկսան դառնալ մնացողները։

Մահաբույր սև օր մը դուրս կը հրավիրեին Այաշի զորանոցեն Ակնունին, Ռուբեն Զարդարյանը, Խաժակը, Մինասյանը, Դոկտ. Տաղավարյանը և Հարություն Ճանկուլյանը։ Ասոնցմե չորս առաջինը դաշնակցական ականավոր մտավորական գործիչներ էին. հինգերորդը՝ Տաղավարյան, նախկին հնչակյան և վերջերը ռամկավար եռանդուն հանրային գործիչ մը. իսկ վեցերորդը՝ Ճանկուլյան, հնչակյան կուսակցության հին պետերեն և 1891-ի Գումգաբուի անդրանիկ հեղափոխական գեպքին հերոսը։

Ասոնք՝ ոստիկանական ամենախիստ հսկողության ներքև և երկաթուղիով Գոնիայի ճամփով կը փոխադրվին դեպի Ադանա-Հալեպ, իբր թե Տիգրանակերտի պատերազմական ատյանի առջև դատվելու համար։

Վեց աքսորական ողբացյալ այս ընկերները, թեպետ Ադանա ժամանելնուն կ'ուզեն հարաբերության մտնել տեղացի ազգային պաշտոնական անձերու հետ, որոնց տարագրությունը դեռ սկսած չէր, սակայն հնար չ'ըլլար։ Ընդհակառակը, տեղական կառավարությունը լսելով, որ Զոհրապ և Վարդգես ալ այս օրերուն Ադանա կը բերվին, իրարու չհանդիպեցնելու համար կ'աճապարեն օր առաջ ճամփա հանել դեպի Հալեպ։

Սակայն որովհետև 1915 հուլիսին Ամանոս լեռան Այրանի փապուղիները դեռ բացված չէին, և երկաթուղին մինչև Օսմանիյե կը հասներ, ուստի ոստիկանական կարգադրությամբ՝ կառքի պատրաստություն տեսնելու համար մեկ օր Օսմանիյեի բանտը կը մնան։ Իսկ Օսմանիյե այն ատեն Ադանայեն Հալեպ երկարող գծի վերջին կայարանն էր. ու ասկե անդին կառքով պետք էր անպատճառ ճամփորդել մինչև Իսլահիյե՝ անցնելով Հասան Պեյլիեն։ Օսմանիյե և Իսլահիյե Ամանոս լեռներու արևելյան և արևմտյան երկաթուղիի կայարաններն էին 1915-ի ամռան։

Այս օրերուն Օսմանիեի մեջ կը գտնվեր բնիկ սեբաստացի և դոկտ. Նազարեթ Տաղավարյանի ազգականներեն ծանոթ վաճառական մը, որ միանգամայն հանրածանոթ մեծ վաճառատան մը Ադանայի մասնաճյուղին տնօրենն էր, և որ վաղուց Ադանա հաստատված ըլլալով և Ադանայի կուսակալին հետ առևտրական մոտիկ հարաբերություններ ունենալուն, ան վերջինը խորհուրդ կու տա ըսելով, որ «Ան օրերուն Ադանայի մեջ աշխի չերևալու համար Օսմանիյե գնա...»։

Այս օրերուն, երբ դոկտ. Տաղավարյան և իր հինգ ընկերները Օսմանիյե կը հասնին ու բանտ կ'առաջնորդվին, ան վաճառականը կը փութա ոստիկան զինվորներու հրամանատարին մոտ, և օգտվելով այս վերջինուն հետ ևս ունեցած իր բարեկամութենեն, կը խնդրե, որ 6 բանտարկյալներն իրեն թույլատրե տուն տանիլ և հյուրասիրել։ Կը ստանա խնդրած թույլտվությունը, պայմանավոր աքսորականներու հետ տուն տաներ նաև ասոնց հսկող ոստիկանը։

Մինչ ոստիկանն վեց բանտարկյալներն տուն հանձնելե և ստորագրություն առնելե վերջ կը մեկնի շուկա անձնական գործով, վաճառականը կը խոստանա զիրենք փախցնել տալ և ազատել, կաշառելով ոստիկան զորքերու հարյուրապետը։

Բայց Ակնունի և իր ընկերները կը մերժեն, առարկելով, թե չեն ուզեր, որ իրենց պատճառով ուրիշներ վտանգվին, և երկրորդ՝ հույս կը հայտնեն, թե ԻՐԵՆՔ ՊԻՏԻ ԿՐՆԱՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏՅԱՆԻՆ ԱՌՋԵՎ ԱՐԴԱՐԱՆԱԼՈՎ ԱՆԳԱՐՏ ԱՐՁԱԿՎԻԼ...։ Ողբացյալները իրենց մահվան ճամփուն ինը տասներորդը անցած էին և դեռ լավատես էին...

Ան միջոցին ոստիկանը պարտասած դառնալով տուն, մասնավոր սենյակի մը մեջ կ'երթա կը ննջե։ Վաճառականը ծայրահեղ հանդգնությամբ ոստիկանին գրպանեն բանտարկյալներու պաշտոնագիրը զգուշությամբ վերցնելով իրազեկ կ'ըլլան սա ահավոր իրողության, թե վեց բանտարկյալները ի սպանդ[1] կը տարվին՝ Տիգրանակերտի պատերազմական ատյանը հանելու ՊԱՏՐՎԱԿՈՎ...

1 Վաճառականը, որ ինքի պատմեց անձամբ այս բոլոր մանրամասնությունները, սույն պաշտոնագրին պատճենն ալ ուներ, բայց 1918-ի փախուստներուս մեջ առ ի զգուշություն անհայտացուցի։

Բնականաբար չափազանց կը հուզվին ամենքն ալ։ Ոչ ոք այլևս կ'ուզե պատրաստված բազմախորտիկ ընթրիքը ուտել։ Ամենքն ալ կը թաղվին խոր սուգի մեջ, զի ա՛լ կը գտնվեին մահվան հնձող մանգաղին ներքո։ Ավելորդ էր բնականաբար այլևս փրկության հույս ունենալ։ Պոլսո կառավարությունը վեցը կ'ամբաստաներ իբր թուրք կայսրության ինչ ինչ հողերը անջատելով օտար թշնամիներու հանձնելու համար ապստամբություն քարոզող հեղափոխականներ...

Առաջին սարսափեցուցիչ ազդեցությունը փոքր-ինչ մեղմանալե վերջ, ողբացյալ Ակնունի հուսկ ուրեմն կ'արտահայտվի հետևյալ բառերով. «ՉԵՄ ՅԱՎՈՒՄ ՄԱՀՎԱՆԵՍ ՎՐԱ, ՉԻ ՄԻ ՕՐ ԱՆՊԱՅՄԱՆ ՊԻՏԻ ԳԱՐ ՄԱՀԸ ՄԵՋ ԳՏՆԵԼ, ԱՅԼ ՄԻԱՅՆ ՅԱՎՈՒՄ ԵՄ, ՈՐ ԷՍ ՍՐԻԿԱՆԵՐԻՑ ԽԱԲՎԵՑԱՆՔ...»։

Այս միջոցին ոստիկան զինվորներու հրամանատարեն եկած ստիպողական հրամանին վրա, կրկին կը փոխադրվին բանտ իրենց վերահսկող ոստիկանին հետ, որուն գրպանն նախապես կրկին փութացած էին սահեցնել մահաբույր պաշտոնագիրը։

Հաջորդ օրը կառքով և ոստիկան հեծյալ 4 զինվորներով ճամփա կը հանվին դեպի Հալեպ։ Հոս 2 օր բանտը մնալե վերջ, կրկին հեծյալ ոստիկան զինվորներու խիստ հսկողությամբ ճամփա կը հանվին Ուրֆայի վրայով իբր թե դեպի Տիգրանակերտ։

Ուրֆայի և Տիգրանակերտի ճամփուն վրա, Ուրֆայեն մեկ օրվան ճամփա հեռու, հանկարծ շրջապատվելով Տիգրանակերտի ոճրագործ կուսակալին դոկտ. Ռեշիտի ղրկած «չեթեներեն» տեղն ու տեղն կը սպանվին անպատմելի չարչարանքներով։ Այսպիսի եղերական հանգամանքներով վերջ կը տրվեր վեց հայ տաղանդավոր մտավորական և հանրային գործիչներուն բեղմնավոր կյանքին։ Տարիներ երկար երգեցին, երազեցին և գործեցին հայրենիքի փրկությանը համար, և բա՜ռ ազատության ճիշտ սեմին վրա, հեռացան գնա՜ցին անդարձ դեպի հավիտենականություն։

Սակայն ավա՜ղ, ավելի բախտավոր չկրցան ըլլալ Այաշ մնացողները ևս։

Էնկուրիի հայերու 1915 օգոստոսի կեսին կատարված ահավոր սպանդի միջոցին կուսակալի փոխանորդ Աթրֆի հրամանով Այաշի աքսորականներեն մաս մը ևս կը փոխադրվեին Այաշեն Էնկուրիի բանտը, և սև օր մը 1200 հոգինոց Էնկուրցի հայերու քարավանի մը հետ՝ քաղաքեն 4—5 ժամ հեռու ձորի մը մեջ չարչարալից մահվամբ կը սպանեն ամենքն ալ։

Իսկ Այաշի մնացյալ աքսորական մեր եղերաբախտ ընկերները ևս կը նահատակվին Այաշեն մեկ քանի ժամ հեռու «Գապլը Պելի» կոչված համբավավոր լեռան մեջ՝ հետևյալ պարագաներու տակ։

Էնկուրիի կուսակալի փոխանորդ արյունռուշտ Աթրֆի հրամանով Այաշի մնացյալ 27 աքսորականները կը հանձնվին կրետացի կոմիսեր Զեքիի։ Այս ոստիկան զինվորներու ընկերակցությամբ կը բերե հայրենիքի քավության տարաբախտ այս նոխազները հիշյալ «Գապլը Պել» կոչված տեղը և հրաման կու տա հանգստանալու։

Բայց հանկարծ կոմիսերը կրակի հրաման կու տա, սակայն տասնապետ այաշցի Ֆաշիլ օղլու Ռեֆիք կ'ըմբոստանա և կրակել չ'ուզեր անմեղներու վրա։ Այն ատեն կոմիսերը ձեռքի ատրճանակովը երկու անգամ անձամբ կրակ կ'ընե մեկ քանիին գլխուն ուղղյալ։ Ասոր վրա վաշտապետ Հասան և Խուրշիտ չավուշ կը սկսին գնդակ արձակել անպաշտպան մեր ընկերներուն վրա։ Բայց գնդակահարությամբ չկրնալով հագեցնել իրենց արյան ծարավը, սվինները հրացանին անցնելով կը հարձակին թշվառներուն վրա և կը սկսին հոշոտել ասոնց մարմինները։

Սակայն տարաբախտ մեր տասը դանքի ընկերներեն ոմանք, որոնց մարմինները անդամահատված կամ բզիկ-բզիկ եղած ըլլալով հանդերձ՝ դեռ չէին մեռած, աղիողորմ ձայնով կ'աղաչեն ոճրագործ ոստիկան զինվորներուն ըսելով «Աստուծո սիրույն գնդակով սպանեցեք որ ազատինք...»։

Այս ահավոր սպանդին կը մասնակցին՝ շրջականներեն արշալույսին հետ հոն հավաքված մոտակա թուրք գյուղացիները՝ իրենց հետ բերած կացիններով, սակրերով (սաթը), բրիչներով, քարերով և երկաթե ձողերով։

Խուրշիտ չավուշ ինք Էնկուրիի մեջ պարծանոք պատմած է այժմ վերապրող հայ բժշկի մը՝ այս բոլոր մանրամասնությունները, ավելացնելով, թե «երբ կոտորածը սկսանք, սպանվողներուն աղիողորմ ճիչերովը, վայնասուններովը ձորը և լեռը կը թնդար։ Ես դոկտ. Փաշայանին աչքերը նախ փորեցի, ապա վիզը կտրեցի և ահավասիկ անոր ոսկի շղթան ու ժամացույցը...»։ Դիվային ժպիտով մը այս ամենը պատմելե վերջ կը հայտնե Խուրշիտ, թե փառք կու տա Աստուծոյ, որ բախտ ունենալով ան-

ձամբ մասնակցելու «Ճիհատին», իրենց սուրբ մարգարեին «ճէնէթին», այսինքն արքայության արժանացած է...

Իսկ հրաշքով վերապրող ականատեսներ կը պատմեն, թե էնկուրիի շրջակա բոլոր թուրք գյուղացիները իրենց սպանած զոհերուն «ռետենկոթները», «պոնժուները», «փարտրսուները», «ժաքեթները», կոշիկները հագած էին, անժխտելի ապացույցը կրելով արյան ահավոր խնջույքի իրենց մասնակցության։

Խուրշիտ շավուշ հայ բժշկին կը պատմե նաև դիվային ներքին գոհունակությամբ մը, թե թուրք գյուղացիները անշունչ նահատակներու ծվեն-ծվեն եղած մարմիններն իսկ հրեշային զբոսանքի համար ժամերով կը խոշտանգեին, անդամահատելով անոնց անկենդան նշխարները։ Մինչև որ գիշերվան խավարը վրա հասնելով, դուրս կու գան իրենց թաքստոցեն այս անգամ ալ դիակեր բորենիներ և այլ վայրի գազաններ, իրենց կարգին՝ ամբողջացնելու համար մարդ-գազաններու պակաս թողածը արյան համատարած այս սարսափելի նախճիրեն։

## 14.

## ՉԱՆԿԸՐԻԻ ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Մինչդեռ համատարած արյան թաթառ մը ամբողջ Փոքր Ասիո շեն քաղաքներն ու գյուղերն ավերակներու կույտի մը կը վերածեր, և մահվան անողորմ մանգաղը՝ մեկ քանի ամսվան մեջ հարյուր հազարավոր անմեղ կյանքեր կը հնձեր, լեցնելով նահատակներու լեռնակուտակ մարմիններով Հայաստանի սարերն ու ձորերը, մենք Չանկըրիի աքսորականներս կ'ապրեինք մեր վերջին օրերուն մեջ և վերահաս մահվան մղձավանջը կը լլկեր մեր միտքն ու հոգին, օրեօր կամա թե ակամա սպասելով մահվան մեր կարգին...

Այս օրերուն Պոլսեն մեր ձեռքը հասած հայ լրագրերուն մեջ ապշելով կը կարդայինք Ազգ. Սահմանադրության 1915-ի մայիսյան տարեդարձի առթիվ Ազգ. հիվանդանոցի պարտեզին մեջ սարքված հանդեսներու, պարերու, խնջույքներու և բաժակաճառերու մասին... Այս թերթերը ամիսներ վերջ միայն պատահաբար մեր ձեռքը կը հասնեին։



Պոլսո մեջ կը շարունակվեին[1] պատրիարքին նախագահությամբ ըստ առաջնության դպրոցական ամսավերջի հանդեսները, օլիմպիական խաղերն, ֆուտբոլի մրցումներն, լողալու և հեծելանվի արշավներն, ամառնային շոգենավային ուխտավորություններն դեպի Պոլսո նշանավոր զբոսատեղիները։ Դեռ ոչ ոք Պոլսո մեջ լուր ուներ գավառներու մեջ մեռնող ժողովրդի մը հոգեվարքի ահավոր հոնդյուններեն...

Պատրիարքարանը մեկ քանի հարյուր ոսկի ղրկելով Պոլսեն աքսորված մտավորականներուն իբր հացագին, կը կարծեր իր պարտքը կատարած ըլլալ...

Մինչ մենք Չանկըրիեն Պոլիս դարձող մեր բախտավոր ընկերներուն միջոցով տեղեկագրեր կը հասցնեինք Պատրիարքին, հայության բնաջնջումի ահազանգը հնչեցնելով։ Այնուամենայնիվ ոչ ոք կ'ըմբռներ կացության ընդհանուր ծանրությունը, և կը մնային հանդիստասեսի պաղարյուն դիրքին մեջ միշտ, հեղեղելով իբր ծամոց իրենց բերնին մեջ պատրաստ գտնված բանաձևն «Ի՞նչ կրնանք ընել...»։

Մեր 56 ընկերներն Վարդավառի օրը Չանկըրիեն էնկուրի փոխադրելե վերջ ամենքն ալ բանտ առաջնորդված էին։ Ասոնցմե հինգ հոգին շնորհիվ ամերիկյան դեսպան Մորկընթաուի[2] անխոնջ և ազնիվ արտակարգ ջանքերուն, կրցած էին դառնալ Պոլիս. իսկ մնացյալք հասցեիս ուղղյալ հեռագրով նյութական օգնություն կը խնդրեին ինձմե։ Անմիջապես ներքին փոխառությամբ 60 ոսկի հանգանակելով էնկուրիի Իբրանոսյան վաճառատան միջոցավ կ'ուղարկեինք մեր եղերաբախտ ընկերներուն, գրեթե յուրաքանչյուրին մեկ ոսկի, որով պիտի հասնեին մինչև Տեր Զոր... Զի իրենց հեռագրին մեջ հիշված էր, թե 2 օր պայմանաժամ տրված է պատրաստվելով ճամփա ելլելու համար դեպի Զոր։

Դիտումնավոր կերպով այս արտոնությունը տված էին, որ որչափ հնար է առատ դրամով ճամփա ելլեն. ավարը ավելի հարուստ դարձնելու համար իրենց հաշվույն։

Սակայն փոխանակ Տեր-Զոր փոխադրելու մեկ ամիս բան-

1 Առ այս համոզվելու համար, բավ է անգամ մը աչքե անցնել 1915 մայիս, հունիս, հուլիս և օգոստոս ամիսներու Պոլսո հայ թերթերը։

2 Այս ջանքերուն մեջ ամենամեծ բաժինն ունեցած է ի նորո Նյու Յորքի մեջ վախճանյալ ողբացյալ Շամավոնյան, Ամերիկյան Պոլսո դեսպանատան իրավագետ խորհրդական թարգմանը։

ոը պահելե վերջ, օգոստոսի կեսին սկսած Էնկուրիի հայոց սպանդին հետ ասոնք ալ միացնելով բանտեն դեպի սպանդ առաջնորդվող քարավաններուն, շարշարելից մահվամբ կը նահատակվեին Էնկուրիի հայոց առաջին քարավանի հետ։

Զանկըրիեն հեռացող 56 հոգինոց առաջին քարավանեն ամիս մը վերջ էր, որ կը զուգադիպեր առաջին մեր քարավանին վերև հիշված նահատակությանը, երկրորդ քարավան մը ևս կը բաժնեին մեզմե 26 հոգինոց։

Մինչդեռ առաջին հեռացող քարավանին ժամանակ դեռ լավատես էինք և կը կարծինք, թե կրնան թերևս ողջ Տեր Զոր հասնիլ, սակայն երկրորդ քարավանին Զանկըրիեն մեկնած օրը՝ պարզապես մեր ողբացյալ ընկերներուն կ'ուղեկցեինք իբր հուղարկավորներ...

Ստիպված էինք զսպել մեր արցունքը, որ կ'այրեր մեր սրտերը ու աչքերը։ Գիտնալով հանդերձ, որ դեպի մահ կ'առաջնորդեինք մեր ընկերները, կը զգուշանայինք արտահայտելե մեր զգացումները, չշփոթելու համար հավետ ողբացյալ մեր ընկերները։

Ասոնց կ'ընկերանայինք մինչև կես ժամ քաղաքեն հեռու մեր նախապես բանտարկված զորանոցը, առանց իրարու հետ բառ մը փոխանակելու, զի հուզված էինք ամենքս ալ և փոխանակ իրար խաբելու... մեռելային լռությամբ կ'ուղեկցեինք դեպի գերեզման...։ Եվ ի՞նչ երիտասարդներ... ամենքն ալ 18—25 տարեկան քոլեջավարտ կամ Պոլսո համալսարանի զանազան ճյուղերեն ավարտած կամ ավարտելու մոտ մտավորական հայրենասեր կտրիճներ, մեկն մյուսեն ավելի ազնիվ, անձնվեր, ազգասեր, հուսալից և հայության ապագա փառքով խանդավառված... Այս մեր տառապանքի ծաղկահասակ կտրիճներն ճամփու կը դնեինք միայն 700 դահեկանով, որ մեկ օրվան ծախքերնին իսկ չէր...։ Զի դեռ չէինք կրցած վճարել նախապես կատարած 60 ոսկիի ներքին փոխառությունը։

Ասոնք ալ ուղեկցությամբ ոստիկաններու և ոստիկան զինվորներու կը հասնեին Էնկուրի և բանտ կ'առաջնորդվեին, ու մեկ քանի օր վերջ ասոնք ալ կը տարվեին ի սպանդ Էնկուրիի երկրորդ կամ երրորդ քարավաններուն հետ։

Միայն մեկ անձ՝ Արամ Անտոնյան, կ'ազատվեր հրաշքով ասոնցմե, ճամփան կառքեն իջնալով ոտքը կոտրելուն պատճառով՝ ուղղակի հիվանդանոց փոխադրվելուն շնորհիվ։



Այս երկրորդ սպանդ առաջնորդվող խումբին հետ Էնկուրի կ'երթային նաև 6 բախտավոր ընկերներ, որոնք հարուստ ճաճառականներ ըլլալով՝ մեծամեծ կաշառքներով հաջողած էին իրենց փրկությունը ձեռք բերել։ Բայց ասոնք ևս հակառակ ներքին գործոց նախարարության Պոլիս դարձնելու բացահայտ հրամանին, Աթքֆ ուղղակի երկաթուղիով ճամփա հանել տված էր դեպի Հալեպ։ Բարեբախտաբար արտակարգ նյութական և բարոյական զոհողությամբ՝ ասոնք Պոլսեն երկին հրաման բերել տալով հաջողած էին Տարսոնեն դառնալ Պոլիս, ճաշակելով աքսորի ճամփու ամեն դառնությունները։

Այս մեր 26 տարաբախտ ընկերներուն օգոստոսի սկիզբն հեռանալեն վերջ, նույն օրը իսկ Պոլսո մնացորդ աքսորականներս, հրավիրվելով կառավարական շենքը, մյութասարրֆը կ'ըսեր մեզ պաշտոնապես. «Ձեզ համար ներքին գործոց նախարարութենեն ներման հրաման եկած է, և դուք ևս Պոլսեն զատ ձեր ուզած տեղերը կրնաք երթալ. ուստի գնացեք և թագավորին համար աղոթեցեք...»։

Գլխիկոր և նկուն դուրս եկանք կառավարչին պաշտոնատունեն, և շվարած էինք, զի չէինք գիտեր, թե կառավարական այս կարգադրությամբ փրկվա՞ծ էինք թե կորսված, մանավանդ որ ամեն կողմ արյուն կը վազեր, մի՞թե հնար էր ճամփորդել։ Միայն մխիթարությունն իս այս էր, որ մեր մեկնող ընկերներուն նման մահը ոչ թե օրվան հարցն էր, այլ օրակարգի խնդիր մնալով հանդերձ, դեռ ժամանակ կը տրվեր մեզ մեր փրկության վրա մտածելու...

Հակառակ անոր, որ մեր կամքին ձգված էր Զանկըրի մնալու կամ Պոլսեն զատ մեր հարմար դատած գավառական քաղաք մը երթալու պարագան, սակայն հուզումով կը տեսնեինք, որ մեզ Պոլսեն ընկերացող սելանիկցի ոստիկանապետն ու ոստիկաններն կը ստիպեին մեզ, որ մենք ամենքս ալ պատրաստվինք անպատճառ 2 օրվան մեջ մեկնելու Զանկըրիեն։

Մյուս կողմեն մեզ խուճապի մատնող մեկ պարագան ալ սա էր, որ մեր ընկերներեն 5 հոգի, և ասոնց մեջ ըլլալով ողբացյալ Դանիել Վարուժան և դոկտ. Զիլինկիրյան (Սևակ) կառավարական հրամանով բռնադատված էին անմիջապես մեկնելու Էնկուրիի ճամփով Այաշ։ Այս դժբախտ հանգամանքն ալ մեզ կը տագնապեցներ, որովհետև ա՛լ հասկցած էինք, թե Այաշ երկել ի՞նչ ըսել էր...

Հակառակ մեզ հասնող կոտորածներու արյունոտ շշուկներուն, ուզելով օգտվիլ կառավարական մեզ շնորհված թույլտվություններեն, ես ալ միասին ըլլալով 11 ընկերներ պատրաստված էինք մեկնիլ Զանկըրիեն դեպի Զմյուռնիա։ Բայց մեզ միակ մտատանջություն առթող ապագան էնկուրիեն մեր անցքն էր։ Չի դժբախտաբար ուրիշ ճամփա չկար, և երկաթուղին հասնելու համար անհրաժեշտ էր էնկուրի իջնալ։ Իսկ մենք «ծովը ինկնողը օձին կը փաթթվի» արևելյան առածին ըսածին համաձայն, կ'ուզեինք օգտվիլ ընդ հսկողությամբ Այաշ տարվող մեր 5 ընկերներուն ուղեկցող ոստիկան և ոստիկան զինվորներու պաշտպանությենեն...

Սակայն մեր 5 ընկերներն թախանձագին կը խնդրեին, որ միջոց մը գտնվի զիրենք փրկելու համար էնկուրիի ճամփով Այաշ փոխադրելու պետական կարգադրությենեն։

Ուզելով առ այս փրկության վերջին փորձ մը ևս ընել, մանավանդ որ ժամանակ ալ չկար կորսնցնելու, ուստի ողբացյալ Տիրան Քելեկյանի հետ միասին անձամբ նույն օրը այցելեցի Զանկըրիի մյութասարրֆի փոխանորդին։ Սա Գասթեմունիի կուսակալության կենտրոնի գավառին ոստիկան զինվորներու հրամանատարն էր, որ առժամապես եկած էր իբր փոխանորդ մինչև նոր կառավարչին ժամանումը։ Իսկ նախորդ կառավարիչ Ասաֆ, ինչպես կանխավ հիշեցի, չուզելով ապագային ենթարկվիլ ծանր պատասխանատվության, դարձած էր Պոլիս, շարունակելու համար իր փաստաբանական արհեստը։ Չի չէր ուզեր Ադանայի եղեռնի ատեն իր գլխուն եկած աղետները կրկնել տալ, ու ինչպես ինք կ'ըսեր «Օր մը Պոլիս նստող իսկական պատասխանատուները կը փախչին և մենք ոտքի տակ կ'երթանք...» ասմտածումով աճապարած էր դառնալ Պոլիս։

Զանկըրիի փոխկառավարիչը, որ ցեղով չերքեզ էր և ողջամիտ ու ազնիվ մարդ մը, սիրով ընդունեց երկուքս և տեղեկություններ ուզեց աքսորելոցս այժմու վիճակի մասին։ Օգտվելով մեզ ցույց տրված բարյացակամությենեն խորհուրդ հարցուցի իրեն, թե արդյոք հարմար կը գտնե՞ր ինք, որ օգտվելով մեզ շնորհված կառավարական բացառիկ թույլտվություններեն՝ մեկնեի Արմաշ և հոն սպասեի մինչև պատերազմին վախճանը, և թե կը հաճե՞ր իմ ապահով ճամփորդության համար պետական ապահովիչ դյուրություններ տալ և ոստիկան զինվորներ ինձի ընկերակցել մինչև էնկուրի։



Բառ առ բառ ինձ կը պատասխաներ հետևյալը. «Ես Ձեզ խորհուրդ չեմ տար Ս'ուրախաս էֆենտի որ Արմաշ երթաք, զի տեսնենք Արմաշու վանքին մեջ քար քարի վրա մնա՞ց...»։ Ապա խորհուրդ հարցուցի, թե «Արդյոք հարմար կը դատե՞ր իմ Գասթեմունի մեկնիլը», քանի որ այս անգամ դեպի արևմուտք էնկուրի երթալու տեղ, դեպի արևելք Գասթեմունի կ'ուզեի երթալ, ուր դեռ արյան փոթորիկը հասած չէր։ Պատասխանեց.—

«Դուք հոն ժամանակավ առաջնորդություն ըրած էք. խոհեմություն չէ, որ հոն երթաք. զի թե Ձեր և թե հոն գտնվող հայոց խաղաղությունը կրնաք խանգարել... Ձեզ խորհուրդ կու տամ՝ ուր որ եք հոն մնացեք... կը ցավիմ, որ ասկե ավելի բացատրություն չեմ կրնար տալ... դուք խելացի մարդիկ եք, իմ քիչես շատ հասկցեք...»։ Իսկ երբ կը խնդրեինք, որ գոնե մեր 5 ընկերներուն անմիջական մեկնումը հետաձգել տար, մինչև որ կարելի ըլլար Այաշ տեղափոխելու հրամանը փոխել տալ, պատասխանեց.

«Ես չեմ կրնար չգործադրել Պոլսեն եկած հրաման մը, սակայն վստահ եղեք և ԶԱՎԱԿՆԵՐՈՒՍ ՎՐԱ ԿԵՐԴՆՈՒՄ, որ ամեն կարգադրություն ըրած եմ, որպեսզի ապահով էնկուրի հասնին այս Ձեր 5 ընկերները»։

Պաշտոնական բերնե ելած այս ծանրակշիռ բառերուն իսկական արժեքը խորապես ըմբռնած՝ կը մեկնեինք փոխկառավարչին մոտեն, առավել քան երբեք մեզ ամենքս գտնելով անդնդախոր գահավեժին եզերքը..., և ամեն վայրկյան մահվան ճիրաններուն մեջ բզկտվելու անմիջապես հավանականության մը առջև...

Նույն գիշերն իսկ բնակած այգիս այցելության կու գար Թուրք մը, որուն հաճախ բժիշկ, ձրի դեղ ու դարման ղրկել տված էի, և իր այգիին մեջ ևս հին աղբյուր մը նորոգել տված էի անձնական ծախքով, ու ասով իր երախտագիտությունն ցահած էի, նեղ օրերու հեռատես ակնկալությամբ... Այգիին մեկ անկյունը առանձնանալե վերջ, ինձի կրսեր խոստովանաբար. «Լսեցի, որ էնկուրիի ճամփով օր մը վերջ Զմյուռնիա երթալու պատրաստություն կը տեսնեք. եկա խորհուրդ տալու, որ չերթաք էնկուրի..., ես Ձեզմե շատ բարիք տեսա... եկա աղաչելու, որ գլուխնիդ չվտանգեք...»։ Ասոր պատճառները իմանալու համար ըրած պնդումներուս վրա կ'ըսեր. «Էնկուրիի կուսակալության մեջ արյուն կը վազե, ո՞ւր պիտի կրնաք երթալ... ասկի

ավելին չեմ կրնար ըսել։ Իմ զավակս ոստիկան զինվորներու տասնապետ է. եթե տղուս էնկուրի տեսածները ու ինծի պատմածները Զեզի ըսեմ, կը խելագարիք պարզապես..., ես այսչափ կ'ըսեմ, ի սեր Աստուծո... մի՛ երթաք...»։

Ակներև էր, թե Զանկըրիեն այս օրերուն հեռանալու որևէ փորձ հիմարություն էր մեր լսածներուն համաձայն... Զի մահվան անողոք ուրվականը ափ առած էր նաև մեր դուռները, արյունի և արցունքի օրեր էին, սարսափը տիրած էր ամեն կողմ, տեղեն շարժելու ժամանակ չէր։ Ուստի աճապարեցի հաջորդ օրը երեքշաբթի մեր ընկերներու հաճախած և ամայացած գետափի սրճարանը երթալ և համոզել մեր ընկերները, որ չմեկնին Զանկըրիեն։ Սակայն մեր 11 ուղեկից ընկերներուն մեջ եղան համառներ, որոնք ամեն գնով մեկնիլ կ'ուզեին...։ Ասոնց կառապաններուն ալ լիառատ դրամական պարգև տալով համոզեցի, որ հաջորդ առտուն չփութան գալ որոշյալ տեղը, որով ինքնին անկարող կ'ըլլային մեր համառ ընկերներն մեկնելու...

Ոհ, հավետ անմոռանալի 1915 օգոստոս 6-ի հինգշաբթի ան սև օրվան լուսնշաղին էր, որ Զանկըրիի մնացորդ աքսորական 18 ընկերներ կը հավաքվեինք գետափի սրճարանի կամուրջին մոտ սպասող երկու կառքերուն առջև։ Աս ան կամուրջն էր, ուրկե Զանկըրիեն էնկուրի մեկնողներն անպատճառ պետք է անցնեին, զի «շոսեն» ասկե կ'երկարեր Գալայճըքի վրայով դեպի էնկուրի։

Զափազանց հուզված էինք ամենքս ալ, արյուն կը վազեր մեր սրտերեն, և հակառակ մեր ջանքերուն, անկարող էինք զսպելու մեր արցունքներն։ Մահվան սարսուռ մը կը պարուրեր մեզ, կը տանջեր մեր միտքն, կը լլկեր մեր արդեն տառապահյուծ հոգիները. քանի կը տեսնեինք ողբն ու կոծն մեր հավետ ողբացյալ ընկերներուն Վարուժանի, Սեակի, Օննիկ Մաղազաճյանի և 2 ընկերներուն...

Ոչ մեկ ատեն հանդիպած էի այսքան կենդանի բնազդի... կ'ըսեին մեզի՝ «Մնաք բարով... մենք մեռնելու կ'երթանք, հայրսուրբներ աղոթեցեք մեզի համար...»։ Եվ երբ տարաբախտ Վարուժան և Սեակ դառնալով կ'ըսեին մեզի, թե «Մեր որբերուն տեր եղեք և...», և երբ Վարուժան ի մասնավորի կ'ըսեր, թե «Նոր զավակ մը ունեցած եմ, թող անունը Վարուժան դնեն...» ա՛լ մեր ամեքին հուզումը չափ ու սահման չուներ և մեր միտքերը չէին գործեր, որ մխիթարության երկու խոսք ըսեինք եղկելիներուն...

Օ՜հ, չեմ հիշեր իմ կյանքին մեջ՝ հրաժեշտի այսքան սրտաշարժ և աղեխորով բաժանում մը... Մեր կսկիծը ու վիշտը անով ավելի անմխիթար էր, որ ամենքնիս ալ գիտեինք, թե մեր սիրելի ընկերները դեպի վերահաս մահ հուղարկ կը ձգեինք... և ավաղ անզոր էինք զանոնք փրկելու մահվան անողոք ճիրաններեն...

Մեր մյուս ընկերներու կառքերեն մեկը կու գար և երկուքը կը համենային խորհրդավոր կերպով..., որով և անպայման մեկնելու համառող մեր ընկերները ակամա կը մնային Զանկըրի՝ կառքերուն չգալուն պատճառով...

Անգամ մըն ալ կ'ողջագուրվեինք մեր ողբացյալ հինգ ընկերներուն հետ, ու երկու կառքերը ընդ հսկողությամբ սելանիկցի մեկ ոստիկանի և մեկ ոստիկան զինվորի՝ հուսկ ուրեմն կը հեռանային մեր տեսողությենեն։ Լուսնշաղին դեռ փարատել չկրցած մթության մեջեն՝ մինչ մեր ակնարկներն դեռ չէին բաժնվեր իրարմե, զի մեր ամենքին հոգիներն կը վկայեին, թե վերջին անգամ էր, որ կը խաչաձևեին մեր ակնարկներն...

Ընկճված և՛ մտքով, և՛ հոգիով, և՛ մարմնով, արցունքը մեր աչքերուն մեջ, և արյունը մեր սրտերուն մեջ սառած՝ կը դառնայինք մեր տուները, անձնատուր չարագուշակ երկունքի մը և ժամեժամ բնազդորեն սպասելով գուժկան լուրերու...

Անկարող տոկալու այլևս շարունակական այս տնավեր սուգերուն, հազիվ այգի հասած, ուժասպառ և հիվանդ կ'իյնայի անկողին, աչքս հառած այգիի մեծ դռան...

Հաջորդ օրը 1915 օգոստոս 13-ի կեսօրին այցելության կու գային ինձ, վերապրող Հովհան[1] վարդապետ և ողբացյալ Տիրան Քելեկյան. և մահճիս հանդիպակաց բազմոցի վրա նստելով ոչինչ կ'ուզեին խոսիլ։ Սակայն իրենց դժգույն և թախծոտ կերպարանքն արդեն կը մատներ իրենց ներքին մահաբույր փոթորիկը, և վերջապես անհամբեր շարժառիթը ժամ առաջ իմանալու բնական հետաքրքրությամբ, հազիվ լռությունը խզած և հարց ուղղած, ահա ռումբի մը նման կը պայթեր իրենց բերանեն ակամա թռած սա բառերը. «Աստված Զեզի օրեր տա...»։

1 Այժմ կարգաթող։

Օ՜հ մեր սուգը անբավ էր և անբացատրելի, չէինք գիտեր՝ ո՞ր մեկ սուգին վրա ողբանք. նահատակվողներո՞ւն, որ արդեն մահվան տվին իրենց անխուսափելի բաժինը, թե՞ մեր վրա ողբանք, որ մահվան կարգին կը սպասեինք, առանց գտնելու փրկության ճամփա մը։

Ահա մանրամասնությունը ահավոր այս եղեռնին։

Զանկըրիի իթթիհատի կլուբի անդամներն ալ վաղուց կ'ուզեին մասնակից ըլլալ ճիհատին և արժանանալ իսլամաց մարգարեին վարձատրության։ Ուստի օգտվելով դոկտ. Չիլինկիրյանի և Վարուժանի ու երեք ընկերներուն էնկուրի փոխադրվելեն, կանխավ վեց ժամ հեռու Թյունա կոչված տեղը Հալո անունով քուրդ ոճրագործ մը, մեկ քանի ընկերներով կը ղրկեն որ սպասեն մեր ողբացյալ ընկերներուն անցքին։

Հինգշաբթի օգոստոս 12, երբ Զանկըրիեն կը մեկնեին մեր ընկերները, տեղվույն իթթիհատի կոմիտեի պատասխանատու քարտուղար Յոնուս կը հեռաձայնե մեր ընկերներուն մեկնումը Զանկըրի-Գալայճըք ճամփուն վրա գտնվող ոստիկանական պահականոցները։ Դարձյալ հաջորդ օրը ուրբաթ, կը հեռաձայնե Թյունայի ոստիկանական պահականոցը, հարցնելով, թե «արդեն եկողները սպանվա՞ծ են...»։ Բայց ուրբաթ ըլլալուն՝ ոստիկան զինվորները պահականոցեն քիչ հեռու ծառի մը ներքև կերուխումի մեջ կ'ըլլան և պահականոցը կը գտնվի միայն հայ բանվոր մը, որ պահականոցի պատերը կրածեփելով զբաղած է եղել նույն պահուն. և հեռաձայնին հաղորդած այս ոճրապարտ բառերը կ'իմանա...

Երբ մեր 5 ընկերներն երկու կառքով կը հասնին Թյունայի զառիվերը, ուր կը սկսի Գալայճըքի սարավանդը, դեռ չբարձրացած զառիվերը, դարան սպասող 4 քուրդերը կու գան դիմավորել մեր 5 ընկերները։

Չորս քուրդերը երբ առաջանալով կու գան կեցնել առաջին կառքին ձիերը, ոստիկան զինվորը կը հրամայե, որ ոճրագործները ազատ ձգեն ձիերը՝ սպառնալով կրակել։ Սակայն կառքերուն ընկերակցող սելանիկցի երիտասարդ ոստիկանը կը հրամայե ոստիկան զինվորին, որ ընդդիմություն չընե...

Չի կանխավ ո՞ր չափ որ առ այս գաղտնորեն հրահանգված էր ոստիկանն, սակայն ոստիկան զինվորին չէին ուզած գործածելիք ոճրին իրազեկ ընել, վախնալով, որ անգիտակից անգաղտնապահությամբ մը կրնա տգետ ոստի՛ան զինվորը վիժեցնել արյան աս խրախճանքը...

Ոստիկանին և ոստիկան զինվորին կրավորական համակերպությանը վրա, քուրդ Հալո կը հրամայե երկու կառքերուն մեջ գտնվողներուն, որ անձնատուր ըլլալով կառքերեն վար իջնան։

Հազիվ կառքերեն վար իջած, դոկտ. Չիլինկիրյան կը խնդրե թախանձագին այս 4 քուրդերեն, որ խնայեն իրենց կյանքին, և ինք կը խոստանա իր ընկերներուն հետ տալ իրենց ամբողջ հարստությունը և գույքերը։

Բայց ոճրագործներն իբր պատասխան, մեր 5 ողբացյալ ընկերները, հակառակ ասոնց աղիողորմ պաղատանքներուն, կ'իջեցնեն մերձակա ձորը՝ առվակի եզերքին, և զոհերուն զգեստները անվնաս պահելու համար նախ կը մերկացնեն։ Ապա դաշույնները քաշած կը հարձակին իրենց անզեն և անպաշտպան զոհերուն վրա, և անխնա կը սկսին ծակծկել և բզկտել դաշույններով տարաբախտ մեր ընկերներուն մարմինները, և դանակով անդամահատել ասոնց ոտքերն ու բազուկներն և այլ զգայարանքները... Ասոնցմե միայն Վարուժան անձնապաշտպանության կը դիմե, և իբր պատիժ ոճրագործներն դանակով դուրս թափելե վերջ փորոտիքը, կը փորեն նաև հայրենասեր բանաստեղծին աչքերը...

Ապա գողոնը բաժնելով իրենց մեջ և դոկտ. Չիլինկիրյանի ու Օննիկ Մաղազաճյանի զգեստներուն երիզներուն մեջ կարված ավելի քան 450 օսմ. հնչուն ոսկին ևս առնելե վերջ, բաժին կը հանեն նաև ոստիկանին ու ոստիկան զինվորին։ Կառքերու մեջ գտնված բեռները ևս իրենց մեջ բաժնելե վերջ, երկու թուրք կառապաններուն կը հրամայեն, որ առանց ճամփանին շարունակելու անմիջապես դառնան Զանկըրի։

Թուրք կառապանները կը դառնան գլխիկոր Զանկըրի, և մեկը, որ հազիվ քսանամյա թուրք երիտասարդ մըն էր և բաղնեպանի մը զավակ, պատմեց ինծի այս բոլորը մանրամասնությամբ ու արցունքով, ավելցնելով՝ «Ասանկ արհեստը գետնին տակն անցնի, ինծի պետք չէ ասանկ շահը... ես կառքս և ձիերս այսօր-վաղը պիտի ծախեմ ու հեռանամ այս քաղաքեն...»։

Աս թուրք կառապան երիտասարդին վրա չափազանց խոր ազդած էին ոճրին գործված միջոցին տեղի ունեցած անլուր շարշարալից անգթությունները... պատմած ատենը նա կու լար։

Միանգամայն պնդելով, որ եթե սելանիկցի ոստիկանը զինվորին արգելք եղած չըլլար, կարելի էր դյուրավ դիմադրել և առջևը առնել ասբան անգութ ոճրի մը, և փրկել թշվառ 5 զոհերը...

Ուրբաթ կեսօրին հազիվ երկու կառքերը պարապ վերադարձած՝ ոճրին տարածայնությունը արդեն սարսափեցուցած էր մնացորդ աքսորականներուս հետ, նաև Զանկըրիի հիսուն տնվոր հայությունը։

Մեր ողբացյալ հինգ ընկերները ողջամբ էնկուրի հասցնելու համար իր զավակներուն վրա երդում ընող փոխկառավարիչ և Գասթեմունիի կուսակալության ոստիկան զինվորներու հրամանատարը, ձի նստելով կ'ճապարեր Թյունա՝ մեկ քանի հարցաքննիչ դատավորներով և ոստիկաններով ոճրին վայրը։

Հոն կը զտնեն հինգ թշվառ զոհերը անճանաչելի վիճակի մեջ ջուրի մեջ նետված... Ասոնց մարմինները թաղել տալե և ոճրագործները ձեռք անցնելե վերջ, ոստիկանին ու ոստիկան զինվորին հետ էնկուրի բանտը կը նետվեին պատերազմական ատյանի առջև դատվելու համար։ Դատարանին մեջ 4 քուրդերը բացահայտ կերպով հայտարարեցին, թե իրենք գործած են Զանկըրիի իթթիհատի կոմիտեի հրամանով և հանձնարարությամբ... հետևապես իրենց հետ անոնք ալ հարկ էր դատարան քաշել...

Ան ոճրագործներուն պետը քուրդ Հալո, որուն հիվանդ աղջիկը ստույգ մահվանե փրկած էր դոկտ. Ջիլինկիրյան, այս դեպքեն ամիս մը առաջ օր մը կ'ըսե ողբացյալ Սեակին. «Ես քեզ կը մեղքնամ, ձեր գլխուն փորձանք պիտի գա, և ոչ ոք ձեզմե չպիտի կրնա ազատիլ. եկուր իսլամ եղիր, աղջիկս ալ քեզ տամ և երիտասարդ կյանքդ փրկե... Ապա թե ոչ՝ եթե այս առաջարկս մերժես, արդեն քեզ մեռցնել կ'ուզեն, ան ատեն ես անձամբ պիտի կտոր-կտոր ընեմ քեզ...»։

Ահա բացահայտ ապացույց մը ևս ոճրին կանխավ պատրաստված ըլլալուն։

Ցարաբախտ Սեակ պատմած էր ի կենդանության խոստովանաբար սեկ քանի մարիմ անձերու, և առ ի զգուշություն այգիեն ևս քաղաք փոխադրած էր իր բնակությունը այս սպառնալիքեն վերջ։

Այսպես անճիտվող ազգը կը կորսնցներ ավա՜ղ տաղանդավոր երկու գրագետներ ու բանաստեղծներ, և վաղվան հայ



վերածնունդին կարող [illegible] հաս զավակներու տեր հինգ արդեսներ հայրեր...

Բայց դժբախտաբար ժամանակ չունեինք երկար սգալու... զի օր նոր, նախճիր նոր, օր նոր, արյան հեղեղներ նոր... Մինչ մահվան ուրվականը տակավ կը մոտենար մեզի, և արդեն Հայաստանի և Փոքր Ասիո բոլոր քաղաքները ու գյուղերը շրջելե վերջ, հուսկ ուրեմն հասած էր և մեզի և կը սպասեր վեց ժամ հեռուս Թյունայի առջև...

## 15.

## ՋՈՀՐԱՊԻ ԵՎ ՎԱՐԴԳԵՍԻ ԱՔՍՈՐՆ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ[1]

Այն սև օրերուն, երբ 1915 օգոստոսին Հայաստանի և Փոքր Ասիո բոլոր հայությունը՝ «տեղահան» կամ «աքսորի» անվան տակ՝ ի սպանդ կ'առաջնորդվեին, անխնա կոտորելով և՛ մանուկն, և՛ ծերը, և՛ կույսն, և՛ հարսներն ու մամիկները. երբ արդեն Այաշի ու Զանկըրիի աքսորելոց ևս հաշիվն մաքրված էր, և միայն հազիվ մոտ 18—20 մնացորդ անձեր կը սպասեինք Զանկըրիի մեջ մեր սև բախտին։ Պոլսո մեջ այս միջոցին ձերբակալված էին նաև օսմ. խորհրդարանի անդամ Զոհրապն և Վարդգեսն, և առանց բանտը երկար ձգելու, անմիջապես ճամփա հանած էին երկաթուղիով դեպի Տիգրանակերտ, հոն տեղվոյն պատերազմական ատյանին՝ առջև իբր թե դատվելու համար։ Իսկ մենք արդեն քանիցս դժբախտությունն ունեցանք հիշելու, թե ի՞նչ մասնավոր նշանակություն ուներ Տիգրանակերտի պատերազմական ատյանին՝ աքսորական հայ ղրկելը...

Այս օրերուն նաև կը զուգադիպեր Այաշեն Ակնունիի և հինգ

---

1 Տարաբախտ Զոհրապի և Վարդգեսի սպանության վերջին մանրամասնությունները (էջ 148—149) քաղած ըլլալով, թե ականատեսներու թուրք թերթերու մեջ բրած տպագրություններեն՝ վերապահությամբ հոս կ'արձանագրենք։

ՈՒՂՂԱ'ի ԿԵՐՊՈՎ մեզ ծանոթ չեղած մարտիրոսագրություն այս պատմական հուզիչ դրվագը ուզեցինք հիշել, այս երկու նշանավոր անձերու նահատակությունն չուզելով մոռացության տալ, ի հարգանս իրենց համերժական հիշատակին։

ընկերներուն նույն «նպատակով»... աքսոր ղրկվիլն դեպի Տիգրանակերտ։

Օսմ. պառլամենտի մեջ հանուն ազգային շահուց միշտ պայքարող երկու քաջամարտիկ այս երեսփոխաններն, Գոնիայի մեջ առիթ կ'ունենան տեսակցելու մեկ քանի ազգայիններու հետ և կը մերժեն նյութական ո՛րևէ օգնություն։

Իսկ Գոնիայի մոտակա Էրեկլիի երկաթուղիի կայարանին առջև, երկաթուղիի հայ դաշնակցական պաշտոնյա մը, հանդգնությունը կ'ունենա տեսակցելու գաղտնապես Զոհրապի և Վարդգեսի հետ և առաջարկելու փախցնել զիրենք։ Սակայն ասոնք կը պատասխանեն, թե իրենք իբր օսմ. պառլամենտի անդամ իրենց կյանքի մասին երկյուղ չունին, և չեն տարակուսիր, որ անպարտ պիտի արձակվին Տիգրանակերտի պատերազմական ատյանեն... Միշտ նույն լավատեսությունը։

Երբ Զոհրապ և Վարդգես կը ժամանեն Ադանա, հոս մեկ քանի ազդեցիկ հայեր մասնավոր թույլտվությամբ կը տեսակցին այս երկու հայ երեսփոխաններուն հետ, առաջարկելով ո՛րևիցե օժանդակություն։ Բայց ասոնք կը պատասխանեն, թե ուրիշ ո՛րևէ բանի պետք չունին, միայն կը խնդրեն, որ իրենց Ադանայեն ողջ անցնիլը լուր տան Պոլիս իրենց ընտանիքներուն։

Դարձյալ խիստ հսկողությամբ Պոլսեն ընկերացող ոստիկանապետի մը և ոստիկանի մը, վերջապես ողջամբ կը հասնին Հալեպ։

Այդ օրերուն Հալեպի կուսակալ էր հայոց միշտ բարեկամ ճանչցված նախ Կարնո կուսակալ, ապա ներքին գործոց նախարար Ճեմալ։ Ան ստուգիվ կարելին կ'ընե, իբր երկուքին ալ անձնական բարեկամ, փրկելու թշվառները ամենաստույգ մահե մը։ Նա փոխանակ բանտ առաջնորդել տալու, պանդոկ մը իջևանել կու տա, և թույլտվություն կ'ընե ցանկացողներուն տեսակցիլ մեծանուն աքսորականներուն հետ։

Մյուս կողմեն ինք անձամբ կը դիմե Զոհրապի և Վարդգեսի «անձնական բարեկամ» և ներքին գործոց նախարար Թալեաթին, խնդրելով, որ իրեն թույլտվություն ըլլա Հալեպի մեջ պահելու երկու աքսորականները։

Հալեպի մեջ գտնվող ազդեցիկ թուրք մեկ քանի բարեկամներ ևս, նույնպես կը դիմեն Սուրիո թուրք բանակի ընդհանուր



հրամանատար և ծովային նախարար Ճեմալի և կը խնդրեն երկու աքսորականներուն Հալեպի մեջ ազատ արձակումը։

Որովհետև ամեն ոք կը կռահեր երկու տարաբախտ աքսորականներուն համար եղերական վախճան մը, քանի որ Տիգրանակերտի կուսակալ դոկտ. Ռեշիտի կազմակերպած հրոսախմբերը, արդեն ողջ հայ չէին թողուր Ուրֆա-Տիգրանակերտի ճամփաներուն վրա, և անմեղներու արյունը հորդահոս կը վազեր ամեն կողմ։ Ամեն ոք գիտեր, թե Ուրֆայեն Տիգրանակերտ ողջ հասնիլ անկարելի էր. ուստի բարեկամներ կը ջանային կարելին ընել առջևը առնելու համար անխուսափելի աղետին։

Ողբացյալ Զոհրապ և Վարդգես իրենք ալ անձնապես կը դիմեն իրենց թուրք հին բարեկամներուն, և թախանձագին կ'աղաչեն, որ զիրենք փրկեն..., զի իրենք ալ տիրող տարաձայնություններեն կ'ազդվին և այլևս կը դառնան հոռետես, ու միջոցներ կը սկսին փնտրել, հուսալով փրկվիլ վերահաս մահեն։

Իբր պատասխան եղած բարյացակամ այս բոլոր դիմումներուն՝ Պոլսեն հրաման կու գա, որ Հալեպի կուսակալ Ճելալ իսկույն պաշտոնը հանձնելով «Հաքիմին» դառնա Պոլիս։ Նկատելով, որ կուսակալ Ճելալ կը պաշտպաներ Զոհրապն ու Վարդգեսն, իբր միակ միջոց Թալեաթ աս կտրուկ կարգադրությունը խորհած էր...

Ճելալի Հալեպեն մեկնումի հաջորդ օրն իսկ, Զոհրապ և Վարդգես երկձի կառքով մը և ընդ հսկողությամբ ճամփա կը հանվին դեպի Ուրֆա, և հազիվ քաղաք ժամանած ուղղակի կ'առաջնորդվին բանտ։

Ճիշտ այս միջոցին բանտարկված էին նաև տարաբախտ օծակիցս Ուրֆայի Առաջնորդ Արտավազդ ծ. վարդապետ երկու Եդեսացի հայ երևելիներու հետ, իբր սկզբնավորություն Ուրֆայի հայոց տեղահանության։

Այս օրերուն Տիգրանակերտի արյունկզակ կուսակալ դոկտ. Ռեշիտեն վերջ ամենաազդեցիկ անձերն էին այս կողմերուն մեջ՝ Պոլսո մեջ Զեքին սպանող Ջերքեզ Ահմետ և պատերազմական նախարար Էնվերի հորեղբայր Խալիլ։ Ասոնք հեծյալ հարյուրավոր խումբերով հրոսակներու (չեթա) գլուխն անցած և բոլոր ճամփաները բռնած, հյուսիսեն դեպի հարավի անապատները, ոչխարի հոտերու նման քշվող հայ քարավաններու մնացորդները կը կոտորեին անխնա, ահավոր սպանդանոցի մը

վերածելով Մալաթիա-Ուրֆա-Տիգրանակերտի շրջանները ու Համփանները։

Զոհրապ և Վարդգես Եդեսիո մեջ կը հյուրասիրվին Ուրֆայի օսմ. երեսփոխան, հետևապես և Զոհրապի ու Վարդգեսի պաշտոնակից Մահմուտ Նեդիմ։ Բայց այս հյուրասիրության անունին ներքև թակարդ մը լարված էր։ Որովհետև հազիվ երեկոյան ընթրիքը կամա-ակամա ըրած, չորս ոստիկաններ գալով կը պահանջեն թուրք տանուտերեն երկու ողբացյալ աքսորականները, ըսելով, թե «կառքը կը սպասե, խարբերդ պիտի երթան»։

Տարաբախտ Զոհրապ, զգալով, թե դեպի մահ կ'առաջնորդվին, և թե այլևս իրենց ժամերը համրված են, տանտիրոջ՝ Մահմուտ Նեդիմի վիզը իյնալով, կ'աղաչե ըսելով. «Մեզ սպանելու կը տանին, կ'աղաչեմ միջամտեցեք...»։ Բայց Վարդգես՝ հեղափոխականի վայել սառնասրտությամբ անտարբեր կը մնա դեպի անխուսափելին, զի ինք իր հեղափոխական կյանքին մեջ ի պատանեկութենե, վաղուց ընտելացած էր մահվան հետ և ինչ որ կ'ապրեր ավելին էր...

Մահմուտ Նեդիմ կը խոստանա միջամտել, սակայն ոչ ոք կրնա թափանցել այս եղերական ու եղեռնական իրադարձությանց գաղտնիքին...

Հուսկ ուրեմն հեծյալ ոստիկան զինվորներու հսկողությամբ Զոհրապ և Վարդգես մեկ կառքի մեջ, և Եդեսիո առաջնորդ Արտավազդ ծ. Վարդապետ Գալենտերյան ու տեղվոյն երևելիներեն երկու հայեր, երկրորդ կառքի մը մեջ նստեցնելե վերջ, ճամբա կը հանվին դեպի Տիգրանակերտ...

Եդեսիայեն մեկ ժամ հեռու Գարաքեոփրիվ ըսված վայրը հազիվ հասած՝ ըստ նախօրոք եղած կարգադրության, կը պաշարվին մեր կալանավորները։ Ձերքեզ Մեհմետ և Խալիլ իրենց զինավառ հեծյալ չեթեներով կը կանգնեցնեն փոքրիկ այս քարավանը և կը հրամայեն ոստիկան զինվորներուն, որ զոհերը ձգելով վերադառնան, քանի որ ասոնց պաշտոնը այլևս լրացած էր։

Ահավոր վայրկյանը կը մոտենա... Արյունարբու հրոսապետները կառքեն վար կ'առնեն եղերաբախտ աքսորականները, և իրենց հետ բերած մեկ մետրանոց երկաթե գամերով գետին կը բևեռեն եղկելիները։ Կը փետտեն Արտավազդ վարդապետի մորուքն և կը կտրեն բոլորին ալ գլուխներն, զանազան տանջանքներ տալե վերջ։ Մի առ մի կը կտրեն նաև թշվառներուն բոլոր անդամներն, նախապես մերկացնելե ի վերջ։

Եղեռնի այս լուրը Ուրֆայի կառավարիչը կը հեռագրե Պոլիս, ուր օրեօր Զոհրապի և Վարդգեսի սպանման ավետավոր լուրին կը սպասեին Թալեաթ և Ինթիհատի կոմիտեի կենտրոնի անդամները։ Զոհրապի և Վարդգեսի սպանման լուրը առնելով, ներքին գործոց նախարար և ողբացյալներուն իբր թե բարեկամ Թալեաթ լուր կը ղրկե առաջնույն տիկնոջ, թե Զոհրապ սրտի հիվանդություն ունենալով, Տիգրանակերտի ճամփուն վրա կաթվածահար եղած է կառքին մեջ...։ Իսկ Վարդգեսի կնոջ բացառարար կը թույլատրե մեկնիլ Բուլղարիա, մինչ ցայն վայր արգելք եղած էր, և Վարդգեսի առ այս ըրած բոլոր դիմումներուն միշտ պատասխանած էր՝ «Վարդգես քեզի Բուլղարիա երթալու հրաման չեմ տար. գիտեմ՝ օձիքդ ազատել կ'ուզես, բայց ճար չկա, մենք ինչ որ ըլլանք, դուն ալ մեզի հետ պիտի ըլլաս...»։

Խորհրդավոր այս խոսքերուն նշանակությունը ողբացյալները վերջը միայն հասկցան, երբ արդեն ուշ էր...

Ճիշտ նույն տեղվույն մեջ, այս սարսափելի սպանութենեն 8 օր առաջ, կը նահատակվին ուրֆացի և տիգրանակերտցի գործավոր գումարտակներու (ամելե թափուրի) 4000 հայ զինվորներ, ամենախժդուժ ու չարշարալից մահվամբ։

Այսպիսի եղերական ու ահավոր մահ մը կ'ունենան Զոհրապ և Վարդգես, որոնք հայ ժողովրդի շահերու պերճախոս փաստաբաններն էին օսմ. Սահմանադրության 1908-ի վաղորդայնին ընտրված օսմ. երեսփոխանական ժողովին մեջ։ Իսկ մասնավորաբար կարնեցի Վարդգես, իր քսանամյա տարիքեն սկսյալ անվհատ և քաջարի վետերանն էր եղած հայ ժողովրդի փրկության դատին. և բազմիցս տարիներով բանտարկված, հալածված, խոշտանգված և օսմ. Սահմանադրության միայն բանտեն արձակված էր՝ օգտվելով քաղաքական բանտարկյալներուն ընդհանուր ներումեն։

Այս բազմաչարչար նահատակներեն հիշատակության արժանի է նաև մասնավորաբար Եդեսիո առաջնորդ ողբացյալ Արտավազդ վարդապետ։ Ըլլալով ինձ օծակից, շատ մոտեն հարաբերություն ունեցած էի իր հետ, որ նկարագրով հույժ ազնիվ և անկեղծ հայրենասեր եկեղեցական մըն էր և համբա-

վավոր երաժշտագետ, ինչպես նաև հմուտ հայ եկեղեցական և եվրոպական երաժշտության հավասարապես։

Ասոնք ալ ինկան պատվո դաշտին վրա, ու զոհաբերվեցան հայրենիքի փրկության ազատության սեմին վրա...

Բա՞ն, իրենց կյանքին մեջ փափագելով փափագած էին տեսնել արյունազանգ հայրենիքի ազատությունը, և չտեսած սակայն փակեցին իրենց աչքերը առ հավետ, իրենց անմեղ արյունով ոչ նվազ սատարելով հայ ժողովրդի փրկության։

Իսկ այս ահավոր եղեռնին գլխավոր դերակատար և էնվերի ազգական Խալիլ, իբր վարձատրություն, Պոլսո կենտրոնական կառավարությունը՝ փաշայության աստիճանով, անվանեց Բաղդադի թրքական բանակի վերին հրամանատար, ավելի ընդարձակ ասպարեզ տալու համար նորանոր եղեռնագործությանց։

Այս նույն Խալիլն է, որ ապա կովկասյան ճակատ անցնելով, ընաց միացավ նորակազմ Ատրպեյճանի թաթար հանրապետության զինվորական շարժումներուն, նպատակ ունենալով կովկասահայությունն ալ, արևմտահայերուս նման բնաջինջ ընել։ Հակառակ պարագային՝ արհամարհելի և տկար պետություն մը դարձնել Հայաստանը, առաջին առթիվ ի մի հարված զարնելու ու անդամահատելու իբր պատրաստ որս։

Դարձյալ այս Խալիլն էր, որ 1919-ին հայկական Ղարաբաղն ու Զանգեզուրը ազգային մեծանուն քաջարի հերոս զորավար Անդրանիկի հեռանալեն վերջ ահավոր կոտորածի ենթարկեց և տնխնա ջարդեց Շուշիի հայությունը, առանց խնայելու սեռի և հասակի, արյունոտ նոր էջեր ավելցնելով հայ ազատագրության և նահատակության արյունաշաղախ սև էջերուն վրա։

## 16.

## ՁԱՆԿԸՐԻԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐՍԱՓԻ ՕՐԵՐՈՒՆ ՄԵՋ

Արդի Թուրք կայսրության հին Հայաստանի սահմաններուն մեջ երեք հազար տարիներե ի վեր ապրող ամբողջ հայությունը, բացի Պոլսեն և Զմյուռնիայեն, 1915-ին արդեն 3/4 մասով բնաջինջ եղած էր՝ համատարած արյան ջրհեղեղով մը։



Վերջապես կենտրոնեն ստիպողական հրաման կու գար, Տեր Զորի անապատները աքսորելով բնաջինջ ընելու նաև Գասթեմունիի կուսակալության մեջ գտնված ամբողջ հայությունը, որ հազիվ ընդամենն 1800 տուն կամ 10.000 անձ կը հաշվվեր այն ատեն, մեջը ըլլալով նաև հազար տունե ավելի հայ բռնաները։

Սակայն կուսակալ Ռեշատ Փաշա, ազնիվ, խոհական և հին Թուրք դպրոցին պատկանող անձ մը, ներքնապես սաստիկ հակառակ ըլլալով իթթիհատի ոճրագործ աշխարհավեր կոմիտեին, հուլիսի սկիզբեն ի վեր Պոլսեն ղրկած այս հրամանը չէր գործադրած։

Ասկե զատ Գասթեմունիի կենտրոն քաղաքին մեջ ապրող Թուրք ժողովուրդի մեծամեծներն, իր մոտ հրավիրելով հարցուցած էր, թե իրենք դժգոհություն մը ունի՞ն իրենց դրացի հայերեն։ Իսկ Թուրք երևելիները նախ բերանացի և ապա Ռեշատ Փաշայի միջոցավ հաղորդած էին Պոլիս գրավոր կերպով, թե «Իրենք դարերե ի վեր բարի դրացիությամբ և առևտրական ընդարձակ հարաբերությամբ կապված ըլլալով հայերու հետ, ոչ միայն դժգոհություն մը չունեին ասոնցմե, այլև նյութական մեծամեծ վնասներու պիտի ենթարկվեին, եթե Տեր մի՛ արասցե հայերը տեղահան ըլլային»։

Կուսակալ Ռեշատ Փաշան, մյուս կողմեն բացահայտ կերպով ամենուրեք կը հայտարարեր, թե հայերը օսմանյան պետության սյունն են, թե առանց հայերու երկիրը հույժ աղքատության կ'ենթարկվի, թե իթթիհատի կոմիտեն հույժ անհեռատես և հայրենիքին շահերուն գլխովին հակառակ քաղաքականության մը կը հետևի՝ հայերու բնաջնջման հետամտելով, և որ առաջիկային օսմ. պետությունը կրնա կործանարար մեծ պատասխանատվության ենթարկել։

Գասթեմունիի կուսակալին այս ընթացքը բոլորովին հակառակ ըլլալով իթթիհատի կոմիտեն և Թուրք կառավարության գաղտնի հայաջինջ քաղաքականության, ներքին գործոց նախարար Թալեաթ, Գասթեմունիի օսմ. երեսփոխանին միջոցավ բերանացի լուր կի ղրկեր Ռեշատ Փաշայի, որ եթե պաշտոնանկ ըլլալ չ'ուզեր, իսկույն հրաժարի կուսակալական իր պաշտոնեն։

Իսկ Ռեշատ Փաշա, իբր պետական պաշտոնեից մեջ սկզբունքի ծառայող եզակի ազնիվ անձնավորություն մը, հրաժարելով իր պաշտոնեն, հուլիսի վերջը մեկնեցավ Պոլիս, մտա-

դրելով մայրաքաղաք հանելուն, այս սխալ քաղաքականության դեմ յուրովսանն պայքարիլ, քանի դեռ ուշ չէ...

Ռեշատ փաշայի փոխանորդ կարգված Գատրն անմիջապես հրաման կ'ընե Զանկըրիի նոր եկած կառավարչին, խիստ խուզարկության ենթարկել տեղվոյն հայոց տունները, ասոնցմե հավաքելով բոլոր զենքերը։

Սեպտեմբերի սկիզբներուն օր մը, ոստիկաններե և ոստիկան զինվորներե պաշարված գտանք Զանկըրիի հայոց բոլոր թաղերը, նույնպես ահ ու սարսափի մատնելով տեղվոյն ամբողջ հայությունը։ Սակայն հակառակ եղած մանրակրկիտ խուզարկության, ոչ մեկ զենք չգտնվեցավ հայոց տուներուն մեջ։ Ասոր վրա իրողությունը պարզող այս ապարդյուն խուզարկության պարագան հայոցս նպաստավոր տեղեկագրով մը հաղորդվեցավ Գասթեմունի։ Բայց Զանկըրիի իթթիհատի կոմիտեն երբեք գոհ չեղավ այս ձեռնունայն խուզարկութենեն, զի չկրցավ հակառակ իր ակնկալության, հայերը տեղահան կամ աքսոր ընելու ՊԱՏՐՎԱԿ մը ձեռք բերել։

Իբր ապացույց այս ակնհայտնի դժգոհության, խուզարկության հաջորդ օրը Զանկըրիի իթթիհատի պատասխանատու քարտուղարը Յոնուս, որ ողբացյալ Սեակի և Վարուժանի սպանումը կազմակերպած էր, խստիվ կշտամբելով Զանկըրիի ոստիկանական տնօրենը, կ'ըսե ի մեջ այլոց. «ԵԹԵ ՀԱՅԵՐՈՒ ՏՈՒՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՁԵՆՔ ԳՏԱՆ, ԳՈՆԵ ՁԷՔ ԿՐՆԱՐ ՀԵՏԵՐՆԻԳ ՄԵԿ ՔԱՆԻ ՁԵՆՔ ՏԱՆԵԼՈՎ, ՄԵԿ ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐՈՒ ՏԱՆ ՄԵՋ ԳԱՂՏՆԱՊԵՍ ՁԳԵԼ, ԵՎ ԱՊԱ «ԱՀԱ ԳՏԱՆՔ» ԸՍԵԼՈՎ ԸՍՏ ԱՅՆՄ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ ՊԱՏՐԱՍՏԵԼ... ԱՍ ՈՐՔԱՆ ԱՆՃԱՐԱԿ ԵՔ ԵՂԵՐ, ԵՎ ԱՆԳԻՏԱԿԻՑ՝ ՕՐՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ...»։

Ի դեպ է հիշել հոս, թե հայաբնակ բոլոր վայրերու մեջ, եթե 5 տեղ զենք գտան հայոց մոտ, 100 տեղ ալ իրենք դրին, և ապա «ԳՏԱՆՔ» ըսելով կարծեցին իրենց ահավոր եղեռնին ՁՔՄԵՂԱՑՈՒՄԸ պատրաստած ըլլալ։

Նույնիսկ բազմաթիվ վերապրող ականատեսներ և հայ լուսանկարիչներ կը վկայեն թե շատ տեղեր, ինչպես Ադանայի մեջ, ոստիկան զինվորներու զենքերը առնելով մեկ տեղ խառնիխուռն դիզելե վերջ, ասոնց ալ վրան պետական ձեռնառումբեր զետեղելով, լուսանկարել տված են և գրքերու ու պատկերազարդ թերթերու մեջ հրատարակելով, ուզեցին իրենց չքմեղացումին



իբր ապացույց ծառայեցնել արտաքին քննադատ թշնամիներու դեմ։

Իթթիհատի տեղական կոմիտեի պնդումին վրա, ամիս մը վերջ կրկին ամենայն խստությամբ եկան խուզարկել Զանկըրիի հայոց բոլոր տունները, և կրկին ձեռնունայն և գլխիկոր ետ դարձան։

Այնուամենայնիվ Զանկըրիի հայերու տեղահանության հրամանը չուշացավ Գասթեմունիեն Զանկըրիի կառավարության, իբր արդյունք Զանկըրիի իթթիհատի կոմիտեին համառ միջամտության։

Կրկին չար ուղղությամբ մը, 1915-ի Վարդավառին նման՝ ս. Աստվածածնի տոնն ևս սուգի ու սարսափի մեջ անցուց Զանկըրիի ափ մը հայ թշվառ ժողովուրդը, հետևյալ աղեխարշ հանգամանքներու ներքև։

Մինչդեռ երկսեռ հայ ժողովուրդը մեծամասնությամբ եկեղեցին կը գտնվեր, հանկարծ Զանկըրիի զինվորական հրամանատարին կողմե հայոց մխթարին միջոցավ հետևյալ հրամանը հաղորդվեցավ ինծի, որպեսզի զեկուցանեմ ներկա ժողովրդյան։

«Երեք օր պայմանաժամ կը տրվի Զանկըրիի հայ ժողովրդին, դեպի Տեր Զոր մեկնումի պատրաստվելու համար։ Յուրաքանչյուր ոք ազատ է իր կինն ու զավակները հետը առնելու կամ քաղաքը ձգելու։ Փախչողները և պահվողները մահվամբ պիտի պատժվին»։

Հազիվ պետական այս մահագուժ հրամանը հաղորդված ներկա եղող ժողովրդյան, աղոթքի տաճարը կը դառնար խկույն վայնասունի, լացի ու կոծի վայր մը։ Սուգը ընդհանուր էր, որովհետև ամեն ոք գիտեր այլևս, թե Տեր Զոր աքսոր երթալ ի՞նչ ըսել էր... Պատանիներեն մինչև ութսունամյա ծերունիները խուժելով սեղանին, առջև, կ'աղաչեին որ Եկեղեցվո վերջին սուրբ խորհուրդով զիրենք նախապատրաստենք ահավոր վախճանին..., որովհետև մահվան ժամը վերջապես հնչած էր..., հարկ էր վերջին պարտականություններն կատարել...

Ս. Պատարագի հայր մերին ժամանակ արդեն սեղանին առջև պատրաստ կը սպասեին 58 ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐ, որոնք ամենքն ալ անկարող զսպելու իրենց պոռթկացող հուզումը հեկեկանոք կու լային... Բայց ա՜լ ավելի սրտաճմլիկ էր այս թշվառներուն եկեղեցին ներկա եղող կիներուն, զավակներուն և ծերունի մայ-

բերան ողբն ու կոծն, իրենց հառաչանքներով, լայուններով և անեծքներով եկեղեցվո ցած կամարներն վար կը բերեին...

Անկարելի էր ներկա ըլլալ այս սոսկալի տեսարանին և մինչև ոսկրներն շարսռալ ու շարտասվել։ Կու լայինք ամենքս ալ, և՛ հովիվ և՛ հոտ մեր հայու անբախտ ճակատագրին վրա, կու լայինք և գնացողներուն վրա, և մնացողներուն վրա։

Որովհետև իթթիհատական մահվան անգութ մանրակը խտիր չէր դներ ո՛չ կուսակցականի, ո՛չ պահպանողականի, ո՛չ մանուկի, ո՛չ ծերի, ո՛չ արուի և ո՛չ էգի, հրամանը սաստիկ էր, բնաջինջ ընել հայ ցեղը, անխնա կոտորելով մինչև վերջին անչաղ բեկորը մահապարտ հայության...

Սակայն ա՛լ ավելի անտանելի էր իմ վիճակը. ըլլալով հովիվ մահվան դատապարտված և հալածական անմեղ ժողովրդի մը, յուրաքանչյուրը կը վազեր մոտս, օգնության, փրկության, հույսի կամ մխիթարության խոսք մը սպասելով...

Բայց բա՞ն ինքս ալ ըլլալով մահվան դատապարտվածներեն անդրանիկ մեկը, հակառակ բոլոր կամեցողությանս, անզոր էի ո՛րևէ օգուտ-ակար ձեռնարկ ընելու...

Կ'ապրեինք համատարած նախճիրի, այնպիսի անլուր, և մտքով իսկ անըմբռնելի այնպիսի սարսափելի օրերու մեջ, երբ ողջ մնացողներս երանի կու տայինք ամեն անոնց, որոնք չարչարանքի, խոշտանգումի և աներևակայելի տառապանքով սպառնացող մահվան, վճարած էին արդեն արյունի իրենց անճողոպրելի տուրքը։ Մինչ կենդանի մնացողներս իրապես կենդանի նահատակներ էինք, ամեն օր քանի մը անգամ կը մեռնեինք ու կ'ողջանայինք, վաղվան վերահաս երկյուղը մեր սրտերուն մեջ, մահվան չարչարալից սարսափը մեր տանջվող հոգիներուն ու մտքերուն մեջ...

Բայց այնուամենայնիվ վերջին փորձ մը կ'ուզեինք ընել. ո՞վ գիտե թերևս հաջողեինք, հակառակ ամեն հոռետեսության..., քանի որ թուրքը դրամով միշտ սովոր էր վաճառելու իր ամենանվիրական սրբություններն ալ...

Ուստի՝ անմիջապես քաղաքին հայ երևելիներեն երկուքը բնակարանս հրավիրելով սկսանք քննել բոլոր նպաստավոր և աննպաստ հավանականությունները։

Խորհուրդ ընելե վերջ, որոշվեցավ անմիջապես հաջորդ օրը մեռելոցի երկուշաբթին, գաղտնի սակարկության մտնել Ջանկըրիի իթթիհատի կոմիտեի Պոլսեն ղրկված պատասխանատու



քարտուղար Յոնուսի հետ, որ իսկական շարժիչ ուժն էր տեղվոյն հայահալած քաղաքականության, և կազմակերպիչը Սեակի ու Վարուժանի սպանդին։

Հուսալից էինք անով, որ տեղվույն հայ երևելիներեն մեկը, որուն հետ խորհրդակցելով այս քայլն կ'առնվեր, ի նկատի առնելով Ջանկըրիի հայ փոքրաթիվ ժողովուրդին նյութական անձուկ վիճակը, խոստացած էր նույն օրն իսկ 500 հնչուն ոսկիի գումար մը տրամադրել այս նպատակին. և ավելի ալ զոհաբերություն ընել, եթե հույս ըլլա ժողովուրդը փրկել ստույգ մահվանե։

Ամենքս ալ կը տրամաբանեինք, թե Ջանկըրիի հայության շարժուն ու անշարժ հարյուր հազար ոսկիի հարստությունը փրկելու համար կ'արժեր մեկ քանի հազար ոսկի փրկանք տալ, թող թե ասով փրկվելիք հարյուրավոր կյանքերը գին չունեին բնականաբար։

Հարկ էր տրված երեքօրյա պայմանաժամին մեջ սակարկությունը լրացնել, և վճարման համար ևս պայմանաժամ մը ստանալ։ Իսկ ամեն գործառնություն այս մասին կը կատարվեր ծայր աստիճան գաղտնապահությամբ, զի հակառակ պարագային միայն փութացուցած պիտի ըլլայինք մեզ սպառնացող անխուսափելի մահը։

Իթթիհատի կենտրոնական կոմիտեն աղետի այս օրերուն, նոր կարգադրությամբ մը, Պոլսեն մեծ ու փոքր բոլոր քաղաքները մեկ-մեկ քննիչ ղրկած էր՝ «պատասխանատու քարտուղար» անվան ներքև։ Ասոնք իսկապես իթթիհատի կենտրոնական կոմիտեի աչքն ու ականջն էին, և գավառի տեղական կառավարական պաշտոնեության վրա խիստ հակակշիռ ի գործ կը դնեին։ Ով որ իթթիհատի քաղաքականության հակառակ ուղղություն կը բռներ, իսկույն տեղեկագրվելով Պոլիս, պաշտոնանկության հրաման կու գար, ըլլար ան տեղական (գայմագամ), կառավարիչ (մյութասարրֆ), և նույնիսկ եթե կուսակալ (վալի) ըլլար։

Զի իսկական կառավարության ղեկը ասոնց ձեռքն էր։

Հաջորդ օրը կանխավ առնված ժամադրությամբ մը, երկու անձեր կը ներկայանային գաղտնի կերպով գիշերը, պատասխանատու քարտուղարին տունը։

Իթթիհատի այս լիազոր ներկայացուցիչը, երկար բանակցություններե վերջ, հուսկ ուրեմն սակարկության մտնելով իբրև

վերջին խոսք 1500 հնչուն ոսկի կը պահանջեր 24 ժամվան մեջ վճարվելու պայմանով, հակառակ պարագային անմիջապես գործադրել մեզ Տեր Զոր ղրկելու տարագրության հրամանը...

Իթթիհատի լիազորը երկու մասնավոր պայման կը դներ առաջս. Ա—ծայր աստիճան գաղտնի պահել երկուստեք պատասխանատվության ենթարկող արյան այս սակարկությունը. Բ-Ամս վճարելի 1500 ոսկվո գումարին համար ընկալագիր չպահանջել, այլ իբր նվեր տալ հանուն Զանկըրիի մեջ իբր թե կառուցանելի իթթիհատի կլուբի մը շենքին ու հողին արժեք։

Ասոր փոխարեն, լիազորը համամտությամբ Զանկըրիի իթթիհատի կլուբին ամենաազդեցիկ տեղացի մեկ անդամին, խոստացած էր Զանկըրիի հայությունը տարագրելու ամեն հրաման անհետևանք թողուլ և զգուշական միջոցներ ձեռք առնել, պաշտպանելու համար տեղվոյն հազիվ 50 տնվոր փոքրաթիվ հայ ժողովուրդը։

Հաջորդ օրը, պայմանաժամը լրանալեն առաջ արդեն հազար ոսկին վճարած էր Իթթիհատի լիազորին։ Իսկ այս գումարին կեսը անձնապես վճարած էր, ըստ իր խոստման, հաճի Փեթրակի Շախյանը, ազնվասիրտ պատվական ծերունին։

Թեպետ ստուգիվ, Զանկըրիի հայությունը ասով չկրցավ վերջնականապես փրկվիլ աքսորե ու մահվանե, սակայն գոնե կրցանք յոթն ամիս ժամանակ շահիլ և անցընել մեր գլխուն վրայով արյան համատարած փոթորիկը։

Ապա թե ոչ, եթե ընդհանուր կոտորածի օրերուն զուգադիպեր մեր աքսորը, ստուգապես մեզմե ոչ ոք պիտի կրնար ազատիլ մահվանե, որովհետև մեր անցած ճամփաներեն—Յոզկատ—Պողազլյան-Կեսարիա—ո՛չ մեկ հայ աքսորականներու քարավան կրցած էր ողջ անցնիլ։

Հակառակ անոր, որ սաստկագույն շրջանին՝ փրկանք վճարելով առժամապես արյան թաթառը անցուցած էինք, սակայն մեզմե ամեն անոնք, որոնք իրերը իրենց բնական երանգով վերլուծելու ընդունակ էին, գիտեին, թե մեր ըրածը պարզապես ժամանակ շահիլ էր, և թե միշտ վտանգի ներքև էինք։ Միայն մեր հույսի իթթիհատի դեմ Պոլսո մեջ առաջ գալիք հավանական ապստամբություն մը և կամ անգլիական նավատորմին Ծարտանելը բռնի անցնելով Պոլիսը գրավելն էր։ Ուրիշ տեղերե ո՛րևիցե հույս չունեինք։

Սեպտեմբերի վերջին օրերուն էր, երբ Զանկըրիի մնացորդ



աքսորականներես վեց հոգի ևս, ամենամե երկուքը եկեղեցական, օգտվելով կառավարության՝ Պոլսեն զատ ուղած տեղերնիս ճամփորդելու և բնակելու հրամանեն, քաջությունը կ'ունենային Զանկըրիեն մեկնելու էնկուրիի ճամփով դեպի Զմյուռնիա։

Դարձյալ կ'ենթարկվեինք ակամա ահ ու դողի, որովհետև արդարև հանդգնություն էր այնքան արյունոտ փորձերե և կոտուստներե վերջ, կրկին էնկուրիի ճամփով որևէ տեղ երթալ։

Բայց բարեբախտաբար այս անգամ իրենցմե կը ստանային նամակ. որով կ'իմացնեին մեզի, թե Զմյուռնիա մեջ գ/շեր բանտը վար դնելե վերջ, Ուշագ ղրկված էին հոն բնակելու թույլտվությամբ։

Ասոնք զինադադարի վաղորդայնին՝ վեցն ալ ողջամբ վերադարձան Պոլիս, և խանդով նվիրվեցան հանրային գործունեության, իբր անվհատ մտավորականներ։

Էնկուրիի կուսակալի փոխանորդ դահճապետ Աթրֆ՝ էնկուրիի կուսակալության մեջ գտնվող 85.000 հայությունը 9/10 մասով ջարդել տալե վերջ, այլևս ընելիք գործ մը մնացած չըլլալով սույն կուսակալության մեջ, ներքին գործոց նախարար Թալեաթի կողմե իբր վարձատրություն իր «բարվոք» պաշտոնավարության, կուսակալի իսկական աստիճանի բարձրացումով պաշտոնի կը կոչվեր Գասթեմունի, տեղը գրավելով հայերը չջարդելուն համար պաշտոնեն հրաժարեցուցված կուսակալ Ռեշիտ փաշային։

Հազիվ իմացված, թե Աթրֆ Գասթեմունիի կուսակալ նշանակված է, և մեկ քանի օրեն Զանկըրիեն անցնելով իր նոր պաշտոնատեղին՝ Գասթեմունի պիտի երթա, արդեն Զանկըրիի ամբողջ հայությունը ենթարկված էր իսկույն ահ ու սարսափի։ Որովհետև բնազդաբար կը գուշակեինք, թե Աթրֆ Գասթեմունիի կուսակալության պաշտոնին կը կոչվեր, միայն հաշիվը մաքրելու համար նաև Գասթեմունիի կուսակալության մեջ դեռ ողջ մնացած և չտարագրված մնացորդ հայության...

Այս օրերուն, հազիվ Աթրֆի Գասթեմունիի կուսակալ ըլլալու բոթաբեր լուրը լսած, ողբացյալ Տիրան Քելեկյան հուզյալ կու գար բնակարանս ըսելով՝ «Հայր սուրբ լմնցանք... Աթրֆ Գասթեմունիի կուսակալ նշանակվեր է..., մեկ քանի օրեն արդեն պիտի ձեռնարկե պաշտոնին, անցնելով քաղաքես։ Ալ մեր օրերն համրված են... կ'աղաչեմ եկեղեցի երթանք և ինծի

սուրբ հաղորդություն տուր, ա՛լ մահվան պատրաստվելու է այժմեն, որովհետև աս հրեշին ձեռքեն ալ կարելի չէ ազատիլ։

Կը ջանայի մխիթարել և քաջալերել զինքը և համոզել, թե ամեն հույս դեռ կորսված չէ... կրնանք դեռ միջոցներ խորհիլ...

Իբր պատասխան կ'ըսեր ինծի. «Հայր սուրբ դուն չես ճանչնար Թուրքը. ես 30 տարի է ասոնց մեջ եմ և Թուրք պատմության ուսուցիչն եմ երկար տարիներե ի վեր օսմանյան համալսարանին մեջ։ Աս ազգը ոճրագործ ցեղ մըն է. եթե 36 սուլթան ունեցած են, 14-ը սպանած են... Ցեղ մը, որ իր թագավորներուն չի խնայեր, մի՞թե մեզ պիտի խնայե... Ափսո՜ս, որ 30 տարի աս ոճրագործ ցեղին համար գրիչ շարժեցի և միտք հոգնեցուցի. երանի՜ թե ձեռքերս կոտրեին և ես ասոնց համար աշխատած չըլլայի..., քանի որ վերջս աս պիտի ըլլա եղեր... Գոնե դուք կը մխիթարվիք, խորհելով, թե ազգին համար աքսորվեցաք ու կը մեռնիք... իսկ ես կ'արժե՞ր որ այսքան ապերախտ ցեղի մը համար 30 տարի շարունակ աշխատեի...»։ Խորին համոզմամբ կը հայտնեի, թե ՈՐՈՇԱԾ ԵՄ ԱՄԵՆ ԳՆՈՎ ՉՄԵՌՆԻԼ, տեսնել կարենալու համար վերածնվող Հայաստանի ձերբազատված արշալույսը... Ստուգիվ ողբացյալ Քելեկյան չէր սխալեր, և կը գտնեինք կատարյալ իրականություն, երբ իր սպանութենեն վերջ կը վերհիշեինք իր նշանակալից այս խոսքերը։

Առնելով Թուրք պատմության միայն մեր օրերը, Թուրք ժողովուրդը 1876-ին սպանած էր իր Թագավորը՝ սուլթան Աբդուլ Ազիզը։ Ասոր հաջորդը՝ Սուլթան Մուրատ, հազիվ վեց ամիս Թագավորելե վերջ իբր «ԽԵԼԱԳԱՐ» գահեն բռնի վար առնելով, երեսուն երկար տարիներ Եըլտըզի դարաստանին մեջ մեկուսացյալ պալատներեն մեկուն մեջ բերդարգելած էին մինչև իր մահը՝ 1909-ը։

Սուլթան Մուրատին անմիջապես հաջորդած էր 1876-ին կարմիր սուլթանը՝ Աբդուլ Համիդ, որ արյունով գահ կը բարձրանար, երեսուն տարի արյան ծովերու մեջ կը Թագավորեր, մինչև որ ինքն ալ գահազուրկ կ'ըլլար 1909-ին՝ Սելանիկեն եկող ազատության Թուրք բանակեն։ Ապա իբր կալանավոր Սելանիկի Ալաթինի Դղյակին մեջ բանտարկվելե վերջ, 1912-ի Բալկանյան պատերազմին կը փոխադրեին Պեյլերպեյի մարմարակապ պալատը, ուր իբր գահազուրկ Թագավոր կը մնար մինչև 1916։ Օր մը հանկարծ «ոստրե ուտելեն Թունավորված է» ըսելով վերջապես հրաժեշտ կու տար իր արյունոտ կյանքին,



իր ետև ձգելով իր օրով բաժան-բաժան եղած մեծ կայսրության մը մնացորդ երկիրները իբր համատարած ավերակներու հսկա կույտ մը և սգացող ու լացող իսլամ ու քրիստոնյա և իրմե այնքան հալածված միլիոնավոր ժողովուրդներու հավիտենական անեծքը։

Սուլթան Աբդուլ Համիդի գահազրկութենեն անմիջապես վերջ, 1909-ին իթթիհատի կոմիտեն գահ կը բարձրացներ երեսուն տարի բերդարգելության մեջ, ալքոլամոլութենե շշմած սուլթան Ռեշատը, կամակատար կույր գործիքը իթթիհատի կոմիտեի ոճրապարտ բոլոր ծրագիրներուն։

Ասոր օրով տեղի կ'ունենար (1915—1918) հայության համատարած խուժդուժ սպանդը, որ հայ ցեղին բնաջնջումն էր, Թուրքիո կայսրության սահմաններուն մեջ։

Սուլթան Ռեշատի օրով 1916-ի սկիզբը, տեղի կ'ունենար գահաժառանգ Իշխան Յուսուֆ Իզզեդտինի սպանությունը՝ Էնվեր-Թալեաթ ոճրագործ կլիկին կողմե. ճիշտ գահաժառանգին հոր՝ սուլթան Ազիզի սպանման եղերական հանգամանքներուն ներքև։

Էնվեր անձամբ սպանած էր գահաժառանգ Յուսուֆ Իզզեդտինը Պալմոմճի կայսերական ագարակին մեջ, Եըլտըզի պալատեն հազիվ 1/2 ժամ հեռու մեկուսացած վայր մը, ուր լարված էր Թակարդը, խնամով պատրաստված իթթիհատական ծրագրի մը համաձայն։ Ապա լրագրաց տրված պաշտոնական հայտարարությամբ մը կը ծանուցվեր, թե «ածելիով գահաժառանգ իշխանը իր աջ բազկերակը կտրելով անձնասպան եղած է խելագարության նոպայի մը մեջ...»։ Պատմական ճիշտ նույն բացատրությունը, որ գործածված էր գահաժառանգին հոր՝ սուլթան Ազիզի սպանման ատեն 1876-ին... Պատմությունը կը կրկնվեր։

Էնվեր այս սպանությունը, ինչպես վերն հիշեցինք, անձամբ կատարած էր, որովհետև գահաժառանգ իշխան Յուսուֆ Իզզեդտին անձամբ այցելելով Դարդանել 1915-ի գարնան, երբ անգլ. և ֆրանս. միացյալ արմադան իր ամենասաստկագույն հարձակումները կ'ըներ նույն նեղուցին ամրություններուն դեմ, ի տես հազարավոր մեռյալ Թուրք զինվորներու դիակներուն բացականչած էր. «Դարդանելը Թուրք բանակին գերեզմանն է...»։ Ասոր վրա գահաժառանգ իշխանը պատերազմական նախարար

Էնվերին ատրճանակով սպառնացած էր հակաճառության մը միջոցին։ Այս դեպքեն մեկ քանի ամիս վերջ ունեցած էր այս սպանությունը։

Ոչ-Եմն քառասուն տարվան կարճ ժամանակամիջոցի մը մեջ իրարու հաջորդած հինգ սուլթաններեն միայն մեկը, սուլթան Ռեշատ, իր բնական մահվամբ մեռած էր։ Իսկ մնացյալները զոհերն եղած էին իրենց ցեղին ոճրապարտ հակումներուն։ Իսկ արդի սուլթանը չենք կարծեր, որ ավելի բախտավոր ըլլա իր վախճանի մասին, քան իր եղերաբախտ նախորդները...

Այո՛, ողբացյալ Քելեկյան բնազդաբար իր մատալուտ մահը կը զուշակեր... և միշտ կը կրկներ, թե ա՛լ փրկվելու աշխատիլը անօգուտ է... քանի որ Աթրֆ Գասթեմունի կու գա, ուրեմն ամենքս ալ կորսված ենք... այլևս ուշ է փրկության ո՛րևէ նոր ձեռնարկ ընելը...։ Զարաշար կը զղջար, որ մեկ քանի շաբաթ առաջ Ջանկըրիեն մեկնող մեր վեց խիզախ ընկերներուն չէր ուղեկցած. միշտ հուսալով, որ իր կինը պիտի կրնա զինք փրկել և Պոլիս դարձնել... Ի դեպ է հիշել հոս, որ ողբացյալ Քելեկյան հազիվ Ջանկըրի ժամանած, շուտով կենտրոնին հրամանով Պոլիս դարձող առաջին 6 հոգինոց խումբին հետ, իրեն ալ հրաման եկած էր ներքին գործոց նախարարեն՝ Պոլսեն ի զատ ուզած տեղը մեկնելու և բնակելու։ Սակայն չէր ուզած հեռանալ, միշտ հուսալով, որ իրեն հնար պիտի ըլլար դառնալ Պոլիս...։ Նույնիսկ մեզի հետ կրկին իրեն ալ թույլտվություն եղած էր Պոլսեն զատ ուզած տեղը երթալու, բայց միշտ համառած էր մնալ Ջանկըրի, մինչև որ ստանար իր կնոջ ջանքերուն շնորհիվ Պոլիս դարձի վերջնական հրամանը...

Ողբացյալ Տիրան Քելեկյանի այս մահաբույր հոռետեսությունը՝ արդարև մեկ քանի շաբաթ վերջ դժբախտաբար իրականացավ հետևյալ եղերական պարագաներու մեջ։

Երբ Աթրֆ այս օրերուն Ջանկըրիեն կ'անցներ Գասթեմունի իր պաշտոնին երթալու համար, ողբացյալ Քելեկյան, հակառակ տված խորհուրդներուս փութացած էր այցելել Աթրֆի, որը ողբացյալը տեսնելուն բացականչած էր. «Քելեկյան էֆենտի, դեռ դուք հո՞ս կը մնաք...»։

Որով ըսել կ'ուզեր անշուշտ՝ «Ամենքը սպանվեցան և դու ի՞նչպես դեռ ողջ մնացեր ես կամ քեզ ողջ ձգեր են...»։

Աթրֆ Գասթեմունի ժամանելով կուսակալական պաշտոնին հազիվ ձեռնարկած, հրամանը կը ղրկեր Ջանկըրիի կառավարչին,



ձերբակալելով Քելեկյանը ղրկել Տիգրանակերտի պատերազմական ատյանը դատվելու համար...

Իսկ մենք քանիցս արդեն արյունոտ փորձառությունը ունեցանք ճշտելու, թե ի՞նչ ըսել կ'ուզվեր այս բանաձևով...

1915 հոկտմ. 12-ին շաբաթ օրը, երբ աշնանային գեղեցիկ օդեն օգտվելով, մնացորդ աքսորականներս հավաքված էինք գետափի սրճարանը սպանված ազգին և մեր հուսակտուր վիճակին վրա ողբալու, հանկարծ երկու ոստիկաններ գալով կը հարցնեին մեզի՝ «Քելեկյան էֆենտին ո՞վ է, ոստիկանատունեն զինք կ'ուզեն, պիտի տանինք...»։ Ողբացյալ Քելեկյան բոլորովին տժգունելով «երթամ, հիմա կու գամ...» ըսելով մեզմե կը մեկներ երկու ոստիկաններուն հետ դեպի պահականոց։

Իսկ մենք տարակույս չունեինք, որ նա կ'երթար անդարձ, իր ալ մահվան ժամը վերջապես հնչած էր...

Ողբացյալ Քելեկյան հազիվ պահականոց հասած, ոստիկանապետը պաշտոնական բառերով կ'ըսեր. «Քելեկյան էֆենտի Ձեզի համար ձի մը պատրաստված է արդեն, 2 ոստիկան զինվոր ալ կը սպասեն ուղեկցելու համար Ձեզ. հրամմեցեք ձի նստելու և մեկնելու անմիջապես, որովհետև Պոլսեն հրաման եկած է Ձեզ ղրկելու»։

Արտակարգ ջանքերով հազիվ կես ժամ ժամանակ կը տրվեր, հեռագրատուն երթալով Պոլիս իր կնոջ հեռագրելու և գոնե անհրաժեշտ մեկ քանի ճերմակեղեն կտորներ հետն առնելու։

Ամեն անոնք, որ կ'երթային հուղարկ ողբացյալ Քելեկյանին, կառավարական շենքին մոտ, յուրաքանչյուրին հետ համբուրվելե վերջ, կ'ըսեր արտասվելով՝ «Մեր սպանված ընկերներուն նման ես ալ կ'երթամ հավերժանալու, աղոթեցեք ինծի համար և կ'աղաչեմ կնոջս և զավակաց իմացուցեք մեկնումս...

Վերջին ակնարկ մը ևս, և ահա երեք ձիավորներ կ'անհայտանային ողջերթ մաղթողներու տեսողության հորիզոնեն, մեզ կրկին խորասուզելով մահաբույր մտածումներու մեջ։

Մինչդեռ տարաբախտ Քելեկյանին լուր կը ղրկեի, թե ո՞րչափ դրամի որ պետք ունի հայթայթեմ, նա կը պատասխաներ «Ունեցածս առայժմ կը բավե. Զորում հասնելուս Պոլսեն բերել կու տամ...»

Բայց երբ վերջին վայրկյանը կը հասներ մեկնելու, նա այլևս բնազդաբար կ'ըմբռներ, որ դեպի գերեզման կ'երթա և

կ'ըսեր իր նշանակալից վերջին խոսքերը, մարգարեական ոգի-ով մը։

Ողբացյալ Քելեկյանի մեկնումեն մեկ քանի տասնյակ րոպե վերջ, Թուրք պաշտոնյաներ, որոնք Քելեկյանի աշակերտած էին Պոլսո համալսարանին մեջ, կ'ըսեին մեզի. «Քելեկյան էֆենտին ալ ղրկվեցավ Տիգրանակերտի պատերազմական ատյանը...»։

Ա՛լ տարակույս չկար, որ մեր տառապանքի հանրածանոթ ընկերն ալ դեպի վերահաս մահ հուղարկ ձգած էինք։

Երկու շաբաթ վերջ Զանկըրիի Ռեժիի Թուրք տնօրենը, որ ողբացյալին աշակերտներեն մեկն էր, հանդիպելով մեր աքսորական ընկերներեն մեկուն, կ'ըսեր դիվային քմծիծաղով մը, որ արտացոլացումն էր իր ներքին գոհունակության. «Աստված ձեզի օրեր տա... խեղճ Քելեկյան էֆենտի Սեբաստիո մոտ Գըզըլ ըրմաքի կամուրջեն անցած ատեն հանկարծ խելագարելով կամուրջեն գետը կը նետվի, և հակառակ հետևորդ ոստիկան զինվորներուն ջանքերուն՝ կ'անհայտանա գետի հորձանքներուն մեջ...»։

Ողբացյալ Քելեկյանի աշակերտ և բարեկամ Սեբաստիո ոճրագործ կուսակալ Մուհամմետի հրամանով, սպանած էին Թուրք սերունդին առաջդիմության 30 տարի գրիչ շարժող Քելեկյանը Այիս գետի կամուրջին մոտ, այսպիսի եղերական վախճանի մը ենթարկելով ռամկավար կուսակցության պետը, իր անունը մեկ քանի «ցանկերու» մեջ գտնվելուն համար...

Սպանման լուրը տարածվելե վերջ, Զանկըրիի կառավարչին որդին մտերմաբար տեսնված մեկ քանի հայերու ըսած էր անվերապահ կերպով. «ԻԹԹիհատի կենտրոնական կոմիտեն սպանել տվավ Քելեկյանը, որովհետև եթե ողջ ձգվեր, պատերազմեն վերջ՝ բնականաբար ես առավել ոխերիմ հակառակորդ մը դառնալով ԻԹԹիհատի կոմիտեին, անշուշտ սարսափելի Թունելից գրիչ մը պիտի գործածեր ասոնց դեմ... շարիքը ինքնին մեջտեղեն վերցավ մեկ անգամեն...»։

Այլևս ոչ ոք մեզմե ի վիճակի էր քննելու կամ ճաշելու, ոչ ոքիս մոտ ախորժակ մնացեր էր, որովհետև մահվան շարունակական մղձավանջը մեզի կը սպառեր պարզապես, առանց բոցի կը մխայինք, առանց վառելու կը հատնեինք...

Այս օրերուն Կարնեն դեպի Պոլիս անցնող Թուրք ԻԹԹիհատական երիտասարդ հարյուրապետ մը, Զանկըրիի մեջ հանկարծ պատահաբար հանդիպելով մեր աքսորական ընկերներեն



մեկուն, որուն հետ Պոլսեն ծանոթ է եղել վաղուց, ի պատասխանի մեր ընկերոջ, բուռն հետաքրքրութենե շարժյալ ըրած հարցումներու՝ կ'ըսե ի մեջ այլոց. «Տեսա՞ք, հին պատմական ազգ մը երկու ամսվան մեջ բնաջինջ ըրինք...»[1]։

Ամեն Թուրք, ի՛նչ կուսակալության ալ պատկաներ և հին սերունդեն թե նոր սերունդեն ըլլար, պարծանոք ամեն տեղ կը հիշեին, թե հայ ժողովուրդը բնաջինջ ընելով հիմեն կարգադրած էին արդեն (էրմենի մեսելեսին) հայկական հարցը։

Մեր սուգը և խուճապը կը կրկնապատկվեր՝ Զանկըրիի մոտակա վայրերու կամ քաղաքներու ու գյուղերու հայերու կոտորածներուն մանրամասնությունները լսելով նույնիսկ ոճիրը գործողներեն, որոնք, ինչպես ըսինք, հոխորտանոք կը պարծենային իրենց գործած անլուր ոճիրներուն վրա։

Ի մեջ այլոց Սունկուրլուեն Թուրք երիտասարդ մը Զանկըրիեն վաղնջական հայ բարեկամի մը կը պատմե, թե ինք Թուրք խուժանին հետ հեռևած էր սպանդ տարվող հայ կանանց և աղջիկներու քարավանի մը, և դպրոցավարտ հայ օրիորդի մը համակրելով ուզած էր զայն փրկել. ստույգ մահվանե, առաջարկելով, որ իսլամությունը ընդունելով իրեն հետ «նիքյահ» ըլլա, այսինքն ըստ իսլամական կրոնական օրենքի ամուսնանա։ Իսկ հայ օրիորդը կը պատասխանե խրոխտ կերպով. «ես փոխանակ իսլամ ըլլալու, դուն հայ եղիր և քեզ առնեմ...»։ Այս հանդուգն պատասխանին վրա Թուրքը կրկին փորձեր կ'ընե համոզելու գեղեցիկ հայ օրիորդը, բայց անկարելի ըլլալով տարհամոզել կը հեռանա մոտեն, և ապա Թուրք մսագործներ պառկեցնելով գետին, իրենց ծունկին ներքև թշվառ հայ անմեղ կույսին կուրծքը ճնշելե վերջ, ոչխարի նման գլուխը կը կտրեն, զանազան շարշարանքներ տալե և լլկելե վերջ։ Ասով ալ չբավականանալով՝ անշունչ մարմինը իսկ կը խոշտանգեն և դանակով մաս առ մաս կ'անդամահատեն, և չեն կրնար դեռ հագեցնել իրենց վրեժը, որովհետև քաջությունը ունեցած էր այսպիսի հանդուգն պատասխան մը տալով անարգելու իսլամ կրոնն ու ցեղը...։ Ահա անմահ դրվագ մը հայ կույսերու մարտիրոսագրութենեն, որ կը գերազանցե նոյնիսկ հայ եկեղեցվո տոնախմբած հռիփսիմյան և գայանյան կույսերու նահատակությունն և արժանի է ապագա իրերահաջորդ բո-

1. «Ինչե՞ պիր էսկի միլլէթ իքի այ զարֆնտա մաֆ իսթիք»։

լոր հայ սերունդներու սրբությամբ օծուն հավերժական հիշատակությանը և օրհնությանը։

Գերագույն ընդվզումով մը՝ վերջին փորձ մը կ'ուզեի ընել երեք ընկերներու հետ— ուսուցիչ Ս., դոկտ. Մ. Ք. և Մկրտիչ անուն կտրիճ երիտասարդ մը,— երեքն ալ դաշնակցական,— գաղտնապես մեր աքսորավայր Ջանկըրիեն փախչելու սև ծովու եզերքը Ինեպոլու, Գասթեմունիի նավահանգիստը, լաստերու առագաստանավով մը մահառիթ փորձ մ'ընելու կա՛մ Բաթում և կա՛մ Վառնա, կամ ո՛ւր որ ծովու և հովու հոսանքները մեզ նետեին։

Որովհետև Սև ծովն շատ ավելի համբավյալ ահավոր իր փոթորիկներովն գութ ու կարեկցություն ուներ և նվազ մահառիթ էր, քան թուրք ժողովուրդը՝ սուլթանեն սկսյալ մինչև գյուղացի անմեղ ու բարի կարծված թուրքը։ Որովհետև ասոնց ամենքին մատներեն հայու անմեղ արյուն կը վազեր, և դեռ արյան իրենց ծարավը հագեցած չէր, արյունռուշտ կատաղի վագրերու նման։

Մեր այս ծրագիրը գործադրել կարենալու համար հանդուգն դոկտ. Մ. Ք. գաղտնապես և գիշերով, Ջանկըրիի փոստի թուրք տնօրենին վճարյալ համամտությամբը, փոստին հետ ձիով կ'ուղարկեինք Գասթեմունի, որ 24 ժամ էր, անտի ևս Ինեպոլի մեկնելու համար, որ նույնպես 24 ժամ էր, և այս մասին մեր ծրագրին օժանդակելու նպատակով։ Իբր նախկին առաջնորդ Գասթեմունիի վիճակին, վաղածանոթ և վստահելի բարեկամներու ևս հանձնարարականներ տված էի։ Սակայն դոկտ. Մ. Ք. դժբախտաբար Գասթեմունի ժամանելեն մեկ քանի օր վերջ կը ձերբակալվեր, ու շնորհիվ տեղվույն ոստիկան զինվորներու հրամանատարին բարյացակամ միջամտությանը, կը փրկվեր Տեր Զոր աքսորվելե։

Ապա դոկտ. Մ. օսմ. բանակի մեջ իբր բժիշկ հարյուրապետի աստիճանով պաշտոնի կոչվելով, Ջանկըրիեն անցնելով կ'երթար Էնկուրի և Գոնիա. այսպեսով մեր փախուստի հանդուգն ծրագիրն ևս սկզբնական քայլերուն մեջ իսկ ձախորդության կը դատապարտվեր։

Ասոր վրա փախուստի ծրագրին համախոհ ընկերներեն Ս. աքսորական ուրիշ դեղագործ ընկերոջ մը հետ, կաշառելով տեղվույն ոստիկանապետը հաջողեցան ճամփորդության պաշտոնագիր մը ձեռք բերել։ Որուն մեջ փոխանակ ներքին



գործոց նախարարության մեզ տված թույլտվության համաձայն գրելու «Պոլսեն ի զատ ուզած վայրերնին կրնան մեկնիլ» զանց եղած էր «Պոլսեն ի զատ» երկու բառերը, որով պաշտոնագրին իմաստը գլխովին փոխվելով հաջողեցան Պոլիս երթալ։ Բայց ժամանակ հետո կրկին ձերբակալվելով Տեր Զոր աքսորվեցավ մեկը. սակայն Գոնիայի մեջ կրցավ թույլտվություն ստանալ մնալու, և զինադադարի վաղորդայնին ևս ողջամբ Պոլիս դառնալու բախտն ունեցավ։

Հակառակ մեր ամենուն հոռետեսության, օրերն ու ամիսներն կ'անցնեին, սակայն Գասթեմունիի կուսակալ արյունռուշտ Աթրֆ շատ մեզմով զբաղած ըլլալ չէր թվեր։ Որովհետև Աթրֆ՝ Գասթեմունիի կուսակալության հայերը առանց ո՛րեէ արգելքի տեղահան և աքսոր ընելու հող պատրաստելու համար նախօրոք, սկսած էր իր շուրջը գտնվող արգելիչ տարրերը պետական բարձր և ազդեցիկ պաշտոնյաներեն, հետզհետե զանազան պատրվակներով հեռացնել։

Աթրֆի հեռացուցած ազդեցիկ պաշտոնյաներեն առաջինը կ'ըլլար, ոստիկան զինվորներու Գասթեմունիի կենտրոնական Ջերքեզ հրամանատարը, որ բացահայտորեն արգելք կ'ըլլար հայերու տեղահանության և աքսորին։ Աթրֆ այս հրամանատարեն գաղտնի հրաման տված էր դեպի Ջոր աքսորելու Գասթեմունիեն 6 ժամ հեռու գտնվող Թաշքեոփրուի 150 տան մազագործ հայերը։ Բայց ասոնք 4 ժամե ի վեր ճամփա ելած ըլլալով հանդերձ հայոց բարեկամ այս ազնիվ ջերքեզ հրամանատարը, զայրացած, որ առանց իր գիտության այսպիսի կարևոր կարգադրություն մը եղած է, և առարկելով, որ աքսորական հայերու փախուստն արգիլելու համար ընկերակցող ոստիկան զինվորները առանց իր հրամանին չեն կրնար քայլ առնել, հրամայած էր իսկույն իրենց տուները վերադարձնել արդեն ճամփա հանված հայերը, մասնավոր հեծյալ ոստիկան զինվորներ իբր պատգամատար ղրկելով դեպի 850 երկսեռ անձերեն բաղկացած աքսորական հայերու այս փոշեթաթավ հսկա քարավանը։

Ավելորդ է հիշել այն անպատում ուրախությունը, զոր ունեցան մահվան առաջնորդվող այս քարավաններու հայերը հրաշքով հանկարծ իրենց տուները դառնալուն համար։

Նույնպես այս հրամանատարը հաջողած էր վերադարձնել իրենց տուները այն 40-ի մոտ հայերը, որոնք Աթրֆի հրամանով և

հանդերձ ընտանյոք 8 կառքերով և ոստիկան զինվորներու հսկողությամբ աքսորված էին Էնկուրի, անտի առաջ տարվելու համար դեպի Զոր։

Երբեք չենք մոռնար Զանկըրրիի մնացորդ սակավաթիվ աքսորականներս այն սև օրը, որ Էնկուրիեն իրենց տուները վերադարձվող աքսորականներու կառքերը հանկարծ կանգ առին Զանկըրրիի եկեղեցիին առջև։

Երկու շաբաթվան մեջ արդեն 14 անձ զոհ տված էին բանտին մեջ բծավոր թիֆուսի, մեկ քանին ալ հիվանդ ինկան Զանկըրրիի մեջ ու մեռան։ Ասոնցմե վարակվելով վախճանեցավ նաև տեղվույն Տ. Սիմոն քահանան։ Եվ երբ ողբացյալ քահանային դագաղը կը փոխադրեինք անձայն, անշշուկ քաղաքեն դուրս այդիներու կողմ գտնվող հայոց գերեզմանատունը, թուրք տղայք հուղարկավորներս քարի կը բռնեին։ Իսկ մենք անձնապաշտպանության միջոցներե և իրավունքե այնքան զրկված էինք, որ երանի կու տայինք հանգուցյալ քահանային, որ բնական մահվամբ մեռավ և ազատեցավ, արժանանալով գոնե հողակույտի մը։

Մինչ մենք գիտեինք, որ և ոչ իսկ հողակույտ մը պիտի կըրնայինք ունենալ երկրի վրա... մեր նահատակված տառապանքի ընկերներուն նման։

Իսկ մենք Զանկըրրիի դեռ ողջ մնացած ափ մը հայությունս, և աքսորի ու մահվան հերթի սպասողներս, սարսափով կը տեսնեինք 48 ժամվան ճամփա կառքով աքսոր գնացող և վերադարձող հայերու կյանքերու կոտորակումը։ Ինքնին կը տարվեինք խորհելու, թե երբ օր մը կարգը գար մեզի աքսորի ցուպը առնելով մեկնելու դեպի Զոր, ի՞նչ պիտի ըլլար թշվառներուս վիճակը։ Քանի՞ մեզմե արդյոք պիտի կրնար տոկալ ամիսներ տևող տաժանակիր այս ճամփորդության և ողջ պիտի կրնար մնալ։

Եթե նույնիսկ արյունոտ ճամփաներու վրա մեզ ևս, մեր տարաբախտ ցեղակիցներուն նման, կացիններու ներքև շարշարալից մահով ջղակտոր չի հանեին իսկ։

Արդարև՝ վաղուց ընտելացած էինք անողոք մահվան գաղափարին հետ, այո՛, մահվան վրա այնքան գիշեր ու ցերեկ մտածած էինք, որ այլևս մահը երկյուղ չէր ազդեր մեզի բնավ։ Միակ մեր փափագը այս էր, որ մեր մահը շարշարալից չըլլար գոնե։ Ինչպես սովոր էին ընել հայության մեծ ու փոքր, պաշտոնական և անպաշտոն վայրագ թուրք դահիճները, շարաշար խոշտանգելով հոգեվարքի հոնդյուններով արյան ճապաղիքներու մեջ թալթլկող իրենց անմեղ զոհերը, սոսկ հրեշային զվարճության մը համար...

Գասթեմունիի կուսակալ արյունկզակ Աթըֆ, իբր փոխարինություն ոստիկան զինվորներու հրամանատարին հայապաշտպան այս քաղաքականության, Պոլսեն հրաման բերել կու տար, որով այս ազնիվ հրամանատարը, իբր Տիգրանակերտի, Խարբերդի և Մուսուլի ոստիկան զինվորներու ընդհանուր քննիչ կը ստիպվեր մեկնելու դեպի Տիգրանակերտ։

Պաշտոնի այս բարձրացումը ուրիշ բան ըսել չէր, եթե ոչ ոստիկան զինվորներու արդարակորով այս շերքեզ հրամանատարը, աքսորելով Տիգրանակերտի նման ծայրագավառ մը, գլխավոր արդելքը վերցնել Գասթեմունիի կուսակալության հայերու աքսորին և բնաջնջումին...

Այս հրամանատարին հեռացմամբ այլևս տարակույս չկար, որ համրված էին մեր օրերը..., և օրեօր կը սպասեինք մեր ևս մահվան զանգակին ահավոր զողանջին..., որ ավա՜ղ չուշացավ սակայն...

# Գ. ՄԱՍ

## ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Մահվան քարավանը դեպի Զոր 1916 փետրվարեն մինչև 1916 ապրիլ

### 17.

### ՀԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 1916-Ի ՍԿԻԶԲԸ

*Անցավ վերջապես ահավոր տարին 1915-ի, իր ետև ձգելով համատարած սուգ ու «շիվան», արյուն ու արցունք։ Հայաբնակ շեն ու շող բոլոր քաղաքներու ու գյուղերու մեջ, միայն մնացին մխացող ավերակներ, ու հայ անտիրական հազարավոր եկեղեցիներու ու վանքերու վրա միայն վայող բուեր...*

*Հայ ազնվական և աշխատասեր ժողովուրդը, որ իբր արհեստավոր, արվեստավոր և վաճառական, հինգ դարեր շարունակ ՕՍՄԱՆՅՈՒՆԸ եղած էր թուրք ընդարձակածավալ պետության, մահվան դատապարտված և մահավճիռը ևս գործադրած էին, մինչդեռ ռուս, պարսիկ, հունգար, ռումեն, բուլղար՝ հաբեշ և Հնդկաստանի և Եգիպտոսի մեջ ևս անգլիացի, զանազան պետություններ ամեն առանձնաշնորհումներ պարգևելով, իբր ստեղծագործ և շինարար ժողովուրդ, ազատ ասպարեզ տված էին հայուն։ Բարձրացնելով հայը Եգիպտոսի և Հունգարիո մեջ մինչև նախարարապետություն, Ռումանիո մեջ մինչև ծերակույտ, ու Մեծին Ռուսիո մեջ մինչև միահեծան գիկտատորություն հանձին Լորիս Մելիքովի։*

*Մինչդեռ թուրք հեռատես և իմաստուն սուլթաններ հայուն շինել տված էին իրենց Բոսֆորի կայս. բոլոր պալատներն, գղյակներն ու հռչակավոր մզկիթները։*

*Մինչդեռ թուրք կասկածամիտ սուլթաններ իսկ վերջին դարուն, հայուն միայն վստահած էին պետական և անձնական իրենց ամբողջ գանձը և պետության փողերանոցը։*

*Վեց ամսվան մեջ թուրք ժողովուրդը, իր պաշտոնական և անպաշտոն բոլոր պետերով ու դասակարգերով, սկսյալ սուլթաններն, նախարարներեն, թուրք խորհրդարանի անդամներեն, ծերակուտականներեն, մինչև գավառի կուսակալներն, կառավարիչներն և գյուղապետները, միացած թուրք արյունածարավ խաժամուժ ամբոխին, ի գլուխ հանեցին այն սարսափելի հրեշային ծրագիրը, որ իրենց բոլոր նախորդները չէին համարձակած ոչ թե գործադրել, այլև ոչ իսկ մտածել։*

*Տարված համիսլամական և համաթուրանական երազատես գաղափարներով, կը կարծեին հայը բնաջնջելով՝ օսմ. կայսրությունը Միջերկրականեն մինչև Ուրալ կամ Անդրկովկաս հսկա պետություն մը դարձնել։ Մինչդեռ իրենց նստած ճյուղն էր որ կը կտրեին, և հայը բնաջնջելով օսմ. կայսրության հիմը կը փորեին... Ամեն անգամ որ հայ մը կը սպանեին, օսմ. պետության արդեն խարխլած հսկա շենքեն սրբատաշ քար մըն էր, որ կիյնար, խախտելով նաև շենքն ի հիմանց...*

*Հազար հինգ հարյուր տարվան հայ պատմական ամենաարյունոտ էջերն, արդեն լեցված են իսլամական կրոնի հուրով ու սրով տարածման ահավոր նախճիրներովը Պուղայի, Անին կործանող Զարմազանի, Ճինկիզխանի, և մանավանդ Կաղթիմուրի (Լենկթիմուրի)։ Իսկ վերջին անգամ միջին դարուն վերջերը հայ պատմիչները կը հիշատակեն հարյուր հազարավոր հայ ժողովուրդներու կորուստը Շահապասի օրով։*

*Բայց պարսից այս թագավորը ոչ թե ջարդելու և բնաջնջելու համար ըրավ, այլ վերահասու ըլլալով հայ ժողովուրդի ստեղծագործ և շինարար աշխատասեր հանճարին, ուզեց գաղթեցնել և փոխադրել իր երկիրը և հայերով զարգացնել իր հետամնաց ու աղքատ թագավորությունը։ Նույնիսկ ս. Էջմիածնի Մայր տաճարի քարերն ալ որոշեց հետը տանիլ և հոն իր մայրաքաղաքին մեջ շինել հայության նոր սրբավայր մը։ Որպեսզի հայության սիրտն ու աչքն իր ետին չմնար...*

*Բայց երբ հանկարծ թուրք բանակն եկավ արձանացավ իր առջև, խուճապով նահանջին ատեն իսկ չուզեց հրաժարիլ իր գանձեն, որ հայն էր, և 400.000 հայ երկսեռ ժողովուրդ իր բանակին առջև ձգած, ոչխարի հոտերու նման քշեց դեպի Սալմասա իր երկրին սահմանները։*

*Թուրք բանակեն հետապնդված երբ աճապարանքով Աբաքա գետեն անցնելին, առաջապահ ժողովուրդի հազարավոր դիակ-*

ներով գետը ծածկվեցավ և բնական կամուրջ դարձավ վերջին եկող ժողովուրդին, որով կեսն փչացավ այսպես։

Ասիկա պետք տեսանք հակիրճ կերպով հիշատակելու, որպեսզի բաղդատության եզր մը ունենա ընթերցողը վերջին աս կազմակերպված ահավոր նահատակության, որ գլեց անցավ ԲՈԼՈՐ ԴԱՐԵՐՈՒ ՆԱԽՃԻՐՆԵՐՆ ՀԱՎԱՔԱԲԱՐ։

Եթե շատ դարերե ի վեր հայ ժողովուրդին գործած բոլոր ծառայությունները մեկ անգամեն մոռցվեցան, բայց կույր ըլլալու էր չտեսնելու համար հայուն այն անփոխարինելի բոնադատյալ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, նույնիսկ համաշխարհային պատերազմի չորս տարիներու ամբողջ ընթացքին։ Իր զինվոր, արհեստավոր (երկաթագործ, կոշկակար, հյուսն, դերձակ, թիթեղագործ), իր բժիշկ, անասնաբույժ, դեղագործ, հայթայթիչ։ Իր երկաթուղիի, հեռագրի, հեռաձայնի պաշտոնյա և գործավոր իրենց ԿՅԱՆՔԸ ՓՐԿԵԼՈՒ ՀՈՒՅՍՈՎ, առանց ո՛րևէ նյութական վարձատրության, չոր հացի մը փոխան տարապարհակ ծառայեցին։

Բայց հայ ժողովուրդին հետ հայ զինվորն ալ, բժիշկն ալ, դեղագործն ալ կոտորեցին անխնա, հաղիվ թե այլևս անոնց պետքն զգալի չթվեցավ իրենց։

Քաղաքներու մեջ ոչ մեկ արհեստավոր չմնաց, և կոշիկ մը կարկտել տալու համար Թուրքերը քաղաքե քաղաք կը շրջեին, Թուրք հնակարկատ մը գտնելու համար։

Հաճախ պատահեցավ, որ զինվորական հիվանդանոցներու վառարանները ձմռան սկիզբը զետեղելու միջոցին, Պոլսեն հրաման գալուն վրա, հայ ժողովուրդին հետ այս կարգի արհեստավորներն ևս տարին և քաղաքեն դուրս ձորերու մեջ սպանեցին։ Բազմաթիվ Թուրք զինվորներ ցուրտեն մեռան հիվանդանոցներու մեջ ի Սոմա, վառարան զետեղող հայերը աքսորվելուն պատճառով։ Բայց ի՞նչ փույթ, բավ էր, որ հայ մը ողջ չձգվեր. այս էր օրվան բարձրեն տրված Թուրքերու ազգային կարգախոսը...

Որովհետև հայոց մեծ դահճապետը Թալեաթ բացահայտորեն ամենուրեք կը հայտարարեր, թե «ՀԱՅՐ ՀԻՄԵՆ ՊԵՏՔ Է ՄԱՔՐԵԼ... Ասյա թե ոչ, եթե 1000 հայ մի արաստն ողջ մնա, հետո կարճ ժամանակի մեջ շուտով կը դառնան 100.000 և դարձյալ Թուրք պետության գլխուն փորձանք կ'ըլլան» կ'ըսեր։

Այսպես Թուրք ժողովուրդը, անխտիր բոլոր դասակարգերու



մասնակցությամբն, բացառություն չըլլալով նաև Թուրք կիներն, իրենց սիրտը լեցված հայու անմեղ արյան անհագ ծարավով, և ճիհատով աչքերը կուրացած, Թրքական իրենց վայրագ մոլուցքովն ու կատաղությամբն, հեհեհ արյան խնջույքի վազած ժամանակ պատահաբար իր ձեռքը ինկած կացինով, ուրագով, սղոցով, բահով, բրիչով, մահակով, սակրով զարկավ ջարդեց խողխողեց, այրեց, լլկեց բռնի իսլամացուց ծովերու, գետերու և հորերու մեջ նետեց ու խեղդեց, ողջ-ողջ թաղեց, աքսորի անվան ներքև ճամփաներու վրա և ձորերու մեջ շարաշարանոք սպանեց։ Կողոպտեց հայոց եկեղեցիներու և վանքերու անբավ հարստությունը, իր տուները տարավ հայոց հազարավոր վաճառատուներու և խանութներու միլիոնավոր ոսկիներու արժեք ունեցող եվրոպական և տեղական, կամ ներածումի և արտածումի բոլոր ապրանքները և երկիրը վերածեց կատարյալ ավերակներու կույտի մը։

Մինչդեռ 1915-ին նոր տարին կ'ողջուներ Թուրք ժողովուրդը՝ խինդ ու խնծիղի ու խրախճանությանց մեջ, տոնելով իր հրեշային ծրագրին հաջող գործադրությունը. մնացորդ եղերաբախտ բեկորներն նավաբեկյալ հայության, ծրարված անպատմելի սուգի մը սև պատանքին մեջ, լեցված մոռալուտ տարագրության, այսինքն վերահաս մահվան հոգեխռով մղձավանջով, չէր գիտեր լար ու ողբա՞ր շարշարալից մահերով նահատակված իր սիրելիներուն ու ազգին վրա, թե իր վրա...

Որովհետև սպանդանոցին մեջ զենման կարգի սպասող ոչխար մըն էր, ինք ևս վաղ թե ուշ պիտի ի սպանդ առաջնորդվեր, զի փրկության ամեն ճամփա այլևս փակված էր իր առջև։

Թշնամին անողոք էր և կը սպաներ անխնա, ցեղը անհետելու համար, իսկ կիսամեռներու և հոգեվարքներու հետ անլուր խոշտանգումներով կը զվարճանար, հագեցնելու համար իր այրող պասուքը հայու անմեղ արյան։

Թուրքիո կայսրության մեջ ապրող երկու միլիոն հարյուր հիսուն հազար հայութենեն միայն մնացած էր Պոլսո, Զմյուռնիո և երկաթուղու ճամփուն վրա մինչև Կիլիկիա քանի մը հարյուր հազար։ Քանի մը հարյուր հազար ալ դեռ մնացած էին մերկ, անոթի կմախքացած կիսամեռ բեկորներ Տեր Զորի անապատներուն և Սուրիո զանազան քաղաքներուն ու գյուղերուն և շրջականներուն մեջ։

Քանի մը հարյուր հազար ևս օգտվելով ռուս-թրքական սահմանագլխուն մոտիկութենեն, հաջողած էին անցնիլ ռուսական սահմանագլուխը և Իկտիրի ու Սարըղամիշի ճամփով ապաստանիլ Երևան, էջմիածին ու շրջակայքը։

Անշուշտ այս ընդհանուր քաոսային վիճակին մեջ անհնար էր որոշ թվեր տալու փորձեր ընել, մանավանդ որ մեկ կողմեն թուրքերը «մաքրելու» վրա էին մնացածներն ալ...

Թուրք ժողովուրդը, և մանավանդ կառավարական բոլոր մեծ ու փոքր պաշտոնյաները, իրենց տուներու շտեմարանները լեցուցած էին բնաջնջված հայերու տուներուն ավարով, ինչպես նաև հայ վաճառականներու խանութներու ամբողջ հարստությամբը։ Այո, կ'ուտեին, կը խմեին, կ'արբենային և անլուր խենչություններով վայրենաբար կը զվարճանային իրենց հարեմներու մեջ հարճության բռնադատված 10—20 տարեկան հայ պարկեշտասուն կույսերու հետ։ Կ'օրհնեին իթթիհատի կոմիտեն ու իթթիհատական կառավարությունը, որ մեկ անգամեն զիրենք տեր դարձուցած էր անհատնում հարստության և գեղեցիկ հայ կույսերու..., այսպես արժանացնելով զիրենք հազարումեկ գիշերներու արևելյան հրաշալիքներուն...

Ո՛չ մեկ թուրքի կամ առհասարակ իսլամի բերնե կը լսվեր գործված այս անլուր եղեռնին դեմ ո՛րևէ քննադատություն հայտնի կամ գոնե գաղտնի։

Ընդհակառակը, 1915-ի համատարած այս սպանդեն վերջ աշնան, հայերու դիակներու վրայեն երեք օր անցնելով Պոլիս եկող Խարբերդի երեսփոխան հոճա Սայիտ, թուրք խորհրդարանին (մեպուսան) մեջ պաշտոնապես կը հայտարարեր, թե գավառի թուրք ժողովուրդին կողմեն անհուն շնորհակալություններ իր հետ կը բերեր և բառ առ բառ կ'ըսեր «ԵՐԿԻՐԸ ԴՐԱԽՏԻ ՄԸ ՎԵՐԱԾՎԵՑԱՎ. ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԿՈՂՄԵՆ ԿՈՒ ԳԱՆՔ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ԸԼԼԱԼՈՒ ԱԶԳԻՆ ԱՅՆ ԻՄԱՍՏՈՒՆ ՎԱՐԻՉՆԵՐՈՒՆ, ՈՐ ԱԶԳԻՆ ԲԱՂՁԱՆՔՆԵՐԸ ԼԱՎԱՊԵՍ ԸՄԲՌՆԵԼՈՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ... ՊԱՏԵՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՆՈՐՀԵՑԻՆ ԱՆՈՐ...»։ Ժողովուրդ ըսածը, արդեն հայ չկար, ուստի թուրք կամ իսլամ ժողովուրդն ակնարկել կ'ուզեր. իսկ զարգացում ըսելով կը հասկնար այն անսպառ հարստությունը, որուն տիրացած էր ծույլ և քնացող թուրք ժողովուրդը, մեկ քանի ամսվան մեջ։

Ո՛չ ոք ապագա ծանր պատասխանատվության երկյուղը



ուներ։ Այս պատճառով, թուրք բոլոր մտավորականները և խմբագիրները բացահայտորեն կը ջատագովեին հայ ցեղի բնաջնջման աննախընթաց եղեռնը։ Առանց դատի ու դատաստանի կը դատապարտեին ազնիվ ու ազնվական այն անմեղ զոհը, որ ամբողջ ազգ մըն էր և ջարդված էր անխնա՝ մինչև օրորոցի անմեղ մանուկը։ Որուն զլացված էր վերջին անգամ մը լսվելու անբռնաբարելի իրավունքը, որ չէր զլացվեր նույնիսկ մահապարտներուն վերջին պահուն։

Իզո՞ւր մնացորդ ցան ու ցրիվ բեկորներս բնաջնջված հայության աչքերնիս անքթիթ հառած դեպի հյուսիս, փրկություն կը հուսայինք կովկասյան ռուս բանակներեն և մեր կամավորներեն... Մինչ ռուս բանակներն՝ դժկամակ առաջխաղացություններով և խորհրդավոր նահանջներով... կու գային ու կ'երթային, կրակի առաջին շարքերուն մեջ սպառելով հայ կամավորական գունդերը։

Իզուր կը սպասեինք... Դարդանելի նեղուցը բռնի պատռելով անգլիական ամենազոր արմադային Պոլիս գալուն... և վերջ տալուն իթթիհատական արյունոտ վարչության...

Իսկ պատերազմին բախտը արևմտյան մարզին մեջ, գերման-ֆրանսական սահմաններուն վրա, դժբախտաբար ավելի կը ժպտեր գերմաններուն, քան համաձայնական պետություններուն։

Բայց այս վերջինները, հայտարարելով որ համաշխարհային այս պատերազմը ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՌԻՎՆ է... փոքր ազգերու և ստրկության ներքև հեծող ժողովուրդներու, և ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԻՆ հաղթանակն է և հսկա պատերազմն է ընդդեմ գերման բիրտ ուժին..., հետզհետե մեծ ու փոքր բոլոր ազգերու համակրությունն իրենց կողմ կը դարձնեին... Մյուս կողմեն, փոքր ազգերու ազատագրության և արդարության դատին վերջնական հաղթանակին համար պատերազմող համաձայնական այս պետությունները՝ Արևմտյան Հայաստանը կամ Թուրքիան 1916-ի սկիզբը կտոր-կտոր իրենց մեջ սկսած էին բաժնել իբր անժառանգ մնացած երկիր։ Որովհետև չէ՞ որ 4000 տարվան ժառանգորդ ժողովուրդը մեռած ու թաղված էր... Ալ ո՞վ արգելք պիտի ըլլար իրենց հանուն իրավունքի և արդարության...

Այս օրերուն կը զուգադիպեր սպանությունը Թուրքիո գա-

հաժառանգ Յուսուֆ Իզզեթին իշխանին, ճիշտ ասոր հոր սուլթան Ազիզի պատահած եղերական ու եղեռնական հանգամանքներուն մեջ։

Իթթիհատի կոմիտեն և կամ իթթիհատական կառավարության ղեկավարներն Թալեաթ-էնվեր և ասոնց քամարիլան, տեսնելով որ գահաժառանգը դեմ է Գերմանիո հետ զինակցության ընդդեմ համաձայնական պետություններուն, բայց մանավանդ ընդդեմ Անգլիո մղված այս պատերազմին։ Ասկե զատ գահաժառանգը 1915-ի գարնան պատերազմի ամենաահավոր շրջանին, Դարդանել ըրած պաշտոնական այցելութենեն դարձին, չէր քաշված հանձախ արտահայտելու իր հակառակությունը ընդդեմ Թալեաթ-էնվեր կլիկին, ուստի ծրագրեցին և սպանեցին զինքը։ Ապա պաշտոնական մեկ քանի բառով հայտարարեցին, թե «հիմարության նոպայի մը մեջ ածելիով կտրելով իր աջ ձեռքի բազկերակը անձնասպան եղած էր...», ինչպես կանխավ հիշեցինք։

Անշուշտ, ոչ ոք հավատաց ասոր, ո՞րքան ալ իթթիհատական թուրք 8 բժիշկներ ստորագրած էին այս շինծու անձնասպանության պաշտոնական տեղեկագիրը։

Բայց կ՚ապրեինք կիկլոպյան ոճիրներու այնպիսի սարսափեցուցիչ արյունոտ շրջանի մը մեջ, որ ոչ թե անձի մը, եթե այն սուլթանն իսկ ըլլար, ո՞րևէ նշանակություն չուներ սպանությունը, այլ նույնիսկ քանի մը հարյուր հազար անձ ավելի կամ նվազ սպանված ըլլար, դարձյալ կարևորություն չուներ...

Քանի որ, եթե շնորհիվ ամենազոր գերմաններուն թուրքերը հաղթող ըլլային, արդեն ազատ պիտի ըլլային ամեն պատասխանատվութենե, և իրենք տուն պիտի տային ծանր պայմանները իրենց պարտյալ թշնամիներուն...

Իսկ եթե իրենք պարտվեին, բնականաբար մահվանե զատ տարբեր պատիժ մը չկար, որ տրվեր իրենց... Ուստի նշանակություն չուներ ոչ թե հարյուր հազար ավելի կամ պակաս, այլ միլիոն մը ավելի կամ նվազ...

Բեռլինեն դարձիս, ի պատասխանի հոգևոր ծնողիս Դուրյան Սրբազանի[1] հարցումին, թե ինչո՞ւ անխոհեմություն ընելով Պոլիս դարձած էի, ըսած էի՝ «Թուրք պետության հուղարկավորության ներկա ըլլալու համար Պոլիս դարձած էի...»։

1 Այժմ Պատրիարք ս. Եջմիածնի մայրավանուց։



Բայց ավա՜ղ, չարաղետ հակադրությամբ մը ականատես եղած էի և դեռ պիտի ըլլայի տարաբախտ ազգիս ահավոր հուղարկավորության Պոլսեն մինչև Հարավի անապատները...

Թեպետ իմ ալ հուղարկավորության ամեն օր պատրաստված կը սպասեի, անխուսափելիին առջև կամա-ակամա սեղի տվողի մը կրավորական համակերպությամբը։ Քանի որ մինչև այս ատեն փախուստի ամեն հանգուգն փորձ ապարդյուն մնացած էր, հայ եղեռնը կազմակերպողներուն աչալուրջ հսկողությամբը և գերման մեթոդներուն շնորհիվ...

Հետևաբար 1916-ի նոր տարին անցուցինք առանց ո՞րևէ շնորհավորության և հանդիսավորության։

Ինչպես ողջ մնացած ամեն հայ, նույնպես Ջանկըրիի մնացորդ աքսորական 16 հայերս, քաշված մեր շոր տախտակներով շրջապատված և առանց կահկարասիի փոքր խցիկները, հիշեցինք անցյալ երջանիկ կաղանդները և պտղազարդ սեղանները ու սիրելիները և լացինք երախաներու պես... Կ՚ափսոսայինք, որ հարգը չէինք դնեցած անցնող բարի և երջանիկ կաղանդներուն...

Երանի կու տայինք անոնց, որոնք պիտի կրնային ողջունել 1917-ի նոր տարին... Որովհետև թեպետ անտուն, անտեր, հալածական ու աքսորական, բայց մեր սրտին խոր ծալքերուն մեջ, ՍՐԲՈՒԹՅԱՄԲ ՕՇՈՒՆ ԳԱՂՏՆԻ ԽՈՐԱՆ ՄԸ ԿԱՐ... ՈՒՐ՝ ԻԲՐ ԱՐԿԱՅՇՅԱԼ, ԿԱՆԹԵՂ, ԴԵՌ ԿԸ ՊԼՊԼԱՐ ԱՎԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՂԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՇԻՋԱՆԵԼԻ ՀՈՒՅՍՆ ՈՒ ԼՈՒՅՍԸ...»։

Փափաքելով կը փափագեինք տեսնել մեռած ու դիակ կարծված հայության ապշեցուցիչ և հրաշափառ հարությունը... Մի՞թե փշալից և արյունոտ ճամփաներե Գողգոթա բարձրանալով՝ խաչված և թաղված հայությունը հարություն կրնա՞ր չառնել...

Չէ՞ որ հինգ հարյուր գերության տաժանակիր երկար տարիներու մեջ, իրարահաջորդ անցնող հայ բոլոր սերունդներ բաղձացած էին տեսնել հայրենիքի ազատությունը և ավա՜ղ չտեսած փակած էին իրենց աչքերը հավիտյան... Սակայն երազելով հայրենիքի գերության շղթաներու վաղ թե ուշ խորտակումը, միշտ երգած էին «ԱՋԱՏՆ ԱՍՏՎԱԾ ԱՅՆ ՕՐԻՑ»-ը։ Եկող ու անցնող հայ ժողովրդային աշուղներ ևս նույնպես միշտ երգած էին.

«ՁԱԽՈՐԴ ՕՐԵՐ ՁՄՌԱՆ ՆՄԱՆ ԿՈՒ ԳԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ,
ՎՀԱՏԵԼՈՒ ՁԷ, ՎԵՐՋ ԿՈՒՆԵՆԱՆ, ԿՈՒ ԳԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ...
ՓՈՐՁԱՆՔ, ՀԱԼԱԵԱՆՔ ԵՎ ՆԵՂՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԵՐԻ ԳԼԽԻՆ,
ԻՆՁՊԵՍ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՔԱՐԱՎԱՆ ԿՈՒ ԳԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ...
ԵՐԿԻՐԸ ՈՒՍՅԱԼ ՁԱՎԿԻՆ Է ՓԱՅՓԱՅՈՒՄ ՄՈՐ ՊԵՍ,
ԱՆԿԻՐԹ ՅԵՂԵՐԸ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԿՈՒ ԳԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ...
ԱՇԽԱՐՀԸ ՀՅՈՒՐԱՆՈՑ Է, ՋԻՎԱՆ, ԱԶԳԵՐԸ ՀՅՈՒՐ ԵՆ...
ԱՅՍՊԵՍ Է ԿԱՆՈՆԸ ԲՆԱԿԱՆ, ԿՈՒ ԴԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ...»։

Այո՛, խորապես համոզված էինք, թե խաչված հայության հրաշալի հարությունը անպայման պիտի գար համաշխարհային հաշվեհարդարության անմիջապես վաղորդայնին։ Բայց ա՜խ, իցիվ թե մենք հայ ահավոր նահատակության ականատես և հազվագյուտ փշրանքներս տեսնել, ողջունել և համբուրել կարենայինք ՀԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԴՐՈՇԸ, ի՛նչ ձև և ի՛նչ գույն ալ փույթ չէր թե ունենար ան...

## 18.

## ԵՐԿՐՈՐԴ ՁՇՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՊԱՏԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Վերջապես կրկնակի հապաղումներե վերջ, հասավ մեր ևս բախտորոշ այն ահավոր օրը, երբ հրամայվեցավ Ջանկըրիի մնացորդ հայության ճամփա ելլել աքսորի ցուպը ձեռին դեպի Ջոր։

Այս անգամ սակայն այլևս փախուստի ճամփա չկար մեզ համար, պետք էր համակերպեինք այն սև ճակատագրին, որ ավլած սրբած էր բովանդակ հայությունը ամբողջ Փոքր Ասիայեն։

Ամիսներ առաջ, մեր Իթթիհատի վճարած փրկանքովը միայն 6—7 ամիս ժամանակ շահած էինք։ Այս անգամ սակայն Գասթեմունիի կուսակալ Աթֆ այնպիսի խիստ հրաման էր ղրկած մեր տեղահանության մասին, որ ոչ թե չգործադրելու, այլ գոնե հետաձգելու իսկ հնարավորություն չէր մնացած այլևս։

Մեր կյանքին ամենաահավոր սև օրերին մեկը եղավ 1916 փետրվարի 12-ի օրը, երբ հանկարծ լուր բերին, թե տեղացի հայերը կը հավաքեն ու բանտ կ'առաջնորդեն, ոստիկանության



կողմեն կնքելով յուրաքանչյուր հայու վաճառատունն կամ կըրպակը։

Այլևս կասկած չկար, որ տարագրության հերթը Ջանկըրիի հայության եկած էր։ Բայց Պոլսեն Ջանկըրի աքսորականներս կային դեռ լավատեսներ, որոնք կը հուսային, թե Պոլսեն աքսորականներս պիտի կրնային ազատիլ այս երկրորդ աքսորեն, նկատելով, որ մենք ներքին գործոց նախարարութենեն մեր ուզած վայրը երթալու թույլտվություն ունեինք։

Սակայն ես միշտ հոռետես էի, որովհետև իմ պաշտոնավարություններուս մեջ, իբր գավառի առաջնորդ, իբր Պոլսո կենտր. վարչության անդամ, և մանավանդ 1912—1913-ի բալկանյան պատերազմին իբր քաղաքական կոմիտեին անդամ դառն փորձառությունն ունեցած էի ուսումնասիրելու, թե թուրքին ոչ թե բերանացի, այլ գրավոր խոստումներեն ավելի հեղհեղուկ բան չէր կարելի գտնել։ Նույնիսկ եթե թուրքերու սուլթանն ալ հրովարտակ տար, կամ ո՛րևիցե նախարար կամ կուսակալ իր ամենասիրելի զավակներուն գլխուն վրա ալ երդնուր սուտ և խաբելու համար էր...

Չի թուրք պետական մարդոց դրամագլուխն խաբելն էր, և միշտ խաբելը, և օսմ. պետությունը մանավանդ դարե մը ի վեր, խաբեբայությամբ միայն հաջողած էր իր գոյությունը քարշ տալ...

Ուստի՝ հազիվ այս ծանրակշիռ լուրը ստացած, խորապես համոզված, որ անպատճառ մեզ ալ շուտով պիտի ձերբակալեն, արդեն աճապարեցի պատրաստել վերջին կտակս, ու աքսորի կյանքիս մեջ գրի առած «ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ» երկասիրությունս թիթեղյա տուփով մը, որ կանխավ պատրաստել տված էի այս նպատակով, ամրափակելով հանձնեցի զիս հյուրասիրող ընտանիքին իբր ավանդ, որպեսզի ողջ մնացողներու կողմե գրկվի ի Մելբուրն մեծ եղբորս, որը կտակակատար կարգած էի։

Մինչդեռ առավոտուն ձերբակալած էին տեղացի հայերը, կես օրե վերջ սկսան նաև ձերբակալել Պոլսեն Ջանկըրի բերված աքսորականներս։

Իսկ ամենավերջը եկան երկու ոստիկան ձերբակալել և զիս։ Ասոնցմե մեկը, որ ծերունի էր և ամիսներ առաջ եկած էր ձերբակալելու ողբացյալ Քելեկյանը, հազիվ դուրս ելած տունեն,

1 Պաշ. իշխանության ապահովության հանձնաժողովը։

ըսաւ ինձ մեկուսի «Ոստիկանական Քոմիսերը Ձեզ տեսնել կ'ուզէ առանձին, ուստի հրամմեցեք կառավարական պալատը երթանք...»։

Արդարև անմեկնելի էր ինծի համար բարեկամական թաքուն շեշտով մ'ըսված այս խոսքերուն գաղտնի նշանակությունը։

Բայց մտածելու ժամանակ չկար. ուստի գլխիկոր հետևեցա ծերուկ ոստիկանին, որ ուղղակի առաջնորդեց ոստիկանական առաջին քոմիսերին պաշտոնատունը և ապա զգուշավորությամբ փակեց դուռն ու մեկնեցավ։

Ոստիկանական այս քոմիսերը, որ միանգամայն Զանկըրիի տեղական ամբողջ կառավարության ոստիկանական տնօրենի հանգամանքն ուներ, հայտնեց, թե ինք կրնար զիս փրկել և աքսորե ազատել, եթե գործին պահանջած կարևորության համաձայն զինքն վարձատրեի...

Այս ան քոմիսերն էր, որ կաշառքով դյուրացուցած էր մեր երկու ընկերներուն Պոլիս փախուստը։

Բայց հնարավորություն չունեի զինքն գոհացնելու, նախ որ մոտս հազիվ 3 արծաթ մեճիտ ունեի. (հին հաշվով 12 ֆրանք.) մինչդեռ ինք կը սպասեր գոնե հարյուր հնչուն ոսկի։ Արդեն հարյուր ոսկի ստանալով ծերունի Գրիգոր Օհնիկյանե (Կարա-Բա-սերայի դեմի ծանոթ ծխավաճառը) «հիվանդ է» ըսելով ձգած էր իր տունը և որ փրկվեցավ երկրորդ աքսորեն, բայց մեռավ ապա Զանկըրիի մեջ։

Երկրորդ, պետք չէր, որ Զանկըրի մնայի, որովհետև Գասթեմունիի ճիվաղ կուսակալը Աբրֆ, իրեն մտերիմ ո՛րևէ անձ մը օր մը լսելով Զանկըրի մնալս, անշուշտ զիս պիտի տարաբախտ Քելեկյանի բախտին արժանացներ։ Մինչդեռ իր իշխանության սահմաններեն հեռանալով, ո՞վ գիտե թերևս փրկության ճամփա մը գտնեի, քանի որ վաղուց միակ փրկությունս չ'փախուստիս և հետքս կորսնցնելու մեջ գտնել ծրագրած էի։

Հետևապես պատասխանեցի քոմիսերին թրքական բանաձևով մը՝ «ԳԱՏԵՐ ՆԵ՛ ԻՍԵ Օ ՕՂՈՒՐ»։ այսինքն ճակատագիրը ի՞նչ որ է ան կ'ըլլա։ Թեպետ ներքնապես Ղուրանի քարոզած կրավորական այս բանաձևին երբեք հավատացող մը չէի։ Ընդհակառակը, խորապես համոզված էի, թե ԿԱՄԵՆԱԼԸ ԿԱՐԵՆԱԼ է, ու միշտ շուրջի անձերուս կը հեղհեղեի, թե ՈՐՈՇԱԾ ԵՄ ՀՄԵՌՆԻԼ։

Ապա առաջնորդվեցա բանտ, ուր գտա Զանկըրիի բոլոր



ծանոթ հայերուն հետ նաև Պոլսեն աքսորված տառապանքի մնացորդ ընկերներս։

Հազիվ բանտ մտած, տեղեկացուցին, որ Զանկըրիի հայերուն մեծերեն 8—10 անձեր կառավարչին դիմում ըրած են իսլամանալու, հուսալով այս եղանակով փրկվիլ աքսորե, որ անխուսափելի մահ ըսել էր անշուշտ։ Այս պատճառով ալ այդ խումբը մասնավոր անկյուն մը հավաքված էր. իսկ անոնք, որ աքսորը և մահը նախապատիվ համարած էին քան կրոնափոխությունը, և 9/10-րդ մասն էր բանտարկյալ ժողովուրդին, շուրջս բոլորվեցան։

Թերևս գտնվի մեկը, որ ուզե չքմեղել կրոնափոխությամբ Տեր Զորի անջրդի անապատներուն մեջ ստույգ մահե մը ազատելու միակ հույսով եղած այս դիմումը։

Սակայն ես ավելի կը գնահատեի և չէի կրնար խանդակաթ հիացումս չհայտնել այն ժողովուրդին, որ հավու ձագի նման թևերուս տակ կամ շուրջս հավաքված էր, գիտնալով հանդերձ, թե դեպի ստույգ և անխուսափելի մահ կ'երթանք։ Գրանիտի նման կանգնած էին սպառնացող վերահաս ահավոր աղետին առջև, արհամարհելով մահն և շուզելով կրոնակից ըլլալ ան արյունկզակ ժողովուրդին, որ հայ ցեղին դահիճն եղած էր գազանային վայրագությամբ։ Շուրջս հավաքվածներեն ոմանք գաղտագողի կ'ըսեին ինծի. «Հայր սուրբ, գիտենք դեպի մահ կ'երթանք և ա՛լ փրկության ո՛րևէ հույս չմնաց մեզի համար, սակայն հանուն ազգի՝ ավելի լավ է, որ մահվան այս ճամփան երթանք և եղերական մեր վախճանին վերջապես հասնինք... քան այս շներուն հետ մեկտեղ աղոթենք... որոնք մեր ազգը ջղակոտոր հանեցին...»։

Բայց երեկոյան դեմ կառավարիչը լուր ղրկած էր ասոնց, թե կուսակալին իրենց իսլամացման խնդրանքը թեպետ հեռագրով հաղորդած է, բայց մերժման պատասխան եկած է, հետևապես «թող պատրաստվին մյուսներուն հետ վաղը ճամփա ելլելու դեպի Զոր...»։

Բոլորովին ընկճված և ամոթահար իրենց այս ձախորդ դիմումեն, և անարգված «մյուսներեն», ասոնք ալ սկսան մեկնելու պատրաստություն տեսնել։

Ոստիկան զինվորներու այն ենթասպան, որ հաջորդ օրը աքսորականներուս քարավանը պիտի առաջնորդեր դեպի Փոքր Ասիո խորերը, գիշերը գալով մեր մոտ կը հայտարարեր, թե

արտոնյալ էինք մեր ծախքով ձիեր վարձելու ճամփուն համար։ Զանկըրիցի տեղացի հայերը ամենքն ալ գրեթե նյութական միջոցներ ունենալով ձիեր կը վարձեին, իսկ Պոլսեն մեր աքսորական ընկերները արդեն վաղուց սպառած ըլլալով գրեթե մեկ տարվան աքսորի այս շրջանին նյութական սեն միջոց, գժբախտաբար զուրկ էին ոչ թե ձի վարձելու դրամեն, այլ նույնիսկ հացի դրամ չունեին, սկսյալ ինձմե։ Իսկ ազգականներես եկած դրամը տեղական կառավարությունը իբր աքսորականի հարստություն արքունիս գրված էր նույն օրերուն։

Բարեբախտաբար հուսահատ վիճակիս դարձյալ օգնության կը հասներ պատվական ծերունին, հաճի Փեթրակի Շախյանը, հետևյալ բառերով. «Հայր սուրբ, հոգ մի՛ ըներ, իմ ունեցածս քեզի ալ կը բավե. արդեն մեռնելու կ'երթանք, ա՛լ ասկե վերջ հարստությունը ի՞նչ պիտի ընենք, և որո՞ւն համար պիտի պահենք...»։ Այս ան ծերունին էր, որ մեծագույն փրկագինը վճարած էր Իթթիհատի Զանկըրիի պատասխանատու քարտուղարին և պատճառ եղած, որ մեր գոյությունն քարշ տանք մինչև այս օրը։

Ես ալ իմ կարգիս կը հուսադրեի տառապանքի Պոլսո իմ չքավոր ընկերներս, խոստանալով նույնիսկ անձնական փոխառությամբ հոգալ իրենց ստիպողական ծախքերը մահվան ճամփուն վրա...

Մյուս կողմեն կը թելադրեի այս պատվական ծերունին մտերմաբար, որ եթե հնչուն ոսկիի պահեստ ունի տան մեջ պահած, հետն առնե. թերևս կարենայինք դրամով գնել ՆԵՂ ՎԱՅՐԿՅԱՆՆԵՐՈՒ ՄԵՋ մեր կյանքը...

Տեղական կառավարությունը քոմիսերին բերնով կը հայտարարեր մեզի. թե «Ով որ ուզեր կրնար իր ընտանիքն ու զավակները հետն առնել, իսկ եթե քաղաք ձգեին՝ անոնք պիտի պաշտպանվեին...»։

Ամենքս ալ հետ խորհրդակցության որոշեցինք, որ ընտանիքները մնան Զանկըրի՝ գոնե զանոնք փրկելու համար ամիսներ տևող ճամփորդության մը հյուծիչ տառապանքներեն, և հավանական հարձակումներու ատեն գոնե խնայված կ'ըլլար աքսորականներուս տեսնել մեր սիրելիներուն տանջալից լկումներն ու շարշարալից մահերն..., մեր կրելիք տառապանքը մեզի շատ իսկ էր... ավելին ո՛րքան հնար էր՝ խուսափել ջանալու էինք։ Թեպետ Թուրքերուն խոստումներուն շատ հավատացող



չկար՝ իբր թե քաղաք ձգված հայ ընտանիքներն, կիներն ու աղջիկներն պիտի պաշտպանեին։ Անշուշտ գայլին գառին ցույց տված խնամքեն տարբեր բան մը չէր կրնար ըլլալ...

Այս պատճառով ալ, տեղացի ամեն հայ որ հաջորդ օրը աքսորի ճամփան պիտի բռներ, կաշառքով ձեռք բերված թույլտվությամբ՝ իրենց կիներն ու զավակներն բանտ բերել տալով իրենց վերջին պատվերներն, հանձնարարություններն ու կտակներն ըրին, պատրաստելով անոնց մտքերն վաղվան վերջնական բաժանման։

Բանտին մեջ՝ աղտոտության մակաբույծ անախորժ կենդանիներե տանջված անքուն և հոգիով ու մտքով լկված տառապալից գիշեր մը անցընելե վերջ, հաջորդ օրը առավոտուն արդեն կանխավ քառապատիկ գներով սակարկված ջորեպաններու 30—35-ի մոտ ձիերը բանտին առջև բերված էին։ Արդեն առաջին օրեն սկսած էին մեզ կողոպտել, հնգապատիկ վարձքեր պահանջելով, որուն իսկական վարձքը արժեքին 1/5 ջորեպաններուն պիտի երթար, իսկ ավելորդը մեր պահպանության հատկացած 10—12 հեծյալ ոստիկան զինվորներու ենթասպային գրպանը։

Սակայն մենք այնպիսի ջղագրգիռ և հուզված հոգեկան տաժանելի կացության մը մեջ կը գալարվեինք, որ ավելին կամ պակասին վրա խորհող չկար, այլ մեր ամենքին սեռուն միակ մտածումը սա էր, թե այս երկրորդ անգամ ՊԻՏԻ ԿՐՆԱՅՔՆՔ ՈՂՋԱՄԲ ԲԱՐՁՐԱՆԱԼ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՓՇԱԼԻՑ ՈՒ ԱՐՅՈՒՆՈՏ ԳՈՂԳՈԹԱՆ...

## 19.

## ՄԵԿՆՈՒՄ ԶԱՆԿԸՐԻԵՆ ՁՈՐՈՒՄ

ՅՈՒՐՏ ձմեռ էր, քաղաքին մերձակա բոլոր սարերն ծածկված էին ձյան փխրուն խավերով։ Հյուսիսային սառնաշունչ քամի մը անզոր կը դարձներ ձմեռային արևուն կիսաջերմ ճառագայթները։ Երբ 1916 փետրվար 13-ի առավոտուն կանուխ, մեզի հրամայեցին զույգ-զույգ դուրս գալ Զանկըրիի բանտին երկաթյա մեծ դուռնեն և սպասել ոստիկանապետին վերջին կարգադրություններուն, ճամփա ելլելու համար դեպի Զոր։

Մարդկային գրիչը անզոր է նկարագրելու այն աղեխարշ տեսարանը, որ դուրսը կը սպասեր մեզ։

Հազիվ բանտեն դուրս եկած, փարախ դարձող ոչխարները մայուններով դիմավորող գառնուկներու նման, իրենց հայրերուն վրա վազեցին քաղաքացի տարագրյալներուն չափահաս ու անչափահաս զավակներն ողբ ու կոծով։ Ասոնց հետևեցան աքսոր գնացողներու ծերունի մայրերն ու կիներն՝ լալահառաչ։ Ո՞չ ոք մտիկ ընել կ'ուզեր ոստիկաններու և ոստիկան զինվորներու սաստիկ արգելքները։

Ամեն մարդու համար այլևս գաղտնիք մը չէր, որ Տեր Զոր աքսորվիլ՝ դեպի անխուսափելի մահ երթալ ըսել էր։ Եթե նույնիսկ արյունածարավ խուժանե մը չջարդվեինք, և ամիսներ տևող հյուծիչ ճամփորդութենեն ողջամբ Զորի անապատներն մեզմե հասնող իսկ ըլլար, դարձյալ հոն տոթակեզ ու անջրդի ավազի դաշտերուն մեջ պիտի մեռնեինք կմախքացած ու սպառած...

Ուստի չանկըրիցի հայ ընտանիքներն կ'աճապարեին հուսկ վերջին հրաժեշտը առնել իրենց տարագրվող հոգեհատորներեն։ Ծերունի մայրեր պարանոցին պլլված իրենց աքսոր գնացող երիտասարդ զավակներուն, արհամարհելով ամեն վտանգ՝ թուրքերեն լեզվով (որովհետև չանկըրիցի հայերը թրքախոս են) լալագին կ'աղաղակեին ու կ'ըսեին. «Մենք ցավով ծնանք ու արյունքով զավակ մեծցուցինք. որ ձեզ ջղակոտոր հանեն... վա՜խ յավրում վա՜խ... աս ի՞նչ սև օրերու հասանք... ա՜խ, երանի թե ձեզ ծնած չըլլայինք...»։

Այնպիսի կսկծեցուցիչ վայնասուններով և ողբ ու կոծով այն կարգի հառաչալից խոսքեր կը բացականչեին, որ երկնքի խուլ կամարներն իբր թե վար առնել կ'ուզեին...

Թշվա՜ռ հայ մայրեր, արդյոք բոլոր ազգերուն մեջ կան ձեզմե ավելի տառապած և զավկին կսկիծը սրտին մեջ արյունոտած մայրեր...

Իսկ երիտասարդ կիներ ու պարկեշտասուն հարսներ, մեկ կողմ թողած համեստության ամեն տոհմիկ օրենք ու կանոն, գիրկընդխառնված իրենց դեպի մահ գնացող երիտասարդ ամուսիններուն, աղիողորմ ճիչերով ու հորդահոս արցունքով կ'աղաղակեին ու կ'ըսեին. «մեզ թշնամիներուն թողած ո՞ւր կ'երթաք դուք...»։

Հապա դժբախտ պատանիներ և բյուրիցս եղերաբախտ չափահաս ու անչափահաս հայ աղջիկներ ու անգիտակից փոքր



անմեղ երախաներ, ընդհանուր ողբ ու կոծեն՝ բնազդաբար ղդալով, թե ահավոր ադետի մը առջև կը գտնվին, փարած իրենց հայրերուն ոտքերուն ու փեշերուն «հայրիկ մեզ ձգած ո՞ւր կ'երթաս... ես ալ հետդ կու գամ... ինծի ալ հետդ տար...» կողկողագին ըսած ատեններին ապառաժները իսկ կը պայթեցնեին...

Սպիտակահեր ու կորաքամակ հայ մամիկներ ու մայրեր վազելով ապա մոտս, ձեռքերս արցունքոտ համբույրներով ողողելով կ'աղաչեին ու կ'ըսեին՝ «նախ Աստուծո և ապա քեզ կը հանձնենք մեր այրերն ու զավակներն. դուն տեր եղիր անոնց... ալ տեր ու պաշտպան չմնաց անոնց. վերը Աստված, վարը դուն...»։

Ո՜հ, անտանելի էր տառապանքս, միակ ողջ մնացած հովիվն էի գավառի մեջ ցան ու ցրիվ եղած ու վտարանդի հոտի մը։ Ահավոր վայրկյան, երբ գայլերեն հոշոտված անպարտ ազգի մը վերջին բեկորներուն պիտի ուղեկցեի իրենց փշալից վերելքին՝ դեպի ահավոր Գողգոթան հայության...

Բայց ո՜հ ես ալ աքսորական էի ու թափառական, ի՞նչ կրնայի ընել... եթե ոչ, միայն ականատես կենդանի վկան ըլլալ ցեղիս չարչարալից նահատակության, և եթե Տերամբ ողջ մնալ հնար ըլլար, վկայախոսն ըլլալ աս մեծ եղեռնին՝ առաջի ապագա բոլոր հայ սերունդներուն...

Գոնե կարելի ըլլար մխիթարության խոսք մ'ըսել անպատմելի սուգով շաղապատված և շուրջս խռնված հայ մայրերուն և հայ կիներուն. բայց բա՜ռ զիս ո՞վ պիտի մխիթարեր իմ անխոս վշտիս ու կսկիծիս մեջ, երբ արդեն կանգնած էի անխուսափելի մահվան սեմին առջև։

Ի տես աս հոգիտենական բաժանման առթած համատարած սուգին և աշխարումին, հոն վերը կառավարական շենքին պատուհաններուն առջև դիզված բազմագլուխ թուրք պաշտոնյաներն, դիվային ժպիտ ի շուրթն ներոնյան խրախճանությամբ կ'ըմբոշխնեին հայուն աս քստմնեցուցիչ սուգն ու վիշտն, և կային, որ քրքջալիր ծիծաղով ու «քահ քահով» կը հեգնեին անողորմաբար մեր անպատում տառապանքը...

Իսկ վարը մեզ ամենքս շրջապատած էր տեղացի թուրք երկսեռ խաժամուժ ամբոխ մը, ներքին հրեշային գոհունակությամբ մը՝ ականատես ըլլալու համար մահվան գնացողներուն և հրաժեշտի եկող հայ ընտանիքներու աղեխորով աս հուզիչ տեսարանին, կ'ըսեին բարձրաձայն իրարու՝ մեզ լսելի ընել

տալու ակներև չանքով մը «Պետութեան և ազգին թշնամիներուն վախճանը հարկավ աս պիտի ըլլար...»— Տէօվլէթ, միլլէթ ուուշմանլարըն սօնը հէլպէթ պու օրաճաղրտը...։— Իսկ ոմանք ալ բացահայտորեն կը գովեին իթթիհատական կուսակցութիւնը՝ իմա կառավարութիւնը, որ քաջութիւնը ունեցաւ վճռական մեկ հարվածով թուրք պետութիւնն ու ազգն ազատելու «ՀԱՅ ՓՈՐՁԱՆՔԵՆ»։

Եղան շատ թուրքեր, որոնք չամչցան իրենց հին առարկելի դրամական պահանջներն, գալով ուզելու աքսոր գնացող տեղացի հայերեն։ Բոլորովին անտարբեր ու անկարեկից ասոնց աղաչանքին ու պաղատանքին, թե հեռու անապատներ պիտի երթան և պետք պիտի ունենան շատ դրամի։ Չպակսեցան և Շշվառական թուրքեր ևս, որ կանխավ իրենց վիճելի եղած և ապա իրավախոհութիւնամբ կարգադրված կասկածելի կամ անիրավ պահանջները՝ բացառիկ այս առիթեն օգտվելով եկան և պահանջեցին և մինչև որ չստացան, չթողուցին թշվառներուն օձիքը։

Աս թուրքերը անոնք էին, որ տարիներով գործի իբր ընկեր կամ տուր և առի մեջ միշտ երկար տարիներով իրենց հայ բարեկամները շահագործած, ու անոնց քրտինքի արդար վաստակով հարստութիւն դիզած էին։ Այժմ մեկ օրվան մեջ երախտամոռաց թշնամիներ դարձած էին իրենց վաղեմի հայ բարեկամներուն։

Բայց երբ աքսոր մեկնող հայերը սկսան բյուր աղաչանքով իրենց օրինավոր մուրհակով պահանջները խնդրել, այն ատեն ոչ մեկ թուրք խղճահարութիւնն ունեցաւ վճարելու իր պարտքը, առարկելով, թե կառավարությունը արգելած է, և իրենք պիտի վճարեն աքսոր մեկնող հայերուն ունեցած պարտքերը միայն կազմվելիք թողյալ գույքերու «պետական հանձնաժողովներուն...»։ Հանուն վաղեմի բարեկամության, ապարդյուն անցան տարագրության գնացողներու ամեն աղաչանքները, որ ըրին իրենց թուրք պարտապաններուն։

Մեր հսկողության հատկացած 10—12 հեծյալ ոստիկան զինվորներուն և թուրք ենթասպային ուղեկցությամբ մեր քարավանը շարժեցավ առաջ. ոմանք ձիավոր, ոմանք իշավոր և ոմանք ևս ոտավոր 45—50 հոգիանոց մեր մահվան քարավանը մեկնեցավ դեպի Տեր Զոր, իր ետև ձգելով ողբ ու կոծ, վայնասուն, սուգ ու արցունք և Հավիտենական անեծք։



Ալ ավելի մեծ եղավ մեր երկյուղն ու տագնապն, երբ փոխանակ մեզ առաջնորդելու 24 ժամ միայն հեռու գտնվող Էնկուրիի կայարանը, և երկաթուղիով 5—6 օրեն տանելու մեզ Գոնիայի ճամփով դեպի Հալեպ, հանկարծ քարավանին ուղեցույց եղող ոստիկան զինվորը բռնեց դեպի Իսկիլիպի վրայով Զորում տանող ամայի և լեռնային ճամփան։

Երբ քաղաքին վերջին բանջարանոցներն կ'անցնեինք, մեր ճամփուն վրա տեսանք պառավ թրքուհի մը, ցնցոտիներով, խռիվ մազերով ու կորաքամակ։ Աս արձանացած մեր մահվան ճամփուն վրա, ձեռքերն մերթ երկինք բարձրացնելով և մերթ ծունկերուն զարնելով կը պոռար՝ իրեն հրավիրելով ամենքիս ուշադրությունը և կ'ըսեր՝ «Գահը օլսունլար, իտէն պուլուր տունեասը տբր, մահսում ահալիի էօլտիրմէյէ կէօթիրիէօրլար. կէլէն տուշման տէ եարբն պիզի պէօյլէ իտէճէք... է՞յ եափանլարատա գալմազ իշալլահ... էվլատլարըմ Ալլահ սիզին իլէ պէրապէր օլսուն...»։— Անիծյալ ըլլան, ընողաց գտնողաց աշխարհ է. անմեղ ժողովուրդը սպանելու կը տանին. եկող թշնամին ալ վաղը մեզի այսպես պիտի ընե... է՞հ ընողներուն ալ հարկավ չի մնար... զավակներս, Աստված ձեզի հետ ըլլա։

Ահա միակ սիրտացավ թուրք կինը, որ մարգարեական ոգով լիաշուրթն անեծք կը կարդար Իթթիհատի կառավարության գլխուն... Արդարև խորին տպավորություն ըրավ մեր ամենքին վրա թուրք յոթանասունոց կմախացած պառավին նշանակալից այս խոսքերը։ Իսկ ոստիկան զինվորները հեղնեցին խեղճ պառավը ըսելով՝ ցնդած է։

Անապատի ուխտավորներուս քարավանը ծա՜նր ծա՜նր կը առաջանար, և երկու ժամ վերջ արդեն բարձրացած էինք ձյունապատ լեռներ, ուր ձմեռային մրրկաշունչ ցուրտ քամին, մանավանդ իրիկնամուտին, սկսավ սառեցնել մեր մատներն ու ականջները։

Մեր քարավանին ընկերակցող 10—15 ոտավոր ընկերները չկրնալով դյուրավ քալել ցորեկը արևու ճառագայթներեն փխրուն դարձած ձյունի վրայեն՝ շատ դանդաղ կը առաջանային, հակառակ ոստիկան զինվորներու վրդովիչ աճապարանքին։

Կեսօրվան կարճ դադարե մը վերջ, ութ ժամվան ճամփորդությունե մը հետո՝ մթնշաղով հասանք վերջապես թուրք գյուղ մը, ու վերահսկիչ ենթասպային կարգադրությամբ իջևանեցանք առ ի չգոհ հարմարագույն շենքի մը՝ գյուղին խլաճ

աղութատեղին։ Որուն բոլոր ապակիներն սակայն ջարդուփշուր եղած էին, և գիշերվան կծող ցուրտն ա՛լ ավելի կը տանջեր մեր ճամփորդության դեռ անվարժ ընդարմացած անդամները։

Առավոտյան անմոռանալի մեր հուզումներն և օրվան հոգնեցուցիչ ճամփորդությունն մեր մեջ այլևս սիրտ ու հոգի չէին ձգած. ուստի հոգնաբեկ մեր մարմիններն երկարելով աղտոտ և ոջլոտ մեկ քանի փսիաթներուն վրա՝ կծկտեցանք կես քուն կես արթուն մինչև լույս, սպասելով վաղահաջորդ օրվան անակնկալներուն։

Մարմնով, հոգիով և մտքով տանջված, դժնդակ գիշեր մը անցընելե վերջ, առավոտուն շառագունող արշալույսին հետ կրկին ճամփա ինկանք ահ ու դողով։

Մեր մեջ եղած գաղտնի խորհրդակցության մը համաձայն, 30 հնչուն ոսկի կաշառք տալով համոզեցինք մեր վերահսկիչ ենթասպան, որպեսզի Սունկուրլուի ճամփով մեզ շառաջնորդե դեպի Ջորում։ Որովհետև Սունկուրլուի թուրքերը՝ իրենց բնակակից երկսեռ հայերը այնպիսի խուժդուժ մահերով սպանած էին, որ մտածելն իսկ մեզի սոսկում կ՚առթեր։ Ուստի որչափ հնար էր մոլար արահետներով և քերելով Ալիս գետը (Գրզլբրմաք) սկսանք դանդաղ առաջանալ դեպի Ալիսի նորաշեն հսկա կամուրջը, որ հազիվ միայն մեկ քանի ժամ հեռու է Իսկիլիպեն։

Երբ ժամեր քալելե վերջ հասանք Ալիս գետի ափին, տեսանք, որ հակառակ ձմռան եղանակին արդեն գետը հորդած էր, ու խուլ մռնչյունով մը, հորձանքներով և հոսանքներով թավալգոր առաջ կ՚երթար, իր հետ տանելով բազմամյա հսկա ծառերու մեծազանգված կոճղեր, արմատներ, ճյուղեր և հաճախ արմատախիլ եղած ամբողջ ծառեր։

Թեպետ ջուրը տղմուտ էր և հույժ պղտոր, բայց այլև պետք էր ընտելանայինք կենդանիներու վերջած կյանքին, և հարկ էր, որ մոռնայինք մեր հին մարդավայել սովորույթներն ու ապրելակերպերը ու խմեինք։

Մեր աքսորի ճամփուն երկրորդ օր իսկ, մեր տված կաշառքին շնորհիվ արդեն բարեկամացած էինք մեր վերահսկող թուրք երիտասարդ ենթասպային հետ, որով հաջողեցանք կարդալ ենթասպային տրված մեր պաշտոնագիրը։ Որ ուղղյալ էր թեպետ Հալեպի կուսակալին, սակայն բաց պահարանով տրված էր, որ մեր անցած ճամփաներու տեղական կառավարական



պաշտոնյաներն կարենան իրազեկ ըլլալ մեր պաշտոնագրին բովանդակությանը, և ըստ այնմ ընթացք բռնեն...

Մեր պաշտոնագիրը հետևյալ իմաստը ուներ. «ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ... ԹՎԱԿԻՐ ԵՎ... ԹՎԱՀԱՄԱՐ ՊԱՇՏՈՆԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ, ՁԱՆԿԸՐԻԻ ԱՅՍ 48 ՀԱՅԵՐԸ, ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԱՄԲ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԸ ՏԱՐԱԳՐՎԻՆ ՀԱԼԵՊԻ ՃԱՄՓՈՎ ԴԵՊԻ ՋՈՐ։ ՈՂՋԱՄԲ ԿԵՍԱՐԻԱ ԺԱՄԱՆԵԼՆԻՆ ՊԵՏՔ Է ՀԵՌԱԳՐՈՎ ՀԱՂՈՐԴՎԻ ԹԵ՛ ՁԱՆԿԸՐԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԵ՛ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ»։ «Տախբիյէ Նէզարեթը ճէշիշէսինին... Թարիխլի վէ... նօմէրօլու էմիր մուճիպ. Ջանկըրի էրմէնի ճումաթը օլուպ 48 ֆէրտ, մուհաֆազա թահթընտա Հալէպ թարիքի իլէ Տէր-Զօրա սէվգը, վէ սէլամէթէն Ղայսէրիյէ ավտէթլէրինտէ, պա թէլէկրաֆ կէրէք մէրքէզ հէօքիմէթինէ, վէ կէրէք Տախիլիյէ Նէզարէթինէ իշարը»։

Այս պաշտոնագիրը Ջանկըրիի կառավարիչը կը գրեր Հալեպի կուսակալին՝ հրամանով Գասթեմունիի կուսակալ Աթըֆի։

Ենթասպան զիս կը քաջալերեր, հայտնելով, թե մեր թուղթը շատ լավ գրված է, և վախնալու կամ սպանվելու մտահոգություն պետք չէր որ ունենայինք։

Կ՚ավելցներ միանդամայն, որ ինք իր պաշտոնին բերմամբ շատ այս կարգի «հանձնարարականներ» կարդացած էր, բայց անոնց մեջ կը պակսեին «ընդ հսկողությամբ և պաշտպանությամբ» բառերը, ինչպես նաև «ողջամբ Կեսարիա ժամանելնուն հեռագրելու» հանձնարարությունը։

Առժամապես մխիթարվելով աս չոր քաջալերությամբ, զի ամեն պարագայի տակ ԹՈՒՐՔ ՊԱՇՏՈՆԱԹՈՒՂԹ ՄԸՆ էր վերջապես, փութացինք հաղորդել քարավանին մեր ընկերներուն, փոքր-ինչ թեթևացնելու համար ՄԱՀՎԱՆ ՄՂՁԱՎԱՆՋԸ, որ կը լլկեր ամեն վայրկյան մեր միտքն ու հոգին, և կարելի չէր ըլլար վտարել մեզմե, հակառակ ամեն հուսադրիչ հայտարարություններու։

Երկրորդ օրը արշալույսին հետ ճամփա ելանք։ Բայց դժբախտաբար մեր գնացած ճամփան ավելի արահետ մըն էր, ուրկե միայն ձիով հնար էր ճամփորդել։ Որովհետև ձյունը տեղ-տեղ գաղջ արևին ներքև, եթե ոչ հալած, գոնե փխրուն դարձած էր. այս պատճառով մեծ դժվարություն կը պատճառեր թե՛ ձիավոր և թե ոտավոր գնացողներուն։ Սակայն տրտնջելու ժամա-

նակ չկար, հարկ էր, որ առաջ քալեինք մինչև ի խոր գերեզման։

Ոտքով գնացողներեն ոմանց ներբանը արդեն ուռած էր, չկրնալով տոկալ օրական 6—8 ժամ քալելուն, մանավանդ դեռ անվարժ էին, ուստի հարկ եղավ, որ ձիավորներս փոխ տանք մեր ձիերը ասոնց և մասամբ թեթևցնենք բռնադատյալ քալողներու տաժանքը։

Ութ ժամվան դժվարին ճամփորդութենե մը հետո արևամուտին հետ իջևանեցանք «գրզըլպաշներու» գյուղ մը։ Ասոնք ըլլալով քրիստոնեական ինչ-ինչ հին սովորույթներով իսլամ աղանդավորներ, միշտ հակառակ եղած են Թուրքերուն, և փոխադարձաբար և հաճախ նեղ օրերու մեջ գաղտնապես պաշտպանած են հալածված հայերը։

Ուստի մեծ կարեկցությամբ ընդունեցին մեզ, և չուզեցին արժեքը առնել իրենցմե մեր գնած մածունին և հավկիթին։ Մինչդեռ հետ այնու բոլոր Թուրք մեր իջևանած գյուղերուն մեջ չարաչար կողոպտեցին մեզ, առանց գթալու մեր հալածական ու վտարանդի վիճակին։

Մեզ ընկերակցող չանկըրիցիներեն մեկ քանին վաղեմի բարեկամներ ունենալով ասս «գրզլպաշներուն» մեջ, ասս վերջինները՝ ոստիկան զինվորներեն գաղտնի կանչելով իրենց աքսորական հայ բարեկամներն, կարեկցելով մեր վրա լացած էին դառնապես, խորհուրդ տալով, որ փախչին...

Հաջորդ օրը լուսնշաղին հետ քարավանը ճամփա ելավ, որովհետև շատ ճամփա ունեին քալելու՝ հասնիլ կարենալու համար Ալիս գետի կամուրջը։

Երբ մեկ քանի ժամ վերջ մտանք Ալիս գետի հովիտը, արդեն կլիման գաղջացավ, և մեր ետև այլևս թողուցինք ընդմիշտ ձյունապատ լեռները։ Իսկ մեր հանդիպակաց հեռավոր հորիզոնին վրա տեսանք Կեսարիո համբավավոր Արգեոսը կամ ըստ Թրքական ասության «էրճիասը», իր 4000 մետր բարձր ամպածրար ձյունապսակ կատարովը։

Սունկուրլուի ճամփեն դիտումնավոր կերպով խոտորելնուս համար մոլորեցանք կողմնակի արահետներու մեջ, և 11 ժամվան տաժանելի ուղևորութենե մը հետո հասանք վերջապես ձմեռային Թանձր գիշերային խավարով մը Ալիս գետի Գոյունպապա կոչված քարաշեն հոյակապ կամուրջը, որուն հսկա կոփածո կամարներուն ներքևեն մեծադղորդ շառաչով դուրս կը



պոռթկար գետը՝ հորձանք տալով կավագույն ալիքներով դեպի Սև ծով։

Ասս կամուրջին Իսկիլիպի կողմը արևելյան սրճարան—իջևան մը կար միայն մեկ սրահով, ուր առաջնորդվեցանք գիշերելու։

Սակայն որսի և արյունի հոտ առած մարդ-գազաններ, զինված աղեղնաձև պարսկական հին Թուրերով, դաշույններով և այլ զենքերով, ոաբնդանութ լեցուն փամփուշտակալներով, մեզմե առաջ եկած և տեղ գրաված էին արդեն սրճարանին մեջ։ Ասոնք ավազակներու հատուկ խուզարկու ակնարկներով սկսան մի առ մի քննել մեզ ոտից ցգլուխ։

Ավելորդ է ըսել, Թե ամենքս ալ սարսափեցանք ի տես այս զինավառ ավազակներուն, որոնց արևակեզ դեմքերն և վայրագ ակնարկներն շատ բան կը պատմեին մեզի, անոնց արյունածարավ անցյալ շահատակությանց մասին, և մանավանդ վերջին մեծ եղեռնի օրերուն...

Բայց բռնադատյալ էինք գառներս նստելու գայլերուն մոտ, միշտ ահաբեկ և ամեն վայրկյան սպասելով անոնց սուսերամերկ հարձակման։ Թեպետ մեզի հսկող ոստիկան զինվորներն և մանավանդ ենթասպան կը քաջալերեին մեզ, որ չվախնանք...

Ավելորդ է մասնավորաբար հոս շեշտել, Թե ոչ ոք մեզմե գիշերը քնանալ կրցավ։ Մեկ կողմեն ավազակներուն սարսափեցուցիչ տեսքը, մյուս կողմեն Ալիսի ծովածավալ հորդումը մանավանդ մեզմե տկար հոգիներ ունեցողներուն վրա այնքան խոր ազդած էր, որ 8—10 հոգի Չանկըրիի ժողովրդին մեծերեն որոշած էին անձնասպան ըլլալ, Ալիս գետի առ այս ընծայած բաշառիկ պատեհությունը չուզելով ձեռքե հանել։ Իրավամբ կը խորհեին, Թե անհնար էր մեր քարավանին ամիսներ այսպես ճամփորդելով ողջ հասնիլ Տեր-էլ-Զոր. որով մահը անխուսափելի էր մեզի համար այլևս։ Ուստի ինչո՞ւ չօգտվիլ Ալիսեն, երբ հայրենի այս գետը իր խոր հորձանքներուն և ալիքներուն մեջ կը խոստանար բաղդատաբար ավելի նվազ չարչարալից մահ մը...

Կեսգիշերը անցած էր արդեն, երբ իրենցմե մեկը, որ քաջություն չէր զգացած վերջին պահուն գործադրելու ասս վատհոգի ծրագիրը, փութաց իմացնել ինծի, որ աճապարեմ քանի դեռ ուշ չէ՝ առջևը առնեմ ասս աղետին։ Բնականաբար անմիջապես փութացի դուրս վազել սրճարանեն, երբ մեր ընկերներն արդեն գտա վերջին պատրաստությանց մեջ՝ իջևանի գետափին կողմը գտնվող պարսպին մոտ։ Ասոնցմե ոմանք՝ արդեն իրենց վեր-

չին կամքը թղթի կտորներու վրա գրած պատրաստած էին, որպեսզի ողջ մնացող ընկերներ եթե ըլլան ու մնան, հանձնեն իրենց ընտանիքներուն...

Մինչդեռ ես համոզկեր խոսքերով և հուսադրիչ օրինակներով կը ջանայի համոզել զիրենք, ետ կեցնելու համար իրենց մահաբեր մտադրութենեն, ընդհակառակը, իրենք ես կը ջանային զիս տարհամոզել, խնդրելով, որ արգելք չըլլամ իրենց, և ներկայացած այս բացառիկ առիթը փախցնել չտամ..., և բոլոր քարավանը միասին նետվինք գետը ու ազատինք միանգամ ընդմիշտ շարչարալից նահատակութենե մը։

Կրոնքի սաստիչ օրինակներուն և հորդորներուն տեսնելով, որ այնքան կարևորություն ընծայող չկա, կը ջանայի ապացուցանել խոհեմությամբ մահը մեզմե հեռացնելու ՎՃԱՐՅԱԼ կարելիություն մը, և կը հորդորեի ամեն հույս դեռ չկորսնցնել ու ավելի լավատես ըլլալ։

Մեր ամենահամոզկեր փաստերեն մեկը աս եղավ, որ յուրաքանչյուր հայու ամենասրբազան ազգասիրությունը կամ հայրենասիրությունը պիտի ըլլար կարելիին հետ անկարելին ընել, ողջ մնալու և տեսնելու համար հայ ազգի հրաշալի վերածնունդն ու հարությունը և ողջունել կարենալու համար նորածագ հայ ազատությունը...

Հակառակ իրենց ամեն պնդումներուն մերթ սաստելով, և մերթ աղաչելով բերի կրկին ամենքն իշևան-սրճարանը, և հսկեցի մինչև առավոտ, որպեսզի մի գուցե մտքի խոլ նոպայի մը մեջ, հանկարծ կրկին փորձեն գործադրել իրենց եղերական նպատակը։

Հաջորդ առավոտ արշալույսին հետ մեր՝ ձիավորներու, իշավորներու և ոտավորներու դժբախտ քարավանը սկսավ բարձրանալ կրկին ապալեր սարեր, մեր ետև թողլով առհավետ Ալիսի տղմուտ ալիքներն ու մեզի միշտ սարսուռ ազդող այդ իշևանը և Գոյուն-պապա հորջորջված մահաբույր հսկա և բարձրագետ կամուրջը՝ իր խորհրդավոր մենությանը մեջ։

Դարձյալ մեր ճամփան սկսավ տաժանելի դառնալ, որովհետև միշտ դեպի վեր կը բարձրանայինք ձյունապատ լեռներ, ուր ցրտաշունչ քամին կը մտրակեր մեզ դուրսը անպաշտպան մնացած մարմնուն մասերը։ Շուրջ յոթն ժամվան դժվարակիր ուղևորութենե մը վերջ հասանք բարձր բլուրներե շրջապատյալ քարաշեն առանձնացած իշևան մը, որ սակայն իշևան ըլլալե ավելի ավազակներու իսկական որջ մըն էր։

Միակ սրահե մը (ղովուշ) բաղկացած սրճարան—իշևանին (խան) մեջ՝ իբր թե պատահաբար մեզի հետ պիտի գիշերեին քսանե ավելի զինավառ թուրք ավազակներ, որոնք եկած էին մեր դիակները փռելե վերջ տիրանալու մեր «անբավ» հարստության։

Դարձյալ անհնար եղավ ամբողջ գիշերը քնանալ. որովհետև կը տեսնեինք, որ շարունակ գաղտնի խորհրդակցության և փըսրտուքի մեջ էին, թե ի՛նչպես կրնային մեզ 48 զոհերս ի մի հարված խողխողել։ Սակայն շնորհիվ մեր վերահսկիչ ենթասպային կանխավ վարձատրված աշալրջության և արթուն պահակության, չկրցան իրենց ոճրապարտ ծրագիրներն գործադրության դնել։

Հազիվ արշալույսը ծագած, աս անգամ մեր խնդրանոք աճապարեցինք ճամփա ելլել՝ կարենալ հասնելու համար կղզիացած բարեբախտաբար հանդարտ թուրք գյուղ մը, ուր ըստ վկայության, մեր պաշտպան ենթասպային, ապահով գիշեր մը կը հուսային անցընել և ուտելիք ևս գտնել։

Ստուգիվ համաձայն իր խոստման՝ ենթասպան մեզ արևամուտին հետ հասցուց թուրք փոքրիկ գյուղ մը, ուր կրցանք չորս անքուն գիշերներե հետո վերջապես փոքր-ինչ քնանալ և ընունդ առնել։ Մինչդեռ օրերը կ'անցնեին, սակայն մեր մտքերը ու հոգիները վերահաս մահվան մղձավանջով տանջված, պատեհություն չունեինք երբեք խորհելու կերակուրի մասին, այլ թե ի՞նչ զգուշական միջոցներ ձեռք առնենք, որ զոհ չերթանք երկոտանի հոշոտող գայլերուն։

Մեր ճամփորդության հինգերորդ օրը ողբացյալ Երվանդ Զալուշյան, որ իբր վերակազմյալ հնչակյան գործիչ, հին պետ և բազմամյա ուսուցիչ, հակառակ թուրք մեծամեծ բարեկամներ ու աշակերտներ ունենալուն կ'անդամակցեր, անշուշտ ակամա, մեր մահվան քարավանին, հիվանդանալով այլևս անկարող եղավ քալելու. ուստի վարձելով գյուղացիներե էշ մը, զինք հետ առի միշտ նյութապես օգնելով ամբողջ ճամփու ընթացքին ուրիշներե կնքած անձնական փոխառության գումարներով։

Այսպես հինգերորդ օրը կեսօրեն քիչ վերջ, բաղդատաբար ավելի նվազ տաժանելի ճամփորդութենե մը հետո, հասանք Զորում կառավարչանիստ քաղաքը, շինված դաշտի մը մեջ և

շրջապատված բավական ընդարձակ պարտեզներով և բանջարանոցներով։

Հինգ օր շարունակ անմարդաբնակ լեռնային ճամփաներու մեջ մեր դեգերումով իսկապես վայրենացած էինք։ Երբ բախտն ունեցանք կրկին մտնելու քաղաքակրթության հետքեր հիշեցնող քաղաք մը, մեծապես ուրախացանք, բայց դժբախտաբար քանի մը բոպե միայն տևեց մեր մխիթարությունը։

## 20.

## ՋՈՐՈՒՄԵՆ — ՅՈԶԿԱՏ

Մեզ դիմավորող բազմաթիվ ոստիկաններու կողմե առաջնորդվեցանք քաղաքին արևմտյան ծայրը կես ավերակ իշևան մը, որուն գետնահարկի մեկ փոքր սենյակի մեջ, ուր հազիվ 18—20 անձ կրնար նստիլ, մեր ամբողջ քարավանին 48 հոգին խոտի դեզերու պես լեցուցին ներս։ Մեզ շարշարելու աս չափովը ևս չգոհանալով, ոստիկան զինվորներու խստասիրտ հարյուրապետ մը գալով, նիգով դուռը մեր վրա փակեց ու դռան առջև ոստիկան զինվոր մը սվինամերկ հրացանով պահակ կեցնելով, հրամայեց զինվորին մեզ լսելի ձայնով ըսելով՝ «Չըլլա որ ձգես, որպեսզի սա շներուն ո՛րևէ մեկը հաց կամ ջուր բերե, թող մեկ մը անոթի ու ծարավ մնան, որ հասկնան, թե ապըստամբիլ ինչ ըսել է...»։

Ասով ալ հույսերնիս կտրեցինք հաց ու ջուր գտնելե, որուն ստիպողաբար պետք ունեինք։ Չի լեռնային մեր հնգօրյա ճամփորդության մեջ սպառած էին Զանկըրիեն առած մեր պաշարներն, իսկ թուրք գյուղերու մեջ ալ շատ քիչ բան կրցած էինք ձեռք բերել։ Որովհետև գյուղացիները մեծ մասամբ ռազմաճակատ տարված ըլլալով, գյուղերը աշխատող բազուկներ չէին մնացած, և գյուղացի ընտանիքներն ալ իրենք անոթի էին ու չունեին, որ մեզի տային։

Համարյա իրարու վրա նստած, ոչ պառկիլ հնար էր և ոչ սնունդ ստանալ, մինչ ճամփու խոնջանքը և մեր անոթությունը մեզ կը ստիպեր խորհիլ, թե մահը հազար անգամ նախամեծար էր աս կերպ ապրելե, քան մեր կյանքը այսպես քարշ տալը։ Իսկ անոնք, որոնց անձնասպանության արգելք եղած էի, այժմ աս տառապանքեն սրտնեղած, կ'ըսեին ինծի, թե ինչո՞ւ արգելք եղած էի իրենց վճռական ու փրկարար ձեռնարկին... և մի՞թե գետին մեջ ջրասույզ ըլլալը ասանկ շարշարալից աքսորեն նախամեծար չէ՞ր. և ինչո՞ւ այս տառապանքի կյանքը տանինք, քանի որ վերջը դարձյալ անպայման մահ է, և սոսկալի խուժդուժ մահ...

Նույնիսկ արգիլվեցավ մեզ բնական կարիքներու համար ևս դուրս գալ։ Բայց ապա սակարկության մտնելով, ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԵՎ հույժ ստիպողական պետքերու համար յուրաքանչյուր անձի համար հինգ արծաթ դահեկան սակ որոշվեցավ...

Տաժանելի և անքուն գիշեր մը անցնելե վերջ գարշահոտ այդ մթնոլորտին մեջ, հաջորդ առտուն ջանացինք ամեն գնով ոտքել խստասիրտ հարյուրապետը և կաշառքով ըստ կարելվույն դյուրություններ ձեռք բերել։ Սակայն դժբախտաբար մենք քանի իր բարյացակամությունը ձեռք բերել կարենալու համար հնարամիտ միջոցներ խորհեցանք, նա ընդհակառակը ա՛լ ավելի խստացավ, և պաշտոնապես հայտարարեց մեզ ամենքիս, թե Զանկըրիեն մեր ձիերը մինչև Զորում վարձված ըլլալով, ձիերը ետ ճամփված են. հետևապես պատրաստվինք ամենքս ալ հետիոտն երթալու Յոզկատ։ Մեր սուգը ընդհանուր և անպատմելի եղավ ի լուր աս նոր խստության։ Որովհետև քիչ շատ գորգ, կապերտ, թեթև անկողիններ և այլ աս կարգի անհրաժեշտ գույքեր ունեին Զանկըրիի տեղացիք. մինչ մենք Պոլսեն աքսորական 16 տարագիրներ ոչինչ չունեինք, բացի մեզմե շարշարանոք առնվելիք հոգիեն... Արդեն տկարացողներ ունեինք և կային, որ հիվանդ ճամփա ելած էին. ասոնք ի՞նչպես պիտի տանեինք մեր հետ...

Քաղաքին մեջ կառք չգտնվիլը հարյուրապետը մեզ կը հայտներ, իբր շարժառիթ մեր ոտքով ճամփան շարունակելուն։ Մյուս կողմեն մեր խցարգելյալ գետնահարկ նկուղին կոտրած ապակիներով և երկաթյա ձողերով երկու պատուհաններուն առջև թուրք կառապաններ գալով, կ'ուզեին սակարկության մտնել մեզ հետ, պայմանով, որ հարյուրապետը գոհ թողունք... Ակներև էր, թե հարյուրապետին գաղտնի թելադրանքովը կառապանները կուգային մեր մոտ։

Ճար չկար, պետք էր վերջին փորձ մըն ալ ընել, ուստի մեր դռան առջև պահակ սպասող ոստիկան զինվորը լիառատ վար-

ձատրելե վերջ, ասոր թույլտվությամբ անձամբ գնացի գտնել հարյուրապետը, որ դաժան դեմքով մը մտիկ ընելե վերջ թախանձագին աղաչանքներս, խոստացավ թույլատրել, եթե սակարկություններս զոհ թողուր զինքը...

Բնականաբար իր ընչաքաղց շար կամքը զոհացնելե վերջ միայն թույլատրեց, որ կառքեր վարձենք, պայմանով, որ իրեն մեր վճարած կաշառքեն դուրս՝ յուրաքանչյուր կառքի մինչև Ցոզկատ վարձքին համարժեք իրեն ալ կաշառք տանք։ Որով ավելի քան 50 հնչուն ոսկի ստացած պիտի ըլլար մեզմե առանց աղմուկի։ Եվ որովհետև այս ընելե զատ ուրիշ փրկության ելք չունեինք, ուստի աս պայմանն ալ ընդունեցինք։

Ապա աճապարանոք, առանց անլուր սակագները ի նկատ առնելու, վարձեցինք 10—12 կառք, որովհետև հրամայված էր մինչև կես ժամ պատրաստ ըլլալ, ուստի ինչ որ թուրք կառապաններն պահանջեցին՝ հոժարեցանք տալ կամա սկամա։ Մեկ մը օձիքնիս ձեռք տված էինք, շատ բարակը փնտրելու ատենը չէր. բավ էր, որ մեր կյանքին չդիպչեին։

Նախքան մեր ճամփա ելլելը, բախտը ունեցանք ընդունելու այցելությունը ռուսահպատակ և Պոլսեն աքսորված մեկ քանի հայ ազնիվ երիտասարդներու, որոնք քաջալերեցին մեզ հայտնելով՝ թե իրենք մտերիմ հարաբերություն ունենալով տեղվույն ռստիկան զորքերու հրամանատարին հետ, որուն բացառիկ թույլտվությամբ իրենք հաջողած են ներս մեր բանտ—իշխանը մտնել, բարեկամաբար ըսած է եղել իրենց՝ թե «ԱՍՈՆՑ ՊԱՇՏՈՆԱԹՈՒՂԹԸ ԼԱՎ ՈՃՈՎ ԳՐՎԱԾ Է, ԹՈՂ ՉՎԱԽՆԱՆ ԹԵ ԿԸ ՍՊԱՆՎԻՆ, ՄԻԱՅՆ ԹԵ, ԹՈՂ ԱՐԹՈՒՆ ԿԵՆԱՆ ՄԻՇՏ... ԵՎ ԹՈՂ ԳՈՀ ՉԳԵՆ ԻՐԵՆՑ. ՈՒՂԵԿԻՑ ՀՍԿՈՂ ՉԱՎՈՒՇՆԵՐԸ (ԵՆԹԱՍՊԱ) ԵՎ ՅՐՎԱԾ ՉԵՐԹԱՆ ՃԱՄՓԱՆ...։ ԵԹԵ ՅՈՉԿԱՏԵՆ ՊՈՂԱՉԼԻԱՆ ԵՎ ԱՊԱ ԿԵՍԱՐԻԱ ԵՐԿԱՐՈՂ ԱՄԵՆԱՎՏԱՆԳԱՎՈՐ ՃԱՄՓԱՆ ՈՂՋ ԿԱՐԵՆԱՆ ԱՆՑՆԻԼ, Ա՛Լ ԹՈՂ ՉՎԱԽՆԱՆ...»։

Արդեն մենք ալ Յոզկատեն Պողազլիան երկարող ճամփեն կը վախնայինք։ Որովհետև Զորումցիներու քարավանին՝ նախքան Յոզկատի հայոց տեղահանությունը՝ աս ճամփան ողջ կարենալ անցնելեն վերջ, ոչ մեկ քարավան կրցած էր ողջ անցնիլ աս արյունոտ ճամփեն, որով սարսուռ կը զգայինք՝ քանի կը մոտենայինք այդ մահահոտ ճամփաներուն։ Իսկ մեր երկյուղը թուրք զինվորականներ ա՛լ ավելի կը խարազանեին այս



Կարգի հայտարարություններով, որով ստուգիվ մեր պաղարյունությունը կորսնցնելու վրա էինք տակավ...

Վերջապես ոմանց կառքերով, ոմանք հետիոտն ճամփա ինկանք կեսօրին ատենները, և առանց հիշատակության արժանի մի՛ջադեպի մը, երեկոյին արևամուտին հետ հասանք Մեճիտէոգիվ կոչված թուրք գյուղը։ Ուր Զորումեն շատ ավելի հանգստավետ պայմաններով գիշեր մը անցուցինք, հագեցնելով միանգամայն մեր անոթությունը և ծարավը, փոխան լիառատ վարձատրությանց։

Երկրորդ օրը արևածագին հետ մեր քարավանը ճամփա ելավ դեպի անմարդաբնակ սարեր ու ձորեր. միայն մխիթարությունիս այս էր, որ կառքի ճամփաներով կ՚երթայինք այս անգամ, որովհետև մեզի հետ կառքեր ունեինք։ Մեր ոտավոր ընկերներն, որոնք հետզհետե սկսան շատնալ, վասն չգոյության նյութական միջոցներու՝ դյուրավ այժմ կրնային քալել։ Առաջվան պես ամեն վայրկյան արահետներու վրա ցան ու ցրիվ ինկած քարերե այլևս չէին գայթեր ու գետին իյնար։

Երրորդ օրը դարձյալ բախտն ունեցանք, ամայի և անմարդաբնակ ճամփաներե հետո, հանդիպելու փոքրիկ կորիզի մը արևելյան քաղաքակրթության, որ էր Ալաճա գյուղաքաղաքը, ուր կը նստեր տեղական մը (գայմագամ)։

Ալաճայի գայմագամը՝ գոնե երևութապես ինքզինք կուրկեկից ցույց տված մեր դժբախտ վիճակին, ու անձամբ մեր լքված սրճարանը գալով մեկ քանի հետևորդներով, մեր վիճակին մասին տեղեկություն հարցուց, և թույլատրեց, որ անհրաժեշտ մեր պետերն մեր հաշվույն գնենք։ Այս շնորհ մըն էր, որ ջրբաժանաբար հաճախ կը զլանային մեզի՝ միայն մեզ տանջելու հրեշային հաճույքը ըմբոշխնելու համար։ Թույլատրեց մեր դիմումին վրա նաև, որ հեռագրենք մեր պարագաներուն և դրամ ուզենք։

Պոլիս հեռագրելու մեզի շնորհված բացառիկ թույլտվությունն օգտվելով, ներքին գործոց նախարարության հեռագրավ բողոքեցինք, որ հակառակ իր կողմե մեզի տրված «մեր ուզած վայրերը երթալու արտոնության», մեզ Տեր-Զոր կ՚աքսորեն... Անշուշտ զարմանալի է խոստովանիլը այս պատեհությամբ, թե մեր մեջ դեռ կային մարդիկ, որոնք Տեր Զորի ճամփան արդեն բռնած ըլլալով հանդերձ՝ դեռ կը պնդեին թե «ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԹԱՀԵԱԹ ՊԵՏ ԼՈՒՐ ՉՈՒՆԻ ԱՅՍ ԱՄԵՆՔԵՆ...»։

Ահա ապացույց մը ևս, թե Թալեաթ և ընկերներն ո՛րքան ճարտարությամբ խաղացած էին իրենց նենգամիտ և եղեռնական դերը, որ մեկ միլիոն զոհ տալե վերջ՝ նույնիսկ անոնք, որ Տեր Զորի ճամփան ինկած դեպի անապատ կ'երթային կմախանալու և անոթի ու ծարավ մեռնելու, կը պնդեին, թե «ԹԱԼԵԱԹ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԿԱՄ Է, ԵՎ ԱՆՈՐ ԿԱՄՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ ՏԵՂԻ Կ'ՈՒՆԵՆԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՆԴԵՊ ԱՅՍ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՋԱՐԴԵՐԸ...»։

Ալաճայեն մեկնեցանք բավական կազդուրված և մխիթարված, և սկսանք մոտենալ հետզհետե Յոզկատի, ինչ որ մեզ ծանր մտահոգություններու կ'ենթարկեր, և ստուգիվ հակառակ մեր բոլոր հուսադրիչ ջանքերուն ու ճիգերուն, հնար չէր ըլլար հեռացնել մեզմե մահվան անողոք ուրվականը, որ սարսափելի կմախք մըն էր և մահվան մանգաղը ձեռքը բռնած կը սպառնար բնաջնջել մեզ...։ Ինչպես նշանավոր գերման նկարիչ Պյոկլին նկարած է և արտատպությունները ամենուրեք ի վաճառ հանված են «ԹՈՔՆ ԹԱՆՑ»՝ մահվան պարը անունով։

Չորրորդ օրը, կամ մեր Ալաճայեն մեկնած օրվան երեկոյին ուշ ատեն, այսինքն մթնշաղով հասանք ամայի լեռներու վրա քարաշեն իշևան մը[1], որ ինչպես կանխավ անգամ մը հիշեցինք, աս ալ իրապես ավազակներու որջի մը տպավորություն թողուց մեր վրա։ Որովհետև հոն՝ մեր քարավանին անցնելուն ավետավոր լուրը առնելով՝ կրկին հավաքված էին 8—10 ավազակներ ճամփորդի անունին տակ, և խուզարկու ակնարկներով կը քննեին մեր դույքերն ու անձերն, իրենց մեջ արդեն բաշխումը կատարելով իրենց ձեռք անցնելիք ավարին...

Ամբողջ գիշերը խորհրդակցեցան իրարու հետ մեր դեմը գլուխ գլխի նստած, սակայն շնորհիվ ոստիկան զինվորներու աշալրջության չհամարձակեցան խորհուրդե անցնիլ գործի...

Հինգերորդ օրը անապատի ուղտավորներուս քարավանը ճամփա ելավ դեպի Յոզկատ։

Այս օրը ամենքս ալ ահ ու դողով անցուցինք. մեր մեջեն եղան ոմանք, որ նամակ գրելով իրենց Զանկրրիի ընտանեկան պարագաներուն իբր իրենց կտակը, մեզ ուղեկից և հսկող ոստիկան զինվորներուն առատ պարգև տալով խնդրեցին, որ այդ նամակներն հասցնեն կամ ղրկեն ապահով եղանակով Զանկրրի, իրենց կիներուն...

1 Դժբախտաբար այս իշևանին անունը ոչ ոք կրցավ հիշել։



Բայց ո՛րքան ալ շարաղետ ըլլար մեզի սպասող բախտը այս միջոցին՝ ճար չկար. պետք էր առաջ երթայինք դեպի սև ճակատագիր։ Այո՛, ո՛րքան ալ անխուսափելի թվեր մահը մեզի համար, այնուամենայնիվ չէինք կրնար այլևս հետ դառնալ. այլ միշտ պետք էր առաջ երթալ...

Իսկ մեր հսկողության հատկացած ոստիկան զինվորներն, տեսնելով մեր ակներև մտահոգությունը և երկյուղը Յոզկատ մոտենալնուս պատճառով, առ ի մխիթարություն կ'ըսեին մեզի՝ «գորքմայրնըզ, գատեր նե՛խսե օ օլուր...»։ Այսինքն՝ «մի՛ վախնաք... ճակատագիրնիդ ի՛նչ որ է՝ ան կ'ըլլա...»։

Ու կը մտածեինք ակամա, թե մեր ճակատագիրը ասանկ արյունկզակ կատաղի վագրերու հանձնված էր...

Մեր քարավանը սակայն, հարկ եղած զգուշական միջոցներ ձեռք առնելով և արթուն հսկելով մեր շուրջը դարձած ամեն խորհրդավոր շարժումներու վրա, և մանավանդ առատ կաշառք աջ ու ձախ բաժնելով, հաջողեցանք առանց անձի կորուստ ունենալու շարունակել մեր ճամփան մինչև Յոզկատի 2 ժամ մնացած։

Երբ մենք զմեզ գտանք այս անգամ ստուգիվ դեմ դիմաց վերահաս մահվան անողոք վտանգին։

## 21.

## ՅՈԶԿԱՏԵՆ—ՊՈՂԱԶԼԻԱՆ ԳԱՆԳԵՐԸ

Յոզկատին երկու ժամ հեռու Պողազլիանի ճամփուն վրա թուրք գյուղ մը կա ու առչեն ալ կամուրջ մը կը գտնվի, ուր քաղաքեն գալով մեզ կը սպասեր առավոտեն ի վեր՝ Յոզկատի ոստիկան զինվորներու հարյուրապետ Շյուքրի, վաթսունհինգամյա ծերունի մը, իր 11 հեծյալ ոստիկան զինվորներով։

Մեր կառապաններն իբր թե իմանալով, որ մեզ պիտի սպանեն այս կամուրջին ներքև, կառքերու մեջ գտնվողները վար իջեցնելով և անոնց բեռներն ալ դուրս թափելով, ձիերը մտրակելով քառասմբակ ետ դարձան, կանխավ արդեն կրկնապատիկ գանձած ըլլալով իրենց վարձքերը։

Մենք ամենքս ալ ապշած էինք՝ չկրնալով մեկնություն մո

տալ այս անօրինակ խուճապին, և լեցված էինք մահվան երկյուղով։

Ճամփուն վրա կառքերեն թափված մեր գույքերը իրարու հետ բաժնելով, տեղատարափ անձրևին տակ՝ մեծ տաժանքով և տղմաթաթախ վերջապես հասանք վերն ակնարկված այն թուրք գյուղը, ուր կը սպասեր մեզի հարյուրապետը իր ոստիկան զինվորներով։

Հոս տեղի ունեցավ Զորումեն՝ մեզ ուղեկցող ոստիկան զինվորներու կողմե մեր քարավանին հանձնումը, Յոզկատի ոստիկան զինվորներու հարյուրապետ Շյուքրիի, համաձայն մեր պաշտոնագրին հետ ներփակ գտնված մեր անվանց մասնավոր սև ցանկին։

Հետքննության՝ ստուգելե վերջ, որ ոչ ոք կը պակսի ցանկեն, առանց մեզի փոքր ինչ գոնե հանգիստ տալու, իսկույն ճամփա հանեցին, և փոխանակ ինչպես կը հուսայինք, քաղաք առաջնորդելու, մեզ տարին մեկ քանի ժամ հեռու գտնվող թուրք գյուղ մը, Յոզկատ—Պողազլիան ճամփուն վրա։ Ուր և գիշերեցինք, առանց սակայն քնանալ կարողանալու, որովհետև ամենքս ալ սարսափով լեցված էինք, տեսնելով թուրք գյուղացիներու դաժան նայվածքն և թշնամական բացահայտ վերաբերմունքը։ Ասոնք նույնիսկ լեառատ վարձատրության փոխարեն, չէին ուզեր մեզ հայթայթել սննդեղենի ամենատարրական պետքերը, ինչպես կաթ, մածուն, հավկիթ և հաց, փույթ չէր, թե գարիե կամ կորեկե ըլլար։

Այսպես հույժ մտահոգ և անքուն գիշեր մը անցընելե վերջ, արշալույսին 8—10 ձիավորներ եկան Յոզկատեն մեր իջևանած գյուղը և անօրինակ համարձակությամբ, սկսան մեր գիշերած խուցերը այցելելով մի առ մի քննել մեր կաշիե կամ գորգե թրքկան պայուսակները (հեյպե), իբր թե մաքսային պաշտոնյաներ ըլլային։

Հետո մեզ ընկերացող ոստիկան զինվորներե ստուգեցինք, որ մեզ սպանելու համար եկած խուժանապետներ են եղեր, և այս խուզարկությամբ իրենց մեջ ալան-թալանի բաժանումն կը կարձեն եղեր ընել։ Բայց հարյուրապետ Շյուքրիի սպառնալիքին և արգելքին վրա, իբր թե ստիպվեր են ձեռնունայն դառնալ իրենց տեղերը։

Արդարև մտած էինք արդեն շրջան մը, սկսած էինք անցնիլ այնպիսի արյունոտ ճամփաներե, ուրկե մեզմե առաջ ոչ



մեկ քարավան կրցած էր ողջ դուրս գալ Յոզկատ-Պողազլիան այս ճամփեն։ Հետզհետե մեր ճամփուն վրա հանդիպած գյուղացի թուրքերե քստմնեցուցիչ տեղեկություններ կը լսեինք Յոզկատի և շրջակայից հայերու անողորմ կոտորածի մասին, որ տեղի ունեցած էր առանց սեռի և հասակի խտրության։

Արդեն մահվան երկյուղը պաշարած էր մեզ ամենքս ալ. տակավ կը մոտենայինք մեր եղերական անխուսափելի վախճանին։ Մեր շուրջը տեղի ունեցող խորհրդավոր իրադարձություններն, փոխանակ մեր մտահոգությունները փարատելու, ընդհակառակը ժամե ժամ մեր մահաբույր կասկածներուն իրավունք տալու բնույթը ունեին։

Սակայն մտածելու ժամանակ չկար, հարկ էր քալել, թափառական ու հալածական հայեր էինք, ու անողոք ճակատագիրը մեզ կը քշեր կը տաներ դեպի գերեզման...։ Բայց բա՜ռ, և ոչ իսկ գերեզման մը ունենալու պատիվը պիտի ըլլար մեզի...

Որովհետև ներքին գործերու նախարար և հայոց մեծ դահճապետ Թալեաթ օսմ. կործանող կայսրության ամեն կողմը, մինչև աննշան գյուղերը հեռագրական հրաման տված էր, հայերը անխնա կոտորել քաղաքներե դուրս սարերու ու ձորերու մեջ։ Մնացյալ ծեր կիներն ու երախաներն ևս բնաջնջել՝ գիտումնավոր կերպով երկարել տրված ճամփաներու ու Տեր Զորի անապատներուն մեջ, թողուլ առանց հացի, առանց ջուրի և առանց գերեզմանի...

Եվ ստուգիվ մեկ միլիոնե ավելի հայ քաղքենի և շինական ժողովուրդ՝ անագորույն կերպով ջարդված էր ու անաղմուկ խեղդված իր արյանը մեջ։

Տասնյակ հազարավոր արու հայեր, չվաններով կամ պարաններով իրարու կապված, անգթորեն խողխողված էին Փոքր Ասիո բոլոր ճամփաներուն վրա, և կամ կացիններով ծառի ճյուղերու հոտումին նման ջարդված։ Բոլորովին անկարեկիր և խուլ մնալով այս թշվառներուն լացին ու կոծին և զիրենք առանց տանջանքի գնդակահար ընելու պաղատանքներուն։

Որովհետև հրամանը բարձրեն եկած էր՝ և ճիհատը իսկապես հայոց դեմ հրատարակված էր, այո՛ պետք էր ջարդել անխնա, մինչև օսմ. կայսրության սահմաններուն մեջ ոչ մեկ հայ չմնար։

Այս մահահրավեր համատարած կոտորածի սարսափելի հրամանը, իր ամենախուժդուժ թափովն, գործադրված էր

մասնավորաբար Յոզկատի կառավարչական ամբողջ շրջանին մեջ, շնորհիվ էնկուրիի փոխկուսակալ Աթքֆի։ Որ 1915 հունիսին՝ Յոզկատի շրջանին հայերը կոտորելու հրամանն գործադրելու դժկամակող կառավարիչը իսկույն պաշտոնանկ ընելով, անոր տեղ հայերու սպանդը կազմակերպելու համար առժամապես Յոզկատի փոխկառավարչության պաշտոնին կը կոչեր Պողազլիանի գայմագամ Քեմալը։ Սա հազիվ պաշտոնի անցած, հրեշային թափով մը անխնա կոտորել կու տար Յոզկատի ամբողջ շրջանի 42.000-ի հասնող հայությունը՝ մինչև ծծկեր մանուկները..., որոնց սրտաճմլիկ մանրամասնությունները հետզհետե պիտի հիշվի տեղին։

Յոզկատ-Պողազլիան ճամփուն վրա՝ երկրորդ օրն իսկ, մեր ճամփուն աջ ու ձախ կողմերուն ինկող արտերուն մեջ սկսանք տեսնել առաջին անգամ ըլլալով, մարդկային կազմալուծված կմախքներ և մանավանդ գանգեր, որոնցմե շատեր երկար մազեր կը կրեին, և տարակույս չէին ձգեր, թե կանացի գանգեր էին...

Մեր աքսորական ընկերներեն երիտասարդ պոլսահայ մտավորականներ հաճախ գետին խոնարհելով այս գանգերը ձեռքերնին կ՚առնեին ու արտասվոք կը համբուրեին... Որովհետև ասոնք սրբազան նշխարներն էին շարշարալից մահով նահատակված մեր եղերաբախտ մայրերուն ու քույրերուն...։

Յոզկատի ոստիկան զինվորներու հարյուրապետ Շյուքրի, որ պաշտոն ստացած էր անձամբ առաջնորդելու մեզի ամենավտանգավոր ու արյունոտ այս ճամփաներեն, և որուն հետ մեկ քանի ժամե ի վեր կողք կողքի ձիավարելով բավական «բարեկամացած էի», անշուշտ ո՛րքան որ գայլն ու գառն կրնան բարեկամանալ, ըսավ ինծի հորդորական շեշտով մը՝ «Մուրախաս էֆենտի (գավառի հայ առաջնորդներուն թուրքերեն պաշտոնական տիտղոսն), ըսե ժողովուրդին, որ զգացումով տարվելով՝ հանդիպած գանգերը ձեռք առնելով չհամբուրեն, որովհետև չեն գիտեր, թե քիչ մը հեռուն իրենց ի՞նչ բախտ կը սպասե...»

Այս ակներև սպառնալիքին վրա, բնական է, թե աքսորբեցի մեր ընկերները զգուշացնել նմանօրինակ արարքներե, մենք մեզ անխոհեմաբար չվտանգելու համար։ Երբ առանց ասոր ալ արդեն շրջապատված էինք ամեն կարգի վերահաս և մահաբույր վտանգներե, և պետք չէր, որ գայրույթը գրգռելով մեզի հսկող ոճրաձարավ ոստիկան զինվորներուն, ենթարկեինք մեզի



անխուսափելի աղետի մը, որ անշուշտ մեր կյանքը պիտի արժեր։

Թեպետ մեր օրերը համրված էին, բայց պետք էր ո՛րքան հնար է՝ ապավինելով Աստուծո՝ հեռատեսությամբ ջանայինք հեռացնել մահը մեր առջևեն... Որովհետև կ՚անցնեինք ճամփաներե, ուր մեր ամենափոքր անխորհուրդ կամ անզգույշ մեկ քայլն կրնար մեր անմիջական մահվան պատճառ դառնալ։

Մեզ ուղեկցող թուրք հարյուրապետը՝ Շյուքրի, այնքան դաժան հրեշ մըն էր, որ շնորհ չէր ըներ մեր քարավանեն ո՛րևէ մեկին հետ նույնիսկ խոսելու։ Միայն բարեբախտություն մըն էր, որ կրցած էի մեկ քանի ժամվան մեջ իր «համակրությունն» շահիլ, և շարունակաբար միասին կը ձիավարեինք, խոսակցելով զանազան մեզ հետաքրքրող նյութերու վրա։

Իրմե իմացա թե Յոզկատի փոխկառավարիչ արյունռուշտն Քեմալ[1] 1916-ի սկիզբը, այսինքն մեր անցած միջոցին, կիկին կոչված էր Պողազլիանի գայմագամության իր նախորդ պաշտոնին։

## 22.

## ՉԱՐԴԱՐԱՐ ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏԻ ՄԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուզելով օգտվիլ հանդեպ անձիս Շյուքրիի ցույց տված հազվագյուտ բարյացակամութենեն, և միանգամայն ուզելով լուսաբանվիլ մինչև այն ատեն մեզ ամենքիս մութ մնացած հարցերու մասին, ծայր աստիճան փափկանկատությամբ հարցուցի հարյուրապետ Շյուքրի.— Պեյ, սա բազմաթիվ մարդկային ոսկորներն ո՞ւրկե լեցված են մեր այս ճամփուն վրա, ո՞վ կոտորեց զանոնք, և ի՞նչպես ցան ու ցրիվ եկած են այս արտերուն մեջ։ Հարյուրապետն պատասխանեց. «Երբակա թուրք

[1] Այս այն Քեմալն է, որ զինադադարի վաղորդայնին դատարանն մահվան դատապարտվելով, Պոլսո մեջ կախաղան բարձրացուցին։ Այս պատճառով թուրքերը հայրենիքի անմեղ զոհ մը նկատելով զայն սրբացուցին. այսպեսով իրենց համամտությունը հայտնած եղան Քեմալի գործած ահավոր ոճիրներուն, որ ավելի քան 42.000 անմեղ հայերու կյանք արժած էր։

գյուղացիներու կողմե ջարդված հայերու ոսկորներն են ասոնք, որ 1915-ի օգոստոս և սեպտեմբեր ամիսներուն մեջ Պոլսեն եկած բարձր հրամանին վրա կոտորվեցան (ձեռքով ցուցնելով) սա դեմի խոր ձորին մեջ։ Եվ թեպետ ներքին գործոց նախարարին հրամանով այս կոտորածներուն հետքը կորսնցնելու համար, մեծ փոսեր փորվելով ի մի հավաքվեցան և թաղվեցան անցյալ տարի հոկտեմբերին. սակայն ձմռան հեղեղները այդ փոսերը բանալով ոսկորներն ու մասամբ ալ կազմալուծված դիակները դուրս բերած են... տեսածդ ասոնք են...»։

Հարց—Ասոնք հեռավոր տեղերի այս ճամփաներեն անցնող աքսորական հայերու ոսկորնե՞րն են, թե ոչ այս շրջաններու ջարդված հայ ժողովուրդի ոսկորներն են։

Պատասխան— «Աս ճամփան կը տեսնե՞ս, բացի տարագրության սկիզբը 1915-ի հուլիսին՝ չորումցիներու առաջին քարավանեն, դեռ այս ճամփեն ողջ անցնող չեղավ...»։

Հարց— Շյուքրի Պեյ, այս մեր անցած ճամփաներուն վրա ի՞նչ կը կարծեք, ո՞րքան հայ կոտորվեցան, բնականաբար դուք իբր Յողկատի ոստիկան զինվորներու հարյուրապետ գիտեք անշուշտ, թե ո՛րչափ հայ ջարդվեցան Ձեր սանճագին մեջ (կառավարչական շրջանակ)։

Պատասխան— «Արդեն այս այժմ գաղտնիք մը չէ, մոտ 86.000 հայեր ջարդվեցան, մենք ալ զարմացանք, որովհետև կառավարությունը ինքն ալ չէր գիտեր, որ էնկուրիի կուսակալության մեջ այսքան հոծ հայեր կը բնակին։ Թեպետ այս թվին մեջ քանի մը հազար ալ շրջակա կուսակալություններեն գալով մեր ճամփաներեն անցնող հայեր կան, որոնք մասնավորաբար մեր ճամփաներեն անցվեցան, որպեսզի անոնք ալ մաքրենք. իր բառով «փաքլայալըմ»։ Միշտ այս բացատրությունը կը գործածեին թուրքերը և մանավանդ պետական պաշտոնյաներն, քաղաքային ըլլան թե զինվորական, հայերու կոտորածը ակնարկելու ատեն»։

Հարց—Հայերու այս ընդհանուր կոտորածները որո՞ւ հրամանով գործադրվեցան։

Պատասխան— «Թե՛ Պոլսո իթթիհատի կենտրոնական կոմիտեեն, և թե՛ ներքին գործոց նախարարութենեն հրամաններ եկան հայերը աքսորելու, կամ ավելի ճիշտ բացատրությամբ քաղաքներեն դուրս հանելով կոտորելու։ Այս հրամանը ամենախիստ կերպով գործադրեց Պողազլիանի գայմագամ Քեմալ, որ կոտորածի հրամանն չգործադրող Յողկատի մութասարրֆին պաշտոնանկ ըլլալեն վերջ, այն ատենի էնկուրիի փոխկուսակալ Աթրֆի հրամանով փոխ կառավարիչ նշանակվեցավ Յողկատի։ Որովհետև ինքն ալ վանեցի էր, և ինք լսած էր, թե իր ընտանեկան բոլոր պարագաները հայերը կոտորած էին անխնա Վանա ապստամբության ժամանակ. այս պատճառով ինքն ալ փոխ վրեժի դիմեց, անխնա կոտորելով այրերուն հետ նաև կիներն ու երախաներն...»։

Հարց—Ուրեմն Յողկատի այս շրջանակներուն մեջ կիներ՞ն ալ կոտորվեցան։ Հարցնելուս պատճառն սա է՝ որ մեր լսածին նայելով, թեպետ ամեն կողմ այրերը անխնա կոտորվեցան, բայց իգական սեռը խնայվեցավ կ'ըսվեր, միայն գեղեցիկ կույսերը և հարսները ուղղողները իրենց հարեմները տարին, մինչև ծեր ու տարեց կիները Տեր Զոր քշվեցան։ Ձեր սանճագին մեջ ալ մի՞թե այսպես չեղավ։

Պատասխան— «Մեր կողմերը այսպես չեղավ, որովհետև ինչպես ըսի, Պողազլիանի գայմագամը Վանի հայոց 1915 ապրիլի ապստամբության միջոցին, իր ընտանեկան պարագաներուն սպանութենեն զայրացած և անձնական վրիժառութենե դրդյալ, նույնիսկ առանց ուշադիր ըլլալու գոնե երևույթներու փորկության, անխնա կոտորել տվավ կիներն ու աղջիկներն՝ մինչև ծծկեր մանուկները, ըսելով թե—ՄԱՐԴԱՐԵԻՆ ԳԼԽՈՒՆ ՎՐԱ ԵՐԴՈՒՄ ԸՐԱԾ ԵՄ, ՅՈՂԿԱՏԻ ՍԱՆՃԱԳԻՆ ՄԵՋ ՈՉ ՄԵԿ ՀԱՅ ՉՊԻՏԻ ԿԵՆԴԱՆԻ ԹՈՂՈՒՄ»։

Հարց—Շյուքրի պեյ, մեզի ալ խոսակցություն պետք է. կ'աղաչեմ ինծի պատմե թե Յողկատի կիները ու աղջիկներն ի՞նչպես ջարդվեցան։ Բայց այս միջոցին ոստիկան զինվորներու տասնապետը՝ ճամփուն վրա երկյուղալի նշաններ տեսած ըլլալով եկավ հրահանգ ստանալու, որով մեր ալ խոսակցությունը ինքնին հոս ընդհատեցավ։

Արդարև նույն այս մահվան ճամփուն վրա և այսքան դժնդակ վիճակի մեջ՝ մանրամասնությամբ պատմված այս ահավոր դեպքերու ազդեցությունը չկրողներու զարմանալի թերևս նույնիսկ անկարելի համարված հանդգնությամբ մը, հետամուտ էի իրազեկ ըլլալու ցեղիս ահավոր մարտիրոսության մանրամասնությանց։ Խորհելով անշուշտ, որ եթե հնար ըլլար օր մը ո՛րևիցե կերպով ողջ մնալ, պիտի կարելի ըլլար լույս սփռել այս՝ պիսի եղերական ու եղեռնական սարսափելի դեպքերու

վրա, որոնց անպայման ոչ մեկ հայ ականատես եղած պիտի կրնար ըլլալ։ Մասնավորաբար քանի վերջն տաք էր, իրական ու ստուգապատում քննություն մը ՏԵՂԱՎՈՒՅՆ ՎՐԱ՝ առաջիկային մեծ արժեք կրնար ունենալ. մանավանդ որ այս բոլորը պատմողը նույն ինքն այն ոճրագործն էր, որ, ըստ իր հայտարարության, ղեկավարած էր Յոզկատի սանձագին մեջ տեղի ունեցած 42.000 հայերու համատարած սպանդը։

Բացառաբար ձիով ըլլալս ինծի մասնավոր պատեհություն տված էր, որ միշտ այս հայրուրապետին հետ քով քովի ճամփորդեմ։ Ամեն անոնք, որոնք երկար օրեր ձիով ճամփորդած են, փորձառաբար գիտեն, որ ձիավորը ձիավոր ընկեր կը փնտրե երկարատև ճամփու ձանձրույթը փարատել կարենալու համար։ Իսկ հարյուրապետ Շյուքրի անջատ գնացած ատենս՝ հաճախ ինք կը հրավիրեր իր մոտ, որպեսզի միասին ձիավարելով խոսակցինք և ժամանակն անցընենք անձանձրույթ։

Իսկ իր անվերապահության ես պատճառը՝ ինչպես ինք ես հաճախ կը հայտարարեր, այս էր, որ նա խորապես համոզված էր, թե մենք ամենքս ալ պիտի չկարենայինք ողջ մնալ՝ Տեր Զորի անապատներուն մեջ անոթի ու ծարավ մեռնելով։ Եթե նույնիսկ անակնկալ սպանդի մը զոհ չերթալու բացառիկ բախտն ունենար մեր քարավանը։

Բաց ատի հետս բավական հարգանքով կը վարվեր, ոչ թե ներքին անկեղծ զգացմամբ, կամ իբր առաջնորդ մեր ունեցած նախկին դիրքերուն ի հարգանս, այլ որովհետև կը ջանար ըստ կարելվույն մեզ կողոպտել՝ առանց բռնի միջոցներու։ Քանի որ Յոզկատի նոր կառավարիչն խիստ հրաման ստացած էր, Պոլսեն նոր ժամանած հրահանգներուն համաձայն՝ դադրեցնել այլևս խմբական սպանդները, ինչպես ինք ես բացահայտորեն կը հայտներ։

Մինչ ես ավելի իր համակրանքն շահելու համար, հավատացուցած էի, թե ես միշտ թրքասեր առաջնորդ մը եղած եմ և Պոլսեն աքսորված եմ համանուն հեղափոխական անձի մը տեղ, և իբր թե սուլթան Համիդեն իսկ պատվանշաններ ունիմ...

Ասկե զատ միշտ կը քննադատեի հայ հեղափոխական կոմիտեներուն ծայրահեղ արարքներն, և առժամապես յուրացնելով իր և թուրք պետական բոլոր պաշտոնեից մտայնությունը և ամբաստանությունը, հաճախ կ'ըսեի իրեն նման, թե հայ ժողովրդի գլխուն եկած բոլոր փորձանքներուն միակ դրդապատճառն հայ հեղափոխականներն եղած են, որ թուրք և հայ դարավոր երկու բարի դրացիները իրարմե զատելով իրար արյան թշնամի ըրին...

Վերջապես անձնական համոզումներուս հակառակ՝ միշտ կը հեղեղեի այն բոլորը, որ կրնար ուղեկից հարյուրապետ Շյուքրիի հաճելի թվելով շահիլ իր համակրանքն, չքմեղացնելով իրար արժող թուրք արյունկզակ կառավարությունն ու թուրք ժողովուրդը։ Եվ կը կարծեմ թե հաջողած էի. որովհետև վայրկյաններ եկան, երբ «խոստովանաբար» հայերեն բառը գործածելով ինծի մտերմորեն ըսավ. «Մուրախաս էֆենտի, եթե չկրնամ քու ընկերներդ ազատել հարձակող խուժանին շատվոր ըլլալեն, քեզ կ'ազատեմ, միայն թե իսլամ պիտի ըլլաս, հիմակվենե քեզի ըսեմ...»։

Ավելորդ է ըսել թե ի՞նչ տառջարկ որ ըներ, դրատասխանս միշտ դրա՛նն էր. և այս առթիվ գուրանի հմտությունս ես ի հայտ բերել կը ջանայի, իր զարմացկոտ ուշադրության մեջ։ Ա՛խ անգամ մը բավ էր, որ կարենայինք ազատիլ այս արյունոտ ճամփանեռն։

Թեպետ անմիջապես պետք է ավելցնեմ, թե ամեն ջանք կ'ընեի ողջ մնալու, պայմանով որ պատվով կարենայի դուրս գալ այս ահավոր եղեռնեն, և ոչ թե իբր «ուրացող», ապա ընդհանուրին կողմե նախատակոծ ըլլալ։ Բայց այսպես արմատական չէի խորհեր հայ ժողովրդի մնացորդ բեկորներու փրկության մասին. բավ էր, որ ո՛րևէ «միջոցով» իրենք զիրենք փրկել կարենային։

Երբ դարձյալ մոտ կես ժամ վերջ սկսանք կրկին իրարու հետ ձիավարել, շարունակել ուզելով մեր ընդհատված խոսակցությունը՝ հարցուցի անտարբերորեն.—Շյուքրի պեյ, ինչո՞ւ անցուդարձի այսքան բանուկ ճամփաներու մեջ ջարդեր ըրիք, ու այժմ կոտորածներուն հետքերը մեջտեղ մնացած են. մի՞թե խոհեմություն չէր գաղտնի ձորերու մեջ ընել...

Պատասխան— «Արդեն այս ճամփաներուն վրա չեղան կոտորածները, ինչպես առաջ ըսի, ձմեռնային հեղեղը փոսերեն դուրս բերավ այս կմախներն, ոսկորներն ու գանգերը...և այս ճամփաներուն վրա բերավ ցանեց... Սա դիմացի ձորին մեջ ջաղացքը կը տեսնե՞ս (ձեռքովը ցուցընելով.), ան իր սև օրերը (գարա կունէրի) անցուց անցյալ ամռան. երբ մոտեն անցնինք, քեզ անոր համառոտ պատմությունը ընեմ, ու լսե»։

Երբ քարավանը կես ժամի դադարե մը վերջ կրկին ճամփա ինկավ և հասանք ցույց տված ջրաղացքին մոտերը, պատեհությունը չվրիպեցնելու համար խթանեցի ձիս ու կրկին փութացի հարյուրապետին մոտ, և՝ մեր խոսակցության կտրած թելը կրկին ձեռք առնելով սկսա մանրամասնություններ հարցնել՝ մղելու համար Շյուքրին, որ իր խոստացած պատմությունը սկսի։ Շյուքրի՝ «իշտե պուրատատրը» ըսելով սկսավ պատմել, թե «ճիշտ հոս տեղի ունեցավ Յոզկատի կիներուն խուզարկությունը»։

Բայց որովհետև շարահարաբար և մանավանդ մանրամասնությամբ չէր հիշեր և կամ չէր կրնար պատմել, թերևս իր ծերության բերմամբ, կը ստիպվեի հաճախ հարցեր տալ զիս հետաքրքրող ԵՎ ԱՌԱՋԻԿԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ մանրամասնություններու իրազեկ ըլլալ կարենալու համար, երբեմն հույժ փաղաքշանոք կողմնակի հարցեր կու տայի։

Ուստի այս նպատակով հարցուցի— Շյուքրի պեյ, խնդրեմ, մի քաշվիք, ամեն մանրամասնությամբ պատմեցեք, որ խոսքի նյութերնիս չպակսի և ճամփան ձանձրալի չըլլա մեզի։

«Քաշվելու բան չկա... արդեն ամենքին գիտցած բաներն են, և ութ ամիս անցավ անկե ի վեր..., ու ձայնը մինչև Եվրոպա հասեր է..., Գերման դեսպանատունը[1] իսկ այս մասին դիտողություն ըրավ, և այս դիտողության վրա է, որ ինչպես քիչ առաջ ըսի, Պոլսեն խիստ հրաման եկավ, այլևս դադրեցնելու հայերու ջարդերը...

Երբ որ Յոզկատի քաղաքին բոլոր այրերը՝ ավելի քան 8—9000 հոգի, իրենց առաջնորդով (Ներսես եպիսկ. Դանիելյան) և քահանաներով ու աղաներով այս վայրերուն մոտակա ձորերուն մեջ ջարդեցինք, այս անգամ կարգը եկավ կիներուն... Էրիկ մարդոց կոտորվելեն երկու ամիս վերջ, քաղաքին մեջ կառավարիչ Քեմալ ըստ տեղական սովորության մունետիկ կանչել տվավ, թե՝ Ձեր այրերը աղջամբ Հալեպ ժամանած ըլլալով և տեղվոյն կուսակալին խնդրագիր տված ըլլալով, որ իրենց ընտանիքներն ևս Հալեպ բերվին..., մութասարրիֆը երեք օր պայմանաժամ կու տա, որպեսզի ամենոք երկար ճամփորդության մը համար պետք ունեցած անհրաժեշտ պատրաստությունը տեսնելով մեկնելու նշանին սպասե։ Ո՛վ որ ինչ ուզե կրնա հետն առնել և վարձքը ո՛վ որ կրնա վճարել, ձիու կամ եզան կառք ու սայլ կրնա ունենալ, այս մասին կառավարությունը ամեն միջոց ձեռք առած է արդեն։ Բաց աստի, չըլլա թե մտքերնեդ երկյուղ անցնեք, մութասարրիֆ պեյը զգուշական ամեն միջոց ձեռք առած է, ձեզի ապահով ու ողջամբ ձեր այրերուն մոտը Հալեպ հասցնելու համար... Կառավարության այս հրամանին դեմ անսաստողները և պահվողներն ամենախիստ պատժի պիտի ենթարկվին. ի գիտություն հայ ընտանիքներու ահա կը հաղորդվի։

Թուրք մունետիկներու և քաղաքին թուրք մխթարներուն միջոցավ եղած այս կառավարական պաշտոնական հայտարարության վրա, հայ հիմար կիները ուրախանալով, որ իրենց այրերուն մոտ պիտի երթան..., կը սկսին խանդագին ճամփու պատրաստություն տեսնել, մանավանդ որ երեք օր միայն պայմանաժամ տրված ըլլալով շատ ժամանակ ալ չկար։

Ասոր վրա կիները հավատալով կառավարության այս խաբկանքին (իր բառով տոլապին), ամենքը սկսան ճամփու տենդագին պատրաստության։ Նույնիսկ շատեր իբր թե Երուսաղեմ ուխտի կ'երթան, անուշեղեններ, գաթաներ, խմորեղեններ (փախլավա) շինելով թիթեղյա տուփերու մեջ շարեցին իրենց Հալեպ գտնվող էրիկներուն նվեր տանելու համար... Ասոնք չէին հիշեր թրքական այս առածը՝ թե ԹՈՒՐՔԸ ՆԱՊԱՍՏԱԿԸ ԿԱՌՔՈՎ Կ'ՈՐՍԱ։ Ապա երեք օր լրանալե վերջ, ճամփա հանեցինք ամենքը մեկեն, ոմանք կառքերով, ոմանք սայլերով և աղքատներն ևս հետիոտն»։

— Արդյոք կը հիշե՞ք, կառքերու և սայլերու թիվը ո՞րքան էր.— «Կարծեմ 280-ը ձիու կառք էր, 550-ը եզան սայլ էր, ընդամենն 830 կառք ու սայլ կար մեր հետ»։

Բայց մի՞թե քաղաքին մեջ այսքան կառք ու սայլ կարելի էր գտնել։

«Յոզկատի կառավարությունը շրջակա գյուղական բոլոր կենտրոնները (նահիյե) ոստիկան զինվորներ ղրկելով քաղաք բերել տվավ տրամադրելի բոլոր կառքերն ու սայլերն, այս նպատակին հատկացվելու համար»։

1 Պոլսո գերման դեսպան թրքասեր Վանկընհայմի հանկարծական մահին վերջ, իրեն հաջորդ եկող Կոմս Վոլֆ-Մեթերնիխն էր, որ ազդու բողոք բարձավ թուրք կառավարության ղեկավարներուն մոտ հայկական համատարած կոտորածներուն դեմ և այս իսկ պատճառով Բեռլինեն ետ կանչվեցավ։

Այս կիներու ու երախաներու թիվը ո՞րքան էր արդյոք։— «Ընդամենն 6400 և քիչ մըն ալ ավելի էին բոլոր կիներն, աղջիկներն և երախաներն մեջը հաշվելով։ Ասոնց մեջ կային մինչև 12 տարեկան տղայք ևս, որոնք այր մարդոց քարավաններուն հետ չէին ղրկված՝ փոքր նկատվելնուն համար»։

— Որքա՞ն հետիոտն էին այս կիներեն։

«Անցյալ դեպքե ո՛րքան կը հիշեմ, 4000-են ավելին կառքերու ու սայլերու մեջ կրցան տեղավորվիլ, իսկ վարձք տալու անկարող մնացյալ կիներն իրենց զավակներով քարավանին հետևեցան ոտքով»։

— Այս քարավանը որո՞ւն հանձնվեցավ առաջնորդելու համար Հալեպ։

«Քարավանները առաջնորդելու պաշտոնը միշտ ինծի հանձնված ըլլալով, կիներու այս քարավանին ղեկավարությունը ևս ինծի հանձնվեցավ իբր այս վայրերուն ծանոթ ոստիկան զինվորներու հրամանատար մը։ Արդեն ամեն տեղ ալ այս պարտականությունը իմ պաշտոնակիցներուս հանձնվեցավ։ Երբ 6400-ե ավելի կիներու, աղջիկներու և երախաներու այս մեծ քարավանը հետս առած և շրջականերե բերված 80-ե ավելի ոստիկան զինվորներով հասանք քաղաքեն 4—5 ժամ[1] հեռու գտնվող այս դիմացի ձորին մեջ գտնվող 3 շրաղացքները, որ «ուշ տեյրմենլեր» անվամբ ծանոթ է, հրաման տվի ոստիկան զինվորներու ենթասպաներուն (չավուշ), որպեսզի իջևանին այս տեղը։ Միաժամանակ հրամայեցի 830-ե ավելի կառապաններուն և սայլապաններուն, որպեսզի հոս ձգելով ընտանիքները՝ իրենք դառնան իրենց գյուղերը։

Ապա օրեր առաջ պատրաստված կառավարական ծրագրին համաձայն, բաղաքեն 25—30 թուրք դայակուհիներ բերել տալով՝ սկսանք մանրակրկիտ խիստ քննության։ Յուրաքանչյուր կին, աղջիկ ու տղա մի առ մի խուզարկվեցան մինչև իրենց ներքնազգեստները, և հավաքեցինք ասոնց բոլոր ոսկեղեն, արծաթեղեն, ադամանդեղեն զարդերն ու արժեքավոր իրեղենները, ինչպես նաև իրենց զգեստներուն երիզներուն մեջ ճարտարորեն կարած իրենց բոլոր հնչուն մետաղ ոսկիները։ Ասոնք ամենքն ալ խաբվելով թե ստուգիվ Հալեպ իրենց այրերուն քով կ'երթան, հետերնին առած էին իրենց բոլոր արժեքավոր ունեցածը, ինչպես նաև իրենց թանկագին գորգերն ու կապերտները։ Արդեն կառավարությունն ևս այս նպատակով «Հալեպ ձեր էրիկներուն պիտի երթաք» սուտը շինեց, որ ունեցածնին հետերնին առնեն...

Այնպես որ կարճ ժամանակ վերջ, զատ զատ դեղեր (երդրն) կազմվեցան հարյուրավոր և հազարավոր կանանց ոսկի շղթաներով. ոսկի ժամացույցներով, ադամանդյա և այլ ազնիվ ու թանկագին քարերով ընդելուզված քառամանյակներով, ապարանջաններով, օղերով, մատանիներով[1]։ Հազարավոր հնչուն ոսկիներ գտանք կանանց զգեստներու մեջ կարված։ Այս պատճառով ևս խուզարկությունը սկսավ այնքան երկարիլ ու դժվարանալ, որ հարկ եղավ նոր խուզարկու կիներ բերել տալ քաղաքեն և կրկնակի խուզարկություններով միշտ նոր զարդեղեններ և հնչուն ոսկիներ գտանք՝ պահված կամ կարված ամենաթաքուն տեղերու և զգեստի ու ճերմակեղեններու ծալքերուն մեջ...»։

— Շյուքրի պեյ, քանի՞ ոսկիի արժեք ունեցող հարստություն մը կրցաք հավաքել Յոզկատցի այս հայ կիներուն վրայեն...

«Օ՜... շատ դժվար է այս մասին որոշ կարծիք մը հայտնելը, որովհետև մասնավոր տոմար չբռնեցինք, բռնողին կամ խլողին ձեռքը մնաց... ևս ըսեմ 30.000 հնչուն ոսկի, դուն ըսե 60.000 հնչուն ոսկի...»։

— Շատ լավ, ըսիք որ այս հարստությունը խլողին ձեռքը մնաց, բայց մասնավորաբար որո՞ւն ձեռքը շատ մնաց...

«Հասարակ ժանտարմայեն բռնե մինչև պետական ամենաբարձր պաշտոնյան...»։

— Շյուքրի պեյ, քանի որ այսքան անկեղծորեն և մտերմորեն կը խոսակցինք, խնդրեմ ներեցեք, որ հարց մըն ալ տամ. դուք ո՞րքան հարստություն հայերու այս ջարդերուն առթիվ կրցաք ձեռք բերել. մանավանդ որ ձեր պաշտոնին բերմամբ անշուշտ առյուծի բաժինը ձեզ պահեցիք, քանի որ իբր ժանտար-

---

1 Հարկ է հոս շեշտել, թե վայրերու անուններն ու ժամերու թվին նման մանրամասնություններ անկարելի է հոս հիշել ճշտությամբ։

1 Հոս հարկ է հիշել, թե գաւառի հայ ժողովուրդն առ ի չգոյե խնայողական դրամանատուններու, իր ամբողջ խնայած գումարները այս կարգի զարդեղենի կուտա, օրենքի կարգ անցած արեւելյան հին սովորության մը համաձայն։

մայի հարյուրապետ այս քարավանները անձամբ առաջնորդելու պաշտոնը ունենալով, մեծագույն առիթները անշուշտ անցան ձեր ձեռքը, ինչպես դուք ինքներդ ասիք քիչ առաջ։ «Եթե ամենքը ինձի մնար, ի՛նչ աղեկ, բայց կաշիե պայուսակները (հեյպե) լցնելով և բերանները ևս կնքելով քաղաք դրկեցի մութասարրֆին, բայց այս առթիվ շատ գողություններ եղան. կրոնամ ասել կառավարության ձեռքը հազիվ ասոնց կեսը հասավ։ Հաղարավոր գորգեր ու կապերտներ հավաքեցինք և իրարու վրա գիզեցինք այս ջրաղացքներուն մոտերը, բայց իմ զբաղված վիճակես օգտվելով նույնիսկ ոստիկան զինվորներն գողցան...

Ճիշտն ասելով, հազիվ 10.000 ոսկի հնչուն դրամ կամ զարդեղեն հայոց ավարներեն ձեռքս անցավ։ Բայց պետք է գիտնաս, որ ես միայն ժանտարմայի գոմանտան չեմ, այլ նաև Յոզկատի աղաներեն եմ (էշրաֆ)։ Երեսուն տարի է Յոզկատի մեջ կը պաշտոնավարեմ, և թեպետ ինձի քանիցս հազարապետի աստիճանով ավելի բարձր պաշտոններ առաջարկվեցան, բայց Յոզկատի մեջ միանգամայն կալվածատեր ըլլալուս և ազգական շատ ունենալուս, միշտ մերժեցի հեռանալ իմ ծննդավայր Յոզկատեն, և նախապատիվ համարեցի ավելի նվազ աստիճանով և ավելի պակաս թոշակով հոս պաշտոնավարել։ Արդեն տարիքս եկած լեցած է, 65-ը անցեր եմ. ասկե վերջ ո՞ւր պիտի երթամ։ Ունիմ Յոզկատի մեջ տուներ, կրպակներ և 2 հատ ջրաղացք, բայց իսլամ եմ, փառք Աստուծո, (էրհամ տուլլահ իսլամրմ.) սուտ չեմ խոսիր, հայերուն այս վերջին տեղահանության և ջարդերուն առթիվ մեծ հարստություն դիզեցի։ Բայց ես ծեր եմ. ի՞նչ պիտի ընեմ հարստությունը, միակ տղաս պիտի վայելե, որ այժմ Գերմանիա կը գտնվի և զինվորական ուսման կը հետևի. ան պիտի վայելե, հելալ ըլլա...»։— Պեյ, մեր խոսակցությունեն անզգալաբար շեղեցանք. կ'աղաչեմ կը պատմե՞ք, թե այս 6400-ե ավելի կիներուն, աղջիկներուն ու մանուկներուն վախճանը ի՞նչ եղավ։ «Հա՛ իրավ ասիր. ի՛նչ կը պատմեինք, խոսքը ո՛ւր տարինք։ Այսպես չորս օր, չորս գիշեր. մանրազնին խուզարկությունը շարունակելով՝ ամենքը իրենց բոլոր ունեցածեն մերկացնելե և միայն իրենց վրա հագած զգեստը ձգելե վերջ, ամենքը մեկեն հետիոտն ետ դարձուցինք Յոզկատ քաղաքին ետևը գտնվող ընդարձակ սարավանդը, ասելով որ, կառավարութենեն ներված ըլլալով նոր հրաման եկած է զիրենք կրկին քաղաք դարձնելու համար, որով ուրախությամբ և առանց դժկամության հետևեցան մեր հրամանին...

Երբ երեկ մեր անցած ատեն հեռվեն ցույց տված սարավանդս հասանք, արդեն մեզ կը սպասեին օր առաջ 10—12.000 շրջականերեն հավաքված իսլամ ժողովուրդ»։

— Բայց շրջակա գյուղերեն և քաղաքեն հավաքված իսլամ տգետ ժողովուրդը ո՞ւրկե իմացած էր կառավարության գաղտնի նպատակն ու ծրագիրը, որ օր առաջ եկած էր ու կը սպասեր...

«Երբ 4 օր և 4 գիշեր խուզարկությամբ զբաղած էինք, Յոզկատի տեղական կառավարությունը ոստիկան զինվորներ դրկելով շրջակա բոլոր թուրք գյուղերը, հանուն սրբազան ճիհատի հրավիրված էր իսլամ ժողովուրդը՝ մասնակցելու կրոնական այս սուրբ պարտականության, որոշելով օրը և տեղը...

Ուստի երբ որ որոշյալ տեղը հասանք, մեզմե առաջ և որոշյալ օրը կանխելով բոլոր շրջակայքեն փութացած էին գալ հավաքվիլ այս տեղը։

Որովհետև կառավարության հրամանը այս էր, որ անխնա ջարդվեին ամենքն ալ և ազատող չըլլա։ Ուստի փախչելու ամեն փորձ արգիլելու, և ծանոթներուն կարեկցելով հոգի ազատելու հետամուտ եղողներուն ևս գաղտնի փորձերը վիժեցնելու համար, հետս բերած 80 ոստիկաններով պաշարել տվի այս սարավանդը (թեփեն), և ամեն հավանական փախուստի կամ թաքստոցի տեղեր պահակներ կեցուցի։

Ապա ոստիկան զինվորներու միջոցավ հայտարարել տվի ներկա իսլամ ժողովրդյան, թե իրենց կնության առնելու պայմանով (այսինքն ոչ փրկելու մտքով ասել կ'ուզե) ո՛վ որ գեղեցիկ կույս աղջիկներեն կամ հարսներե զատել կ'ուզե, կրնա անմիջապես ընտրել, սպանդի միջոցին ընտրություն ընելը արգիլյալ է։

Ասոր վրա, հազիվ 220—250 աղջիկներ ու հարսներ զատվեցան ներկա ժողովուրդեն և ոստիկան զինվորներու կողմեն»։

Երբ այս քստմնեցուցիչ ու սարսափելի պատմությունը հասավ կոտորածի իսկական նկարագրության, պահ մը լռեց, փակեց աչքերը, «ապտես» առնելու մասնավոր ձևով՝ երկու ձեռքերը երեսին տարավ, լվացվելու պես ձեռքերը սահեցուց մինչև սպի-

տակ մորուքը և գուրանեն մեկ քանի աղոթքներ մրթմնչելով՝ ապա դարձավ ու ըսավ ինծի. «Աստված այսպիսի մահ ոչ ոքի ցույց չտա» կամ իր բառերով—Ալլահ պեօյլե եօլիմ քիմսէյէ կէօսթէրմէսին։

— Գնդակո՞վ սպանել տվիք, թե՞ սվինահար ըրիք։— «Պատերազմի շրջան է հիմա, գնդակը սուղ է. այլ իսլամ ժողովուրդը այս սպանդին վազած ատեն իր գյուղերեն ձեռքը ի՛նչ որ ինկած էր, կացին, սակր, մանգաղ, մահակ, բրիչ, բահ, (կամ իր բառերով, պալթա, սաթըր, պալտա, սոփա, գազմա, քյուրեք) ասոնցմով հանդիպածին զարկավ գետին գլոռեց. վերջապես ինչ որ ուզեց ըրավ...»։

Արդարև անհնար է գրչով իրական պատկերացումը փորձել այս 6400 անտեր ու անպաշտպան կիներու, սարկեշտասուն կույսերու և հարսներու, անչափահաս մանուկներու և ծծկեր երախաներու անգիտակից վազքերն, իրարու փարիլը, երկնքի խուլ կամարներն վար առնող աղեկտուր ճիչերն ու վայնասունները, փրկվելու հույսով աղիողորմ աղաչանքներն ու արտասվալից պաղատանքները մի առ մի թվել...

Մեզի ուղեկից յոզկատցի և պողազլիանցի ոստիկան զինվորներն անվերապահ կերպով և պարծանոք պատմեր են մեր աքսորի ընկերներեն ոմանց, թե ի՛նչպես հրապարակավ լլկումներ, գլխատումներ ըրած են, մարմնի զանազան մասերը կացինով և կամ այլ հետերնին բերած գործիքներով կտրած, հոշոտած են։ Թե ի՛նչպես ծծկեր երախաներ և մանուկներ երկու ոտքերեն քաշելով պատռած, քարերու զարկած են, կույս աղջիկները լլկած և մանուկները հոշոտած իրենց մայրերու աչքերուն առջև...

Ա՜հ իզուր է ջանալ փորձել գոնե ուրվագիծը տալու արյան այս համատարած նախճիրին։ Ո՛չ Զարմանդ, ո՛չ Ալփասլան, ո՛չ Զինկիզ-խան և ոչ ալ Լենկթիմուր այնքան անագորույն կերպով ուզեցին վարվիլ իրենց ոտնակոխ ըրած երկիրներու ժողովուրդներու և մանավանդ կիներու, աղջիկներու և անմեղ մանուկներու հետ։ Ինչ որ Թաթարներու, Սելճուգներու, Մամլուկներու և առհասարակ իսլամ կրոնի տարածիչներու աշխարհակալ պետերը հազարե ավելի տարիներ առաջ չէին ըրած, «Իթթիհատ և Թերաքզը» Թուրք կուսակցության վայրագ պետերը, և ասոնց գավառներու մեջ այն ատեն գտնվող



քաղաքային ու զինվորական մեծ ու փոքր պաշտոնյաները ու ավարի կանչված Թուրք ժողովուրդը, գործեցին անխղճահար իրենց արյունածարավ մոլեգնությանը և խժդժությանը մեջ՝ չանալով իրար իսկ դերազանցել...

Ապա չամչցան իրենց այս եղեռնական սխրագործությունները, հազվագյուտորեն իրենց պատահած հայերուն պատմելու և պարծենալու..., իրենց զոհերու թվերը և իրենց ըրած չարչարանքներու անլուր տեսակներովը...

Կողք կողքի ձիավարելով, մեր ժամեր տևող այս եղերապատում ու եղեռնապատում խոսակցությունը հասած էր վերջապես կետի մը, երբ այս աննախընթաց նահատակության ի լուր՝ այլևս անկարող եղա ինք զինքս զսպել, և անբացատրելիորեն ճնշող այս տպավորութենեն, և արյունոտ վայրերուն իսկ առթել չկրցած երկյուղեն ծառացած, դարձա, ու մանկական անմեղ հեքիաթի մը նման այս ամենը պատմող հարյուրապետ Շյուքրիի ըսի. Բայց Պեյ, դուք ծերունի հին իսլամ մըն եք, ի՞նչպես առանց խղճահարելու կոտորել տվիք այսքան հազարավոր անմեղ կիներ, աղջիկներ ու մանուկներ, որոնք ոչ «կոմիտեճի» էին և ոչ ալ ապստամբ. մի՞թե պարտական չպիտի մնաք այս անմեղ արյունին համար Աստուծո, Մարգարեին և Ձեր խղճին առջև...

«ԱՄԵՆԵՎԻՆ, ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ ԵՍ ՆԵՎԻՐԱԿԱՆ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՍ ԿԱՏԱՐԵՑԻ ԱՍՏՈՒԾՈ, ՄԱՐԳԱՐԵԻՍ ԵՎ ԽԱԼԻՖԱՅԻՍ ԱՌՋԵՎ... ՈՐՈՎՀԵՏԵՎ ՃԻՀԱՏ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԷՐ... ՇԵՅԽԻԼԻՍԼԱՄԸ ՀԱՅԵՐԸ ԻԲՐ ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՂ ԲՆԱՋԻՆՋ ԸՆԵԼՈՒ «ՖԷԹՎԱ» ՀԱՆԱԾ ԷՐ, ԻՍԿ ԽԱԼԻՖԱՆԻՍ ԵՎՍ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՎ ԱՅՍ «ՖԷԹՎԱՆ», ԱՍՈՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՄԱՅԱԾ ԷՐ...։ ԻՍԿ ԵՍ ԱԼ ԻԲՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱ ԹԱԳԱՎՈՐԻՍ ՀՐԱՄԱՆԸ ԳՈՐԾԱԴՐԵՑԻ... ՄԻԹԵ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ ՄԱՐԴ ՍՊԱՆԵԼԸ ՈՃԻՐ ԿԸ ՀԱՄԱՐՎԻ...»։

Այս անպատկառ և անլուր հայտարարության վրա այլևս լռեցի. որովհետև ի՞նչ կրնայի պատասխանել 42,000 անմեղ ժողովուրդ անխնա կոտորող դահճապետի մը, երբ անզեն, անպաշտպան կիներ և ծծկեր մանուկներ անգթորեն կոտորելը պատերազմի մեջ մարդ սպանելու կը նմանցներ... Մանավանդ որ մեր ճամբորդությունն ևս մտած էր փուլի մը մեջ, երբ ամեն

վայրկյան անակնկալս մահը դիմագրավելու սարսափեցուցիչ հարկին ներքև կը գտնվինք։

Մեր դաժան հարյուրապետը չզայրացնելու համար, ինչպես միշտ, այս անգամ ևս խոսքս շարունակելով և կատակախառն հեգնանքով հարցուցի. Պեյ, գիտե՞ս որ մենք՝ եկեղեցականներս, ժողովուրդը հանդերձյալ աշխարհի պատիժներով կը վախցնենք..., դուք ի՞նչպես պիտի քավեք անդիի աշխարհին մեջ Ձեր այս մեղքերը...

«Օ՜, ՇԱՏ ԴՅՈՒՐԻՆ, ԵՍ ԱՐԴԵՆ ՔԱՎԵՑԻ ԵՎ ԱՆԴԻԻ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՇԻՎ ՉԶԳԵՑԻ... ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ԸՐԱԾԻՍ ՆՄԱՆ, ԱՅՍ ՊԱՏՄԱԾ ԿՈՏՈՐԱԾԵՍ ՎԵՐՋ ԱԼ, «ՓՈՍԹՍ» ԳԵՏԻՆ ՓՈՒԵԼՈՎ ՆԱՄԱՋՍ ԸՐԻ ԵՎ ՓԱՌՔ ՏՎԻ ԱԼԼԱՀԻՆ ՈՒ ՄԱՐԳԱՐԵԻՆ, ՈՐ ԱՐԺԱՆԻ ԸՐԱ ՁԻՍ՝ ԻՄ ԾԵՐՈՒԹՅԱՆ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ ՍՈՒՐԲ ՃԻՀԱՏԻՆ ԱՆՁԱՄԲ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ...։ ՔԱՆԻ՞ ՔԱՆԻ՞ ԱՆԳԱՄՆԵՐ ՄԵԿ ՔԱՆԻ ՏԱՐԻՆԵՐ ԱՌԱՋ՝ ՏԱՐԻՔԻՍ ՊԱՏՃԱՌՈՎ ՁԻՍ ՀԱՆԳՍՏՅԱՆ ԿՈՒՋԵԻՆ ԿՈՁԵԼ, ԱՂԵԿ ՈՐ ՁԵՄ ԸՆԴՈՒՆԵՐ ԻՆԵՒ ՔԱՆԻՅՍ ԵՂԱԾ «ԹԱՔԱՎԻՏԻ» ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ...»։

Ուզեցի օգտվիլ արտակարգ պաղարյամբ, պարծանոք ու հոխորտանոք շատ խոսելու մասին ցույց տված իր տրամադրութենեն, և փոքր-ինչ այլևս խոսակցության մեր նյութը փոխելու համար, մանավանդ որ սարսափելի այս տոամին վերջին վարագույրն ալ ինկած էր արդեն, հարցուցի—Գերմանիա երբեք տեղեկություն չունեցա՞վ և դիտողություն չրրա՞վ միլոնե ավելի կոտորված քրիստոնյա ժողովուրդի մը այս սպանդին համար։— Ասով կը փորձեի գերմաններու հայոց սպանդին մասնակցության չափն ու պատասխանատվության բաժինը ճշտել նույնիսկ պետական ու զինվորական բարձր պաշտոնյայե մը, որ թեպետ գավառի մեջ կը գտնվեր, բայց իբր կառավարության ծրագիրներու գործադրիչ մը և ամենանշանավոր ջարդարարներեն մեկը, բնականաբար իրազեկ պետք է ըլլար պետական գաղտնի բոլոր արտաքին և ներքին իրադարձությանց։

«Եվրոպան խաբելու համար, թեպետ անցյալ տարի էնկուրիի ջարդերուն լուրը Պոլիս հասնելուն, ձևակերպության մը համար դիտողություն ըրավ և քննիչ ալ ղրկեց էնկուրի, բայց մենք շատ լավ գիտեինք, որ այս դիտողության իսկական շարժառիթն էր, կարծել չտալ թե իր ալ մատը կա այս կոտորածներուն մեջ։ Այս դիտողության վրա, թեպետ հայոց ջարդերը կարճ ժամանակի մը համար դադրեցան, բայց հետո կրկին շարունակվեցան։ Միայն սա տարբերությամբ, որ ավելի զգուշավոր եղանակով տեղի ունեցան և սպանվածներուն դիակները այլևս մեջտեղ չձգվեցան... Պոլսեն եկած մասնավոր հրահանգներու վրա՝ ամեն ջանք եղավ և կարելի ամեն միջոց ձեռք առնվեցավ, որպեսզի եվրոպացիները կամ ավելի ճիշտ ամերիկյան միսիոնարները անտեղյակ մնան Անատոլուի խորերը կատարվող ջարդերուն...»։— Պեյ, ընդհանուր կարծիքը այս է, թե Գերմանիոն ալ մատը կա, այս ջարդերուն մեջ. ո՞րքան ճիշտ է այս կարծիքը։

«Ատոր տարակո՞ւյս կա. Իթթիհատի կոմիտեին կամ Թալեաթին ու Էնվերին բերանին էր ինկած դարերե ի վեր՝ աշխարհակալ ամենահզոր սուլթաններու ընել չկրցածը՝ այսպես քանի մը ամսվան մեջ ընել լմնցընել։ Գերմանիա մեզի հասկցուց, թե ցորչափ օսմ. կայսրության սահմաններուն մեջ հպատակ ուրիշ ցեղերը մեզի բաղդատմամբ 20% համեմատության չհասնենք, ազատելիք չունինք մեր գլխուն եկած շարունակական փորձանքներեն։ Բայց չկարծես թե Իթթիհատը միայն հայերը կոտորելով պիտի բավականանա, քիչ օրեն մյուս ցեղերուն, մանավանդ Արաբներուն[1] հաշիվն ալ պիտի մաքրենք։ Արդեն Սեբաստիո հայերը տեղվույն չերքեզներուն ձեռքով ջարդել տալե վերջ, կառավարությունը այս ջարդարար չերքեզները պաշարելով՝ ամենքն ալ կոտորել տվավ, ըսելով թե առանց իր գիտության անմեղ հայեր ջարդած են։ Մինչդեռ չերքեզները կառավարության հանձնարարությամբ ջարդած էին հայերը։ Թուրք կառավարության հնարամտության (տոլապին) մի՞թե իրազեկ դեռ չես եղած, այնքան ատեն գավառի մեջ առաջնորդություն ըրած ըլլալով։

Ինչպես գերմաններն կրնան չքմեղանալ, ըսելով թե լուր չունեին հայոց կոտորածներեն։ Անատոլուի մեջ կոտորված և տեղահան եղած հարյուր հազարավոր հայերու տուներուն խոհանոցի պղնձեղենները ամիսներով Յոզկատեն էնկուրի երկաթուղի դրվելու համար, հարյուրավոր կառքերով և սայլերով ես էի փոխադրողը։ Այս անհատնում պղնձեղենները իսկույն

[1] Ստուգիվ մեկ քանի ամիս վերջ 1916-ին ամռան Սուրիա բանակին վերին հրամանատար Ճեմալ, սկսավ արաբներուն դեմ ալ հալածանքն ու Դամասկոսի մեջ սկսավ Արաբ մեծամեծներ կախել։

Գերմանիա փոխադրվեցան զենք շինվելու համար։ ԱՍԿԵ ՁԱՏ, ԼՔՎԱԾ ՈՒ ԿՈՂՈՊՏՎԱԾ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՈՒ ՎԱՆՔԵՐՈՒ ԲՈԼՈՐ ՄԵԾ ՈՒ ՓՈՔՐ ՁԱՆԳԱԿՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱ ՂՐԿԵՑԻՆՔ՝ ԿՈՒՈՒՊԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ՄԵՋ ԹՆԴԱՆՈԹ ՁՈՒԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ։ ԳԵՐՄԱՆՆԵՐԸ ԱՍԿԵ՞Ա Լ ՉՀԱՍԿԱՑԱՆ, ԹԵ Ի՞ՆՉ Կ'ԱՆՑՆԻ ԿԸ ԴԱՌՆԱ ԱՆԱՏՈԼՈՒԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐՈՒՆ ԳԼԽՈՒՆ...»։

Արդեն 2—3 ժամ միայն կարճ ընդհատումներով տևող այս պատմական և հույժ կարևոր և անմոռանալի խոսակցությունը վերջացնելով, ինք հեռացավ ու անցավ առաջ՝ զինք հրավիրելու եկող ոստիկան զինվորներու շավուշին ուղեկցությամբ։

Երբ առանձին մնացի, մեր քարավանին հետիոտն ընկերներեն պոլսեցի մեկ քանի հայ մտավորականներ, և ի մասնավորի փաստաբան Պողոս Դանիելյան, որ խիստ մոտեն մեկ քանի ընկերներով կը հետևեին լարված ուշադրությամբ մեր երկուքին, ըսավ. «Եթե պաշտոնապես Պոլսեն և ամենահեղինակավոր անձերու կողմե քննիչ եկած ըլլայիք, չէիք կրնար այսքան ճարտարորեն խոստովանցնել այս ոճրագործ հրեշը։ Երանի՜ թե օր մը աշխարհ լսեր այս 40.000 հայ ջարդող հարյուրապետին պատմական մեծ արժեք ունեցող խոստովանությունները»։

Ինչպես կանխավ շեշտեցի, ոճրագործ խոսակիցս, հաճախ կը կրկներ, թե փրկություն չկա ձեզի ալ, ամենքն ալ պիտի մեռնիք, միայն թե ես կառավարութենեն հրահանգ ունիմ կարելին ընելով ձեր և ձեր ետևեն եկող Գասթեմունիի հայերու քարավանները ողջ անցընելու այս տեղերեն, ուրկե ոչ մեկ քարավան ողջ անցած է դեռ։— Նույնպես հաճախ կ'ըսեր ինծի— հիմար չըլլաս, կարծելու, թե Տեր Զորի և շրջակա անապատներուն մեջ սարագրված հայերը ողջ պիտի ձգվին. անոնք ալ վերջ ի վերջո պիտի բնաջնջվին, կամ իր բառով, որ ընդհանուր կարգախոսի բանաձևն էր, կը գործածեր հաճախ «փաքլամաք» կամ «հարճարրք» այսինքն «մնացածներն ալ պիտի մաքրենք կամ ծախսենք հետզհետե...»։

Եթե այս ծեր ոճրագործն մեկ կետի մեջ սխալեցավ, այս էր որ միշտ կը կրկներ, թե Պոլսո և Զմյուռնիո հայերն ալ տարագրվելով պիտի «մաքրվին»։ Ու երբ կ'ըսեի, թե դեռ այս երկու վայրերու հայերը տեղերնին կը մնան, գլխու մերժողական շարժումով մը կ'ըսեր, ինք կը զարմանա, թե ի՞նչպես մինչև



հիմա Պոլսո և Զմյուռնիո հայերը չտարագրվեցան, քանի որ ասոնց համար ալ Իթթիհատի կոմիտեն տեղահան ընելու որոշում տված էր։

Բայց ինչ որ չուզեց ըսել հարյուրապետ Շյուքրի՝ իր պատմած սպանդի վերջին բոպեներու մանրամասնությանց մասին, քիչ վերջ իմացանք մեզ ընկերացող յոզկատցի ոստիկան այն զինվորներեն, որոնք ականատես եղած էին այս զահնդեցուցիչ մեծ սպանդին։ Թեպետև ես անձամբ չլսեցի, որովհետև միշտ զբաղած էի հարյուրապետով և չէի ուզեր բաժնվիլ իրմե, ավելի շահելու համար իր բարյացակամությունը, և ալ ավելի կորզելու համար իրմե նորություններ՝ զիս հետաքրքրող և ցայն վայր ինծի համար անծանոթ մնացած իրադարձությանց մասին։

Այս ոստիկան զինվորները պատմեր են, թե ի՛նչպես 10.000-ե ավելի շրջանակներեն հավաքված թուրք խուժան մը «Ալլահ, Ալլահ» գազանային վայրագ գոռչտուքներով կը հարձակի յոզկատցի 6400-ե ավելի անտեր ու անպաշտպան կիներուն, աղջիկներուն և երախաներուն վրա։ Այս միջոցին առաջ եկած վայնասունը, գոռում-գոչումը, աղեկտուր ճիչերն, և կացիններով, ուրագներով, սակրներով և այլ այս կարգի զենքերով թուրք խուժանը այնքան կատաղորեն կ'իյնա իր անմեղ զոհերուն վրա, որ խժալուր այս աղմուկը մինչև մեկուկես ժամ հեռու շրջակա գյուղերը կը լսվին... Կառավարական պատվերին վրա ոչ ոք իր քաղաքացի կամ ծանոթ ընտանիքները փրկելու համարձակություն կ'ունենա։ Որովհետև մահվամբ պիտի պատժվեր այն, ո՛վ որ համարձակեր մեկը փրկել. որով կը սկսին անխնա կոտորել, անտարբեր մնալով ամեն պաղատանքին։

Անհնար է ոչ թե գրել, այլ նույնիսկ երևակայել այս մեծ եղեռնը կամ տոմը՝ իր իրական մանրամասնությամբ. որովհետև այսքան հզոր երևակայություն մը ունենալու համար անպատճառ ոճրագործներու հատուկ ներքին կարողություններ անհրաժեշտ են...

Երբ սպանդը կը լրանա, ապա կը սկսին բոլորովին մերկացնել հազարավոր սպանված և հոշոտված այս զոհերը՝ զգեստները հետերնին տանելու նպատակով։ Այս դիակապուտին կը մասնակցին հետզհետե ոճրին վայրը շրջակա գյուղերեն փու-

թացող թուրք կիներ. և շատեր իրենց ծծկեր կամ մեկ քանի տարու երախաները գրկերը կու գան..., մեկը չունենալուն համար իրենց տուները, որ տեր ըլլա իրենց մանուկին։

Բայց այս ոչ նվազ անշուշտ պիտի նպաստեր թուրք ցեղին վագրային վայրագ բնազդները ի մանուկ տիոց սրելու ու վարժեցնելու արյան կարմիր գույնին ու հոտին...

Հավիտենական սրբությամբ օծուն և հավերժացյալ այս հազարավոր մեծ ու փոքր մարտիրոսուհիներու զգեստներու կողոպուտը կը տևե 4—5 օր։ Ապա կարգը կու գա ամեն կողմե արյան հոտ առնելով խուժող շուներուն, գայլերուն և շնագայլերուն. ասոնք ալ կը լրացնեն թուրքերուն սկսած գործը...

Ապա բացօթյա մնացած այս մարմինները կը սկսին ուռիլ, նեխիլ և կազմալուծվիլ։ Երբ հանկարծ Պոլսեն ներքին գործոց նախարար Թալեաթ, էնկուրիի մեջ մթերված հացահատիկը և ընդեղենները Պոլիս փոխադրելու պատրվակին ներքև, անձամբ կու գա էնկուրի և ապա ինքնաշարժով գաղտնապես Յոզկատ այցելելով կ'ուզե քննել, թե ԻՐ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ԼԱՎ ԳՈՐԾԱԴՐՎԱ՞Ծ ԵՆ։

Այս պատեհությամբ ոճրին հետքերը կորսնցնելու նպատակով մեծ փոսեր բանալ տալով ի մի հավաքել կու տա ցան ու ցրիվ գրեթե արդեն կմախացած փշրանքներն տարաբախտ մարտիրոսուհիներուն, կարծելով նաև թաղել այս մեծ տոամին սրտաճմլիկ սև ու արյունոտ պատմությունը։

Իսկ գերման կայսրը Վիլհելմ, երբ Թալեաթ կ'այցելեր Բեռլին, մարդկային պատմության մեջ չտեսնված մեծ ոճրագործը կը պատվեր ՍԵՎ ԱՐԾԻՎԻ պատվանշանով։ Պատիվ մը, որ շատ հազվադեպորեն կ'ընծայվի ոչ գերմաններու։ Այս պատվանշանին շնորհիվ Թալեաթ կը բարձրանա գերման ազնվականներու աստիճանին, իբր թուրք կայսրության Կամպեթան Քավուրը կամ Բիսմարկը...

Եթե այս թուրք հարյուրապետը՝ իր ցեղը չքմեղացնելու մտոք էր, որ գերմանները կ'ամբաստաներ, մյուս կողմեն Գերմանիո քաղաքական ու զինվորական պատասխանատու անձերն ալ բոլորովին չէին կրնար լվալ Պիղատոսի նման իրենց ձեռքերը հայ անմեղ արյունեն։

Ի դեպ է հոս հիշատակել, թե Յոզկատեն մինչև Կեսարիա



մեր անցած բոլոր ճամփաներուն վրա, մեր հանդիպած յուրաքանչյուր իսլամի վրա— արդեն քրիստոնյա ժողովուրդ մնացած չէր այլևս այս կողմերը—ըլլա այր, կին թե մանուկ, գրեթե 80 տոկոս հագած էին եվրոպական զգեստներ, կրելով վրանին իրենց գործած ոճիրներուն անժխտելի հետքերը։

Արդարև ծիծաղելի էր տեսնել տրեխավոր և շալվարով գյուղացիներու վրա «ռետենկոթներ», «պոնժուններ», « ժաքեթներ» ամենաընտիր կերպասե զանազան արանց և կանանց եվրոպական զգեստներ, որոնց մեկ մասը մեկին վրա, ուրիշ մասը երկրորդի մը կամ երրորդի մը վրա էր։ Բոկոտն թուրք գյուղացի տղայք հագված էին «մառնիլով» զգեստներ։ Իսկ այրերու վրա հաճախ կը տեսնեինք ոսկի շղթաներ ու ժամացույցներ։ Թեպետ կիներու վրա ալ ադամանդյա շատ զարդեր կը գտնվեին, սակայն շատ դյուրություն չունեինք կիներ տեսնելու, չնայած որ թուրք գեղջկուհիներ «նամեհրամի» սովորությունը ի վիճակի չեն խստությամբ գործադրելու Պոլսո «հանըմներուն» նման, որովհետև դաշտային աշխատությունները չեն թույլատրեր այսպիսի կրոնային կաշկանդիչ սովորույթներ հարգելու։

Հարյուրապետ Շյուքրի՝ Իթթիհատի կոմիտեին եղեռնական հրամաններն հաճույքով միշտ գործադրած ըլլալով հանդերձ, իբր ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, չափազանց հայհոյալից լեզու կը գործածեր Իթթիհատի կոմիտեին դեմ առհասարակ, բայց ի մասնավորի Իթթիհատական պետերու և մանավանդ Թալեաթի և Էնվերի դեմ։ Հաճախ կ'ըսեր «Ասոնք գնչուե սերած կամ հրեությենե դարձած (տէոնմէ) բախտախնդիրներ են, խելքերնուն փչածը կ'ընեն, վերջը խորհիլ չկա որ..., տեսնենք այս մեր ըրածին տակեն ի՞նչպես պիտի ելլենք...», ակնարկելով հայ եղեռնին։

Բայց այս վերջին խոսքերը ոչ թե խղճահարությենե, այլ հավանական պատիժի մը երկյուղեն առաջ եկած մտավախություն էր։ Որովհետև անմտություն էր արհեստով ոճրագործի մը և տասնյակ հազար անմեղներ ջարդող հրեշի մը մոտ այլևս խղճմտանք փնտրել։

## ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐՈՒ ՈՒՐԻՇ ՔԱՐԱՎԱՆԻ ՄԸ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Մեր վերև հիշած դժնդակ խոսակցություններեն ծայր աստիճան ջղագրգիռ եղած էի, մանավանդ որ մեկ կողմե անկարելին ի գործ պիտի դնեի ներքին փոթորկահույզ վրեժխնդրական զգացումներս լռեցնելու. մյուս կողմեն իր «բարեկամությունը» ա՛լ ավելի վայելել կարենալու համար ջանալու էի ըլլալ հույժ փաղաքուշ, հաճոյակատար և ստիպված էի միշտ իրավունք տալ իրեն և Թուրք պետության եղեռնական բոլոր արարքներուն։*

*Ասով հանդերձ մտքի շարշարալից վերհիշումով մը ջանք ու ճիգ կը թափեի մի առ մի մտքիս մեջ դասակարգելու և արմատացնելու՝ մարտիրոսացած ցեղիս քիչ առաջ լսած սարսափեցուցիչ դրվագները, խորապես համոզված, թե Տերամբ եթե օր մը ողջ մնալ հաջողեի, պիտի կրնայի անշուշտ ԱՐԺԵՑՆԵԼ ԱՅՍ ԻՄ ԲՈԼՈՐ ԼՍԱԾՆԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԾՆԵՐԸ...*

*Յոզկատ-Պողազլիա ճամփուն մեր երկրորդ օրը կեսօրին մոտ էր, երբ հանկարծ նեղ ձորի մը մեջ, ջրաղացքի մը մոտը ականատես եղանք մեզ ամենքս ալ մահվան մղձավանջով լեցնող դեպքի մը։ Բայց այս անգամ ոչ թե անցյալ արյունոտ պատմության մը կսկծեցուցիչ վերհիշումն էր, այլ դառն իրականությունն էր, որ կ'արձանանար մեր աչքերուն առջև, որ այլևս պատրանք չէր, այլ սարսափեցուցիչ իրողություն։*

*Ըստ սովորության ցան ու ցրիվ ճամփուն երկայնքին՝ զրեթե իրարմե 1/4 ժամ հեռավորության վրա առաջ քալող մեր քարավանը հանկարծ կանգ առած էր, և հետզհետե աքսորականները սեղմ շարքերով իրարու կը մոտենային։ Իսկ ես հարյուրապետին հետ՝ երկուքս ալ ըստ սովորության ձիով ամենավերջը կու գայինք, երբ տեսանք հաստ պարանով իր ոտ պնդորին կապված 54 հոգիե բաղկացած ուրիշ քարավան մը, ամենքն ալ կա՛մ վաթսունեն վեր ծերունիներ և կա՛մ 13—16 տարեկան պատանիներ, բոլորովին մաշած ու թափթփած զգեստներով և ոմանք ևս նույնիսկ ցնցոտիներով։*

*Ասոնք միակ արու մնացորդներն էին Յոզկատի 3000 տուն հայության, որ անցյալ 1915 աշունեն ի վեր թաքնված էին ո՛րևէ կերպով քաղաքին մեջ հրաշքով մնացած մեկ քանի տասնյակ զինվորի ընտանիքներու մոտ։ Բայց ամիսներ վերջ կարծելով, թե ամեն վտանգ անցած է և կառավարության հայերու ընդհանուր ներման դիտումնավոր կեղծ լուրերեն քաջալերյալ՝ հետզհետե դուրս գալով, կը սկսին մեկ մեկ օրապահիկի հետամուտ ըլլալ՝ ըստ իրենց կարողության։*

*Սակայն օրին մեկը հանկարծ մեջտեղ երևացած այս մնացորդ բոլոր հայերը, ըստ նախօրոք պատրաստված ցուցակի ձերբակալելով, մեկ քանի օր ևս բանտը պահելե վերջ, աքսորի անունին ներքև այս խեղճերը իրարու կապած կը բերին այս ամայի ձորին մեջ մի առ մի սպանելու հաստատ նպատակով։*

*Իսկ ասոնց իբր թե ապահովության հատկացած հետևակ 8 ոստիկան զինվորները, նույն առտուն իսկ կը սպասեն այս թշվառներեն 4-ը, ընտրելով ամենակտրիճ և ուսյալ երիտասարդներեն, ծրագրած ըլլալով մնացածները հանձնել ամեն կողմե հավարի եկած գյուղացի խուժանին, որպեսզի իր հասկցած ձևով ու ըստ իր «վարժության» «մաքրե» կամ «ծախսե», ինչպես սովոր էին ըսել Թուրքերը։*

*Օ՜հ անհնար է մոռնալ այն սրտաճմլիկ տեսարանը, երբ հազիվ մեր քարավանը նկատած, և մանավանդ հայ եկեղեցական մը հանկարծ տեսնելով հեծյալ և բարեկամական խոսակցության մեջ իրենց վաղածանոթ հարյուրապետ Շյուքրիի հետ, ասկե քաջալերված, ուրուրի հալածական իրենց մոր թևերուն տակ լեզապատառ վազող վայակներու նման, առանց ուշադիր ըլլալու նույնիսկ իրենց հսկող ոստիկան զինվորներու սպառնացող արգելքին, աճապարեցին կտրել մեր ճամփան։ Արտասուքով կ'աղաչեին ինծմե որ փրկեմ զիրենք իրենց սպառնացող վերահաս անխուսափելի սպանդեն։ Թե՛ հարյուրապետն և թե՛ մասնավորաբար ինծմե՝ Թուրքերեն լեզվով իրենց հուսահատ վիճակը պատմելով կյանք կը հայցեին։ Իսկ մահապարտներու այս քարավանին մեջ գտնվող հայախոս դպրոցական պատանիները մայրենի լեզվով գաղտագողի կը հասկացնեին ինծի, թե իրենցմե արդեն շորսը սպանված են և շրջականներեն հետզհետե հավաքվող Թուրք գյուղացի խուժանին ստվարանալուն զիրենք կը սպասցնեն մեկ անգամեն իրենց հաշիվն ալ մաորելու համար։ Ապա լալահառաչ կը պաղատեին, որ ազատենք զիրենք ու չձգենք հոն, ու կ'ըսեին—Աստուծո սիրույն մեզ ալ հետերնիդ տարեք, եթե անցնիք երթաք և մեզ հոս ձգեք, ան-*

միշտ պես մեզ ալ պիտի սպանեն մեր մյուս ընկերներուն պես։

Որովհետև ամենքը ամրապես իրարու կապված էին իրենց զրմուկի վերին մասերեն, երբ մեկ քանին շարժեին՝ ամբողջ քարավանը կամա ակամա միասին շարժիլ ստիպված էր։ Գավառի բնաջնջված կամ տարագրված մենկուկես միլիոն հայության այս հյուծած ու ազազուն խլյակները, ծառացած մեր ճամփուն վրա անդադար շնորհք կը խնդրեին, և այն ալ կյանքի շնորհք իրենց մեկ հոգևորականեն, որ ինքն ալ մահապարտ աքսորական մըն էր. միայն իրենցին պես դեռ չէր հնչած անոր ալ մահվան վերջին ժամը։

Արդարև վայրկյաններ կան, որում ամենատկար հոգիները իսկ հանդուգն դյուցազուններ կը դառնան, և ամենազգույշ և դանդաղ լեզուներեն իսկ հրաշագործ ճարտասաններ կը թվին ըլլալ։ Ո՜հ անհնար էր մեզի անտարբեր մնալ այսքան արցունքոտ աղաչանքի, պաղատանքի հանդեպ, եթե նույնիսկ մեր կյանքն արժեր։

Հարյուրապետ Շյուքրի, որ անձայն և անտարբեր կը դիտեր այս բոլոր իրադարձությունը և կը լսեր ըսվածները, տեսնելով որ անկարեկիր կը մնար, թախանձագին աղաչեցի, որ շնորհ ընե և փրկե զիրենք՝ միացնելով մեր քարավանին։ Բայց Շյուքրի՝ արհեստով ոճրագործներու սովորական անտարբերությամբ պատասխանեց, թե կառավարության հրամանին դեմ ես ինչպե՞ս կրնամ գործել...։— Պատասխանեցի, թե այս պահուս մեր կյանքին միակ տերն է և մեր թե՛ հրամանատարն է, թե՛ մարաջախտը և թե՛ Սուլթանն է, քանի որ իր խղճմտանքին մնացած է իր ուզած ձևով վարվելու մեզի հետ և իր հասկացուցած ձևով չքմեղանալու, եթե երբեք հարցնող ըլլար սակայն...

Այս փաղաքշական խոսքերեն մեղմացած, մյուս կողմն ծերունիներ ամենքն ալ իրարու կապված թեպետ, բայց մեր ձիերուն մոտեցած՝ հարյուրապետին ոտքերը կը համբուրեին ու աղիողորմ կ'աղաչեին, որ գոնե իրենց շնորհ ընե։

Ապա հաճեցավ դառնալ ինծի և ըսավ—ՁՐԻ ՁԼԼԱՐ ԱՍԱՆԿ ԹԱՆ ՄԸ։—Եվ ես խոստացա գոհացնել զինքն ամեն կերպով։

Վերջապես հրամայեց յոզկատցիներու այս քարավանին պահակ կանգնող ոստիկան զինվորներուն, որ վերադառնան իրենք քաղաք, քանի որ իրենց պաշտոնը լրացած էր, և մյուս կողմե հրամայեց մեր քարավանին ոստիկան զինվորներուն, որ յոզկատցիներուն քարավանն ևս միացնեն մեր քարավանին։



Հազիվ այս հրամանն տրված, տեսնելու արժանի էր, թե ի՜նչպես ամենքը մեկ խուժեցին հարյուրապետին և իմ վրա, արցունքով կը համբուրեին անոր ոտքերն, իսկ իմ ալ ձեռքերը։ Արդարև փղձկեցանք ամենքս ալ և միացուցինք մեր մահարույր ճակատագիրները իրարու, թնպետ փրկության մեր հուսադրությանց մեջ՝ մեր մահն էր, որ կը փորձեինք հեռացնել մեզմե, առժամապես միայն անշուշտ...

Հազիվ Ճամփա ինկած, սկսան աղաչել, որ նաև քակել տամ իրենց կապված թևերը՝ հասկացնելով որ այնքան պիրկ կապած են, որ իրենց աջ թևի արյունը վաղուց դադրած է շրջան ընելե և դիտմամբ թմրացուցած են այսպես, որպեսզի սպանդի միջոցին ինքնապաշտպանության ո՛րևէ շարժում ընելու անկարող ըլլան իրենց բազուկները։

Սպանդի տարվողներու վրա գործադրված ընդհանուր դրություն մըն էր՝ թուրք ցեղին ոճրագործ ուղեղեն բխած...

Այս մասին ևս փորձեցի բարեխոսել. սակայն կարգ մը առարկություններե վերջ ըսելով, թե ժամմե մը վտակի մը եզրին ցորեկվան դադար պիտի տրվի, խոստացավ այդ միջոցին ազատ արձակել, միշտ կրկնելով, թե բարեխոսությունս կ'ընդունի միայն հնչուն ակնկալությամբ։

Արդարև քիչ վերջ, երբ հասանք մատնանշված տեղը, արձակել տվավ ամենքն ալ իրենց կապանքներեն։ Հակառակ անոր, որ Յոզկատեն մեկնելեն ի վեր 24 ժամ անցած էր և իրենք ոչինչ կերած ու խմած էին, այնուամենայնիվ իրենց անակնկալ փրկութենեն խելահեղ՝ ասոնցմե ոչ ոք իրեն երկարված պատառները առնել ու ճաշակել կ'ուզեր, այնքան հուզված էին և շվարած։

Այսպես մեր երկու քարավանները միացած՝ շուրջ հարյուր հոգիանոց հոծ խումբ մը դարձած, շարունակեցինք մեր ճամփան և արևամուտին հետ իջևանեցանք թուրք գյուղ մը։

Շնորհիվ հարյուրապետ Շյուքրիի կողմե ինծի տրված բացառիկ թույլտվության, ոստիկան զինվորներու տասնապետին հետ հարմար սենյակներ վարձքով գտնելով, տասնական հոգի զետեղվեցան յուրաքանչյուր սենյակի մեջ, ամեն սենյակի մեջ ձգելով պահպանության համար մեկ մեկ ոստիկան զինվոր։ Փափուստի մասին արդեն անձնապես երաշխավորություն տված էի, հավաստելով, որ եթե մեկը մեզմե փախչող ըլլա, պատրաստ եմ կյանքովս տուժելու։

Այս առթիվ հոգացինք մեր մեջ նաև մեր նոր ընկերներուն գոնե ցամաք հացի մը կարոտությունը։

Հաջորդ օրը՝ Յոզկատեն հեռանալու երրորդ օրը, առավոտուն հազիվ կրկին նեղ ձորե մը պիտի անցնեինք, երբ մեզի պաշարված գտանք ամեն կողմե խաժամուժ ամբոխե մը։ Զորին երկու կողմի, բայց մանավանդ մեր ձախ կողմի լեռները ծածկված էին հարյուրավոր մարդոցմով, որոնք շրջակա գյուղերեն հավարի եկած էին որսի շան նման՝ արյունի և ավարի հոտ առած ըլլալով։ Թեպետ անշուշտ շատ դժվար է որոշ թիվ մը տալ, բայց հավանաբար 7—800 հոգի կար, որոնց մեջ կը տեսնեինք կիներ ու աղջիկներ։ Մեզի տրված ապահովիչ հավաստիքներուն վրա՝ մտքե չանցընելով այսպիսի հարձակում մը, հեռվեն լեռան վրա շարժող իրերը՝ արածվող ոչխարներ կարծած էինք. և երբ հանկարծ գտանք մեզի պաշարված, ավելորդ է ըսել, թե պահ մը ամենքս ալ կորսնցուցինք մեր պաղարյունությունը։

Մեր քարավանեն շատեր կու լային, ոմանք շվարած գետինը ծունկի էին, քանի մը ծերեր իրենց ծունկին զարնելով «լմնցանք» կ'ըսեին։

Մեր ցրված քարավանը ակնթարթի մը մեջ կրկին խտացած իրարու եկած էր բնազդական շարժումով մը։ Իսկ ես հարյուրապետին հետ ըստ սովորության խոսակցելով միասին կը ձիավարեինք իբր վերջապահ, երբ մեկ քանի երիտասարդներ եկան գուժել, որ պաշարված ենք և անմիջապես վտանգի ներքև կը գտնվինք։

Այս միջոցին մեզ դիմավորելու եկան նաև 8—10 հեծյալներ, որոնց երբ հարցուց հարյուրապետը, թե ո՞ւրկե կու գան, պատասխանեցին հարյուրապետին անունը տալով մեծ հարգանոք, թե «ոչխարի տուրք» հավաքելե կը դառնան... Բայց հարյուրապետ Շյուքրի ինծի գաղտնաբար հայտնեց, թե ասոնք լավ կը ճանչնա, հավաքված խուժանին պետերն են և իբր պատահական ճամփորդ-եկան՝ քարավանին մեջեն անցնելով քննելու, թե ավարը ո՛րքան է և քանի՛ հոգի էինք։

Ժամանակ չկար կորսնցնելիք. ժամ առաջ հարկ էր հնարավորը ընել, քանի դեռ ուշ չէր. ուստի դառնալով հարյուրապետ Շյուքրիի, թախանձագին աղաչեցի, որ փրկե մեզ վերահաս վտանգեն։ Ինչ որ բոպեին սարսռեցուցիչ տպավորության ներքև համոզելու և ողոքելու համար զինքն կրնայի ըսել ու խոստանալ, փութացի անվարան ընել և ըսել. բավ էր որ մեզ փրկեր։

Ամենքս ալ այն աստիճան շվարած էինք, որ եթե հարձակում ըլլար մեր վրա, կրնային մեզ ոչխարներու նման խողխողել՝ առանց հանդիպելու մեր կողմեն ո՛րևէ ամենափոքր իսկ ընդդիմության։ Թվեր թե արյունը սառած էր այլևս մեր երակներուն մեջ, ու մահը, որ մեր առջև արձանացած էր, ա՛յնքան երկյուղ չէր ազդեր. զի տարիե մը ի վեր արդեն միշտ մահվան շարունակական մղձավանջի մեջ ապրելով, վաղուց ընտելացած էինք մեռնելու գաղափարին հետ։ Զի ինչ որ կ'ապրեինք՝ շահ կը համարեինք։ Այս իրապես ահավոր աղետին անմիջապես ազդեցության ներքև արդեն մեր մտքերը խորհրդածելու, տրամաբանելու և կամ ո՛րևէ գործունեություն ունենալու ոչ ի վիճակի էին և ոչ ալ ժամանակ կար։

Ամենքին հույսը վրաս բևեռված էր, թե հարյուրապետին հետ մշակած բարեկամությամբս թերևս կրնայի ելից ճամփա մը գտնել։

Վերջապես հարյուրապետ Շյուքրի, սակարկողներու հատուկ հնարամտությամբ, կարգ մը դժվարություններ թվելե վերջ՝ առանց այլևայլի հարյուր հնչուն ոսկի պահանջեց նույն երեկոյին իսկ վճարվելու պայմանով, առանց ո՛րևէ առարկության՝ իբր փրկանք։ Խոստանալով խուժանը իսկույն ցրվել, սակայն անձնապես զիս հարյուր ոսկիին պարտական կ'ուզեր ճանչնալ և չէր ուզեր ուրիշներու հետ գործ ունենալ։

Ակներև է թե անմիջապես իր պայմանը սիրով ընդունեցի՝ ստանձնելով առ այս անձնական ամեն պատասխանատվություն։

Հազիվ փրկանքի այս սակարկությունը լրացած, հրաման ըրավ ոստիկան զինվորներու տասնապետին, որ մեկ քանի ընկերներ առնելով փութա խուժանը ցրվել իրեն անունով։

Ի դեպ է հոս հիշել, որ իբր Յոզկատի շրջանին 30 տարվան ոստիկ. զինվորներու հրամանատար, ամբողջ «սանճագին» մեջ զինք կը ճանչնային իբր կամքը քալեցնող ծեր աղվես մը, և ինչպես մեզ ընկերացող ոստիկ. զինվորները կը հավաստեին, սարսափ ազդած էր բոլորին։ Ամենը կը ճանչային զինք անձնապես. ո՛ր թուրք գյուղերը որ իջևանեցանք, մեծ հարգանք և երկյուղախառն ակնածանք ցույց կու տային իրեն հանդեպ։

Միաժամանակ երկրորդ անձի մը միջոցավ 10 հնչուն ոսկի

ալ պարզև խոստացանք տասնապետին, որպեսզի անկեղծորեն, և ոչ թե ձևականորեն գործադրե իր հրամանատարին Շյուքրիի հրամանը։

Այս խոստումին վրա դարձավ տասնապետը հրամանատարին հարցնելու, թե եթե խուժանը ընդդիմություն ընե իրենց և ցրվիլ չուզե, ի՞նչ ընեն։ Հրամանատարն ըսավ՝ կրակեցեք... Այս բացորոշ հրամանին վրա, հեծյալ 4—5 ոստիկ. զինվորներ, գլուխ ունենալով տասնապետը, քառասմբակ հարձակեցան սարի կողերուն վայրկյանե վայրկյան սպանդի ահազանգին սպասող խուժանին վրա։

Բայց ընչաքաղց և ոճրածարավ ամբոխը, որ տարիե մը ի վեր սպանդի, ալանի ու թալանի վարժված էր, չէր ուզեր նահանջել և կը համառեր մնալ։ Իսկ խուժանին հեծյալ 8—10 պետերը, որոնց մեր ճամփուն վրա հանդիպած էինք, նույնիսկ կը հանդգնեին մեր վրա քալել։

Իսկ մենք մեզմե մեկ քանի հարյուր մետր հեռու կատարվող այս մահվան կատակերգությունը անբացատրելի սարսափով մը կը դիտեինք ակնապիշ, երկյուղ կրելով միշտ, որ կրնար այս խաղը վերջանալ հանկարծ մեր սպանդին ողբերգությամբը։

Հանկարծ սթափեցանք մեր մահաբույր շփոթումին մեջ «մավզեր» ի գնդակներու սուլումով, և տեսանք, թե ի՛նչպես առջևի շարքերեն և էն կատաղի հետիոտն ռահվիրաներեն մեկը՝ ոտքեն վիրավորված գետին ինկավ։

Եվ ահա հարյուրավոր ստվար շարքերե բաղկացած և գազանական կրքերով բոցավառած խաժամուժ ամբոխը տեսանք մեր զարմացկոտ աչքերով, թե լեղապատառ ի՛նչպես հեփհեփ կը վազեր սարն ի վեր՝ ետև ձգելով ավարը փոխադրելու համար հետ բերած ձիերն ու էշերը, հրազենի պայթումին վրա այլևս համոզվելով, որ եղածը պարզ ձևակերպության համար ըստ անցյալ սովորությանց կատակ մը կամ խաղ մը չէր...

Արդարև տեսնելու արժանի բան էր, թե 4—5 ոստիկ. զինվորներու հարձակումին վրա կարելի է եղեր հարյուրավոր ամբոխ ցրվել, բավ է, որ կառավարությունը ԱՆԿԵՂՇՈՐԵՆ ԿԱՄԵՆԱ ՅՐՎԵԼ։ Ասկե ավելի պերճախոս և անհերքելի գործնական ապացույց՝ ալ ի՞նչ հարկ կար փնտրելու կառավարության անհերքելի պատասխանատվության մասին։

Զորը պատնեշող երկու կողմի սարերուն փեշն ի վեր փախչող խուժանին ետև տեսանք, որ սարի հակառակ կողմին վրա



ևս դեռ հարյուրավոր ամբոխ դարանակալ կը սպասե եղեր, հարձակման հաջողության մը պարագային, միանալու համար նախահարձակ իրենց ընկերներուն։

Վտանգը անհետացավ և փախչող խուժանին թողած 8—10 ձիերն ու էշերը, հետերնիս առած սկսանք մեր ճամփան շարունակել, միշտ նոր հարձակումներու երկյուղն մեր սրտին խորը։ Իր հաղթության վրա՝ հոխորտանոք սկսավ հարյուրապետ Շյուքրի խոսիլ իր հզոր ազդեցության վրա, որ ուներ ամբողջ գավառին բոլոր ժողովուրդներուն վրա։

Իր անձնասիրությունը փաղաքշող կարգ մը շաղակրատություններ վերջ, ուզելով լուսաբանվիլ, հարցուցի, թե վիրավորված մարդուն համար արդյոք իրեն ո՛րևէ պատասխանատվություն կու գա՞ր առաջիկային, պատասխանեց. «դե՛հ ինձի ի՞նչ պատասխանատվություն պիտի գա, մի՞թե համրված ոչխա՞ր է. ոստիկանական տեղեկագիր[1] մը պատրաստել պիտի տամ, ըսելով, որ «սեվգիաթին» (այսինքն տարագրության քարավանին) վրա հարձակեցան, և երբ ցրվել ուզեցի՝ ընդդիմացան և այս պատճառով ալ վիրավորվեցան... լմնցավ գնաց։ Հիմա «սէֆէրպէյլիկ է (այսինքն պատերազմի շրջան է), ո՞վ որուն, դեռ ինչե՞ր ըրինք ու հարցնող փնտրող չեղավ. ասանկ անշան դեպքի՞ մը համար պատասխանատվություն պիտի գա վրաս..., բնավ մեկը մյուսին ըսելիքը չէ մնացած... մուրախաս էֆենտի, հասկցա՞ր... դուն այս երեկո հարյուր ոսկին Ձեր ունեոր աղաներուն մեջ հավաքելով ձեռքս գնելուն ճարը նայե. ի՞նչուգ պետք...»։

Մենք այս բոլորը շատոնց հասկցած էինք, տասնհինգ երկար տարիներու թե՛ գավառի և թե՛ Պոլսո մեջ մեր պաշտոններուն բերմամբ՝ նախարարներու, կուսակալներու և պետական մեծ ու փոքր պաշտոնյաներու հետ ունեցած ամենօրյա հարաբերությամբ։ Միայն կ'ուզեինք պատեհությունեն օգտվելով տեղյակ ըլլալ ոճրագործ այս հարյուրապետին այս մասին ունեցած պատասխանատվության գիտակցությանը, մտայնությանը ու համոզումին։

Հարյուր ոսկիով ստույգ մահվանե մեր ձեռք բերած այս հաջողությունը կամ փրկությունը տեսնելով, ինքնին կը տարվինք հիշել հոռվմեական պատմության այն օրերը, երբ Աֆրիկեի

1 Ջաղիթ վարագաբ։

Նումիդիո Մասինիսա թագավորի ազգականներեն Յուգուրդ զորավարը, շարունակական իր պատերազմներով վերջապես Հռովմի տիրեց։ Եվ երբ տեսավ հռովմեացի զորավարներուն շեշտված ընչաքաղցությունը և հռովմայեցվոց ներքին ապականությունը, հաշտություն կնքելե վերջ՝ երբ կը հեռանար Հռովմեն, բացականչեց.— Շահասեր քաղաք, քեզ ալ գնելու համար լոկ զնորդ մը պետք է։

Մենք ալ իրավամբ կրնայինք բացականչել՝ կաշառակեր Թուրքիա, քեզ ալ գնորդ մը պետք է գնելու համար...

Զինադադարի այս վաղորդայնին, արդյոք Թուրքիա մի՞թե աճուրդի հանված չէ և ավելի գին առաջարկողին մի՞թե ժառանգ չպիտի մնա...

Աճապարեցինք շարունակել մեր ճամփան և մինչդեռ միջին հաշվով օրական 6—7 ժամ միայն ճամփա կրնայինք քալել՝ մեր քարավանին հետիոտն գնացողներուն պատճառով, որոնք մեր ուղեկիցներուն գրեթե 4/5 մասը կը կազմեին, այս օրը 8—9 ժամ ճամփա կտրեցինք և մթնշաղին հետ լեռնանեցանք տղմաթաթախ և հոգնաբեկ՝ Թուրք գյուղ մը։

Բայց մեզմե ոչ ոք ախորժակ ուներ այլևս ուտելու, և տարբեր խցիկներու մեջ ու ոստիկան զինվորներու նույն գիշեր աշալուրջ պահակության ներքև, կծկտած անքուն անցուցինք սրտադողի մեջ, աղտոտ փսիաթներու և ոջիլներու մեջ, որոնց հետ այլևս ընտելացած էինք, մենք ալ մեր վրա միշտ կրելով առանց չափազանցության հարյուրավորներ։

Այո, անկարելի էր մեզ քնանալ, որովհետև այլևս գաղտնիք մը չէր, թե ո՛չ թե մեր գերեզմաններուն մոտեցած էինք, այլ մեջը մտած ու չէինք գիտեր, թե վաղվան արշալույսին հետ ինչ մահահրավեր անակնկալներ կը սպասեին մեզի։ Ամենքս ալ նույն խորհրդածություններով կը ջանայինք ժամ առաջ լուսնցնել. որովհետև խավարեն կը վախնայինք, հիշելով որ բոլոր ոճիրներն գիշերը աղջամուղջին մեր կը դարբնվին։ Թեպետ արհեստով ոճրագործներու համար օրվան ամեն ժամը կը հարմարեր ոճիրի հղացումին և գործադրությանը...

Բարեբախտաբար դեպքերու ահարկու ազդեցության ներքև ծնունդ առած մեր ջղայնոտ կասկածամտությունը արդարացնող առանց ո՛րևէ վրդովիչ միջադեպի՝ լուսնցուցինք։ Նախքան քարավանին ճամփա ելլելը փութացի կատարել խոստումս, որ երեկոյին ոչ ոք մեզմե կրցած էր այս մասին խորհիլ. որովհետև



ինչպես ժողովրդային բացատրությամբ կ'ըսվի, հոգի չէր մնացած մեր վրա ո՛րևիցե բանի վրա խորհելու։

Շատ դյուրին եղավ հանգանակել հարյուր ոսկին, որուն մասնակցեցան նույնիսկ հազիվ քանի մը շաբաթվան ալարդ հացագին մը ունեցողները, որովհետև կը տեսնեին, թե երկար սակարկելու ժամանակ չէ... Մանավանդ որ դեռ կը գտնվեինք ու պիտի անցնեինք այնպիսի ամայի լեռներու ու ձորերու մեջեն, երբ մեր կյանքը կախված էր միայն կաշառակուլ մեր եղեռնագործ հարյուրապետ Շյուքրիին բարյացակամությենեն։

Մեր քարավանին մեջ գտնվող մեկ քանի չանկըրիցի վաճառականներու կողմե, երբ հնչուն կերպով համրվեցավ Շյուքրիի ափին մեջ հարյուր ոսկին, արդեն այս հնչուն ոսկիեն իր ագահությունը հրավառված, և հուսալով որ կծիկին ծայրը արդեն քակվեցավ վերջապես, ա՛լ ավելի բարյացակամ դարձավ հանդեպ ամենքիս և սկսավ բացառիկ պատիվներ ալ ընել, հրավիրելով, որ իրեն սեղանակից ըլլամ։

Չորրորդ օրն ևս անցավ բարեբախտաբար առանց մտահոգիչ ո՛րևէ միջադեպի, և մենք այս օրը ա՛լ ավելի պատեհություն ու համարձակություն ունեցանք մտածելու քիչ մը մեր սնունդին վրա, և պարենավորվելու և հոգալու նաև մեզի ընկերացող յոզկատցի հիսունե ավելի չքավոր աքսորի ընկերները։ Սակայն այս գործը անոր համար կը դժվարանար, որ հարյուր հոգիե ավելի մեր քարավանին մեջ հազիվ 30՝ չանկըրցիներ պահեստի դրամ ունեին, իսկ մնացյալները բառին բովանդակ նշանակությամբ հացակարոտ վիճակի մեջ էին։ Մասնավորաբար 54 յոզկատցիները բոլորովին մերկ ու անոթի էին, և հարկ էր ամեն օր կշտացնել այս թշվառները, ինչպես նաև Պոլսո մեր հին աքսորի ընկերներեն 16-են 10-ը նույնպես օգնության կարոտ էին։ Կարելի չըլլալով ամեն ատեն հացագին մուրալ, ստիպված անձնական փոխառությամբ կրցա մեծ մասամբ հայթայթել մեր օժանդակության կարոտ ընկերներուն ոմանց սնունդը։

Ուրիշ մեկ դժվարությունն ալ այս էր, որ Յոզկատեն մինչև Կեսարիա Թուրք գյուղացիները այնքան վրեժխնդրությամբ լեցված էին, որ ոստիկան զինվորներու միջամտությամբ միայն կը հոժարեին կանխիկ և հնչուն դրամով մեզի հաց, սոխ, հավկիթ և մածուն վաճառել։ Ասոնք էին մեր միակ սնունդները, թեպետև հետո ոչ թե հավկիթ ու մածուն, այլև ոչ իսկ հաց գտանք

գնելու, փույթ չէ թե հաց ըսածնիս հաճարի, կորեկի քնաբեր կամ առնուրդ մ'ըլլար։ Բայց վերջապես անոթիներուս համար սնունդ ուրն էր դարձյալ։

Սակայն մեզմե ոչ ոք հետամուտ էր ուտելու կամ խմելու, մահվան ամենօրյա մղձավանջը այնքան տագնապեցուցած էր մեզ, որ միայն անակնկալ կոտորածի մը զոհ չերթալու միջոցներուն վրա խորհելու հետամուտ էինք։

Թեպետ շատ հույս չունեինք, քանի որ հայեր էինք. վա՜յ եկած էր մեր ամբողջ ցեղին գլխուն։ Բախտին անակնկալ մեկ հարվածովը, ամբողջ հայության հետ ժառանգազուրկ դարձած էինք, հալածական և վայրավատին։ Վերջ ի վերջո չէ՞ որ մեր ամենքին ալ վախճանը նույն պիտի ըլլար ուշ կամ կանուխ, անոթի և ծարավ մեռնիլ Տեր էլ Զորի տոթակեզ ու անջրդի անապատներուն մեջ։

Չորրորդ օրն էր, երբ արշալույսին հետ ճամփա ինկանք դարձյալ մտահոգ ու ընկճված ու միայն Աստուծո ապավինած։ Որովհետև ամեն հույս արդեն կտրած էինք մեր ազգականներեն, եթե ասոնք դեռ ողջ մնացած էին...։ Իսկ անգլիացիներն, ֆրանսացիներն ու ռուսերն օ՜հ դեռ մեզմե շատ ու շատ հեռու էին...

Ըստ սովորության, երբ Շյուբրիի հետ միասին խոսակցելով կը ձիավարեինք, մեկ քանի բլուրներու ետև կրկին նեղ ձորի մը մեջեն անցած միջոցնիս մարդկային թաքնված դլուխներ տեսանք։ Ասոնք սակայն հարձակման համարձակութենե զուրկ ըլլալով խուզարկու ռահվիրաներու դերին մեջ կը մնային՝ շատ քիչվոր ըլլալնուն։

Այս դատեհութենեն օգտվիլ ուզեցի, վերահասու ըլլալու համար, թե այս ամբոխը ինքնաբերաբար կու գա մեր ճամփան սպասելու, թե հարյուրապետ Շյուբրի ինք գաղտնի մարդոր դրկելով բերել կու տա մեր վրա՝ մեզի կողոպտելու համար։

Ուստի հարցուցի—Շյուբրի պեյ, ասոնք ո՞վ մեր վրա կը դրկե, որովհետև ուրկե՞ գիտեն ասոնք, թե հայ տարագիրներու քարավան կ'անցնի, որ կ'աճապարեն հեռավոր գյուղերե գալ այս ցուրտին և մեր ճամփուն վրա սպասել, մեզ անշուշտ սպանելու, կողոպտելու համար...։— Պատասխանեց «Հանցանքը շիտակն ըսելով ասոնցը չէ. մենք վարժեցուցինք զիրենք ասոր...»։

Ի դեպ է հոս հիշել, որ հարյուրապետ Շյուբրի թեպետ նշանավոր ոճրագործ մը և դահիճ մըն էր, սակայն իբր կրոնամոլ ծեր Թուրք մը, զարմանք առթելու աստիճան ճշմարտախոս ու անկեղծ էր իր համոզումներուն մեջ և անվերապահ իր կարծիքներուն հայտարարությանը մեջ։

Այս շարժառիթով, հաճախ մեր մտքին մեջ ծագում առած կասկածներու և հարցերու մասին որոշ լուսաբանություններ ստանալու համար կը հարցաքննեի զինքն զգուշավոր կերպերով։

Անգամ մըն ալ այս նպատակով հարցուցի.— Շյուբրի պեյ, ինչո՞ւ սուլթան Համիդի օրով եղածի նման, այս անգամ ալ «Ժեոն Թուրքերը» իրենց բնակած քաղաքներուն մեջ կոտորել չտվին հայ ժողովուրդը, և թե յոզկատցի հայ կիները մի՞թե չէիք կրնար դյուրաբար փչացնել առանց քաղաքեն դուրս հանելու...

«Իթթիհատականներու այս ըրածը առաջինեն ավելի խոհեմ ճամփա էր, որովհետև եթե հայերը ջարդել ուզեինք սուլթան Համիդի օրով եղածին պես, այն ատեն մենք ալ շատ զոհեր պիտի ունենայինք։ Ինչպես հայերը Ադանայի մեջ 1909-ին ըրին, փողոցներու մեջ շինված պատնեշներու ետև և քարաշեն տուներու մեջ ամրանալով դյուրավ չպիտի ուզեին անձնատուր ըլլալ, այլ զենքով պիտի դիմադրեին։ Տես, Շապին Գարահիսարի և Ուրֆայի մեջ հայերը ամիսներով զբաղեցուցին կառավարությունը։ Մի՞թե այս ձևը ավելի գործնական չէր, ձեզ աքսոր պիտի տանինք, ըսելով՝ նախ զինաթափ ըրինք և ապա ճամփա հանելով առանց ո՛րևէ փոքր մը իսկ ընդդիմության մաքրեցինք...։ Իսկ յոզկատցի կիներուն գալով, եթե քաղաքին մեջ ասոնց գործը մաքրել ուզեինք, իրենց մոտը գտնված ոսկեղեն, արծաթեղեն և գոհարեղեն իրենց բոլոր զարդերը կոյուղիներու մեջ պիտի նետեին կամ փչացնեին, որպեսզի մեր ձեռքը չիյնար։ Մի՞թե ասանկ ընելը ավելի խոհեմություն չէր, խաբելով զիրենք, թե իրենց էրիկներուն մոտ պիտի դրկենք, իրենց բոլոր ունեցած ոսկեղեն, արծաթեղեն և գոհարեղեն զարդերը ու իրենց տուներուն գորգերը և կապերտները հետերնին առին, որով մեզ ալ շատ դյուրին եղավ մեկ քանի օրվան մեջ հավաքել ամենքը և զիրենք մերկացնել... Թեպետ մոռցա ցարդ հիշել, որ ադամանդյա շատ զարդեղեններ մեր խուզարկումներու միջոցին կլլած էին։ Սակայն Թուրք գյուղացիները մանավանդ կիները օրերով նեխած հազարավոր այս դիակներուն մեջ շրջելով փորոտիքները պատռեցին և բավական զարդեղեններ գտան, որոնք հետո քաղաք բերելով ծախեցին...։ Կառավարական բոլոր պաշտոնյաներս ալ զարմացանք, տեսնելով յոզկատցի հայերու տուներեն գտնված անբավ հարստությունը։

Հակառակ պետությունը մեր ցեղին ձեռքը ըլլալուն, Թուրք ժողովուրդը՝ բացի մեկ քանի մեծամեծներե (էշրաֆե) աղքատ է և տուներու մեջ մեկ կապերտ չունի։ Մենք ապշեցանք, թե ասքան կառավարական սեղմումներու մեջ ինչպես հայերը այս—քան հարստություն դիզած էին հին ռեժիմին, որմե այնքան կը գանգատեին։ Որովհետև դեռ մեկ քանի տարվան գործ է Սահմանադրությունը, ասոնք առաջուց հավաքած հարստություններ էին»։

Պետք չէ մոռնալ հիշելու, որ մեր անցած բոլոր ճամփաներուն, ձորերուն ու դաշտերուն վրա ցան ու ցրիվ կը տեսնեինք զգեստի, ճերմակեղենի պատռտած կտորներ, կոշիկի մաշած մասեր, եկեղեցական սուրբ գրքերու պատառ պատառ եղած էջեր։ Հայտնի էր, որ հայ տարագրյալներու մեծ քարավաններ անցած էին այս ճամփաներեն և անխնա ջարդված զանազան ձորերու և կիրճերու մեջ։ Մեզի ընկերակցող պահակ զինվորները պատմեցին մեզի, թե ի՛նչպես Յոզկատի մերձակա Ջաթ կոչված անտառուտ լեռներուն մեջ ամրացած ափ մը հայ քաջեր, շուրջ տարիե մը ի վեր կը կռվեին Թուրք զինվորական և ոստիկանական ուժերու դեմ, չափազանց զբաղեցնելով տեղական կառավարությունը։

Ջաթի մոտակա հայ գյուղացիները, երբ կը տեսնեն, որ Յոզկատի և շրջակայից հայությունը տեղահան ըլլալե վերջ՝ կարգը իրենց եկած է, կը փութան կանխել Թուրք կառավարությունը, բոլորովին անակնկալի բերելով զանի։

Երբ Յոզկատեն եկող բազմաթիվ ոստիկան զինվորներ կը մտնեն լուսնշաղին հետ գյուղ՝ տեղահան ընելու համար զուտ հայաբնակ այս գյուղի ժողովուրդը ևս, զարմանքով կը տեսնեն, որ բացի գյուղին մեջ մնացած մեկ քանի շուներե և աքաղաղներե, ոչ ոք մնացած է հոն։ Իսկ ասոնք ձգված էին, որպեսզի շարունակեն հաչել և ձայնել և անզգալի ընել իրենց անշշուկ հեռացումը գյուղեն։

Վերջապես գաղտնիքը երևան կ'ելլե, և կառավարությունը հազարի մոտ անկանոն զորք ու հարյուրի մոտ ոստիկան զինվորներ կը ղրկե լեռնային Թնդանոթներով, որպեսզի անձնատուր ըլլալու ստիպեն այս հանդուգն ափ մը հայ քաջերը։ Սակայն ասոնք Սամվել չավուշի առաջնորդությամբ ամրանալով Ջաթ լեռան խիտ անտառներուն մեջ, կը սկսին հերոսական պայքարի մը։ Ջաթի լեռներուն մեջ խոր և մեծ քարայր մ'ընելով



իրենց բնակարան, սնունդի անհրաժեշտ իրենց պաշարը երբ կը սպառի, կը սկսին ասպատակել մերձակա Թուրք գյուղերը և բռնադատել, որ իրենց պարեն տան։

Յոզկատի կառավարությունը իր հաճախակի զոհաբեր հարձակումներեն հուսահատ, և տեսնելով, որ անկարելի պիտի ըլլա ասոնք պարտության և անձնատվության բռնադատել, կը սկսի պատժել շրջակա Թուրք գյուղացիները, ամբաստանելով, որ դուք պարեն տալով Սամվելի և ընկերներուն, կառավարության թշնամիները կը քաջալերեք։

Չէ՞ որ միշտ այս եղած է Թուրք կառավարության գործելակերպը, երբ անկարող կ'ըլլա հանցավորը պատժել, իր վրեժը անմեղեն կը լուծե։

Այս պատմությունը մեզի ընող ոստիկան զինվորները ապշությամբ մեզի կը հիշեին, թե իրենց ներկա ընկերներեն մեկ քանին ալ, որ մասնակցած են Ջաթի այս կռիվներուն, նույնիսկ թնդանոթ տեսած են Ջաթի հայ քաջերուն մոտ, որոնք լեցնելով վառոդախառն քարերով, անկարելի կը դարձնեին հարձակող ուժերու առաջացումը։

Արտաքնապես զարմանքով և ներքնապես ուրախությամբ մտիկ կ'ընեինք այս հրաշալի պատմություններու վիպական մանրամասնությունները, և մեր մեջ հույս կը ծներ նմանօրինակ ազատության մը կարելիության։

Բայց շուտով կը բարոյալքվեինք, հիշելով որ անգամ մը օձիքնիս ձեռք տված էինք. և ազատումը գրեթե անկարելի էր դարձած, մանավանդ արյան այս սարսափելի ճամփաներուն վրա։

1915 օգոստոսեն մինչև 1916 մարտի վերջը դիմադրած էին և ոստիկան զինվորները կը հաստատեին, թե անկարելի է ասոնց հաղթել։

Արդարև Ջաթի այս ափ մը հայ քաջերը հաղթական կռիվը շարունակեցին մինչև համաշխարհային պատերազմի 1918-ի հոկտեմբերի փրկարար զինադադարը, մինչև որ իրենց զենքերով գնացին հանձնվեցան Հալեպ անգլիական զորաց վերին հրամանատար՝ զորվ. Ալեմպիին, արժանանալով ընդհանուր գնահատության և գովասանքի։ Իսկ անգլիացի հրամանատարը այսպիսի քաջերե չուզեց առնել զենքերը, որոնք պատիվ բերած էին իրենց հերոսական դիմադրությամբ հայ ցեղին։

Երեկոյան արևամուտին հետ իջևանեցանք Քելլեր անունով թուրք գյուղ մը, որ հազիվ 5—6 ժամ հեռու կը գտնվեր Պողազլիանեն, և որ մեր տառապանքի տարիներուն ամենասարսափելի սև հիշատակներեն մեկը եղավ հետևյալ միջադեպին պատճառով։

Հազիվ ըստ սովորության մեզի ուղեկից տասնապետին հետ մեր հարյուր հոգինոց քարավանին անդամները 8—10 գյուղացիներու վճարյալ խուցերուն մեջ տեղավորած, և մինչև ամեն ոք անկյուն մը գտնելով կծկտած էր, երբ տասնապետը եկավ հրավիրել զիս, ըսելով որ—Շյուքրի էֆենտին քեզ կ'ուզե տեսնել, առանձին խոսելիք ունի։

Բնականաբար մոտալուտ վտանգի մը երկյուղեն մտահոգ՝ չուզեցի նախ երթալ, դավադրութենե մը վախնալով։ Սակայն երկրորդ հրավերին վրա՝ ճարահատ գնացի գտնել հարյուրապետը, որ գյուղին մեկ ծայրը՝ խրճիթներեն բավական հեռու կեցած ինծի կը սպասեր։ Մեկնելու միջոցիս չմոռցա խցակից մեկ քանի կտրիճ երիտասարդներու հանձնարարել, որ աննշմար կերպով հետևին ինծի գոնե խուզարկու աչքերով։

Երբ հասա հարյուրապետին մոտ, սա խորհրդավոր շեշտով մ'ըսավ ինծի. «Մուրախաս էֆենտի, գործը գեշ է. լսելով որ «սեվքիաթ» (այսինքն հայ տարագիրներու նոր քարավան) պիտի անցնի ասկե, շրջակա գյուղերեն հարյուրավոր ժողովուրդ հավաքված է այս գյուղին շրջակայքը մեր վրա հարձակելու նպատակով, ուստի մեծ վտանգի մեջ ենք. գիտցած ըլլաս...»։ Պատասխանեցի. Շյուքրի պեյ, դուք երդում ըրիք Ձեր զավկին վրա, որ մեզ ողջ պիտի հասցնեք մինչև Պողազլիան. հետևապես Աստուծո սիրուն, այս խուժանը փախցնելու համար Ձեր ամբողջ ազդեցությունը գործածեցեք. ես վստահ եմ, որ անոնք Ձեզմե կը վախնան, երբ լսեն Ձեզմե սպառնալիք՝ կը ցրվին. փրկեցեք մեզ...։ Թեպետ մյուս կողմեն կը խորհեի՝ թե կրնար մեզ դարձյալ կողոպտելու նոր սադրանք մ'ըլլալ, այսպես անգո. խուժանի մը սարսափը ցցելով մեր առջև։

Բայց նա վարանքս տեսնելով «քիչ մը սանկ պտրտինք» ըսելով տարավ զիս 150 քայլ հեռու գյուղին վերևը աղբյուրին մոտակա փոքր ձորակ մը, և ի՞նչ տեսնեմ, Աստված իմ, սպանված այրերու և կիներու ուռած և հոշոտված մարմիններ, շատերուն գլուխները անջատված մարմիններեն և ոմանց ևս փորոտիքը դուրս թափած։ Այս բոլոր մարմիններն ալ բոլորովին մերկացված էին և տեսա ձեռքեր և ոտքեր կամ սրունքներ հեռու նետված մեկ մեկ կողմ։ Դժվար է գրչով արտահայտել այն սարսափեցուցիչ տպավորությունը, որ զգացի ի տես նահատակված այս ցեղակիցներուս. և ես չեմ հիշեր երբեք որ ա՛յսքան մոտիկ գտնեի զիս գերեզմանիս...։ Տեսնելով մահվան ա՛յսքան մոտիկությունը, հանկարծ տկարացա և ինկա գետին, առանց ուշաթափ ըլլալու սակայն, որովհետև արդեն հոգնած սրունքներս միայն գթոտեցան և չէին ուզեր կրել իրենց վրա ծանրությունը։ Ակնթարթի մը մեջ՝ շարժանկարի մը նման, եկան անցան երևակայությանս հորիզոնեն կյանքիս բոլոր հիշատակարժան դեպքերը, և շվարած էի խորհելով թե կրնար և մեզի վիճակիլ նույն սև բախտը վայրկյանե վայրկյան։

Հարյուրապետը փութաց վերցնել զիս գետնեն և ըսավ քաջալերական շեշտով մը. «Մի՛ վախնար Մուրախաս էֆենտի, մեր քարավանին համար վտանգ չկա, այս տեսած դիակներդ սպանել տված է Պողազլիանի գայմագամը Քեմալ, երեկ գիշեր այս գյուղը գալով և իբր գործավոր զինվոր հոս գտնվող բոլոր այրերը և կիները ընդամենն 28 հոգի սպանել տված է խուժանին և ձգած մեկնած է։ Ան այս սպանդն ըրած է անշուշտ, լսելով, որ նոր քարավան կու գա, և գյուղացիները մղելու համար նոր սպանդի։ Բայց Յոզկատի փոխկառավարչութենեն պաշտոնական ըլլալով կրկին Պողազլիան գալեն վերջ, ա՛լ առջի ազդեցությունը չէ մնացած, և ակռաները կոտրած են. մի՛ վախնար, մեզի բան մըն ալ չի կրնար ընել, ապահով եղիր։ Ես անմիջապես հավաքված խուժանը հիմա կը հեռացնեմ դեռ բոլորովին մութը չկոխած. միայն դուն ըսե նայինք, ի՞նչ պիտի տաս ինծի...»։

Անմիջական միակ պատասխանս այս եղավ.— Շյուքրի պեյ, ինչ որ կ'ուզես տանք, միայն այս վտանգեն ալ մեզ փրկե։— Պատասխանեց «Ձեր քով գտնված գորգերը ինծի տվեք այս գիշեր իսկ, և ես իսկույն ոստիկան զինվորներս զենքի ներքև կ'առնեմ և խուժանը կը փախցնեմ»։

Արդարև սակարկության ժամանակ չէր. խնդրեցի, որ ինք իսկույն գործի ձեռնարկե և ես ալ երթամ մեր վաճառական մեկ քանի ունևորները գտնեմ և ճարը նայիմ գոհացնելու զինքը։

Ուստի աճապարեցի իրենց խցիկներեն դուրս բերել տալ տասնապետին ընկերակցությամբ 4—5 ունևոր անձեր, և մեր վի-

ճակին տագնապալի հանգամանքը հայտնելով, հարյուրապետին պահանջին գոհացում տալու անհրաժեշտությունը շեշտեցի։ Ամենքս ալ ա՛յնքան մահվան երկյուղով մը պաշարված էինք, որ հակառակ մեզ քանիներու կասկածոտ վերաբերումին, փութացինք մեկ քանի գորգի հետ 50 հնչուն ոսկի իսկույն ղրկել հարյուրապետին։

Հարյուրապետը, համաձայն իր խոստման, ոստիկան բոլոր զինվորները հետն առած անձամբ երթալով խավարին մեջ ոճիր դարբնող և դարանակալ սպասող խուժանին մոտ, և ասոնց պետերը իր մոտ կանչելով հրամայած էր անմիջապես ցրվիլ և դառնալ գյուղերը, հակառակ պարագային սպառնալով կրակել։

Խուժանը տեսնելով, թե կառավարությունը դեմ է իրենց գործելիք սպանդին, թողած հեռացած էր գլխիկոր, չկրնալով մեկնություն մը տալ այս հանելուկին...

Հակառակ տասնապետին միջոցավ ինծի ղրկված ապահովիչ լուրին, այնուամենայնիվ մեզմե ոչ ոք կրցավ քնանալ, թեպետ մեր տառապանքի ընկերներուն երկյուղ չառթելու համար՝ գաղտնի պահել ուզած էինք ամենքեն։ Սակայն մեր դուրս ներս մտնելեն և խորհրդավոր շարժումներեն, և մանավանդ մեր թալկացած դեմքերեն մեր ընկերները գրահած էին, որ նոր վտանգի մը մեջ կը գտնվինք, ու անհամբեր կը սպասեինք լուսածագին։ Որովհետև վտանգի մեջ գտնվողները ավելի ապահով կը զգան զիրենք լույսին մեջ. մինչ գիշերվան աղջամուղջը իր խորհրդավոր սև քողովը ինքնին երկյուղ կ'ազդե, մանավանդ գրգռված ջիղերու և շփոթած երևակայություններու։

Առավոտ արշալույսին աճապարեցինք ժամ առաջ հեռանալ մահաբույր այս գյուղեն ևս և արագ քայլերով սկսանք իջնել զառիթափ մը դեպի Պողազլիան։

Քելլեր գյուղեն հազիվ մեկ ժամ հեռացած, հանդիպեցանք օսմ. պաշտամենտին Կեսարիո անդամ Ալի Քեմալին, որ Յոզկատեն էնկուրիի ճամփով Պոլիս կ'երթար կառքով։ Մեր երկարաձիգ քարավանին մեջեն անցնելե վերջ, երբ մոտս հասավ, հանկարծ կառքը կեցնելով հարցուց ինծի, թե ո՞ւրկե կու գանք և ո՞ւր կ'երթանք։ Պատասխանեցի՝ թե Զանկըրիեն կու գանք, բայց չենք գիտեր, թե ո՞ւր կ'երթանք... միայն Աստված գիտե...։— Ալի Քեմալ ըսավ— Աստված հետերնիդ ըլլա։— Այս լակոնական պատասխանով բնականաբար ըսել կ'ուզեր, թե ձեր գործը միայն Աստուծո մնացած է...



Քելլերեն մինչև Պողազլիան 5—6 ժամվան ճամփա մ'ըլլալով, երբ Պողազլիանի միայն 2 ժամ մնացած էր, հանդիպեցանք ճամփան թուրք գյուղացիներու, որոնք փութացին ավետել մեզի, թե «աֆուշահանե», այսինքն՝ կայս. ընդհ. ներում եղած է հայերուս, և թե աքսորված բոլոր հայերը իրենց ծննդավայրերը պիտի դառնան... Հաղորդեցին միանգամայն, թե իրենց աչքով կարդացած են ընդհ. ներման այս թուղթերը՝ փակցված գյուղերու պատերուն վրա...

Բայց ամենքս ալ իրարու կը հարցնեինք, թե քանի որ ընդհ. ներում եղած է հայերուս, ուրեմն ինչո՞ւ մեզ կը տանին դեպի Զոր, փոխանակ իսկույն վերադարձնելու մեր տեղերը։

Այս առեղծվածը կարենալ լուծելու համար, կրկին գտա մեր հարյուրապետը և հարցուցի իրեն, թե այս թուրք գյուղացիները ընդհ. ներման ավետիս կու տան մեզի, մինչ մենք Տեր Զոր կ'երթանք, ինչո՞ւ այս հակասությունը, և ի՞նչ հանելուկ է այս...

Պատասխանեց. «Մուրախաս էֆենտի, դեռ չե՞ս գիտեր թե թուրքին ամեն գործը «տոլապով» է, այսինքն խարդավանանքով է։ Պողազլիանի գայմագամն դիտմամբ ասանկ կեղծ հայտարարություն մը հանած է, որպեսզի եթե պահված հայեր դեռ կան հոս-հոն, հավատալով, թե հայերուն ընդհ. կայս. ներում եղած է՝ դուրս գան իրենց թաքստոցներեն և պահվողներեն ևս դյուրությամբ այսպես ձեռք ձգելով զանոնք ալ մաքրե... Չե՞ս գիտեր, թուրքը նապաստակը կառքով կ'որսա...»։

Արդարև ո՞րքան անկեղծ էր հարյուրապետ Շյուքրի իր այս հայտարարությանը մեջ։ Ինչպես տեսանք, հայերու բնաջնջումի բոլոր հրամանները գործադրվեցան կեղծիքով, խաբեբայությամբ և նենգամտությամբ, ասոնք էին արդեն իսկական հիմերը թուրք պետության, և գաղտնիքը իր գոյության հարատևության։

Թրքական այս ընտոծին խաբեբայության շնորհիվ էր, որ ամբողջ հայությունը իր բոլոր դասակարգերով, սկսյալ իր կրոնական և կուսակցական պետերեն, միշտ լավատես էին և ոչ ոք կը հավատար, թե հայության հիմնական բնաջնջման այսքան համատարած աղետ մը կամ սպանդ մը կրնար տեղի ունենալ Տեր Զոր երթալու աքսորի անվան տակ։

Վերջապես Յոզկատի մոտակա կամուրջեն մեր մեկնումին

վեցերորդ օրը արևամուտեն շատ առաջ հասանք Պողազլիան ահ ու դողով։

Այո՛, սարսափով լեցված մտանք արյունի և նախճիրի կենտրոն այս քաղաքը, որովհետև հավատի կերպով լսած էինք, թե Յոզկատի հայոց ընդհանուր ջարդերը կազմակերպող և առժամապես փոխկառավարչության պաշտոնը կատարող արյունարբուն՝ Քեմալ, սպանդի իր պաշտոնը լրացնելե վերջ՝ կրկին վերադարձված էր Պողազլիանի իր գայմագամության նախորդ պաշտոնին։

## 24.

## ՊՈՂԱԶԼԻԱՆԵՆ—ԿԵՍԱՐԻԱ
## ԱԼԻՍԻ ԿԱՄՈՒՐՋԸ ԵՎ ԻԹԹԻՀԱՏԻ ՁԵԹԱՆԵՐԸ

Յոզկատեն Պողազլիան երեք օրվան կառքի ճամփան մենք վեց օրվան մեջ հազիվ կրցանք անցնիլ. որովհետև հազիվ օրական 6—7 ժամ կրնայինք ճամփա երթալ, մեր քարավանին 4/5 երորդին հետիոտն ըլլալուն պատճառով։ Ամենքս ալ մեր առօրյա մահասարսուռ մտահոգությանց մեջ, մեծապես մեզ մխիթարված կը զգայինք, երբ կը հիշենիք անխուսափելի այն աղետալի հետևանքները, եթե կառավարության թույլտվութենեն օգտվելով փորձվեինք հետերնիս առնել Ջանկըրիի հայ ընտանիքներն ալ։ Ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը, եթե կին, աղջիկ, մանուկ հետերնիս առած եռապատիկ կամ քառապատիկ ավելի մեծ քարավանով մը անցնեինք այս արյունոտ ճամփաներեն։

Ինչպես ջանկըրիցիները, նույնպես և Գասթեմունիի հայոց տարագրության 400 հոգինոց քարավանը, որ 2—3 օրվան հետամնացությամբ մեր ետևեն կու գար, հետը չէր առած կին, աղջիկ, մանուկ։ Զգած էին գասթեմունցիներն ալ իրենց ընտանիքները քաղաք, սակայն Ջանկըրիի և Գասթեմունիի տեղական կառավարությունները տարագրված հայոց ընտանիքները հեռացնելով քաղաքեն, փոխադրած էին շրջակա թուրք գյուղերը։ Բայց ուրախառիթ է հիշել, որ Գասթեմունիի կուսակալության թուրքերը, մեծաթիվ բնակակից հայեր իրենց դրացի չունենալուն համար և բաց աստի եղողներն ալ թրքախոս



ըլլալուն՝ նվազ հայատյաց էին։ Որով և գյուղերը ցրված հայ ընտանիքները ո՛չ բոնի իսլամացության հարկադրած էին ուրիշ բոլոր տեղերու նման, և ոչ ալ շատ գեշ վարված հետերնին։

Երբ մեր քարավանը Պողազլիան մտավ, մեզ մասնավոր նկատումով անցուցին կառավարական շենքին առջևեն, որուն պատշգամին վրա մեզ դիտելու կանգնած էին պետական բարձր պաշտոնյաները։ Սակայն Յոզկատի ահավոր ջարդերը կազմակերպող և վարող փոխկառավարիչ արյունարբուն Քեմալ Հիվանդության պատրվակով՝ բացակա էր կառավարական շենքեն ու տունը մնացած էր, ինչպես տեղեկացանք տեղվույն ոստիկան զինվորներեն։

Մեր քարավանը առաջնորդեցին քաղաքին մեկ ծայրը իբր զորանոց ծառայող և պատուհանի ապակիներե բոլորովին զուրկ քարակառույց շենք մը։ Հազիվ ժամանած, Յոզկատեն մինչև Պողազլիան մեր քարավանը առաջնորդող հարյուրապետ Շյուքրի հրաժեշտ առավ մեզմե, ըստ մեր խնդրանց վստահելի ոստիկան զինվորներու ենթասպայի մը (շավուշ) հանձնել տալով մեր քարավանին առաջնորդությունը դեպի Կեսարիա։

Տարագրության հայ քարավանի մը Պողազլիան ժամանումը հազիվ քաղաքին մեջ տարածայնված, մեր արգելափակված շենքին շուրջ եկան դեզերիլ հայ 6—12 տարեկան որբուհիներ-վտիտ, նկուն և պատառոտուն ցնցոտիներով։ Ջարդուկոտոր եղած հին ազնվական ցեղի մը այս թշվառ բեկորներն մեր բանտարկված խուցին ջարդուփշուր եղած պատուհաններուն առջև գալով կմախքացած ձեռքերնին կարկառելով հեկեկանոք կ՝աղաչեին ու կ՝ըսեին՝ — Տեր պապա, անոթի ենք... կը մրսինք... (մարտի մեջ էր.) մեզի հացի մը փարա տուր... ոտքդ պագնենք, մեզ ալ հետդ տար...

Նահատակված հայության եղերամահ մայրերու տաքուկ գրկեն խլված այս անմեղ որբուկներուն օգնել չկարենալու դժբախտ պարագան, ա՜խ հազար անգամ անտանելի էր, քան ամենքին այնքան սարսափ ազդող մահը։ Աքսորական հովիվ մըն էի հոշոտված հոտի մը, անկարող էի պատառ մը հաց տալու այս հեգ որբուկներուն, որովհետև ես ալ չունեի. ի՞նչ կրնայի ընել, ոչինչ...։ Միայն ջանալ ամրապես դրոշմելու այս բոլոր եղերական ու եղեռնական դեպքերը հիշողությանս սև ծալքերուն մեջ, ողջ մնալուս պարագային կտակելու համար այս ամենքը ապագա հայ սերունդներուն...

Ասոնք յոզկատցիներու նման թրքախոս չէին, կամ այն էր, որ Պողազլիանի հայ ժողովուրդը իր շրջակա բազմաթիվ հայ գյուղերով հայախոս էր, ինչպես կը հավաստեին մեզի ընկերացող այս շրջանակին ոստիկան զինվորները, և կամ ասոնք հայախոս ներքին գավառներեն՝ այս ճամփաներեն անցնելով նահատակված հայերու մնացորդ բեկորներն էին։

Ջանկըրիեն մեկնելեն վերջ առաջին անգամ էր, որ Պողազլիանի մեջ ջարդված հայության բեկորներուն կը հանդիպեինք։ Այս թշվառներուն մեր վրա թողած կարեկցության տպավորութենեն զատ կը լեցվեինք մահաբույր սարսափի զգացմամբ, մտաբերելով հայության այն խուժդուժ մարտիրոսություններն, որոնց անժխտելի ապացույցներն կը թվեին ըլլալ իրենց գերեզմանին արդեն մոտեցած այս հինգ խլյակները։

Արյունարբու Քեմալին այսքան մոտիկ գտնվելնուս պատճառով նույնքան մտահոգ գիշեր մը անցընելե վերջ, արևածագին հետ մեկնեցանք Պողազլիանե դեպի Կեսարիա՝ մեծ ահ ու դողով և մահվան սարսափով լեցված։

Որովհետև ամենքը, նույնիսկ մեզի ընկերացող ոստիկան բոլոր զինվորներն, ինչպես և հարյուրապետ Շյուքրի ըսած էին մեզի՝ ԵԹԵ ՊՈՂԱԶԼԻԱՆ—ԿԵՍԱՐԻԱ ՃԱՄՓԱՆ ԱԼ ԿԱՐՈՂԱՆԱՔ ՈՂՋԱՄԲ ԱՆՑՆԻԼ, ԱԼ ԱՆԿԵ ԱՆԴԻՆ ՄԻ՛ ՎԱԽՆԱՔ...

Հազիվ ճամփա ինկած՝ սկսա ըստ իմ սովորության մասնավոր բարեկամություն մշակել մեզի ի նորո ընկերացող ոստիկան զինվորներուն և մանավանդ ասոնց պետին հետ, որ Օսման անունով պոլսեցի ուսյալ երիտասարդ մըն էր, որ իբր զինվոր պատերազմի ճակատ չերթալու համար՝ ստանձնած էր ոստիկան զինվորի ենթասպայի այս պաշտոնը, և դեռ նոր եկած էր Պողազլիանի այս ամենաարյունոտ շրջանը, թողլով Պոլսո կենտ. հեռագրատան մեջ իր ունեցած պաշտոնը։

Առաջին օրը անցավ բարեբախտաբար առանց մեզի մտահոգություն առթող և հիշատակության արժանի միջադեպի ու գիշերեցինք Ջանդրը կոչված թուրք փոքրիկ գյուղ մը։

Երկրորդ օրը անցանք ընդարձակ սարահարթե մը։ Ո՜հ ո՛րչափ գեղեցիկ էր վերազարթնող բնությունը գարնան այս սկիզբին։ Ջանկըրիեն մեկնելով փետրվարի 12-ին ցուրտ ձմռան մեջ՝ անցանք ձյունի թանձր ճամփաներե, զի արդեն մարտի երկրորդ շաբաթն էր, որ կը բոլորեինք։ Մեր քարավանին մեջ գտնվող ժողովուրդին մեծ մասին ոտքը այլևս կոշիկ



չէր մնացած, մաշած ըլլալուն նետած էին, և հիմա թուրք գյուղացիներե տեղական կաշի առնելով ամենքն ալ տրեխ շինած ու հագած էին։

Գարնանային ակնապարար կանաչություն մը՝ կետկիտված դեղին, կարմիր և հերմակ ծաղիկներով՝ մեր տանջվող հոգիներուն միակ սփոփանքն էր։

Բայց միանգամայն կ'արյունոտեր մեր սրտերն, երբ կը հիշեինք գարնան այս վերազարթնող բնության կենսապարգև գեղեցկությանց մեջ՝ անակնկալ կերպով սպանվելու հույժ հավանականությունը։ Ձմռանը մեջ մեռնիլը ա՛յնքան կսկծալի չպիտի ըլլար անշուշտ, ո՛րքան գարնան մեջ բռնադատված մահ մը, այն ալ շարշարալից մահ մը։ Որովհետև ո՛րքան բնական պիտի ըլլար մարդկային մահ մը՝ բնության մեռած օրերուն, նո՛ւյնքան դժնդակ հակասություն մը պիտի ըլլար մարդկային մահ մը՝ բնության հրաշազարդ հարությանը մեջ...

Գարուն էր, մեր շուրջը կանաչ մարգագետինները զարդարված էին գարնան երախայրիք եղող ձյունածաղիկներով։ Ասոնց սպիտակ վեղարներուն քովիկը կը տեսնվեին կապույտ մանիշակներ, որոնք հայ նահատակված կույսերու աչքերուն նման կը պսպղային կանաչ և սպիտակազգեստ այս դաշտերուն ու մարմանդներուն վրա։

Բայց դալարագեղ և կանաչ այս բնության գեղեցկությունները երբեք չէին հանգուցաներ մեր աչքերը, որովհետև ակամա անտարբեր դարձած էինք բնության այս հիասքանչ տեսարաններուն։

Այո՛, հոտավետ էին ծառ ու ծաղիկներ, բայց մենք չէինք զգար այդ բուրումները...

Այո՛, ակնապարար էին մեզ շրջապատող դաշտերն ու մարգագետիններն, բայց մեր անմեղ ազգակիցներուն հոշոտված մարմիններն մեր երևակայությունները այնքան սարսափով լեցուցած էին, որ կը տեսնեինք ու չէինք տեսներ, կը զգայինք ու չէինք զգար...

Այո՛, վերազարթնող բնությունը շատ գեղեցիկ էր, հրաշագե՛ղ ու հոգեպարա՛ր. բայց չէ՞ որ մեր սրտերն տուգի պատանք հագած էին... մեր հոգիներն ևս մահվան վաղվան տագնապով խոռված...

Ի՞նչ փույթ մեզի գարունը, կամ իր կանաչազարդ գեղեցկությունները, նախախնամության զանազան ու զարմանազան բյուր

հրաշալիքները. մեր դարդոտ սրտերուն ասոնք ի՞նչ գարման էին, մեր հազար ու մեկ վերքերուն ու խոցերուն ասոնք ի՞նչ պալասան էին...

Չէ՞ որ մենք մահվան դատապարտված ազգի մը ժառանգաղուրկ խլյակներն էինք, մերկ, անոթի, հալածական ու թափառական... Կ'երթայինք դեպի մահ... կը քալեինք դեպի սև ճակատագիր...

Թուրք վրիժառու և արյունոտ ուրվականը անխնա կը հալածեր մեզ, հովի պես կ'անցնեինք սար ու ձոր... ոչ մեկ տեղ մեկ գիշերե ավելի վար կը դնեին մեզ։

Անտեսանելի և անծանոթ բոթաբեր ուրվական մը կ'ըսեր մեզի անդադրում՝ «Մահապարտ հայ, քալե՛ քալե՛... քեզի ետև նայիլ չկա... միշտ առաջ քալե՛... միակ փրկությունդ անապատն է... միակ մխիթարությունդ մահն է...։ Միայն աղոթե, որ այդ մահդ շարշարալից չըլլա, փույթ չէ թե առանց գերեզմանի մնաս...»։

Այսպես միշտ անտարբեր մեր շուրջը սփռված գարնան գեղազվարճ հմայքին ու փթթումին, անցուցինք առաջին և երկրորդ օրը, առանց հիշատակության արժանի ո՛րևէ մտահոգիչ նոր միջադեպի։

Սակայն երրորդ օրը՝ մինչդեռ կը կարծեինք անցած ըլլալ երկյուղալի վայրերը, հանկարծ մենք մեզ գտանք այնպիսի իրական և կարմակերպված վտանգի մը առջև, որ կը սպառնար նույնիսկ մեր ամենքին կյանքը արժել։

Հողազլիանի և Կեսարիո ճամփուն վրա գտնվող Ալիս գետի (Գըզլըրմաք) «չոր կոզ» կոչված քարաշեն կամուրջն կը մոտենայինք և միայն կես ժամ մնացած էր հասնելու։ Երբ հանկարծ ամենքս ալ սարսափեցանք՝ լսելով «մավզերի» հաջորդական պայթյուններ, որոնց արձագանքներն կը թնդացնեին մերձակա ձորերն ու անտառներն, հետզհետե տկարացող ճարճատյուններով։

Անհրաժեշտ համառվեցավ քննության համար անմիջապես մեզի ընկերացող ոստիկան զինվորներեն մեկը փութացնել հրաբեռի պայթումներուն կողմը։ Սպառնացող վտանգի մը պահուն որոշեցինք ետ դառնալ, և ճամփեն հեռու թուրք գյուղ մը ապաստանիլ, մինչև որ վտանգը անցնի։

Սակայն ղրկված ոստիկան զինվորը տեսնելով, որ չի դառնար, երկրորդ մը ղրկեցինք նույն ուղղությամբ, բայց այն ալ գնաց ու չդարձավ։

Իսկ մեր քարավանին միշտ առաջապահ եղող Մկրտիչ անունով կարիճ և հայրենասեր երիտասարդը, ըստ մեր գաղտնի եղած կարգախոսին, հրահանգեցինք, որ չառաջանա և կեցած տեղը մնա։

Մյուս կողմեն տեսնելով, որ ոստիկան զինվորներու պետը քարավանը կը ստիպե որ առաջանա, պարգև տալով մոտ 1/2 ժամ հապաղեցնել տվինք մեր ճամփան։ Բայց մեր ղրկել տված երկու ոստիկաններու դարձին իզուր սպասելե վերջ, ճարահատ հույժ դանդաղ գնացքով և ահ ու դողով շարունակեցինք մեր ճամփան։ Հազիվ դեպի գետը երկարող աղեղնաձև զառիթափը սկսանք իջնալ, տեսանք, որ մենք մեր ոտքով արդեն թակարդը ինկած էինք։ Ստուգիվ այս անգամ ամեն ժամանակե ավելի կը գտնվեինք իրական և վերահաս մահվան մը առջև։

Պողազլիանի արյունկզակ գայմագամը Քեմալ, որ քաղաքեն մեր անցած միջոցին հիվանդ ձևացած էր, մեր ճամփա ելլելեն վերջ հեռաձայնով իմացուցած էր Կեսարիո Իթթիհատի «կլուբին» հայ տարագրյալներու քարավանի մը գալուստը դեպի Կեսարիա։

Այս լուրին վրա՝ Իթթիհատի «կլուբը» անմիջապես շարժման մեջ դրած էր իր հեծյալ հարյուրե ավելի «չեթաները» կամ ավազակները, ասոնք եկած դիրք բռնած էին Ալիս գետի այս կամուրջին առջև, որմե ստիպված էր անպատճառ անցնիլ դեպի Կեսարիա ուղևորող ամեն քարավան։

Արդարև ոճիրներու հույժ հարմար վայր մըն էր Ալիս գետի այս կամուրջը։ Որովհետև իրապես կիրճ մըն էր, և գետը կ'անցներ արագ վազքով մը վիթխարի և գահավեժ ապառաժներու միջով, որոնք կը պարսպեին իր եզերքները, մանավանդ Կեսարիո կողմեն։

Իսկ մեր եկած կողմը բացավայրի մը վրա բազմաթիվ քարայրներ կային, և քարաշեն մեկ քանի կիսափուլ շենքեր, ինչպես նաև ջորեպաններու կենդանիներուն հատուկ պարսպապատ իջևան մը կամ տեղական բառով «խան» մը։

Մեզ դիմավորող հեծյալ իթթիհատական չեթաները իրենց ձիերը այս քարայրներուն մեջ, և մեկ քանի պետեր ևս դուրսը ձիերը կապած էին՝ Չերքեզի արծաթապատ երասանակներով և

թամբերով։ Իսկ մեշտեղ շրջող չեթաները հագված էին չերքեզի զգեստ և գլուխնին դրած էին կարմիր կատարով սև «փափախ»՝ նորածին ուլի մորթե շինված։

Հազարավոր հայեր 1915-ի ամռան՝ կիրճին մեջ և ճիշտ այս կամուրջին առջև սպանված են ամենախուժդուժ կերպերով և գետը նետված մարմինները։ Բայց այս ժամանակեն վերջ, ուրեմն շուրջ 8—9 ամիսե ի վեր այլևս ոչ մեկ քարավան անցած էր այս նախճիրի վայրերեն։ Որովհետև արդեն ներքին գավառներու մեջ գտնվող հայեր չէին մնացած, «մաքրված» ըլլալով ամենքին ալ հաշիվը։

Արդ՝ անմեղ արյան ծարավը այս վագրերու ջոլիրը՝ փութացած էր այս նեղ կիրճին մեջ մեզ դիմավորելու, արյան նոր խրնջույքի մը զարհուրելի սխորժակով։

Այս «չեթաներուն» պետերը ինչպես ամեն տեղ, ամենքն ալ իթթիհատական երիտասարդ թուրք սպաներ էին կանոնավոր բանակեն ընտրված և էն կատաղիներեն։

Կեսարիո ամենատխրահռչակ և իրենց նախճիրներով մեծ համբավ հանած այս չեթայական կազմակերպության ղեկավարը կամ հրամանատարն էր Կեսարիո Իթթիհատի կլուբին պետը, որ միանգամայն տեղվույն քաղաքապետության նախագահն էր։

Թեպետ քաղաքապետության նախագահներն ըստ օրինի պետք էր որ տեղացի կալվածատերերեն ըլլային, սակայն համաշխարհային այս պատերազմի միջոցին, Իթթիհատի կենտրոնական Պոլսո կոմիտեն իր վրայեն նյութական ծանր բեռ մը նետելու մտոք՝ կարգադրած էր, որ Պոլսեն գավառ ղրկված Իթթիհատի գավառական կլուբներու պետերը միանգամայն ստանձնելով նույն քաղաքին քաղաքապետության նախագահությունը, այս վերջնույն սնդուկեն ստանան իրենց ամսաթոշակները։

Երբ մեր հարյուր հոգինոց քարավանը հասավ կամուրջին առջև, քաղաքապետը, որ կառքի մը մեջ նստած Կեսարիո Իթթիհատի կլուբի չորս անդամներուն հետ մեր ճամփուն վրա կը սպասեր, զիս իր կառքին մոտ կանչելով հարցուց, թե ո՞ւրկե կու գանք և ինչո՞ւ այսքան ուշ տեղահան եղած ենք։ Ինչպես կանխավ քանիցս հիշեցի, 8 ամիս վերջ միայն մենք տեղահան եղանք Զանկըրիեն, երբ տեղահան ընելիք և սպանդ տանելիք ոչ մեկ հայ մնացած էր Փոքր Ասիո մեջ, բացի երկաթուղու գծի վրա գտնվող հայերեն։ Ասոնք ալ Տեր Զոր գնացող քարավաններու մնացորդ բեկորներն էին, որոնք կաշառքով կամ ո՛րևէ



եղանակով կրցած էին մնալ Էսկիշեհիր, Քեոթահիա, Գոնիա, Էրեկլի, Պոզանթի, Գիլեմետիք, Ադանա և Ամանոսի փապուղիներու շինությանց մեջ՝ իբր գործավոր կամ պաշտոնյա։

Պահանջված բացատրությունները տալե վերջ, կառքով մեկնեցան Պողազլիանի ուղղությամբ, և երբ հասան մերձակա բլուրին կատարը, որ կ'իշխեր կամուրջին վրա, կառքը կեցնելով իրենք կառքեն վար իջան և սկսան շրջիլ ծխելով, կարծես բանի մը կը սպասեին...

Մենք ամենքս ալ նախապես պարզ ճամփորդներ կարծեցինք, բայց հետո մեր ուղեկից և պահապան ոստիկան զինվորներեն ու ենթասպայեն տեղեկացանք, թե որպիսի՛ դիվային ծրագրով եկած են եղեր ասոնք, և թե ո՛վքեր են եղեր ու ի՛նչ արյունոտ դերեր կատարեր են 1915-ի ամռան տարագրության ահավոր շրջանին։

Ասդին՝ կամուրջին առջև կանգնած այս կազմակերպված ավազակներուն պետը, որ կանոնավոր բանակեն հազարապետ մըն էր «սիվիլ» բաճկոնով և զինվորական կարմիր երիզավոր տաբատով, մեր կանխավ ղրկած ոստիկան զինվորներեն առաջինը բռնած կը ծեծեր՝ ոստիկան զինվորին ձեռքի «մարթինի» հրացանովը։ Որովհետև սա բոլորովին անտեղյակ իր դեմ գտնվող անձերուն, ո՛վքեր ըլլալուն՝ հանդգնած էր հարցնել, թե «մավզեր» արձակողները որո՞նք էին և ուզած էր ասոնց անունը արձանագրել։ Իսկ չեթայապետը վեճի առիթ մը ինքնին գտած ըլլալով, արդեն սկսած էր չարաչար ծեծել, և մենք լսեցինք ծանր այն հայհոյանքները, որ այս պետը կ'ըներ տեղական կառավարության հասցեեն՝ ասանկ «փայտի կտորներ» ոստիկան զինվոր ընելուն համար...

Հանդիպակաց քարայրներուն մեջեն, որ մեզմե հազիվ հարյուր քայլ հեռու էին, առաջացան 4—5 հսկայակազմ չեթաներ՝ ամենքն ալ չերքեզի տարազով, և ակնարկով նշանացի կը խոսեին իրարու հետ։

Վերջապես վայրկյանը արդարև հույժ եղերական էր, որ կրնար հանկարծ եղեռնականի փոխվիլ։ Անտեր ու անպաշտպան ափ մը հայեր էինք, անզեն, անոթի, երկար շաբաթներե ի վեր հոգնած և սպառած դժնդակ և աքսորականներու միայն հատուկ եղող տառապագին ճամփորդութենե մը։

Չեթաներու այսքան մեծ բազմության, որոնց թիվը անշուշտ ճշտել հնար չէր մեզի, պետք չկար երբեք. զի արյունկզակ և

ոճիրներու մեջ մարզված այս ավազակներեն տասը հատը իսկ բավ էր մեզ ամենքս ալ կոտորելու։

Արդեն մեր դեմը և մեր շուրջը տեղի ունեցող խորհրդավոր այս շարժումներեն և ոճրապարտ կազմակերպութենեն այնքան տագնապած և շվարած էինք ամենքս ալ, որ ապրելու հույս չէր մնացած այլևս մեր մեջ։ Որովհետև իրապես թակարդը ինկած էինք. մյուս կողմե ոչ մեկ փրկության միջոց և հետևապես հույս կրնայինք տածել... Քանի որ բոլոր փախուստի ճամփաներուն վրա հեծյալ չեթաներ արձանացած էին իբր պահակ։ Մեր արյունը կարծես սառած էր մեր երակներուն մեջ, մեր միտքը չէր գործեր, գիտակցության կամ դատողության նշան չէր մնացած մեր մեջ. ոչխարներու հոտ մըն էինք իրապես։ Բավ էր, որ մեր վրա հարձակում ըլլար, մենք անգիտակցաբար, ամբոխի հոգեբանությամբ, որ տրամաբանել չի գիտեր, և երբեք ոչխարի հավաքական բնազդեն չի տարբերիր, մենք մեզմե պիտի երկարեինք մեր գլուխները, բարձրացող և իջնող դանակներուն տակ...

Այս միջոցին թիկնեղ «չեթա» մը եկավ և հրամայեց ամենքիս, որ քանի մը քայլ հեռու գտնվող որմափակված և չծածկված ախոռը երթանք, որ ոչխարներու լքված գոմ մը կը թվեր ըլլալ։ Մեզմե շատերը, հակառակ անոր, որ սպանդի մը ամեն հավանականություն կը տեսնեին, սկսան դեպի այս գոմը երթալ, մեկ քանիներ ներս մտան, ուր մեզ արգելափակել կ'ուզեին՝ սպանդի մը պարագային հավանական ամեն փախուստ արգիլելու և նվազ հոգնությամբ և մեկ հարվածով ամենքս ալ «մաքրելու» համար։

Արդարև վայրկյանը ճակատագրական էր, ու ստույգ մահը մեր առջև ծառացած էր, պետք էր եթե հնար էր վերջին ճիգ մ'ընել փրկության, ապա թե ոչ ամենքս ալ կորսված էինք։

Մենք մեր մեջ արդեն համաձայնության մը եկած էինք, որպեսզի անխուսափելի աղետի մը պարագային՝ վազենք կամուրջի վրա, որ 10 քայլ միայն հեռու էր մեզմե, և նետվինք գետը... Իսկ հայրենի գետը Ալիս՝ գարնան ձյունհալին պատճառով ա՛յնքան բարձր հորդած էր, որ ստուգիվ լայնատարած ծով մը դարձած էր։ Տարակույս չունեինք, որ տասնյակ հազարավոր հայերու խոր գերեզմանը եղող մեր հայրենի այս գետը՝ Ալիս, չպիտի զլանար և մեզ ընդունելու իր հորձանուտ պղտոր



ալիքներուն մեջ... և պատսպարելու մեզ, փրկելով մարդահրեշ թուրք ոճրագործներու շարշարանքից և խուժդուժ մահեն...

Իսկ ես մտադրած ըլլալով ձիովս մեկտեղ կամուրջեն գետը նետվիլ, դեռ աշտանակած ասպանդակներուս վրա, սրտատրոփ կը հետևեի հեռեն այս բոլոր իրադարձությանց, առնելու համար վճռական և վերջնական քայլը... Այս միջոցին Պոլսո մեր մտավորական աքսորի հին ընկերներեն մեկը փաստաբան Դանիելյան եկավ սթափեցնել զիս շվարած վիճակես, հարկադրելով, որ վճռական քայլ մը առնեմ, և ըսավ.— Հայր սուրբ, չե՞ս տեսներ մեզ ախոռը կը տանին սպանելու... ժողովուրդը մի՛ թողուր որ ներս մտնե... դուրս կանչե...— Թեպետ աչքերուս առջև կատարված էր այս ամենը, բայց ա՛յնքան շվարած էի և կրնամ ըսել առաջին անգամ ըլլալով պաղարյունությունս ա՛յնքան կորսնցուցած էի, որ չէի տեսած ժողովուրդին գոմը մտնել սկսիլը. որովհետև աչքերս անքթիթ հառած էի չեթայապետին...

Իսկույն մոտս կանգնած մեկ քանի կտրիճ երիտասարդներ փութացուցի ներս մտնողներուն մոտ՝ զիրենք ստիպողաբար քովս հրավիրելով և մյուս կողմեն հանձնարարելով ամենքին, որ դեպի գետափը անզգալաբար առաջանան... Մեր աքսորի ընկերներեն չանկըրիցի վաճառականներեն ողբացյալ Աստվածատուր, հույժ ժողովրդական և ազնիվ դեմք մը, ինքնաբերաբար մոտենալով չեթայապետին, կ'աղաչեր կը պաղատեր, որ ոստիկան զինվորը այլևս չծեծի և ներե, միանգամայն ինքն ըլլալով տարեց մարդ՝ ողոքանոք կը համբուրեր չեթայապետին ձեռքերը։

Մեզի ընկերացող ոստիկան զինվորներուն ենթասպան ինք ալ գնաց միջամտելու և աղաչելու չեթայապետեն, որ բավ համարի այսքանը...

Քաջալերված այս երկուքին միջամտութենեն, իսկույն իջա ձիես և աճապարեցի չեթայապետին մոտ, ես ալ իմ կարգիս աղաչելով շնորհ ընե մեզի և չծեծե այլևս զինվորը, և պաղատագին խնդրելով, որ թույլատրե մեզի շարունակելու մեր ճամփան։

Չեթայապետը՝ զինվորը արձակելով սկսավ ինծմե տեղեկություններ հարցնել մեր քարավանին մասին։ Աճապարեցի պահանջված լուսաբանություններն տալ, ամենայն հաճոյակատարությամբ պատասխանելով իր բոլոր հարցերուն ճշտու-

թյամբ։ Ի մեջ այլոց հասկցնելով, որ Զանկըրիի 40 տնվոր հայ ժողովուրդը քաղաքական և ազգային գիտակցութենե զուրկ և թրքախոս խեղճ ու անմեղ ժողովուրդ մըն է, և այս իսկ պատճառով չուզեցին աքսորել, և թյուրիմացությամբ մը միայն ճամփա հանեցին... անձնական հակառակության մը պատճառով։ Մասնավորապես հիշեցի, թե իմ ըսածներս հաստատող և հույժ նպաստավոր ոճով խմբագրված պաշտոնագիր մը ունինք, և խնդրեցի, որ հաճի անգամ մը աչքե անցնիլ զայն։ Որովհետև խորապես համոզված էի, որ մեր պաշտոնագիրին ոճը հույժ նպաստավոր ազդեցություն պիտի ըներ անոր վրա, ինչպես մեր տարագրության բոլոր օրերուն մեջ, զայն կարդացող թուրք քաղաքային և զինվորական պաշտոնյաներուն վրա ըրած էր։

Ամենքս ալ լայն շունչ մը առինք, երբ ակներև մեղմությամբ մը ենթասպային դառնալով պահանջեց մեր պաշտոնագիրը։ Երբ առավ ու ամբողջապես կարդաց երկու անգամ, և երբ երկրորդ անգամ հասավ այն տողերուն, ուր գրված էր— Կեսարիա ողջամբ ժամանելնուն հեռագրով իմացներ ներքին գործոց նախարարին և Զանկըրիի կառավարության,— սկսավ կարդալ բարձրաձայն։ Ապա իր շուրջը գտնվող նույնպես քաղաքային հագուստով ծպտված թուրք սպաներուն դառնալով նշանացի խոսեցավ և ապա լակոնական ոճով ըսավ ինծի՝ Կիտե պիլիրսինիզ—կրնաք երթալ։ Որսը ձեռքեն փախցնող որսորդի մը ակներև զայրույթը կ'արտացոլար արյունարբու այս արևակեզ հրոսպետին խորշոմած և պրկված դեմքին վրա...

Այլևս փրկված էինք... մեր կյանքը մեզի շնորհված էր։ Իսկ այս ամենը տևած էր միայն հազիվ 15—20 րոպե։

Կարգ մը ակնածալից և ավելի ճիշտ է ըսել ստրկացուցիչ թրքական «թեմմանահներե» և շնորհակալություններե և մասնավորաբար կենսապարգև մաղթանքներե վերջ, որ հակառակ անշուշտ ներքին զգացումներուս արտահայտել բռնադատվեցա... կյանքի և մահու մեջ տարուբերող տառապանքի թշվառ ընկերներուս նշանացի հասկցուցի իսկույն, որ աճապարեն ճամփա ելլել։

Պարտասած և 6—7 ժամ քալելե հոգնած, ու մանավանդ մեզի տարիներ թվող այս վերջին մահաբույր մեկ քանի վայրկյաններեն զահնդած մեր խեղճ քարավանը, իր խուճապը չմատնելու համար բռնազբոսիկ ջանքեր ընելով հանդերձ, փութաց



հեռանալ այս պատմական սոսկալի վայրերեն։ Ոչ ոք մեզմե կը համարձակեր ետև նայելու, կարծես վախնալով, որ Ղովտի կնոջ նման աղի արձան կը դառնա։

Ցոթանասուն կամ ութսունամյա հալումաշ եղած ծերունիներ տեսնելու արժանի էր՝ ի՛նչպես երիտասարդական փութկոտ քայլերով կ'աճապարեին հեռանալ այս արյունոտ գետեն, կամուրջեն և խորհրդավոր քարայրներեն...

Երբ սկսանք բարձրանալ կամուրջին անմիջապես հանդիպակաց գահավանդը, մեր դեմ ելան մեկ քանի հեծյալ չեթաներ՝ կրկին մեզ ենթարկելով ահ ու դողի։ Բայց բարեբախտաբար մեկ քանի խոսքե-զաղտնապես փոխանակելե վերջ մեր ենթասպային հետ, անցան գնացին դեպի կամուրջ։ Միանալու անշուշտ իրենց խումբին, և կամ իրենց կանխավ հանձնված մեկ պարտականության մասին բացատրություն տալու արյունկզակ չեթայապետին։

Մեկ քանի ժամվան հևքոտ ճամփորդութենե մը հետո, վերջապես հասանք սարավանդի մը վրա ի նորո կառուցված քարաշեն և ամրակուռ իշևան մը, ուր որոշված էր գիշերել։

Թեպետ հնարավորություն կար ընթրիքի պատրաստություն տեսնելու, սակայն ամենքս ալ քանի մը ժամ առաջ Ալիսի կամուրջին մոտը տեղի ունեցող մահասարսուռ դեպքեն չափազանց վրդովված և ջղագրգիռ եղած էինք։ Այս պատճառով ոչ ոք մեզմե ախորժակ ուներ բան մը ուտելու, ընդհակառակը, յուրաքանչյուրը կ'աճապարեր լվացվելու՝ պառկելու համար ընդարձակ սրճարանին տախտակամածին վրա՝ անկյուն մը կծկտելով։

Բայց ակներև էր, թե անհնար էր այս պայմաններու ներքև քնանալ կամ նույնիսկ մրափել։ Այլ աչքերնիս փակած կը ջանայինք վերլուծել նույն օրվան սարսափելի դեպքը իր հետին մանրամասնությամբը։ Իսկ մեզմե շատեր նույն այս գիշերը ահաբեկող ճիշերով զառանցեցին. և ոմանք խավարին մեջ կարծելով, թե հարձակման մը ենթարկված ենք, իրենց քունեն ընդոստ արթնանալով դուրս ցատկեցին և պահ մը այս պատճառով մեր մեջ ընդհանուր խուճապ տիրեց։ Ոմանք ևս կուլային... հիշելով իրենց կիները, զավակները և սիրելիները. վերջին անգամ ըլլալով կ'ուզեին անդրադարձում մը ունենալ կյանքի անցյալ քաղցր հիշատակներու։ Զի հարկ է

խոստովանիլ, թե այսքան մոտիկ մեր գերեզմանին չգտնվեցանք երբեք՝ մեր տառապանքի 4—5 տարիներու ամբողջ ընթացքին։

Հազիվ արշալույսը ողջունած, առանց սպասելու նույնիսկ արևածագին, աճապարեցինք ճամփա իյնալ և ժամ առաջ հեռանալ արյունոտ հիշատակներ արթընցնող և դժբախտություն գուժող այս վայրերեն։

Երբ ըստ սովորության, մեր քարավանին պանդոկին գիշերվան վարձքը վճարելու համար թուրք ծերունի պանդոկապետին հարցուցի, թե ո՞րքան է մեր պարտքը, սա ի մեծ զարմացումն ամենքիս պատասխանեց.— Մի՞թե Աստված կ'ընդունի, և ամոթ չէ՞ ինծի, որ պանդոկի վարձք առնեմ ձեզի պես թշվառ մարդոցմե, որոնք տուն, տեղ, ընտանիք, հարստություն թողած, ոչխարի հոտի նման աքսոր կը տարվին...— Եվ երբ ըսի, թե ամեն պանդոկապետ մեզմե տասնապատիկ վարձք առավ յուրաքանչյուրես նույնիսկ մինչև 5 արծաթ ղուրուշ, պատասխանեց.— Առնողները անաստված մարդիկ են եղեր, այս աշխարհը ընողաց գտնողաց աշխարհ է («իտեն պուլուր տունյասը տրր, եահու»), ձեր գլխուն այս փորձանքները բերողներուն Աստված պատիժը պիտի տա, բայց ափսո՜ս, որ քանի մը սրիկաներուն երեսեն, ակնարկելով ժեոն թուրքերուն, երկիրն է, որ կը կործանի...

Շնորհակալություն հայտնելով մեկնեցանք աճապարանոք, անպատճառ նույն օրը հասնելու համար Կեսարիա։

Էքրեք թուրք գյուղի մոտեն սկսանք իջնալ ծանր-ծանր՝ շարք մը ապալեր բլուրներու վրայով գալարապտույտ զառիթափ մը, որ մեզ առաջնորդեց դեպի Կեսարիո ընդարձակ դաշտը։

Հազիվ մեր ոտքերուն առջև տարածվող լայնածավալ ավազի գաշտը իջած՝ սարսափելի թաթառ մը ավազի ամպեր ու սյուներ կը բարձրացներ մեր շուրջը, որ և մեզ թաղեց ավազի ներքև։ Անկարելի էր նույնիսկ մեկ մետր հեռուն տեսնելը. մենք իրարու պլլված գետին պառկեցանք՝ երեսնին ավազին, գոնե մեր դեմքերը պաշտպանել կարենալու համար փոթորկահույզ ավազի կսկծեցուցիչ շփումեն։

Իսկ մեր պահակ ոստիկան զինվորները՝ ժամ առաջ ասկե հեռանալու մեր աղաչանքներուն կը պատասխանեին միշտ անտարբերությամբ՝ թե Կեսարիա «թելեֆոն» ըրած են և հրահանգի կը սպասեն։ Բայց երբ ավազի թաթառը հետզհետե սաստկացավ, իրենք թողին մեզ և ապաստանեցան մերձակա ավերակ խրճիթ մը, որ մեզմե մեկ քանի հարյուր մետր հեռու կ'երևեր։

Ջիապանս, զոր ձիուն հետ մեկ-երկու մետր հեռուն ձգած էի, երբ 2—3 ժամ վերջ ավազի այս զարհուրելի թաթառը դադրեցավ, տեսա, որ ձին առած փախած էր՝ կապոցս ալ հետը տանելով. ձիու վարձքը Յոզկատեն—Կեսարիա արդեն կանխիկ առած էր Յոզկատի առջև հնգապատիկ արժեքով։

Արևի մայրը մտնելեն վերջ, Կեսարիայեն ոստիկան զինվորներ գալով, մեր անվանց պաշտոնական ցանկին ընթերցումեն վերջ, օրինական հանձնումը ըրին, մինչև Պողազլիանի հեծյալ ոստիկան զինվորները մեր կողմե լիառատ վարձատրվելե վերջ դարձան։ Իսկ մենք մեր նոր գերեվարներուն հետ ճամփա ելանք դեպի Կեսարիա։

Մինչ ամենքս ալ կը մխիթարվեինք, որ վերջապես քաղաքի երես պիտի տեսնենք, և ահա առանց Կեսարիա մտցնելու, քաղաքին եզերքեն մեզ առաջնորդեցին Թալաս, որ մեկ ժամ հեռու բլուրի մը վրա շինված է։ Երբ Կեսարիո քաղաքին եզերքեն կ'անցնեինք, հետաքրքիր թուրք բազմություն մը փութաց դիտելու մեզ, զարմանալով, որ դեռ «Անատոլուի» մեջ հայ մնացած է եղեր..., մինչ իրենք կը կարծեն եղեր, թե ա՛լ հայ չէ մնացած երբեք թուրք պետության սահմաններուն մեջ։ Թուրքերեն ոմանք գաղտագողի մոտենալով մեզմե մեկ քանիին, կը հարցնեին, թե արդյոք իսլամացած ըլլալնո՞ւս համար այսքան ուշ տեղահան եղած էինք...

Երեկոյին խավարին մեջ առ խարխափ սկսանք բարձրանալ Թալասի բարձրությունը։ Երբ մեր քարավանը կ'անցներ Թալասի փողոցներով, հաստատում քարաշեն երկհարկանի տուներու պատուհաններեն տեսանք կիներ, որոնք թաշկինակները ձեռքերնին լալու ձևեր ունեին։ Ապա լսեցինք, որ իսլամացած հայ ընտանիքներ են եղեր, որ ի տես ազգակից տարագրյալ նոր քարավաններու՝ փղձկած էին։ Անշուշտ խորհելով, թե մենք ալ կը տարվեինք դեպի հայության անշիրիմ գերեզմանը Տեր Զոր՝ մեր արյան տուրքը վճարելու համար իբր փրկագին, Հայաստանի ազատագրության հնգադարյան հղության արյունազանգ երկունքին...

## 25.

## ԿԵՍԱՐԻԱ — ԹՈՄԱՐԶԱ ԻՍԼԱՄԱՑԱԾ ԿԵՍԱՐԱՑԻ ՀԱՅ ԿԻՆԵՐՈՒ ԱՆՁՆՎԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Թալաս ժամանեցինք, մեզ առաջնորդեցին եկեղեցիին կից ազգային քարաշեն «խառը», որ տեղացի հայերու տարագրութենեն վերջ թուրքերը պատահական իրենց պետքերուն գործածելով զարկած կոտրած էին և՛ ապակիները և՛ պատուհանի շրջանակները, և՛ դուռները, ախոռի վերածելով զայն։

Կենդանիներու նման մեզ հրեցին ներս և հսկա դուռներու առջև սվինավոր պահակ 2 զինվոր կեցնելով՝ արգիլեցին ամեն հաղորդակցություն։

Այս միահարկ ամրակուռ իշևանը ուներ 10—12 սենյակներ, ոմանք քարե հատակով և մեկ քանին ևս տախտակամածով։ Աղտոտ և պատռտած փսիաթի կտորներ ոմանց հատակը դեռ կը ծածկեր մասամբ։

Մեր ցավը սակայն պանդոկի, իշևանի անհարմարությունները չէր։ Որովհետև վաղուց ընտելացած էինք աղտոտ ախոռներու. շատ անգամներ նույնիսկ բացօթյա գիշերել ստիպված էինք՝ ցուրտին, բուքին, եղյամին ներքև։ Բայց Տերը պահած էր մեզ, և մինչ առաջները ննջասենյակի մեկ պատուհանին աննշմար մեկ բացվածքին պատճառով հիվանդությանց ենթարկված էինք, տառապանքի այս տարիներուն մեջ՝ այս կարգի միջադեպեր իրենց ծայրահեղ կերպերովն այժմ ա՛յնքան սովորական դարձած էին, որ այլևս չէին ազդեր մեզի և անուշադիր էինք նմանօրինակ դժվարությանց կամ դեպքերու մասին, երբ մահվան մղձավանջը մեզ կը տագնապեցներ ամեն օր, ամեն ժամ։

Մեր մեծագույն մտատանջությունը և բռնադատյալ զսպումով մը՝ ա՛լ ավելի ծայրահեղ թափ ստացած մեր զայրույթը անոր համար էր, որ արգիլված էր մեզի նույնիսկ չոր հաց գնել մեր դրամով։

Թալասի մեջ իսլամանալով մնացած բավական թվով հայ կիներ «Ցաշմաքով» և 8—10 տարեկան մանուկներ՝ հետերնին առած հաց, պանիր, ապուխտ, չոր պտուղներ և կուժերով ջուր, եկած էին մեր արգելափակված շենքին դռան առջև ձրի բաշխելու հասար մեզի։

Բայց դաժան ոստիկան զինվորներն միշտ նույն հանգերգը կը կրկնեին ամենուն «եասագ տըր», արգիլյալ է...

Անոթի և ծարավի էինք 8—10 ժամ քալած ըլլալով նույն օրը և մանավանդ ավազի թաթառը մեզ ներսով դուրսով չորցուցած էր, ու երբ կը լսեինք հայհոյանքներով խառն «եասագ տըրը», մեր հոգիները նո՛ւյնքան կը տանջվեին, ո՛րքան օր մը առաջ Ալիսի կամուրջին առջև չեթաներու մահվան սպառնալիքին ներքև տանջված էին։ Մեզմե շատեր իրենց զայրույթը չկրնալով ո՛րեէ կերպով արտահայտել՝ տղու պես կու լային հեկեկանոք։

Օրեր, շաբաթներ շարունակ քալած էինք անդադրում, հողմավար աշնանային գաղթող թռչուններու երամներու նման՝ Կեսարիա մտնելու հույսերով, իսկ այժմ կը գտնվեինք արդեն Թալաս, ու մեզի կ'արգիլվեր մեր ամենատարրական պետքերը հոգալը։ Իսկ մեզմե մեկ քանին, որ հանդգնած էին ոստիկան պահակ զինվորներուն զբաղած մեկ ակնթարթին մեկ քանի հաց գնելու, իրենցմե հացերը խլվելե վերջ շարաշար գանակոծված էին իրենց անհնազանդության համար...

Անմահ Հոմերոսի չաստվածներեն պատժված Դանդալոսին կը նմանեինք, որը դժոխքին մեջ ջրի ավազանի մեջ մինչև վիզը խորասուզված էր։ Երբ իր ծարավը հագեցնելու համար ջուր խմել ուզեր, ավազանի ջրերը կը ցածնային, և երբ իր գլխուն վերևի ծառեն կախված խնձորները ճաշակել կ'ուզեր, խնձորները ճյուղերով միասին վեր կը բարձրանային։

Հացը կը տեսնեինք և չէինք կրնար գնել, առնել, ուտել, ջուրը հրմշտուկներե դուլլերեն դուրս կը թափվեր, և երանի կու տայինք փողոցի հողերուն, որ զայն կը ծծեին...

Ուստի այլևս հուսահատ՝ մեր բողոքող և անսվաղութենե գալարող ստամոքսները հանդարտեցնելու կարելիութենեն, ամենքս ալ քաշվեցանք խումբ-խումբ քովընտի փոքրիկ խուցերը կծկտելու կամ օրվան հոգեկան և մարմնական խոնջանքը հանգչեցնելու՝ ընդհատ և կարճատև մրափներով։ Մենք մեզ կը ջանայինք մխիթարել վաղվան պատահականություններեն օգտվելու հավանականություններեն։

Ազգային այս պանդոկը, որ նախքան հայոց տարագրությունը հայ վաճառականներու կենտրոն մըն էր եղած, կից էր հայոց

ս. Աստվածածին մայր եկեղեցիին։ Այն սենյակը, ուր 8—10 ընկերներով իրարմով տաքնալ կարենալու համար իրարու մոտ հավաքված կը մրափեինք, ուներ երկու պատուհաններ, որոնք կը նայեին եկեղեցվո բակին վրա։

Գիշերային թանձր խավարին մեջ մեղմ ձայն մը մերթ ընդ մերթ կը կրկներ—Հայր սուրբ, հայր սուրբ։— Մեզմե մեկը բնական հետաքրքրութենե շարժած կը բարձրանա պատուհանը տեսնելու համար, թե ձայնը ո՞ւրկե կու գա և ի՞նչ կ'ուզե։ Կը նշմարե ճիշտ մեր պատուհանին ներքև կանգնած հայ քողարկված կիներ և 12—13 տարեկան տղա մը հետերնին, որ խավարին մեջ զիս կը հրավիրեն պատուհանը։ Տրված լուրին վրա փութացի բարձրանալ պատուհանը, որովհետև բավականին բարձր էր մարդկային հասակե։ Այս հայ կիները ըլլալով թրքախոս, հետերնին բերած էին հայ պատանի մը, որպեսզի հայերեն խոսի հետս, չհասկցվելու համար պատահական շրջող գիշերապահներե և մեր պահակ զինվորներե։ Պատանին հազիվ լսելի ձայնով և մայրենի լեզվով հարցուց.— Հայր սուրբ, թեպետ ձեր գալը լսելնուս պես «հաշմաք» գլուխնիս առած եկանք ձեր «խանին» դռան առջև՝ հաց ու ջուր և այլ ուտելիքներ ծախելու պատրվակին տակ ձեզի տալու համար, բայց ոստիկան զինվորները մեզ մտրակներով ծեծելով վռնդեցին։ Մենք ալ ճարահատ այս միջոցին դիմեցինք։ Մի՛ վախնաք, եկեղեցին ավերակ է, շուրջի տունները թափուր են բնակիչե. պատուհանեն չվան մը իջեցուցեք, որպեսզի ձեզի կողովով հաց ու զանազան պարեն տանք, որ ժողովուրդին բաժնեք։— Կեսարացի մեր մայրերուն և քույրերուն այս ազնիվ ձեռնարկը ա՛յնքան անակնկալ էր և ա՛յնքան նախախնամական, որ փոխանակ իրենց ուզած չվանը ճարելու և վար իջեցնելու, մեր տանջված հոգիներեն դուրս պոռթկացող հուզումեն սկսանք լալ։ Փղձկած էինք ամենքս ալ, որովհետև մեր ճամփա ելլելեն ի վեր առաջին անգամ էր, որ կարեկցության կ'արժանանայինք անոնցմե իսկ, որոնք բռնության ներքև իսլամացած, շարշարաքներու և հոգեկան ու մարմնական անլուր տառապանքներով իրենց գոյությունը քարշ տվող հայ մայրեր ու քույրեր, մեզի օգնության կը հասնեին վտանգելով իրենց անձերն իսկ։

Որովհետև եթե իրենց այս անձնանվեր արարքը նկատվեր պահակ զինվորներե, վախճանը աղետավոր էր մասնավորաբար իրենց համար։ Արդեն մենք կորսված արարածներ էինք և դեպի Զոր կը տարվինք՝ մեր ոտքով մեր գերեզմանը մտնելու համար։ Սակայն իսլամացած ըլլալու իրենց կեղծիքը և խաբկանքը երևան պիտի գար, քանի որ եկած էին մեզի օգնելու։

Ամենքս ալ վերջապես ոտքի կանգնեցանք գիշերվան մթութենեն օգտվելով՝ մեզի կարկառված սփոփարար և կազդուրիչ ձեռնդակութենեն ժամ առաջ նպաստավորվելու համար։ Բայց չունենալով պահանջված երկար չվանը, երիտասարդներ իրենց մեջքի գոտիները իրարու կապելով իջեցուցին վար՝ դեպի շարժող սավերները։

Եվ ահա ծանրացած կողով մը՝ տրված ազդանշանին վրա, վեր քաշեցին երիտասարդները. բայց պատուհանները երկաթե վանդակներով պաշտպանված ըլլալով՝ կարելի չեղավ կողովը ներս առնել։ Որով կողովը դուրսեն պարպվեցավ և մեր սովալլուկ աչքերուն առջև տախտակամածին վրա հետզհետե դիզվեցան հաց, պանիր, ապուխտ, չամիչ, թուզ, չոր սեր։ Այս եղանակով կողովը կ'իջներ պարապ ու կ'ելլեր լեցուն՝ մեզի բերելով ամեն բարիք։ Առանց աղմուկի կը ջանայինք բաժնել մեր մերձակա խուցերուն մեջ գտնվող ընկերներուն, միշտ ուշադիր ըլլալով, որ չնշմարվինք մեր պահակ զինվորներեն, որոնք բարեբախտաբար կը ննջեին։

Հակառակ խավար ըլլալուն, կը նշմարեինք ընդ աղոտ մոմի լույսերու մեջ, թե ի՛նչպես եկեղեցվո կից կամ մոտակա հայ տուներու մեջ եռուզեռ կար, և աղջիկներ ու հարսներ տունետուն կը շրջեին՝ ի մի հավաքելով մեզի բերելու համար նվիրված սնունդեղենները։

Թեպետ ջուր ալ խնդրեցինք, բայց սափորը վեր քաշելով անկարելի եղավ երկաթե վանդակներեն ներս առնել։ Մինչ մյուս կողմե ո՛րևիցե անոթ չունեինք մեր մոտը գոնե դուրսեն սափորը պարպելու համար մեր բաժակներուն մեջ և տանելու համար պապակեն այրվող մեր շորցած շրթունքներուն։ Եվ երբ հուսակտուր փորձերե վերջ սափորը պարանով կրկին վար իջուցվեցավ, երևակայել պետք էր մեր հոգեկան տառապանքը։ Մանավանդ որ մեր կերած Կեսարիո սխտորով համեմված ապուխտը և աղի ջրի մեջեն լեռ նոր հանված պանիրը ալ ավելի կատաղեցուցած էր մեր ծարավը։

Երբ բավական թեթևցած էր մեր անոթությունը այս

անակնկալ օգնությամբ, ապա սկսան մեզմէ տեղեկություն ուզել Պոլսո հայերու մասին մասնավորաբար, կարծելով, թե Պոլսո հայերն ալ տեղահան եղած են։ Որովհետև մեր պահակ ոստիկան զինվորներու պարգև տալով իմացած են եղեր, թե Պոլսեն աքսորվածներ ենք, վարդապետով, քահանաներով և ժողովուրդով։ Թեպետ ստույգ էր, որ մեր քարավանին մեջ 15-հոգիի չափ Պոլսեն աքսորվածներս կը գտնվեինք, բայց մնացյալը Զանկըրիեն և Յոզկատեն աքսորված հայեր էին։

Զափազանց ուրախացան, իմանալով, որ Պոլսո հայությունը տարագրված չէ, որովհետև կը թվեր, որ ասոնք ազգականներ ունեին Պոլիս, որոնք առաջիկային անշուշտ իրենց փրկության և օժանդակության միակ հույսերն էին։

Զափազանց կարճատև խոսակցություն մը ալ ես ունեցա՝ ուզելով ստուգապատում տեղեկություններ քաղել իրենց մասին, ու այս միջոցին հոն հասնող երիտասարդ հայուհի մը մայրենի լեզվով պատասխանեց. «Ա՜խ Հայր սուրբ լմնցանք. ցավ չմնաց որ չքաշենք, փորձանք չմնաց որ գլխնուս չգար։ Մեզ խաբեցին ըսելով, որ եթե իսլամանք՝ ամեն փորձանքե կ'ազատիք, մենք ալ գոնե մնացածը փրկելու հույսով իսլամացանք։ Բայց ավելի գեշ եղավ վիճակնիս. մեր երիտասարդ հարսներն ու աղջիկներն բռնի «նիքեահ» ընելով իրենց հարեմները տարին։ «Զուլում» չմնաց, որ չընեին, չարչարանք չմնաց, որ մեզի չտային։ Երանի թե աքսոր գնացած ըլլայինք և մենք ալ մեռած ըլլայինք և ազատած, գոնե խղճմտանքնիս տեղուցած չէինք ըլլար... Ա՜խ, ձեր քարոզած Աստվածը ո՞ւր է, չի՞ տեսներ մեր այս քաշած անհուն տառապանքը...»։

Իսկ պատանին, որ մեր պատուհանին ներքև կիներուն մոտը դեռ կը մնար, հարցուց.— Հայր սուրբ ռուսը մեզի բավական մոտեցա՞վ... մեր քաղաքին թուրքերը մեզի կ'ըսեն, թե ա՜լ հայ չմնաց Թուրքիո մեջ. ճի՞շտ է... Ձեզ ո՞ւր կը տանին...

Խեղճ տղա, ես ի՞նչ գիտնամ, թե մեզ ո՞ւր կը տանին... և ինչո՞ւ հայուն Աստվածը անկարեկիր է մեր ծով ցավերուն ու անմեղ արյունին. ես ի՞նչ գիտնամ կամ ի՞նչ բացատրություն տամ իմ այս անհուն տառապանքին մեջ։

Այո՜, աղեկ օրեր պիտի գան... անշուշտ այս անգամ վերջապես հայուն գարունը պիտի գա... բայց ողջ մնացողը միայն պիտի տեսնե... ա՜խ երանի, բյո՜ւր երանի այն աչքերուն...



որ պիտի կրնա ողջունել հայ անկախության ոսկեճաճանչ արշալույսը...

Այսպիսի խռովահույզ և միանգամայն մխիթարական գիշեր մը բոլորելե վերջ, առավոտուն ականատես եղանք ա՜լ ավելի մխիթարական երևույթի մը, որ մեզ ամենքս ալ կարի հուզեց։ Այս անգամ կեսարացի աղջիկներեն էին, որ կը ջանային իրենց անձնվեր մայրերն գերազանցել։

Երկար տարիներե ի վեր Թալաս ևս եղած էր գավառի այն լուսավորության կենտրոններեն մեկը, ուր եկած հաստատված էին քաղաքակրթության արևելքի ռահվիրա անձնվեր ու ազնիվ ամերիկուհիներ։ Թալասի ամերիկյան աղջկանց կոլեժին մեջ հավաքված էին ոչ միայն իսլամությունը մերժելով մեծամասնությամբ աքսոր գնացող հայերու աղջիկներն, այլև իսլամանալով քաղաքը մնացող սակավաթիվ հայ ընտանիքներու աղջիկները ևս։ Ասոնք իրենց նահատակված ծնողքներեն հավիտենապես բաժնված, անտուն, անտեր և անբույն թևազուրկ թռչուններ էին, որոնք գիշատիչ բազեներե և ուրուրներե հալածական՝ ապաստանած էին լեղապատառ ամերիկյան աստեղաշարդ անշահախնդիր և արդարակորով դրոշին ներքև։

Երբ այս կոլեժին հայ փափկասուն աղջիկներն կը լսեն, թե հայ տարագրյալներու նոր մեծ քարավան մը հասած է քաղաք՝ վարդապետով, քահանայով և ժողովրդով հեռավոր տեղե, և դեռ ամիսներ պիտի քալեն երթալու համար դեպի Զոր, ամբողջ գիշերը կ'անցնեն լացով և աղոթքով։ Ի տես այս ընդհանուր համբ սուգին, նույնչափ և կը հուզվի իրենց ազնիվ ամերիկացի տնօրենուհին, և համախորհուրդ կ'որոշեն հաջորդ օրվան իրենց կերակուրներու ամբողջ բաժինը տրամադրել մեզի։

Մարդասեր տնօրենուհին Misis Wingete՝ գիշերով հազիվ մեր ժամանումը լսած, կ'աճապարե Կեսարիա (մեկ ժամ հեռու) և արտոնություն կը խնդրե Թուրք կառավարչեն մեզի օգնելու։ Կառավարիչը զգուշանալով այս մասին մինակ պատասխանատվություն ստանձնելե, կը ղրկե ոստիկան զորաց հրամանատարին։ Այսպես գիշերվան խավարին մեջ երթալ գալե հետո, վերջապես կը հաջողի թույլտվություն ստանալ գրավոր կերպով՝ հաջորդ օրը մեր մոտ գալու և մեզ կերակրելու։

Առավոտուն շատ կանուխ գիշեր ընե ամեն պատրաստություն լրացուցած, հարյուր հոգիի լիառատ բավելու չափ կաթ, պանիր, փիլավ, ապուր, խմորեղեն, խնձոր մեզի կը բերեր սե-

զանի հատուկ ամեն սպասով և առատ հացով չմոռնալով իրեն հետ առնել նաև կոլեժի հայ աղջիկներեն հարմարագույնները մեր սպասարկությանը համար։

Անհնար է բացատրել մեր ամենքին ակներև հուզումը, երբ մեր իշխան—բանտին մեծ դուռը բացվելով կողովներով ներս մտան, մարդասիրության այս երկրառաք հրեշտակները։ Մեր տանջված հոգիներու համար սնունդեն ավելի անհրաժեշտ էր կարեկցության, մխիթարության խոսք մը, որ հով տար մեր վիշտ ու թախիծով հրդեհված սրտերուն։

Ազնիվ և անձնվեր ամերիկուհին մասնավորաբար զիս կանչել տալով իր մոտ, մեր ճամփուն մասին տեղեկություններ կ'ուզեր...

Տրված հրահանգին վրա ապա անմիջապես խումբ-խումբ նստեցան մեր աքսորականները և բերված սնունդները սկսան անհագաբար ճաշակել։ Վաղուց մոռցած էինք կաթ, պանիր, խմորեղեն, խնձոր, որովհետև մեր միակ սնունդը չոր հացն էր, սոխն ու սխտորն, և երբեմն ձավարի փիլավն ու «թարխանային» ապուրը։ Հայ աղջիկներն կը սպասավորեին իրենց տարաբախտ ազգին այս հալումաշ խլյակներուն։

Քարավանին մեջ գտնվող մտավորական հայ երիտասարդներ ա՛յնքան հուզված էին, որ շատեր հակառակ անոթի ըլլալնուն՝ ոչինչ կ'ուտեին, ըսելով, թե՝ մենք փոխանակ մեր այս ծնողազուրկ քույրերուն օգնելու, ինչո՞ւ կարոտ մնացինք իրենց կարեկցության և օժանդակության...— Վիրավորված առնացի արժանապատվության պոռթկումն էր, որ դեռ չէր ցամքած մեր սպառած մարմիններու պատյանին մեջեն...

Բաց աստի՝ իրենց մեջ կոլեժի վարժուհիներն ու աղջիկներն հանգանակություն ընելով թաշկինակի մը ծայրը կապված 420 արծաթ դահեկան ինծի կը հանձնեին, խնդրելով, որ մեր թշվառ ժողովուրդին կարոտագույններուն բաժնենք և զիրենք ալ օրհնենք։

Ոչ միայն օրհնեցինք և հավիտյան պիտի օրհնենք, այլ ահա հայ տառապանքի այս հավիտենական հիշատակարանին մեջ կ'արձանագրենք, որպեսզի օրհնեն նաև և՛ զձեզ, անձնվեր և գթասիրտ հայ աղջիկներ, և՛ ձեր մայրերն և՛ ձեր վարժուհիներն՝ ապագա բոլոր հայ սերունդներն դարուց ի դարս ամս համայր։

Մարդասեր ամերիկուհիին հայտնելով, որ 25 ոսկիի անհրաժեշտ պետք ունինք մեր կարոտյալ ընկերներուն օգնելու համար,



խնդրեցի փոխառություն։ Կոլեժի այս ազնիվ տնօրենուհին հանձնարարելով, որ ընկալագիր մը պատրաստեմ 25 ոսկիի կնքելիք փոխառության համար, ինք անձամբ փութաց կոլեժ դրամը բերելու։

Մինչ բյուրեղացյալ մարդասիրությամբ տոգորված այս ամերիկուհին կը վազեր դրամը բերելու, հանկարծ ներս մտնելով ոստիկան զինվորներու Թալասի հրամանատար հարյուրապետը՝ շարաչար կը գանակոծեր մեր պահակ զինվորները կատաղաբար պոռալով, որ ինչո՞ւ թողուցած են, որ ամերիկուհիները մեզի հետ հարաբերության մտնեն և մեր ճամփու վրա տեսածներուն մասին տեղեկություններ քաղեն...

Այս պատճառով էր, որ մեզ քաղաքները չէին մտցներ, որպեսզի ո՛րևէ մեկի հետ հարաբերության մտնելով, ահավոր եղեռնին մասին ճշմարիտ տեղեկություններ չկրնանք հաղորդել ոչ ոքի։

Իբր պատիժ մեզի՝ անմիջապես հրամայեց, որ պատրաստվինք մեկ քանի ժամեն ճամփա ելլելու, բացարձակապես արգելելով թույլատրել մեզի գոնե բեռնաբարձ կենդանիներու վարձումը՝ մեր ճամփու փոքր ի շատե ունեցած գույքերու փոխադրության համար։

Այս մասին ամեն դիմում տեսնելով, որ ապարդյուն մնաց, ճարահատ իրարու մեջ բաժնեցինք մեր փոքր կապոցներն և իրիկնադեմին ճամփա ինկանք դեպի Թոմարզա։ Հուզված էինք ամենքս ալ, մեր կրած տառապանքներուն և դառնությանց բաժակը վաղուց լեցված էր։ Առավոտուն մեր կերած հացն ու վայելած խնամքն ու գուրգուրանքն հառաչանքի և արցունքի փոխված էր իսկույն։ Այո՛, լքված էինք և՛ Աստուծմե, և՛ մարդոցմե, մեր միակ փրկությունը գերեզմանն էր, բայց ո՛ւր էր թե գերեզման մը գոնե ունենայինք։ Ափ մը հող ալ մեր վրա լեցնող պիտի չունենայինք, և կեր պիտի ըլլայինք երկնքի գիշատիչ թռչուններուն և երկրի վայրի գազաններուն։

Երբ աքսորականներուս հետիոտն գնացող հարյուր հոգինոց հոծ քարավանը կ'անցներ Թալասի ցեխոտ նեղ փողոցներով ամերիկյան կոլեժի առջևեն, հայ աղջիկները, հայ վարժուհիներն և ազնիվ տնօրենուհին, ամենքն ալ պատուհանները և կամ տանիքը կանգնած և թաշկինակները երեսնուն բռնած կուլային։ Շրջակա տուներու պատուհաններու մեջ խցամացած

հայ կիներ պատուհաններու ետև թաքնված նույնպես կու լայ ին...

Ստուգիվ աքսորականներուս քարավանը մեռելական թափոր մըն էր, որուն թե՛ մեռյալը և թե՛ հուղարկավորները մենք ինքնին էինք, որ կը քալեինք դեպի անորոշ գերեզման...

Ճակատագրի անբացատրելի զուգադիպությամբ մը, նույն պահուն սկսան ծանր-ծանր զողանջել հույն եկեղեցվո զանգակները։ Եկեղեցվո զանգակի գանգյունները, հարյուր հոգինոց թափոր մը, ի գլուխ այս թափորին վարդապետ և քահանա, պատուհաններու առջև լացող կիներ և աղջիկներ... արդարև պատրանքը կատարյալ էր, միայն կերոններ և սև խաչ մը կը պակսեր...

Ավա՜ղ, թեպետ խաչ չունեինք, բայց ամենքս ալ խաչեցյալներ էինք, որ կը բարձրանայինք ՀԱՅ ՓՇԱԼԻՑ ԳՈՂԳՈԹԱՆ...

Մեկ տարիե ի վեր քրիստոնյա ո՛րևէ եկեղեցվո զանգակի ձայնը լսած չըլլալով, առաջին անգամ, երբ զանգակի մը զողանջները լսեցինք, և ասոնց արձագանքող զանգյունները մոտակա ձորերեն՝ դա՜նկ դա՜նկ... դա՜նկ..., սարսռացինք մինչև մեր հոգվույն խոր ալքեր... Այո՛, հայ ազգը մեռած էր կ'ըսեին..., և մենք վերջին մահվան թափորն էինք, ու կ'երթայինք դեպի Ջոր անհայտանալու և չքանալու ավազի անջրդի և տոթակեզ դաշտերուն մեջ։

Մեր ետև թողուցինք Կեսարիո 3000 տուն հոծ հայութենեն միայն 260 տուն իսլամացած հայ ընտանիքներ։ Իսկ մնացյալք ամբողջովին աքսորի անվան ներքև տեղահան եղած և ջարդված էին, մինչ գեղեցիկ և ծաղկահասակ հարսներն ու աղջիկներն հարեմները տարված և հարճության բռնադատված էին։ Ս. Կարապետի հռչակավոր վանքը թալանված և թուրք որբանոցի վերածված էր, իսկ շրջակա վանքապատկան հողերը թուրք նորեկ գաղթականներու բաժնված։

Թալասի առաջնորդանիստ հոյակապ եկեղեցին վայող բուերու թաքստոց եղած էր, իսկ եկեղեցվո աջակողմը և մեր իջևանած ազգային պանդոկին ներքև գտնվող հանգուցյալ առաջնորդներու դամբարաններու մարմարյա տախտակները ջարդուփշուր եղած էին, նոր ապացույցներ տալով թուրք մոլեգնած վանդալության։ Տեղահան եղած և ճամփաներու վրա խողխողված հայերու թափուր տունները ներքին գավառներե եկած թուրք գաղթականներով լեցված էին։ Ասոնք անցնող ճամբան միջոցին ջարդուփշուր ըրած էին իրենց բնակած հայ տուներու դյուրաշարժ ամեն մասերը և իբր վառարանի փայտ գործածած։

Մինչդեռ կոլեժի հայ պարկեշտասուն օրիորդները մեր վրա կու լային, մենք ալ իրենց սպասող սև բախտին վրա կու լայինք։ Որովհետև դեռ պատերազմին երկրորդ տարին էր, և մինչև համաշխարհային հաշտություն դեռ շատ սև օրեր պիտի գային ու անցնեին, իրենց հետ բերելով արյունոտ նոր անակնկալներ։

Արդարև երբ Ամերիկա պատերազմ հայտարարեց Գերմանիո դեմ, և ասոր վրա ևս Թուրքիա կանխեց խզել իր հարաբերությունները Ամերիկայի հետ, ճամփվեցան Թալասի կոլեժի ամերիկուհիները, և կոլեժի հայ աղջիկներն թուրք երևելիներու հարեմներն տարվեցան, զոհ դարձնելով վայրագաբար իրենց աներևակայելի խենեշությանց։

Մեր քարավանը Թալասի ճիշտ ետևը գտնվող և Թալաս-Թոմարզա ճամփուն վրա ինկող Գոհանամ կամ Սուրբ Բարսեղ հայրապետ լեռան կուշտեն բարձրանալով մտանք ընդարձակ սարահարթ մը և սկսանք հապճեպ քալել մեր գերեվար ոստիկան զինվորներու գավազանի հարվածներուն ներքև։

Արդեն արևը վաղուց մայրը մտած էր, երբ հասանք Թալասեն 2 ժամ հեռու «Գրզլպաշներու» գյուղ մը գիշերելու։ Բայց հազիվ կը տեղավորվեինք, և ահա ոստիկան զինվորներն հրամայեցին մեզի շարունակել մեր ճամփան։ Ամենքս ալ լեցվեցանք երկյուղով, որովհետև անբացատրելի կը գտնեինք մթնշաղին հետ մեր ճամփան շարունակելու այս բռնադատությունը։ Համակերպելե զատ ուրիշ միջոց չունեինք, ուստի կրկին ճամփա ինկանք և սկսանք իջնել ապառաժոտ խոր ձոր մը։

Մեր քարավանին միշտ ուղեկցող հայ մեկ քանի կտրիճ երիտասարդներ՝ հանկարծ սոսկումով վազելով քովս կ'ըսեին,— Հայր սուրբ այս ապառաժներուն ետև շարժող ստվերներ ու գլուխներ կ'երևին. Աստուծո սիրուն, ետ դառնանք, վտանգի մեջ ենք։

Անմիջապես գտնելով մեր «չավուշը» կը զգացնեի մեզի սպառնացող անմիջապես վտանգը, խոստանալով լիառատ պարգև, բավ է, որ մեզ փրկե։

«Չավուշ»-ը ինքն ալ անակնկալի եկած, անմիջապես հրաման կ'ըներ, որ ետ դառնանք և ձորեն դուրս գանք ժամ առաջ։

Հետո իմացանք, որ թուրք գյուղացիներ ընդդիմացած էին և չէին թույլատրած, որ իրենց գյուղը իջևանինք, և իրենց մեզի տված ուղեցույց գյուղացին հատուկ հանձնարարությամբ մեզ առաջնորդած էր այս ձորը։ Մինչ մյուս կողմե կարճ ճամփով մը գյուղացիներ մեզմե առաջ մեր անցնելիք ձորը կ'ճաճապարեն դիրք բռնել, հարձակելու համար մեր վրա և մեզ սպանելով տիրանալու համար մեր ավարին։

Բայց որովհետև մեր ոստիկան զինվորներն և մանավանդ մեր «չավուշն» անմասն էին և անգիտակ այս դավադրության, կարելին ըրին մեզ փրկելու համար այս ստույգ և մահաբույր վտանգեն։ 2—3 ժամ գիշերվան խավարին մեջ առ խարխափ քալելե վերջ, հասանք կիսախարխուլ իջևան մը ամայի վայրի մը մեջ։ Այս իջևանը մեկ սենյակով մեծ ախոռ մըն էր, որուն մեջ 25—30 ձի, ջորի և ավանակ կը գտնվեին նույն պահուն։ Բայց այս ախոռը չէր կրնար այսքան կենդանիներու հետ նաև հարյուր հոգի քարավան մը իր մեջ առնել, ուստի պարզև խոստացանք՝ եթե կենդանիները դուրս հանեն, որպեսզի մեզի համար տեղ բացվի։ Իսկ թուրք դաժան ջորեպաններն մեզի պատասխանեցին. թե իրենց կենդանիները մեզմե ավելի արժեքավոր էին կամ իրենց բառով «գիյմեթլի», ու մեզ ուզեցին վտարել։

Բայց առատ և կանխիկ վարձատրությամբ՝ իջևանի տիրոջմեն իրավունք ստացանք կենդանիներուն հետ ու քովը մնալու։ Սակայն կենդանիները թրջած ըլլալով գետինները, ստիպվեցանք 5—10 դահեկան տալով հարդ գնել և գետինը ցանել չեզոքացնելու համար թացը և խոնավությունը։

Արդարև ողբալի էր վիճակնիս. պարզապես կը նախանձեինք մեր քովի կենդանիներուն վրա, որոնք ենթակա էին ամեն խնամքի, իսկ մենք կը հալածվեինք բորոտ կենդանիներու նման։

Նույն իրիկուն անկյուն մը ես ալ գտա և հարդ ցանելով պառկեցա, հարդով ծածկված քար մը ունենալով ինծի բարձ։ Բայց մենք մեզ կը մխիթարեինք, հիշելով մեր մեկ քանի ժամ առաջ անցուցած մահվան ստույգ վտանգը, և մյուս կողմեն ուրախ էինք, որ այսպիսի ախոռի մը արժանացանք, որ մեր պալատն էր...։ Որովհետև դուրսը խիստ ցուրտ էր՝ և էրճիռ ձյունապատ հսկա լեռը մեզ կը սարսռացներ իր հավիտենական սառույցի զանգվածներու մոտիկությամբը։ Մինչ մենք ախոռին մեջ բա-



վական տաքություն ունինք՝ դուրսի ցուրտը մեղմացնող, մեր շունչն ալ խառնված ըլլալով մեզի դրացի բազմաթիվ կենդանիներու տաք շունչին։

Ամբողջ ճամփու մեր ընթացքին, բայց մասնավորապես Յոզգատ—Պողազլիան—Կեսարիա ճամփուն վրա դիտած էինք, որ մեր պահպանության հատկացած ոստիկան զինվորներեն մեծ մասը գիշերները առանց քնելու՝ և ամբողջ գիշերը հեծելով կ'անցնեին։ Այստեղ ինծի ճիշտ կից հերթապահ ոստիկան զինվորին այս վիճակը տեսնելով, հարցուցի՝ թե ինչո՞ւ չի քնանար, պատասխանեց—փափազ, ա՛յնչափ մարդ սպանեցի այս վերջին տարվան մեջ, որ իմ զոհերս չեն թողուր, որ հանգիստ քնանամ, և ոչ իսկ աչքերս կրնամ փակել, որովհետև անմիջապես աչքերուս առջև կու գան իմ հոշոտած զոհերս, մանավանդ իմ լլկած և հետո սպանած 20-ե ավելի կույս աղջիկներու հոգիները զիս կը հալածեն...։— Արդյոք զղջո՞ւմ էր, բայց ինչո՞ւ ուրեմն միշտ նոր նախճիրները կը փնտրեին և անհագ ծարավի էին նոր անմեղ արյունի։

Հաջորդ օրը արշալույսին հետ հեռացանք ավազակներու իրական այս որջեն, երկրորդ օրը բարեբախտաբար անցավ առանց մտահոգիչ միջադեպի։ Սակայն մահվան մղձավանջը այլևս մեր մեջ միս ու ոսկոր եղած էր և կը առաջանայինք միշտ ահ ու դողով։ Ամենքս ալ հետիոտն էինք. և որովհետև կապոցներով ծանրաբեռնված էին մեզմե շատեր, այս պատճառով դանդաղ կը քալեինք, ենթարկվելով հաճախ մեր պահակ ոստիկան զինվորներուն դանակոծությանը։ Երրորդ օրը արևածագին արդեն Թոմարբայի դաշտը մտած էինք, և հեռուն կը տեսնեինք Թոմարզան, երբ հանդիպեցանք երա՜մ երա՜մ գաղթող թուրքերու, որոնք հարավեն գալով հյուսիս կ'երթային՝ դեպի Հայաստան...

Արդեն 1916 մարտի վերջն էինք, մեր շուրջը գարուն էր, բնությունը սկսած էր վերազարթնուլ, ծառ ու ծաղիկ կանաչ ու երփներանգ՝ հարություն առած ակնապարար իրենց գեղեցկությամբն փառաբանությունը կ'ընեին Արարչին։

Ծիծեռնակներ հույլ ի հույլ կ'երթային Հայաստան... իրենց հայրենի երդիկներուն ներքև իրենց հին բույներն նորոգելու և նոր էյանը սկսելու։

Ո՜հ ո՜րչափ արտասուք երգած էր անմահն Դոդոխյան.

— Անդ հեռու ալեոր
Հայր մը ունիմ սգավոր
Որ մինակ յուր որդվույն
Սպասում է օրեօր...

Ա՜խ երանելի քաղցր օրեր, երբ հայրենիքը սպասող հայր մը կար միայն սգավոր... Այսօր ամբողջ հայրենիքը արյունլվա, մնացորդ հայությունը ամենքը սգավոր, կ'ողբայինք միլիոնն անցնող ոչխարի պես մորթոտված, մեր բյուր զոհերն, և գիտեինք, թե ա՛լ ավելի սև օրեր մեզի կը սպասեն։ Այո՛ սև՛ օրե՛ր, երբ երանի պիտի տային անցնող բոլոր սև օրերուն... որովհետև քանի գաղթին կը մոտենային, ա՛յնքան փշալից կը դառնար հայ Գողգոթան և ավելի ահավոր...։

Գարնան անույշ թռչնիկներ, ո՜հ, ո՞ւր կ'երթաք այսպես արագ. հայրենիքը ավերա՜կ է, բուեր կը վայե՜ն երդիկները, դիակներով ծածկված են արյան դաշտերը և լեցուցած խոր ձորերը ու խորշերը...

Դարձե՜ք, դարձե՜ք ձեր հին վայրերը, ուրկե եկաք հոն դարձե՜ք, և պատմեցեք, պատմեցեք ինչ որ տեսաք ու լսեցիք հայության ծով ցավերեն և մահաբույր դեպքերեն, աղի լեղի արցունքներեն...

Փախե՜ք, փախե՜ք զվարթ ծիծեռնակներ, փախե՜ք գարնան ավետավոր թռչնիկներ, ձեր բույնն ու տեղը հոն չէ, ուր կա սուգ ու շիվան, արյուն ու արտասուք։ Թո՜ղ գան, թո՜ղ գան ձեր տեղը դիակախույզ թռչուններ ու գիշատիչ ուրուրներ, բազեներ և անգղներ...

Բայց ասոնք ալ եթե գան, չպիտի գտնեն այս տարի պատառոտված դիակներ, որոնցմով խմբովին անցյալ տարի կազմեցին ճոխ խնջույքները առյուծի...

Դուք սև անգղներ գիշատիչ, գնացե՜ք, գնացե՜ք դեպի հոն վարը Միջագետք, ուր ձեզի կը սպասեն Քութ-էլ-Ամարա և կամ հոն վերը Դարդանել՝ արդարության խնջույքներ...։ Մեկը մյուսեն զորավոր անոնք ալ ինկան վիրավոր, արդարությունը խաչող թուրքերն ալ սպանվեցան բյուրավոր և լեցվեցավ մասամբ հավիտենական արդարությունը ահավոր...

Կես ժամ մնացած, մեզ դիմավորեցին 8—10 ձիավորներ՝ ահ ու դողի մատնելով մեզ ամենքս։ Սակայն Թոմարզայի «գայմագամն» էր, որ հեծյալ իր ոստիկաններով եկած էր աքսորականներուս հալումաշ եղած քարավանը քաղաք առաջնորդելու։

Անցանք քաղաքի միջով, ամեն խանութ փակված էր, ամեն տուն լեցված թուրք գաղթականներով. հետքը չէր մնացած հայության, որ երբեմն միակ աշխատասեր մշակը եղած էր հացալից այս ընդարձակ արգասաբեր դաշտերուն։



## 26.

## ԹՈՄԱՐԶԱ — ԿԱԶՊԵԼ ԳԱՐՆԱՆ ՄԵՋ ԱՇՈՒՆ

Թոմարզա փոքր գայմագամություն մըն է՝ բազմաթիվ գյուղերով, և կը գտնվի արգավանդ լեռնադաշտի մը վրա, Կեսարիայեն հազիվ 2 օրվան ճամփա հեռու, իսկ ծովեն շուրջ 1200 մետր բարձր։

Թոմարզայի գայմագամության գյուղերու 3/5 մասը, իսկ քաղաքին բնակչության 4/5-ը հայեր էին մինչև 1915-ի տեղահանությունը։ Բայց այժմ հայոց տունները և հողերը հանձնված էին թուրք գաղթականներու։ Քաղաքին բոլոր խանութներն գոց էին և կնքված, հազիվ մեկ քանի մսավաճառի ու նպարավաճառի խանութներ, ինչպես նաև մեկ քանի թրքական աղտոտ ու փոքր սրճարաններ բաց էին միայն։

Այն տունները, որ գաղթականներե գրավված չէին, փլցված և իբր վառելափայտ գործածված էին անցնող ձմռան միջոցին։ Քաղաքին ս. Թորոս եկեղեցիին տանիքը փլցված էր, իսկ կես ժամ միայն հեռու գտնվող ս. Աստվածածնի վանքը կործանած էր մեծ մասամբ և ավերակ դարձած։ Քաղաքին մեջ գտնվող բազմաթիվ ինքնահոս աղբյուրներեն միայն 2-ը դեռ կը հոսեին, մյուսները ցամքած ու չորցած էին։

Մեկ քանի տեղացի թուրքերու հետ մեր տեսակցած միջոցին՝ սրտի ցավով պատմեցին մեզի, թե իրենց գավառի բոլոր արհեստավորները հայեր ըլլալուն և այժմ ալ ասոնք տարագրված ըլլալով իմա բնաջնջված, ոչ կոշիկի կարկտան մը զարնող և ոչ ալ արորի մը կոտրած խոփը շինող ունեին։ Որով 2—3 օրվան ճամփա կը ստիպվին հեռու Կեսարիա երթալ՝ կոշիկի մեկ փոքր կարկտան մը զարնել տալու համար դարձյալ հայերու, որոնք իսլամանալնուն շնորհիվ կրցած էին մնալ։

Բայց հարկ է հոս շեշտել ի մասնավորի, թե Կեսարիո և շրջակա գավառներու հարյուրին միայն տասը տոկոսը իսլամանալով փրկվիլ ուզեց, մնացյալը սիրահոժար առավ տարագրության ցուպը ձեռքը և ճամփա ելավ դեպի Զոր։ Գիտնալով հանդերձ, որ ելկություն չկա իրեն համար և կ'երթա դեպի անապատ բնաջնջվելու։

Թուրքը զրկվելով մի անգամ ընդմիշտ հայերու դարևոր օժանդակութենեն և ընդունակություններեն, առաջին անգամ ըլլալով կ'անդրդառնար այս պատմական բացարձակ ճշմարտության, թե առանց հայուն շինարար և ստեղծագործ աշխատանքին՝ ինք ոչինչ կրնար ընել. թե օսմ. կայսրության սյունը դարերե ի վեր հայն եղած էր՝ իբր երկրագործ, արհեստավոր, վաճառական, սեղանավոր, բժիշկ, դեղագործ, ելևմտագետ և դեղարվեստագետ, ճարտարապետ ու ճարտարագետ և քաղաքագետ։

Այժմ, երբ հայ ժողովուրդն ոչ ևս էր, միայն սկսած էին մտածել և խոստովանիլ, թե Հայերը գնացին երկրին օրհնությունն ալ, այսինքն «պերեքեթ»-ը, հետերնին տարին...

Թոմարզա, որ շնորհիվ աշխատասեր հայ գյուղացիության դարերե ի վեր ցորենի շտեմարանն եղած էր շրջականերուն, այժմ ոչ թե ցորենի հաց չէինք գտներ, այլ նույնիսկ հազիվ ձեռք կրցանք բերել «տելիճեե» պատրաստված սև խմոր հաց մը, որ քնարեր էր և հույժ անմարսելի, և որուն 100 գրամը հազիվ կրցանք հինգ արծաթ դահեկանի գնել։

Այժմ խոպան ու ապալեր մնացած էին Թոմարզայի հասկաթուռ դաշտերն և հայ շրջակա անդաստանները։ Ոչ մաճ կար և ոչ մաճկալ, ոչ արոր մնացած էր և ոչ լծկան եզներ։

Թոմարզայի մեջ անցուցինք բավական խռովյալ գիշեր մը, այս անգամ ներքին պատճառներով։ Որովհետև մեր հարյուր ընկերներեն միայն 25—30-ը ունեին իրենց ապրուստի միջոցները, իսկ մնացածը, մանավանդ 50 յոզկատցիները բոլորովին զուրկ էին ամենաանհրաժեշտ երկու բանե, այսինքն հացե ու ոտքերու տրեխներե։ Այլևս մեր շանկըրիցի մեկ քանի հարուստները չէին ուզեր օգնել, առարկելով, թե իրենք ալ աղքատացան, և թե վաղվան աղքատությունը գիրենք ալ կ'ահաբեկե։ Զուսներ ընկերները կը սպառնային, բայց առջևը առնվեցավ մեր ներքին անհամաձայնության, քիչ մը հացի դրամ հանգանակվելով մեր կարոտ ընկերներուն համար։ Մյուս կողմե կրկին անձնական



փոխառությամբ Հաճի Փեթրակի Շախյանե կրցա դրամ ստանալ իմ և ընկերներուս հույժ ստիպողական պետքերուն համար։

Թոմարզայի մեջ մեզմե ամեն անոնք, որոնց տրեխը մաշած էր, կա՛մ նորոգեցին և կա՛մ նորը գնեցին. այսպես բավական կազդուրված հաջորդ օրը ճամփա ինկանք դեպի Կազպել։

Հազիվ քաղաքեն հեռացած և դաշտը մտած, մեր աչքերուն առջև սլարզվեցավ արտակարգ և կամ անհավատալի տեսարան մը։ Ամբողջ ընդարձակ դաշտը ծածկված էր դեղնորակ արտորահքով, իսկապես գարնան մեջ աշուն էր։ Որովհետև ամբողջ դաշտը դեղին ցույն ուներ՝ շնորհիվ չհնձված ցորենի հարյուրավոր արտերուն, որոնց հունձքը ընել արգիլված էր մեկնող հայերուն, աշնան զուգադիպելուն համար հայոց տեղահանությունը։ Աշնան պատրանքը կատարյալ էր, երբ կը տեսնեինք մեր շուրջը, որ ցորենի դեղնորակ արտերուն մեջ հաճախ որաներ կապված և դեզեր կազմված էին։ Թեպետ մեկ ամեռ անցած էր, բայց միայն ցորենին հասկերը գետին թափած էին, իսկ ցողունները երկար և զորավոր դեռ կանգուն էին և քամիեն կը տատանեին։

Այո՛, գարնան մեջ աշուն մըն էր։

Հետաքրքրվեցա հարցնել մեզի ընկերացող ոստիկան զինվորներուն, թե ինչո՞ւ այս արտերը չէին հնձված, պատասխանեց. Թոմարզայի գայմագամն ա՛յնքան հայատյաց անձ մըն էր, որ երբ 1915 օգոստոսի վերջը տեղահանության հրամանն եկավ Պոլսեն, չթողուց, որ հայ գյուղացիները հունձքը կատարեն։ Որովհետև գոնե ամիս մը պիտի հետաձգվեր հայերու տեղահանությունը, իսկ գայմագամնիս ըսավ, թե ոչ իրենց ցորենը պետք է և ոչ ալ իրենց երեսը ամիս մը ավելի տեսնենք, թո՛ղ կորսվին երթան...

Բնական բերմամբ փորձվեցա դիտել տալ, թե ինչո՞ւ գոնե հայերու տեղահան ըլլալեն վերջ գայմագամն չթողուց, որ դրացի թուրք գյուղացիները հնձեն, քանի որ ցորենը և գարին վաղուց հասունցած էին և բերքն ալ ա՛յնքան առատ էր։ Մանավանդ որ պատերազմի միջոցին ամեն պետություն հետամուտ էր ըստ կարելվույն շատ բերք ամբարելու, հույժ հավանական սովի մը առաջքն առնելու համար։

Պատասխանեց.— էֆենտի, ասոր համար չէ՞, որ հայերը աքսորելե վերջ՝ մեր երկրեն ա՛լ «պերեքեթը», իմա օրհնությունը ու առատությունը վերցավ։

Իրավամբ հաջորդ տարիներու մեջ Կեսարիայեն Պելեմետիկ եկողներե իմացանք, որ Թոմարզայի հուռթի դաշտերը, առանց հերկի ու վարուցանի մնալով հացը ա՛յնքան անգտանելի դարձած էր և եղածն ալ ա՛յնքան անմատչելի գներու հասած էր, որ Թուրք ժողովուրդը անոթութենե պարզապես սկսած էր մեռնիլ։

Թոմարզայի այս հասկաթուռ դաշտերուն մեջեն անցանը հուզմամբ և արցունքով, որովհետև 8—9 ամսե ի վեր հայ ժողովուրդը թեպետ մեկնած էր անդարձ հազարավոր տարիներու իր պապենական օջախներեն, բայց իր ստեղծագործ և շինարար աշխատանքին ոսկի արդյունքը դեռ կը մնար, իբր անխոս բողոք իր կրած զուլումին։ Մեր շուրջը ծովածավալ տարածության մը վրա, մինչև հեռավոր հորիզոնները մեր խուզարկու ակնարկներուն՝ ամեն տեղ դեղնորակ և հասկազարդ արտերու լայնատարած ծով մըն էր, կետկիտված հաճախ որաներով, դեզերով ու կալերով։ Իսկ հոս ու հոն խոտաճարակ ընտանի կենդանիներ եկած էին ճարակիլ...

Անկարելի էր ըմբռնել, թե պետական մարդիկ՝ խելագարության որպիսի՛ մոլուցքի մը և կամ կատաղության որպիսի՛ մոլեգնության մը մեջ համարձակած էին ջախջախել ա՛յսքան շինարար բազուկներ և ա՛յսքան օրհնված արդյունքներ։

Անշուշտ օսմ. պետական մարդիկ պետական անձնասպանություն մը գործած էին... և ուշ չէր այն օրը, երբ պիտի կրեին տրամաբանական աղետաբեր և անխուսափելի հետևանքները իրենց անթիվ ու անբավ ոճիրներուն, երբ հասներ վերջապես արդարության և հաշվեհարդարության ահավոր մեծ օրը...

Թոմարզայեն մեր մեկնումին երկրորդ օրը գիշերեցինք 130 տուն բնակչություն ունեցող մեծ գյուղ մը, որուն 90 տունը հայեր ըլլալով տարագրված էին, և գյուղը համարյա ավերակ էր։

Այս գյուղին մեջ շատ լավ ընդունելություն գտանք, և ջանացին մեզի հայթայթել սնունդի նախնական նյութերը բաղդատաբար շատ համեստ գներով։

Տեղվույս Թուրք մուխթարը և իմամին հետ մեկ քանի ծերունի Թուրք գյուղացիներ, լսելով որ եկող քարավանին մեջ առաջնորդ եկեղեցական մը ևս կա, փութացին գալ այցելության։ Մեր երկար ճամփորդության ամբողջ ընթացքին, առաջին անգամ էր, որ այսպիսի բացառիկ պատվի մը կ'արժանանայինք ի մեծ զայրմացումն ամենքիս։

Որովհետև մեր խոսակիցները պարզամիտ և բարեմիտ գյուղացիներ էին, և բոլորովին անգիտակից պաշտոնական ձևակերպություններու՝ անվերապահորեն սկսան արտահայտվիլ։ Բնականաբար գեղեցիկ պատեհություն մը կ'ունենային ներկայացած էր թափանցելու համար Թուրք այս գյուղացիներու ներքին հոգեբանության ու մտայնության։ Մանավանդ որ «իմամը», այսինքն իսլամ կրոնականը Պոլիս տեսած և բնական ուշիմությամբ օժտված ճշմարտախոս մարդ մըն էր, քիչ շատ հայերեն ալ կը հասկնար և հաճախ հայերեն բառեր կը գործածեր իր խոսակցությանց մեջ, սորված ըլլալով իրենց համագյուղացի և իրենց եռապատիկը եղող հայ գյուղացիներեն։

Բարի եկաքի արևելյան սովորական ձևակերպություններեն վերջ, եկող Թուրքերը հարցուցին ինծի. Մուրախաս էֆենտի, ե՞րբ պիտի դառնան մեր դրացի հայերը աքսորե, ինչո՞ւ այսքան ուշացան մեր դրացիները։ Սուլթան Համիդը իսկ, երբ հայերը պատժեր, քանի մը ամիս վերջ «աֆուշահանե» կը շնորհեր։ Այս ճեռն Թուրքերը ինչո՞ւ հայերուն դեմ սկսված այս հալածանքը դեռ չվերջացուցին, երկիրը ավերակ դարձավ, ո՞ր օրվան կը սպասեն։

Պատասխանեցի, թե մի՞թե գոհ չե՞ն, որ իրենց դարավոր դրացի հայերը աքսորելով ասպարեզը միայն իրենց մնացած էր՝ առանց մրցակից ունենալու։ Աքսորված հայերուն տուներուն, պարտեզներուն, այգիներուն, հողերուն, ոչխարի հոտերուն, վերջապես շարժուն և անշարժ ամբողջ հարստության իրենք տեր եղած էին։ Ալ ի՞նչ դեռ կ'ուզեին և մի՞թե շնորհակալ չէին իթթիհատական ներկա կառավարության, որ զիրենք մեկ անգամեն տեր դարձուցած էր այսքան անբավ հարստության, ինչ որ իրենց երազին մեջ իսկ չէին կրնար երևակայել։ Իմամը ի դիմաց իր ընկերներուն պատասխանեց.— Մուրախաս էֆենտի, ի՞նչ կ'ըսես, կը կարծե՞ս թե մենք հայերու տեղահանութենեն գոհ ենք, սուտ խոսողին լեզուն չորնա... Մեր գյուղին մեջ 130 տուն էինք և 90 տունը հայեր էին, սակայն 40 տուն Թուրքերս մեր դրացի հայերուն շնորհիվ կ'ապրեինք, երկրագործությունը և արհեստները անոնց ձեռքն էին։ Մենք անոնց հողերուն վրա կ'աշխատեինք իբր «օրթախ», և լավ կ'ապրվեինք ու շեն էինք։ Գետնին տակն անցնին Թալեաթն ու էնվերն, որ ամբողջ հայերը աքսորելու ծրագիրը պատրաստելով և խստությամբ գործադրելով երկիրը ավերակ դարձուցին և մեզ ալ աղքատացուցին։ Մինչև հիմա մեր կերած բամբակի պես կա-

կուղ և ճերմակ հոխա մը հացը 20—30 փարայի կ'ուտեինք՝ հիմա սկսանք 20—30 ղուռուշի ուտել, դեռ վաղն ալ ո՞վ գիտե քանիի՞ պիտի ուտենք։ Էֆենտի, ըսե մեզի, ուրեմն հույս չկա՞ երբեք, որ մեր դրացի հայերը դարձյալ կը դառնան իրենց տեղերը։

Խոսակցությունը հույժ հետաքրքրական, իսկ իրենց շեշտը անկեղծ ու աննենգ, ուստի մենք ալ անվերապահորեն սկսանք արտահայտվիլ, մանավանդ որ ոստիկան զինվորներեն ոչ մեկը մեր մոտ մնացած էր, ամենքն ալ գնացած էին իրենց ձիերը դարմանելու։

Պատասխանեցի.— Հոճա էֆենտի, իզուր կը սպասեք ձեր դրացի հայերուն դարձին. անոնք տարի մըն է, որ արդեն ոչնչացված են ճամփաներուն վրա։ Եթե հազվագյուտորեն Տեր Զոր հասնողներ եղած են, ասոնք ալ անապատին մեջ անոթի ու ծարավ մեռած են։ Միջանկյալ ըսեմ, որ Թոմարզայի շրջանի հայությունը շատ կանուխ տարագրված ըլլալով մեծ մասամբ կրցած էր հասնիլ ողջամբ Տեր Զոր. բայց հոս մեկ մասը անոթի մեռած և մեծ մասը ևս Ռեսուլայնի և Տեր Զորի 1916-ի հուլիսի ընդհանուր ջարդին անխնա կոտորված էին։ Է՞, հոճա էֆենտի, ըսե նայինք, Պոլսեն ի՞նչ լուր կա, մենք ամիսեն ավելի է ճամփան ենք. ոչ մեկ բանե լուր չունինք, ի՞նչ կա չկա... Պոլսո մեջ ներքին խաղաղություն կա՞...

Պատասխան.— Ա՜խ Մուրախաս էֆենտի, մոտալուտ խաղաղության հույս երբեք չկա։ Մեր վրին կապը գերմանացիին տվինք, ո՛ւր որ քաշե տանի, ուզենք չուզենք պիտի երթանք։ Էնվերը փախեր է ըսին, բայց հազար անգամ լսեցինք և հազար անգամ սուտ ելավ։ Ա՜խ ե՞րբ պիտի լսենք, Ալլա՜հ, որ Թալեաթն ու Էնվերն շանսատակ ըրեր են... Այս խեղճ ազգին գլխուն (այսինքն Թուրք ազգին), փորձանք չմնաց որ չբերին... անիծյալ ըլլան... երանի՜ թե «ճեռն Թուրքերը» գոյություն չունենային... գարշելիները ոչ հավատք ունին և ոչ կրոն, մասոն են ամենքն ալ...

Առաջ «Իսթիպտատին» (հին ռեժիմ) մեկ սուլթան Համիդ կար, հիմա հարյուր հատ սուլթան Համիդ ունինք մեր գլխուն..., մենք շատոնց սուլթան Համիդը փնտրել սկսանք... Չկարծեք, թե, Մուրախաս էֆենտի, մենք Թուրքերս ալ «էհեայ» (երջանիկ) եղանք կամ պիտի ըլլանք... լացողին «մաղը մյուքը» (կայքը, դույքը) գնողին կամ առնողին երջանկություն չի բերեր...

ՀԱՅԵՐԸ ՄԵՐ ԵՐԿՐԻՆ ԱՂՆ ԷԻՆ, ԱՆՈՆՔ ԳՆԱՑԻՆ... ՄԵՐ ԱԼ ՀԱՄԸ ՈՒ ՀՈՏԸ ՉՄՆԱՑ... ԱՍՏՎԱԾ ՀԱՄՆԻ ԱՄԵՆՔԻՍ...

Իսկ մյուսները կրկնեցին և երեքնեցին՝ «ամի՜ն, ամի՜ն»...

Քանիցս հիշեցին, որ իրենք եկեղեցական ըլլալուս՝ ինծի «խոստովանանք» կ'ըլլան, այս բառն ալ հայերեն արտասանելով, և թե՝ եթե կառավարական պաշտոնյաները իմանան որ ինծի այսպես խոսած են, զիրենք ալ կ'աքսորեն և «թարումար» կ'ընեն, այսինքն կը կործանեն...։ Մեր սուգի և տառապանքի երկար ամիսներուն մեջ՝ վշտով օծուն այրող մեր սրտերուն մխիթարություն եղան, բարի և անկեղծ այս գյուղացիներուն անվերապահ այս հայտարարությունները և մեծապես մխիթարվեցանք։ Որովհետև տառապանքի մեր 4—5 տարիներու ընթացքին՝ հազիվ այս օրինակ մեկ կամ երկու դեպքեր կը հիշենք ստրջացումի...

Հաջորդ օրը արշալույսին հետ աճապարեցինք մեկնիլ, որովհետև 8—10 ժամ տաժանելի ճամփա ունեինք անցնելիք։ Հուսկ ուրեմն արևամուտին հետ ժամանեցինք Տավրոսի—իմա Թորոս—լեռնաշղթային ամենաբարձր կիրճերեն մեկը՝ ԿԱԶՊԵԼ, և իջևանեցանք Ավշարի փոքրիկ գյուղ մը, որ կը կոչվեր Քեոսկլեր։

## 27.

## ԿԱԶՊԵԼ[1] — ՀԱՃԸՆ ԶՅՈՒՆԱՊԱՏ ՍԱՐԵՐՈՒ ՄԵՋ ՀՈՒԶԻՉ ԳԻՇԵՐ ՄԸ

Քեոսելեր կոչված այս գյուղը հազիվ 25 տուն բնակչություն ուներ, և կը գտնվի Կազպել կոչված կիրճին բերանը։

Այս կիրճը միակ բնական անցքն է, որ Թոմարզայի լեռնաշարը հաղորդակցության կը դնե Կիլիկիո դաշտին հետ՝ Հաճըն-Սիս երկարող պարանոց անման ձորով։

Տավրոս լեռնաշղթան Մերսինի և Սելևկիո ծովու եզերքին ծայր առնելով հետզհետե կը բարձրանա մինչև Հայաստանի լեռնաշղթան դեպի Կովկաս։

---

[1] Կազ-Պել կը նշանակե Սագի մեջք։

Տավրոս լեռները հյուսիսեն միայն երկու բնական դուռներ ունեին, առաջինը Պոզանթի-Պելեմետիկի «Կյուլեք պողազը» կիրճն է, ուրկե կ'անցնի երկար փապուղիներով դեպի Հալեպ երկարող երկաթուղին։ Իսկ երկրորդը Կազպելի կիրճն է, ուրկե անցանք մենք։ Ասոնք են Կիլիկիո բնական դուռները, ուր երբեմն Ռուբենյանց թագավորներու շրջանին, ա՛յնքան բերդեր կառուցված էին հաջորդաբար իբր պատվար Գոնիայի սուլթաններուն հարձակումներուն դեմ։

Մայրի ծառի կույս անտառներով շրջապատված Տավրոսյան լեռնաշղթան, իր ձյունաշատ գագաթներով հավիտենական մշտահոս ավազանն է Կիլիկիո պատմական հորդահոս գետերու։ Սարոսին (Սիհուն) և Պոդիմոսին (Ճիհուն), Կիդնոսին (Թարսուս ըրմաղը) և Կալիկադնոսին (Ջիլիֆկե ըրմաղը), որոնք ազբյուրն են Կիլիկիո հուսթի դաշտերուն հռչակավոր արգավանդության։

Թոմարզայեն եկող մը պետք է 200 մետր անտառապատ զառիթոփով մը իջնա այս Քեոսելեր գյուղը, ուր հաստատված էր ոստիկանական պահականոց մը և հեռաձայնով կապված Թոմարզայի և Հաճբնի հետ։

Պարզապես բնության հրաշալիք մըն է տեսնել ծովեն 2000—3000 մետր բարձր այս լեռներու մեջ փորված բնական կիրճը, որը միակ անցքն է դեպի Կիլիկիո դաշտը։

Երբ մենք հասանք մարտի վերջը այս կիրճը, ամբողջապես ծածկված էր ձյունի թանձր խավերով, և մեկ քանի շաբաթներե ի վեր ըսին, որ բոլորովին խափանված էր ամեն հաղորդակցություն, նույնիսկ կիրճին մեջ գտնվող և միայն մեկ ՀԱՄ հեռու եղող գյուղերուն միջև երթևեկ չկար։

Պահականոցին ենթասպան պոլսեցի քաղաքավարի երիտասարդ մըն էր, որը շատ հայ բարեկամներ ունենալուն, իբր թե կը մեղքնա եղեր հայոց գլխուն եկած այս մեծ փորձանքին...

Բայց հարկ է հանուն ճշմարտության խոստովանիլ, որ մեզ ընդունեց կարեկցությամբ և հարգանքով, ինչ-որ բացառիկ և ուշագրավ պատիվ մըն էր մեզի համար։ Որովհետև ոչ մեկուեղ այնքան հարգանքով ընդունված էինք ցայն վայր։

Ինձ առաջնորդեց իր անձնական սենյակը և անձամբ թրքական ձևով սուրճ եփելով՝ ինքն իր ձեռքով բերավ մատուցանել, հակառակ իր հրամանին ներքև գտնվող ոստիկան զինվորներուն ծառայելու պատրաստակամության։



Նույնպես թույլատրեց, որ մեր տաքսիներուն հոդերը կերները փոխանակ արգելափակելու՝ ազատ ձգեն, որ տեղավորվեին Ավշարներու խրճիթներուն մեջ։

Ավշար այս գյուղացիներն ևս, որոնք հայերե բռնի իսլամացվածներ ըլլալ կ'ենթադրվին՝ և շատ բարեկամ են առհասարակ քրիստոնյաներու և մասնավորաբար հայերու, և երբեք «նամեհրամ» չեն գիտեր ու իրենց իգական սեռը երբեք չփախավ մեզմե, նույնպես մեծ հարգանքով մեզ ընդունեցին իրենց գեղջկական տուներուն մեջ։

Այս խրճիթները չորս ցած պատերով և հողե տանիքով մեկ սենյակե բաղկացած բնակարաններ էին՝ շատ փոքրիկ լուսամուտներով։ Ներքին մասը երկու մասի բաժնված էր միայն գետնին գամված ձողերով, որուն ներսը իրենց կենդանիները կը բնակեին, իսկ դուռն մոտիկ կողմը իրենք. սակայն իրար կը տեսնեինք։ Կենդանիներու այս բնակակցությունը մանավանդ խստաշունչ ձմռան այս ընթացքին այն առավելությունը ուներ, որ այս խրճիթներու ներքին մասին տաքութենեն՝ դուրսի սարսափելի ցուրտը այնքան զգալի չէր ըլլար լուսնշաղին և մթնշաղին, երբ ցուրտը կը հասնի իր ամենախստագույն աստիճանին։

Թեպետ այս գյուղացիները իրենց կից անտառներեն պետք եղածեն ավելի փայտ տրամադրելի ունենալով միշտ կրակ ունեին, սակայն կենդանիները գյուղացին իրմե ավելի արժեքավոր համարելուն՝ ավելի հոգածու է ասոնց, քան իրեն մասին։

Ավշարներու այս փոքրիկ գյուղին մեջ հանդիպեցանք մեզմե 8—10 օր առաջ գալով և ձյունին պատճառով ճամփան շարունակել չկարենալուն այստեղ մնացող հայ ուրիշ քարավանի մը, որ հազիվ 15—20 հոգիե բաղկացած էր։ Ասոնք ալ կու գային Կեսարիայեն. բացի ատաբազարցի երկու եղբայրներե, որոնք Պոլսեն Գոնիայի և Կեսարիո ճամփով բերված էին հոս, ամենքն ալ խլամացածներ էին, մեջը ըլլալով նաև 2 քահանաներ կանաչ փաթթոցով։

Հազիվ սուրճը խմած էինք և ենթասպային հետ բարեկամաբար կը խոսակցեինք, երբ ներս մտավ սպետակ փաթթոցով և թուրքի կատարյալ «թիպով» մեկը, և խնդրեց, որ ընթրիքը իրենց հետ ընեմ։ Բայց անտեղյակ իրադարձությանց, սակ

մը վարանեցա ընդունելու ասոր հրավերը, խորհելով, որ կրնա ծուղակ մը լարված ըլլալ...

Ենթասպային նույն պահուն ոստիկան զինվորները հրահանգած մեկ միջոցին զբաղված ըլլալին օգտվելով, մոտեցավ ինծի և փսփսալով ըսավ.—Հայր սուրբում գորգմա հայրմ, հայ, կել թաամը պերապեր իտելիմ, տեյեճեյիմ վար...։—Ապշեցա տեսնելով հանկարծ, որ ինծի այնքան սարսափ ազդող և թուրք կարծած անձս հայ է։ Բայց ուզելով երևույթները փրկել, բարձրաձայն հայտնեց ներկաներուն ուղղյալ շեշտով մը, թե ես «հյուր ըլլալով» պահականոցի սպային, կա՛մ չեմ կրնար ուրիշ հրավեր ալ ընդունիլ միանգամայն, և կա՛մ եթե սպան ալ հետս գա՝ այն ատեն միայն կը հոժարիմ երթալ...

Թուրք երիտասարդ սպան հասկնալով իսկույն, թե արտոնություն առնելու ձև մըն էր այս բրածս, փութաց պատասխանել, թե ես կրնամ երթալ խնդրարկուին հետը և անպատեհություն մը չկա, որ ընդունիմ իր հրավերը, և թե ինք ալ ընթրիքեն վերջ մեզի կու գա այցելության։

Այս հայտարարության վրա հետևեցա զիս հրավիրող փաթթոցավոր և իսլամացած հայուն դեպի իր իջևանած խրճիթը, որ գյուղացիներուն մեծերեն մեկուն լավ շինված տունն էր, ավելի լավ կառուցված, քան մյուս խրճիթները։

Հազիվ տեղավորված ներսը փռված անկողիններեն մեկուն վրա, ներս մտավ մեզ հյուրասիրող հայուն կինը իր չորս զավակներով և ոտքերուս իյնալով դրսեցի (ոչ կեսարացի) հարս ըլլալուն մայրենի լեզվով լալով ըսավ.— Հայր սուրբ, կարգիդ մատաղ ըլլամ, Աստուծո պաշտոնյա ես, մեզ բռնի իսլամացուցին... մեզի թողություն տուր Աստուծո սիրուն, որպեսզի գոնե հանգիստ սրտով մեռնինք...

Այլևս մեր ալ հուզումը հասած էր, աղե՜, իր գերագույն աստիճանին, որովհետև հայր, մայր և չափահաս աղջիկ մը և երեք տղեկներ վերարկուիս երկար փեշերուն փարած անդադրում կը համբուրեին և կու լային և թողություն կը խնդրեին...

Աստված իմ, ի՞նչ դառն վիճակ և ի՞նչ եղերական տեսարան, ըլլալ հովիվ ժողովուրդի մը, և կենդանի աչքով տեսնել իր հոտը եղած ցան ու ցրիվ, գիշատված սովալլուկ գայլերե,



նահատակներու անթաղ մարմինները կեր եղած գերեզմանափոր բորենիներու։

Իսկ ողջ մնացածներն բռնի իսլամացված՝ և այժմ Ցավրոսի հայկական այս պատմական լեռներու վրա զուգադիպությամբ մը միայն իրարու հանդիպելով հոտ ու հովիվ իրարու եկած՝ գաղտնի արցունքներ կը թափեինք արդեն մեռածներուն և մեր՝ վաղվան մեռնողներուս վրա...

Խեղճ կինը կ՚ըսեր— փա՜ռք Աստուծո, որ անգամ մըն ալ Տերը արժանի ըրավ կենդանի աչքով տեսնելու ազգիս եկեղեցական մեկ առաջնորդը։— Արդարև ա՛յնքան սնգտանելի դարձած էր հայ եկեղեցականը, և ամբողջ Փոքր Ասիո ներքին այս գավառներուն մեջ միակ ողջ եկեղեցականներն էինք ես և ողբացյալ ծերունազարդ Տ. Հուսիկ քա՛հանա Քաջունին։

Վերջապես հարցուփորձ ընելով տեղեկացանք, որ իրենք իսլամացած ըլլալով հանդերձ՝ Կեսարիայեն կրկին աքսորված են ձմռան այս խստաշունչ եղանակին հետևյալ տղայական շարժառիթով։

Ասոնց ութամյա կայտառ և վառվռուն տղեկը՝ հասակակից իսլամ դրացի տղոց հետ վեճի և կռվի բռնվելով և ծեծ ուտելեն զայրացած, իսլամ տղոց սպառնալով կ՚ըսե օր մը,— Մոսկոֆ կելսե, պիզտե սիզի տեոյեճեյիզ վե եոլտյուրեճեյիզ...։— Այսինքն, երբ ռուսը գա, մենք ալ ձեզ պիտի ծեծենք ու սպանենք...

Մանկական միամտությամբ և զայրույթի նոպայի ներքև ըսված այս աննշան խոսքերուն ընդարձակ իմաստ տալով, և հույժ ծանր հետևություններ ու եզրակացություններ հանելով՝ Կեսարիո կառավարչին ականջը կը ձգեն թուրք տղոց ծնողքները։

Իսկ տեղական կառավարական մեծ ու փոքր պաշտոնյաները գործը կը հրահրեն ըսելով և մեկնելով, թե իսլամացած հայերը եթե իրենց տուներուն մեջ գաղտնապես այսպիսի նյութերու վրա խոսած չըլլային և այս իմաստով արտահայտված չըլլային, այս փոքր տղաքը ուրկե՞ պիտի կրնային ինքնաբերաբար այսպիսի «լուրջ» սպառնալիքներ ընել իրենց դրացի թուրք տղոցը։

Ուստի առանց ո՛րևէ քննության, ըսելով թե հայր ի՛նչքան ալ իսլամացած ըլլա, դարձյալ «տեռվլեթ, միլլեթ տուշմանը» է, այսինքն թուրք ազգին և պետության թշնամին է։ Սեմիջա-

պես աքսորի որոշում կու տան, և ամբողջ այս ընտանիքը, իր մոտավոր և հեռավոր բոլոր ազգականներով մեջն ըլլալով երկու իսլամացած ծերունի քահանաներ, ճամփա կը հանեն ցուրտ ձմռան այս եղանակին մեջ 16 հոգի դեպի Տեր Զոր։

Սակայն Կազպել հասնելնուն, կիրճը ձյունի թանձր խավի տակ թաղված ըլլալով շաբաթներե ի վեր, կաշառք տալով ոստիկան զորքերու ենթասպային՝ արտոնություն կը ստանան մինչև ճամփան բացվիլը մնալ Ավշարներու այս գյուղը, մանավանդ որ իրենք շատ բեռներ ունենալով և ընտանիքով ու ձիերով ըլլալուն անկարող էին անցնիլ այս ձյունապատ կիրճեն։ Սակայն ձյունը պատրվակելով և մանավանդ թուրք ենթասպային կաշառք տալով կրնային շաբաթներով երկարել իրենց այս հապաղումը և հանգիստ ընել...

Այս միջոցին ընթրիքը բերվեցավ, բայց ոչ ոք մեզմե այլևս ախորժակ ուներ բան ուտելու, հուզված էինք և իրարու կը պատմեինք մեր յուրաքանչյուրին գլխուն եկածները... և սարսափեցուցիչ հավանականությունները գալիքներուն...

Այնուամենայնիվ փորձեցինք բան մը ուտել, երբ թշվառ հայ կինը կրոնափոխ ըլլալեն չափազանց խղճահարված՝ ազաչեց, որ սեղանը ոչ թե իսլամի, այլ քրիստոնյայի սեղան նկատելով օրհնեմ...։ Եվ ահա ծայր առավ դարձյալ հեկեկանքը, կու լային ամենքս ալ, և՛ այր և՛ կին, և՛ աղջիկ և՛ անմեղ փոքր տղայք, հեկեկանքով վերջացավ Հայր մերը։ Արդեն վաղուց մոռցած էինք խնդալը, որովհետև սուգի և արցունքի տարիներ էին... Այժմ ալ հազիվ նստած՝ մայր ու աղջիկ կ՝աղաչեին թախանձագին, որ զիրենք խոստովանցնեմ և հաղորդեմ...

Ո՜հ, տարին մը ի վեր լեռնե լեռ թափառական ու աքսորական եկեղեցականիս մոտ ի՞նչպես կրնար սուրբ հաղորդություն կամ եկեղեցական ո՛րևէ մատյան մնացած ըլլալ կամ մեր մոտը գտնվիլ։ Սակայն ա՛յնքան սրտեռանդն և աղիողորմ կը պաղատեին ու կը կրկնեին իրենց խնդրանքն, որ հարկ էր անպատճառ ո՛րևիցե արտակարգ և բացառիկ եղանակով գոհացում տալ իրենց։ Չէ՞ որ յ. Ավետարանը 7×70 ներել կը հանձնարարեր։ Բոնության ներքև եղած իսլամարումեն վերջ՝ այս աստիճան արտասվալից զղջում մը ի՞նչպես կրնայի մերժել, և ի՞նչ իրավունք ունեի մերժելու... Ինչո՞ւ զրկեի զիրենք կրոնքի վերջին մխիթարութենեն մահվան այս ահավոր ճամփուն վրա, երբ ես ինքս ալ իմ տառապանքի 100 ընկերներով կանգնած էի կյանքի և մահու շեմին վրա, աչքերս հառած ավելի դեպի հավիտենականություն...

Ուստի փութացի կատարել իրենց բարեպաշտական խնդրանքը և խոստովանցնելե վերջ, իբր ս. հաղորդություն, հետ սրտաբուխ և արտասվախառն օրհնության, գինի չգտնվելուն հացը քացախի մեջ թաթխեցի և տվի որ ճաշակեն։ Չէ՞ որ խաչեցյալ Հիսուսի ալ վերջին անգամ լեղի խառնյալ քացախ տվին...։ Նույն պահուն ապրած մեր կյանքը արդեն ավելի լեղի էր ու դառն, քան Հիսուսի մատուցված լեղին. իսկ քացախը վերջապես գինիեն դարձած էր և հիշատակությունն էր ոչ միայն Հիսուսի կողեն թափված կաթիլ-կաթիլ անմեղ արյունին, այլ ամբողջ հայության միլիոնավոր սուրբ նահատակներուն թափած անմեղ արյան ծովերուն...

Բայց մեր հոգիներուն գաղտնի խոր ծալքերուն մեջ այնպիսի փլուզում մը տեղի ունեցած էր, որ ոչ մեկիս քով սիրտ մնացած էր այլևս ուտելու։ Մենք չէինք, որ կերակուրները կ՝ուտեինք, այլ կերակուրներն էին, որ մեզ կ՝ուտեին...

Արդարև հոգեբլկումի ժամեր ունեցանք, երբ միայն մահվան մեջ ուզեցինք այլևս փնտրել մեր փրկությունը, միայն թե կացիններու ներքև չըլլար այն... չարչարալից և հոգեվարքի տաժանելի երկունքներով...

Բայց հանկարծ ներքին դարանակալ ձայն մը կը թելադրեր մեզի մտերմորեն՝ ընել ամեն ինչ, հանդուրժել ամեն մահաբեր վտանգի, կենդանի աչքերով տեսնել կարենալու համար գործադրությունը հավիտենական արդարության և դղրդալից վերջնական կործանումը օսմ. երբեմնի մեծ կայսրության, իբր փոխվրեժ թափված հորդահոս անմեղ արյան։ Միանգամայն ողջունելով տեսնել վերջապես ոսկեշող արշալույսը ազատ հայության անկախության։ Որը ցանկալով ցանկացան մեր տառապահյուծ նախնիքները տեսնել, ու հինգ երկար տաժանելի դարեր իզուր սպասելե վերջ չտեսած մեռան ու աչքերնին ետև թողած գնացին հավիտենականություն...

Արցունքի և հուզումի այս սեղանեն վերջ, այցելության եկան մեզի բնիկ ատաբազարցի և պոլսեբնակ երկու ազգասեր և երիտասարդ եղբայրներ։ Ասոնք իբր Հնչակյան Պոլսեն կ՝աքսորեն Տեր Զոր, բայց երկաթուղիով Դոնիա հասնելեն վերջ, փոխանակ երկաթուղիով շարունակել տալու դեպի Ադա-

նա-Հալեպ, Ալուզրշլայի ճամփով Կեսարիա կը բերեն և ասկե էս իսլամացած կեսարացիներու հետ Կազպելի ուղեգծով դեպի Հալեպ կը տարագրեին, երբ հոս տեղ իրարու հանդիպեցանք։

Ասոնց պաշտոնագրին մեջ գրված էր, թե «այս երկու եղբայրներն հնչակյան կուսակցության հին գործիչներեն ըլլալով՝ կը ջանային օսմ. կայսրության մասերը բաժնել տալ օտար պետության միջև. հետևապես թուրք պետության թշնամիներ են...»։ Այսպես գրելով ուզած էին ենթարկել վրեժխնդիր ոստիկան զինվորներու արյունածարավ զայրույթին...։ Բայց ինչպես մենք և շատեր, ասոնք ալ մեծաքանակ դրամ ծախսելով և պարգևներ տալով՝ կրցած էին ազատիլ իրենց պահակ ոստիկան զինվորներուն լարած դավադրություններեն ու մահաբույր ծուղակներեն։

Հակառակ իրենց կրած տառապանքներուն, դեռ կը պահեին իրենց բարոյական ամբողջ կորովը և մեզի պես կը սպասեին հայ լուսաշող արշալույսին...

Շատեր կարոտը կը քաշեին ժամերգության և սուրբ պատարագի արարողության։ Բայց այլևս ի՞նչ պետք կար պատարագի, քանի որ ամբողջ ազգ մը մինչև օրորոցի անմեղ մանուկը՝ պատարագված էր հայրենիքի քավության սուրբ սեղանին վրա... անտերունչ ու անմոունչ...

Իսկ մնացորդ ցան ու ցրիվ թշվառ բեկորներս նավաբեկյալ հայության՝ եկած էինք մեկտեղ պատահաբար, Տավրոսի հսկա այս լեռներու ձյունածածկ այս կիրճին մեջ, ու գաղտնաբար իրար կը մխիթարեինք և վաղվան փրկության երազներով իրար կ'օրորեինք...

Առաջին անգամ հոս էր, որ այս երկու կտրիճ եղբայրներն առաջարկեցին ինձի փախչիլ՝ համոզել ուզելով զիս, թե փախչողը միայն կրնա փրկվիլ։

Բայց մերժեցի լքել տառապանքի իմ հին բոլոր ընկերներս, մանավանդ որ մտքիս մեջ արդեն ծրագիրներ մշակել սկսած էի, ամբողջ քարավանով փախչելու...

Կեսգիշեր էր, երբ ոստիկանական պահականոցի սպան այցելության եկավ համաձայն իր խոստման, բայց երբ տեսավ 8—10 աքսորականներ, որ իրարու եկած տրտում տխուր նստած իրար կը մխիթարեինք, կասկածեցավ, թե գուցե փախուստի ծրագիրներ կ'որոճանք. ուստի տանտերը և զիս միայն



ձգելով, մյուսները դուրս կանչեց և հանձնարարեց, որ երդման իրենց տեղերը ու պառկին...

Ջանկբրիեն մեկնելի վերջ՝ առաջին գիշերն էր, որ բախտ ունեցա անկողնի մեջ պառկելու, սակայն ոչ մեկս կրցանք քնանալ։ Եվ մի՞թե այսքան հոգեկան հուզումներե և մարմնական տառապանքներե վերջ քնել հնար էր մեզի։ Արշալույսը հազիվ ողջունած, եղած հրավերին վրա այցելեցի կեսարացիներու այս քարավանին մնացորդ անդամներուն, որոնց մեջ, ինչպես կանխավ հիշեցի, կային 2 իսլամացած քահանաներ կանաչ փաթթոցներով։ Բարեբախտաբար մեր տարագրության ամբողջ շրջանին մեջ միայն ուրացող այս երկու եկեղեցականներուն հանդիպեցանք։

Բնականաբար իրար մխիթարեցինք առանց ծանրանալու իրենց բռնի իսլամացման վրա. և նույնպես ցույց տալով իբր թե կ'անգիտանայինք երկու քահանաներուն իսլամացման հանգամանքը։ Մանավանդ որ այս վերջիններն ալ կը ջանային քահանայական իրենց նախորդ հանգամանքը թաքցնել։

Մեկնելու ազդանշանը տրված էր, և հարկ էր բաժնվեինք մեր կեսարացի ընկերներեն, որոնք ձյունը պատրվակելով և մեծաքանակ կաշառք տալով պիտի մնային դեռ 10—15 օր մինչև ձյունհալը, որ ատեն կը հուսային, թե ճամփան կրնար բացվիլ վերջապես։ Իսկ այս բացառիկ թույլտվության պատճառաբանությունը սա էր, որ շատ բեռներ և կին ու փոքրիկ մանուկներ ունենալուն, ձիերով ստիպված էին անցնիլ ձյունապատ այս սարերն ու կիրճը։

Սակայն մեզ ճամփա հանեցին ըսելով, որ մենք այրեր ենք ու հետիոտն կրնանք անցնիլ ձյունի թանձր խավերուն վրա երիզվող նեղ արահետեն, որը հազիվ երկու թզաչափ լայնություն ուներ։

Երբ ճամփա պիտի ելլեինք ու քարավանի բոլոր անդամներն շարվեցանք զույգ-զույգ, ըստ սովորության տեղի ունեցավ ոստիկանական համրանքը, ստուգելու համար, թե ամբո՞ղջ ենք, պակաս անձ կա՞, կամ փախչող եղա՞ծ է։ Ենթասպան մեր անուններու պաշտոնական ցանկը ձեռքը՝ սկսավ բարձրաձայն կարդալ յուրաքանչյուրիս անունը, և մենք կը պատասխանեինք մեր անունը կարդացվելու ատեն— հոս է («պուրատա տրր»)— ըսելով։ Ո՜րչափ մեծ եղավ մեր ամենքին զարմանքը և երկյուղը, երբ հանկարծ տեսանք, որ մեզմե բացակա

էր յոգկատցի 12 ամյա պատանի մը։ Եվ ահա շշուկ մը ելավ յոգկատցիներեն, թե փախած է... Ամենքս ալ ապշեցանք ըրած հանդգնությանը վրա. ձյուն ձմեռ, այս ամայի լեռներուն վրա ո՞ւր կրնար փախչիլ. եթե ազատեր իսկ երկոտանի վագրերե, պիտի զոհ երթար շորքոտանի սովալլուկ գայլերու...

Շուրջ մեկ ժամ փնտռտուքներե և այս պատճառով հապաղումե մը վերջ՝ ճամփա ելանք մեծ մտատանջությամբ։ Որովհետև ցարդ դեռ կորուստ ունեցած չէինք և առաջին զոհը կու տայինք։

Ենթասպան հեգնոտ ծիծաղով մը ըսավ.— Անհոգ եղեք, ես կը գտնեմ և կ'ուղարկեմ ձեր ետևեն և անպատճառ կը հասցնեմ ձեզի։— Վերջապես մենք ճամփա ելանք, բայց մեզի ընկերացող մեր պահակ ոստիկան զինվորներն ըսին մեզի գաղտնապես, թե մեզի իրավունք տրված է առանց այլևայլ գնդակահարել փախչողները և մենք պատասխանատու չենք ասոր համար, հետևապես ալ փախչողին մի՛ սպասեք, անոր հաշիվը կը մաքրեն մեր ընկերները։

Արդարև մեր մեկնումեն վերջ, Կազպելեն ճամփա ելլող և մեզի հասնող անցորդ ոստիկան զինվորներե իմացանք, որ փախչող պատանին գտած են Թոմարզա գնացող ճամփուն վրա և տեղն ու տեղը սպանած փայտի հարվածներու ներքև։

Մեկ կողմեն թեպետ ա՛յնքան վիշտ զգացինք տառապանքի խեղճ ընկեր մը, որ մեր քարավանին Բենիամինն էր, կորսնցնելուս համար, մյուս կողմե մեզմե ամեն անոնք, որ փախուստի վրա երբեմն փորձված էին խորհիլ գաղտնապես, այլևս փախուստով ազատության ամեն հույս կորսնցուցին, տեսնելով եղերական վախճանը այսպիսի հանդուգն փորձի մը։

Ստուգիվ եթե ոչ անկարելի, գեթ հույժ դժվար է մեզի իրական գույնով պատկերացնել այն տաժանելի ճամփորդությունը, որ ըրինք Ավշարներու Քեոսելեր գյուղեն մինչև մեր երկրորդ գիշերած իշևանը Սարայճըք։ Որ այս անմատույց և վայրենի լեռներով շրջապատված կիրճին մեջ քուրդ փոքրիկ գյուղ մըն էր 25—30 խրճիթներով, որոնք ձյունի տակ թաղված և կքած՝ իբր թե փլչելու վրա ըլլային։

Այս երկու գյուղերու ճամփան, որ ամառ ատեն ոտքով հազիվ 1—1½ ժամ էր, մենք 5—6 ժամեն հազիվ կրցանք անցնիլ ձյունին պատճառով, որ ծածկած էր ամբողջ կիրճը՝ 2—3



մետր թանձր խավով մը, այսպես շաբաթներով խափանելով ամեն հաղորդակցություն։

Մինչև ցարդ մաքառած էինք մարդկային ոճրապարտ ամեն հետապնդումի դեմ, այժմ եկած էր բնությունը իր սաստկաշունչ խստությամբ մեր դեմ հանելու տաժանելի դժվարություններ, լրացնելով մարդ—գազաններու ըրած չարիքներու խուժդուժ պակասը։ Իսկ մենք արդեն մեր կես ճամփան վաղուց անցած ըլլալով, արդեն սպառած էինք և հալ ու մաշ եղած, և անզոր էինք այլևս տակալու մեզ նոր ի նորո ուժասպառ ընող այս ամեն խոչընդոտներուն։

Գթոտ քայլերով և հույժ դանդաղ գնացքով մեր հարյուր հոգինոց քարավանը 18 տարեկան պատանիներեն մինչև 80 տարեկան հյուծած ծերունիներ, ոմանք նույնիսկ բոկոտն, սկսանք ելևիջել կիրճին ձյունապատ արահետը։ Մեզմե շատեր կը կրեին իրենց և ընկերներուն անհրաժեշտ բեռները, օրինակ հացի տոպրակ մը մեկ քանի կտոր մնացորդ ճերմակեղեն, աղտոտ և հին վերմակի ծվեն մը, ծվեն-ծվեն զգեստներ կամ մաշած կոշիկներ, ջուրի թիթեղյա ըմպանակ մը, մաշած եվրոպական ծածկույթ մը (պաթանիա) և այլն։ Մեկը մյուսեն անհրաժեշտ ու պիտանի, որոնցմե ոչ մեկեն հնար էր բաժնվիլ, քանի որ անցյալ փառքի ու հարստության վերջին մնացորդ բեկորն էին ասոնք...

Ուղտերու միաշարք և երկարածիգ քարավանի մը նման՝ իրարու ետևե կը տողանցեինք՝ ծայր աստիճան զգուշավորությամբ։ Որովհետև մեկին գայթումը և ձյունի մեջ խրումը պատճառ կ'ըլլար իրմե վերջ եկողներուն ընկրկումին և շփոթումին։

Կիրճը երկար շաբաթներ ձյունի ներքև թաղված ըլլալով, գյուղացիներ ճարահատ արահետ մը կրցած էին բանալ 2 թզաչափ լայնքով, որուն վրա ձյունը կարծրացած էր և վրայով հնար էր քալել։ Իսկ երբ շփոթած կամ մոլորած քայլ մը պատճառ ըլլար դուրս գալու այս արահետեն, արդեն ենթական ինքզինք կը գտներ ձյունի մեջ թաղված մինչև իր պարանոցը։

Օդը թեպետ սկիզբը պայծառ էր, բայց հետզհետե թուխպ ամպերով սկսավ մթագնիլ Տավրոսի լեռներու այս վայրենի կատարները։ Ժամ առաջ կտրել անցնիլ պետք էր այս հայ Գողգոթայի ձյունալից վերելքը. բայց քանի՛ կ'աճապարեինք, ա՛յնքան կ'երկարեր ճամփանիս, կամ ավելի ճիշտ բացատրությամբ,

մեր վատույժ և գիշոտ քայլերուն համար շատ երկար ըլլալ էր թվեր 1—1½ ժամվան ամառնային ճամփան, որ այժմ 5—6 ժամ կը տևեր։

Մեր թշվառ քարավանին ծերունիներուն մեջ կար նաև ավելի քան յոթանասունամյա ալեզարդ և պատվական քահանա Տ. Հուսիկ Քաջունի։ Սա հոգելույս Տ. Եղնիկ եպիսկոպոս Ապահունիի Արաբկիրի առաջնորդության օրով 1880—1890՝ առաջնորդական փոխանորդ եղած էր։ Աչքը կուշտ և հայրենասեր Աստուծո այս անձնվեր պաշտոնյան՝ հայ քաղաքական անդրանիկ շարժումներուն առաջին զոհերեն մեկը եղած էր և հեղափոխական Ապահունի Եղնիկ Սրբազանին հետ Պոլիս բերված էր իբր աքսորական։ Երկար տարիներ բանտը մնալե վերջ, ազատելով Պոլիս բռնադատված էր ապրելու կառավարական որոշումով։ Գավառացի հայրենասեր ու ամոթխած այս Աստուծո ուղնիվ պաշտոնյան Պոլսո թաղային անշուք եկեղեցիներեն մեկեն մյուսը կը նետվեր փոխանորդարանին կողմե, իսկ ինքը անտրտունջ կը տաներ իր խաչը, անվրդ ըլլալով մրցելու իր պոլսեցի սքեմակիցներուն հալածող մրցակցության դեմ։ Բարի քահանան ինք իր մեջ ամփոփված, արցունքը աչքեն սիրտը թափելով՝ միայն ինք զինք նվիրած էր իր երեք մանչ զավակներուն կրթության, որոնց թե՛ հայրություն, թե՛ մայրություն ըրած էր՝ շատ կանուխ այրիացած ըլլալով։ Եթե ոչ անոթի՝ գոնե չափազանց զրկանքով ինք ապրելով, իր զավակները Պերպերյան վարժարան դրկած և շրջանավարտ ընել տված էր։

Ո՜հ, ի՞նչ հեգնություն ու նախատինք արդարության, եթե իրենց հոր արժանավոր նմանություն բերող այս երեք զավակներն՝ իբր մարզված կտրիճ սպաներ՝ օսմ. գործոն բանակին մեջ ծառայելով Դարդանելի մեջ գնահատման ևս արժանացած էին։ Ահա այս քաջերուն ալևոր հայրը ձերբակալելով Պոլսեն մեր առաջին քարավանին հետ ճամփա հանած էին և մեզի հետ բաժնեկից էր մեր ճամփու բոլոր տառապանքներուն։

Թեպետ կարելին ըրած էի նյութապես և բարոյապես մխիթարելու համար Աստուծո այս արժանավոր ծերունի պաշտոնյան, բայց ավելի քան յոթանասուն երկար և տժգանակիր տարիներու բեռան տակ կքած՝ անկարող էր անշուշտ տանելու հոգ խաչի փշալից և արյունոտ այս ճամփան մինչև վերջը։

Հալած ու մաշած և աչքերը ձյունի սպիտակութենեն շլմորած՝ հանկարծ թաղվեցավ ձյունին մեջ, չկրնալով իր հավասարակշռությունը պահել այսքան նեղ արահետի մը վրա ժամեր երկար։

Բավական երկար ջանքեր պետք եղան և շատ ժամանակ կորավ, մինչև որ կարելի եղավ զինք ազատել ձյունի թանձր խավերուն մեջեն, ուր թաղված էր խորը։ Բայց ինք ձյունեն դուրս գալե վերջ կ՚աղաչեր, որ զինք թողունք ճամփուն մեջ ու անցնինք երթանք... ու կ՚ըսեր հուզված շեշտով մը, որ արդեն հավիտենականություն կը բուրեր...— Հայր սուրբ ալ դիմանալիք տեղս չմնաց... ա՛լ հերիք է... երբ որ է պիտի մեռնիմ... ասկե լավ ու հանգիստ մահ չեմ կրնար գտնել, զիս հոս թողուցեք ու գնացեք...։ Միայն մի մոռնար իմ կողմես համբուրելու երեք զավակներուս՝ Եղնիկիս, Եղիշեիս և Դարեգինիս աչքերը... պատմե մեր ճամփու այս տառապանքը... և մի մոռնար գրել մեր քաշած այս անպատում թշվառությունները...

Համարյա բռնի քաշեցինք տարինք մեզի հետ և մեծ դժվարությամբ բերինք մեր իջևանած գյուղը՝ Սարայճըք։

Թշվառ ալեզարդ քահանան իրավունք ուներ ըսելու, թե դիրկություն չկար մեզի համար, որովհետև ամիս մը վերջ՝ հյուծած ու բոլորովին սպառած հասնելով Դամասկոսի գյուղերեն մեկը, ուրկե պիտի շարունակեր ճամփան դեպի հայության մեծ գերեզմանը Տեր էլ Զոր, բազմավաստակ ուսուցիչ Երվանդ Ջավուշյանի հետ կը հյուրասիրվի պանտրմացի ազնիվ ազգակիցներու վրանին մեջ, երբ հաջորդ օրը ամենքն ալ միասին պիտի մեկնին եղեր դեպի Նիսիպին։ Բայց բազմաթիվ հիվանդներու պատճառով ամբողջ քարավանով կը ստիպվին մնալ հոս, և երկրորդ օրը Աստուծո, այս բարի ու տարաբախտ պաշտոնյան առավոտուն կը գտնեն իր խշտյակին վրա վախճանած։ Շիջած էր ինքն իրեն՝ յուղն սպառած առկայծյալ կանթեղի մը հանգույն..., անեծքը սառած իր օրհներգության վարժ շրթներուն վրա...։ Հաջորդ օրը նույնպես կը մեռնի այս տեղը նույն վրանին ներքիվ տարաբախտ ուսուցիչն ու հեղափոխական գործիչը ողբացյալ Ջավուշյան, ան ալ հանգելով կանթեղի մը նման։

Արդեն երկար ամիսներու այս ճամփու ահռելի դաժանքը սպառած էր վաղուց երկունքն ալ, և միայն չոր պատյան մը մնացած էր իրենցմե..., ան ալ կը հանձնեին հողին. իրենց

տառապանքի ընկերներն, ճանկերով փորելով ավազն ու թաղելով այնչափ միայն, որ հազիվ հնարեր ծածկել ավազի նուրբ խավով մը...

Տառապանքի ու աքսորի աշնիվ ու անմոռաց ընկերներ. թող օրհնյալ ըլլա ձեր ևս հիշատակը, որ գնացիք ավելցնել թիվը միլիոնավոր այն հայ նահատակներուն, որոնք զոհաբերվեցան հայրենիքի սուրբ սեղանին վրա։ Թող օրհնեն նաև ձեր հիշատակը ապագա հայ սերունդներ դարեր երկար[1]։

Վերջապես մեր կյանքին ամենասև հիշատակներեն մեկ էջը կազմող տաժանելի աս ուղևորութենեն վերջ, հասանք քուրդ գյուղ մը՝ Սարայճրք։ Բարեբախտաբար անտառապատ այս կիրճին մեջ փայտը առատ ըլլալով, ճարճատող խարույկներու առջև հավաքված սկսանք չորցնել մեր թրջած հագուստները և սառած ոտքերը, և պատմել իրարու մեր արկածները։ Որովհետև հարկ է հոս հիշել, թե մեր քարավանին երկարաձիգ շարքը այնքան իրարմե հեռու մնացած էր, որ իրարմե լուր չունեինք երբեք։ Մեր երկարաձիգ քարավանին որևէ մեկ կետին մեջ, պատահած արկածեն անլուր էին քարավանին հեռավոր ծայրեր գտնվողները։

Ցուրտը ալ ավելի կը խարազաներ մեր անոթությունը, բայց մեզմե շատեր դրամ չունեին հաց գնելու։ Իսկ ունեցողները ևս բավականաչափ հաց չէին գտներ, որովհետև փոքրիկ լեռնային գյուղ մը ըլլալով՝ անկարող էր անակնկալորեն եկած այսքան և բազմաթիվ ինքնակոչ հյուրեր կերակրելու։

Մանավանդ մեր 50 յոզկատցիներն շատ դժվարավճար ճարակ ըրինք գոնե չոր հացով մը կերակրելու։ Ա՜խ, որչափ կը սքանչանայի այս թշվառներուն համբերատարությանը, որոնք անտրտունջ կը տանեին իրենց սև խաչը ըսելով հաճախ.— Նե յափալըմ միլլեթ ուղուրունա չեքեճեխս... պունատե... պին շյուքյուր։ Այսինքն՝ ինչ ընենք, ազգի սիրուն պետք է քաշենք... ասոր ալ հազար փառք տանք...

Հաջորդ օրը սպասեցինք, որ արևը ձմեռնային իր ջերմությամբ քիչ մը մեղմացնե խտացած օդի ցուրտ մթնոլորտը, որ իր հզոր ճշումով արգելք կ'ըլլար մեր արյունին ներքին շրջաբերության։

[1] Ողբացյալ այս մեր երկու ընկերներուն մահվան վերջին վայրկյաններուն սրտաճմլիկ պատմությունը լսեցինք նույնիսկ այն պանդրմացի ազգայինեն, որուն վրանին մեջ հավիտենապես փակած էին իրենց աչքերը։



Վերջապես ճամփա ինկանք դանդաղ քայլերով դեպի կիրճին հարավային վայրէջքը, երբ հետզհետե աներևութացան ձյունի թանձր շերտերը, մեղմ կլիմայի մը առթած հաճելի և տանելի տպավորությամբ մը։

Թեպետ այլևս ձյունեն դուրս եկած էինք, բայց այժմ ալ մտած էինք ցեխի կավոտ և լպրծուն արահետներու մեջ, որոնք փակչելով մեր ոտքերուն, ոչ նվազ տաժանելի կը դարձնեին մեր ճամփան։ Վերջապես ձյուն ըլլա թե ցեխ, քար ըլլա թե ավազ, ամենքն ալ միացած էին անտանելի դարձնելու համար մեր տարագրության և տառապանքի ճամփան։

Աքսորական հայեր էինք, կը քալեինք ու կը քալեինք, կարծելով մեր ճամփան սպառել։ Սակայն ընդհակառակը ճամփան էր, որ մեզ կը սպառեր։ Որովհետև հալածական ու թափառական հայեր էինք, աճապարոտ քայլերով ժամ առաջ կ'ուզեինք հեռանալ արյունոտ այն վայրերեն, ուր մեր ետև կը թողվինք հարյուր հազարավոր նահատակներու սուրբ նշխարներու ցան ու ցրիվ բեկորներն ու գանգերը...

Այո՜, կ'աճապարեինք ժամ առաջ հասնիլ ցանկալին Կիլիկիա, որովհետև մեզմե յուրաքանչյուրը, ամիսներ տևող մեր ճամփու ընթացքին հավատացած էր, թե եթե ողջ հասնելինք Կիլիկիա, այլևս փրկված էինք... Բայց բա՜ռ, ի՜նչ միամտություն... և ի՜նչ պակուցիչ հուսախաբություն...

Անցուցինք երրորդ գիշերը ևս դարձյալ քուրդ փոքրիկ գյուղ մը, ուր բաղդատաբար մեզ հետ լավ վարվեցան։ Դիտելի էր, որ քանի՜ հեռացանք Յոզկատ—Պողազլիան—Կեսարիա—Թոմարզա արյունոտ շրջաններեն ու արհավրալից ճամփաներեն, և քանի՜ տակավ մոտեցանք Կիլիկիո շրջանին, ա՜յնքան թուրք ու քուրդ գյուղացիներ սկսան նվազ դաժան վարվիլ մեզի հետ և նվազ կողոպտել մեզ։

Չորրորդ օրը արևածագին հետ կանուխ մեկնեցանք, որովհետև որոշված էր նույն օրը հասնիլ Հաճբն։

Սկսավ վայրէջք մը, մեր ետև թողուցինք տակավ Կազպելի կիրճը, իր բազմաթիվ ձյունապատ լեռներովն ու երկնաբերձ կատարներովն, անտառուտ ձորերովը և սև-սև հիշատակներովը, և ահա սկսանք դանդաղ իջնել գահավեժ զառիթափ մը։

Հուսկ ուրեմն հասանք Հաճբնի գետին ակը, որ կը կոչվի Զաթախ։

Հոս բնության տեսարանը արդարև հրաշալի էր, մեր քովերն

ի վեր կը բարձրանային գահավեժ սարեր, ծածկված ցան ու ցրիվ և ցանցառ մայրի ծառերով։ Հաճախ սարերու գահավանդներուն վրա կը տեսնվեին թաքնված բնական քարայրներու նեղ անցքերը, իբր ժեռուտ լեռներու խոռոչացած աչքեր, որոնք կը դիտեին մեզ և անխոս վկան կ'ըլլային մեր ահավոր տառապանքին։

Իսկ մեր առջև լերկ ապառաժներու ներքևեն դուրս կու գար խորհրդավոր կերպով Հաճընի գետը հորդահոս բխումով։ Ինքնաբուխ ջուրի այս ակը հույժ հստակ էր, ականակիտ ու սառնորակ, իսկ համը ախորժաբեր, որ քանի խմեինք՝ ա՛յնքան կը սրվեր մեր հինցած ու մոռցված ախորժակը... Բայց ափսո՜ս, որ մեզմե շատ քիչերը հացի չոր շերտեր ունեին ծամելու, որով փոքրիկ պատառներով ամենքս ալ բաժնեկից եղանք այս չոր ու ցամաք հացկերույթին։

Ասոր ալ փառք կու տայինք, որ գոնե վճիտ և անույշ մշտահոս ջուրի ակ մը ունեինք առջևնիս, որ գոնե մեր այրած շրթներուն զովություն կու տար։ Մինչ անապատներու մեջ հետո մեր ընկերները ո՛րչափ կարոտը քաշեցին հացի՝ ա՛լ ավելի պասուքը կը զգային այրող ծարավի։ Փույթ չէր, թե աղտոտ, նեխած և հորի դառնահամ քանի մը կաթիլ ջուր գտնեին հագեցնելու համար պապակը չորցած իրենց շրթներուն, միայն թե սակայն գտնեին...

Այս ջրաբաշխ ապառաժներուն առջևը նստանք մեկ ժամ ավելի, և բավական կազդուրված ճամփա ինկանք։

Ապառաժներե բխող Հաճընի Ջաթախ կոչված այս գետի ակին մոտը՝ 50 քայլ վարոք կար ջրաղացք մը, որ հաճընցիներու տարագրութենեն վերջ մոտակա թուրք գյուղացիներ՝ հետևելով իրենց տոհմիկ քանդիչ ընդունակության փլցուցած էին ու քարուքանդ ըրած՝ փոխանակ օգտագործելու և այլուր աղալու...

Սկսանք տակով իջնել Հաճընի այս գետի ընթացքով միշտ դեպի ձորն ի վար։

Քանի՛ վար կ'իջնայինք՝ ա՛յնքան ձորն կը խորանար և պարապանման սարերն կը ծառանային մեր վրա։ Իսկ գետը գահավեժ ոստումներով ի թավալ կու գար օձապտույտ և արագ վազքով, շառաչով ու շռինդով դեպի Հաճընն։ Մեր ճամփան կ'անցներ միշտ գետի եզերքով, և հաճախ քարե կամուրջներով մերթ աջ և մերթ ձախ ափով մեր ճամփան կը շարունակեինք միշտ այս ձորի երկայնքն ի վար։

Հաճընի 2 ժամ մնացած՝ սկսան երևիլ տակավ հաճընցիներու դալարազարդ այգիները։ Հայոց տարագրության հաջորդող 1916-ի առաջին գարունն էր. դեռ նոր սկսած էին ծլիլ ու ծաղկիլ այգիներն ու որթատունկերը։ Տեղ-տեղ արդեն հարսի նման սպիտակ զարդարված էին գարնան ավետավոր նշենիներն, կարմրածաղիկ նռենիներն ու խնձորենիները։ Բայց ավա՜ղ տերերը չկային, անապատ տարված էին և հազվագյուտ էին արդեն ողջ մնացողները։

Այո՛, անտեր էին և՛ պարտեզները, և՛ այգիները, իսկ այգիներու ձորամեջի հյուղակները փլցված էին անգթորեն՝ գերանները վառելու համար։

Երբ քիչ մը անդին մայրի ծառեր իրենց մարմնեղ հաղթ կեցվածքով ասպարեզ կը կարդային իրենց հավիտենական թշնամին եղող կացինին ու տապարին։

Մարտի կեսն անցած էր, և արդեն գարուն էր, մեր շուրջը ու մեր վերև ակնապարար կանաչություն մը և վերազարթնած ճոխ բուսականություն մը, կը մեղմացնեին բնության վայրագությունը մեզ շրջապատող հսկա և բարձրուղեշ լեռներուն։

Արդարև հրաշալի էր տեսարանը, ծաղկաբույր դարաստաններու և խնկաբույր այգեստաններու գարնան անույշ բուրումները մեզի կյանք ու արև կու տային։ Ժրաջան մեղուներ հույլ ի հույլ բզզալով կ'երթային ու կու գային ու մեղր կը պատրաստեին անտիրական փեթակներու համար...

Դիտելով և խորհրդածելով կը սքանչանայինք հաճընցիին ստեղծագործ այս աշխատանքին վրա։ Որ լերկ ապառաժները դրախտի վերածած էր, և քարքարուտ լեռները այգի ըրած, ուր հազիվ այծեր պիտի կրնային բարձրանալ։ Ինք այդ ահավոր և վար կախված գահավեժներուն, դարավանդներուն և դարատափերուն վրա այգի տնկած էր ու ծառ ու ծաղիկ բուսցուցած։ Աշխատասեր ժողովուրդ մը, որ ապալեր ժայռերը ծաղկաստանի ու այգեստանի վերածած էր և քարերը հացի փոխած։

Բնության այս հոգեթով հարությունը տակավ կ'ոգևորեր մեզ ամենքս. և մեր առօրյա տագնապներեն ու տառապանքներեն ձերբազատված՝ տակավ կը զվարթանայինք։ Մահվան մեր մեջ այլևս հինցած հնհնուքներեն հեռանալով, նոր հույսե-

ռով կը լեցվեինք՝ ի տես գարնանային գեղազվարճ բնության այս փունջագեղ դալարազարթումին։

Մանավանդ ուրախ էինք, խորհելով, որ երկար շաբաթներ դեգերելե վերջ ամայի և վայրի ճամփաներու և լեռներու մեջ այժմ բախտն պիտի ունենայինք հանգիստ գիշեր մը անցընելու Հաճբնի մեջ։

Բայց մյուս կողմեն, ո՛րչափ կը մոտենայինք Հաճբնի, ա՛յնքան վշտի սև որդը կը կրծեր դարձյալ գաղտնապես մեր տառապահյուծ հոգիները, և կը չեզոքացներ վերազարթնած բնության մեր վրա առթած քաղցր տպավորությունը։ Որովհետև անցնելով հանդերձ հետզհետե լայնցող ձորն ի վար հարյուրավոր այգիներու մեջեն, դեռ ոչ մեկ կենդանի շունչի, ըլլա մարդ թե անասուն, չէինք հանդիպած, ամեն ինչ լուռ էր և ամայի...

Ա՜խ ո՛րքան դառն էր վերհիշել այն երջանի՜կ օրերը, երբ հանճբնցի երիտասարդներ, հարսներ, աղջիկներ ու տղայք՝ սփռված այս հարյուրավոր այգիներուն մեջ կը փորեին ու կը ցանեին, կը տնկեին ու կը քաղեին՝ հայրենի երգը բերաններն և աստվածային օրհնությունը վրանին...։ Օ՜հ, երանի՜, բյուր երանի՜ այն օրերուն, երբ աշխատասեր հայ ժողովուրդին շինարար և ջլապինդ բազկուկներն՝ մոգական հպումով մը դրախտի վերածած էին քարքարուտ և ապալեր այս ամեհի լեռներն ու գահավեժ զառիթափերն, մինչև անելանելի բարձունքներն երկնաբերձ լեռնային կատարներու...

Արդյոք պիտի գայի՞ն դարձյալ այդ երանելի օրերն... ո՞վ գիտեր...։ Ա՜խ թող գային... թող գային... և այս անիծյալ սև օրերն երթային... ու ա՛լ չգային...

Արդեն տեղ-տեղ կը նշմարեինք, որ իրենց տերերեն թափուր մնացած այս բյուր այգիներուն մեջ սկսած էին չորնալ խնձորենիներ, տանձենիներ, սալորենիներ ու որթատունկեր... Մեկ կանգուն բարձրացած այգիներու վայրենի խոտը, իր մեջ խեղդած էր պտղատու ազնիվ ծառերն ու երբեմնի ողկուզալից որթատունկերը։ Ծառ ու ծաղիկ կարծես մեզի կը հարցնեին մեր սրտերուն միայն լսելի անխոս ձայնով մը, թե ո՞ւր են մեր տերերը... մեր սիրելիներն... ե՞րբ պիտի գան անոնք... ե՞րբ մեզ պիտի ազատեն մեզ խեղդող այս վայրենի խոտերեն... թող շուտ գան՝ քանի դեռ կենդանության նշան ունինք... Հետո շատ ուշ է...



Իսկ այգեստաններու մրգապահներու հյուղակները և օգափոխությանց համար շինված այգետուններու դուռները, պատուհանները և հարկաբաժիններու մեծ ու փոքր բոլոր գերանները քաշած առած տարած էին այրելու համար..., իբր փայտ վառելու համար։

Ստուգիվ թուրք ցեղը իբր փլցնող, կործանող քանդող, ավեր ու ավերակ, ալան ու թալան ընող, կեղեքող ու սպանող կրնար առաջին մրցանակ ստանալ մարդկային բոլոր ցեղերուն մեջ։ Ցեղ մը, որ երբեք շինել չէ գիտցած, ցեղ մը, որ դարեր շարունակ փլցուցած է ու կործանած իր դրացիներուն շինածներն առ նախանձու, կարծես ապացուցանելու համար, թե ինք ալ բան մը կրնա ընել, և եթե չի կրնար շինել, գոնե քանդելու անիծյալ հատկությունը ունի...

Ի դեպ չէ՞ հիշել հոս Փոքր Ասիո մեջ առածի կարգ անցած սա խոսքն, թե եթե շինել կ'ուզես՝ քրիստոնյա բանվոր բեր, իսկ եթե տուն մը վար առնել կամ քանդել կ'ուզես՝ թուրք բանվոր բեր։

Արդարև մասնավորաբար թուրք մայրաքաղաքին մեջ՝ չէ տեսնված, որ թուրք բանվոր մը ուզե աշխատիլ շինության մեջ..., բայց երբ հին տուն մը փլցնել հարկ է, թուրք բանվորները անպատճառ կ'երթան, ըստ իրենց տոհմիկ արհեստին, իրենց ցեղային ընդունակություններն փայլեցնելու համար...

Այս տպավորությունը կրեցինք ոչ թե Հաճբնի այս այգիներուն առջև, այլ մեր ամբողջ ճամփու ընթացքին։ Մանավանդ երբ հետո Ադանա գնացինք ու մնացինք թաքնված այգիներու մեջ և տեսանք ամեն կողմ անիծյալ հետքերն թուրքի ընտոծին այս քանդիչ հատկություններուն...

Նույնիսկ ճամփաներու վրա գտնված կամուրջներու գերանները վերցուցած տարած էին, խորհելով անշուշտ, թե ա՛լ «գյավուրները» գնացին անդարձ, և այս տեղերու ճամփաներեն ալ ոչ ոք պիտի անցներ...

Երբ մոտեցանք քաղաքին, տեսանք հայ կորաքամակ մեկ քանի պառավներ, որոնք մոտակա այգիներուն մեջ ցրված ուտելու համար խոտեր կը հավաքեին։

Այս թշվառ հայ մամիկներն և սևեր հագված 8—10 կիներ վտիտ և ազազուն ձգված էին քաղաքը, իբր զինվորի ընտանիքներ, մինչ աղջիկներն վաղուց առևանգված և իրենց հարեմ-

ները տարված էին։ Իսկ այս պառավներն թողված էին, իբր բու ավերակի...

Ասոնք ցնցոտիներու մեջ, բոկոտն և գլխաբաց ելած էին տեզազգիներ ժողվելու, որպեսզի խաշելով ուտեն... Որովհետև խստաշունչ ձմռան ընթացքին ամեն ինչ ծախած էին և այժմ միայն խոտը մնացած էր իրենց ապրուստի վերջին ապավենը։

Երբ այս թշվառ հայ պառավները և կիները մեր գալը տեսան հեռվեն, խաչակնքելով վազեցին դեպի մեր քարավանը ու մեկ քանին քովս գալով երկյուղածությամբ կը համբուրեին ձեռքերս ու կ'ըսեին հաճընցիի դժվարահասկանալի գավառաբարբառով.— Ույ, փառք քեզ Աստված, տահա հայ կա եղեր աշխարհին վրա...։— Օգտվելով մեր քարավանին ցրված վիճակեն և մեր հսկող պահակ ոստիկաններուն երկու ծայրերը իբր առաջապահ ու վերջապես մեզմե հեռու գտնվելեն, հարցերու տեղատարափով մը կ'ուզեին տեղեկություններ քաղել մեզմե, ըսելով, որ իրենք արտաքին աշխարհեն բոլորովին կտրված են...։ Մինչդեռ մենք վայրենացած էինք լեռնե լեռ, սարե սար, գավառե գավառ մեր շաբաթներ ու ամիսներ տևող ճամփորդությամբը։

Իրենց ծով ցավերն մեզի կը պատմեին լալով և մեր քարավանին կ'ուղեկցեին դեպի քաղաք, խոստանալով երբ գիշերեինք Հաճրն, մեզի իրենց աղքատիկ սեղանեն բաժին հանել, և մեկ քանի դեռ մնացած հայ ունևորներեն մեզի հաց ճարել...

Անոնք կու լային մեր վրա, մենք ալ իրենց վրա...

Հետզհետե քաղաքը գտնվող հայ կիներ տեսնելով մեր քարավանին մոտենալը, կը հավաքվեին մեր ճամփուն վրա Հոբին մեջ, և հարցեր կու տային ու նարինջներ կը բաժնեին մեզի, մինչև որ ոստիկան զինվորներե նշմարվելով գանակոծվեցան և՛ նարինջ տվող կիներն, և՛ նարինջ առնող այրերը։

Վերջապես հասանք Հաճրնի կառավարական շենքին առջև 8—9 ժամվա ճամփորդությենե վերջ, ու կը սպասեինք, որ մեզի հանգիստ և գիշերելու տեղ մը ցույց տան։

## 28.

## ՀԱՃԸՆԵՆ — ՍԻՍ
## ԱՅՐԱՏ ՈՒ ԿՄԱԽԱՅԱՏ ՔԱՂԱՔ ՄԸ

Արդեն Հաճընի առջև հասած էինք արևամուտեն քիչ վերջ, երբ մեր առջև պարզվեցավ կրկին իրապես սրտաճմլիկ տեսարան մը։

Հաճընն, որ 1915-ի հայոց տարագրությենեն առաջ 28.000 բնակչով զուտ հայաբնակ քաղաք մըն էր՝ շուրջ 5000 տուներով, այժմ ավերակներու կույտ մըն էր։ Հայոց տարագրությենեն քիչ վերջ 1915-ի աշնան Թուրքերը այրած էին քաղաքը, մի անգամ ընդմիշտ վերջ տալու համար երբեմնի Ռուբենյանց հռչակավոր Վահկա բերդի մոտակա հայ արծիվներու այս լեռնային բույնին։

Այրված քաղաքեն միայն մնացած էր քաղաքին բարձրության վրա հայոց դպրոցին քարաշեն և հոյակապ եռահարկ շենքը։ Իսկ քաղաքին ստորոտը մնացած էին միայն հազիվ 200 տուներ աղքատիկ հայերու։ Ասկե զատ քաղաքին ստորոտը Սիս երկարող ճամփուն վրա դեռ կանգուն էր կառավարական շենքը, և ասոր մոտակա 50 տունի մոտ կառավարական Թուրք պաշտոնյաներու բնակարանները փայտյա վանդակներով «խաֆես»։

Հաճընն կը գտնվի ձորի մը մեջ, որուն մեջտեղեն կ'անցնի Հաճընի գետը և երկու կողմը կը բարձրանան բավական հսկա լեռներ, որոնց ձախակողմը (դեպի Սիս) լեռներու գահավանդին կառուցված է քաղաքը։ Իսկ գետին հետ զուգընթաց կ'երթա մեծ պողոտան դեպի Սիս։ Գետին աջակողմի սարավանդակին վրա կառուցված է քարաշեն և պարսպապատ ս. Հակոբ Մծբնա հայրապետի պատմական վանքը՝ բավական գեղեցիկ շինվածքով։

Միայն այս վանքն էր, որ քաղաքին հեռու, հանդիպակաց սարալանջին գտնվելուն՝ ազատ մնացած էր հրդեհի լափլիզող բոցերու ավերիչ հպումեն։

Քաղաքը, որ ամֆիթատրոնի մը ձևով սարի լանջքերն թ վար երկարելուն՝ դիտողի մը աչքին մեկ ակնարկով կարելի էր պատկերացնել, պարզապես ահավոր կմախքի մը տպավորությունը կը թողուր մեր վրա։ Որովհետև հազարավոր տուներ

այրած ըլլալով ասոնց մերկ պատերն դեռ կանգուն էին, ու մեզի շատ բաներ կը պատմեին միայն տարի մը առաջ անցած եղերական դեպքերեն։

Իսկ մեկ քանի այրված եկեղեցիներու հաստ որմերը և ասոնց քարուկիր ու կամարակապ խորանները ու կամարները դեռ ցցված կը մնային, իբր հավիտենական բողոք ընդդեմ թուրք անողորմ վայրագությանց և գազանային նախճիրներու։

1915-ի ամռան հնչակյան պիտակի տակ և Արամ անունը կրող դավաճան մը՝ թուրք ոստիկանական պաշտոնեից և ոստիկան զինվորներու հրամանատարին մատնած էր պահված զենքերու թաքստոցները, և ամլության դատապարտած էր մեկ կողմեն ո՛րևէ ընդդիմություն, իսկ մյուս կողմեն թուրք կառավարության ամբաստանության նյութ ընծայած էր թշվառական հայ դավաճանը։ Թեպետ խուզարկությամբ գտնված առանց այս զենքերուն ևս հայության մահվան վճիռն արդեն կարդացված՝ և տապանագիրը ևս վաղուց գրված էր։

Կիլիկիո շրջանին մեջ առաջին անգամ Զեյթուն՝ նախքան հայոց ընդհանուր աքսորը տեղահանված էր, քիչ վերջ ևս Հաճընի ժողովուրդը, կանխելով այսպես ընդդիմության և ներքին կնճռոտության ամեն հավանականություն։

Հաճընի 28.000 զուտ հայ բնակչութենեն և շրջակա 22 հայ գյուղերու հայութենեն հազիվ մնացած էին 350-ի չափ անչափահաս մանուկներ և զառամած ու կորաքամակ պառավներ։ Մնացյալ ժողովուրդը քշված էր անապատ՝ արյան իր տուրքը վճարելու համար հայ ազատագրության դարևոր դատին։

Եթե ամբողջ Կովկասի մեջ Ալեքսանդրապոլը միակ զուտ հայաբնակ մեծ քաղաքն էր 30.000 հայ բնակչությամբ, ուր բացի սահմանապահ ռուս զինվորներու հսկա բազմաթիվ զորանոցներեն ամեն ինչ հայկական էր, նույնպես Թուրքիո մեջ ևս Հաճընը միակ քաղաքն էր, ուր բնակչությունը միայն հայերե կազմված էր և ըստ նորագույն թուրք վիճակացույցներու՝ կը հասներ հայոց թիվը մինչև 28.000-ի։

Թուրքը ուզած էր այրել ու հիմնահատակ կործանել այս զուտ հայաբնակ քաղաքը, որպեսզի անգամ մըն ալ հայերը չկրնան այսպիսի անմատչելի լեռներու և կիրճերու մեջ արծիվներու անառիկ բույներ շինել ու բռնակալ կառավարության գեմ գլուխ ցցել։

Այո՛, Հաճընը քաղաքը իրական կմախք մըն էր, որ թե՛ մեր



աչքերուն և թե՛ մեր սրտերուն կը խոսեր անձայն, հուզելով մեզ և նոր վերքեր բանալով մեր արդեն խոցոտ սրտերուն վրա։

Տեղահանության առաջին օրերուն 1915 ապրիլի քառասնքին հանդիպակաց սարավանդին կառուցված ս. Հակոբ Մծբնա հայրապետի վանքին մեջ, եկած դիրք բռնած էր Ադանայի նահանգին ոստիկան զինվորներու արյունռուշտ հրամանատար Ավնի իր 2000 կանոնավոր բանակի զինվորներով, հարյուրավոր ոստիկան զինվորներով և Հաճընը բռնադատած անձնատվության։

Գիշերով վանքին շուրջը զետեղելով բազմաթիվ լեռնային թնդանոթներ, քաղաքը իբր թիրախ գործածած և սպառնացած էր ոմբակոծել, եթե ամենափոքր ընդդիմություն մը համարձակեր ընել հաճընցին։

Իսկ դավաճան Արամ, վիժած հնչակյան մը, մի առ մի ցույց տված էր հաճընցիներու զենքի պահեստի բոլոր նկուղները, և Ավնի հաճընցիներու բոլոր զենքերը ձեռք անցուցած էր մեծ մասամբ այս մատնիչին ցուցմունքներովը։

Որով անհնար դարձած էր այլևս լուրջ ո՛րևէ ընդդիմություն։

Ադանայի ոստիկան զորքերու այս արյունկզակ հրամանատարը Ավնի՝ ապա հաջորդ տարի ամռանը տեղահան ընելով ջարդել տվավ Ամանոս լեռներու մեջ երկաթուղիի գծին վրա աշխատող ավելի քան 10.000 հայերը Պաղջե—Մարաշ լեռնային ճամփուն վրա։

Ահա այս կմախացած դժբախտ քաղաքին առջև էր, որ հասանք 1916-ի մարտի կեսին, և կառավարական շենքին առջև սպասեցինք ժամե մը ավելի, որպեսզի մեզի գիշերելու տեղ մը շնորհվի։ Փույթ չէ թե մեր գիշերային իջևանը ավերակներու ներքև թաղված նկուղ մը ըլլար կամ կենդանիներու ախոռ մը։

Շուրջ 9 ժամ քալելե հոգնած և ամբողջ օրը հացի չոր պատառե մը իսկ ամենքս զրկված, անհամբեր կը սպասեինք, որ վերջապես կարեկցելով մեր թշվառ վիճակին, գոնե մեկ գիշեր տաքուկ ապաստան մը տային մեզի։

Իզուր կը սպասեինք գթություն՝ հայության արյունածարավ թուրք մեր դահիճներեն։ Իզուր ոստիկան զինվորներ և կառավարական թուրք պաշտոնյաներ կու գային ու կ'երթային, և մենք կը կարծեինք, թե մեզի տեղ մը ճարելու համար կ'աշխատեին։

Հակառակ քաղաքը ավերակ ըլլալուն, շրջակա թուրք բաղ-

մաթիվ գյուղերու պատճառով, դեռ Հաճընի մեջ գայմագամ կը նստեր և կառավարական հին կազմը կը շարունակվեր։

Կազպելի ձյունապատ կիրճեն հյուսիսի սառնաշունչ քամի մը կ'ընդարմացներ մեր մարմնուն դուրս ցցված բոլոր մերկ մասերը։ Հայ պառավներ անհուն կարեկցությամբ կը սպասեին, որ մեզ իջևան մը առաջնորդեն, որպեսզի իրենց աղքատիկ սեղանեն մեկ քանի պատառ բաժին հանեն մահվան ճամփուն վրա հալումաշ եղած իրենց տարաբախտ ցեղակիցներուն։

Արդեն մթնշաղն սկսած էր, երբ գայմագամը՝ երիտասարդ իթթիհատական թուրք մը Քեմալ, շրջապատված տեղվույն ոստիկան զինվորներու հրամանատար հարյուրապետեն և 2 ոստիկաններե ու մեկ քանի քաղաքային պաշտոնյաներե, հանդիսական թափորով կառավարական շենքեն դուրս գալով հայտարարեց մեզի ամենքիս, թե քաղաքին մեջ հարյուր հոգի պարունակող հարմար վայր մը չգտնվելուն՝ պետք էր մեր ճամփան շարունակեինք...

Ա՛լ անկարելի է երևակայել մեր հուզումը, շվարած էինք, ի՛նչ կրնայինք ընել, ավելորդ էր կարեկցություն սպասել մարդագազաններե, բայց ոչ մեկիս վրա այլևս ուժ մնացած էր քալելու։ Որովհետև ամենքս ալ Կեսարիայեն ասդին այլևս հետիոտն էինք. սպառած էին մեր ուժերը և հալումաշ եղած էինք։ Իսկ նույն օրը անհարթ լեռնային ճամփաներով ինն ժամ քալած էինք՝ միայն Ջաթախի առջև մեկ ժամ հանգստի դադարով։ Բայց անզոր էինք ընդդիմություն ընելու, որովհետև մարդկային թափթփուկներ էինք, որ մեզ ծածկող մեծ և խոր վիսսե մը զատ ո՛րևէ ուրիշ բանի արժանի չէինք համարվեր...

Բայց հակառակ եղած պաշտոնական ազդարարության, չէինք ուզեր շարժիլ տեղերնես, և ոմանք համարձակեցան աղաչել, որ շնորհ «մերհամեթ» ընեն ի սեր իրենց սիրասուն զավակներուն գլխուն...

Եվ ահա հարյուրապետին և գայմագամին կարճ և գաղտնի մեկ խոսակցությենեն վերջ, ոստիկան զինվորներն մտրակներով և մեզի համար հատկապես պատրաստված ձեռքի հասա գավազաններով հարձակեցան մեր վրա և սկսան անխնա մեզ հարվածել։ Մեկ քանիներու գլխուն իջած հարվածներեն թըշվառներուն գլխու ցամքած երակներեն սկսավ արյուն հոսել կայլակ-կայլակ... 10—13 ոստիկան զինվորներ մեզ կը հա-



լածեին դեպի կամուրջը՝ ուրկե կ'անցներ Սիսի ճամփան, կառավարական մեծ ու փոքր պաշտոնյաներու լիրը «քահքահ»-ներուն մեջ։ Մինչ հեռուն կանգնող հայ մամիկներ իրենց ձեռքերն ծունկերուն զարնելով կու լային ու կ'ավաղեին, որ այս ի՛նչ սև օրերու հասանք...

Անգութ հարվածներու տեղատարափի մը ներքև և հայհոյություններու մեջ մեր քարավանը կամա ակամա սկսավ շարժիլ, և արագ քայլերով աճապարեցինք հեռանալ այս անհյուրասեր վայրերեն։ Պոռթկացող վրեժը մեր հոգիներուն մեջ ջանալով սանձահարել և անեծքը մեր շրթներուն վրա ջանալով սառեցնել։

Կը քալեինք ու կու լայինք, նավաբեկյալ ազգի մը թշվառ բեկորներն էինք, որ արյան փոթորիկներե տարվելով կ'երթայինք դեպի ավազի անապատները։ Ուր ավելի եղերական և եղեռնական վախճան մը կը սպասեր մեզ ամենքին՝ հազիվ 8—10 բախտավորներու հրաշալի բացառությամբ մը։

Մեր հոգիները ահավոր վշտով ու կսկիծով ա՛յնքան մաշած էին, որ աղոթել կ'ուզեինք ու չէինք կրնար, երբեմն երգել կը փորձեինք, ու մեր հոգվույն լարերը չէին թրթռար այլևս... Պղտոր ակե մի՞թե վճիտ ջուր կրնա հոսիլ, սգավոր սրտե մի՞թե երգ կրնա թռչիլ...

Վաղուց կտրված էինք ուրախության կազդուրիչ կաթեն, և կարոտ մնացած մխիթարության և սփոփանքի։

Մարդկային կյանքի երկու հակոտնյա ծայրերը միայն կը հիշեինք այլևս, օրորոցն ու գերեզմանը..., բայց միայն վերջինին վրա սևեռված էր մեր ամբողջ մտադրությունը...։

Սակայն մեր մեջ դեռ ունեինք գերագույն երգը մարդկային հոգվո՛ւյն ԱՐՅՈՒՆՔԸ..., որով հաճախ կը կազդուրեինք մեր մաշած հոգիները...

Գիշերվան խավարը տակավ կը ծանրանար լեռներու դալարազարդ կատարներեն մինչև զմրուխտ հատակը խոր ձորին, սև պատանքով մը ծածկելով հրեշությունները մարդկային անգութ չարչարանքներուն։ Միայն գիշերվան խոր լռության մեջ կը լսվեր շփոթ արձագանքը մեր գթոտ քայլերուն, և գահավեժ շառաչը արագասահ և հորձանուտ գետին, որուն գետափովը դեպի վար կ'երթար նաև մեր ճամփան։

Խավարին մեջ առ խարխափ կ'երթայինք իյնալով, ելլելով, գժգոհելով, անիծելով, երբ շուրջ մեկուկես ժամվան տա-

ռապագին ճամփորդութենեն մը վերջ՝ գետին հանդիպակաց ձախակողմը երևացին պլպլացող տուն լույսեր։ Մոտալուտ հանգստի մը հուսադրութենեն ոգևորված, մեր հնքոտ քայլերն ուղղեցինք մեզի ընկերացող ոստիկան զինվորներու հաճությամբ դեպի լույսերը՝ սարերու զառիթափին։

Անցանք գետի վրայի խարխուլ փայտյա կամուրջը և ուղղվեցանք դեպի լույսերը։ Բայց ո՛րքան մեծ եղավ մեր հուսախաբությունը, երբ հասնելով այս գյուղը, որուն անունն էր Կյոլեշեն, մեզ մերժեցին ընդունիլ, և հոճան արգիլելով մեզի նույնիսկ գյուղի սահմանեն ներս մտնել՝ ըսավ—գյուղին մեջ էրիկ մարդ չէ մնացած, ամենքն ալ պատերազմի տարված են։ Միայն էրիկ մարդ ըլլալով ես և մխթարը կը գտնվինք գյուղը. ուստի հարյուր էրիկ մարդոցմե կազմված այսքան մեծ քարավան մը չենք կրնար ընդունիլ մեր գյուղը, ուր միայն կին, աղջիկ ու երախա մնացած են և ստիպեցին որ հեռանանք։

Իզուր կը ջանայինք պարզև խոստանալով տարհամոզել, որ հոգնած ենք 11—12 ժամ ճամփա քալած ըլլալով նույն օրը, ալ անկարող ենք այս խոր գիշերվան մեջ կրկին մեր ճամփան շարունակելու։ Մյուս կողմե պատրաստակամություն կը հայտնեինք գյուղին մեջ առանց մտնելու՝ գյուղին հեռավոր ծայրը գտնված մեկ գոմի մը կամ փարախի մը մեջ նույնիսկ ծառի մը ներքև բացօթյա գիշերելու, բավ է, որ մեզի քիչ մը հաց ճարեն։

Սակայն կ'առարկեին դաժան կերպով, թե հարյուր հոգինոց քարավանին մը բավելու չափ հաց ալ չունեին, և հազիվ գյուղեն անցնող մեկ քանի հոգիի կրնային կտոր մը հաց ճարել։

Ավելորդ էր այլևս ժամավաճառ ըլլալ, որովհետև համոզվելու երևույթ չունեին, մինչ ասդին շատեր՝ մանավանդ ծերերը բոլորովին սպառած փռված էին գետինները և անկարող շարժելու, միայն կը հառաչեին, կարծես հոգեվարքի հոնդյուններ ըլլային։

Գիշերվան հետզհետե թանձրացող աղջամուղջին մեջ՝ հսկա լեռներու ու ձորերու մեջ ինկած կ'երթայինք առ խարխափ, ի խնդիր մեզի ապաստան ընծայող իշևանի մը, փույթ չէր, թե ավերակի մը կույտ ըլլար այն։

Շարունակելով մեր ճամփան առ հարկի, կրկին մեկ ժամ



քալելե վերջ, դարձյալ հեռվեն նշմարվեցան ընդ աղոտ լույսի մարած ցոլքեր։ Ճարահատ երկրորդ փորձ մը ևս ուզելով ընել, կրկին անցանք գետի ազազուն կամուրջի մը վրայով ահուդողով հանդիպակաց կողմը և հասանք Յարտիպի անունով բավական մեծ թուրք գյուղ մը։

Կորսնցունելու ժամանակ չկար, աճապարեցի գտնել տալ գյուղին «մխթարն» ու հոճան և սակարկության մտնելով՝ անմիջապես վճարեցինք հնչուն 3 օսմ. ոսկի և մեզի ցույց տվին գյուղին վարի ծայրը մեկ քանի ախոռներ...։ Միանգամայն պայման դրին, որ սննդեղենները (հաց, սոխ, մածուն ու «թարխանա») իրենց միջոցավ գնենք։ Կ'ուզեին այս եղանակով ևս մեզ կողոպտել՝ իրենց ուզած արժեքովը ծախելով ամեն ինչ։ Երկար մտածելու ժամանակ չկար, և ինչ առաջարկ ու պայման որ ընեին՝ արդեն առանց առարկության ընդունելու հարկին ներքև կը գտնվեինք. ուստի ինչ որ ըսին կրավորական համակերպությամբ ընդունեցինք։

Նույն օրը կարճ ընդհատումներով մոտ 12 ժամ քալած ըլլալով ա՛յնքան սպառած էինք, որ կենդանիներե թափուր այս ցույց տրված փոքր ախոռներուն մեջ փութացինք մեկ-մեկ անկյուն կծկտիլ չոր աղբյուսներուն վրա, իբր թե մեր տուներուն և մեր փափուկ անկողիններուն մեջ ըլլայինք... Հոս կրցանք բավական հաց ու այլևայլ գեղջկական սնունդի նյութեր ևս ճարել, և փոքր-ինչ լռեցնել մեր բողոքող և տանջվող ստամոքսները։

Կանխավ համաձայնած ըլլալով մեզի ընկերացող պահակ ոստիկան զինվորներուն հետ՝ զիրենք գոհացնող վարձատրությամբ մը, հաջորդ առավոտը բավական ուշ մեր քարավանը շարժման մեջ դրվեցավ դեպի առաջ։

Հաճընցի մեզի ընկերացող դաժան ոստիկաններու հետ բավական ընտելացած և կաշառքով հաջողած ըլլալով մեղմացնել իրենց չարակամությունը, սկսած էին ավելի բարյացակամությամբ վերաբերվիլ մեզի հանդեպ։

Երկրորդ օրը արևածագին հետ մեր քարավանը շարժեցավ առաջ։

Եղանակը գարնանային էր և օդը սքանչելի, դեռ կը գտնվեինք Տավրոսի լեռնաշղթային մեջ։ Հաճընեն Սիս ճամփան կ'երկարի երկարաձիգ և ոլորապտույտ ձորի մը մեջեն, որու երկու կողմի սարերն ծածկված են սև մայրի անտառ-

ներով։ Իսկ ձորի խորեն արագավազ գնացքով, շառաչով ու շռինդով կը հոսի Հաճընի գետը («Սառան սու»)։ Որ հետզհետե մերձակա լեռներե ու ձորերե բխող կողմնակի վտակներով առատացած, բավական զորավոր գետ մը կը դառնա, ապա ստանալով «Կեռք սու» անունը։ Ապա խառնվելով Ճիհան գետին, Ադանայի քովեն անցնելով Գարաթաշի առջև մեծ դելտայով մը կը թափի Միջերկրական ծով։

Ջանկըրիեն մեկնելե ի վեր առաջին անգամ ըլլալով՝ դեռ նոր ուշադիր կ'ըլլայինք Ջաթախեն սկսյալ մեզ շրջապատող բնության հրաշալի դալարազարդումին։ Որովհետև Կիլիկիո սահմանը ոտք դնելե վերջ էր միայն, որ տակավ կրցանք հեռացնել մեզմե մահվան սպառեցուցիչ մղձավանջը, որուն արյունոտ ճիրաններուն մեջ ահ ու սարսափով գալարվեցանք ավելի քան 5—6 շաբաթներ։

Ամեն կողմ մարմանդ ու կանաչություն, կետկիտված գարնայնի գույնզգույն ծաղիկներով, մեր շուրջը ստվերախիտ մայրի հին ծառեր հարյուրներով ու հազարներով։ Իսկ մայրի ծառերու գարնան մեջ արտաթորած խեժի խնկաբույր անուշահոտությունը, որ ա՛յնքան կը կենսանորոգե թոքախտավորները, կենդանություն կու տար մեզի՝ հոգիով ախտավորներուս և սրտով սգավորներուս...

Մինչդեռ մեկ քանի օրեր առաջ կը տարուբերեինք կյանքի ու մահու երկյուղներու մեջ և անտարբեր էինք դեպի բնությունն և դեպի ամեն բան, այժմ արդեն ի տես գարնանային գեղազվարճ գեղեցկություններու, կը ջանայինք տակավ հեռացնել մեզմե ուրվականն մահասարսուռ դաշտերու, արյունոտ ձորերու, կմախքներու ու գանգերու, և կը խորհեինք՝ թերևս կանխահաս հուսադրությամբ մը, արդեն փրկված ըլլալ և թևակոխած ըլլալ Կիլիկիո հայության նոր անդաստանը ծաղկալից։ Չէ՞ որ առանց մահվան հարություն չկա...

Հաճընեն մեր մեկնումին երկրորդ օրվան երեկոյին իջևանեցանք պատմական մեծ անցյալ ունեցող Վահկա բերդին ստորոտը՝ փոքր գյուղ մը, ուր կրցանք կերակրվիլ և ապաստան ստանալ։ Կը թվեր, թե այս գյուղին բնակիչներն դեռ հայու արյան հոտն ու համն առած թուրքեր չէին... և ազնիվ վերաբերում ցույց տվին հանդեպ մեր դժբախտ քարավանին։

Երրորդ օրը արևածագին հետ մեկնեցանք այս հյուրասեր գյուղեն։ Ճամփան կ'երկարեր միշտ անտառապատ սարերու



մեջեն գալարող ձորով և գետի ափով։ Հարություն առած բնությունը ա՛յնքան հրաշալի էր, որ կը թվեր, թե շուտով մոռցած էինք դեպի Ջոր կամ մահ երթալնիս։ Մանավանդ ճամփան հետզհետե վայրէջքը ըլլալով մեր ուժասպառ սրունքներուն համար նվազ հոգնությունն կը պատճառեին, և մեկ քանի օրե ի վեր բավական սնունդ կրցած ըլլալով ձեռք ձգել՝ բավական կազդուրված էինք և գիշերն ևս բավական հանգիստ քնած էինք բարեբախտաբար։

Հազիվ քիչ մը կազդուրված, մեր քարավանին ամենաեռանդուն և հայրենասեր երիտասարդներեն մեկ քանին դեպի հյուսիս, դեպի Հայաստան գաղթող գարնան ոհվիրա արագիլներն կռունկ կարծելով՝ սկսան առաջին անգամ ըլլալով թրթռուն ձայնով մը, որ ներքին հուզումնին կը մատներ՝ երգել.

— Կանչե՞ կռունկ, կանչե՞, քանի՞ գա՞րուն է,
Ղարիպներու սիրտը գո՞ւնդ գո՞ւնդ արուն է,
Կռո՞ւնկ չա՞ն, կռո՞ւնկ չա՞ն, գա՞րուն է,
Կռո՞ւնկ չա՞ն, կռո՞ւնկ չա՞ն, գա՞րուն է,
Ա՜խ սիրտս արուն է...

Խեղճ տղայքը իրենց մահվան կես ճամփուն վրա հայ գարունը երազելով... կը քալեին ու կ'երգեին, լացնելով մեզմե անոնք, որոնց արցունքը դեռ չէր ցամքած աչքերեն։

Ո՜հ հայրենաբաղձ բանաստեղծին այս աղեխարշ տողերը ո՞րքան կը հարմարեին մեր այդ վիճակին։ Բայց ավելի դառն էր ավա՜ղ մեր կացությունը, որովհետև միայն ղարիպներուս սիրտը արյուն չէր, այլ ամբողջ հայրենիքը արյունլվա էր և հանուր հայությունը կը լողար արյան ծովերու մեջ...

Մեզմե ամենն անոնք, որոնց մեջ դեռ կյանքի ու կենդանության նշույլը մնացած էր՝ կու լային, կը քալեին ու կը ձայնակցեին մեր կրտսերագույն ընկերներուն սրտեն բխած այս հուզիչ խոսքերուն՝ «Կռո՞ւնկ չա՞ն, կռո՞ւնկ չա՞ն, գա՞րուն է, ա՜խ սիրտս ա՞րուն է...»։

Հոն բարձրը, սև մայրի անտառներու խորը և սարի կուշտին տեսանք թուրք ածխագործներու մեկ քանի սև այծի մազե շինված վրաններ, որոնք ածուխ կը պատրաստեին։ Ա՜խ ո՞րքան մեզմե յուրաքանչյուրը փափագեցավ, որ ըլլար այդ թշվառ ածխագործ ընտանիքին մեկ անդամը։ Սիրահոժար

պատրաստակամություն ունենալով ածխագործ ըլլալու, բայց ազատ ապրելու այդ վայրի լեռներուն ու ձորերուն մեջ, մինչև որ հնչեր համաշխարհային հաշվեհարդարության երանավետ ժամը ու դոնե դեռ ողջ մնացողներս կարենայինք փրկվիլ։

Ո՜հ, ո՜րչափ երջանիկ պիտի ըլլայինք, եթե համեվրոպական պատերազմի համատարած արյան ահավոր փոթորիկներուն այս սարսափելի օրերուն, Իթթիհատի հրեշային հետապնդումներեն գաղտնի և մարդկային աչքերե հեռու, բնության այս խաղաղ առանձնության մեջ, զերծ ոստիկան զինվորներու դաժան ուղեկցութենեն ու անհանդուրժելի հսկողութենեն քաշվեինք ու անշուք ապրեինք, ա՜խ բավ էր, որ ազատ ապրեինք։

Բայց մենք ոչ միայն կը նախանձեինք այս ածխագործներու վիճակին, այլ երբեմն մացառներու ներքևեն ցատկելով խուճապով և խոլական վազքով սուրացող նապաստակներուն... և երկնքի թռչուններուն իսկ կը նախանձեինք, որոնք իրենց ուզած տեղը երթալու ազատություն ունեին։ Իսկ մենք ՄԻԱՅՆ դեպի հրակեզ անապատները անջրդի կ'երթայինք, ափ մը ավազ դառնալու համար մեկ քանի ամիսներ վերջ...

Մեզի ընկերացող կասկածամիտ և հարցասեր ոստիկան զինվորներուն հավատացնելով, որ շարականներ են տղոց երգածը, դարձյալ կ'ըսեին մեզի կշտամբանոք—ի՜նչ անհոգ ազգ եք, կը կոտորենք, կ'աքսորենք, և դարձյալ երգ կ'երգեք։— Իրենց բառով—Նե՞արսըզ միլլէթսինիզ, էօլտիրիյօրուզ, սիւրիյեօրուզ, տահա հալէն շարքը սէօյլէյօրսունուզ...

Այո՜, իրավուք ունեին, բայց եթե հինգ երկար դարեր տևող հալածանքներե ու ջարդերե վերջ դեռ պահած էր հայ ազգը իր գոյությունը, պատճառը այս կենսունակությունն էր, որ քանի՜ կոտորեին իրենց ատած ու շարշարած հիդրան, ա՜յնքան նոր գլուխներ կը ծներ...

Ոստիկան զինվորներու ենթասպան զարմանալով, որ ա՜յսքան հալումաշ եղած մարդոց սրտեն ու շրթներեն կրնա երգ բխել, կ'ըսեր ինծի կատակելով—Սիզին միլլէթ էօյլեարսըզ միլլեթ տիր քի, էյեր եարըն եիւզ էրմէնի գալսա, եինէ պաշըմազա պէլա օլուրսունուզ...

Արդարև որքան պատեհ խոսք էր՝ բխած 500 տարվան թուրք անջյալ և դառն փորձառություններեն...

Խորասուզվող արևու ոսկի սկավառակին անհայտացումեն առաջ, հասանք իսլամ բնակչությամբ փոքր գյուղ մը։



Հացակարոտ մեր ընկերներուն մեկ-մեկ չորաբեկ պատառ մը հաց ճարելե վերջ, գյուղին ամայացած մեկ երկու իրարու կից խրճիթներու մեջ տեղավորվեցանք ու ջանացինք լուսցնել գիշերը, կատարյալ պատերազմ մը մղելով ամեն կողմե մեր վրա խուժող ոջիլի բանակներու դեմ։

Գիշերվան հանկարծական ցուրտ քամին ընդարմացուցած էր մեր մարմնույն մաշած անդամներն, երբ առավոտյան սաստկացած ցուրտին հետ ճամփա ելավ մեր քարավանը։ Մեկ քանի ժամ ճամփա քալելե վերջ սկսավ տեղատարափ անձրև մը, իբր թե պայթած ըլլային երկնքի ջրի մեջ սահանքները։ Մինչդեռ վերեն հորդահոս կու գար, կամ ավելի ճիշտ է ըսել՝ մեր գլխուն կը թափեր անձրևը, վարը ցեխոտ ու լպրծուն գետնի հողը արգելք կ'ըլլար փոխելու մեր արգեն ուժասպառ քայլերը։ Մեր քարավանեն ամեն անոնք, որ չհատնող ճամփու երկարութենեն հոգնած ու ծուրած էին, կ'անճրկեին առաջ երթալու, աղաչելով ինծմե՝ որ հաճեցնեմ ո՛րևէ եղանակով մեզի հսկող ոստիկան զինվորները, և մոտակա հյուղակ մը ապաստանինք անմիջապես։

Իզուր կը ջանայի համոզել մեզի ընկերացող ոստիկ. զինվորներու «չավուշը», որ տեղ մը ապաստանինք, ապա թե ոչ հիվանդ պիտի ըլլայինք ամենքս ալ՝ կ'ըսեի, որովհետև հեղեղանման անձրևը անցած էր արդեն մեր մինչև ներքին հանդերձները։ Իսկ ոստիկ. զինվորներեն մեկը իբր պատասխան ծերունիի մը բողոքախառն աղաչանքներուն՝ կ'ըսեր. Ավելի լավ, եթե հիվանդանաք ու մեռնիք. արդեն պետությունն ալ ձեր ժամ առաջ մեջտեղեն վերնալը կ'ուզե, դուք ալ կ'ազատիք, պետությունն ալ կ'ազատի...

Անձրևին, ցեխին, հովին ու փոթորկին տակ ճարահատ քալելով կես ժամե ավելի՝ հասանք վերջապես կրկին փոքրիկ գյուղ մը, ուր մեզի հարմար սենյակներ գտանք 15—20-ական հոգիով պատսպարվելու համար մեջը։

Սակայն հակառակ մեր ամեն խոստումներուն, ոստիկան զինվորները «չավուշին» հետ անողորմաբար կը պնդին, որ ճամփանիս շարունակենք, հասնիլ կարենալու համար իրենց մտադրած գյուղը, ուր կ'ուզեին որ անպատճառ գիշերենք։

Ինչպես ոստկ. զինվորներեն մեկը անվերապահորեն հայտնած էր մեզմե մեկու մը, նույն օրը մեզմե ոմանք երգած

ըլլալուն համար պարզապես մեզ պատժել կ'ուզեին, փույթ չէր, թե իրենք ալ մեզի հետ պատժվեին...

Զուր ջանք ու անօգուտ պաղատանք, երկինք փայլակնացայտ որոտումներով անձրևի նոր հեղեղներ կը թափեր մեր արդեն ընկճված, հարվածված գլուխներուն, իբր թե հարյուր հազարավոր դույլերով ջուր կը թափեին մեր վրա. մինչ մեր զինվորները միշտ կը բռնադատեին մեզ որ ճամփա ելլենք։ Իսկ մեր քարավանին տաք գլուխ երիտասարդները կ'ուզեին ճամփա ելլել և մեր ճամփուն վրա ամայի ու հարմարագույն ձորի մը մեջ հարձակելով ոստիկան զինվորներու վրա՝ առնել զենքերը, սպանել զիրենք և փախուստ տալ դեպի հանդիպակաց լեռները, որոնք ամեն կողմե մեզ կը շրջապատեին։ Որովհետև դառնության բաժակը թվեր թե լեցված էր։

Ըլլալով հանդերձ ամենեն պատասխանատուն, այս պատճառով նաև ամենահամբերատարը, կշռելով աղետաբեր հետևվանքները այսպիսի վճռական և հանդուգն քայլի մը, կարելին կ'ընեի առջևը առնելու համար ծայրահեղություններու, որոնք հույժ հավանաբար փրկության համար մինչև ցայժմ տարած ջանքերն ոչնչացնելով՝ մեր կորուստն պիտի փութացնեին անպայման։

Բայց դեռ կ'ուզեինք ապրիլ... և կը հուսայինք դեռ փրկվիլ, անակնկալ պատեհություններե օգտվելով...

Վերջապես իրար համոզելով և քաջալերելով ճամփա ելանք, բայց բարեբախտաբար անձրևը բավական իր սաստկությունը կորսնցուցած էր, բայց մենք դարձյալ մաղմաղ անձրևին ու ցեխին մեջ մեկ ժամվան ճամփան երեք ժամեն հազիվ առնելով հասանք թուրք գյուղ մը, ուր որոշված էր գիշերել։

Այս գյուղը հասնելե վերջ միայն տեղեկացանք, թե մեր երգողներուն պատճառով միայն չէ եղեր որ այս պատժին ենթարկված էինք, այլ «չավուշը» սիրուհի մը ունի եղեր՝ պատերազմի դաշտը գտնվող զինվորի մը նորահաս կինը, որուն պատճառով մեզի բռնադատած էր այս դառնացուցիչ ողևորությունը։

Բարեբախտաբար տասնապատիկ գներով առատ փայտ գտնելով բոցավառ խարույկներ վառեցինք, և խումբ-խումբ բոլորվելով կրակին շուրջ՝ ամեն բանե առաջ մեր արտաքին և ներքին զգեստները սկսանք չորցնել։

Արդարև դառն է և ամոթ խոստովանիլ, բայց հանուն ճշմարտության պատկերացնելու համար հավատարմորեն տառապանքի մեր այս արյունի իրական պատմությունը իր բոլոր փուլերուն մեջ, պետք է հիշել հոս, թե մեր ներքին և արտաքին հանդիպումներեն կրակին վրա թափված հազարավոր ոչիներու ճարճատյունը, պայթող վառոդի տպավորություն կը թողուր մեր վրա...

Վաղուց ընտանեացած էինք մեր արդեն հալ ու մաշ եղած մարմինը կրծող և սպառած արյունը ծծող այս փոքրիկ մակաբույծներուն առթած չարչարանքներուն։ Որովհետև մեր բոլոր ուշադրությունը լարած ըլլալով մեր կյանքին շարունակ սպառնացող մահաբույր վտանգներուն դեմ, շատ չէինք զբաղեր այս կարգի «աննշան» տնհանգստություններով։ Մահվան մեր ճամփուն վրա ո՞վ սիրտ ու միտք ուներ զբաղելու ոջիլով կամ անոթության ու ծարավի հարցերով, բավ էր մեզ չսպանեին՝ ասկե զատ ամեն բանի համակերպած էինք։ Բայց հարկ է խոստովանիլ նաև, որ եթե չհամակերպեինք իսկ՝ ի՞նչ կու գար ձեռքերնուս, հարդի շյուղեր էինք արյան ահավոր հեղեղը ինկած, պիտի երթայինք կամա-ակամա ո՛ւր որ մեզ հեղեղը տաներ... եթե նույնիսկ մինչև գերեզման։

Հաջորդ առտուն մեկնեցանք այս փոքրիկ գյուղեն բալկական ուշ, որովհետև «չավուշը» գինարբուքով և խնեղությամբ անցուցած ըլլալով ամբողջ գիշերը, հանձնարարած էր իր ստորադաս տասնապետին, որ քարավանը ուշ ճամփա հանեն...

Բարեբախտաբար օդը երեկի անձրևներե հագեցած՝ պայծառ երկինք մը կար և Կիլիկիո հարավի հզոր արևը կը ջեռուցաներ մեր տաքության կարոտ մարմինները։

Հաճրնեն մեր մեկնումի չորրորդ օրն էր, ու որոշված էր անպատճառ հասնիլ վերջապես Սիս, որ 7 ժամվան ճամփա մ'ըսել էր։

Երբ դուրս պիտի գայինք Հաճրնի բնության ամեն հրաշալիքներով զարդարված գեղեցիկ ձորեն, հանդիպեցանք մեկ քանի ուղտապաններու, որոնք 4 ուղտերով Կիլիկիայեն նարինջ կը փոխադրեին ներքին գավառները՝ դեպի Կեսարիա։

Առաջին անգամ էր, որ մեր տարագրության ամբողջ ճամփուն վրա կը հանդիպեինք ճամփորդներու կամ շարժուն էակներու, մարդ ըլլա թե կենդանի։

Փոքր Ասիո ամբողջ ճամփաներն ամայի էին, ոչ ոք կ'անց-

ներ, և ո՞վ պիտի անցներ. զի այր մարդիկ պատերազմի ճակատ ղրկված էին բռնի, իսկ մնացած կիներն ու անչափահասները իրենց գյուղերը քաշված՝ եղածով կը գոհանային. հակառակ գարնան եղանակ ըլլալուն, ոչ մեկ դաշտային աշխատանքի հանդիպած էինք մեր ամբողջ ճամփուն վրա։

Որովհետև իթթիհատական արյունոտ վարչությունը՝ բռնի ճակատ տարած այր մարդոց հետ՝ նաև իբր «թէքէլիֆը հարպիյէ», այսինքն իբր պատերազմական տուրք՝ բռնագրաված էր իր ձեռքը անցած ամեն կենդանի, ուղտ, ձի, եզ, կով և նույնիսկ էշերը հավաքած էր ռազմաճակատի մեջ սպանված ձիերու տեղ, փոխադրություններ կատարելու համար.

Միայն հազվադեպորեն մեկ քանի թուրք գյուղերու հանդիպեցանք Թոմարզայի դաշտին մեջ, որ գյուղին կից մեկ քանի արտերու մեջ վարուցան կ'ընեին՝ էշ ու եզ միասին լծված արորով։

Ամբողջ դաշտեր ամայի ու թափուր էին շնչավոր ամեն էակե, արտերը մնացած առանց վարուցանի, իսկ վայրի խոտերը եկած էին տեղը բռնել ազնիվ հացալից բույսերուն։

Միայն եռ ու զեռ ու կենդանություն կար մեծ քաղաքներու շուրջը մինչև մեկ քանի ժամ հեռու գյուղական շրջանակներու հետ։ Մինչ Փոքր Ասիո խորը, ներքին գավառներուն մեջ՝ ի մասնավորի մեր անցած վայրերուն մեջ կյանքը կանգնած էր և ամեն ոք պատերազմի շուտափույթ վախճանին կը սպասեր անձկանոք։

Վերջապես դուրս եկանք Հաճրենեն Սիս երկարող և Տավրոսի հյուսիսի ամենագեղեցիկ կիրճերեն մեկը եղող Հաճրենի ձորեն, և հասանք սարավանդակ մը, ուրկե մեր աչքերուն առջև կը պարզվեին Կիլիկիո հուռթի դաշտերը (Զուքուր Օվան) իր ամբողջ լայնքովը ու երկայնքովը, Մերսինեն սկսած մինչև Ամանոսի լեռներու ստորոտը, մինչև Օսմանիյե։

Այս սարավանդակը ծածկված էր Սիսի հայ մեծատուններու այգեստաններով։ Որովհետև դաշտեն մոտ 2—300 մետր բարձր ըլլալով օդասուն էր և լեռնային հողմերու ենթակա։ Տեսանք գեղեցիկ այգիներ՝ որմերով շրջապատված և օդափոխության հարմար գեղեցկաշեն և ներկված տուներով զարդարված։ Վարը մեր ոտքերուն ներքև դաշտին մեջ սեպաձև և միայնակ լեռան մը ստորոտը կը տեսնեինք Ռուբենյանց հռչակավոր մայրաքաղաքը Սիս։ Մեր անցած բոլոր



քաղաքներուն մեջ ամենագեղեցիկը գտանք Սիս, իբր թե նորակառուցված քաղաք մը ըլլար. բոլոր տունները կրով ծեփված ըլլալով ճերմակ քաղաք մըն էր. եթե փողոցներովը աղտոտ էր, գոնե արտաքին ընդհանուր տպավորությամբ մաքուր էր։

Քաղաքը «ամֆիթեատրոնի» մը ձևը առած էր, որովհետև տունները հետզհետե բարձրացած էին լեռան կողն ի վեր։ Իսկ Սիսը հյուսիս-արևմուտքեն պարսպող լեռան գահավանդին՝ քաղաքեն շուրջ 60—70 մետր բարձր կը տեսնեինք Կիլիկիո կաթողիկոսության բազմադարյան մայրավանքը՝ պարսպապատ և հետզհետե բարձրացող աստիճանավորումով։ Հայրապետական պատմական եկեղեցին կանգուն էր և լուռ, բայց իր լռությամբ իսկ շատ բան կը պատմեր մեզի՝ մեր խոցոտված սրտերուն միայն հասկնալի լեզվով մը։

Իսկ ամենքեն վեր լեռան կատարը դեռ կանգուն էին Ռուբենյանց հայ թագավորներու կառուցած ավերակ բերդին պարիսպներն ու սանդրագլուխ աշտարակներն, որոնք իրենց մերկությամբն իսկ դարերու ահավոր պատմությունը ունեին։

Երկուքեն մինչև չորս մետր հաստությամբ հսկա այս պարիսպներն և բազմաթիվ աշտարակներն 5—8 մետր բարձրությամբ կը շրջապատեին ամբողջ լեռան կատարը։ Իսկ լեռը 250—300 մետր բարձրությամբ մը Տավրոսի լեռնաշղթայեն բոլորովին անջատված և մեկուսացած բաց դաշտին մեջ մինակը ցցված ապառաժուտ և լերկ բարձրություն մըն էր, որ բնութենեն օժտված իր դիրքովը կ'իշխեր քաղաքին վրա։

Մենք նստած դեպի դաշտը իջնող բարձրավանդակին վրա կը դիտեինք մեր շուրջ բոլորը խուզարկու աչքերով, վայելելու համար բնության հրաշալի գեղեցկությունը Կիլիկիո այս ընդհանուր համայնապատկերին։ Հեռուն, շատ հեռուն, ուր ոչ մեկ լեռ կ'երևեր, հոն՝ ուր երկինքն ու երկիրը իրարու խառնված էին, ա՜խ հոն էր ազատարար ծովը... բայց միայն թե հասնիլ կարենայինք...

Ամենքս ալ ցույց կու տայինք իրարու այն ուղղությունը, ուր ծովն էր և մեր հոգին կը գալարվեր նույն վայրկյանին միայն ծագում առած փախուստի և փրկության մտածումներով։

Ամիսեն ավելի էր, որ ճամփա կը քալեինք և ճակատագրի հավատացողներու կրավորական համակերպությամբ մը, ոչ մեկ անգամ խորհած էինք մեր փախուստին վրա։ Մեր

մեկ անգամ մեզմե մեկը հանդգնությունը ունեցած էր փախուստ տալով ազատելու, և շարաշար սպանված։ Այս եղերական փորձեն վերջ, ոչ ոք մեզմե համարձակած էր այլևս ազատության կամ փախուստի վրա խորհիլ։ Այո՛, մեզ կը տանեին դեպ Տեր էլ Զոր, և կ'ուզեինք հասնիլ հոն՝ հայության ավազե նոր հայրենիքը։ Մեզմե շատեր կը հուսային հոն նոր կյանք մը սկսիլ մինչև որ համաշխարհային արյան փոթորիկը վերջ գտներ։ Թշվառները կը կարծեին, թե հոն գիրենք ողջ ձգող պիտի ըլլա... դեռ թուրքեն գութ ու արդարություն կը սպասեին...

Բայց երբ մեր աչքերուն առջև պարզված տեսանք Կիլիկիո հրաշալի համայնապատկերը և հացահատիկով ու բամբակով հռչակավոր ծովի մակերեսի նման հարթ հավասար ընդարձակածավալ արգասաբեր դաշտերը, մեր մաշած հոգիները և մեր մարած հույսերը նոր հարություն առին։ Մանավանդ որ մեր դիմացը Կիլիկիո ծոցն էր (Ալեքսանտրեթի ծովը) կամ Միջերկրական ծովը, իսկ քիչ մը արևմուտք Միջերկրական ծովի արևելյան թագուհին՝ Կիպրոսը։ Ա՜խ ո՜րչափ բաղձալի էր թե առնել ու հոն թռչիլ և մեր հեռավոր ղարիպ եղբայրներուն տանիլ գուժկանը հայ անհավատալի ողբերգության ու եղեռնապատումին, և տանիլ բոթը հայրենիքի համատարած մխացող ավերակներուն...

Շուրջ մեկ ժամ հանգիստե վերջ, սկսանք դանդաղաքայլ իջնել քարքարուտ ոլոր-մոլոր ճամփաներով զառիթափը և վերջապես ոտք դրինք Կիլիկիո պատմական հողին վրա։ Մեզմե շատեր, որոնք թնպետ հայ ու մաշ եղած էին, սակայն դեռ հայրենասիրության իրենց անշեջ կանթեղին մեջ դեռ կը պ՚պլար առկայծյալ պատրույգն հայրենիքի ազատության, շքեցան ու արտասուքով համբուրեցին Կիլիկիո հայրենի հողը, ուր անցյալ հայության փառքի հիշատակներն մեզ արդեն էր շրջապատեին ամեն կողմե։ Թեպետ սպառած, մեզմե շատեր արդեն կմախացած, և ամենքս ալ ցնցոտիներու մեջ էինք, թնպետ կորսնցուցած էինք ամեն բան, բայց մեր հոգվույն ներքին խոր ծալքերուն մեջ դեռ կը պլպըլար վերջին հույսը ազատագրված Հայաստանի մը մոտալուտ անկախության։ Փույթ չէր, թե հայ ժողովրդի կեսին արյան զոհաբերությամբ ըլլար. ա՜խ բավ էր որ ըլլար։ Մեր վաղվան սերունդները ազատեին մի անգամ ընդմիշտ բռնակալություններու ար-



յունոտ և ցեղը անճիտող սարսափներեն, և ազատելով օտար երկինքներե ու երկիրներե, այլևս հայը ա՜խ իր սեփական տան մեջ, ծներ, ապրեր ու մեռներ...

Մեր ձախակողմը թողուցինք Սիսի հայերու պատկանող այգիներու ընդարձակ և խառնաշփոթ շարքերն, որոնք երփներանգ ծաղկազարդումով մեզի գարունը կը հիշեցնեին։ Ապա գարձանք դեպի արևմուտք և շուրջ մեկ ժամվան գնացքե մը հետո վերջապես ժամանեցինք Սիս։ Տեղացի ոստիկաններն մեզ առաջնորդեցին քաղաքին մեկ ծայրը երկհարկանի և բավական մաքուր իջևան մը «խան», որ տարագրված հայու մը սեփականություն էր եղա՜ծ, իսկ այժմ տեղական կառավարությունը իր պետքերուն կը գործածեր։

## 29.

## ՍԻՍ — ԿԱՐՍՊԱԶԱՐ
## ՄԵԿ ՕՐ ԱՎԵԼԻ ՀԱՆԳԻՍՏ

Մահվան անմիջական երկյուղե բոլորովին ապահով խաղաղ գիշեր մը անցուցինք, և առավոտուն մեր ամենքին միակ փափագն էր՝ կարելին ի գործ դնել մեկ քանի օր ավելի մնալու համար Սիս։ Որովհետև ավելի քան 35 օրե ի վեր անդադրում ճամփա կը քալեինք, ոչ մեկ տեղ մեզի թույլատրելով մնալ մեկ գիշերե ավելի։ Զանկըրիեն մեկնելե վերջ միայն երկու քաղաք տեսած էինք, առաջինը Զորում, ուր ինչպես պատմեցինք մեզ արգելափակելով ա՜յնքան զրկանքներու ենթարկեցին, որ մենք փնտրեցինք գյուղական մեր ախոռները, որ հաճախ մեր իջևաններն ու պալատներն էին եղած, իսկ հաջորդ օրը ճամփա հանած էին մեզ հապճեպով։ Երկրորդն էր Հաճընը, ուր և ոչ իսկ մեկ գիշեր մեզի ուզեցին իջևան տալ և մեզ փայտերով լեռները վանեցին։

Այս երրորդ անգամն էր, որ քաղաք մը տեսնելու բախտն կ'ունենայինք, և հարկ էր նույնիսկ անկարելին ընել մեկ քանի օր ավելի կարենալ մնալու համար։ Որովհետև աղտոտությունե և ոջիլներե և շարունակական քերվրտուքե մեր մարմինները քոսոտիլ սկսած էին, և մեզմե շատերուն մարմինները ծածկված էին եղունգի վերքերով... Մենք մեր ֆիզիկական

վիճակին այն ատեն միայն անդրադարձանք և ուշադիր եղանք, երբ Կիլիկիո շրջանը մտնելով ջեռուցիչ արև գտանք և մահվան անմիջական և շարունակական մղձավանջեն ևս թեթևցած՝ կեսօրվան հանգիստներու ժամանակ և արևուն հարավային հզոր ճառագայթներուն տակ մերկանալով սկսանք մաքրվիլ մեր աներես աղտոտ և արյունածարավ մակաբույծներեն։ Արդ ամենքս ալ և հացեն ալ առաջ բաղնիքի կարոտը կը քաշեինք. ա՜խ ո՛ւր էր թե մեկ մը մաքրվեինք և ազատեինք այս քերվըտուքներեն և ասոնցմե առաջ եկած արյունոտ վերքերեն...

Մյուս կողմե ամիսեն ավելի ճամփորդության մեջ ըլլալով, ամենքուս ալ դեմքերը անճանաչելի ըլլալու աստիճան մազերու մեջ ծածկված էին։ Մեզմե ոչ ոք աքսորի այս սաստանակիր ճամփու ընթացքին առիթ և դյուրություն ունեցած էր գլխու մազերը կտրել տալու կամ ածիլվելու։ Ամենքս ալ մորուսավորներ էինք, և մեր դեմքերը թաղված էին մազի երկայն և հոծ թավուտներու մեջ։ Մեր արտահայտություններն իսկ այլակերպ, կիսավայրենի և վայրագ դարձած էին..., դժվար էր մեզ զանազանել գռեհիկ գյուղացիներեն։ Միայն մեր եվրոպական հագուստներու մնացորդ և ծվեն-ծվեն եղած թափթփուկներն էր, որ ենթադրել կու տար, թե երբեմն մարդակերպ բաներ մը... կրնային եղած ըլլալ...

Բայց աստի՝ ամենքս ալ պետք ունեինք կոշիկի պաշտոնը կատարող ո՛րևէ բանի, ըլլար տեղական մուճակներ կամ տրեխներ։ Որովհետև բոլորիս կոշիկները մաշած և անճանաչելի վիճակի մը հասած էին։ Կային մեր մեջ շատեր, որ «չուքի» կտորներով կապկրպած էին իրենց արունլվա ոտքերը, իսկ ոմանք ևս արդեն զրկված այդ քուրչի կտորներեն բոլորովին բոկոտն կը քալեին։ Մեր աքսորի քարավանին թշվառագույն ընկերներն էին երկրորդաբար մեզի ընկերակցող յոզկատցիները, որոնք մեր ավելի քան հարյուր հոգինոց քարավանին կեսը կը կազմեին։

Պետք է հանուն ճշմարտության հոս խոստովանիլ, թե առաջին անգամ էր, որ հոս Սիսի մեջ անվերապահ կարեկցություն կը տեսնեինք թուրք պաշտոնյաներեն։ Ասոնք նույնիսկ կը հրավիրեին շրջուն հացավաճառները և նպարեղեն ծախողները, որպեսզի առանց երկյուղի մեզի մոտենան և մեզ կերակրեն։ Միանգամայն ոստիկանական պաշտոնյաներ կը սպառնային վաճառողներուն, որ եթե անխղճությամբ ավելի գին պահանջեն, պիտի իրենց ձեռքի ունեցածը բռնագրավելով ձրի աքսորականներուս բաժնեն։ Իշևանը ևս մաքուր և բավական նորաշեն սենյակներով ու ապակեպատ պատուհաններով պատրաստված շենք մըն էր, այնպես որ բավական հանգիստ գիշեր մը անցուցած էինք բացառաբար։ Թուրք պաշտոնյաներու և ոստիկաններու այս բարյացակամությունը ավելի հուսալից կը դարձներ Սիս մեկ քանի օր ավելի մնալու մեր ընդհանուր բաղձանքը հաջողապես իրականացնելու։

Այս բարյացակամությունեն օգտվելով թույլտվություն ստացանք նախքան մեր մեկնումը՝ դեղարան ղրկել 2 հոգի և մեր հիվանդներուն համար դեղ բերել տալ։ Արդեն մեր մեջ Պոլսո Գումգաբվեն և Կետիկ-փաշայեն ծանոթ և կարող երեք դեղագործներ ունեինք, որոնք միանգամայն մեր բժիշկներեն էին եղած մեր ճամփու ամբողջ ընթացքին։

Ամենքը կը ստիպեին և կը թախանձեին, որ երթամ և գրատնեմ «Մյութասարիֆ»-ը և արտոնություն ստանամ մեկ քանի օրվան հանգստի համար։

Վաղուց կորսնցուցած էի անձնավստահությունս։ Անցած էին այն երանելի օրերն, երբ դեսպաններու կ'երթայի հանուն ազգ. Պատրիարքարանի և գավառի մեջ կուսակալներու և հավասարե հավասար կը խոսեի։ Նույնիսկ քանիցս սուլթան Ռեշատի ներկայացած էի օրվան Պատրիարքներուն հետ, ինչպես նաև հոգելույս Իզմիրլյան վեհափ. հայրապետի հետ 1909-ին հուլիսին՝ ուղեկցելով իր շքախմբի անդամ իր պատմական ճամփորդության, Պետերբուրգի մեջ ներկայացած էի Մեծին Ռուսիո ամենազոր Ցարին Նիքոլա Բ.-ի, և մասնակցած պալատական հացկերույթին։

Այո՛, անցած էին անդառնալիորեն երազի նման մեր հիշողութենեն սահող փառքի ու պատվի այդ օրերն և այժմ եկած էին ցավի սարսափելի և տաժանքի սև օրեր, երբ բռնադատյալ կը քամեինք ու պիտի քամենիք դեռ դառնության բաժակը մինչև հատակը... ըսելով Հիսուսի հետ.— եթե հնար է անցնի թող այս բաժակը մեզմեն, բայց թող քու կամքդ օրհնյալ ըլլա...

Մտածելու ժամանակ չկար, որովհետև լուր բերած էին, որ 2 ժամեն պետք է պատրաստվինք մեկնելու... ուրեմն մեզի հանդեպ կրկին բարյացակամություն ցույց կու տային 2 ժամ պատրաստության ատեն տալով մեզի։ Մեր տարաբախտ ըն-

կերներու կողմե եղած թախանձագին ստիպումներուն վրա ճարահատ՝ հավաքեցի իմ ցրված բարոյական դեռ մնացորդ ուժերս, և մեր իջևանի դռան առջև պահակ սպասող ոստիկան զինվորին գոհացնող պարգև մը «պախշիշ», ինչպես նաև մաշած զգեստներուս ևս փոքր ի շատե հնարավոր վերջին հարդարանք մը տալե վերջ մեկնեցա մեր իջևանեն՝ գտնելու համար կառավարիչը (Մյութասարիֆը)։

Ճամփան մեկ քանի ծեր Թուրքեր, ամենայնի հոժարությամբ հարցերուս պատասխանելով ըսին, որ Մյութասարիֆեն ուղղակի տունը երթամ, քանի որ օրվան դեռ այս առաջին ժամերուն կառավարիչը տունեն մեկնած չէր կրնար ըլլալ։

Ոլորապտույտ և աղտոտ փողոցներով բարձրացա բավական վեր, և փողոցի Թուրք տղայք առանց ո՛րևէ անարգանք կամ լուտանք ընելու, ցույց տվին ինծի Մյութասարիֆին տունը, որ արտակարգ ոչինչ ուներ, արդարացնելու համար քաղաքին ու Գոզանի շրջանի կառավարչին բնակարանն ըլլալուն։

Տունեն ոստիկան զինվոր մը պատասխանեց ինծի, թե կառավարիչը ըստ իր սովորության, գեղեցիկ և արևոտ օր մը ըլլալուն՝ դաշտը պտույտի ելած է. սա ուղղությամբ գնա և կը գտնես ըսավ։

Անապարեցի ցույց տված ուղղությամբ երթալ և արդարև քաղաքեն դուրս հանդիպեցա հիսունամյա աղեբեկ մորուքով Թուրք Մյութասարիֆին, որուն ետևեն եկող ոստիկան զինվորեն կռահեցի, որ կառավարիչն էր։

Մյութասարիֆը հանկարծ իր առջև տեսնելով կրոնական տարազով եկեղեցական մը՝ կեցավ և հարցուց, թե ի՞նչ կ՚ուզեմ։ Պատմեցի ողոքիչ շեշտով մը և կարի հուզված, թե ամիսուկես է ճամփա կը քալենք, հարյուր հոգինոց քարավանով մը Սիս հասած ենք, հալումաշ եղած ենք, հիվանդներ ունինք դարմանի կարոտ, անհրաժեշտ գնումներ ունինք ընելիք, որովհետև մեր հանդիպած տեղերը մեկ գիշերեն ավելի մեզ վար դնող չէ եղած, ոչ սնունդ ունինք, ոչ ճերմակեղեն փոխած ենք կամ ունինք բան մը փոխելիք, թշվառ և հալածական մարդիկ ենք և Տեր Զոր կը տարվինք... ու թախանձագին աղաչեցի հանուն իր զավակներուն, որ մեզի գթալով թույլատրե գոնե երեք օր մնալու քաղաքը և քիչ մը կազդուրվելու, մաքրվելու և հագվելու համար...

Կարեկցությամբ մտիկ ըրավ ըսածներս և պատասխանեց. Փափազ էֆենտի, շատ խիստ հրամաններ կա, որ աքսորական հայերու քարավանները մեկ գիշերե ավելի վար չդնենք. սակայն քանի որ զավակներուս անունովը կ՚աղաչես քու դժբախտ ժողովուրդիդ համար, որ «մէրհամէթ» ընեմ, շատ լավ, բացառաբար մեկ օր ձեզի ավելի մնալու հրաման կու տամ, գնացեք և նայեցեք, որ ձեր պետքերը շուտով հոգաք. կը ցավիմ, որ ասկե ավելի բան մը չեմ կրնար ընել։ Ես հիմա արդեն կառավարություն կ՚երթամ, ոստիկանական քոմիսերը և ոստիկան զինվորներու հրամանատարը կը կանչեմ և կը հանձնարարեմ, որ ձեզ այսօր ճամփա չհանեն, այլ վաղը կեսօրեն վերջ միայն, որով 30—35 ժամ ժամանակ ունիք. հայտե գնա անհոգ եղիր, ես կը կարգադրեմ մնացածը...

Անկարելի է ինծի պատմել այն ուրախությունը, որով սգավոր սիրտս հանկարծ ոգևորվեցավ. առաջին անգամ էր, որ այսքան ազնիվ խոսքերով մեր ճամփորդության ընթացքին կ՚արժանանայինք գթության, և մարդ մը ըլլալս հիշեցի...

Երախտագիտական թրքական ձևակերպություններե վերջ՝ փութացի այս ավետիսը տալու տառապանքի ընկերներուս, որոնք անձկանոք ինծի կը սպասեին ահ ու դողով...

Անկարելի է հոս իսկությամբ պատկերացնել ուրախությունն տառապած հոգիներու, որոնք իրարու կը վազեին ավետիսը տալու, իբր թե մեր վերջնական փրկության ավետիսն ըլլար...

Ա՛լ ավելի մեծ եղավ իրենց ցնծությունն, երբ հայտնեցի նաև, որ անձնական պատասխանատվություն ստանձնելով թույլտվություն ձեռք բերած էի մեր ամենքին համար, ազատ որեն քաղաքին մեջ շրջելու և գնումներ ընելու կամ բաղնիք երթալու, պայմանով, որ փախուստ տվող չըլլա և զիս պատժի ենթարկել չտան...

Կասկածելի մեկ քանի երիտասարդներ, որոնք միշտ փախուստի ծրագիրներ մշակողներ եղած էին ճամփու ամբողջ ընթացքին, վստահելի և ազդեցիկ անձերու պահպանության հանձնելով՝ ամենքն ալ ցրվեցան քաղաքին մեջ գնումներ ընելու, դեղեր առնելու, և սափրիչ բերել տալով սկսան մազերու խուրձերե ազատիլ և ածիլվիլ։ Ա՛յնքան թավ մազերով իրար տեսած էինք, որ հին վիճակին դարձը մեզմե շատերը անճանաչելի ըրած էր. որովհետև մաքրված և մարդու նմանիլ սկսած

էինք... ազատելով բոնաբույս մորուքներե։ Ոմանք և դյուրություններ գտած էին ճերմակեղեն լվալու և սկսած էին գործի։

Իսկ ես քաղաքին միակ հայ դեղարանը գնացած էի՝ մեր դեղագործ պոլսեցի աքսորակից բարեկամին հետ հիվանդներու համար դեղեր գնելու, երբ աճապարանոք լուր եկավ, որ փութամ դառնալ մեր իշխանը՝ դարման տանելու համար անակնկալորեն առաջ եկած դժվարության մը։

Երբ դարձա իշխանը, զարմանքով տեսա, որ մեզմե շատեր իրենց փոքր թե մեծ կապոցները կամ ծրարները շալկած դռան առջև շարված էին մեկնումի համար... Մինչ ոստիկանական քոմիսերը 8—10 ոստիկաններով և ոստիկ. զինվորներով վերի հարկը ելած մեկնումի դժկամակողները մտրակով վար կը քշեր։ Առաջին դժգոհությունը զայրույթի փոխված էր, որովհետև մեկ օրվան ավելի հանգստի հանդիսական ու պաշտոնական խոստումներե վերջ՝ ա՛յսքան շուտ և դառն հուսախաբություն արդարև անհանդուրժելի էր...

Մեր ամենքին ուրախությունը հազիվ կես ժամ տևած էր և մեր ցնծությունը շուտով սուգի փոխված։

Այս այն կաթիլն էր կարծես, որ բաժակը հորդել կու տա։ Այլևս երկար մտածելու ժամանակ չկար, պետք էր ամեն գնով ընդդիմանալ և չթույլատրել, որ մեր տառապանքի տարիներուն և ամիսներուն մեջ մեկ հանգստի օրը շատ տեսնվեր և կապտվեր մեզմե։

Այս ընդհանուր իրարանցումին մեջ, երբ ոստիկաններեն ու ոստիկ. զինվորներեն ոմանք խուցերեն բռնի դուրս կը քաշեին չելլել ուզողները, ուրիշ ոստիկաններ անդուդներեն վար կը գլտորեին խեղճերը. մեզմե ոմանք կը դանակոծվեին, ոմանք ևս կ'ապտակվեին. արդարև խոհեմության դասեր տալը ավելորդ էր։ Մանավանդ որ մահվամբ պատժվելու հավանականությունն հիմա այլևս անդեպ էր, ուստի վայրկյանին առթող հոգիի անբացատրելի ընդվզումով մը փութացի ոստիկանապետին մոտ, և առանց քաղաքավարական ո՛րևէ ձևակերպության՝ պոռացի երեսին, որ հրաման ստացած եմ կառավարիչեն ես անձամբ՝ մեկ օրվան ավելի հանգիստի համար. ուստի կը մերժենք մեկնիլ և լավ է հոս մեռնիլ, քան աչքե հեռու անկյուններու մեջ...։ Մյուս կողմե ակնարկով կը հանձնարարեի, որ մեծ դուռնեն դուրս չելլեն և իրենց խուցերը մտնելով կեցած տեղերնեն գամվին մնան... Միանգամայն



հրավիրեցի քոմիսերը, որ եթե ըսածիս չի հավատար՝ հետս գա Մյութասարիֆին մոտ ստուգելու ըսածներս։

Ոստիկանական քոմիսերը տեսնելով, որ գործը ծայրահեղության պիտի երթա՝ և ինք իրավունք չունի մեզ բռնի քաղաքեն ճամփա հանելու, ուզեց անույշ տեղը կապել և մոտս գալով փափկությամբ հորդորեց, որ միայն իր պաշտոնատունը երթամ և գործը բարեկամաբար կարգադրեմ անձնապես իրեն հետ...

Իսկ այս ամեն խոստումները անոր համար ըրած էր, որովհետև ես անձնապես և ուղղակի Մյութասարիֆին դիմելով և մեր մնալու մասին թույլտվություն ձեռք բերելով՝ զինք անգիտակցաբար անտեսած էի, և մանավանդ մեկ քանի ոսկի կաշառք չէի տված իրեն։ Բայց գործը ինք այս վիճակին հասցուցած և հրամանը ևս ուղղակի կառավարչեն ես ձեռք բերած ըլլալով՝ անգամ մը ևս չէի ուզեր ավելորդ կաշառք խոստանալ կամ տալ քոմիսերին։ Արդեն չունեինք, որ տայինք... կողոպտված, քամված էինք... Իսկ մեր տառապանքի ընկերներուն 3/4-ը անոթի էին և կարոտ դեղի ու դարմանի։ Ինչո՞ւ իզուր տեղը դրամ խլցնեինք, և ուրկե՞ առնեինք ու տայինք...։ Երբ 50—60 թշվառներ պատառ մը չորաբեկ հացի համար օրեր կը սպասեին և 24 ժամե ի վեր բերաններին բան չդնողներ շատեր կային։

Խոստանալով հետո զինք տեսնել, քոմիսերը մեկնեցավ հետ առած բերած ոստիկաններն ու ոստիկան զինվորները, մեզի ձգելով, որ շարունակենք քաղաք երթալ և մեր գնումները ընել և մեր ստիպողական պատրաստություններով զբաղինք։

Այս փոթորիկն ալ հազիվ անցուցած՝ մեր թշվառ ընկերները եկան պաշարել զիս և խնդրել, որ իրենց համար պատառ մը հաց ճարեմ։

Ա՜խ շափազանց դժնդակ էր մանավանդ իմ կացությունս, ըլլալով հովիվ հոշոտված հոտի մը, աքսորական քարավանի մը մեջ աքսորական եկեղեցական մը, ես ալ զրկված նյութական ու բարոյական ամեն միջոցներե, սակայն ամենքին աչքը ինծի էր... Չէ՞ որ հայ ժողովուրդը դարեր շարունակ իր գլուխը տեսած էր հայ եկեղեցականը իբր առաջնորդ կամ հովիվ... Այս դերիս մեջ էի, հայ ժողովուրդի խլյակներու այս ջարդուփշուր եղած քարավանին ալ առաջնորդն էի դեպի Զոր... Այս սպառած յոզկատցի 70—80 տարեկան

ծերունիներու աղերսարկու և մարած ակնարկներն տանջված հոգիս ա՛լ ավելի կը տանջեին։ Որովհետև տառապած հոգիներու վշտին ու ցավին խորությունը չափելու համար պետք է անձնապես տառապած ըլլալ, և անոթիին վիճակը հասկընալու համար՝ անպայման անոթի մնացած ըլլալ։ Իսկ ես իմ ամենաքաղցած ընկերներուս չափ կրած էի գալարումը սովատանջ աղիքներուս. սակայն իմ դիրքս արգելք եղած էր՝ որ անոթությունս կռահել տամ մեկու մը։ Շատ անդամ ո՛րևէ աքսորի մեկ ընկերե երկարված պատառ մը չոր հաց վրան քանի մը փոշեզօծ չամիչներով բավ եղած էր իբր սնունդ ամբողջ մեկ օրվան...

Չէի գիտեր, թե գլուխս ո՛ւր զարնեմ, որովհետև խեղճերը ինծմե զատ հույսի հենարան չունեին... Ես էի եկած ամբողջ տառապանքի ճամփու ընթացքին իրենց միակ հույսը և մխիթարությունը և մեկեն մյուսեն մերթ համոզելով և մերթ սպառնալիքով քիչ շատ առնելով դրամ կամ հաց, կես կուշտ կես անոթի մինչև հոս բերած էի մեր թշվառ ընկերները՝ առանց մեկը ճամփան ձգելու երկոտանի կամ չորքոտանի գայլերուն ձեռքը կամ կլափը։

Ասոնց աղիողորմ տեսքն իսկ քար սրտերը բալ էր քաղցրացնելու։ Ի պատիվ աքսորական իմ թշվառ ընկերներուս, հարկ է հոս հիշատակել, թե օր մը ասոնցմե մեկը ԱՆՈԹԻ ԵՄ չէր ըսած ինծի։ Այլ միայն ակնարկով կը հասկցնեին, և այս լեզուն... ես շատ լավ սորված էի... որ միայն անոթիներու լեզու էր և կուշտերուն անշուշտ անհասկանալի...

Լսելով, որ Սիսի օսմ. պառլամենտի անդամ մեծահարուստ Նալբանդյաններու փոքր եղբայրը Սիս կը գտնվի նույն միջոցին, ուզեցի փորձ մ'ընել փոքր փոխառություն մ'ընելու, հոգալ կարենալու համար դժբախտ ընկերներուս գոնե հացի կարոտությունը։

Լուր ղրկեցի Նալբանդյանին, որ զինք տեսնել կ'ուզեմ. պատասխան ստացա, թե ինք անձամբ պիտի գա զիս տեսնելու մեր իջևանը։

Բայց օրը անցնելու վրա էր և երևցող չկար, մյուս կողմեն լսեցի, որ տունը հիվանդ ձևանալով անկողին մտած է և ժամանակ շահիլ կ'ուզե։ Խորհելով, որ շուտով մեզ ճամփա կը հանեն և ինք ալ կ'ազատի մեզի պես վտանգավոր փորձանքներե։ Որովհետև կ'անգիտանար, որ մենք հրաման ձեռք բերած ենք, մեկ օր ավելի հանգիստ մնալու Սիս։

Տեսնելով, որ օրը կը տարաժամի և մեկ կողմեն եկող գնացող չկա, մյուս կողմեն մեր անոթի ընկերները իզուր կը տանջենք սպասցնելով, երկրորդական մտածումներ մեկ կողմ ձգելով՝ գնացի Նալբանդյաններուն բնակարանը և առաջնորդվեցա այն վերնահարկի փոքրիկ սենյակը, ուր անկողնին մեջ նստած էր Նալբանդյան երեք եղբայրներու կրտսերը՝ երկու ծեր ազգականներու հետ, և իբր թե տաք վիճաբանության մը մեջ ըլլար։

Այսպես խորհրդապահ տան մը աչքե հեռու մեկ փոքր սենեկին մեջ, Նալբանդյանի անկողնին մոտ նստած՝ սկսանք մեզ հետաքրքրող օրվան զանազան նյութերու վրա խոսիլ։

Սուրճեն վերջ, այլևս ժամանակը հասած համարելով հայտնելու այցելությանս իսկական նպատակը, գլխավոր մանրամասնությամբ պատմեցի 102 հոգինոց տարագրության մեր քարավանին հյուծիչ ճամփորդությունը մինչև Սիս։ Հիշելով, որ շուրջ 35 օր տևող և ամբողջ Փոքր Ասիան հյուսիսեն հարավ արյան ճամփաներե կատարած բռնագատյալ մեր ուղևորության պատճառով, մեզմե 60—70 հոգին հացակարոտ և հույժ ողբալի վիճակի մեջ են։ Թե անկարելին ըրի թուրք գյուղերու մեջ մուրալով, մեր ունևորներեն ողորմություն առնելով, անձնապես փոխառություն ընելով՝ այս թշվառները ողջ մինչև հոս բերել։ Սակայն դեռ շատ ճամփա ունինք քալելիք մինչև Տեր Զոր, ուստի խնդրեցի, որ 25 ոսկիի փոխատվություն ընե՝ փոխան Պատրիարքարանե գանձելի ընկալագրի մը։

Ապահովցնելով, որ երբ ընկալագիրս հասցնե Պոլիս, Պատրիարքարանը սիրով պիտի վճարե այսքան չնչին գումար մը, հանուն տարագիր հայերու հացագնի։

Բայց սառնասրտությամբ Նալբանդյան պատասխանեց, թե ներկա հաղորդակցությանց բազմաթիվ դժվարություններուն մեջ հնարավոր չէր այսպես գաղտնապես տրված ընկալագիր մը Պոլիս ղրկելով գանձել Պատրիարքարանեն...

Բացահայտ էր, որ ոչ մեկ կարեկից զգացում գոյություն ուներ այս մարդուն սրտին մեջ, հանդեպ այն դժբախտ և նավաբեկյալ ժողովուրդի տարագիր շնչավոր խլյակներուն, որոնց անունով և շնորհիվ իր եղբայրը գնացած էր բազմիվ օսմ. պառլամենտին մեջ։ Այս բացառիկ և ազդեցիկ դիրքին

շնորհիվ ևս ոչ միայն փրկած էր իր ամբողջ հարստությունը և կալվածքները, այլև տարագրվող հայերու մեկնումեն նյութապես ևս մեծապես օգտված էր՝ հրապարակը միայն իրենց մնացած ըլլալուն համար։

Բաց աստի իբր օսմ. խորհրդարանի անդամ հաջողած էր իր ազգականներն փրկել, և ասոնց շարժուն ու անշարժ հարստությունը ևս ազատել պետական բռնագրավումե։

Ամեն ջանք կ'ընեի համոզելու համար, որ ոչ իբր ողորմություն, այլ իբր փոխատվություն 25 ոսկիի չափ աննշան գումար մը տալու չդժկամակի, որ պիտի ծառայեր մեր դժբախտ քարավանին կեսեն ավելին փրկելու սովամահութենե։ Իզուր կը նկարագրեի աքսորի ճամփուն վրա մահվան ուխտավորներուս կրած հազարումեկ տառապանքները և զրկանքները, որոնցմով այժմ ամենքն ալ հյուծած ու սպառած էին և շատեր ալ արդեն կմախացած... Նա բոլորովին անտարբեր էր սիրտմաշ նկարագրություններուս, և քարասրտությամբ կը պատասխաներ թե, բոլոր հայերու վիճակն ալ վատ է։

Բայց անշուշտ ոչ իրենցը, երբ թուրք բարձր պաշտոնյաներու հետ գինարբուքով և թղթախաղով ժամանակ կ'անցընեին, լեցնելով իրենց ցորենի շտեմարանները՝ տարապարհակ աշխատությամբ հայ գործավորական գումարտակներու (Ամելե թապուրի), որոնց նույնիսկ կը զլանային կուշտ ու կուռ հաց մը տալ։ Իսկ եղած բողոքներուն կը պատասխաներին, թե փառք տվեք Աստուծո, որ հոս դարձյալ չոր հաց մը կը գտնեք. եթե այս աշխատությունն ալ չընեք, երթալիք տեղերնիդ Տեր Չոր է...

Եթե ավելի բուռն կերպով այս եղբայրադավ զրկանքներուն ու բռնություններուն դեմ բողոքող հանդուգն հայ զինվորներ ըլլային, անմիջապես իրենց գործակից ու շահակից թուրք զինվորական պաշտոնյաներու միջոցավ հեռացնել կու տան եղեր այլուր...

Տեսնելով, որ անտարբեր է դեպի մեր դժբախտ վիճակը և ցցուն առարկություններով կ'ուզե մերժել ըրած համեստ առաջարկս, վերջին ջանք մը ևս փորձեցի ընել հանուն տառապանքի իմ բյուրիցս թշվառ ընկերներու, որոնց աղերսարկու նայվածքներն դեռ սևեռված կը մնային տանջված հոգվույս խորը։

Կրկին մերժման մը պարագային կրելիք անձնական արժանապատվությանս վիրավորանքը առանց ի նկատ առնելու՝ թախանձագին խնդրեցի, որ գոնե միայն տասը ոսկի հաճի տալ անձնապես ինծի իբր փոխատվություն։ Ավելցնելով, որ իմ տասը ոսկիի ընկալագիրս երբ որ Պոլիս ղրկե, անմիջապես կը վճարվի, եթե նույնիսկ անհայտացած ըլլամ արդեն ավազի անապատներուն մեջ...

Դիտելով, որ դժկամակ արտահայտություն մը ցույց կու տա հանդեպ այս նոր առաջարկ—խնդրանքիս ևս, զինք ապահովեցնելու և միանգամայն վերջին հույսս ալ ի դերև հանելի փրկելու համար հայտնեցի, որ եղբայրս ի Մելբուռն և ազգականներս ի Պոլիս նյութապես ի վիճակի են՝ հիշատակիս ի հարգանս տասնապատիկ և ավելի վճարելու սիրահոժար և առանց առարկության՝ հանդերձ անցնող տարիներու տոկոսներովը...

Զիս քարացնող սառնասրտությամբ մը պատասխանեց ինծի անտարբերությամբ.— բայց ես չեմ կրնար այսպիսի փոխատվություն մ'ընել ձեզի, որովհետև ձեզ Տեր Չոր կը տանին և ոչ ոք գիտե, թե ձեր վախճանն ի՞նչ պիտի ըլլա...

Ա՜լ թախանձելն ավելորդ էր, մեր դեմինը բարոյական սնանկ մըն էր և անարժան խնդրանքի պատվույն...։ Որովհետև եթե մարդկային սիրտ մը ունենար, ոչ թե պիտի մերժեր տասը ոսկիի չափ հույժ համեստ գումարի մը փոխատվությունը, այլ ինք անձնապես կրնար իբր ՆՎԵՐ տալ շատ ավելին։

Անկարելի էր զինք համոզելու նոր փորձ մ'ընել, որովհետև չէր ուզեր համոզվիլ...

Երբ Նալբանդյաններու բնակարանեն դուրս եկա, արդեն կեսօրը անցած էր, և գարնանային կիզիչ արև մը զենիթը անցած դեպի արևմուտք կը խոնարհեր։ Բայց ես ա՜յնքան ընկճված, ա՜յնքան բարոյապես լկված էի և տառապած հոգիս ա՜յնքան խռոված էր, որ աննշմարելի անկյուն մը ա՜խ կը փնտրեի, որ գտնեի և մինակ լայի...

Միայն արցունքը կրնար հանդարտեցնել ալեկոծյալ սրտիս հուսավրեպ խռովքը... Երբ կը խորհեի, թե հիմա որ դառնամ, ի՞նչ պատասխան պիտի տամ ժամե մը ավելի ակնկառույց ճամփաս սպասող և պատառ մը հացի կարոտ քաշող թշվառ ժողովուրդիս, ա՜խ պարզապես արևը խավար կ'երևար աչքերուս...

Քանի՜ քանի՜ անդամներ ճամփուս վրա դտնվող քարերու

ընդհարելով գետին ինկա, որովհետև ես զիս կորսնցուցած էի, ու չէի գիտեր թե ո՞ւր կ'երթամ... Բոլոր քաշած հին տառապանքներս մոռցած էի նույն պահուն. զի մեր ցեղային թշնամիեն կրած էի այդ ամենը, բայց իմ ազգակիցես այս կրած հուսախաբությունս զիս կ'ընդվզեցներ։ Մանավանդ, երբ տեսա իր տան մեջ վայելած հանգիստը մաքուր անկողիններու մեջ նստած, և հիշեցի համադամ իր սեղանները... ու մեր ներկա կացության հետ բաղդատեցի, պետք եղավ, որ իբր պաշտոնյա Աստուծո՝ կարելին ընեմ և զսպեմ շրթներես վրիպել ուզող անեծքները... զի չէ՞ որ օրհնության պաշտոնյա էի...

Խնդրել 10 ոսկի միայն 60—70 թշվառ ազգակիցներու իբր հացագին մահվան մեր ճամփուն վրա և մերժվիլ...

Այո՛, կը մերժեր, մտածելով, որ մենք անապատները կը տարվեինք կոտորվելու համար, և կը խորհեր, թե այս անգութ արարքը օր մը արևը ի լույս չպիտի բերեր...

Հազիվ վերադարձած մեր քարավանատեղին՝ ամենքը, մանավանդ յոզկատցիները մոտս խուժեցին իմանալու համար, թե հաջողությա՞մբ կը դառնայի... և թե պիտի կրնայի՞ պատառ մը հաց գտնել իրենց համար, որոնք համարյա 24 ժամե ի վեր ոչինչ կերած էին։

Երբ իմացան, թե ձեռնունայն դարձած էի, ա՛լ պետք է երևակայել իրենց հուսախաբությամբ կրած դառնությունը ու կսկիծը։ Շատեր անեծք կը կարդային... իսկ պուսեցի մեկ քանի մտավորական երիտասարդներ կը սպառնային և կ'ըսեին. ա՜խ, եթե ողջ մնանք, անոնց ցույց պիտի տանք, թե իրենց այս անգթությունը հանդեպ մեզի, ո՛րքան սուղի պիտի նստի Նալբանդյաններուն... իրենց հարստությունը թշվառներու ձրի քրտինքի արժեքն է... և պատառ մը հաց մեզի շատ տեսան... կը տեսնե՞ն, բայց ա՜խ, միայն թե ողջ մնայի՞նք...

Բարեբախտաբար այս միջոցին հացավաճառ հայ մը իմանալով այս խեղճերուն ընդհանուր դժգոհության և զայրույթի շարժառիթը, փութաց 60 հաց ինձի տրամադրել, որպեսզի ամենակարոտներուն բաժնեի։ Ասով քիչ մը բավականություն ստացան, և յուրաքանչյուրը ստանալով 250 գրամ հաց, գոհացան և օրհնեցին նվիրատուն։

Երբ քիչ վերջ եկավ նաև Նալբանդյանի փուռին պաշտոնյան հաց վաճառելու համար, անձամբ դիմեցի նույնին, և պատմելով, որ հաց վաճառող արհեստավոր հայ մը կարեկցելով 60 հաց նվիրած էր աքսորականներուն, խնդրեցի, որ իրենք ալ 60 հաց նվիրեն։ Որպեսզի ճամփու համար քիչ մը պաշար ունենան հետերնին, քանի որ իրենց բաժնած հացս նույն վայրկենին խեղճերը պատառ-պատառ կլլած էին՝ սովալլուկ կենդանիներու նման...

Պաշտոնյան պատասխանելով, որ առանց իր տիրոջը չի կրնար բան մ'ընել, մեկնեցավ արգելարան իջևանեն և քիչ վերջ դառնալով 40 հաց միայն հանձնեց ինձի, որ բաժնեմ կարոտներուն։ 20 հաց պակաս տալը շահ համարած էին... Յոզկատցի ծերերեն ոմանք իրենց զգացած արդար զայրույթեն լացին...

Թեպետ մեկ քանի երիտասարդներ խնդրեցին, որ չառնեմ այս 40 հացը՝ չհանդուրժելով այլևս ա՛յսքան անարգանքի, սակայն աղերսարկու նայվածքն սովահար թշվառ ծերուկներու զիս կը բռնադատեր, որ շատ խստապահանջ չըլլամ և արժանապատվության վրա չմտածեմ ու առ այս ամեն բծախնդրություն մեկ կողմ թողում։

Ստուգիվ ալ այնպիսի թշվառ վիճակի մը մեջ կը գտնվեինք, որ արժանապատվության վրա մտածելու ժամանակ չկար...

Դարձյալ մենք մեր մեջ ճար-ճարակ ընելով մեր թշվառագույն ընկերները գոնե փոքր չափով կշտացնելե և կազդուրելե վերջ՝ գիշերը խաղաղ անցուցինք և հաջորդ օրը պատրաստվեցանք մեկնումի։

Տեղացի հայերե լսեցինք, որ Սիսի 800 տուն հայերեն 50—60 տուն հայեր, մեծ մասամբ Նալբանդյաններու շրջապատի մարդիկ կամ ազգականներ, կրցած էին ազատիլ տարագրութենեն և մեր Սիսեն անցած միջոցին քաղաքն էին մնացած։ Ասոնց հետ իբր անդամալույծ կրցած էր մնալ Սիս նաև ծերունազարդ քահանա մը, որ իր տան մեջ փակված արգիլված էր նույնիսկ մեռելները թաղելե։

Սիսի մայրավանքը թուրք գաղթականներու տղոց վարժարանի վերածված էր, իսկ հայոց թափուր տունները ևս ներքին գավառներեն Կիլիկիա խուժող իսլամ գաղթականներու բնակության հատկացած էին։

Մայրավանքի բոլոր սրբազան անոթները, զգեստեղենները և մատյանները ամենավերջը մեկնող եպիսկոպոսները հետերնին առած և ս. Երուսաղեմ փոխադրած էին։ Իսկ այն գույքերը, որոնք հնար չէր եղած տեղափոխել, կամաբակաց

նկուղներու մեջ թաղած էին՝ իբր վերջին ավանդը մեռնող հայության։

Իսկ կաթողիկոսական գահը, որ մարմարիոնե և քանդակազարդ 200 տարվան հնություն մըն էր, փշուր-փշուր ջախջախած էին թուրք դպրոցական տղայք՝ հանձնարարությամբ իրենց մոլեռանդ ուսուցիչներուն։

Այս գահին համար թեև Լևոնի գահը կ'ըսվի, բայց ոչ մի պատմական հիմ չունի և ըստ վկայության նույնիսկ Կիլիկիո սրբազան կաթողիկոսին հազիվ մեկ քանի հարյուր տարվան հնություն մըն էր, ինչպես քիչ վերև հիշեցի։

Օգտվելով մեր վայելած բացառիկ բարյացակամութենեն, մասնավոր թույլտվությամբ կրցանք նամակներ ու հեռագիրներ հղել մեր ընտանեկան բոլոր պարագաներուն, մեր ո՛ւր գտնվիլը իմացնելով անոնց։

Մեր պանդոկապետը հաճընցի հայ մըն էր, որ հնարքով մը հաջողած էր մնալ Սիս և ազատիլ տարագրութենե։ Սա պատմեց մեզի, թե Բաղդադի երկաթուղու գերման ընկերությունը հազարավոր աքսորե փախստական հայեր, շատեր հանդերձ ընտանյոք, ինչպես նաև զինվորութենե փախստական իսլամներ, կ'աշխատցնե Ամանոսի և Տավրոսի երկաթուղու փապուղիներու շինության գծին վրա։ Թե անոնք, որ անգամ մը փախչելով ապաստանին սույն երկթ. գիծը, ա՛լ կրնան ազատված համարել իրենք զիրենք, որովհետև թուրք քաղաքային և զինվորական վարչություններն չեն կրնար զանոնք ձերբակալել։ Հակառակ ըլլալով այսպիսի ընթացք մը՝ կառավարության և գերմ. երկթ. ընկերության միջև նախօրոք կնքված գրավոր համաձայնության։

Մեզի կը թելադրեին, որ երբ երկթ. գիծը հասնինք, ամենքս միասին փախչինք և ապաստանինք երկթ. գիծը և արդեն փրկված կրնայինք ըլլալ։

Մենք ալ արդեն համոզված էինք, որ մեր փրկությունը միայն փախուստով կրնայինք ձեռք բերել։ Իսկ մեզի համար փախուստը շատ դյուրին էր, քանի որ ամենքս ալ այր մարդոցմե կազմված քարավան մըն էինք, և կիներ կամ երախայք չկային մեր մեջ։

Ասոր վրա՝ նույն հայ պանդոկապետին շնորհիվ գաղտնի բանակցության մտանք զինվորութենե փախստական ճարպիկ թուրքի մը հետ, որ արդեն ինք ալ կ'աշխատեր նույն գծին



վրա և մեկ քանի օրվան արձակուրդով եկած էր Այրանեն Սիս։

Այս թուրքը հանձն առավ փոխան լիառատ վարձատրության՝ երթալ մեզմե առաջ Ամանոսի երկթ. ընկերության կենտրոնը Այրան, և տեսակցելով նույն գերման ընկերության թարգմն Փ.-ի հետ մեր փախուստին հող պատրաստել ու պատասխանը բերել Քելլեր, որմե մենք պիտի անցնեինք Իսլահիյե հասնելե առաջ։

Թուրքը թեպետ գրավոր թուղթ մը ուզեց հետը տանելու համար, որ պիտի ծառայեր իր պաշտոնին վավերականության։ Սակայն զգուշացա այսպիսի թուղթ մը տալե, խորհելով, որ կրնար դավադրություն մը լարված ըլլալ մեզի դեմ և այսպիսի փաստ մը ձեռք բերել կ'ուզեր կառավարությունը մեզ փչացնելու համար։ Բայց կրնար և դավադրություն մը չըլլալ. սակայն հանկարծ թղթատար այս թուրքը կասկածի վրա ձերբակալվելով կրնար կրկին նույն աղետաբեր հետևանքը առաջ գալ մեզի համար։ Մեր անխորհուրդ մեկ քայլով կրնայինք փութացնել մեր եղերական վախճանը, միանգամայն մեր դահիճներուն ևս չքմեղանքի փաստ մը ընծայելով մեր անհեռատես ընթացքովը։

Թուրքը մեզմե առաջ մեկնեցավ Սիսեն՝ խոստանալով մեր ճամփան սպասել որոշյալ տեղը։

Նույն պանդոկապետ հաճընցի հայը ցույց տվավ մեզի Հաճընը թուրքերուն մատնող դավաճան Արամը։ Նիհարակազմ և փոքրահասակ խոռոչացած աչքերով 25 տարեկան երիտասարդ մը, որ իբր հնչակյան իրազեկ ըլլալով հայերու զենքերու թաքստոցներուն՝ մատնած էր թուրք ոստիկանական պաշտոնյաներու և անկարելի դարձուցած փրկության կամ դիմադրության ո՛րևէ փորձ։

Մոտալուտ փրկության հույսով առլցված ճամփա ելավ աքսորականներուս քարավանը Սիսեն դեպի Կարսպազար։

Մեկ օր ավելի մեր բացառաբար վայելած՝ հանգստով բավական կազդուրված էինք ամենքս ալ, և քիչ շատ սկսած էինք դարձյալ «մարդու» նմանիլ։

Շուտով մեր ետև թողուցինք Ռուբենյանց հայ թագավորներու պատմական մայրաքաղաքը իր հին փառքի անցյալ հիշատակներովը և մտանք Կիլիկիո դաշտը։

Եղանակը գարուն էր, մեր ոտքերուն ներքև սփռված էին

կանաչազարդ մարմանդներ և տեղ տեղ ևս ցորենի հասկերը իրենց գլուխը սկսած էին արդեն վեր բարձրացնել։ Կիլիկիո տաք արևը կը ջեռուցաներ տեղաջող անձրևներե վերջ զգալի եղող ցուրտ խոնավությունը։

Ոգեսպառ աքսորականներուս քարավանը ավելի արագ քայլերով կ'անցներ դաշտի ճամփան, որ ծովու մը մակերեսի նման հարթ հավասար ըլլալուն դյուրավ կը քալեինք։ Շուտով մոռցած էինք մեր մինչև այժմ կրած տառապանքները, անությունը, ծարավը և ծեծը։ Մեր մահվան ուխտավորներուս երիտասարդ անդամները սկսած էին ոգևորվիլ կրկին, և մոտալուտ փախուստի ծրագիրը զիրենք ա՛յնքան խանդավառած էր, որ արդեն փրկված ըլլալ կը կարծեին...

Չէ՞ որ անձնական թե ցեղային նկարագիրը չի փոխվիր դյուրավ կամ երբեք, նույնիսկ մահաբույր վերջին օրերու մեջ։ Մահվան հետ վաղուց ընտելացած էինք, ա՛յլևս անկե չէինք սոսկար։ Մահը առաջ անծանոթ և ահարկու թշնամի մըն էր մեզի համար, իսկ այժմ ընտանի բարեկամ մըն էր և սարսափ չէր ազդեր մեզի այլևս...

Հիսուս մանուկը արևելքեն տեսնելու և երկրպագելու եկող մոգերը առաջնորդող աստղին նման, մենք անապատի ուխտավորներս ալ մեզ առաջնորդող պոչավոր աստղ մը ունեինք։ Այս աստղը հոգեվարք հայության վերահաս արշալույսի ոսկիվիրա աստղն էր, որ հինգ հարյուր երկար տարիներու ապարդյուն սպասումներեն հետո, վերջապես սկսած էր երևիլ հեռավոր հորիզոնին վրա, հազիվ նշմարելի պլպլումով մը...։ Հայ հորիզոնը սկսած էր շառագունիլ և արյունագույն կարմիրով մը հրդեհել հայոց պաշտելի և սրբազան լեռը Արարատ։

Այո՛, ամենքս ալ խորապես համոզված էինք, թե հայությունը բնաջնջելու համար կազմակերպված համատարած արյան այս բաղնիքը ՎԵՐՋԻՆՆ ԷՐ... թե հորդահոս թափված անմեղ արյունը իզուր չպիտի երթար... Բայց ավա՜ղ. ողջ մնացող հազվագյուտ բախտավորները միայն պիտի կրնային տեսնել հայության այս հրաշափառ արևածագը...

Այս մեր ոգևորությանը մեջ, մեկ քանի առաջապահ երիտասարդներ իբր թե զբոսական պտույտի մը ելած ըլլային, սկսան ամենքին լսելի ձայնով մը երգել զգայուն ջեշտերով իրենց կարապի երգը.



— Երբ որ բացվին դռներն հուսո
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Ջրքնաղ երկիրս մեր Կիլիկիա,
Երբ որ փայլե քաղցրիկ օրեր,
Երբ որ ծիծառն ի լույսն գառնա,
Երբ որ ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև...

Իսկ ուրիշ կողմե, ներշնչված այս հայրենաբազձ սրտախորով շեշտերեն, մեկ քանի ծաղկահասակ երիտասարդներ ևս ավելի մարտագոռ շեշտերով կ'երգեին.

— Ամենայն տեղ մահը մի է...
Մարդ մի անգամ պիտի մեռնի...,
Բայց երանի որ յուր ազգի...
Ազատության կը զոհվի...

Ա՜խ, ո՜րչափ պատեհ էին և հարմար բանաստեղծին այս մարտահրավեր խոսքերը մեր ալ վիճակին։ Մեկ միլիոնեն ավելի ցեղակիցները՝ ողջակիզված էին հայության ազատության սեղանին վրա։ Եվ եթե հայ նահատակներու գանգերեն լեռ մը բարձրանար, ապահովաբար շուք պիտի տար ան՝ սուրբ Արարատի հավիտենական ձյունի երկնաբերձ կատարին...

Արդարև հայ ժողովուրդին ցույց տված կենսունակությունը մարդկային պատմության ամենահրաշալի դրվագներեն մեկն էր։

Ցեղը անճիտելու համար պարբերաբար հինգ հարյուր տարի կատարված համատարած կոտորածները, 1890-ին Կարնո կոտորածը, 1895—96-ին ընդհանուր հայկական ջարդերը, 1902-ին Սասունի ջարդը, 1909-ին Ադանայի կոտորածը, և իբր թագ ու պսակ այս ամենքին 1915-ին հայության վերջնական ու արմատական բնաջնջումին համար կազմակերպված, մարդկային պատմության մեջ նմանը չտեսնված ջարդերը, որոնք գերազանցեցին արյունի ամեն բաղնիքները անցյալ բոլոր դարերու։

Բայց հայը ամեն անգամուն ալ ներողամիտ եղավ հանգեպ իր ջարդարարներուն և համբուրվեցավ իր դահիճներուն հետ։

Հայ ժողովուրդը ազնիվ, վեհոգի ու անհիշաչար էր, շուտով կը մոռնար արյան ամեն նոր նախճիր, բավ էր, որ իր անգութ դահիճներն մխիթարական մեկ քանի խոսք ըսեին։ Իսկույն կը սպիանային իր խոր խոցերն ու վերքերն և շուտով կը

մոռնար ամեն սև օր, մինչև որ նոր ջարդեր և արյան նոր բաղնիքներ զինք մատնեին կրկին սուգի ու սարսափի։

Ահա այս բազմաշարշար բյուրիցս նահատակված ժողովրդի մնացորդ ափ մը զավակներն էին, որ թեպետ իրենց շորաբեկ հացի պատառը կ'ուտեին արցունքով, բայց կը քալեին երգելով... գիտնալով հանդերձ, որ դեպի գերեզման կ'երթան...

Ո՜հ, անշուշտ չէր կրնար իսպառ մեռնիլ այսպիսի կենսունակ և հերոս ժողովուրդ մը, որ հազարավոր տարիներու արյունի և կրակի, տառապանքի և արցունքի մկրտությունը կրած էր...։ Այո՜, ապագան իրեն էր, բայց ա՜խ ողջ մնացողներն միայն բախտ պիտի ունենային տեսնելու...

Արդեն գիշերվան խավարը մեզ շրջապատած էր, բայց դեռ չէինք հանդիպած գյուղի մը, ուր գիշերել կարենայինք։

Կը թվեր, թե մեր ճամփան մոլորած էինք, մանավանդ մեզի ընկերացող ոստիկան զինվորները ևս սկսած էին մտահոգիլ և չէին քաշվեր ըսելու մեզի, որ իրենք պաշտոնի նոր կոչված ըլլալով անծանոթ էին այս ճամփաներուն, այս պատճառով և միշտ հարցուփորձով կ'առաջնորդեին քարավանը առաջ։

Գիշերվան երրորդ ժամն էր և խավարին մեջ առ խարխափ առաջ կ'երթայինք, երբ հանկարծ լսեցինք զենքի պայթումի հաջորդական ճարճատումներ՝ ճիշտ մեր դեմեն և հազիվ 50 քայլ հեռվեն։ Բնականաբար հանակնկալս խուճապի մատնվեցանք, ենթադրելով, որ մեր ալ մահվան ժամը հնչեց վերջապես։ Ոչխարի հոտի նման ցան ու ցրիվ եղանք և ոմանք կը փախչեին՝ առանց ետևնին նայելու իսկ, և ոչ ալ գիտեին, թե ո՞ւր կ'երթան։

Անկարելի էր անմիջապես տեր ըլլալ կացության, որովհետև ոչ ոք մեզմե գիտեր, թե պետական զենքերու հատուկ որոտալից ձայն ունեցող գնդակներն որո՞ւ դեմ էին։ Մեր երկյուղն ա՛լ ավելի կը տասնապատկվեր, որովհետև հարվածներն կը շարունակվեին։

Վերջապես հասկցվեցավ, որ երկու ոստիկան զինվորներ՝ 4—5 հատ զինվորական թուրք փախստականներ ձերբակալելով Սիս տարած ժամանակ մեր մոտերը փախած էին, և ոստիկան զինվորներն ճարահատ հրազեն արձակելով կը սպառնային



գնդակահարել խավարին մեջ... Չորսը փախած էին և միայն մեկը անճարակ գտնված էր ու չէր փախած։

Բավական ժամանակ կորսնցուցինք, մինչև որ կրկին մեկտեղ հավաքվելով իրար համրեցինք, կրկին համրեցինք մինչև որ մեր պաշտոնական թիվը կրցանք հաստատել և 109[1] եղանք։

Ապա սկսանք առ խարխափ շարունակել մեր ճամփան։ Բարեբախտաբար մեր ճամփան այլևս դաշտային էր և լեռնային երկյուղալի արահետներն մեր ետև թողած էինք ընդմիշտ։

Վերջապես հեռուն, շատ հեռուն կրցանք նշմարել պլպլացող տմ..ն լույսեր, բայց անհնար էր մեզի ճշտել, թե հոն գյուղ մը կա՛ր թե ոչ՝ ոչխարներու գիշերային փարախ մըն էր։

Գիշերային ճամփորդություններու փորձ ուղևորներ լավ գիտեն, որ դժվար է որոշապես ճշտել երևացող լույսերու հեռավորությունը։ Այսպես ժամ առաջ հանգչելու հույսով և հապճեպ քայլերով կը առաջանայինք դեպի լույսը, իսկ լույսը կը հեռանար կամ կարծես կը փախչեր մեզմե։ Գիշերվան ցողը և եղյամը սկսած էր թրջել մեր հագուստները և մեզ սառեցնել։ Շատ մը շարշարանքներե և հուզումներե վերջ հասանք մեկէ ավելի պլպլացող լույսերու վայր մը, և այլևս կասկած չկար, որ գյուղ մը գտած էինք վերջապես։ Բայց մեր աճապարանքին մեջ չէինք նշմարած, որ լճացյալ բավական մեծ ջուր մը պիտի անցնեինք՝ միայն բնականեն երկարած ծառի բունի մը վրայով, որ միակ կամուրջն էր հանդիպակաց գյուղը տանող ճամփան հասնելու համար։ Ոմանք գլորեցան ջուրի մեջ՝ մանավանդ ծերերե շատերը, ընդ որս և Աստուծո դժբախտ ծերունազարդ պաշտոնյան Տ. Հուսիկ քահանան ջուրը ինկավ։ Արդեն ամեն անգամ, որ այսպիսի դժվարին ճամփայե անցնեինք, առաջին գահավիժողը այս թշվառ ու բարի քահանան կ'ըլլար, զի յոթանասունը անց էր և արդեն ուժասպառ եղած էր տաժանակիր այս աքսորական ճամփորդութենեն։ Օր մը սակայն ոչ մեկ հառաչանք թռավ իր շրթներեն ոչ մեկ դժգոհություն կը հայտներ. միայն իրեն միակ անեծքն էր, որ երբեմն ոգեսպառ եղած ատեն կ'ըսեր.— Աստուծմե գտնեն...։—

Ամեն կողմե մեր վրա հարձակող վայրի գամփռներու դեմ

1 Սիսեն մեկնած ատեն 7 հոգի ևս ավելացավ տեղվույն հայերեն մեր քարավանին վրա։

լուրջ պայքար մը մղելէ վերջ, մտանք մեծ ախոռ մը, որուն կից մեկ-երկու գոմեր ալ կային։ Մեր քարավանը տեղավորվեցավ այս ախոռին ու գոմերուն մեջ՝ և առանց բան մը ուտելու հետամուտ ըլլալու, չափազանց պարտասած ինկանք շորցած աղբյուսի կույտերուն վրա և քնացանք։

Հաջորդ օրը հազիվ կորեկի ցեխանման սև հաց մը ձեռք ձգելով՝ ճամփա ելանք և կես օրվան կարճ դադարե մը վերջ երեկոյին հասանք շատ կանուխ Կարս-Պազար։

## 30.

## ԿԱՐՍ-ՊԱԶԱՐ — ՕՍՄԱՆԻՅԵ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԱՌԱՋԻՆ ԿԱՅԱՐԱՆԸ

Կարս-Պազար Ռիհուն թափվող գետակի մը ափին գայմաղամանիստ գյուղաքաղաք մըն է, շուրջ հազար տուն բնակիչներով, որուն բացի երկու հարյուր տունեն՝ մնացյալը իսլամ մեծամասնություն մըն է եղած։ Տեղվույն հայերը ևս սեղահան եղած էին, և ոչ մեկ հայ թողված էր քաղաքը։ Տեղվույն թուրքերը Կովկասի համանուն քաղաքեն թուրք գաղթականներ ըլլալուն՝ շատ մոլեռանդ իսլամներ էին, և հայերուն կատաղի թշնամի։

Այս գյուղաքաղաքին առջև Սիս երկարող ճամփուն վրա կառուցված է քարաշեն հոյակապ կամուրջ մը, ուրկե անցանք քաղաք հասնելու համար։

Բայց դժբախտաբար հակառակ մեր ակնկալության՝ ոչ միայն ըստ սովորության մեզ չընդունեցին քաղաք, այլև հրամայեցին, որ անմիջապես հեռանանք քաղաքեն։ Իզուր աղաչեցինք, որ շատ հոգնած ենք, և մանավանդ հաց չունինք, գոնե մեր դրամով մեզի հաց վաճառեն, թե հոժարակամ բացօթյա կ'իջևանինք կամուրջին մոտիկը, բավ է, որ մեզ թույլատրեն մեր ուտելիքները քաղաքեն հոգալու։ Սակայն այս պաղատանքը կառավարության դեմ ըմբոստություն համարելով, 8—10 ոստիկան զինվորներ մտրակներ ու բիրեր ձեռքերնին խուժեցին մեր վրա, և մարգագետիններուն վրա նստող ժողովուրդեն հանդիպածին գլխուն սկսան անխնա հարվածել։ Երբ ծառի հաստ ճյուղերե կտրած փայտերը կոտրեին, ոտքերով և սունակոշիկներու կրունկներով կը սկսեին հարվածել թշվառները։ Գայլի անակնկալ հարձակման ենթարկված ոչխարներու նման սկսան ամենքը խույս տալ դեպի երթալիք մեր ճամփուն ուղղությամբ։ Բայց այս մարդ գազաններուն հայատյաց մոլուցքը դեռ հանդարտած չէր և կը վազեին հետամնացներուն ետևեն և անխնա կը ծեծեին։ Իսկ ասոնք ամենասպառածները և ծերերը ըլլալով անգութ հարվածներուն տակ գետին կ'իյնային զգայազուրկ, և միայն մերթ ընդ մերթ հառաչանք մը կը լսվեր իբր իրենց կենդանության նշան։ Շատերու գլուխն արյունլվա էր, բայց ոչ ոք ետին կը նայեր այլևս, ամենքն ալ կը վազեին ժամ առաջ հեռանալու համար այս դժոխային քաղաքեն։ Իսկ գայմագամը կամ տեղակալ-կառավարիչը ձեռքով քիչ հեռուն կանգնած նշան կ'ըներ, որ անխնա զարնեն ու հարվածեն առանց գթալու։

Անկարող այլևս համբերելու՝ փութացի յոթանասունամյա հյուծած ծերուկի մը մոտ վերցնելու և խնդրելու, որ այլևս բավ համարին... Այս անգամ ոստիկան զինվորը իմ ուսին կը զարներ ուժգին հարված մը, իսկ գայմագամը կը պոռար հեռվեն—վո՞ւր քյաֆիր փափազա...— զարկ անհավատ քահանային...

Մինչև 10—15 րոպե տեղ մեզ այսպես հալածելե հետո, վերջապես դարձան ետ շարագործ այս ոստիկան զինվորները։ Իսկ մեր քարավանին երիտասարդները շատերու գլխեն վազող արյունեն գերագրգռված կ'ըսեին.— Աս մինչև ե՞րբ պիտի համբերենք... այս գարշելիներուն բոլոր ըրածները միթե՞ իրենց քով պիտի մնան։ Ա՜խ, մեկը ողջ պիտի չմնա՞ և պատմե ողջ մնացողներուն և ապագա սերունդներուն մեր այս բոլոր քաշած տառապանքները։ Ա՜խ, հայր սուրբ, գոնե դուն ողջ մնայիր և գիրք մը գրեիր ու պատմեիր մեր այս քաշած բյուր տառապանքները...

Ահա կը կատարեմ ձեր վերջին նվիրական բաղձանքը, աքսորի և տառապանքի եղերաբախտ ընկերներ, երբ դուք կը հանգչիք հավիտենական քունով՝ առանց գերեզմանի և առանց սև փայտյա խաչի մը։

Օրը տարաժամած ըլլալով ½ ժամ հեռուն իջևանեցանք պատահաբար հանդիպած թուրք գյուղ մը, և սկսանք կապել մեր արյունոտ վերքերը։ Բայց, ո՜հ, ո՞վ պիտի կապեր վերքե-

բը մեր սգավոր սրտերուն, որ հրաբխային խառնարան մըն էին բոցավառ վրեժի, ցավի ու վշտի։

Թուրք գյուղացիներն տեսնելով մեր արյունլվա վիճակը և իմանալով եղածը, սկսան հայհոյել և անեծքով հիշել Թալեաթի և Էնվերի անունները ու կ'ըսեին—իրենց ազգին չմեղքցող անկրոն ու անօրեն մարդիկ մի՞թե ձեզի կը մեղքընան..., ու կավելցնեին— քաղաքներն ու գյուղերն բնակիչներեն դատարկվեցան և մնացած քանի մը էրիկ մարդիկն ալ ռազմաճակատ կը տանին, ասոնք ալ լմնցներու համար... այո՛ ձեզ լմնցուցին, բայց մենք ալ լմնցանք. թող Ալմանը գա երկրին տեր ըլլա...

Հաջորդ օրը տաքուկ արևով մը ճամփա ելանք և սկսանք կոխոտել Անավարզայի հուռթի դաշտը, որ մեծ համբավ ունի իր արգասաբերությամբ։ Անավարզայի դաշտը սկսելով Սիսի առջևեն կ'երկարի մինչև Ճիհան և մեծ մասամբ ճախճախուտ ու եղեգնուտ է։ Սակայն եթե վտակներու հոսանքները թումբերով կանոնավորվին, ընդարձակածավալ դաշտ մը կը դառնա. զի կույս հողեր են, որոնց վրա ցորենն ու բամբակն ամենաառատ բերք կու տան հարյուրին 40—60 համեմատությամբ։ Կլիման ճահճային է և մալարիա հիվանդությունը շատ տարածված է. սակայն եթե չորցվին ճահիճներն և շամբուտներն, կլիման հաճելի է շնորհիվ Տավրոսի մերձակա ձյունապատ լեռներուն և հյուսիսի քամիին։

Ամբողջ դաշտը հարթ հավասար ծովի մակերեսի մը հանգունակ մեր առջև կ'երկարածգվեր, բայց ոչ մեկ շարժուն էակ կը տեսնեինք՝ ոչ մարդ և ոչ կենդանի։ Գարուն էր, բայց ոչ մեկ դաշտային աշխատանք կը կատարվեր, ոչ իսկ ոչխարի կամ այծի հոտեր կամ նախիրներ կանաչ մարգագետիններու մեջ կը ճարակեին։

Իթթիհատական կառավարությունը բռնագրաված էր ամեն ինչ, և միայն 1—2 տարու կամ ամսու մտրուկներ, հորթեր, գառներ և ուլեր թողած էր, որոնք գյուղերու շուրջ միայն կը ճարակեին ցան ու ցրիվ։

Հասանք Անավարզայի պատմական բերդին ավերակներուն առջև, ցավատանջ մեր հոգիներուն համար հուզիչ էր մեր առջև պարզվող համայնապատկերը։ Ընդարձակածավալ դաշտին մեջ մեկուսացած լեռ մըն է, որուն վրա կառուցված է Անավարզայի հռչակավոր բերդը, որ պատմական մեծ դեր մը կա-



տարած է Ռուբենյանց հայ թագավորներու օրով։ Բնականեն օժտված բարձրադիր և ամրակուռ պարիսպներով բերդ մըն է, պաշտպանված սանդրագլուխ հսկա աշտարակներով։

Պատմական անցյալ փառքերով հարուստ հին ազգի մը զավակը ըլլալ և տարվիլ անապատները ոչնչացվելու համար և անցնիլ մեր նախահայրերու ձեռակերտ եղող հիշատակներու առջևեն ու չհուզվիլ, անհնար էր։

Մեր աչքերն առած դեպի բերդը կը նայեինք ակնապիշ, օգնություն աղերսողի մը ակնկալությամբ, իբր թե ոգեկոչեինք մեր հին թագավորներն ու իշխաններն, որ օգնության փութային մեզի։

Բերդին ներքև գյուղ մը կար, այգիներով և պարտեզներով շրջապատված էր, բայց կենդանության նշան չէր երևեր մեջը ու անհնար էր մեզի ճշտել, թե նույն պահուն գյուղը բնակչություն ունե՞ր թե ոչ, թափուր էր։

Արևամուտեն բավական առաջ հասանք Ճիհան գետի եզերքը, ուր էր նաև բավական մեծ գյուղ մը՝ շրջապատված ծառազարդ պարտեզներով։ Այս գյուղին մեջ ըստ սովորության գտանք մեկ քանի գետափնյա մեծ ախոռներ, և ասոնց մեջ տեղավորվեցանք ամենքս ալ։ Առիթեն օգտվելով գետափ փութացինք մաքրվելու և լվալու համար մեր կաշիացած ճերմակեղենները։ Բարեբախտաբար այս ախոռները՝ երկար ժամանակե ի վեր կենդանիներու այցելությունը ընդունած չըլլալով շոր էին, և գոհ էինք պատսպարված բնակարաններ գտնելնուս։ Այս ախոռները մեզի համար պալատներ էին. բավ էր, որ մեզ արտոնեին բնակելու մեջը։

Իթթիհատական թուրք կառավարությունը քաղաքներե և գյուղերե հավաքած էր ամեն տեսակ օգտակար և ընտանի կենդանիները ևս, և ձգած էր մարդոց պես միայն կաղ, կույր, քոսոտ և հիվանդ կենդանիները, ձի, էշ, կով, եզ, ոչխար, այծ, և այլն։

Մեր առջև պարզվող տեսարանը շատ ակնահաճո էր, որովհետև Ճիհան գետը Ալպիստանի լեռներեն բխելով, արագավազ հոսանքով մը կ'իջնար Կիլիկիո դաշտը մեր իջևանած գյուղեն քիչ հեռվեն, և կ'ըլլար իրական աղբյուրը Կիլիկիո դաշտի հռչակավոր արգասաբերության։

Գետը հորդած էր գարնան ձյունհալին պատճառով, ոռոգած էր գետափնյա բոլոր արտերն ու մարգագետինները։ Պղտոր

և տղմուտ հոսանքով և հորձանքով ի թավալ կու գար արգավանդ դաշտերու միջով դեպի Միջերկրական ծով։ Իր հետ լեռնային վայրերե բերած էր ծառի հաստարմատ կոճղներ և ճյուղեր, և կը սրբեր ու կը տաներ իր հետ ամեն ինչ, որ կը փորձեր արգելք ըլլալ իր հզոր հոսանքին ու ընթացքին։

Ա՜խ, եթե այս Ճիհունը[1] լեզու ունենար, ի՞նչ սարսռազդեցիկ ու աղեխարշ դեպքեր պիտի պատմեր մեզի Ադանայի 1909-ի կիլիկյան հայ եղեռնեն։ Երբ հազարավոր հոշոտված հայ նահատակներու մարմինները Ճիհուն և քույր գետը Սիհուն տարին անգաղտնապահորեն դեպի ծով։ Իսկ Փայասի առջև գեգերող եվրոպական մեծ ազգերու ռազմական նավերու սպաներն լուսանկարեցին պաղ արյամբ, իբր թե բնական տեսարան մըն էր, որ կը լուսանկարեին...

Քաղաքակիրթ և քրիստոնյա եվրոպական ազգերն, Կիլիկիո հայոց դեմ կատարված այս նոր նախճիրն լսեցին և լուսանկարեցին, և կարծեցին կատարած ըլլալ արդեն իրենց պարտականությունը։

Բավական հանգիստ գիշեր մը անցուցինք, և փոքրիկ հանգանակությամբ մը հաջողեցանք անգամ մը ևս մեկ-մեկ պատառով փոքր-ինչ ստամոքսներն խաբել տալ մեր կարոտ և ամենքեն ավելի թշվառ ընկերներուն։

Արևածագին հետ արդեն ամենքս ալ գետափն էինք և հերթի կը սպասեինք անցնիլ կարենալու համար լայնատարած և ծովացյալ Ճիհունը։ Այն նավակը, որով հանդիպակաց եզերքը պիտի անցնեինք, իսկապես լաստափայտ մըն էր՝ շինված ծառի տաշված գերաններե և ագուցված ճարտարորեն իրարու հետ, որ 6 մետր երկայնք և 4 մետր լայնք ուներ։ Չորս կողմեն պաշտպանված էր գերաններով, որով ջուրերը չէին կրնար ներս խուժել։ Իսկապես նախապատմական տապան մըն էր, որ արևելքի մեջ գործածելի է դեռևս բոլոր գետերու վրա։

Եվ որպեսզի այս լաստափայտը գետի զորավոր հոսանքեն չքշվեր, երկու հանդիպակաց եզերքները իրարու կապող մետաղյա հաստ մալուխի մը շնորհիվ կ'երթևեկեր, որուն ճախարակավոր հաստ պարանով մը կապված էր լաստանավը։

Ամեն անգամուն որովհետև հազիվ 15—20 հոգի կրնար բովանդակել, դժվարավ ամենքս մեկ ժամեն կրցանք գետի հանդիպակաց եզերքը անցնիլ։ Մանավանդ մեծ դժվարություն կրեցին ոստիկան զինվորներն անցընելու համար իրենց ձիերը։ Հազիվ վերջին խումբն ալ գետը անցած՝ հապճեպ քայլերով սկսանք կտրել դաշտի հարթ, բայց քարքարուտ ճամփան, արևամուտեն առաջ հասնիլ կարենալու համար Օսմանիյե։ Ջափազանց հոգնած և ծարավահյուծ ըլլալով, հանկարծ հանդիպեցանք ջրհորի մը, որուն վերև մեծ գերան մը կախված էր՝ երկաթյա շղթայե մը կապված փայտյա դույլով մը։ Թեպետ ուշ շմնալու համար ոստիկան զինվորներն չէին ուզեր մեզ թույլատրել, որ ջուր խմենք, սակայն կաչառքով կրցանք արտոնություն ձեռք բերել ջուր խմելու։ Ժամ մը պետք եղավ, մինչև որ ամենքս ալ կարգավ կրցանք մեզ այրող ծարավը հագեցնել, որ կիզիչ արևեն ա՜լ ավելի մտրակված էր։

Վերջապես արևամուտեն բավական վերջ հասանք Օսմանիյե։ Սակայն կառավարական պատասխանատու պաշտոնյաները ամենքն ալ իրենց տուները մեկնած ըլլալով, ոչ ոք ուզեց մեզմով զբաղիլ։ Ոստիկան զորքերու ենթասպա մը ի պատասխանի մեր հարցման՝ հայտնեց, որ կառավարական շենքին բակին մեջ պիտի գիշերեինք բացօթյա և քարերու վրա։ Ոչ ոք մեզմե համարձակեցավ գանգատիլ կամ դժգոհիլ. ընդհակառակը, գոհ կ'ուզեինք մեզ ցույց տալ, խորհելով, որ մեր հանդիպած ուրիշ քաղաքներու նման եթե մեզ ներս չընդունեին, ի՞նչ պիտի ընեինք այն ատեն։

Թեպետ քաղաքի մը մեջ կը գտնվեինք, բայց ոչ մեկ կերպով կրցանք օգտվիլ բացառաբար վայելած մեր այս պատվեն։ Ոչ թույլատրեցին որ հաց գնենք և ոչ ալ ո՛րևէ գնումի արտոնություն տվին, ըսելով, որ վաղը կը կշտանաք...։ Իսկ մենք 10 ժամե ի վեր ոչինչ կերած էինք, թող թե անկե առաջ ալ նախքան մեր վերջին իջևանած գյուղեն մեկնիլը՝ չորաբեկ հացի սև շերտեր կրծած էինք՝ առանց ուտելու ուրիշ բան ունենալու։

Օսմանիյե քաղաքը գտնվելով Կիլիկիո դաշտին ծայրագույն արևելյան կողմը, ուրկե կը սկսի Ամանոսի լեռնաշղթան, առաջին երկաթուղու կայարանն էր, որ կը հանդիպեինք Պոլսեն աքսորվելեն ի վեր։

Իբր աքսորական՝ Փոքր Ասիո խորերը ճիշտ տարիե մը ի վեր կը գեգերեինք սար ու ձոր, հեռու քաղաքակրթությունը

1 Թուրքերեն ՃԻՀԱՆ։

հիշեցնող ո՛րևէ հուսադրիչ նշույլ։ Պարզապես վայրենացած էինք, և երբ առաջին անգամ ըլլալով Բաղդադի երկաթուղու գերման գիծերն հասանք, փրկության նոր հույսեր ծնան մեր մեջ, և իրար կը շնորհավորեինք մինչև հոս ողջ հասնիլ կարենալնուս համար։

Բայց դժբախտաբար իզուր փրկության հույսեր սնուցինք. զի չկրցանք օգտվիլ դժբախտաբար մեզի ընծայված պատեհություններեն և դյուրություններեն։ Որովհետև բացի մեկ քանի ինծի նման հազվագյուտ բախտավորներեն, տառապանքի և անապատի մեր ուխտակիցներն գնացին ավելցնելու Ռեսուլայնի, Նիսիպինի և Տեր էլ Զորի ավազներն, անհետ կորսվելով առհավիտ։

## 31.

## ՕՍՄԱՆԻՅԵ — ՀԱՍԱՆՊԵՅԼԻ ԿԱՆԼԸ-ԿԵՉԻՏ

Ինչպես հիշեցինք Օսմանիյե Ամանոսի լեռնաշղթային արևմտյան դուռն է, ուրկե կը սկսին ամանոսյան փապուղիները։ Իսկ Ամանոսի արևելյան կողմի կենտրոն քաղաքն է Իսլահիյե, Օսմանիյեեն երեք ժամվան երկաթուղու ճամփա հեռու։ Օսմանիյե Ադանայեն միայն 4 ժամ հեռու է երկաթուղու գնացքով, իսկ կես ժամ Մամուրե կայարանեն, ուրկե կը սկսի իսկապես Ամանոսի փապուղիներու լեռնային վերելքը։

Քաղաքը կառավարչանիստ է (Մյութասարրֆություն) և 5 ժամ հեռու կը գտնվի կիլիկյան ծոցեն, այսինքն՝ Ալեքսանդրեթի ծոցեն։

Օսմանիյեի մեջ ևս կը բնակեին մեկ քանի հարյուր տուն հայեր, որոնք ամբողջապես տարագրված էին, ուստի ոչ մեկ հայ մնացած էր քաղաքը. մեր անցած միջոցին հայերու բոլոր տունները, խանութները, պարտեզները հանձնված էին Թուրք հին ու նոր գաղթականներու։ Հին Թուրք գաղթականները եկած էին Բալկանյան պատերազմեն վերջ այս կողմերը, պետական գաղտնի նպատակ ունենալով, հայությունը չեղոքացնել և բռնի իսլամական մեծամասնություն կազմել



տալ։ Իսկ նոր իսլամ գաղթականներն այն փախստականներն էին, որոնք ռուսական սահմանագլուխի հայկական նահանգներեն հեռացած էին լեղապատառ, չեթարկվելու համար հայ կամավորներու փոխ-վրեժխնդրության։ Ասոնք ալ իրենց փախուստին մեջ թողած էին ամեն դժվարատար կայք ու գույք, հետամուտ ըլլալով միայն իրենց կյանքը փրկելու։

Թշվառ խլյակներ էին, ենթակա համաճարակներու և անոթության։ Որովհետև Թուրք կառավարությունը իր ամբողջ ուշադրությունը տված ըլլալով պատերազմական գործողություններու, անկարող եղած էր զբաղելու Թուրք, քուրդ և այլ իսլամ փախստականներով, որոնք լքված էին իրենց ծյուրիչ բախտին։ Օրեօր կը կոտորակվեին ասոնք ալ հայերու նման, միայն սա տարբերությամբ, որ հայերը իթթիհատական Թուրք կառավարության բռնությանց ներքև բնաջինջ կ'ըլլային համատարած ջարդերով, իսկ իսլամ գաղթական ժողովուրդը ինքն իրեն կ'ոչնչանար։

Անքուն և հույժ չարաշուք գիշեր մը անցուցինք կառավարական շենքին բակին մեջ՝ սալահատակներուն վրա, և հաջորդ առավոտուն միայն արտոնություն ստացանք հաց գնելու։

Մեր մոտը չուլերու վրա նստած գտանք նաև կեսարացի վաթսունամյա և յոթանասունամյա 4 հայ պառավներ։ Ասոնք ձմռան ցուրտին ու բուքին աքսորի դատապարտված էին, որովհետև մերժած էին իսլամանալ մահը նախապատիվ համարելով։ Իսկ դրացի Թրքուհիները չհանդուրժելով, որ իրենց քրիստոնեական հավատքին վրա այսքան հաստատ մնացող և իսլամությունը մերժող հայ պառավներ աքսորե զերծ մնան, բռնազբոսիկ կերպով կռիվ մը ստեղծած էին, և ապա կառավարության ամբաստանած այս թշվառ հայ պառավները, թե մարգարեին և իսլամական կրոնին հայհոյեցին։ Իսլամներու կողմե միշտ պատրաստ պահված ամբաստանություն մը, որ առ ի չգոյե ո՛րևէ հանցանքի, Թուրքերը կամ Թրքուհիները պատրաստ են զրպարտելու և պատուհասելու իրենց քրիստոնյա, բայց մանավանդ հայ հակառակորդները։ Չէ՞ որ Թուրքիոմեջ առածի կարգ անցած է «տինիմէ սէոյտիւն», հավատքիս հայհոյեցիր առածը։

Այս հայ մամիկները հետիոտն ճամփա հանած էին Կեսարիայեն՝ և ճիշտ մեր ճամփով 40 օրեն բերած Օսմանիյե։ Կապպելի կիրճեն անցած ժամանակ թանձր ձյունի պատճառով

ստիպված են մնալ 2 շաբաթ զանազան գյուղերու մեջ, անկարող ելլալով ոչ թե քալել, այլ նույնիսկ շարժիլ։

Թուրք կառավարությունը պատիվ համարած էր շարշարել այս հայ պառավները, խնդալու համար թշվառ այս մամիկներուն տառապանքին վրա։

Այն ոստիկան զինվորները, որոնց հերթով հանձնված էին այս պառավները, որպեսզի տասն Տեր Հոր, գթալով ասոնց թշվառությանը վրա՝ իջևանած իրենց գյուղերուն մեջ թուրք գյուղացիներեն բռնի հաց հավաքելով տված էին, որ ուտեն այս հայ մամիկները։ Որովհետև ասոնք ոչ դրամ ունեին և ոչ հաց, ոչ կոշիկ ունեին և ոչ ալ ո՛րևէ գույք։ Այս 4 պառավներեն երկուքին ոտքը մերկ էր և փայտե սանդալներ (նալին) հագած էին։ Այս խեղճ հայ պառավները չկրնալով վերջապես տոկալ ճամփու տաժանքին, հիվանդացած էին, և գոկող ոստիկան զինվորներն թուրք գյուղացիներե բռնի էշեր ձեռք բերած էին ու աքսորի ճամփան տեղ-տեղ էշով փոխադրած էին։

Իսկ թե եթե այս 4 պառավները Կեսարիա մնացած ըլլան, օսմ. պետությունը փոքձանքի պիտի հանդիպեր և ասոնք ապստամբություն պիտի հանեին... Ահա թե թուրք սճրագործ կառավարությունը հայատյաց իր քաղաքականությունը և անգթությունը մինչև ո՛ւր հասցուց։

Այս հայ յոթանասունամյա չորս պառավները՝ կառավարական մեծ ու փոքր պաշտոնյաներուն ներկայության՝ այնպիսի սրտաբուխ անեծքներ կը կարդային թուրք պետության գլխուն, որ էն սկեպտիկներն իսկ իրենց չարագործության արժանի հատուցումը գտնելու երկյուղը պիտի կրեին։

Երբ թուրք կարևոր պաշտոնյաներ կառավարական շենքը ելևուտ կ'ընեին՝ անցնելով այս մամիկներուն առջևեն, ասոնք բարձրաձայն և առանց ակնառության, կեսարացի ըլլալուն թրքերեն լեզվով կ'ապտակեին արտասվախառն հեկեկանքով և կ'ըսեին. ինչպես որ մայրը ազչկեն, հայրը զավկեն, այրը կիներն և մեզ տուն-տեղ ըրին, Աստված ալ զիրենք բաժան-բաժան ընե... Ինչպես իրենք մեր տունը տեղը քանդեցին, իրենց ալ տունը տեղը քանդվի... «վերան» ըլլան, բուերը վայեն...

Քանի՛ «էյ ալլա՜հ, ալլա՜հ» կ'ապտակեին ազիզորոմ հառաչանքներով, թուրք պաշտոնյաները անձայն կը թողվին և



շտապ քայլերով կը հեռանային՝ առանց երեսնին իսկ նայելու, և ասոնք չէին համարձակեր զանոնք սաստելու։

Հայ մամիկները մանավանդ զայրացած էին տեսնելով մեր դժբախտ վիճակը, և տեղեկանալով, որ հեռու տեղե կու գանք, անիծելով կ'անիծեին, ըսելով, թե— քանի մը էրիկ մարդու դեռ ողջ մնալը շատ տեսեր են գարշելիները, ձեզ ալ ոչնչացնել կ'ուզեն...

Տեղվույն պահականոցի հրամանատարը, որ հակառակ կաջառք խոստանալուս՝ արգելք եղած էր քաղաքին մեջ գտնվող «խանի» մը մեջ իջևանելու, մեր մոտ գալով հրամայեց մեզի, որ պատրաստ ըլլանք մեկնելու։ Որովհետև գիշերը ուշ հասնելնուս՝ հնար չէր եղած պաշտոնական փոխանցման ձևակերպություններն լրացնելու, ուստի նախքան մեր մեկնումը կատարվեցավ։ Զույգ-զույգ կարգ կենալով մեր անունները կարդացված ատեն պաշտոնական ցանկին վրայեն, կը ձայնեինք, հաստատելու համար, թե ներկա էինք։ Երբ թուրք սպան տեսավ, թե ամբողջ ենք և ոչ ոք կը պակսի մեզմե, բացի Կազսելի մեջ փախչողեն ու սպանվածեն, դարձավ մեզ բերող ոստիկան զինվորներու «չավուշին» և հանձնման ընկալագիրը տված ատեն ըսավ. Ասոնք ամիսուկես է ճամփա կու գան և ի՞նչպես կ'ելլա, որ ասոնցմե պակսող (այսինքն սպանվող) չէ եղած...

Ապա մեզ Հասանպեյլի առաջնորդելու հատկացած ոստիկան զինվորներու ենթասպային դառնալով հրամայական շեշտով մը ըսավ.— եթե ասոնցմե մեկը համարձակի փախչիլ, իսկույն գնդակահարեցեք, մեղքը իմ վիզս... Նույնիսկ չթույլատրեցին, որ ճամփու համար հետերնիս քիչ մը հաց առնենք մեր դրամով շրջուն այն հացավաճառներեն, որ մեկնումի միջոցին կը դեգերեին մեր շուրջը։

Բայց Օսմանիյեեն մեկ ժամ հեռանալե հետո, երբ հասանք գետակին եզերքը, հոն կաջառք տալով շուտով համաձայնեցանք մեր պահակ զինվորներուն հետ, և մեկ ժամ ջրի ափին մնալով լվացվեցանք ու մաքրվեցանք, և ապա ճամփա ելանք դեպի Կանլը-կեչիտ։

Մեկ քանի ժամեն հասանք այ- սարսափելի հորջորումով մահաբույր վայրը, որուն իրավամբ Կանլը-կեչիտ կամ թարգմանաբար Արյան-անցք անունը տված են։ Կանլը-կեչիտ Օսմանիյե— Հասանպեյլի ճամփուն վրա՝ Ամանոսի լեռան

այն խոր ձորն է, ուրկէ կը սկսի լեռնային վերելքը դէպի Հայանպէյլի։

Կանլը-կէշիտ գտնվելով երկաթուղու գերման գծերու ստորոտը, որոնք մեկ ժամ հեռվեն կը սկսին բարձրանալ դէպի փապուղիները, շինության կենտրոնավայր մը եղած էր, ոչ միայն գերման գծերուն, այլև Իսլահիյե երկարող մեծ պողոտային, որը կը ծառայեր ամեն կարգի փոխադրության։ Որովհետև դեռ Ամանոսի փապուղիները բացված չըլլալով՝ Հալեպ անցնելիք միակ ճամփան այս Կանլը-կէշիտի պողոտան էր։ Գործավորական-զինվորական վաշտեր, մեծ մասամբ կազմված հայերե, օրն ի բուն չոր հացի մը փոխան կ'աշխատեին այս ճամփաները շինելու և նորոգելու. զի հարյուրավոր զինվորական օթոմոպիլներ այս ճամփով կ'երթևեկեին դէպի Իսլահիյե։ Իսկ Իսլահիյեեն արդեն երկաթուղին կը փոխադրեր 4 ժամեն Հալեպ։ Հայտար-փաշայեն մինչև Հալեպ երկարող Բաղդադի երկաթուղին միայն երկու տեղ կ'ընդհատվեր, առաջինը Տավրոս և երկրորդը Ամանոս լեռներու մեջ։ Իսկ այն ժամանակ այս լեռները ժամ առաջ ծակելով փապուղիներով երկաթուղին իրարու միացնելու հետամուտ էին գերմաններն, դյուրավ փոխադրել կարենալու համար զինվորական իրերը՝ ռազմամթերք, զենք, թնդանոթ և այլն դէպի Պաղեստինի և Միջագետքի ռազմական ճակատները։

Կանլը-կէշիտ իր բնական դիրքին շնորհիվ եղած էր փոխադրության իրական մեծ կենտրոն մը, նաև Տեր Զոր քշվող հարյուր հազարավոր հայ տարագիրներու արյունոտ անցք մը։ Մարդոց, կառքերու, ինքնաշարժերու և այլ ամեն կարգի փոխադրության հսկելու համար հոս փոքր բլուրի մը վրա կառուցված էր ոստիկան զորքերու պահականոց մը։ Իսկ երկթ. գերման ընկերությունը շինած էր մեծ փուռ մը՝ հաց հայթայթել կարենալու համար հարյուրավոր բանվորներու, որոնք գծին կամ զինվորական ճամփաներուն շինության մեջ կ'աշխատեին։

Կանլը-կէշիտ հայ տարագրության սև օրերուն ունեցավ իր ամենասոսկալի պատմությունը և այնպիսի մահասփյուռ հիշատակներ, որը հնար չէ հոս զանց ընել գոնե իր գլխավոր մանրամասնությամբը։

Կանլը-կէշիտեն անցան Էտիրնեի, Ռոտոսթոյի, Պիլեճիկի և Պրուսայի ու շրջակայից, ինչպես նաև Գոնիայի և Եփրատ-թուղու գծի երկայնքին բնակող և 1915-ին ամռան Տեր Զոր տարագրվող հարյուր-հազարավոր հայերու շարան-շարան քարավաններն դէպի հարավ։

Ասկե անցան նաև Կիլիկիո քաղաքներեն տարագրվող 200.000-ի հասնող ամբողջ հայությունը։

Նույն օրերուն հոն գտնվող ականատեսներ մեզի պատմեցին հայ աքսորական ժողովուրդին թշվառության այնպիսի եղերական և եղեռնական գրվագները, որոնց ի լուր պիտի փշաքաղվեին ամենաքար սրտերն իսկ։

Օ՜հ ո՜րևէ մարդկային գրչի հնար չէ կենդանի գույնով պատկերացնել ու պատմել կարենալ այն անլուր տառապանքն ու թշվառությունը տարագրյալ երկու սեռ հայ ժողովրդին, որոնք անցան գնացին Կանլը-կէշիտեն դէպի հարավի անապատները։ Եթե բոլոր ծովերն թանաք և բոլոր դաշտերն թուղթ ըլլային, դարձյալ անհնար էր իրականության համապատասխան մանրամասնություններով պատմել անհուն չարչարանքը հարյուր-հազարավոր հայերու, այր, կին, ծեր, տղա, հարս, աղջիկ մինչև անչափահաս մանուկներն ու անմեղ ծծկեր երեխաները, որոնք թափառական ու հալածական՝ շրջապատված ոճրագործ ոստիկան զինվորներու վայրագ ջոլիրներե հազարավոր կառքերով, սայլերով, գրաստներով, բայց ամենամեծ մաս մը ևս հետիոտն և նույնիսկ շատեր բոկոտն, աշնան չորցած հողմավար տերևներու նման անցան Ամանոսի այս միակ արյունոտ անցքեն ու գնացին Զորի անջրդի անապատները՝ մեռնելու համար առանց հացի, առանց ջուրի, առանց պատանքի և առանց գերեզմանի...

Այս արյունոտ կիրճեն, համաձայն երկաթուղու պաշտոնական բարձր անձերու գնահատման, անցած էին մեզմե առաջ ավելի քան ՁՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ հայեր, առանց սեռի և հասակի խտրության, երկաթուղիով կամ հետիոտն դէպի Սուրիա, Միջագետք, Ռեսուլայն, Նիսիպին կամ Տեր Զոր։

Այս հաշվեն դուրս է սակայն հայկական ներքին գավառներե՝ Կարինեն, Բաղեշեն, Վանա ծովի եզերքներեն, Երզնկայեն, Սեբաստիայեն, Խարբերդեն, Տիգրանակերտեն, Մալաթիայեն և այլ նահանգներե ու ներքին գավառներե դէպի հարավ տարագրված ժողովուրդը։

Ասոնց արուները հազիվ ճամփա հանված՝ կիներեն դա-

տելով անխնա կոտորվեցան և գետերը նետվեցան կամ ձորերու մեջ նետվեցան իբր կեր վայրի գազաններուն և երկնքի գիշակեր թռչուններուն։ Թարմագեղ և գեղանի հարսներն ու կույսերն առևանգվեցան լացող մայրերու գրկեն և թուրք հաբեմները տարվեցան, ենթարկելով մինչև տասնամյա անչափահաս աղջկնակներն արևելյան վայրագ ամեն անասանելի խենեղությանց։ Իսկ տարեց կիներն ու պառավներն, որոնք կրցան ողջ մնալ և տոկալ աքսորի ճամփու ահավոր տաժանքին, տարվեցան Տեր Զոր. ուր անխնա կոտորվեցան 1916-ի ամռան համատարած զեքիական ջարդին։ Տեր Զորի մյութասարիֆ Զեքիին ձեռամբ։

Հոս Կանլը-կեչիտի մեջ պատահաբար հանդիպեցանք պոլսեցի երկու հայ ազնիվ և անձնվեր երիտասարդ ենթասպաներու, որոնք Պոլսո երկրաչափական վարժարանեն շրջանավարտ, իբր «քոնտիքթոռ» սպա կը հսկեին գործավարական հայ վաշտի մը աշխատությունները։ Շինելով Կանլը-կեչիտ—Հասանպեյլի—Իսլահիյե լեռնային պողոտան։ Այս միակ ճամփան էր ամեն կարգի փոխադրությանց՝ դեռևս բացված չըլլալուն համար Ամանոսի լեռներու (Այրանի) փապուղիները։

Այս երկու հայ սպաները 1915-ի գարունեն ի վեր պաշտոնի կոչված ըլլալով Կանլը-կեչիտի այս շրջանին մեջ, ականատես կենդանի վկաներն էին եղած իրենց տարագիր ցեղին տառապանքին, որ երբեք արձանագրած ըլլար պատմությունը՝ մարդկային ցեղի տարագրությանց ամենաարյունոտ էջերուն մեջ իսկ։

Արցունքով ինծի պատմեցին, թե ինչպես 1915-ի աշնան, մանավանդ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներուն մեջ, երբ հայ ժողովրդի տարագրությունը հասած էր իր բարձրագույն թափին, շուրջ 80.000 երկսեռ հայ ժողովուրդ անկողնի սավանե և քուրչե վրաններու ներքև բանակ դրած է եղեր Կանլը-կեչիտի ձորին մոտակա դաշտը, մինչև տարածվելով Մամուրե երկթ. կայարանի առջև տարածվող ընդարձակ և ճախճախուտ դաշտը։ Տենդը և զանազան համաճարակներե արդեն օրական 600—700 հոգի կը մեռնի եղեր, երբ հանկարծ աշնանային երկարատև և գիշերային տեղատարափ անձրև մը կու գա լրացնել մարդ-գազաններու պակաս թողածը։ Թշվառ ժողովուրդը մեկ քանի օր կը մնա լճացյալ ջրերու մեջ։ Մյուս կողմե սաստիկ ցուրտ մը կու գա սառեցնել մինչև ոսկորները թրջած ու ցրտահար ժողովուրդը։ Ասոր վրա, առանց տունի, առանց զգեստի, առանց հացի մնացած դժբախտ ժողովուրդը, աշնան տերևաթափի նման կը սկսին հազարներով սառիլ կամ մեռնիլ թանչքե, փորհարությենե, արյունահոսությենե, և այլ մարդկային խճողումի հետևանք եղող բազմատեսակ համաճարակներե։ Մեռնողներուն անթաղ մարմիններով լեռնակույտեր կը գոյանան ու դաշտը կը ծածկվի։ Կը գտնվին շատ մը վրաններ, որոնց ներքև ապրող ամբողջ ընտանիքը սովահար և ցրտահար կը դիականան և թաղող չի գտնվիր։ Իսկ իրենց տարաբախտ ազգակիցներու մարմինները թաղելու խղճահար հայեր ևս բահ ու բրիլ չեն գտներ մեռյալները թաղելու համար։

Եվ ահա հանկարծ առավոտ մը՝ այս համատարած և աղեխարշ թշվառությունը իր գերագույն կատարելության հասցնելու համար, տարագրության քարավաններու վերատեսուչը (Սեքիաթ մյուտյուրը) հետը առած բազմաթիվ ոստիկաններ և հարյուրավոր ոստիկան զինվորներ մտրակներով և բիրերով կը շրջապատեն արդեն հոգեվարք խեղճ ժողովուրդը, և կը հրամայեն, որ անմիջապես ճամփա ելլե դեպի Իսլահիյե։

Մարդկորեն անհնար է երևակայել այն ողբն ու կոծն, աղաչանքն ու պաղատանքն և այն խուճապն, որ կը տիրե հազարավոր վրաններուն մեջն ու շուրջն։ Վրանները կը քակվին, իրենց հարստության վերջին բեկորն եղող դյուրատար գույքերն կամ կապոցներն ի մի կը հավաքվին, բայց ոչ սայլ կա, ոչ գրաստ, ոչ կառք։ Վայնասունը կը սկսի, շատեր չեն ուզեր թողուլ անխնամ ու անտեր իրենց գետնատարած հիվանդ կամ հոգեվարք սիրելիներն, ինչպես ասոնք ալ լեղապատառ կ'աղաչեն, որ չլքվին բաց դաշտին մեջ, ուր անպայման ողջ-ողջ կեր պիտի ըլլային գիշերաշրջիկ սովալլուկ գայլերու և դիակեր բորենիներու... Բայց երկար խորհելու ժամանակ չկար, վրա կը հասնին ոստիկան զինվորներն ու «սեքիաթի» մեծ ու փոքր արյունարբու պաշտոնյաները։ Ասոնք ոչ գութ, ոչ մարդկային ո՛րևէ զգացում ունեին. ծառերե կտրված հաստ ճյուղերով և մտրակներով կը սկսին աջ ու ձախ գանակոծել թշվառ և շվարած ժողովուրդը, փույթ չէ, թե ո՛ւր տեղի կը հանդիպի. աչքեր կը պայթին, գանգեր կը ջախջախվին, դեմքեր արյունվա կ'ըլլան, նոր-նոր վերքեր կը բացվին, որո՞ւն

հոգը, ո՞վ է խղճացողը, մի՞թե կատաղի վագրերե գթություն կը սպասվի։

Բազմաշարշար տարագիր ժողովուրդը, տեսնելով, որ մեկնելե ուրիշ ճար չկա, հազարավոր վրաններ կը սկսին ակնթարթի մը մեջ վար առնուլ, ծալլել և շալկած ճամփա ելլել, տեղվույն վրա թողլով քալելու անկարող իրենց հիվանդ կամ հոգեվարք սիրելիները։

Թշվառ հայ մայրեր անկարող հետերնին տանելու անսվաղութենեն, սաստիկ ցուրտեն և ճամփաներու տառապանքեն հիվանդացած, կիսամեռ կամ հոգեվարք իրենց անչափահաս զավակներն (2—6 տարեկան), կը ստիպվին իրենց ձեռքով տանիլ և նետել արդեն մեռածներու վրա... Ականատեսներ պատմեցին աբցունքով, թե հայ անմեղ հազարավոր մանուկներու դիակներով Կանլը-կեչիտի առջև 2 բլուրներ կը կազմվին, որոնց մեջ կը տեսնվին նաև բազմաթիվ մանուկներ, որոնք սակայն դեռ մեռած չեն և որոնց թաթիկները դեպի իրենց մայրերը կ'երկարին... Այս հյուծած և լքված հրեշտակներու դեռ չմեռած աչքերուն մեջ աղաչանքի և բողոքի նայվածքը կար իրենց մայրերուն և Աստուծուն դեմ... Իսկ ոմանց կիսամեռ շրթները դեռ վերջին անգամ մըն ալ կ'արտասանեին սրբազան բառը մա՜-րի՜ի՜կ...

Օ՜հ, իրենց որդեսիրությամբն գերության 5—6 դարեր ցեղին գոյությունը ապահովող հայ մայրեր ա՛լ չէին ուզեր ետև նայիլ, ուր թողած էին իրենց կեսամեռ մանուկներուն հետ և իրենց սիրտը։

Հնար չկար հետերնին առնելու, որովհետև քանի մը ժամ վերջ դարձյալ պիտի անշնչանային իրենց սրտի հատորները և չէ՞ որ ճամփուն վրա պիտի ձգեին երթային... Լավ էր, որ ամենքը նույն թշվառ և հալածական ազգին զավակները մեկտեղ ըլլային և մեկտեղ պառկեին դեզերով ու բլուրներ կազմեին. թերևս Աստված ու մարդիկ տեսնեին ու ա՛լ վերջապես գթային բավ համարելով անպատմելի տառապանքն աքսորական անբախտ հայ մայրերու... Մինչ այս լքված կիսամեռ մանուկներու տեղ իրենց գիրկը առած կը տանեին, մնացորդ զավակներեն ամենատկարը և սպառածը, մինչև որ լքումի կարգը ասոր ալ գար։

Արդյոք մարդկային միտքը պիտի կրնա՞ երևակայել անմեղ և հրեշտակային հազարավոր մանուկներե կազմված բարձր բլուրներ, և մայրեր՝ որ իրենց գիրկը առած իրենց սառած, հոգեվարք կամ կիսամեռ մանուկներր՝ անձամբ կ'երթային նետելու այս մանկական դիակներու վրա նորեր... և հեռանալու գլխիկոր ու կորաքամակ, աչքերնին ետին, սրտերնին արյունոտ և ցամքած, լեզվնին անեծքով դողդոջուն... «Աստուծմե գտնեն» կ'ըսեին ու կը քալեին դեպի առաջ։

Հազարավոր հայ մանուկներու հրեշտակային հոգիները կը բարձրանան երկինք, հայուն հինավուրց Աստուծուն պատմելու իրենց և իրենց սիրելի մայրերու անհուն թշվառությունը ու տառապանքը։

Կը հեռանան հայ աքսորականներու հալածական բոլոր այս քարավանները և կ'անհետանան Ամանոսի լեռներուն մեջ դեպի Հասանպեյլի և Քելլեր։ Կը տիրե համատարած խոր լռություն, կը հասնի գիշերը վրա, ապա կը լսվին ոռնոցներն և կաղկանձյունները սովալլուկ գայլերու և շնագայլերու ու աղվեսներու։ Այս գազանային ոռնոցներուն մեջեն երբեմն նաև կը լսվին մարած ճիչերն հոշոտվող մանուկներու... ա՜հ ասոնք դեռ չմեռածներն էին, և գազանները նախ տաք արյունն է, որ կը փնտրեն, և արյան իրենց խնջույքն հեգ կիսամեռներեն սկսած էին. որովհետև չէ՞ որ գառնուկի հոտ ու համ կու գար ասոնցմե...։ Այո՜, մարդկային գառնուկներ զոհաբերված հայ ազգի փրկության ողջակեզի սեղանին վրա...

Այս անգամ երկոտանի գազաններեն վերջ կարգը եկած էր չորքոտանի գազաններուն... առաջիններուն պակասը լեցնելու համար։

Հավիտենական արդարության ժամը հնչեց օր մը, թեպետ ուշ, բայց վերջապես հուսկ ուրեմն... դարավերջիկ թուրք մարդ—հրեշները չէին ուզած հավատալ, թե իրավունքը և արդարությունը կը խաչվեր, սակայն չէր մեռներ... և կը պատուհասեր անխնա ամեն անոնք, որոնք զինք խաչը հանած էին։

Նույն հայ երիտասարդ սպանները պատմեցին ուրիշ նո՛ւյնքան ահավոր դրվագներ Կանլը-կեչիտի 1915-ի աշնան սև օրերեն։

Ամեն կողմե Հալեպի վրայով Տեր Զոր երթալու համար հազարավոր աքսորական հայերու քարավանները կը հասնեին հետզհետե Կանլը-կեչիտ։ Բայց տարագրության քաղաքային և զինվորական բարձր պաշտոնյաներն կ'արգիլեն ճամփու շարունակությունը, որպեսզի տասնյակ հազարավոր հայերու

խճողումով առաջ գալիք քաոսային բնական վիճակեն կարողանան օգտվիլ իրենք։

Երբ այսպես աքսորականներու վրանները հետզհետե կը ստվարանան հարյուրներով և հազարներով, Թուրք քաղաքային և զինվորական մեծ ու փոքր պաշտոնյաներն, ոստիկան զինվորներն և ամեն կողմե հավարի եկած ավազակներ կը սկսին գիշերները հարձակիլ և կողոպտել անբախտ ժողովուրդը։

Իսկ Թուրք մեծ պաշտոնյաները ցորեկները վրաններու խիտ շարքերու մեջեն խուզարկու աչքերով անցած ատեն, իրենց աչքին հանդիպած հայ գեղեցիկ աղջիկներու վրանները նշան գնելով՝ գիշերը կը հարձակին և կ'առևանգեն այդ անմեղ կույսերը՝ տանելու իրենց հետ։

Եվ ահա հանկարծ կը բարձրանա նույն վրանին մեջեն վայնասունը, ամենքը օգնություն կը պոռան, աղջիկը լեղապատառ մազերեն քաշկոտվելով դուրս կը քաշվի վրաններն, մայրը փարած իր զավկին չի Թողուր. հրացանի կոթի հարվածմը և մայրը զգայազուրկ գետին կ'իյնա...։ Մոտակա վրաններեն օգնություն աղաղակող ճիչերեն դուրս կը խուժեն հայ երիտասարդներ... կը վազեն առևանգող ոճրագործներու վրա, պաշտպանելու համար իրենց ցեղին պատիվը։ Գիտեն Թե վտանգը իրենց ալ կը սպառնա, բայց այլայլմե եղած և անմեղ քույր մը փրկելու համար շատ բարակը չեն ուզեր խորհիլ։ Կը խոյանան խոլաբար ազատելու իրենց անմեղ քաշկոտվող քույրը, և ահա գնդակի հարված մը՝ և գետին ինկած է առաջին խոյացող հայ երիտասարդը գլխեն վիրավոր...

Իսկ Թուրք պաշտոնյաները գիշերվան մթութենեն օգտվելով՝ կույսը խլած կը տանին ձորի մը մեջ իրենց գազանական կիրքը հագեցնելու համար խենեշաբար, և հաճախ ևս հավաքաբար, մինչև որ անշնչանա մարմինը և կտոր-կտոր ընելով նետեն ապառաժներու ներքև։

Այս պատճառով գեղեցիկ աղջիկներ ունեցող մայրեր իրենց վրանը միշտ կը զարնեն եղեր վրաններու անտառին մեջտեղերը, որպեսզի ըստ կարելվույն հավանական հարձակումե մը զերծ մնան։

Կանլը-կեչիտ-Հասանպեյլի երկարող ճամփուն աջ կողմը գտնվող զինվորական փայտյա տաղավարներեն (պառաք) մեկին մեջ, քով-քովի նստած հայ ազնիվ և հայրենասեր այս երկու երիտասարդներուն հետ կու լայինք ու իրարու կը պատմեինք մեր տեսածներն ու լսածներն և դրվագներն հայ ահավոր մարտիրոսագրության։ Քանի իրարմե կը տեղեկանայինք սարսափելի այս եղերական և եղեռնական ողբերգությանց մանրամասնություններուն, ա՛յնքան կը մրրկեին մեր հոգիները, վրեժի բոցավառ հրդեհ մը կ'այրեր մեզ, կը սպառեր մեզ... բայց իզուր...

Այս անձնազոհ հայ երկու սպաները կ'աղաչեին, որ զոնե նս փախչիմ և հոգիս ազատեմ. կը խոստանային ամեն դյուրություն տալ ինծի և անձամբ առաջնորդել զիս ապահով տեղ մը։ Կը համոզեին զիս, Թե քանի որ ես գերմաներեն գիտեմ, արդեն փրկությանս գործը կրնամ ապահովված համարել։ Թե գերման երկրաչափներն միայն ½ ժամ հեռու են իրենցմե. Թե գերմաներեն գիտցող հայեր կը փնտրեն իբր Թարգման գործածելու համար։ Թե մեկ մը, որ ես զիս գերմաններու մոտ նեռեմ, այլևս ոչ ոք չի կրնար առնել։

Բայց իզուր կ'ուզեին համոզել զիս. որովհետև միակ փափագս էր իմ տառապանքի ընկերներս ալ հետս ազատել կամ միասին փախչիլ։ Մանավանդ Սիսեն մեր Այրան ղրկած Թուրքը պիտի գար դիմավորել հաջորդ օրն իսկ Քելլերի առջև։ Ուստի չէի ուզեր միայն անձս խորհելով ոտնակոխ ընել այն բոլոր բարոյական կապերն, որոնք Թեպետ սև օրերու հիշատակներ էին, սակայն ճիշտ ասոր համար ա՛լ ավելի նվիրական էին, քան բարի օրերու բոլոր հիշատակները։

Միշտ կը ջանային զիս համոզել, որ իմ հետս եղող հարյուրե ավելի տառապանքի ընկերներս հալած, սպառած, լմնցած էին արդեն մեծ մասամբ, Թե ասոնցմե ազգին ալ խեր չկար, Թե վաղվան հայությունը պետք ուներ հայ մտավորականներու և շինարար բազուկներու։

Վերջապես տեսնելով, որ անդրդվելի կը մնամ իմ համոզումներուս մեջ, որոնք այլևս հավատո հանգանակ եղած էին մեջս, համաձայնեցանք, որ Ամանոսի երկթ. գծի գերմ. երկրաչափներու պետ Մորֆին գերմաներեն նամակ մը գրեմ, և իրենցմե մեկը հանձն առավ ձիով անձամբ գիշերով իսկ տանիլ և անպատճառ պատասխան բերել Հասանպեյլի։

Երբ այս գերմաներեն նամակն գրելու զբաղած էի, հանկարծ ներս մտավ Կանլը-կեչիտի ոստիկան զինվորներու Թուրք սպան և բարև տվավ։ Ա՛լ պետք է երևակայել այն սարսափը, երբ լսեցի Թուրք սպային ողջույնի ձայնը՝ ճիշտ ա՛յն պա-

հուն, մինչ գրիչը ձեռքս փախուստի գերմաններեն նամակը կը գրեի ու լրացնելու վրա էի։

Անմիջապես թուղթը անհայտացուցի ծունկերուս մեջ, և ահուդողով դարձա հասկնալու այս անակնկալ այցելության պատճառը։ Զարմացած էինք, թե մենք երեքս, որ ա՛յնքան զգուշական միջոցներով եկած այս խուցը մտած էինք, ի՞նչպես մեր հետքը գտած էր այս սպան։ Բայց բարեբախտաբար մեր հուզումը և երկյուղը երկար չտևեց, ոչ թե մեր հեռացումեն զայրացած եկած էր մեզ ձերբակալելու, այլ աղաչանքի եկած էր։

Կանլը-կեչիտի մեջ երկաթուղու գծի բանվորներու հույն պետը, Կանլը-կեչիտէն անցնող աքսորական հայ ընտանիքի մը գեղեցիկ մեկ աղջիկը տեսնելով և սիրահարելով, նյութական և բարոյական ամեն զոհողություն ընելով՝ ազատած էր թե՛ աղջիկն և թե՛ ամբողջ ընտանիքը հայր, մայր և 2 փոքր եղբայրներն և իր մոտ վար դրած էր, շնորհիվ Կանլը-կեչիտի ոստիկան զինվորներու սույն սպային միջամտությանը։ Այժմ նույն հույնը լսելով, որ նոր ժամանած մեծ քարավանին մեջ մեկ «տեսփոթ» և մեկ քահանա կա, դիմած էր թուրք սպային, խնդրելով, որ իր ազդեցությամբը զիս համոզե, որպեսզի պսակեմ զինքը իր սիրած հայ աղջկանը հետ։

Թուրք սպան երբ քաղաքավարությամբ խնդրեց, որ այս պսակը կատարեմ անձամբ, մեծ ուրախությամբ ընդունեցի եղած առաջարկը, որով երկյուղս և կասկածներս ալ անմիջապես ինքնին փարատեցան։

Նույն գիշերը իսկ թուրք ոստիկան զինվորներու և հայ երկու սպաներուն հետ գնացինք հույն գործավորապետին տունը, և ստուգեցի հայ ծնողացմե և հայ աղջիկեն թե սիրահոժար կ'ուզեն այդ պսակի կատարումը, որովհետև զիրենք աքսորե փրկած էր և երախտապարտ էին իրենց հույն փեսային։ Անմիջապես ողբացյալ Տ. Հուսիկ քահանա Քաջունին ևս հրավիրելով՝ պսակը կատարեցինք առանց Մաշտոցի, որ չունեինք, միայն գլխավոր աղոթքները վերիվերո հիշելով և ըսելով։ Ապա հյուրասիրվեցանք և անկյուն մը քաշվելով սկսա լրացնել գերմաներեն նամակս։ Հայ երկու սպաներեն երիտասարդը ձի նստելով անմիջապես ճամփա ելավ, տանելով նամակս Այրան, որ միայն 4 ժամ հեռու էր մեր գտնված վայրեն։

Աքսորական խեղճ ժողովուրդը տեղ չգտնվելուն պատճառով դուրսը բացօթյա գիշերել ստիպված էր քարերու վրա և իրարու մոտ խարույկներ վառած, որովհետև սաստիկ ցուրտ էր ձորի մը մեջ գտնվելնուս պատճառով։

Առավոտը արևածագին Կանլը-կեչիտեն դեռ չմեկնած, կամուրջին վրա հանդիպեցանք գերման ինքնաշարժ բեռնակառքերու, որոնք Հալեպեն եկած էին։ Այս առաջին գերման սպաներ էին, որոնց հանդիպեցանք։ Արդ զոհացում տալու համար մեր դժբախտ ժողովուրդի միահամուռ խնդրանքին, մոտեցա զինվորական առաջին «ինքնաշարժին» գերման սպային, որ հազարապետ մըն էր և ըսի գերմաներեն, թե հեռու տեղե կու գանք, ամիսուկես է ճամփա կը քալենք, շատ տառապանքներ կրեցինք, ա՛լ տոկալու կարողություն չմնաց մեր վրա, և ուտելու չոր հաց իսկ չունինք ճամփա քալել կարենալու համար. ուստի խնդրեցի, որ միջամտե և մեզի հաճի զորձ հայթայթել գերմ. երկաթուղային գծերու վրա։

Զինվորականը անկարեկիր կոշտ շեշտով մը ըսավ ինծի, որ ինք ոչինչ չի կրնար ընել. և ցույց տալով իր ետև գտնվող ինքնաշարժը, հանձնարարեց, որ այդ երկրորդ ինքնաշարժին մեջ գտնվող անձեն օգնություն և գթություն հայցեմ։

Երբ հուսահատ երկրորդ ինքնաշարժին առջև գնացի և վարագույրը վեր առի, ներսը նստած գտա թուրք փաշա մը... ու սարսափած ետ քաշվեցա... Ես գերման սպային դիմելով օգնություն խնդրած էի և գերման հազարապետը զիս մեր դահիճներուն կը ղրկեր, որպեսզի մեզի կարեկցին...

Տառապանքի ընկերներս, որ ետևս կանգնած էին և իրենց կենդանի նահատակությամբն, այսինքն հալումաշ զգեստներով և դեմքերով գթություն կը հայցեին, երբ տեսան գերման սպային սառնասրտությունն զայրացած անեծք թափելով գլխուն հեռացան իսկույն՝ խորապես համոզված, թե գերմանն ևս նվազ դաժան և անգութ չէր քան թուրքը, և թե երկու զինակիցներն արդարև իրար կ'արժեին... և իրար կը լրացնեին...

Նույնիսկ ուրիշ գերման ենթասպայե մը խնդրեցինք, որ մեզի թույլտվություն ընեն գերման փուռեն հաց գնելու մեր դրամովը, բայց մեզ արգիլվեցավ հաց ալ գնել։ Նույնիսկ գերման ենթասպան մտրակով եկավ փուռին առջևեն վանելու մեր այն ընկերները, որոնք դրամը ձեռքերնին հաց գնելու համար հավաքված էին փուռին առջև, պոռալով, թե միայն գերման վարչության ներքև գտնվող անձերու կը տրվի այդ փու-

ռեն հաց, որոնց այլուրը սակայն մեր դաշտերու ցորենեն պատրաստված էր անշուշտ...

Ամեն անոնք, որոնք ականատես եղած էին Կանլը-կեչիտեն անցնող կես միլիոնե քիչ պակաս հայության թշվառ այդ կացության, նախքան մեր մեկնումը գլխու հուսահատ շարժումով մը կ'ըսեին ինծի.— հայը սուրբ ա՛լ հայության խերը տես. այս անգամ մտքե չանցած այնպիսի գործ մը կատարեցին հայ ազգի դարևոր թուրք թշնամիները, որ ստուգիվ լմընցանք... ա՛լ դեղի համար հայ փնտրես չես կրնար գտնել։ Անապատները գնացողները ևս անոթի պիտի կորսվին. ա՞խ ինչո՞ւ ազգին մեծերը չկռահեցին, և միջոցներ ձեռք չառին... ափսո՞ս, ալ հիմա շատ ուշ է, ո՞վ մնաց, որ ի՞նչ պիտի կրնանք ընել ասկե վերջ... Զեյթունն ալ փչացավ, միայն Վանը, Շապին-Գարահիսարն ու Ուրֆան կրցան իրենց հերոսական դիմադրությամբ փրկել հայության պատիվը...

Արյունոտ անցք կոչված այս ահավոր գժոխավայրեն մեկենցանք վերջապես, մեկ կողմեն ականատեսներե մեր լսած դարաստիճի պատմություններեն հուսաբեկ, մյուս կողմե սակայն՝ մոտալուտ փախուստով ձեռք բերվելիք փրկությամբ հուսալից և ոգևորված։

Մահվան ուխտավորներուս սև քարավանը կը բարձրանար դանգաղորեն դեպի լեռնային ոլորապտույտ ճամփաներով Հասանպեյլի։ Արդեն մտած էինք Ամանոս կամ տեղական անվամբ «Կյավուր տաղի» կոչված լեռներուն մեջ։ Որովհետև Ադանայեն դեպի Հալեպ տանող միակ ճամփան այս էր. այս պատճառով մեծ խնամք տարված և ընդարձակ նորաշեն պողոտա մը շինված էր, ձեռամբ հայ գործավորական գումարտակի զինվորներու։ Ասոնք օրը 10 ժամվան չարաչար աշխատանքի փոխարեն կը ստանային միայն շոր և սև հաց մը՝ առանց նույնիսկ ապուրի «Ալման չորպասը»։ Իսկ հիվանդացած պարագային մահը կը սպասեր իրենց, որովհետև ոչ մեկ խնամք կ'ըլլար այս թշվառներուն համար. ոչ բժիշկ ունեին և ոչ դեղ. արդեն միշտ իրենց կը հիշվի եղեր վերահսկող թուրք սպաներու կողմե, թե փառք տվեք Աստուծո, որ այս կողմերը իբր «ամենե թապուրի» զինվոր գտնվելնուդ համար ողջ մնացած եք և ձրի կ'ապրիք, ալ ի՞նչ կ'ուզեք...

Վերահաս փախուստի մը հուսալի փրկությունը ոգևորած էր ամենքս ալ, բայց մանավանդ մեր գեռահաս երիտասարդները։ Ասոնք թեպետ մեծ մասամբ հյուծած էին երկար և հետիոտն տաժանելի ճամփորդության մը շարչարանքներեն, բայց կը հուսային դեռ ապրիլ և տեսնել այն երջանիկ գալիք օրերը, որը տեսնել ուզեցին անցնող բոլոր հայ սերունդները հինգ դարեր երկար, և ավաղ չտեսած մեռան ու գնացին։ Անապատներու այս ուխտավոր երիտասարդները, հեգնելով կյանքի ցարդ կրած բոլոր դառնություններն՝ կը քալեին ու կ'երգեին.

— Կրռունկ, ուստի՞ կու գաս, ծառա եմ ձայնիդ,
Կրռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս.
Մի վազեր, երամիդ շուտով կը հասնիս.
Կրռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս։
Թողեր ու եկեր եմ մյուլքերս ու այգիս...
Քանի ա՞խ կ'անեմ, կու քաղվի հոգիս։
Կրռունկ, սահ մը կեցիր ձենիկդ է հոգիս,
Կրռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս։
Սրտերնիս կամեցավ ելանք գնացանք,
Այս սուտ ատնվորիս դարդերն իմացանք
Ադուհացկեր մարդկանց կարոտ մնացանք,
Կրռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս։
Աստված, քեզմե կ'ուզեմ մուրվեթ ու քերեմ.
Ղարիպին սիրտն է խոց ճիկերն է վերեմ,
Եմած ջուրն է լեղի, հացը հարեմ,
Կրռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս։
Այրիլս չեմ հոգար, զարիպ կը մեռնիմ...
Կրռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս...

Արդյոք հայրենաբաղձ հայ զգայուն բանաստեղծը այս տողերը գրած ատեն մտքովն իսկ անցուցած էր, թե սև ու արյունոտ այնպիսի գժոխային օրեր պիտի գային, երբ ամբողջ հայությունը զարիպ պիտի մեռներ Տեր Զորի արևակեզ անապատներուն մեջ, առանց հացի, առանց ջուրի և առանց գերեզմանի...

Եվ մենք սև քարավանին մնայուն բոլոր անդամներս, վրեժի ու վշտի կրակով լեցուն մեր սրտերուն խորեն և լացող զգայուն շեշտերով կը կրկնեինք. Այրիլս չեմ հոգար, զարիպ կը մեռնիմ... կրռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս։

Կը քալենիք ու կ'երգեինք, կու լայինք և կը բարձրանայինք դեպի Հասանպեյլիի անտառապատ սարերն. մինչև որ հուսկ ուրեմն տակավ երևցան Հասանպեյլիի վերև բարձրացող բլուրին վրա կառուցված և ապա Ադանայի նախկին կուսակալ Ճեմալ փաշային (ապա ծովային նախարար և վերին հրամա-

նատար Եգիպտոսի դեմ գործող թուրք բանակին) քանդված, հայոց եկեղեցիին ավերակներն և ցցված պատերն իբր կենդանի վկա թուրք աղաղակող անարդարության։

Հետզհետե սկսանք տեսնել Հասանպեյլիի երկհարկանի տուներն ու շուկան և հասանք վերջապես քաղաք։

## 32.

## ՀԱՍԱՆՊԵՅԼԻ — ԻՍԼԱՀԻՅԵ ՀԱՅԻՆ ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Հասանպեյլի՝ Ամանոսի լեռնաշղթային բարձրության մեջ թաղված, ամբողջովին հայաբնակ լեռնային քաղաք մըն է։

Այս գյուղաքաղաքը ըլլալով գայմագամանիստ, իր շրջակայքի բազմաթիվ հայ և թուրք գյուղերով միշտ եղած է կարևոր կենտրոն մը։ Մանավանդ այս շրջանակի հայերը միշտ եղած են քաջարի լեռնականներ, և ըմբոստ տարր մը ընդդեմ թուրք բռնակալ կառավարության։ Հասանպեյլի շրջապատված ըլլալով անտառապատ սարերով և ունենալով առողջարար կլիմա ու սառնորակ աղբյուրներ, եղած է զորավոր կենտրոն մը հայության համար։ Որ կրցած է և գիտցած է բարձր պահել պատիվը հայ ցեղին, և դյուրավ ոտից կոխան ընելու իր վրա խուժող թուրք ոճրածարավ հորդաներուն։

Մինչդեռ համաշխարհային պատերազմեն առաջ՝ ավելի քան 800 տուն հայ բնակչություն ունեցած էր, մեր անցած ժամանակ 1916-ին՝ միայն 49 տուն հայ մնացած էր։ Ասոնք ամենքն ալ արհեստավոր ըլլալուն շնորհիվ միայն բացառիկ բախտ ունեցած էին քաղաքը մնալու։ Ըլլալով երկաթագործ, ոստահնանկ, կահագործ, կառագործ, հյուսն, համեստագործ, պայտագործ, ամենքն ալ կ'աշխատեին զինվորական վարչության աշխատանոցներուն մեջ լանակի պետքերուն համար։ Ասոնց ամբողջ թիվը մեր քաղաքի տեղեկությանց համաձայն՝ հազիվ 165 հոգի կը հասներ այն ատեն, եթե ոչ ավելի։

Երբ մեր քարավանը հասավ Հասանպեյլի, մտանք այն մեծ պողոտայի (շոսե) երկու կողմը գտնվող զանազան ապրանքներ ծախող խանութներու շարքի մը մեջ, որը Հասանպեյլիի միակ շուկան էր։



Կանլը-կեչիտեն ճամփա ելլելե ի վեր 6—7 ժամ է կը քալեինք և չափազանց անոթի էինք։ Որովհետև մեր մեկնումի ատեն արդեն չթույլատրվեցանք հաց գնելու, իսկ ճամփան ոչ մեկ գյուղի կամ կայանի հանդիպեցանք, ուր կարողանայինք հաց ճարել մեր ամենքին համար։

Մեր անցած ճամփուն վրա հասանք հացի փուռի[1] մը առջև, և ամենքս ալ խուժեցինք մոտը մեր դրամով հաց գնելու համար։ Սակայն իսկույն մեր վրա հարձակեցան մեր պահակ ոստիկան զինվորներն և պոռալով արգելյալ է «եասագտըր» մտրակներով մեզ վանեցին փուռին առջևեն։

Կաթիլներ կան, որոնք բաժակը կը հորդեն. ստուգիվ ա՛լ անկարելի եղավ հանդուրժել այսքան խստության, անգթության և տառապանքի։ Անոթի էինք, սովը կը տանջեր, կը գալարեր մեր դատարկ ստամոքսներն ու աղիքներն. հացը կը տեսնեինք և չէինք թույլատրվեր, որ մեր դրամով գոնե գնենք։

Մտրակներով մեզ սկսան բռնի վարել առաջ, հացին հոտը կ'առնեինք, ա՜խ ա՜յնքան անույշ էր ո՜րքան անուշահոտ չպիտի թվեին մեզի նույն պահուն աշխարհի բոլոր հոտավետ յուղերն ու անուշահոտություններն, բայց արգիլված էր մեզի մոտենալ փուռին պատառ մը հաց գնելու։ Բռնադատյալ առաջ կը քալեինք, բայց մեր աչքերն ետև կը մնային, ուրկե կու գար հացին անուշահոտությունը... Մեր մաշած հոգիները թեպետ տարիե մը ի վեր շատ տառապանք ու տաժանք կրած էին, բայց այն սիրտմաշուքը, որ կրեցինք պատառ մը հացի համար, չափը անցուցած էր։ Այո՜, շատ երկար օրեր անոթի անցուցած էինք միայն չոր և սև անծամելի և անմարսելի հացի շերտ մը ջանալով կլլել։ Սակայն մենք մեզ լռեցուցած էինք ու մխիթարած ըսելով կամ խորհելով, որ հաց չկա մեջտեղ, որ գնենք. ճար չկար, համբերելե զատ ոչինչ կրնայինք ընել և հուսալով կը սպասեինք... Իսկ այժմ հացին անույշ հոտը վայրաբար կը գրգռեր մեր ախորժակը՝ արթնցնելով մեր մեջ դեռ ներքին մոխիրներու մեջ թաղված՝ ապրելու հոգնած ու մաշած սերը. կը տեսնեինք մանավանդ հացը, բայց արգիլված էինք մոտենալ։

Մեզմե շատեր՝ կմախացած ծերունիներ և պատանիներ ա՛լ չկրնակով տոկալ այսքան տառապանքի, կու լային դառնորեն

[1] Թուրք զինվորական փուռ մըն էր։

ու կ'քսեին՝ մեռնիլը հազար անգամ լավ է, քան ասանկ ապրիլը. ա՜խ, ե՞րբ պիտի մեռնեինք և ազատեինք այս բոլոր շան տանջանքներեն...

Մեր Թուրք մը մոտեցավ մտրակով մեզմե ծերուկ մը ծեծող ոստիկան չարասիրտ և անգութ զինվորի մը և ըսավ նույն պահուն.— Աստուծմե չվախցողներ, ասոնք արդեն լմնցած են, պատառ մը հա՞ց ալ չեք ձգեր, որ իրենց դրամով գնեն և ուտեն. Թողուցեք պատառ մը հաց ուտեն... այս մեր ըրածները մեզի չպիտի մնան, բայց ոդջ մնացողը պիտի տեսնե ու քաշե...

Հարյուր հազարեն մեկ Թուրք մը ևս ահավասիկ, որ կը գթար մեր վրա...

Երբ բռնադատված՝ ամբողջ շուկան անցանք առանց բան մը գնել արտոնվելու և քաղաքին վերի ծայրը հասանք, հանդիպեցանք «ամելե Թապուրի» գործավոր հայ զինվորներու Առանք Պոլսեն էին մեծ մասամբ և կ'աշխատեին ճամփանեղու վրա, և անձրևե փլփլած տեղերը նորոգելու զբաղած էին։

Առնցմե մեկ քանին ճանչցան զիս, և մեկը Պալաթի Թաղեն, որը դպրաց դասեն ըլլալուն՝ իր Պալաթի քարոզիչ Հաճախ տեսնելու առիթ ունեցած էի, ինկավ վրաս լալով և Համբուրելով ձեռքերս՝ կ'ըսեր փղձկված. հայր սուրբ, այս ի՞նչ օրերու ինկանք. քեզ ալ պիտի տեսնեի՜ օր մը այսպես ցնցոտիներու մեջ՝ առանց կոշիկի և առանց մարդկային կերպարանքի... վա՜խ, վա՜խ, վա՜խ, ա՛լ լմնցանք, նայե, որ փախչիս... չըլլա, որ Տեր Զոր երթաս, այն ատեն երբեք փրկություն մի՛ հուսար... այնտեղ եղողներն ալ պիտի շարդվին կ'ըսվի... ի սեր Աստուծո, փախեք ազատեցեք... միակ փրկությունը փախչիլն է... երկաթուղու գծերը քիչ հեռու են, անգամ մը, որ դուք ձեզ հոն նետեք, ա՛լ փրկված եք մի՛ վախնաք...

Թեպետ Կեսարիայեն ի վեր ես ալ ստիպված ըլլալով Հետիոտն քալելու, այլևս մարդկային արտաքին շնորհք վրաս մնացած չէր, և կոշիկս կազմալուծված ըլլալով, մատներս դուրսն էին... և եկեղեցականի էնթերիս ու վերարկուս պատառոտված էր. սակայն ինքն ալ իր ընկերներուն նման նվազ անմխիթար վիճակի մեջ չէր։

Հակառակ զինվոր անունը ունենալուն և զինվորական ծառայության մեջ ըլլալուն՝ ոչ մեկը զինվորի համազգեստ ուներ։ Այլ իրենց քաղաքային զգեստներով կ'աշխատեին, որոնք արդեն հնամաշ պատառ-պատառ եղած էին... և բզկտված կտորներն վար կախված էին, զի թել ու ասեղ չունեին, որ կարեին թշվառները։ Օրական 10—12 ժամ կ'աշխատեին ցուրտին, ձյունին, անձրևին և քամիին մեջ, և միայն 250 գրամ հաց մը կը տրվեր յուրաքանչյուրին իբր առօրյա միակ սնունդ։ Եթե հիվանդ իյնային, արդեն մեռած օրերնին էր. որովհետև ոչ բժիշկ ունեին և ոչ դեղ, ոչ պատսպարված բնակարաններ ունեին, և ոչ կանոնավոր սնունդ։

Հայ գործավորական զինվորներու բնակարանները մարգագետիններու վրա զարնված մեկ քանի հոգինոց զինվորական սրածայր վրաններ էին, որոնցմե շատեր պատռտած էին և անձրևն ու ցուրտն ներս կը թափանցեին։ Սակայն գժգոհ չէին իրենց վիճակեն, որովհետև գոնե զիրենք ոդջ ձգելու բացառիկ շնորհն բրած էին...։ Մինչ իրենց ընկերներն, այսինքն ներքին գավառներու մեջ Կեսարիա, Պողազլյան, Յոզգատ, Էնկուրի գտնվող հայ զինվորներն սպանված էին շարաշար մահերով, նույնիսկ Թուրք ընկերներու կողմեն...

Վայրկյանեվայրկյան քանակցությանց ելքին կը սպասեինք քաղաքին մեջ հարմար տեղ մը իջևանելու համար, հանկարծ ոստիկան մեր պահակ զինվորներու տասնապետն եկավ մեզի հրամայելու իր ստացած պատվերին համաձայն, որպեսզի քաբավանը շարունակե իր ճամփան։

Ա՛լ անկարելի եղավ հանդուրժել այսքան չարչարանքի. և ամենքս ալ ըմբոստացանք և ինչպես Հաճընի առջև փորձեցինք ընել, հոս ալ չուզեցինք առաջ քալել և ընդդիմացանք հեռանալ քաղաքեն։ Անոթի, ծարավ, գիշերը վրա կը հասներ և մեզի կը զլացվեր գոնե կենդանիներու ախոռ մը, ուր գլուխնիս կարող ըլլայինք հանգչեցնել գեթ կենդանիներու աղբյուններու վրա...։ Հյուսիսային ցուրտ քամի մը կը փչեր, ի՞նչպես պիտի կրնայինք գիշերը բացօթյա անցնել լեռներու և ձորերու մեջ։

Մեզի կ'առարկվեր, որ քաղաքին մեջ խոլերայի համաճարակ ըլլալնուն՝ չէին ուզեր Թուրք զինվորական և այլ քաղաքային պաշտոնյաները, որ վարակվեինք...

Մինչդեռ մեզմե շատեր ընդհակառակը կը փնտրեին այսպիսի մահաբույր բացառիկ պատեհություն մը, որ ազատեին այս անհանդուրժելի տառապանքներեն, և փոխանակ ամեն օր մեռնելու և ողջանալու՝ մեկ անգամ ընդմիշտ կը փափագեին մեռնիլ և ազատիլ...

Միանգամայն կ'առարկեին, թե քաղաքին մեջ հարմար մեծ բնակարան չկա մեր հարյուր հոգինոցս. ավելի քարավանը պատսպարելու։ Որովհետև հայոց լքած տուները և պարտեզները ամբողջությամբ հանձնված էին Թուրք գաղթականներու։ Իսկ լավագույն բնակարանները յուրացուցած էր զինվորական իշխանությունը իր պետքերուն համար։

Երբ հանձն առինք և հոժարություն ցույց տվինք քաղաքին մեջ գտնվող ո՛րևիցե ավերակ մեկ շենքին մեջ կամ գոնե մոտիկը մնալու, բավ է, որ հյուսիսային նույն պահուն փչող երեկոյան սառնաշունչ քամիեն պատսպարված ըլլայինք։ Այն առեն բացե ի բաց հայտարարվեցավ մեզի, թե Հասանպեյլի գտնվելով զինվորական իշխանության վարչության ներքև, իբր զինվորական լեռնային բանակատեղի մը՝ մեզի աքսորականներու ներելի չէր այսպիսի զինվորական կարևոր կայանի մը մեջ մեկ գիշեր իսկ մնալն ու կը հրամայվեր մեզի, որ առաջ շարժինք առանց առարկության և դժկամության։ Արդեն ոստիկան զինվորներն փայտեր ճարած էին մեզ ծեծով առաջ վարելու համար, երբ վերջին փորձը ևս ինծմե խնդրեցին ընել իմ դժբախտ տառապանքի ընկերները։

Ամեն կողմե կ'աղաչեին, որ երթամ անձամբ զինվորական հրամանատարին մոտ, և աղաչեմ որ գոնե մեկ գիշերվան համար մեզի համի հանուն մարդասիրության պատսպարան տալ։

Թեպետ ակներև էր, թե ո՛րևէ հեղինակություն վրաս մնացած չէր, ուստի ավելորդ էր արդեն բյուրիցս չարաչար խորտակված արժանապատվությունս անգամ մը ևս վիրավորանքի ենթարկել։ Սակայն չէ՞ որ ծովը ինկողը օձին կը փաթթվի կ'ըսվի, մենք ալ արյունի ալեկոծության բռնված մարդիկ էինք, մի՞թե պետք չէր դիմեինք ամեն տեղ, ամեն անձի, եթե նույնիսկ ասոնք մեր դարևոր դահիճներն ըլլային... ո՞վ գիտե թերևս կարեկցության մեկ հույժ բացառիկ նոպայի մը մեջ գթային մեզի...

Ուստի ոստիկան զինվորներու մեր վերահսկիչ ենթասպան ստիպարգևատրելով՝ թույլտվություն ստացավ քարավանեն անջատվելով ետ վերադառնալու, նեկայանալու համար զինվորական հրամանատարին։

Վերջապես փնտրտուքներե վերջ գտա զինվորական հրամանատարության շենքին առջև կանգնած «Մենզիլ գոմանտանին» երեսունամյա թուրք իթթիհատական սպա մը Հյուսնի, որ հակառակ շատ երիտասարդ ըլլալուն, արդեն հազարապետե բարձր ազդանշաններ ուներ, որովհետև սելանիկցի էր...

Ծայր աստիճան քաղաքավարության թրքական ձևով բարևելե վերջ, ողոքիչ շեշտով թախանձագին աղաչեցի, որ հանուն մարդասիրության բարեհաճի թույլատրել մեզի ամենքիս, որ գեթ մեկ գիշեր օթևան ունենանք քաղաքին մեջ։ Բացատրեցի, թե մեկուկես ամսե ի վեր արդեն ճամփա կը քալենք, թե սարսափելի տառապանքներ կրած ենք և արդեն սպառած ու հալումաշ եղած ենք։ Թե գարնան շարունակական անձրևներով գետինները նույնիսկ կոխել կարելի չէ, թող թե բացօթյա պառկիլ ջուրին և ցեխին մեջ։ Թե անոթի ենք և գոնե քիչ մը հաց գտնել կ'ուզենք, և հանուն իրենց մարգարեին աղաչեցի, որ մեզի «մերհամեթ» ընե, այսինքն՝ գթա...

Թուրք սպան անկարեկիր ու վրեժխնդիր շանթահարիչ նայվածքով մը զիս ոտից ցգլուխ չափելե և ունկնդրելե վերջ ըսավ զայրացկոտ շեշտով մը.— Դուք հայերդ շունեն ալ ցած արարածներ եք, դեռ երես ալ ունիք և գթություն կը սպասեք, ազգի և պետության թշնամի գարշելիներ... Եթե քաղաքին մեջ տեղ ալ ըլլա, դարձյալ չեմ թույլատրեր, որ քաղաքին մեջ գիշերեք։ Որովհետև դուք արժանի չեք պաշտպանության և կարեկցության։ Անպատճառ դուրսը պիտի գիշերել տամ ձեզի. դե՜հ գնացեք Տեր Զորի անապատները և հայկական անկախ պետությունը հոն հիմնեցեք... հայտե՜ աչքիս մի երևար...

Այլևս անկարելի ըլլալով հանդուրժել մեր բովանդակ կյանքին մեջ դուն ուրեք տեսած այսքան սարսափելի և ընդվզեցուցիչ անարգանքի մը, առ ոչինչ համարելով ամեն երկյուղ չքաշվեցա ըսելու նախքան հեռանալս, թե ինչ որ մեզի ըրիք, նույնը պիտի գտնեք դուք ալ (իտեն պուլուր, տյունեասը տըր)...։— Ասոր վրա հրամանատարը սաստիկ զայրացած հարձակելով վրաս այրող շառաչյուն ապտակ մը զարկավ աջ ծնոտիս՝ պոռալով.— շուն, հեռացիր շուտով ասկե, քեզ ոտքերուս տակ կը սպանեմ հիմա...

Կենալը ավելորդ էր և հեռացա անմիջապես. և երբ կրկին շուկային մեջեն անցնելով մեր քարավանին մոտ կ'աճապարեի, հայ արհեստավոր մը փութաց քովս և ըսավ. հայր սուրբ, անցած ըլլա... քեզի հարյուր հաց պիտի տամ, տար աքսորական

ժողովուրդիդ բաժնե. տեսանք եղածը, Աստուծմե գտնեն...

Մոտիկը աշխատող հայ արհեստավորներ ա՛նքան հուզված էին կրած ապտակահարութենես, որ մեկ քանին ուզած էին հարձակիլ հրամանատարին վրա և իրենց տարեց ընկերները արգելած էին, զգուշացնելով այսպիսի վտանգավոր փորձի մը արյունոտ հետևանքներեն...

Զիս մխիթարելու համար փութացած էին ապառիկ հաց գնել՝ իրենց մեջ ապա հանգանակությամբ վճարելու հանձնառությամբ, և ինծի կը հանձնեին, որ թշվառ և սովալլուկ տարագիր ժողովուրդիս տամ։

Երբ դարձա մեր քարավանին մոտ, ավետավոր կամ մխիթարական լուր մը ստանալու հույսով մոտս փութացողները փոխանակ հարցնելու, թե ի՞նչ լուր բերած եմ, տեսնելով կարի գերագրգռված և հուզված վիճակս, հարցուցին.— ի՞նչ ես եղեր, հայր սուրբ... ի՞նչ ըրին քեզի... ի՞նչու աչ երեսդ այդքան կարմիր է... ըսե ի՞նչ պատահեցավ... Բայց պոռթկացող հուզումս ա՛լ զսպելու անընդունակ, խոշոր արցունքի մեկ քանի կայլակներ ինքնակամ կը սահեին վար...իբր կրակի հատիկներ այրելով զիս։

Արդեն առանց ո՛րևէ բացատրություն տալու հասկցած էին ինքնաբերաբար, որ ապտակահարված էի... ու առ ի մխիթարություն կ'ըսեին ինծի.— Աստուծմե գտնեն... սա ալ գրե գրքիդ մեկ անկյունը...

Միակ մխիթարությունը սակայն մեր ամենուն այս եղավ, որ 100 գրամանոց մեկ-մեկ փոքր հաց ուտելու բախտ ունեցանք, իբր փոխարինություն ստացած ապտակիս։ Այս ալ նվազ մխիթարություն չէր սակայն, երբ հիշենք, որ 14 ժամվան մեջ առաջին հացի պատառներն էին, որ բերան կը դնեինք, թեպետ քիչ, բայց վերջապես երբեք չուտելեն ավելի լավ էր...

Այլևս ճարահատ և հուսահատ անեծքով հեռացանք Հասանպեյլիեն, և շուրջ 40—50 րոպե քալելե վերջ հասանք մեր գնացած ճամփուն աջակողմը ձոր մը, ուր մեր պահակ ոստիկան զինվորներն որոշած էին, որ գիշերենք։

Այս ձորին մեջ ամեն կողմե ջուրեր կը վազեին. ոչ թե պառկելիք տեղեր չկային, այլ կոխած տեղերնիս ցեխ էր։ Բայց գիշեր էր, և խավարը պատած էր ամեն կողմ, գիշերվան այս պահուն ոչ մեկ տեղ կրնայինք երթալ։ Ուստի կամա ակամա բարձրացանք ձորին կից բլուրը, ուր բաղդատաբար



ավելի չոր կը թվեր բլլալ և ցախեր հավաքելով կրակներ վառեցինք։ Խումբ-խումբ բոլորվելով խարույկներուն շուրջը, սկսանք տաքնալ և մասամբ մեղմացնել հանդիպակաց կողմեն փչող գարնանային գիշերներու հատուկ հյուսիսային ցուրտ քամին, որ իր սաստկագույն աստիճանին հասած էր հոս, լեռներու բավական բարձր շրջանակի մը մեջ գտնվելնուս պատճառով։

Ոչ մեկս անկողին կամ վերմակ ունեինք, որովհետև հնար չէր հետիոտն գնացողներուս համար ծանր բեռներ կրել մեզի հետ։

Մեղմե մեկ քանին թեթև «պաթանիաներ» ունեին. իսկ ոմանք ևս հաստ վերարկուներ, որոնք կը ծառայեին սեփականատերերուն թե՛ իբր անկողին և թե՛ իբր վերմակ։ Ամեն անոնք, որոնք մեր ճամփա ելած ատեն անկողին կամ վերմակ հետերնին առած էին իրենց տուներեն, մասնավորաբար չանկըրիցիներն, երբ Կեսարիայեն սկսյալ ամենքս ալ բռնադատվեցանք հետիոտն քալելու, շատեր անկարող կրելու այսքան ծանր բեռներ ստիպված վաճառեցին ոչինչ գներով։

Իսկ ոմանք ևս հացի դրամի կարոտ մնալով ծախեցին և՛ ժամացույց, և՛ շղթա, և՛ անկողին, և՛ վերմակ, և՛ վերարկու, և՛ պաթանիա, վերջապես ինչ որ կրնար արժեք մը ունենալ։ Փույթ չէ թե այդ արժեքով մեկ կամ երկու անգամ միայն պատառ մը հաց կարենային ձեռք ձգել։

Բայց ես ոչինչ չունեի վաճառելիք. եկեղեցականի վերարկուս իմ միակ հարստությունս էր, որ կը ծառայեր ինծի վերմակի և անկողնի տեղ միանգամայն...

Արդեն գիշեր էր, երբ անակնկալս այցելության եկավ հոստեղ Հասանպեյլիի զինվորական բժիշկը՝ Նիկոմիդիո Կեյվե գյուղեն դոկտոր Ս. Տ. Ս., մեզ փախցնելու թաքուն նպատակով։ Բժիշկը եկած էր ձիով, իսկ զինքն առաջնորդած էր Կանլըկեչիտի այն երիտասարդ հայ սպան, որ նամակ տարած էր Այրան գերման ճարտարագետներու պետին Մորֆի, և դոկտ. Սամվել զինքը հետը առած եկած էր՝ վերջնապես հաջողցնելու համար փախուստս։

Ցեղին պատիվ բերող այս երկու անձնազոհ հայերու այս հանդուգն ձեռնարկն պարզապես զիս փղձկեցուցած էր։ Որովհետև իրենց անձն կը վտանգեին զիս փրկելու համար միայն.

և կ'ապրեինք այնպիսի ահավոր ժամանակի մը մեջ, երբ ամենափոքր հանցանք մը և կամ նույնիսկ կասկած մը բավ էր մահվամբ պատժելու, եթե ենթական հայ էր։

Գոհացնելու համար ազնիվ և անձնվեր այցելուներուս հետաքրքրությունը համառոտ կերպով պատմեցի առանձին մեկ կողմ քաշված՝ մեր ճամփու տառապանքները, մեր տեսածները, մեր լսածները, մինչ երկուքն ալ անկարող տոկալու սկսան արտասվել և խոսքս հանկարծ կտրելով բժիշկը՝ ըսավ.— Հայր սուրբ, վերջը ավելի երկար կը պատմես մեզի քու ճամփու ողբերգությունդ. հիմա եկած ենք քեզ փախցնելու։ Ես ձին այդ նպատակով հետս բերած եմ, չպիտի թողունք որ ճամփադ շարունակես, որովհետև ասկե անդին երթալը ստույգ մահ դիմել է։ Թուրք զինվորական պաշտոնյաները ամենքն ալ բարեկամներս են, կրնամ քեզ պաշտպանել։

Ստիպվեցա ընդհատել հոս բժշկի խոսքը և պատմեցի մեկ քանի ժամ առաջ հրամանատարեն ստացած ապտակս, և սպային ըրած սպառնալիքները հիշեցի։

Բժիշկը պատասխանեց.— Մի՛ վախնար, անոնք ամենքն ալ սիրաշահիլը ինծմե. դուն միայն եկուր հետս և դուն ձի նստե ու մենք ոտքով քեզի կը հետևինք։ Մի վախնար նաև քովդ եղող պահակ ոստիկան զինվորներեն. անոնց պետը կը ճանչնամ ես, կը կաշառեմ զինքը, որ անգիտանա քու փախուստդ։

Առարկեցի, թե հետս եկող տառապանքի ընկերներս չեմ կրնար լքել, որովհետև վաղը հույս ունիմ, որ Սիսեն Այրան մեր ղրկած թուրքը՝ ըստ մեր ժամադրության պիտի գա գտնել զիս Քելլերի մոտերը անտառներուն մեջ։ Թե զանոնք ալ փախցնելու մեծ հույս ունիմ, թե այսքան չարչարանքներե և տառապանքներե վերջ չեմ ուզեր ընել գործ մը, որ եթե ողջ մնամ իմ խղճիս վրա, մինչև մահս բեռ ըլլա։

Իսկ երիտասարդ սպան ես իր կարգին կ'ուզեր տարհամոզել զիս, թե հետս եղող ժողովուրդը այլևս լմնցած է, թե տառապանքի իմ ընկեր կոչածներս՝ հյուծած, սպառած և այլևս անկարող են նույնիսկ փախչելու, եթե առիթն իսկ գտնեն։ Թե ասոնց արտաքին տեսքն իսկ կապացուցանե, որ այլևս իրենց մեջ ՄԱՐԴԸ մեռած է և խեր չկա ասոնցմե...

Բայց անկարող կ'ըլլային զիս համոզել. որովհետև քանի՛ կը խորհեի թե վաղը թերևս նպաստավոր լուր մը կու գար և ես կանխավ փախած ըլլալով՝ խեղճ ժողովուրդը անգլուխ չի



կրնար օգտվիլ նպաստավոր բացառիկ այդ պատեհութենեն, և գերմաներեն գիտցող մը ևս չգտնվելուն՝ կամա-ակամա պիտի շարունակեն իրենց ճամփան մինչև Տեր Զոր կամ մինչև մահ, ուստի անդրդվելի կը մնայի մերժումիս մեջ։

Իսկ երիտասարդ սպան ինծի կը հասկացներ, թե գերմանները շատ պատասխանատվություն չեն ուզեր ստանձնել հայեր փախցնելու գործին մեջ, հետևապես շատ հույս չդնեմ գալիք լուրերուն վրա...

Բարեբախտաբար դոկտ. Սամվել ծանոթ ըլլալով մեր ոստիկան զորքերու տասնապետին և զայն անգամ մը փրկած ըլլալով ծանր հիվանդութենե մը՝ թույլատրած էր, որ մենք երկարորեն տեսնվինք իրարու հետ՝ առանց արտաքին ո՛րևէ անհարկի միջամտության։ Դոկտ. Սամվել իրավունք ուներ հույսեր դնելու մեր տասնապետին վրա, թե ան աչք կը գոցե ի հարկին փախուստիս, եթե նույնիսկ կանխավ դրամական վարձատրությամբ մը բերանը գոցելու փորձ իսկ չըլլա...

ՍԱԿԱՅՆ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԵ ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿ ԵՂԱԾ ԷՐ ՄԻՋՍ, ԱՅԼԵՎՍ ԿՅԱՆՔԻՍ ԲՈԼՈՐ ՕՐԵՐՈՒՆ ՄԵՋ ԵՐԲԵՔ ՁՎՍՏԱՀԻԼ ԹՈՒՐՔԻՆ. ԸԼԼԱ ԱՆ ԾԵՐ ԹԵ ԵՐԻՏԱՍԱՐԴ, ՏԳԵՏ ԹԵ ՈՒՍՅԱԼ, ԿՐՈՆԱՍԵՐ ԹԵ ԱՆԿՐՈՆ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԹԵ ՔԱՂԱՔԱՅԻՆ. ԳՅՈՒՂԱՅԻ ԹԵ ՔԱՂԱՔԱՅԻ, ԱՅՐ ԹԵ ԿԻՆ, ԻՆՁ Կ'ՈՒԶԵ ԹՈՂ ԸԼԼԱ, ԲԱՎ Է ՈՐ ԹՈՒՐՔ Է...

Ա՛լ եթե ես ալ այսքան մահաբույր փորձություններե և փորձառություններե վերջ դեռ հավատացող մը պիտի ըլլայի թուրքին առաքինությանց, ուրեմն անուղղա ապուշ մը պետք էր որ եղած ըլլայի...

Որովհետև Հասանպեյլիի թուրք զինվորական և քաղաքային պաշտոնյաներուն վստահելով պիտի փախչեի։ Իսկ այսպիսի հիմար քայլ մը չէի ուզեր առնել։

Եթե Տերամբ ողջ կրցա մնալ, շնորհիվ այս նշանաբանիս միայն կրցա փրկվիլ։ Իսկ անոնք, որ թուրքերուն գաղտնիք տվին և վստահություն ըրին, հանկարծ օրին մեկը օձիքնին ձեռք տվին. և իրենց մահվամբ քավեցին իրենց բարեմտությունը կամ միամտությունը ճիշտ այն օրն իսկ, երբ արդեն վտանգը անցուցած և արդեն փրկված ըլլալ կը կարծեին։

Տեսնելով, որ անկարող կ'ըլլան այլևս զիս համոզելու, հրաժեշտ առին ինծմե և համբուրվեցանք ու մեկնեցան, ըսելով.—

հետո պիտի զղջաս, ոտքդ եկած այսպիսի հազվագյուտ պատեհություն մը կորսնցուցած ըլլալուդ համար...

Նախքան մեկնիլն դոկտոր Սամվել դրամական փոքրիկ նվեր մը ևս տվավ, որը հանուն յոզկատցի մեր ամենազրկված ընկերներուն ընդունեցի շնորհակալությամբ։

Անձնազոհ հյուրերս սրտաբեկ անհայտացան գիշերվան թանձր խավարին մեջ։ Իսկ ես քանի՛ կը լսեի հայ անձնվեր բժիշկին ձիու ոտքերուն հետզհետե մեղմացող և հեռացող տրոփյունները, ա՛յնքան սիրտս կրակով կը լեցվեր։ Չի կը խորհրդածեի, թե արդյոք սխա՞լ ըրի չհետևելով հեռացողներուն, արդյոք փախուստի միակ պատեհությո՞ւնն էր, որ ձեռքե հանեցի։ Արդյոք չափազանցություն չէ՞ր այնքան սերտորեն կապված մնալ տառապանքի ընկերներու, երբ արդեն մեր մահվան ճամփուն $^4/_5$-ը անցած էինք և վաղվան համար ալ ոչ մեկ հույս կար անակնկալ փրկության մը։

Նույն գիշերը մեր եղերական սև հիշատակներուն ամենադժբախտ օրերեն մեկը եղավ, և եթե ցախերով մեր վառած խարույկներն չըլլային, ապահովաբար ամենքս ալ պիտի հիվանդանայինք՝ այդ բաց գետնին հյուսիսային սառնաշունչ ցուրտին մեջ բացօթյա գիշերելնուս համար։

Առավոտը վաղ աճապարեցինք հեռանալ այս անհյուրընկալ լեռներեն, հազար անգամ անիծելով այն թշվառական թուրքերը, որոնք մեզի անգթաբար քամել կու տային դառնության մահու բաժակը ցմրուր...

Տակավ բարձրացանք Ամանոսի լեռնաշղթային անտառապատ կատարները, ըմբոշխնելով Կիլիկիո տաք արև ու հզոր ճառագայթները, որով կրկին վերակենդանություն ստացան մեր ընդարմացած անդամները։

Վերջապես մտանք մայրի ծառի սև անտառներ, ուր դարնան բնության ճոխ վերազարթնումը մեզի կրկին հիշեցնել կու տար մեր թշվառ կացության անհատակ խորությունը։ Ա՜ստված իմ, ի՞նչ հակապատկեր, մինչդեռ մեր շուրջը բնությունը հարություն առած էր՝ կյանք ու կենդանություն տալով ամենուն։ Մինչդեռ մեր ոտքերուն ներքև զմրուխտ մարմանդներ, մեր գլուխներուն վերև դայլայլող թռչուններ բնությունը կամ արարիչը կը փառաբանեին, գարնան սիրերգներով նոր բույներ շինելով։ Երբ ծառ ու ծաղիկ, թուփ ու մացառ, սոխակ ու սարյակ անուշահոտություններով և երգերով վերազարթնող բնության ավետիսը կու տային, մենք կը տարվեինք դեպի անհայտ ու անհատակ գերեզման։

Ա՜խ, ԳԱՐՆԱՆ ՄԵՋ ՄԵՌՆԻԼ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ՄԵՌՆԻԼ ԸՍԵԼ Է։

Երբ անցնելով անտառներու մեջեն սկսանք իջնել Քելլերի լեռան զառիթափն, ուրկե կ'երևի արդեն Իսլահիյեի դաշտը, հանկարծ լուր բերին ինծի, թե մեր Սիսեն Այրան ղրկած թուրք զինվորական փախստականը եկած է արդեն՝ և մեր քարավանին մեջ մտած և կ'ուզե հետս գաղտնաբար տեսակցիլ, հաղորդելու համար իր բերած տեղեկությունները։

Հարկ եղավ դանդաղեցնել մեր քարավանին գնացքը և զգուշությամբ տեսակցիլ մեր բանբերին հետ, որուն արդեն կը սպասեինք Սիսեն մեկնելեն ի վեր անձկանոք։ Թեպետ մեզի բերված լուրերը մեր ակնկալությանց չէին համապատասխաներ, սակայն հուսահատական ալ չէր։ Որովհետև գերման երկթ. ընկերության Այրանի մարդիկը լուր ղրկած էին, թե /բենք մեր փախուստին ծանր պատասխանատվությունը չէին ստանձներ, սակայն եթե անձնական պատասխանատվությամբ փախչե՛ինք և ապաստանեինք երկաթուղու գծերը, կը խոստանային մեզի ամենուս ալ գործ տալ և հարկին նաև պաշտպանել։ Սակայն իրենք մեզ ոստիկան զինվորներու ձեռքեն բռնի առնելու համար ոչ մեկ միջոց կ'ուզեին ձեռք առնել։

Ստանալով լրացուցիչ տեղեկություններ ևս, թե հազարավոր բանվորներու 80 տոկոսը եթե թուրք են՝ զինվորական, իսկ եթե հայ են՝ աքսորե փախստական մարդիկ են, մեր լրաբեր թուրքը ղրկեցինք Քելլերի հայ բանվորներու հայազգի պետերուն (չավուշ) և հայտնելով, որ հարյուր հոգինոց աքսորականներու քարավան մը կը սպասե $^1/_2$ ժամ իրենցմե հեռու ձորին մեջ, փախչելու համար դյուրություն և պաշտպանություն խնդրեցինք։

Մինչ այս, մինչ այն մենք կաշառելով մեր ոստիկան զինվորները, մեր քարավանը հանգիստի պատրվակին տակ, չթողուցինք, որ առաջ երթա, այլ ամենքս ալ նստանք մարգերու վրա, անհամբեր սպասելով մեզի ղրկվելիք լուրերուն, որոնցմե կախված էր իրապես այս անգամ մեր փրկությունը։ Մեկ ժամվան հապաղումե հետո վերջապես կրկին եկավ մեր լրաբեր թուրքը և հայտնեց, որ ամեն ինչ մինչև մեկ ժամ պատ-

բաստ պիտի ըլլա, բավ էր, մեզի տրված հրահանգները գործադրենք կետ առ կետ։

Ճարահատ նոր կաշառքի սակարկությամբ հաճեցուցինք մեր պահակ ոստիկան զինվորները, որ մեզ մեկ ժամ ևս թողուն մեր կեցած տեղը։

Այս ժամանակամիջոցը օգտագործել ուզեցինք իրարու հետ խորհրդակցելու հավաքական փախուստի մը համար։ Ուստի քարավանին գլխավոր և ազդեցիկ դիմքերը մեր շուրջը հավաքեցինք՝ քննելու համար փախուստի մը կարելիություններն ու անկարելիություններն, նպաստավոր և աննպաստ բոլոր հանգամանքներով։

Սակայն դժբախտաբար բացի Պոլսո աքսորականներեն, մեծամասնությունը՝ մասնավորաբար չանկըրիցիները չէին ուզեր փախչիլ, հույժ վտանգավոր և մահառիթ համարելով այսպիսի հանդուգն ձեռնարկ մը։ Նույնիսկ անոնք, որոնք մեր տաժանելի ճամփու ընթացքին միշտ կրկնած էին, թե մեր միակ փրկությունը փախուստն է. գործադրության վճռական ժամուն կը տկարանային գործադրելու փախուստի ո՛րևէ ծրագիր, եթե նույնիսկ կաշառքով մեր պահակ ոստիկան զինվորներուն համաձայնությունն կանխավ ստանային։

Փախչելու ծրագրի մը դեմ արտահայտվողները մասնավորաբար այս առարկությունը կ'ընեին, թե երբ փախչեին և հաջողեին իսկ ազատիլ ո՛րևէ հավանական հետապնդումե, թուրք կառավարությունը իբր փոխ վրեժ անմիջապես պիտի գրուվեր Ջանկըրիի մեջ ունեցած իրենց շարժուն ու անշարժ ամբողջ հարստությունը, իրենց կիներն ու աղջիկներն ևս պիտի աքսորեր ու ենթարկեր ամեն կարգի բարոյական ու նյութական թշվառության և հալածանքի։

Իսկ իրենց անձին համար երկյուղին այս էր, որ փախուստի մը միջոցին, համաձայն տրված կարգախոսին, մեր պահակ ոստիկան զինվորներն կրնային հրացանազարկ ընել առանց այլևայլի։ Շատ քիչերը միայն հնարավոր կը գտնեին կանխավ կաշառելով մեր հսկող ոստիկան զինվորները, զերծ մնալ հրացանազարկ ըլլալե։ Ժամերը կը սահեին, մեր պահակ ոստիկ. զինվորներու տրված կաշառքները կը կրկնապատկեինք նոր ժամանակամիջոց ստանալու համար, բայց դժբախտաբար անկարող կ'ըլլայինք վերջնական եզրակացության մը հանգելու։ Առանց բացառության մեր քարավանին երիտասարդները ամենքն ալ կ'ուզեին փախչիլ՝ խորապես համոզված, թե պատեհագույն այս առիթը եթե օգտագործել չկարողանային, հետո չարաչար պիտի զղջային։

Որովհետև երկթ. շինության գերմ. ընկերությունը մեծագույն դյուրությունները կ'ընծայեր ամեն կարգի և ազգի փախստականներու, օգտվելով թուրք կառավարության հետ իր ունեցած գրավոր պայմանագրութենեն։ Որով այս վերջինը կը խոստանար ազատ ձգել ընկերությունը՝ պաշտոնյաներ և բանվորներ գտնելու եղանակին և ձևին մեջ, եթե նույնիսկ ասոնք զինվորական փախստականներ ըլլային։ Այս պայմանով միայն հանձն առած էր գերմ. ընկերությունը փութացնել երկթ. շինությունները և ապահովել զինվորական փոխադրություններն զինվորի և ռազմամթերքի։

Վերջապես անկարելի եղավ մեր միջև համաձայնություն մը գոյացնել։ Չի անոնք, որոնք հարստություն թողած էին իրենց ետև, չէին ուզեր իրենց փախուստով վտանգել իրենց թողած կայքն ու գույքն կամ հարստությունը։ Իսկ անոնք, որ ետևնին հարստություն մը չունեին, որ ձգեին, վտանգելիք բան մը չունենալով ամեն գնով փախչիլ կ'ուզեին։

Թշվառները դեռ չէին համոզված, թե այն օրեն, որ աքսորի ճամփան բռնեցին դեպի Ջոր, այլևս ոչ հարստություն ունեին, ոչ ընտանիք և ո՛չ զավակներ։ Թեպետ այս դառն ճշմարտության համոզվեցան միայն այն ատեն, երբ սակայն շատ ուշ էր և արդեն իրենց գերեզմանին փոսին առջև կը գտնվեին Տեր Ջորի ավազի անապատին մեջ։

Բայց ամենքեն գաղտնի՝ հայ բանվորապետներու հետ համաձայնելով, մեր փախուստը դյուրացնող նոր կարգադրություն մը եղավ հետևյալ պարագաներու մեջ։

Այսպես որոշյալ ժամուն քարավանը կրկին ճամփա ելավ դեպի զառիթափն ի վար Քելլեր։ Երբ հասանք Քելլերի ճիշտ մեջտեղեն անցնող ճամփուն այն տեղը, որ ապառաժներու մեջեն ոլորվելով օձապտույտ կ'իջնա դեպի Իսլահիյեի դաշտը, հանկարծ հայ բազմաթիվ բանվորներ մեզ շրջապատեցին և հասկցուցին, որ երբ պայթումը տեղի ունենա, ամենքս մեկմեկ կողմ փախչինք։

Եվ ահա ձեռքը կարմիր դրոշակով և վտանգի ազդանշանը տվող հայ պահակ բանվոր մը հնչեցուց գալարափողը, և հանկարծ ուժգնակի հաջորդական ահեղ գոռումներով տեսանք

ժայռերու բեկորներ, որոնք օդին մեջ կը սլանային։ Միաժամանակ ամեն կողմե խժալուր աղաղակներով պոռչտուքներ կ'ըլլային— փախե՞ք, փախե՞ք...

Այս ընդհանուր խուճապին և խառնաշփոթությանց մեջ՝ առանց ետև նայելու կը փախչեր ամեն մարդ, բանվոր, աքսորական, ոստիկան, զինվոր, կենդանի...

Գոռում-գոչյունը կը դադրեր, օդին մեջ սավառնող ապառաժի կտորները արդեն վար ինկած էին ակնթարթի մը մեջ և տիրած էր երկին խաղաղությունը, բայց մեջտեղը ոչ ոք կար։ Իսկ ոստիկան զինվորներն վերադտնելով իրենց պաղարյունությունը՝ երկին երեցան ճամփուն վրա և սպառնալիքով հրամայեցին, որ փախչող աքսորականները շուտով հավաքվին իրենց շուրջը, շարունակելու համար մեր ճամփան. միանգամայն էր սպառնային գնդակահարել անսաստողները...

Եվ ահա հակառակ մեր շուրջը հածող հայ բանվորներու— մի վախնաք, ետ մի դառնաք—ըսելով ըրած սրտապնդումներուն, տակավ իրենց թաքստոցներեն դուրս գալ սկսան մեր բարավանին բոլոր մարդիկը։ Թեպետ քաջասիրտները դեռ կը համենային գալ միանալ քարավանին, սակայն ոստիկան զինվորները կ'երդումնային քարավանը առաջ չշարժել, եթե չամբողջանար մեր պաշտոնական ցանկի թիվը։

Վերջապես տեսնելով, որ խնդիրը կ'երկարի և լուրջ հանգամանք կ'առնե, մնացորդ 10—15 հոգիներս ևս եկանք միացանք քարավանին և ճամփա ելանք դեպի Իսլահիյե՝ չկրնալով մերժել աղաչանքը մեր այն ընկերներուն, որոնք եկած էին վերադառնալ չուզողները համոզելու, թե իրենց չգալու պարագային ամբողջ քարավանին ժողովուրդը պիտի ենթարկեին ահավոր կորուստի։

Ոստիկան զինվորները անլուր սպառնալիքներով հավատացուցած էին այս թշվառները, թե մնացած ամենքն ալ պիտի գնդակահարեին...

Արդարև իզուր էր ամեն ջանք ու ճիգ այս թշվառները ազատելու, զի մեր տառապանքի ընկերները այդքան հյուծած և սպառած էին, որ կորսնցուցած էին այլևս մարդկային ամեն բարոյական ուժ ու կորով։ Անբան ոչխարներու հոտի մը հոգեբանությունը ունեին, դեպի մահ կ'երթային անտրտունջ՝ համոզված, թե հայ ազգին վերջնական փրկության համար անհրաժեշտ է իրենց կյանքի զոհաբերությունը,



փույթ չէ, թե այս զոհաբերությունը ամենաանագորույն ու չարչարալից մահվամբ ըլլա։ Գոնե մեր ապագա սերունդները թող ապրին ազատ և չտեսնեն մեր անցուցած արյունոտ այս սև օրերը. կ'ըսեին ու կը քալեին դեպի գերեզման։

Ոմանք ևս երկար դարեր դրացի ապրելով իսլամներու՝ հավատացող էին ճակատագրի և կ'ըսեին հաճախ, թե իզուր է մեր ճակատագրի որոշումին դեմ պայքարիլը կամ ընդվզիլը։

Իսլամ նորահավատները պատերազմի մղելու համար Մուհամմեդի քարոզած ճակատագրի այս վարդապետությունն էր, որ ինքնասպանության միտող կրավորական համակերպության մը կը մղեր մեր դժբախտ մեկ քանի ընկերները, սպանելով ասոնց մեջ ամեն ձեռներեցություն և կամ ամեն վճռողական քայլ։

Մեր մեջ կային նաև մեկ քանի բարեմիտներ կամ ավելի ճիշտ որակումով միամիտներ, որոնք դեռ կը հավատային, թե թուրք կառավարությունը զիրենք Տեր Զոր տանելե վերջ՝ հող ու գործ պիտի տար ապրելու համար։ Ուստի կը խորհեին, թե ինչո՞ւ փախուստով վտանգեին իրենց թուրք պետութենեն ստանալիք շնորհներն...

Տարաբախտ հայ ժողովուրդը մինակ մնալով իր դարևոր թշնամիին հետ, ուրիշ փրկության միջոց չէր գտներ, եթե ոչ շնորհք խնդրել իր անգութ դահճապետներեն... Քանի որ հույսի և փրկության բոլոր դռներն փակված էին իր առջև, իսկ իր բարեկամ մեծ ազգերուն զրահավորներեն մինչև Արարատ չէին կրնար բարձրանալ...

Երեկոյին արևամուտին հետ վերջապես հասանք Իսլահիյե՝ ամենքս ալ բարոյալքված և հուսահատ, զի նույնիսկ փախչելու գժկամակողներն իսկ կը հավատային, թե փախուստի մեծագույն պատեհությունն էր որ կորսնցուցած էին։

Դժբախտաբար այստեղ ևս երկին չթողուցին, որ քաղաք մտնենք, այլ մեզ առաջնորդեցին քաղաքին մոտակա բացօթյա մարգագետին մը, որ 20 բոպե հեռու էր քաղաքեն։ Ստիպվեցանք գարնան շարունակական անձրևներեն թրջած թաց գետնին վրա գիշերել։ Երբ գիշերվան ցուրտը և ցողը մեկ կողմեն, և գողեր մյուս կողմեն անհանդուրժելի կը դարձնեին առանց ասոնց ալ արդեն դառն ու թշվառ մեր կյանքը։

## 33.

## ԻՍԼԱՀԻՅԵ.
## ԳԵՐԵԶՄԱՆԱԲԼՈՒՐՆԵՐՈՒ ԴԱՇՏ ՄԸ

Իսլահիյե մեծամասնությամբ իսլամաբնակ կառավարական-վարչական երրորդ աստիճանի գյուղաքաղաք մըն է, (գայմագամանիստ)՝ Ամանոսի լեռնաշղթային արևելյան կողմը ընդարձակ և հարթ դաշտագետնի մը վրա։

Ինչպես կանխավ հիշեցինք Բաղդադի երկաթուղու գիծը 1916-ի գարնան Պոլսեն սկսյալ ուղղակի կը հասներ Տավրոսյան լեռնաշղթայի մինչև Պոզանթիի կիրճը։ Այստեղ ընդհատվելով գիծը, Տավրոսի փապուղիներուն դեռ լրացած չըլլալուն պատճառով՝ կրկին կը սկսեր երկթ. երթևեկը Ինճիրլի—Ադանա—Օսմանիյե, և կը հասներ Մամուրե կայարանը։ Մամուրե ըլլալով Կիլիկիո դաշտին երկաթուղու վերջին կայարանը, հոս կրկին կ'ընդհատվեր գիծը, Ամանոսի լեռնաշղթային փապուղիներու լրացած չըլլալուն պատճառով, ապա կրկին կը սկսեր երկթ. երթևեկը Իսլահիյեեն և կը վերջանար Հալեպ։

Բաղդադի երկաթուղու այս գերման գիծեն զատ՝ կար նաև ֆրանսական Մերսին—Տարսոն երկթ. գիծը, որ միանալով Ինճիրլիի կայարանը Բաղդադի երկթ. գերման գծին՝ կը հասներ ուղղակի Ադանա։

Որով երկաթուղու գծի մոտերը ապրող բոլոր հայերը երբ տեղահան եղան, երկաթուղիով կը հասնեին ամենաբախտավորները մինչև Պոզանթի։ Ասկե Կյուլեկի կիրճին ճամփով հետիոտն կու գային կրկնապատիկ տոմսակի գին վճարողներն մինչև Ինճիրլիք։ Ապա Ադանայի վրայով երկաթուղու ճամփան շարունակելով կու գային Օսմանիյե, ասկե կրկին հոտիոտն կ'անցնեին Հասանպեյլիի ճամփով ամբողջ Ամանոսի լեռնաշղթան մինչև հասնելով Իսլահիյե։

Այս վերջին քաղաքը՝ տեղահան եղած հայերու մասնավոր բանակատեղի էր. զի ասկե Հալեպ կը ղրկվեին հետիոտն, իսկ կաշառք տալով բացառիկ իրավունք ձեռք բերողներն՝ երկաթուղիով։ Իսկ Հալեպ՝ անապատները տարագրվող մեկ միլիոնե ավելի հայության ընդհանուր բանակատեղին էր, ուրկե քարավաններով կը ղրկվեին ըստ բախտի կամ ավելի



կաշառքի վճարմամբ դեպի Հոմս, Համա, Դամասկոս, կամ դեպի Նիսիպին, Ռեսուլայն և կամ անապատներու կենտրոնը Տեր էլ Զոր՝ հանուր գերեզմանը բնաջնջվող հայության։

Այս տեղեկագրական ընդհանուր ծանոթություններեն վերջ, գալով Իսլահիյեի բնակչության, դժբախտաբար կարելի չեղավ ճշտել ստույգ թիվը խառնացեղ բնակչության։ Սակայն մեր ստացած ընդհանուր տեղեկություններեն կարելի է հետևցնել, թե մեր Իսլահիյե ժամանած ատեն քաղաքը ուներ 1500 տուն բնակչություն, որմե միայն 250 տունը հայեր եղած էին։ Ասոնք ամբողջապես 1916-ի գարնան տեղահան ըլլալով, հազիվ 4 կամ 5 հայ ընտանիքներ մնացած էին քաղաքին մեջ, իբր երկաթուղու պաշտոնյաներ կամ իբր երկաթուղու վայրաշարժերու փայտի հայթայթիչներ։ Որովհետև պատերազմի ամբողջ շրջանին կարելի չըլլալով քարածուխ ճարել, վայրաշարժները (լոքոմոթիվ) փայտ կը վառեին։ Իսկ այս վառելափայտը կը հայթայթեին Ամանոսի կամ Տավրոսի լեռներու հսկա մայրի անտառներեն մասնավորաբար հայ կապալառուներ։ Ասոնցմե զատ կային նաև այս հայ կապալառուներու մոտ 50—60 հայեր՝ իբր քարտուղար, գործավոր կամ փոխադրիչ։

Այսպես Բաղդադի երկաթուղու գծին վրա՝ Պոլսեն մինչև Հալեպ՝ երեք կետեր Պոզանթի, Կանլը-կեչիտ և Իսլահիյե եղած էին հարյուր-հազարավոր հայ տարագրյալներու ճամփու անցքի հավաքավայրեր։

Ամեն կողմե հարյուր կամ հազարով հասնող քարավաններ հետզհետե ստվարանալով կ'ըլլային տասնյակ հազարներ։

Բնականաբար անկազմակերպ երկրի մը մեջ, և անկազմակերպ կառավարության մը ներքև, և մանավանդ բնաջնջելու հայտնի նպատակով տիրող խուժդուժ և անգութ հալածանքներու ևս պատճառով՝ տասնյակ հազարներու հասնող հայ տարագրյալներու թիվը շուտով կը կրկնապատկվեր ու կ'եռապատկվեր մասնավոր դիտումով։ Որպեսզի այս ընդհանուր խճողումով անհնար ըլլար պարենավորումը և ինքնին չքմեղանար թուրք կառավարությունը իր բնաջնջումի դիվային ծրագրին մեջ։

Այս համատարած ժողովրդային մեծազանգված խճողումներուն բնական հետևանքը կ'ըլլար անշուշտ, հացի ու ջուրի պակասը և համաճարակներու ու տեսակ-տեսակ հիվանդու-

թյանց տարածմամբ կոտորակում թշվառ հայ ժողովրդյան և անճիտում։

Հազարներով Իսլահիյե հասնող ժողովուրդեն հազիվ հարյուրներ ճամփա կը հանվեին ամեն օր, իբր թե փոխադրությանց և ոստիկան զինվորներու չգոյության չքմեղանքի դիտումնավոր առարկությամբ։ Ասոր բնական հետևանքը այն կ'ըլլար, որ սովահար և թանչքե տառապող թշվառ ժողովրդյան մեջ առօրյա մահերու թիվը հետզհետե կ'աճեր անհավատալի համեմատությամբ։ Օրեր եղած են, որ տասնյակ հազարավոր վրաններու մեջ ոչ թե տասով, այլ հարյուրավոր մեռյալներ եղած են, և առողջ մարդիկ չեն գտնված, որ մեռելները հավաքելով թաղեն։ Իսկ եթե բռնի կերպով և հեռվեն ու մոտեն մարդ ճարված է, փնտրված քանակությամբ բահ ու բրիչ չէ գտնված՝ այսքան հոծ թվով մեռյալները թաղելու համար։

Մանավանդ առաջին զոհերն եղած են ամեն հասակի ու սեռե անմեղ հայ մանուկներն, մեկ գիշերվան մեջ փչող հյուսիսի սառնաշունչ քամին աշնան խորշակահար տերևներու նման հազարավոր թշվառ մանուկներ խլած է հայ մայրերու գրկեն։ Իսկ եղերաբախտ մայրերը չեն լացած, որովհետև լալու ժամանակ ալ չեն ունեցած, և ընդհակառակը մխիթարված են, խորհելով, որ այս համատարած և շարունակական թշվառությանց մեջ ավելի բախտավորը ան է, որ ժամ առաջ մեռնելով կ'ազատի և միանգամայն կ'ազատե իրենները ավելորդ բեռե մը... Քանի որ վաղ թե ուշ ըլլալիքը տարաժամ մահն է, և ոչ թե հուսալի փրկությունը...

Ահա այս պատճառով, երբ մեր թշվառ քարավանը հասավ Իսլահիյե, մեր առջև պարզվեցավ մեկը այն ահավոր տեսարաններեն, որուն վերհիշումը ամենասև էջերեն մեկը կը կազմե հայության աշխարհասասան բնաջնջումին։

Թվեր թե մեր առջև տարածվող երկիրը պատերազմի դաշտ մը ըլլար։ Որովհետև Իսլահիյեի առջև երկարող դաշտագետինը ծածկված էր անհամար մեծ ու փոքր հողակույտերով։ Ասոնք գերեզմաններն էին հիսունով կամ հարյուրով թաղված հայերու, և հակառակ արդեն ձմեռ մը անցած ըլլալուն՝ դեռ այս հողակույտերն կը պահեին իրենց կորնթարդ բարձրությունը, և ավա՜ղ կային, որ բլուրներ էին...

Երբ կը խորհեինք, թե այս բլուրները հայերով լեցված մարդկային բլուրներ էին... մեր հուսահատությունը և բարոյալքումը այլևս կը հասներ անձնասպանության միտող ատիճաններու...

Տասնյակ հազարավոր հայերու այս դիակները հողին ներքև թաղված էին՝ ոչ թե իբր վերջին նվիրական պարտականություն, որը քաղաքակիրթ թե վայրենի հանուր մարդկության վերջին իրավունքը եղած է նախապատմական դարերե ի վեր։ Այլ ասոնք թաղված էին կառավարության ղրկած իսլամ բանվորներու ձեռամբ՝ պարզապես «մթնոլորտը մաքրելու» համար նեխած կամ կազմալուծված բյուրավոր մարմիններու ապականութենեն...

Որովհետև բռնագաղթի դատապարտված հյուծած ու սպառած հայ տարաբախտ ժողովուրդը իրապես անկարող էր իր մեռյալները թաղելու։ Ինչպես ըսինք, ոչ բրիչ ուներ, ոչ ալ ուժ այս գործիքները գործածելու կամ իր սիրելիներուն անշունչ մարմինները վերցնելու և հողի խոր վիհերուն մեջ նետելու...

Այս պատճառով խումբ-խումբ ամեն օր մեկնող քարավանները կը ձգեին իրենց դիակնացած սիրելիները ու կը մեկնեին, առանց երկար-բարակ սուգի սովորական և աղմկալից արտահայտություններու։ Քանի որ վաղը նույն սև ճակատագիրը կը սպասեր և իրենց ամենուն ալ, մինչ օրվան զուլումը արդեն բավ էր շուտով մոռցնել տալու հավիտենական անդարձ բաժանումը իրենց սիրելիներեն։

Հույժ ջղագրգիռ ու սիրտմաշուք գիշեր մը՝ բացօթյա թաց մարգագետիններու վրա անցնելե վերջ, հաջորդ առավոտուն տեղի ունեցավ մեր քարավանին պաշտոնական փոխանցումը մեզ բերող ոստիկան զինվորներու կողմե Իսլահիյեի ոստիկան զինվորներու հրամանատարության, մի առ մի կարդացվելով ըստ սովորության յուրաքանչյուրիս անունը։

Եվ ով հրաշք. բացի Կազ-պելի ձյունապատ կիրճին մեջ մեզմե փախչելով սպանված մեր հեգ ընկերեն, հակառակ մոտ 47—48 օրվան տաժանակիր մեր աքսորական ճամփորդության, և հակառակ մեր հանդիպած մահասարսուռ վտանգներուն, ամենքս ալ եթե ոչ առողջ՝ գոնե ողջ հաջողած էինք հասնիլ վերջապես մինչև Իսլահիյե։

Այս հույժ բացառիկ և աննախընթաց պարադան՝ Օսմանիյեի մեջ պատահածին նման, կրկին մասնավոր ուշադրությունը գրաված ըլլալով հանձնումի գործողության վերահսկող թուրք

սպային, անվերապահ կերպով իր զարմանքն հայտնեց մեզի վերջին անգամ ընկերացող ոստիկան զինվորներու ենթասպային ըսելով.— Այս ի՞նչ բախտավոր մարդիկ են եղեր ասոնք, ինչպես պատահեցավ, որ ասոնցմե պակսող չեղավ... դուք լավ չեք ըմբռներ «պաշ-չավուշ» ձեզի տրված հրամանները...

Այսինքն ըսել կ'ուզեր, թե ինչպե՞ս կ'ըլլա, որ հարյուր հոգիանոց հայերու քարավան մը 45—50 օր ճամփա քալելե վերջ, և մանավանդ Յոզկատ—Պողազլիան—Կեսարիա ամենաարյունոտ ճամփան անցնելե վերջ՝ ողջ կը հասնի մինչև Իսլահիյե...

Մեր ժամանումին երկրորդ առավոտը կարելի եղավ միմիայն ինծի համար բացառիկ թույլտվություն ստանալ քաղաք երթալու, քարավանին անհրաժեշտ գնումներն ընելու համար։ Բայց ասկե ավելի նպատակ ունեի իրազեկ ըլլալ մեր շուրջը դարձած քաղաքական իրադարձությանց և փրկության ճամփա մը գտնել...

Իսլահիյեի շուկային մեջ սքեմով շրջած ատենս, հանկարծ թուրք հազարապետ մը եկավ ձեռքս բռնեց և հիշեց, թե ինք իբր ԻԹԹիհատի կոմիտեի անդամ հաճախ այցելած ըլլալով ազգ. Պատրիարքարան, զիս կը ճանչնա անձնապես, և նույնիսկ մականունս և Գերմանիա ուսում առած ըլլալս գիտնալով սկսավ գերմաներեն խոսիլ հետս։ Անկարելի կ'ըլլար ինծի հիշել զինքը, բայց դեմքը ծանոթ կ'երևեր և կը թվեր, թե հաճախ հայ վարիչ շրջանակներու հետ շփում ունեցած էր։ Զի ծանոթ շատ անուններ կու տար և դաշնակցական հայտնի գործիչներու բազմաթիվ անուններ կը հիշեր, մասնավորելով յուրաքանչյուրին ծայրահեղ կամ չափավոր ըլլալը։ Այս առթիվ փափագ հայտնեց երկարորեն տեսակցիլ մեր ամենքին հետ, երբ իմացավ, որ աքսորական հարյուր հոգիանոց քարավանով մը Տեր Զոր կը տարվինք։

Թեպետ առարկեցի, թե պանդոկի մեջ չենք, այլ բացօթյա դաշտի վրա՝ քաղաքեն քառորդ ժամ հեռու, և բնականաբար աթոռ և այլն չունինք զինքն արժանապես պատվելու համար, նա պատասխանեց, որ ինք անպաշտոն կերպով կու գա մեր վիճակին ականատես ըլլալու և ցավակցություն հայտնելու համար...

Ուստի թուրք հազարապետին պնդումներու վրա՝ նույն օրը կեսօրե վերջի համար ժամադիր ըլլալով, աճապարեցի կատարել ինծմե խնդրված գնումներն, և որոշյալ ժամեն առաջ դարձա մեր հավաքատեղին։

Ստուգիվ որոշյալ ժամուն սեամորթ հազարապետի մը հետ եկավ հետիոտն մեր քարավանին հանգստավայրը, և ոտքի վրա սկսանք մի առ մի պատասխան տալ իրենց հարցերուն։ Ասոնք 8000 զինվորի հետ կ'երթային Բաղդադի ճակատը կռվելու անգլիացիներու դեմ։ Երկուքն ալ Եվրոպա ուսում առած հազարապետներ էին. զիս ճանչցողը հազարապետության բարձրացած բժիշկ մըն էր, իսկ մյուսը գործոն բանակի հազարապետ մը։ Երկուքն ալ 45—50 տարեկան ըլլալ կը թվեին, շատ քաղաքավար էին և իրենք զիրենք չափազանց հայասեր ցույց կու տային, իբր թե կը ցավեին եղածին վրա և կը կարեկցեին մեր թշվառ վիճակին։

Բայց կը կարծեմ, թե իսկապես եկած էին աքսորական հայերու և պոլսեցի մտավորականներու հյուծած ու սպառած թափթփուկ մեր այս քարավանը դիտելով զվարճանալու։

Հազարապետ բժիշկը՝ շրջապատված մեր քարավանի բոլոր մարդոցմով, խոսքը մասնավորաբար ուղղելով իս՝ ինձ ըսավ հետևյալ բովանդակությամբ.— Շատ կը ցավիմ, որ մեզ սիրելի հայ ազգին գլխուն այսպիսի փորձանք մը եկավ։ Ես միշտ համակիր եղած եմ հայոց. Փարիզ և ապա Բեռլին բժշկություն ուսած ժամանակս՝ հայ նշանավոր անձերու և ուսանողներու հետ ծանոթանալու առիթ ունեցա, որոնք հետո մեծ դիրքեր գրավեցին, և որոնց հետ հետո լավ և մտերիմ բարեկամներ եղանք։

Մասնավորաբար բարեկամություն ունիմ հաստատած Զեբրազի, Զոպանյանի, Ակնունիի, Վարդգեսի և շատ հեղափոխական ու դաշնակցական գործիչներու հետ։ Երբ օսմ. Սահմանադրութենեն անմիջապես վերջ Զվիցերիայեն Պոլիս եկա, իբր ԻԹԹիհատի գործոն անդամ շատ մոտիկ հարաբերություն ունեցա ձեր ազգային պաշտոնական շրջանակներու հետ, արդեն Ձեզ ալ այս առիթներով ճանչցա։

Իզմիրլյան Պատրիարքը դիմավորողներու հետ էի և ձեր շոգենավին մեջ էի, այն ատեն Դուք իբր վարչության անդամ շատ պատիվներ ըրիք ինծի. ես եկած էի հանուն ԻԹԹիհատական կենտրոնի կոմիտեին։

Բայց կը ցավիմ, որ ձեր քաղաքական գործիչներուն խոլականորեն հետապնդած երազատես քաղաքականության

պատճառով, հայ ազգը բնաջինջ եղավ գրեթե։ Արամ փաշա մը Վանա մեջ անկախություն հռչակեց, և ահա ամբողջ ազգը իր արյունով քավեց իր մեկ խենթ զավկին դավաճանությունը հայրենիքի և պետության դեմ։ Հարյուրավոր տարիներ ապրեցաք հանգիստ և բարգավաճեցաք թուրքեն ավելի, ու օսմ. պետության շնորհիվ։ Երբ օր մը անկախ պետություն կազմելու երազը ունեցաք ու դավադրեցիք թուրք պետության դեմ, այն ատեն գտաք ձեր արժանի պատիժը... Մեպուսանի (օսմ. պառլամենտ) հայ անդամ մը Դարեգին Փաստրմաճյան կամ Արմեն Կարո, Կովկասի մեջ կամավորներու խումբ կազմելով թուրք պետության դեմ զենք առավ՝ հազիվ ռուս և թուրք պատերազմը սկսած։ Առանց խորհելու, թե իր ամբողջ գերդաստանը Կարնո մեջ՝ և իր ազգը ասով արդար վրեժխնդրության պիտի ենթարկեր։ Բայց ես կը ցավիմ, որ անցավորին հետ անմեղն ալ, մեղավորին հետ արդարն ալ ոտքի տակ գնաց։ Ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ. զի օսմ. պետությունը իր կյանքի ու մահու մեծ պայքարին մեջ ժամանակ չուներ երբեք անմեղը հանցավորեն զատելու, որով թաց ու չոր միասին այրեցան։ Ո՞ր պետությունն է, որ իր երկրին մեջ ապստամբ ժողովուրդ մը զենքով չի պատժեր... Այս անմեղներուն արյան պատասխանատուն ձեր հեղափոխական կոմիտեներն էին, որ հակառակ օսմ. Սահմանադրությամբ հռչակված հավասարության, ազատության, եղբայրության և արդարության, դարձյալ շարունակեցին սուլթան Համիդի օրով իրենց սկսած դավադրական գաղտնի գործունեությունը, և պատճառ եղան անմեղ հազարավոր կիներու և մանուկներու ողբալի մահվան...

Երբ հասած էինք 4/5-րդը մեր մահվան նամփուն, անշուշտ ավելորդ էր այլևս վերապահությամբ խոսիլ, ուստի փութացի պատասխանել, թե Վանա դեպքերու մասին ոչ մեկ լուր ունինք, թե Արամ փաշայի մը անունը առաջին անգամ է, որ կը լսենք և ստուգիվ իրարու կը հարցնեինք, թե ո՞վ կրնար ըլլալ այս նորելուկ հերոսը։ Բայց իմ խորին համոզումս է, թե իթթիհատի կոմիտեի հայաջինջ քաղաքականության իսկական շարժառիթը ո՛չ Վանի կարծեցյալ ապստամբությունն է, ո՛չ Երզնկայի և ո՛չ Կեսարիո մեջ գտնված ռումբերն ու զանազան հայաբնակ քաղաքներու մեջ հայերե գտնված զենքերն են։ Այլ Իթթիհատի կոմիտեի



ազդեցիկ պետերու կողմե հաճախ թերանացի և գրավոր հիշված այս սպառնալիքն է, որ համաշխարհային պատերազմին բացառիկ պատեհութենեն օգտվելով գործադրության դրվեցավ, թե ԵՐԲ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՐՈՒ ՄԵՋ ՀԱՄԱՁԱՅՆԵԼՈՎ ՕՐ ՄԸ ՓՈՐՁԵՆ ՎԵՐՋՆԱՊԵՍ ԿՈՐԾԱՆԵԼ ՕՍՄ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵՆՔ ԱՅՆ ԱՏԵՆ ՄԵՐ ՓԼԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՆԵՐՔԵՎ ՆԱԵՎ ՊԻՏԻ ԹԱՂԵՆՔ ՄԵՐ ՀՊԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԵՎ ԱՊՐՈՂ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲՈԼՈՐ ՓՈՔՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ...

Բայց մեր խոսակից երկու հազարապետներն ալ մերժեցին այսպիսի սպառնալիքի մը և դաղտնի ծրագրի մը գոյությունը։

Ուստի ստիպվեցա մանրամասնությամբ հիշել հետևյալ վավերական դեպքերը։

Ա. Երբ օսմ. Սահմանադրության վաղորդայնին, հուլիս 13 հինգշաբթի օրը հայ ընդհանուր նահատակաց հոգեհանգստեն վերջ, (որ կատարվեցավ մայր եկեղեցվո մեջ ավելի քան 10.000 հայ ժողովրդյան մասնակցությամբ և ի ներկայության իթթիհատական թուրք մտավորականներու և ազդեցիկ անդամներու) հյուրասիրելու համար՝ Իթթիհատի ամենաազդեցիկ պետերեն մեկ քանին Պատրիարքարան հրավիրվեցան, ուր ինծի հետ ներկա էր՝ այժմ հանգուցյալ Օրմանյան Պատրիարքի մեկ օր առաջ անկումով պատրիարքական տեղապահ նշանակված Դուրյան Եղիշե սրբազան։ Անոնցմե մեկը հետևյալ ճառը խոսեցավ.— Մենք երբեք չենք կրնար չհիշել նյութական, բարոյական և մարդկային այն մեծ ու ծանր զոհողություններն, ինչ որ ըրավ հայ ազգը՝ տապալելու համար համիտյան բռնակալ ռեժիմը։ Մենք հոս հաճույքով կը խոստովանինք, թե հայ հեղափոխականները, և ի մասնավորի հայ հեղափ. դաշնակցության կոմիտեն եղան մեր ուսուցիչը և ոահվիրան, սուլթան Համիդի բռնակալության դեմ մեր վարած ժեռն-թուրք հեղափոխական շարժումին։ Այո, մենք հավետ երախտապարտ ենք հանդեպ հայոց, որ գարշելի բռնակալություն մը տապալելու համար ըրին ինչ որ մարդկորեն հնարավոր էր, ենթարկվելով անլուր հալածանքներու և զրկանքներու։

Սակայն այժմ, երբ օսմ. Սահմանադրության հրատարակումով հայերն ևս տեր եղան իրենց փափագած ազատության և իրավունքներուն մյուս ազգերու նման, կը հուսանք թե այլևս հոգևին պիտի փարին օսմ. պետության, որ ամենքիսն է։

ԲԱՅՑ ԵԹԵ ՀԱՅ ԱԶԳԸ, ՕՍՄ. ՆՈՐ ԵՎ ԱԶԱՏ ՌԵԺԻՄԻՆ ԴԵՄ ԱԼ ԳԼՈՒԽ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՎ՝ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴԻ ՕՐՈՎ ԵՂԱԾԻՆ ՆՄԱՆ ՈՒՋԵ ԿՐԿԻՆ ԴԻՄԵԼ ԴԱՎԱԴՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԱՀԱ ՀԱՄԱՐՁԱԿՈՐԵՆ ԿԸՍԵՄ ԹԵ ՄԵՆՔ ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆՆԵՐՍ ԱՅՆՊԻՍԻ ԽՍՏՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ՊԱՏԺԵՆՔ ԱՅՍՊԻՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԸ, ՈՐ ՊԻՏԻ ՓՆՏՐԵՔ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴԻ ԲՌՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՍԵՎ ՕՐԵՐԸ...

Թեպետ երկու խոսակից հազարապետները անհավանական գտան, որ պաշտոնական անձերու առջև պաշտոնատան մը մեջ՝ ո՛րևէ իթթիհատական մը այսքան անխորհուրդ և անհեռատես կերպով համարձակի այսպիսի հանդուգն հայտարարություններ ընել. բայց ավելորդ էր այս մասին ո՛րևէ առարկություն։ Չի ես անձամբ ներկա էի և ականջալուր էի այս բոլոր խոսքերուն, և նույն օրն իսկ արձանագրեցի առօրյա հուշատետրիս մեջ, ուրկե բառ առ բառ քաղելով հիշեցի հոս։

Բ. Իթթիհատի կոմիտեի անդամ Աբդուլ Ռեշիտ 1912-ին մարտի մեջ, այսինքն բալկանյան պատերազմեն տարի մը առաջ, Բումելի հիսարի իթթիհատական կլուբին մեջ ճառ մը խոսելով, և հայ ժողովրդի անկեղծ բարեկամ լուսահոգի մեծանուն ծերունուն՝ Կլատստոնի համար հայհոյալից լեզու մը գործածելե և—էշեկ օղլու էշեկ—պոռալե վերջ ի մեջ այլոց ըսած էր.— Եթե ամբողջ Եվրոպան մեր վրան հարձակի մեզ բնաջնջելու համար, մենք ալ այն ատեն ստիպված մեզի հպատակ քրիստոնյա ժողովուրդներու դեմ այնպիսի վրեժխնդրական ծրագիր մը պիտի գործադրենք, որ եվրոպացիները պիտի ապշին և չպիտի կրնան մեզի դեմ քայլ մը իսկ առնել...

Հետևապես եզրակացնելով՝ պնդեցի, որ վաղուց Իթթիհատի կողմե պատրաստված ծրագիր մըն էր, որ ներկա ընդհ. պատերազմեն օգտվելով գործադրության դրվեցավ։ Որովհետև եվրոպ. բոլոր պետություններն իրար բզկտելով զբաղած ըլլալով, ի վիճակի չէին արգելք ըլլալու այսպիսի ահավոր ծրագրի մը գործադրության։

Իբր պատասխան սեամորթ հազարապետը հարցուց ինծի, թե ես եկեղեցական էի և ինչո՞ւ քաղաքականությամբ զբաղած էի, և թե մի՞թե կառավարությունը իրավունք չուներ մեզի պես վտանգավոր մարդիկ Պոլսեն հեռացնելու։ Այս առիթով հարցուցի, թե ուրիշ որո՞նք հետս աքսորված էին Պոլսեն։

Պատասխանեցի, թե Պոլսո ամբողջ հայտնի մտավորականները, մեջը ըլլալով նաև հայ հեղափոխական բոլոր պետերը, ինծի հետ Պոլսեն աքսորված էին և թե ո՛րևէ լուր չունեի անոնցմե։ Երբ հարցուցի թե արդյոք իրենք լուր ունի՞ն թե ի՞նչ եղած են, երկու հազարապետները իսկույն պատասխանեցին.— Աստված ձեզի կյանք տա, անոնք ամենքն ալ մեռած ըլլալու են...

Միայն մասնավոր ցավ հայտնեցին Զոհրապի և Վարդգեսի մահվան համար՝ ըսելով, թե անձնասպան եղած է Վարդգեսը, իսկ Զոհրապը սրտի հիվանդություն ունենալուն կաթվածահար եղած է։

Իսկ մենք մեր այս եղերապատումի ընթացքին տեսանք արդեն, թե որպիսի՛ ահավոր մարտիրոսագրությամբ սպանվեցան այս երկու դժբախտները Ուրֆայե մեկ քանի ժամ հեռու, Տիգրանակերտի կուսակալ հայակեր գոկտ. Ռեշիտի ղրկած չեթեներուն ձեռամբ։

Երբ Պոլսեն մեզի ընկերացող և ողջ մեզի հետ դեռ մնացող հայ մտավորական երիտասարդներեն մեկ քանին, որ այս խոսակցությանց և վիճաբանությանց կը մասնակցեին, դառնապես գանգատեցան մեր աքսորական քարավանին կրած տառապանքին ու թշվառության մասին, պատասխանեցին երկու հազարապետները անտարբերությամբ—աղոթեցեք որ ուշ տեղահան ըլլալնուդ շնորհիվ, կրցեր եք ողջ հասնիլ մինչև հոս՝ և դեռ կ'ապրիք, ալ ի՞նչ կ'ուզեք...

Իսկ ես համաձայն, ծովը ինկողը օձին կը փաթթվի, արևելյան ժողովրդական առածին, երբ իրենց կարեկցության դիմեցի և խնդրեցի իրենց միջնորդությունը, տեղական կառավարական թուրք պաշտոնեից մոտ Հալեպ կարենալ մնալու համար, սեամորթ հազարապետը պատասխանեց իսկույն.— Ձեր Զոր Հալեպե լավ տեղ է... քանի որ ձեր պաշտոնաթուղթը ան տեղի համար է, պետք է հոն երթաք, և մնացորդ հայերդ ապա հոն հայկական անկախ իշխանություն մը կը հաստատեք օր մը...

Ակներև է՝ թե այս մարդիկ եկած էին մեր մոտ՝ ոչ թե մեզ մխիթարելու, այլ մեծցնելու մեր անպատում տառապանքը և խորացնելու խոցերը մեր արդեն արյունոտ վերքերուն

Ա՛լ ավելորդ էր վիճաբանությունը շարունակել. երկու հազարապետներն ալ հեգնախառն բացատրություններով հասկցուցին մեզի, թե ազգովին արժանի էինք մեր կրած սարսափելի տիեզերական պատմության մեջ անլուր այս ահավոր պատժին, և թե մահեն զատ ուրիշ փրկություն չկար մեզի համար...

Երկու հազարապետները մեկնեցան թրքական հրաժեշտի կեղծավոր ձևակերպություններե վերջ, թողնելով մեզ կրկին մեր չարաշուք ճակատագրին հետ դեմ առ դեմ։

Իսկ մեզմե անոնք, որոնք երկու թուրք այս հազարապետներու այցելութենեն տառապանքի թեթևության աղոտ հույսեր ունեցած էին, կրկին խորասուզվեցան իրենց անհուսության ալեկոծ ծովուն մեջ, այս անգամ բոլորովին բարոյալքված։

## 34.

## ՏԵՐ ԶՈՐԵՆ ԲՈԹԱՔԵՐ ԼՈՒՐԵՐ

Ըստ սովորության՝ կաշառքի շնորհիվ հաջողեցա բացառի՛կ թույլտվություն ձեռք բերել, առանց հսկողության կամ առանց ոստիկան զինվորի ընկերակցության կրկին երթալու քաղաք, կատարելու համար մեր տառապանքի ընկերներուն գնումի ապսպրանքները։

Այս առթիվ տաք ապուր մը ուտելու փափագանոք մտա երկաթուղու կայարանի հանդիպակաց հույնի մը ճաշարան։ Բայց որովհետև կեսօրին դեռ բավական ժամանակ կար, ստիպվեցա սպասել երկար, քանի որ ոչ մեկ կերակուր դեռ պատրաստված էր։ Մինչ պատուհանին կից անկյուն մը քաշված կը դիտեի խուզարկու աչքերով անցորդները՝ ողջ մնացած հայեր փնտրելով, հանկարծ կիսաբաց պատուհանեն ներս երկարացավ կմախացած փոքրիկ ձեռք մը։

Հազիվ ութամյա տղեկ մըն էր՝ անապատներու արևեն սևացած, կաշիացած մորթով մը։ Ոչ միայն գլխաբաց ու բոկոտն էր, այլև համարյա մերկ էր, զի այն ցնցոտիները, որ հեգ մանչուկին ուսերեն կախ ինկած էին, և ոչ իսկ կեսը կը ծածկեին հալումաշ եղած մարմինին։

Հայտնի էր, թե սովալլուկ տղեկ մըն էր. զի իր մորմը կը կրեր դեղին բիծեր սովատանջ մարդոց։ Թշվառ տղեկին դեմքին մարդկային գծերը այնքան այլանդակված էին, որ չպիտի քաշվիմ ըսելու, թե մարդե ավելի կապիկի կը նմաներ։

Մարդ չէր, այլ իրապես մարդկային ուրվական մըն էր՝ գերեզմանե նոր հարություն առած, ազազուն ուշարժուն ստվեր մըն էր, որը տեսնել ու չգթալ անկարելի էր։ Եթե նույնիսկ Ցեր Զորի մահվան ճամփուն վրա մեզի նման ոչ նվազ կարեկցության արժանի մարդիկ ըլլային, դարձյալ պիտի գթային այս հեգ մանչուկին։ Զի մենք դեպի գերեզման գնացողներ էինք, իսկ այս կենդանի կմախքը կը թվեր թե գերեզմանեն նոր ելած դարձող մըն էր... Հազիվ լսելի ձայնով մը կ'աղաչեր ըսելով թուրքերեն.— Էֆենտի էօլիւլէրին ճանք իշիւն օն փարա վէր...։— Մեռելներուդ հոգվույն համար տասը փարա տուր... կ'ըսեր... այո, գերեզմանեն կու գար և մեռելներու անունով պատառ մը հաց կ'աղաչեր...

Այնքան հուզված էի, որ այս թշվառ տղեկը իսլամի մը որբը կարծելով հանդերձ, հինգ դահեկան տվի, որ հեռանա աչքերես... Զի տառապած հոգիս անզոր էր տոկալու այս հուզիչ տեսարանին և չեմ գիտեր ինչո՞ւ, բարոյալքություն մը հաջորդած էր կարեկցությանս, թերևս խորհելով, որ վաղը մենք ալ այսպես պիտի ըլլայինք...

Սոսկումով հազիվ դրամը տղեկին չորցած ափը դրած՝ կ'աճապարեր իրմե տասը քայլ հեռու իրեն սպասող քրոջը քով, հևասպառ իր թոքերու ամբողջ ուժովը պոռալով—Զարուկ Ցեր պապան ինձի հինգ ղուռուշ տվավ։ Քովը գնա, հելպետ քեզի ալ կու տա։

Անհուն թախիծ մը կը խոցոտեր տառապահյուծ հոգիս։ Բա՜ռ իսլամ կարծած տղեկս հայ է եղեր... իսկ հեռուն կանգնած ազազուն ստվերը՝ Զարուկը, հազիվ տասներկուամյա աղջնակ մը, ասոր քույրն է եղեր... Այս վերջինը հազիվ իր ոտքերուն վրա կը մնար, և ցորենի ցողունի մը նման կը տատաներ՝ հակառակ գարնանային գաղջ և առանց հովի օր մը ըլլալուն։

Քաջալերված փոքրիկ իր եղբոր Հակոբի խրախուսիչ այս հրավերեն, դանդաղ քայլերով մոտենալով պատուհանին՝ իր

կարգին ներս կը կարկառեր կաշեցած և ոսկորուտ ձեռքը, ըսելով.— Տեր պապա, մեռելներուդ հոգուն համար, տասը փարա տուր... երկու օր է անոթի ենք...»։

Վարդի կոկոն մըն էր, որ դեռ չբացված թարշամեր էր։

Այս փոքրիկ աղջնակն ալ եղբորը նման կենդանի կմախք մըն էր, շարժուն ստվեր մը, որ թերևս մեկ-երկու օր հազիվ կրնար դեռ քարշ տալ իր սպառած մարմինը։

Ճշմարտությունը խոսած չըլլալու համար պետք է հիշեմ, թե համարյա մերկ էր, և ոչ իսկ իր վրա կախ ինկած զգեստի մը թափթփուքները կը ծածկեին իր ամոթը։

Եվ բա՜ռ թուրք լկտի անցորդներ կը հեգնեն եղեր... թշվառ Զարուկի մերկությունը, և կը զվարճանան եղեր լսիրշ հայհոյանքներ ընելով... Իսկ անմեղ աղջնակը լալով կը պատմեր ինծի այս ամենը...

Շուրջ բոլորս քննելե և ստուգելե վերջ, որ ճաշարանին մեջ իսլամներ չկան, և կեսօրվան ճաշի դեռ շատ ժամանակ ըլլալուն ոչ ոք կար ինծմե զատ, հրավիրեցի երկու հայ որբուկները պատուհանիս մոտը։ Ի պատասխանի՝ իրենց վիճակի մասին ստույգ տեղեկություններ քաղելու մտոք ըրած կարեկից հարցումներուս, փոքրիկն Զարուհի հետևյալը պատմեց դպրոցական աղջկան մը մաքուր հայերենովը, բայց անկապակից կերպով, որուն միայն ամփոփումը կու տամ ստորև։

— Տե՛ր պապա, ես ու եղբայրս ատաբազարցի ենք. հայրիկս վաճառական մըն էր և քաղաքին մեծերեն։ Ես Ատաբազարի հայուհյացը կ'երթայի, մեր ընտանիքը 14 հոգի էինք, հայրս, մայրս, քույրերս, եղբայրներս, մորաքույրներս և մորեղբայրներս ամենքն ալ ճամփան և մանավանդ Իսլահիյեի մեջ մեռան և միայն մենք երկուքս մնացինք... իցի՜վ թե (իր բառով «Քեշկե») չմնայինք... Ա՛լ անկարող սուգի ու տառապանքի պատմությունը շարունակելու սկսավ լալ հեկեկանոք, մինչ փոքրիկ եղբայրը Հակոբիկ— մի լար Զարուկ—կ'ըսեր ու կը քաջալերեր իր քույրը։ Ա՜խ Տեր պապաս, մենք ալ հարուստ էինք, տուներ, խանութներ և պարտեզներ ունեինք, հիմա բան մը չունինք և մուրալով կ'ապրինք ես և եղբայրս։ Այս միջոցին ներս մտան երկու հայ զինվորներ արևակեզ դեմքերով, որոնք կու գային Տեր Զորեն և զինվորական վարչության մեջ կառապան են եղեր։ Ներս մտնող այս երկու հայ զինվորներն բարև տալով՝ եկան ուղղակի դեպի ինծի և նստան մոտս։

Շարունակելով հարցումներս, Զարուհի ևս շարունակեց պատմել.— Ա՜խ Տեր պապաս, ո՛ւր կ'երթանք մեզ կը վռնդեն, հայերու պարապ թողած տունները կը մտնեին պատուհաններեն և գիշերները հոն կը պառկեին. բայց հիմա թուրք գաղթականներ լեցուցին. կ'երթանք խաներուն ախոռները աղբերուն մեջ գիշերը կը թաղվինք կը պառկինք։ Բայց շատ անգամ հոս ալ չեն թողուր, որ քնանանք և պարտեզներուն մեջ լեցված շոր աղբերուն մեջ կ'երթանք թաղվելու գիշերը և քնանալու՝ միայն գլուխնիս դուրս թողած։ Մենք երբ ձմեռը մտանք՝ շատվոր էինք և բոլոր հայ որբերս մուրալով կ'ապրեինք. բայց ամենքը չդիմացան ցուրտին և անոթության և մեռան, և մենք միայն մնացինք։ Ես ալ հիվանդ եմ. թուրք երիտասարդները ինծի հիվանդություն տվին... երբ որ դեռ լավ էի. ալ հիմա ես ալ ուժ չունիմ և լմնցա... Ա՜խ Տեր պապա, չե՞ս կրնար մեզ Ատաբազար ետ ղրկել. մենք շատ կալվածներ ունինք. հոն մենք կրնանք ապրվիլ։ Ուր երթանք՝ մեզ թուրքերը կը վռնդեն, եթե չես կրնար ետ ղրկել, ո՛ւր որ երթաս՝ Հակոբիկը և զիս հետդ տար, այս տեղեն ազատինք, փողոցներուն «չեոփերը» կ'ուզենք ուտել, այս անգամ ալ շուները չեն ձգեր...

Անտերունչ որբուհին այս սրտաճմլիկ պատմությունները ըրած ժամանակ, երկու հայ ունկնդիր զինվորներեն մեկը, որը մալաթիացի մըն է, չափազանց զգացված, գանակոծված տղու մը նման լալով կ'ըսեր.— զավակնե՛ս ողջ մնացած մը եթե հիմա կա, ո՞վ գիտե այժմ ո՞ւր տեղվանքը կը մուրա կոր ասոնց պես... Աստված իմ, այս ի՞նչ վիճակի հասանք, մեզ գնչուներեն ալ գեշ ըրին...

Նավաբեկյալ հայության այս վերջին թշվառ խլյակներուն տեղեկությունները, զորս այնքան մանկական անմեղունակ պարզությամբ պատմած էին, մեզի այնքան հուզում և կսկիծ պատճառած էր, որ չէինք նշմարած այն ամենազգի հաճախորդները, որոնք հետզհետե ճաշի ժամանակը հասած ըլլալուն՝ ներս մտնելով ճաշարան՝ տեղավորված էին մեկ-մեկ անկյուն և զարմանքով կը դիտեին մեզ։

Երկու հայ որբերը ըստ մեր կարողության պարգևատրելով ճամփու դրինք առժամապես՝ խորապես համոզված, թե քիչ

սրտի վերջ մեր ճամփաները պիտի միանային հավիտենականության մեջ։

Մենք մեզի մնալե վերջ, երկու հայ զինվորները չափազանց հետաքրքրված անձով՝ կը զարմանային, որ դեռ ողջ մնացած հայ եկեղեցականի մը հանդիպելու բախտն ունեցած էին, և կը խնդրեին, որ պատմենք գոնե գլխավոր իր գծերուն մեջ և հակիրճ կերպով եղեռնապատումը մեր հայ Գողգոթային։

Հազիվ մեր խաչի ճամփան աղոտ կերպով գծած, այս անգամ իրենք կը սկսեին պատմել իրենց ոչ թե լսածներն, այլ տեսածներն Տեր Զորի անապատի ճամփաներուն վրա։ Մալաթիացին ըլլալով քիչ շատ ուսում առած կտրիճ երիտասարդ մը, պատմեց ինծի հետևյալը.— Հայր սուրբ, ի՞նչ պատմեմ, ամենքին գիտցած բանն է. ա՛լ լմնցանք, ա՛լ չկարծեք թե հայություն մնաց, և եթե դեռ քիչ մը ողջ մնացողներ կան, ասոնցմե ալ խեր չկա...։ Իրավ է, թուրքերը լմնցան, սակայն մեզ ալ հետերնին լմնցուցին գարշելիները։

Ի՞նչպես պատմեմ, որ ի՛նչպես հասկնաք, մանավանդ Տեր Զոր գացողներուն քաշածները անկարելի է որ մարդկային լեզուն պատմել կարենա։ Հազարավոր ընտանիքներ Հալեպեն ճամփա հանվեցան Տեր Զոր ղրկելու համար, ասոնցմե հարյուրին հինգն ալ չկրցավ ողջ հասնիլ Տեր Զոր։ Որովհետև անապատի «էնեզե» կոչված ավազակներ ձիավոր խումբերով և նիզակներով զինված՝ հարձակեցան անտեր ու անպաշտպան ժողովուրդին վրա, զարկին, սպանեցին, առևանգեցին, լլկեցին, կողոպտեցին, հավնածնին առին տարին, ընդդիմացողները ահռելի չարչարանքներու ենթարկեցին և թողին գնացին։

Իսկ ողջ մնացողները, որովհետև ետ դառնալ արգելյալ էր և անկարելի, ճարահատ առաջ գնացին ու ենթարկվեցան նոր հարձակումներու, ալանի ու թալանի, և այսպես միշտ կոտորակվելով հարյուրին հինգը չկրցավ հասնիլ Տեր Զոր։

Տեսանք կիներու քարավաններ, որոնք ամբողջապես մերկ էին. որովհետև մինչև ներքին ճերմակեղենները առած տարած էին քարավանները դիմավորող «էնեզե» ավազակները։ Հանդիպեցանք հազարավոր դիակներու, որոնք մորե մերկ էին և որոնց աչքերը փորված էին ու բոլոր անդամները զրոսանքի համար կտրված և մարմինները ուռած, փորոտիքը դուրս թափված. ցորեկը անգղները կու գային այս դիակներուն վրա արյան խնջույքի, իսկ գիշերները վայրի կենդանիները։ Հայր սուրբ, ո՞ւր է հայուն Աստվածը... ո՞ւր է ձեր քարոզած Հիսուսը... մի՞թե չի տեսներ հայուն այս անլուր թշվառությունը և տառապանքը։

Եթե այս քարերն, դաշտերն ու անապատներու ավազներն լեզու ունենային, ա՜խ, ի՞նչեր պիտի պատմեին... Մեկ մը անցյալ տարի աքսորին ատենը այս տեղվանքը ըլլայիր և աչքովդ տեսնեիր հայ ժողովուրդին քաշած նեղությունները... Հայր սուրբ, խեղճ ժողովուրդը բռնի մեռցուցին, անոթի և ծարավի»։

Աստուծո ջուրը դրամով ծախեցին, և ով որ շատ դրամ տվավ, անոր ջուր տվին միայն... Խեղճ ժողովուրդը հոտած և նեխած ջուրերը իսկ խմելու հոժար էր, բայց այս ջուրերն իսկ դրամով ծախեցին։ Արդեն թուրքին միտքն ալ մեզի մեռցնել չէ՞ր, ահա անօրենին ուզածը եղավ, աչքը լույս։

Հիմա ըսեմ չես հավատար. քանի՜ քանի՜ անգամներ անապատներուն մեջեն զինվորական կառքերով փոխադրություն ցրած ժամանակս տեսա անոթի կիսամերկ կիներ և փոքրեր, որոնք սատկած ու հոտած կենդանիներու կամ ուղտերու շուրջը հավաքված՝ ասոնց դիակները կ'ուտեին... Տեսա մայրեր, որոնք նոր մեռած փոքրիկ մանուկները կրակը նետելով կես եփած կամ կես հում կերած են և հետո խենթացած... կամ անոնք, որ նեխած դիակներ կերած են, թունավորված են և մեռած...

Երբ հետաքրքրվելով մանրամասնությանց հարցուցի, թե աքսորական ժողովուրդին քարավաններուն հետ մի՞թե ոստիկան զինվորներ չկային և մի՞թե չպաշտպանեցին, պատասխանեց.— Ի՞նչ կ'ըսեք կոր. ավազակներուն արդեն լուր ղրկողները ժողովուրդին ընկերացող և անոր ապահովության հսկելու պարտականություն ստանձնող ոստիկան զինվորներն էին։ Ասոնք միանալով հարձակող ավազակներուն հետ՝ կը կողոպտեին անտեր-անտիրական խեղճ ժողովուրդը, և ավազակներուն ցույց կու տային տեղերը գեղեցիկ աղջիկներուն, և ոսկի կամ ադամանդ զարդեր և կամ հնչուն դրամ ունեցողներուն։

Հայր սուրբ, կենճությանդ մեղք է, ասկե առաջ չըլլա որ

երթաս, գլխուդ ճարը նայե, քեզի ալ մեղք է, ազգին ալ մեղք է, արդեն քանի՞ հոգի մնացինք որ...

Ավելորդ էր կասկածիլ հայ զինվորին սիրտցավ այս բոլոր պատմածներուն ճշմարտությանը, որը պատմած էր միայն զիս զգուշացնելու համար, որ ճամփան շարունակելով ինքնաբերաբար մահվան գիրկը չնետվիմ, որը անձնասպանություն և ազգասպանություն էր անշուշտ։ Այո՛, ստուգիվ միամտություն էր կարծելը, թե թշվառական թուրքերը հայու արյունեն կշտացած էին։ Ո՜հ, ոչ, դեռ ծարաւի էին հայու անմեղ արյունին դարավերջիկ մարդ—հրեշ այս վամպիրները։

Այո՛, պետք էր փախչիլ, և իրավունք ունեին ամեն անոնք, որոնք ջանացին զիս համոզել փախչելու, հաստատելով, որ փախչողները հաջողած էին միայն ողջ մնալ։

Ստուգիվ քայլ մը իսկ առաջ երթալ հիմարություն էր, պետք էր վճռականություն ունենալ։

Արդեն այս նույն օրվան մեջ տեսածներուս և լսածներուս արդյունքը սա եղած էր, որ խորապես համոզված էի, թե պետք է այս պատեհությունները օգտագործել, և որոշած էի փախչիլ. հիմա կը մնար անմիջական գործադրությունը, որովհետև ժամանակ չկար կորսնցնելու։

Ուստի աճապարեցի ծրագրել փախուստս, և միտքս հոգնեցնել փախուստիս մանրամասնություններով, զի գիտեի, թե աննշան համարված մանրամասնություն մը շատ անգամ պատճառ կը դառնար ամենալուրջ ծրագիրներու վիժումին։

Իսկ այժմ փախուստի ծրագիս անհաջողության պարագային՝ բացահայտ էր, որ մահվամբ պիտի պատժվեի։

Է՜հ կամենալն՝ կարենալ էր։

## 35.

## ՓԱԽՈՒՍՏ ԻՍԼԱՀԻՅԵԵՆ ԴԵՊԻ ԱՅՐԱՆ

Որոշումը տրված էր, գործադրությունը միայն կը մնար։

Խմբովին փախչելու ամեն փորձ դժբախտաբար ապարդյուն մնացած էր, որովհետև մեր մարդիկը ա՜յնքան բարոյալքված



էին, որ անկարող դարձած էին այլևս ո՛րևէ վճռական քայլ առնելու, թեպետ և ասով իրենց փրկությունը ապահովված ըլլային թերևս։

Տառապանքի մեր դժբախտ ընկերները ա՛յնքան հյուծած ու սպառած էին, որ ինծմե կը խնդրեին կարելին ի գործ դնել՝ մեկ քանի օր Իսլահիյե մնալու արտոնություն ձեռք բերել կառավարական ձեռնհաս անձերե, գոնե փոքր-ինչ կազդուրվելու համար։ Ամենքս ալ կը սարսափեինք, երբ ոստիկան զինվորներն մեզի կ'ըսեին թե 7 օր դեռ ունեինք քալելու՝ Հալեպ հասնելու համար։ Մինչդեռ Իսլահիյեեն Հալեպ երկաթուղին հինգ ժամեն արդեն կը հասներ։ Սակայն աքսորականներու համար արգելյալ էր երկաթուղիով ճամփորդել, քանի որ աքսորի անվան ներքև թուրք պետական մարդոց արդեն իսկական նպատակն էր՝ տաժանակիր և երկարող ճամփորդությամբ մը հալումաշ ընել և մեռցնել անոնք, որոնք բախտն ունեցած էին ճողոպրելու կացինի խուժդուժ մահեն։

Այս պատճառով ալ Իսլահիյեի կառավարական պաշտոնեից մոտ՝ երկաթուղիով ճամփորդելու մասին եղած ամեն դիմում ապարդյուն մնացին։

Բայց գոնե մեկ քանի օր Իսլահիյե մնալով կազդուրվիլ կարենալու համար՝ պետք տեսնվեցավ եռանդուն դիմումներ կատարել։ Միսի մեջ մեկ քանի օր ավելի մնալու մեր դիմումներեն սա դառն փորձառությունը ստացած էինք, թե լավ է փոխանակ կառավարիչին դիմելու, երբեմն ալ իրավախոհ ըլլալ ոստիկանապետին և ոստիկան զինվորներու հրամանատարին հետ, ի հարկին կաշառքով ձեռք բերելով փափագված արտոնությունը։

Ստուգիվ ամենակարճ ճամփան այս էր եղած միշտ, կարենալ ձեռք բերելու համար մեր հետապնդած նպատակները։

Ուստի աճապարեցի առանձին երթալ կրկին քաղաք, և դիմելով ուղղակի կառավարչատուն՝ առանձինն տեսա ոստիկան զինվորներու փոխհարյուրապետը, և մեկ քանի հնչուն ոսկիով իսկույն իրավախոհ եղանք, ձեռք բերելով 2 օր ավելի մնալու բացառիկ թույլտվություն։

Ոստիկան զինվորներու հերթապահ սպան գնաց իսկույն զեկուցանելու իր պետին, թե մեր քարավանին ընկերանալու

համար պատրաստի 6—8 ոստիկան զինվորներ չկային. ուստի երբ գառնային գնացողները, այն ատեն միայն հնար պիտի ըլլար մեզ ալ ճամփա հանել։

Ահա օրինակ մը, թե թուրքերը ինչպե՞ս դիտեին իրենց ուզածը քալեցնել՝ այս կարգի կողմնակի ձևերու ներքև, երբ վճարող մը ըլլար, փույթ չէ, թե իրենց ըրածը բացարձակապես հակառակ ըլլար օրենքի։

Հոգիվ այս հրամանը ձեռք բերած և գառնալով մեր քարավանին մարդոց հաղորդած, արդեն ամեն ոք ուրախ էր, որ գոնե 2 օր պիտի կրնայինք շունչ առնել մեր մեկուկես ամսվան անդադրում և տաժանակիր ճամփորդության մեջ։

Ամեն ոք սկսավ հնարավոր միջոցներ ստեղծել՝ կարելու համար իր պատռտած զգեստներն ու կոշիկները։ Սափրիչ բերել տալով ամեն ոք ջանաց մաքրվիլ այն մազերեն ու մորուքներեն, որոնք դաշտը ծածկող մացառներու նման խեղդած էին մեր գլուխն ու դեմքը, իրապես վայրենաբարո դրսևորույթ մը տալով մեզի։

Ամեն ոք հետամուտ էր, որպեսզի ո՞րքան հնար է երկու օրվան մեջ կարողանա մաքրվիլ, կարկըտվիլ, կազդուրվելու տաք սնունդ առնել և պատրաստվիլ երթալու հայ Գողգոթային վերջին մնացորդ ճամփան՝ դեպի Տեր էլ Զոր, ուր որոշված էր մեզի համար երթալ անպայման։ Կը սարսափեինք, երբ կը հիշեինք, որ Տեր Զոր հասնելու համար դեռ ամիսեն ավելի ճամփա ունեինք քալելիք, Մեսքենեի և Ռեսուլայնի ավազի անապատներու միջով։

Օգտվելով այս բացառիկ երկու օրվան հանգիստեն, միաժամանակ ուզեցի փորձ մը ընել և միջոցը գտնել երկաթուղիով դեպի Հալեպ երթալ կարենալու համար։

Իսլահիյեի երկաթուղու կայարանի քրիստոնյա, արաբ պետեն իմանալով, որ այս մասին լիազորը կայարանին մեջ պաշտոնով բնակությամբ հաստատված գերման հազարապետ մըն է, փութացի ներկայանալ իրեն և խնդրել առ այս բացառիկ թույլտվություն, որպեսզի մեր ամբողջ քարավանը հաճի երկաթուղիով փոխադրել Հալեպ։

Գերման սպան շատ ընտանեբար ընդունեց զիս, և կարեկցությամբ լսեց աքսորի տաժանակիր ճամփորդության սարսափելի դրվագները, միանգամայն ուզեց տեղեկություններ քաղել գերմաններեն լեզվի ունեցած հմտությանս մասին։



Երբ իրազեկ եղավ, թե 1914-ի աշնան պատերազմի հայտարարությենեն վերջ Բեռլինի համալսարանը թողնելով դարձած էի Պոլիս և դատապարտված աքսորի ու այս հալածական հալումաշ կյանքին, կարի խղճաց և խոստացավ կարելին ընել մեր քարավանը երկաթուղիով փոխադրելու համար դեպի Հալեպ։ Իմ ներկայության իսկ անմիջապես հեռագրեց Հալեպի երկաթուղու փոխադրությանց գերման ընդհանուր հրամանատարին, որպեսզի բացառաբար թույլտվություն շնորհե մեր քարավանին հարյուրե ավելի անձերը երկաթուղիով փոխադրելու Հալեպ։

Երբ իր հանձնարարության վրա 4 ժամ վերջ հանդիպեցա կրկին իրեն, մեծ ուրախությամբ հայտնեց ինձի, թե հրաման եկած էր մեկ վագոն տրամադրելու մեզի համար։ Հետևապես միայն առավելագույն հաշվով 60 հոգի կրնար միայն ընկերանալ ինձի երկաթուղու գնացքով, և մնացածը պետք էր դարձյալ ոտքով երթային դեպի Հալեպ։

Տեսնելով, որ մնացորդ մեր ընկերներն ալ երկաթուղիով մեզի ընկերացնելու նոր փորձ մը ավելորդ կը համարեր գերման սպան, կես ուրախ, կես տխուր դարձա մեր քարավանատեղին՝ լուրը մեր ընկերներուն հաղորդելու։

Արդարև տպավորությունը չափազանց վրդովիչ եղավ. զի երկու խումբեր չանկըրիցի և յոզկատցի, որոնք միացած էին եղերական պարագաներու ներքև Յոզկատի մոտերը, այժմ պիտի բաժնվեինք իրարմե անդարձ։

Կը մնար քարավանը ուրեմն երկուքի բաժնել։

Օ՜հ, ո՞րքան դժվար էր ինձի համար այս խորությունը ընել։ Մանավանդ որ աղքատ մասին վրա, որոնք 54 յոզկատցիներն էին, շատ ավելի երախտիք ունեցած էի, քան մյուսներուն վրա։ Ջանոնք խնամքով և գուրգուրանքով ամբողջ ճամփու ընթացքին պատսպարած էի և կերակրած, մերթ մուրալով, մերթ անձնականեն հոգացած էի իրենց չոր հացի համար ունեցած միակ պահանջը։ Իսկ այժմ իրենց փրկության համար տարած բոլոր ջանքերս իզուր պիտի երթային, քանի որ զիրենք զատելով ինձմե՝ պիտի հանձնեի ամենքը բախտին չար հովերուն։

Հասավ վերջապես դժբախտ օրը հավիտենական բաժանման. Իսլահիյեի տեղական կառավարությունը՝ Հալեպեն ստացած հեռագրական հրամանին վրա հրամայած էր մեզի

ըսելով՝ ով որ մինչև Հալեպ Երկաթուղու տոմսակի արժեքը կրնա վճարել, կրնա երկաթուղիով երթալ, իսկ վճարել չկրցողները պետք է պատրաստվին իսկույն հետիոտն մեկնելու դեպի Հալեպ։

Յոզկատցի 54 տարագիրներ, մնացորդ ազազուն բեկորներն Յոզկատի 3000 տուն հայության, 16—85 տարեկան, մեկը մյուսեն ավելի հյուծած ու հալումաշ եղած, շրջապատված ութը ոստիկան զինվորներե՝ եկան ահա հրաժեշտ առնելու ինծմե և մնացող ընկերներեն։

Ամենքս ի մի վայր հավաքված էինք, երբ մի առ մի մոտեցան աջահամբույրի։ Ամենքն ալ կու լային դառնապես և երախտագիտական բառեր կը թոթովեին հազիվ լսելի ձայնով մը։ Անոնք ձեռքս կը համբուրեին, ես ալ անոնց արևակեզ սևցած ճակատները։

Նահատակված ցեղիս մնացորդ բեկորներն էին, որ դարձյալ չեմ գիտեր քանի՛երորդ անգամը ըլլալով դեպի մահ ճամփու կը դնեի... ա՛լ անգամ մըն ալ չտեսնելու համար։

Ասոնցմե հազիվ մեկ քանին չորաբեկ հացի մը դրամ ունեին, մնացյալ 50-ը ոչինչ ունեին։

Թախանձագին կոչերուս վրա՝ չանկըրիցիներեն ոմանց օգնությամբ, հազիվ կարելի եղավ արծաթ դրամով 135 դահեկան հանգանակել։ Ասոր վրա ավելցնելով իմ մոտը գտնված և փախուստիս հաջողության համար մեկ բարեկամե մը նույն օրը ինծի տրված երկու հնչուն ոսկիին մեկը, ընդամենը 250 դահեկան հանձնեցի իրենց ղեկավարին, որպեսզի ճամփու ընթացքին հոգա այս թշվառներուն հացի պահանջը։ Միակ գումարը, որ մինչև մահ պիտի ունենային։

Դժբախտաբար այնպիսի վիճակի մեջ էինք ամենքս ալ, որ մեր կյանքի փրկության համար հաճախ կաշառք տալով և զանազան պատճառներով մեծ մասամբ այլևս զուրկ էինք նյութական միջոցներե։ Մյուս կողմեն վաղվան անծանոթին տատհոգությունը վերապահ և զգուշավոր դարձուցած էր նաև անոնք, որոնք դեռ ի վիճակի էին օգնելու ուրիշներուն։

Հարկ է սակայն խոստովանիլ միանգամայն, թե տակավ առ տակավ ֆիզիկական մեր սպառող ուժերուն հետ նույնպես և նվազած էր մեր բարոյական արժեքը։ Մոտալուտ մահվան խուճապը մեզ ամենքս ավելի անձնապաշտ դարձուցած էր և նվազ կարեկից էինք դեպի մեր բախտակից ընկերներուն թշվառությունը։

Քանի մեր տաժանակիր ճամփորդությունը երկարեցավ և քանի հյուծեցանք թե՛ նյութապես, թե՛ ֆիզիկապես, նո՛ւյնքան և սպառեցանք բարոյապես, և ակելի սկսանք մենք մեզ փրկելու մտատանջությամբ վարակվիլ։

Եթե դառն է խոստովանիլ մեր հոգեկան ուժերու այս ոչ պատվաբեր կողմը, նո՛ւյնքան և հանուն ճշմարտության պետք է հիշեմ անոնք, որոնք իրենց ազնիվ և անձնվեր ընթացքովը վտանգներու պահուն դյուցազնական հոգի մը ցույց տվին, և չտարվեցան տկար հոգիներու միայն հատուկ եղող եսամոլական ընթացքներեն։

Անկարելի է մոռնալ ահավոր այս բաժանման սև օրը։

Ա՜խ ո՛րչափ երախտագետ էին, ո՛րչափ ազնիվ և ո՛րչափ հավատարիմ իրենց ազգության ու կրոնին։ Ասոնք զրկված ամեն ինչքե և սիրելիներե, գտնվելով հանդերձ իրենց կյանքի վերջալույսին մոտ՝ դյուցազնական հոգի մը ցույց տվին՝ հանդեպ մահվան ցույց տալով բոլորովին արհամարհանք։

Մերկացած մարդկային աղտոտ ունակություններե, ահավոր տառապանքի օծումով սրբացած ի հայտ կը բերեին այն բոլոր ազնիվ ձիրքերն, որոնք հայ ցեղին բյուրեղացյալ արժանիքներն եղած են հազարավոր տարիներե ի վեր, և որուն մեջ պետք է փնտրել ցեղին գոյության հարատևությունը և տոկունության գաղտնիքը։

Գնացին ամենքն ալ անդարձ և այսօր կը հանգչին հավիտենական քունով Տեր Զորի անապատներու ավազներուն մեջ զոհ երթալով Ռեսուլայնի մեջ 1916-ի ամռան Տեր Զորի համատարած ջարդերուն։ Միակ խումբն էին յոզկատցիներու, որոնք կրցան ողջ հասնիլ հարավի անապատները և բազմաշարշար նահատակությամբ իրենց արյունն ալ խառնեցին Տեր Զորի մեջ այդ օրերուն նահատակված 160.000 հայ բեկորներու թափած հորդահոս անմեղ արյան հետ։

Երբ մեր այս դժբախտ ընկերները ճամփու դրինք դեպի Հալեպ, մեզի եղած թույլտվության համաձայն տեղափոխվեցանք մեզի տրամադրված երկաթուղու երրորդ կարգի վագոն մը, որ կայարանեն քիչ հեռու կը գտնվեր։

Ճիշտ այս միջոցին սարսափելի տեղատարափ անձրև մը սկսած էր Իսլահիյեի դաշտը մեր առջև լճի դարձնել։

Կեսօրվան պահուն մոտեցավ բավական ուժեղ ֆիզիկական կազմվածքով հայ մը, շուրջ հիսունամյա, և ուզեց տեղեկություններ քաղել մեր աքսորի ճամփաներուն մեջ կրած մեր ամենօրյա տառապանքներուն մասին։

Ճիշտ այն պահուն մեջտեղ ելավ այս մարդը, երբ իզուր միտքս կը հոգնեցնեի փախուստի ճամփա մը գտնելու համար։ Բայց ամեն ճամփա փակված կը գտնեի առջևս, մանավանդ որ չէի կրնար փախուստի գաղափարս և այս մասին պատրաստած ծրագիրներս վստահիլ ուրիշներու հայտնելու։ Չի մի գուցե գործը իր սաղմնային վիճակի մեջ ինքնին վիժեր անգաղտնապահությամբ մը, և անձս ալ վտանգեի իզուր։

Սակայն հազիվ այս մարդը հեռացած՝ բնազդաբար քաջալերվեցա երթալու բռնելու այս մարդը, և անվերապահ կերպով բանալու սիրտս և հայտնելու փախուստի գաղտնի ծրագիրս։

Երբ պաղարյամբ լսեց փախուստիս ծրագրիս մանրամասնությունները, դարձավ և ըսավ ինծի.— Ճիշտ փնտրած մարդդ ես եմ. կերևի Աստված զիս ղրկեր է մոտդ։ Ես թեպետ պարտիզակցի եմ ըսի, սակայն վանեցի եմ, բայց Վանի ապստամբութենեն ի վեր պարտիզակցի կ'անվանեմ ես զիս, որպեսզի հալածանքի չենթարկվիմ։ Անունս Հովհաննես է, հիսուներկու տարու եմ. 14 տարի Նիկոմիդիո շրջանին մեջ ծխախոտի մաքսանենգությամբ զբաղած եմ և Ռեժիի շատ մը պետերու «գլուխ կերած եմ»։ Ապա կառավարությունը ճարահատ զիս ոստիկան զինվոր ըրավ մասնավոր վարձատրությամբ, որպեսզի հալածեմ ծխախոտի մաքսանենգները, որոնք ամենքն ալ կը ճանչնայի արդեն։ Հաճախ մինչև Արմաշ ալ եկած եմ. կարծեմ քեզ ալ տեսած եմ հոն։

Հայր սուրբ, մեղք է երիտասարդությանդ՝ ասոնք լմնցեր են, ասոնցմե խեր չկա. ես քեզ կը փախցնեմ և ուզած տեղդ կը տանիմ, մի վախնար, միայն ինծի ըսե, թե ո՞ւր կ'ուզես երթալ։

Հայտնեցի, թե Այրան՝ գերման երկաթուղու շինության Ամանոսի գծին կենտրոնական գործատեղին կ'ուզեմ երթալ։ Բայց փախուստի միջոցին երբ ձերբակալվեինք. անպայման պիտի սպանվեինք։ Ուստի այս հույժ հավանական գնդակահարումի վտանգին դեմ պաշտպանվելու համար հարցուցի, թե



ինք ի՞նչ ապահովություն էրնա ցույց տալ այս մասին ինծի։

Առանց վարանման պատասխանեց իսկույն.— Ես ընկեր մըն ալ ունիմ, որ շատ կտրիճ է, և երկուքս ալ զենք ունինք. մենք անմարդակոխ լեռան ճամփաներե և անտառներու մեջեն կ'երթանք, եթե անակնկալս մեր դեմ ոստիկան զինվոր կամ ո՛րևիցե իսլամ ելլե և կասկածելով մեր վրա, ուզե ձերբակալել կամ սպառնա մեր կյանքին, տեղն ու տեղն իսկույն կը սպանենք ու կ'անցնինք կ'երթանք։ Իրենք հարյուր հազարներով ա՛յնքան հայ սպանեցին, մենք ալ քանի մը հատ սպանենք, մեղք ունի՞ միթե. անշուշտ թողությունը դուն մեզի կուտաս... Դուն պետք է ծպտվիս և վստահե մեզի. երկու զավակ ունիմ, անոնց վրա կ'երդնում, թե մինչև որ մենք չմեռնինք՝ քեզ ձեռք չեն տար։ Չի դուն ազգին համար պետք ես. ա՛յնչափ մեր առաջնորդներեն սպանեցին, որ քեզ ազատելով ազգիս մնացորդներուն մեծ բարիք մը ըրած պիտի ըլլամ։ Անշուշտ, Աստված ալ իր պաշտոնյան և մեզ ալ քեզի հետ պիտի պաշտպանե ու փրկե այս գարշելիներուն ձեռքեն։ Աղոթե այս գիշեր մեր երեքին համար։ Առավոտ լուսացած եկուր սա դիմացի սրածայր վրանը. մենք երկուքս ալ պատրաստ պիտի սպասենք, գալուդ պես, զինված իսկույն ճամփա կ'ելլենք դեպի Այրան։

Արդեն վաղուց ամեն հույս կտրած մարդոցմեն՝ ապամինած էինք միայն Աստուծո, և ցարդ ողջ մնացած։ Ապա թե ոչ մարդկորեն անկարելի էր առանց բարոյալքվելու տոկալ այսքան տառապանքի ու վիշտի՝ տարիներ երկար և անսպառ։

Անձնապես իմ վրա ծանրացած ըլլալով ամեն կարգադրություն, ինչ որ հարկ էր, ըրած էի վաթսունե ավելի մեր ընկերներուն հանգստին համար, անշուշտ որքան որ ի վիճակի էի ընել նույն պայմաններուն մեջ։ Ամենքս ալ տեղավորված էինք Գ. կարգի աղտոտ վագոնի մը մեջ, և մեկ քանիներ պոլսեցիներեն, որոնք նյութապես ի վիճակի չէին 40 դահեկանի տոմսակի գինը վճարելու, հանգանակությամբ գոգացած էի նույն գիշերը։

Հազիվ մեկ քանի մտերիմ բարեկամներու հաղորդած էի փախուստիս գաղտնիքը։ Ասոնցմե մեկը Սեդրակ Շախյան, որ ամբողջ ճամփու ընթացքին միակ անձն էր, որ բոլի եղած էր ինծի 25 հնչուն ոսկիի չափ փոխտվություն ընելու, վերջին

պահուն կրկին 3 հնչուն ոսկի կու տար ինծի, որպեսզի հակառակ պարագային կյանքս փրկեմ կաշառքով։

Իսկ ինք հուսալով, որ ես Տերամբ ողջ պիտի մնամ, ինծի կ'ըներ իր բերանացի կտակը, հայտնելով, որ իր տան գաղտնի մեկ անկյունը 2300 հնչուն օսմ. և անգ. ոսկի պահած էր, ողջ մնալու պարագայիս՝ պարտականություն կը դներ վրաս, որ անձամբ երթալով առնեմ և ազգին կարևոր մեկ պետքին հատկացնեմ իր հիշատակին համար։ Բայց մահվան օրերու մեջ ոսկիի խոսք լսել բավական հեգնական էր։

Թեպետ պահ մը եկավ, որ ինքն ալ ուզեց ըմկերանալ փախուստիս, սակայն հետո հրաժարեցավ այս գաղափարեն՝ առարկելով, թե ես 65 տարու մարդ եմ, չեմ կրնար երկար քալել, հետո դու ալ իմ պատճառովս պիտի վտանգվիս, քու կյանքդ սուղ է, ես լմնցած եմ, դու ազատե և գրե մեր տառապանքի պատմությունը, և թող ապագա սերունդները գիտնան, թե որպիսի՛ սուղ գնով գնած են իրենց ազգի փրկությունը և ազատությունը։ Բարեսիրտ այս ծերունին Տերամբ ողջ մնաց և պատերազմի միջոցին Հալեպի մեջ աղ վաճառելով կրցավ ապրիլ, շնորհիվ փախուստիս միջոցին Իսլահիյեեն հեռագրով Պոլսեն իրեն ղրկել տված 25 ոսկիին, որը իր միակ դրամագլուխն մնացած էր և որ փոխառած էի իրմեն։

Ջինադարեն վերջ Ջանկըրի դարձին լսեցի, որ իր տունը քարուքանդ ըրած էին սույն դրամը գտնելու համար և կնոջը եղած սպառնալիքին վրա, ապա գտած էին և տեղվույն իթթիհատական կլուբը յուրացուցած էր սույն գումարը, բաժնելով գաղտնապես իր անդամներեն ամենաազդեցիկներուն մեջ։

Ուրիշ երկու բարեկամներ ալ նմանօրինակ կտակներ ըրին, իմ խնամքիս հանձնելով մասնավորաբար իրենց զավակները։

Կյանքիս ամենանշանավոր օրերեն մեկն եղավ Պոլսեն աքսորվելիս շուրջ տարի մը վերջ 1916 ապրիլ 2-ին փրկարար գիշերը։

Երկաթուղու գնացքը պիտի մեկներ առավոտուն ժամը 5.10 անցած, երբ դեռ լուսնաղը չէր սկսած և մութ էր։ Մինչ գարնանային տեղատարափ անձրև մը 15 ժամե ի վեր փոքր ընդհատումներով երկնքի սահանքները վար կը բերեր, փոքր



լճերու վերածելով դաշտերը, և առվակներն ու վտակները դուրս պոռթկալով իրենց թումբերեն կը ծածկեին արտ ու արոտավայր։

Այլևս վճռական վայրկյանը մոտեցած էր, պետք էր կամքի վերջին ճիգ մը ընել՝ ձեռք բերելու համար այն ազատությունը, որ կապտած էին ինծմե տարիե մը ի վեր։

Չէ՞ որ կամենալը կարենալ էր։ Այո՛, խորապես համոզված էի, թե միակ փրկությունը փախուստին մեջ էր, ապա թե ոչ անապատներու մեջ ոչ մեկ հույս կը մնար փախուստի կամ փրկության։

Հոռետես և չարաշուք մտածումներով բարոյալքվելու ժամանակն չէր, ընդհակառակը, հոգեկան կամ բարոյական բոլոր ուժերս ի մի հավաքելով՝ պետք էր վճռական քայլն առնեի, եթե իրապես փրկվիլ կ'ուզեի։

Մի՞թե հինգ հարյուր գերության ահավոր տարիներ շարունակ մեր հայրերն ու պապերն սպասելով սպասած չէին ազգին փրկությունը տեսնելու։

Արարատի հավիտենական ձյունի կատարեն արդեն վարդամատն արշալույսը սկսած էր հուսադրիչ կենսապարգև ճառագայթներ արձակել, հարություն տալով ցեղին հայրենաբաղձ ցան ու ցրիվ զավակներուն՝ մինչև անապատներուն խորերը և ավազի դաշտերը։

Մեռնելու օրերը անցած էին, ապրելու ժամանակն էր, տեսնելու համար հայության հրաշալի վերակենդանացումը՝ նախնիքներու հոգիները ոգեկոչող խանդավառությամբ մը։

Այս ամեն մտածումներով ոգևորված՝ ես արդեն զիս փրկված կը համարեի, թեպետև դեռ երկաթուղու մեր վագոնին մեկ անկյունը կծկծտած էի։

Ժամը արդեն հինգն էր և տասը րոպեեն պիտի մեկներ երկաթուղու գնացքը։

Վագոնին դռան առջև սվինավոր պահակ սպասող ոստիկան զինվորին հավատացնելով, թե հույժ ստիպողական պատճառով մեկ քանի վայրկյանի համար վար պիտի իջնայի, ոտքս կը դնեի հողին վրա...

Խավար էր. հազիվ մեկ քանի տասնյակ քայլ հեռացած, եկեղեցականի վերարկուս հանելով, դուրս եկա կատարյալ ծպտումովս՝ անճանաչելի ըլլալու աստիճան։

Մեկ քանի տասնյակ քայլ առնելե վերջ՝ վայրկյան մը հան-

կարծ վարանք կ'ունենայի շարունակելու ճամփաս։ Արդյոք դեպի փրկությո՞ւն կ'երթայի... թե դեպի մահ...

Սակայն տատամսելու ատեն չկար. հրազենի փողեն արձակված գնդակը չի կրնար բնավ ետ դառնալ. ուրեմն ամեն գնով պետք էր առաջ երթալ։ Ա՛լ կը բավեր որքան ճակատագիրս ակամա հանձնած էի թշնամիներուս ձեռքը, պետք էր դուրս գալ կրավորական և կորստական այս դիրքեն։ Այո՛, պետք էր այլևս տեր դառնայի ես իմ ճակատագրին։

Զարագուշակ բոլոր գաղափարներս ու մտատանջությունները հօդս ցնդեցան, երբ ցեխոտ հողին վրա ծունկի գալով, ՏԵՐ ՈՒՂՂՅԱ մը ըսի սրտիս խորերեն, և հույժ համառոտ մեկ քանի կարճ աղոթքներ մրմնջացի...

Եվ ահա արիացած էի, ա՛լ ետևս չէի նայեր, ու կը փախչեի, արդեն 10 րոպե վերջ կը գտնվեի փոքրիկ և ինձ ցույց տըրված սրածայր վրանին առջև, որը մեր ժամադրավայրն էր եղած։

Հազիվ մեղմորեն ձայնած Հովհաննես, ահա դուրս կը թռչեին երկու անձնուրաց քաջեր զինավառ, որոնք իրենց կյանքի գնով զիրենք տրամադրած էին, վասն փրկության տարագիր ու հալածական եկեղեցականիս...

Երեք հոգիե բաղկացած մեր փոքրիկ փախստական արշավախումբը արդեն կ'անհայտանար լուսնշաղին հետ Իսլահիյեի անմիջապես հանդիպակաց անտառներուն մեջ, մինչ երկինք կը շարունակեր ջրի հեղեղանման տարափով մը դյուրացնել մեր փախուստը։

Տեղատարափ այս հարատևող անձրևին պատճառով ընդհատված էր բոլորովին ամեն անցուդարձ, և ճամփան բաց էր արդեն մեր առջև։

Մինչև Այրան հասնելու համար 8 ժամ ունեինք սակայն։

Անտառին մեջ ապառաժներու ներքև անձրևեն պատսպարվելով, կանխահոգ զգուշությամբ հետս առած մկրատով և մոփոքր հայելիով մը կ'աճապարեի ձևափոխել մազերս ու մորուքս, և եղած էի արդեն անճանաչելի... Ո՛ւ երկու ամսվան մեջ թոռքի մազերս ճերմակած էին արդեն...

Այլևս մենք մեզ բարի Աստուծո հանձնած՝ խույս կու տայինք մարդոցմե և ամեն շարժող էակե, և կ'երթայինք դեպի անծանոթ ճակատագիր...

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Քեզի հայ ժողովուրդ . . . . . 3

Ա մաս

**1914 հոկտեմբեր մինչև 1914 հոկտեմբեր**

1. Բեռլին պատերազմի նախօրյակին . . . . . 11
2. Բեռլին պատերազմի վաղորդայնին . . . . . 17
3. Բեռլինեն Պոլիս վերադարձ . . . . . 36

Բ. մաս

**Առաջին տարագրություն**

**1915 ապրիլեն մինչև 1916 փետրվար**

4. Հայության ընդհանուր կացությունը 1915-ի սկիզբը . . . . . 46
5. Առաջին գուժկանը Կիլիկիայեն Դաղտնի պատգամավորը . . . . . 71
6. Գեթսեմանիի գիշերը . . . . . 78
7. Կարմիր կիրակին . . . . . 80
8. Դեպի աքսորավայր . . . . . 85
   Այաշի աքսորելոց անվանց ցանկը . . 87
9. Զանկըրիի զորանոցի կյանքը . . . . . 95
   Զանկըրիի աքսորելոց անվան ցանկը . 96
10. Աքսորյալներու կյանքը քաղաքին մեջ . . . . . 104
11. Թուրքիո հայության բնաջնջման ծրագիրը . . . . . 109
12. Էնկուրիի կուսակալության հայոց սպանդը . . . . . 115
13. Այաշի աքսորական ընկերներու եղերական վախճանը . . 126
14. Զանկըրիի աքսորականներու վերջին օրերը . . . . 134
15. Զոհրապի և Վարդգեսի աքսորն և սպանությունը . . . 145
16. Զանկըրիի հայությունը սարսափի օրերուն մեջ . . . . 150

Գ մաս

**Երկրորդ տարագրություն**

**Մահվան քարավանը դեպի Զոր 1916 փետրվարեն մինչև 1916 ապրիլ**

17. Հայության ընդհանուր կացությունը 1916-ի սկիզբը . . 168
18. Երկրորդ ձերբակալություն և բանտարկություն։ Անապատի ուխտավորները . . . . . 176
19. Մեկնում Զանկըրիեն Զորում . . . . . 181
20. Զորումեն—Յոզկատ . . . . . 192
21. Յոզկատեն—Պողազլիան գանգերը . . . . . 197
22. Զարդարար հարյուրապետի մը խոստովանությունը . . 201
23. Մահապարտներու ուրիշ քարավանի մը հանդիպումը . . 220
24. Պողազլիանեն—Կեսարիա։ Ալիսի կամուրջը և Իթթիհատի չիթաները . . . . . 238
25. Կեսարիա—Թումարզա։ Իսլամացած կեսարացի հայ կիներու անէնվիրությունը . . . . . 252
26. Թումարզա—Կազպել։ Գարնան մեջ աշուն . . . . . 265
27. Կազպել—Հաճըն։ Զյունապատ սարերու մեջ հուզիչ գիշեր մը . 271
28. Հաճընեն—Սիս։ Այրած ու կմախքացած քաղաք մը . . 291
29. Սիս—Կարսպազար։ Մեկ օր ավելի հանգիստ . . . . 307
30. Կարսպազար—Օսմանիյե։ Երկաթուղու առաջին կայարանը . 326
31. Օսմանիյե—Հասանպեյլի։ Կանլը—Կեչիտ . . . . . 332
32. Հասանպեյլի—Իսլահիյե։ Հացին անուշահոտությունը . . 348
33. Իսլահիյե։ Գերեզմանաբլուրներու դաշտ մը . . . . . 364
34. Տեր Զորեն բոթաբեր լուրեր . . . . . 374
35. Փախուստ Իլահիյեեն դեպի Այրան . . . . . 380

Գրիգորիս Պալակյան

**ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՆ**

Григорис Палакян

**ГОЛГОФА АРМЯН**

(На армянском языке)

Ереван «Айастан» 1991

*Խմբագիր՝* Մ. Վ. Ծերկանյան
*Նկարիչ՝* Գ. Ա. Պապոյան
*Գեղ. խմբագիր՝* Գ. Մ. Հովհաննիսյան
*Տեխն. խմբագիր՝* Հ. Յ. Վարդանյան
*Վերստուգող սրբագրիչ՝* Կ. Ա. Տոնոյան

ИБ *7393*

*Հանձնված է շարվածքի 7. 05. 1991 թ.: Ստորագրված է տպագրության 6. 09. 1991 թ.: Ֆորմատ՝ 84×108 1/32: Թուղթ տպագրական՝ № 1: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր, 21,52 պայմ. տպագր. մամ., 20,01 հրատ. մամ.+9 ներդիր: Տպաքանակ՝ 25 000: Պատվեր՝ 676: Գինը 6 ռ.:*

*«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան 28:*

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

*Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի № 1 տպարան, Երևան, Հանրապետության 65:*

Типография № 1 Комитета по печати при Совете Министров Республики Армения, Ереван-10, ул. Анрапетутян, 65.

ՓՈՔՐ ԱՍԻԱ
ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ, ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ ԱՑԼ ԵՐԿՐԱՄԱՍԵՐ
ՔԱՐՏԷՍ ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱԻ
Սեւ ծովը
Միջերկրական ծովը
Կասպից ծովը
Կիպրոս
Հայաստան
Տիգրանակերտ
Մուսուլ
Հալէպ
Դամասկոս
Երուսաղէմ
Բաղդատ
Սամարա
Թեհրան
Մարաստան
Ատրպատական
Կիլիկիա
Միջագետք
Ասորիք
Պարսկաստան